ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

911(47.925)
Ա-58

ՄՏԱՐԿՎԱԾ Է 1981 Թ.

ՀՆԱԽՕՍՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ՀՐՅՈՒՏՍՆԵՐՅՑ ՔՂՄՊՀՒ

ՏՆ. Հ. ՊԱՒԿԱՍ ԱԹՈՒՌԱՒԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԻՆՃԻՆԵԱՆ


ՏՊԱԳՐԵԱԼ ՅԱՆՁՆԱԺՆՈՐԴՈՒԹԵԱՆ
ՏՆ. ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՄՄԼԵԱՆ ԲԱՐԵՊԱՏԱԿԱՊԱՆՈՒ ՍԻՒՆԵԱՑ
ԵՒ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԲԱՐԵՑԻՑ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

ԱՐԴԵԱՄԲԻՒ ԵՒ ԾԱԽԻՒՔ

ԱՍՏՈՒԱԾԱՄԷՐ ԿԱՐՆԵՑԻ ԵՐԱՆՈՒՀԻ ՏԻԿՆՈՋ
ԿՈՂՊԱՑԻ
ՄԱՆՈՒԿ ՅՈՂՊԱՑԻ ՄԱՀԱՏԵՍԻՒ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

367

ՀՐԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ



ԻՄԱՒԵՆՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԻՐՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄՍՒ 1835 ՌՄԶԴ



Busato inv.e dis. *Viviani inc.*

Императрице Екатерине Второй

ՀՆԱՄԱՕՄԱՆԹՅՈՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ

ԳԻՐՈՒ ԵՐԿՈՏԱՄԱՆԵՐՈՐԴ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Գ. ՀԱՅԿ-ՈՒՀ.
ԱՐՁ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ աշխարհիս մերոյ յերից վճռական գտանեմք փոփոխեալ. նախ՝ ի տանուտիրական, որ էր առաջին կառավարութիւն յաւուրս նահապետաց մերոց. երկրորդ՝ ի միապետական, յորժամ թագաւորք սկսան կառավարել. որ երից սկսաւ, և երից ընդհատեալ ճնաց, մինչև խոպառ վերջացաւ առհասարակ. երրորդ՝ յիշխանական, յորժամ յընդհատիլ իւրաքանչիւր թագաւորութենէ ընդ ժամանակս ժամանակս՝ իշխանք կառավարէին զաշխարհս Հայոց:

Ի երեսին զայսոսիկ կառավարութիւնս ստորագրեցաւք մի ըստ միոջէ յառաջիկայս, յերից յօդուածս տրոհելով:

Ս. Գ. ՀԱՅԿ-ՈՒՀ.
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա

Կառավարութիւնէ պանդխտական : Ժամանակ նահապետից :

ՏԱՆՈՒՏԻՐԱԿԱՆ կոչեմք զայն ազգ կառավարութիւն զոր եւրոպացիք կոչեն Կալուածական . ուր ոչ տիրէ մին ՚ի վերայ ամենեցուն , այլ իւրաքանչիւր ՚ի տանուտեարց ինքն իշխէ և կառավարէ զայն երկիր և զբնակիչս նորա , որում տէր է և ժառանգ : Զայս տէրութիւն կալուածական կամ տանուտիրական՝ եւրոպացիք ՚ի սկզբան անդ սրով իւրեանց ստացան , գոլով ազգ եկամուտ յապագայ ժամանակս եկեալ անդ յԱսիոյ , ըստ մեծի մասին ՚ի Թաթարաց . այլ մերն եղև բնիկ ժառանգութիւնք ՚ի սկզբան անդ բնակելոյ մարդկան ՚ի վերայ երկրի , յորժամ չգոյր այլ ինչ բնակութիւն . զի ՚ի հարց իւրեանց՝ որք էին որդիք Նոյի՝ ստացան զայն երկիր , զոմանս ժառանգութիւնք ՚ի հօրէ , և զոմանս ինքեանք գրաւեալ բնակութիւնք իւրեանց , յորժամ բազմանալով նոցա ոչ բաւէր առաջին երկիրն : Եւ առ ՚ի գրաւել՝ էր հարկ սուր առնուլ կամ մարտնչել , զի յայնժամ երկիր դատարկ էր ՚ի բնակչաց . իսկ յորժամ բազմացան մարդիկ , յայնժամ սկսան սրով գրաւել : Տես զայս գրեալ է մեր ՚ի գլուխն Բնակութեանն :

Տանուտէր կոչիլ յայնժամ գլխաւորի նոցա ՚ի սկզբան անդ յաւուրս Թորգոմայ՝ յիշատակի ՚ի ա . գլուխ պատմութեան Օրպէլեանց վանն Վրաց յասելն . ‘‘Սահման էր Վրաց կոչել զգլխաւորն իւրեանց Տանուտէր . զի ոչ ունէին զթագաւոր . և նստէր Տանուտէրն ՚ի Քարթլ , ՚ի մեծ քաղաքին Մցխիթայ ,, : Ահա սոյն օրինակ պարտ է իմանալ և վանն Հայոց աշխարհիս յաւուրս Թորգոմայ և Հայկայ և սերնդոց նորա , խաղաղութիւնք ժառանգեալ զերկիրն իւրեանց . և տանուտիրական կառավարութիւնք պայազատեալ ՝ մինչև ցՆերսէ : Այլ քանզի սուղ ինչ յառաջ քան

1 Ի սկզբան անդ առն Յուստինոս պատմագիր գիրք ա . գլ . 1 . ‘‘ ժողովուրդն չէր պարտական հպատակել օրինաց ինչ . հաճոյք իշխանաց էին փոխանակ օրինաց . որոց առաւել փոյթ էր անքոյթ կացուցանել զսահմանս իշխանութեանց քան թէ ընդարձակել . անցնիւր Թագաւորութիւն էր հայրենիս պարագրեալ կայր : Յառաջ քան զամենեսին Նինոս արքայ ասորեստանեայց զհին և զհայրենական սովորութիւնս աշ-

զԱբրամ որդիք օտարածնաց՝ որք էին ազգք շուրջ զՀայաստանեօք՝ կոխեցին զսահմանս զոր Հայք ժառանգէին, որպէս գրէ Խորենացին ։ 13. յորս Նիւքար ոմն կոչեցեալ Մադէս՝ զամն երկուս ծառայեցոյց զսահմանս Հայոց. յայնժամ հարկ եղև Աբրամայ սուր առնուլ և սրով վանել զաւերնեսին զնոսա ։ Եւ թէպէտ Աբրամ զօրաւոր էր և բազմաց աշխարհաց տիրօղ, որպէս ծանուցաք ի գլուխն Պատմութեանէ, բայց չեղև միշտ գլխովին ինքնիշխան որպէս զառաջինն նահապետն մեր, այլ ի թագաւորել անդ Նինոսի՝ ընդ հրամանաւ նորա էր մերս Աբրամ. վասն որոյ ասէ Խորենացին. Նինոս "հրամայէ նմա (Աբրամայ) զայն իշխանութեն անկասկածաբար ունել"։ Ընդ հրամանաւ Նինոսի էր և Աբրայ որդի նորա, զորմէ ասէ ։ 15. "Նոյնպիսում ընդհրի արժանաւորեալ ի Նինոսէ՝ որպէս և հայրն իւր Աբրամ"։

Իսկ տերութեն Ասորեստանեայց ի վերայ Աբրայի և աշխարհին մերոյ յայտ է. որ յետ սպանանելոյ զԱբրայ ի պատերազմի՝ ինքնակամ իբր յիւրում աշխարհի շինեաց զՎան քաղաք. և "ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատեր"։ ասէ ։ 16։ Եւ ի 19. գրէ. "Իսկ մերոյն Աբրայի որդի Աբրայ ի Ասորեստանեայց կոչեցեալ, և զգործ վերակացութեն աշխարհիս նմա հաւատացեալ"։ Զի յայնժամ մերքն իբր վերակացուք և գործակալք նստէին յաշխարհիս Հայոց ի կողմանէ ինքնակալին ասորեստանեայց, որպէս և քաջայայտ ծանուցանէ զայս Խորենացին ։ 21. ասելով, Թէ անուանք և գործք մերոց նահապետաց և թագաւորաց ոչ գրեցան ի մերոց. զի ոչ խորհէին զայսպիսիս ի գիր արձանացուցանել. այլ հանեալ եղեն ի հին դիւանաց քաղդէացւոց, ասորեստանեայց և Պարսից. զի յարքունի մատեանս նոցա մտին անուանք և գործք մերոցն "իբր գործակալաց և վերակացուաց աշխարհիս (Հայոց) ի նոցանէ կացելոց, և (իբր) ռճաց կողմնակալաց"։ Յայտ է այս և յանցից զոր կրեաց մերս Ածուշաւան. զորմէ գրէ

գաց փոխեաց նորատեսիլ ինն ըղձիւք իշխելոյ. սա զառաջինն յարոյց պատերազմ ընդ սահմանակիցս, և զթերակիրթ ժողովուրդս առ ի զդեմ ունելոյ՝ մինչև ցԼիբիա ընդ իւրև նուաճեաց"։

Ահա այսպէս էր կառավարութեն և մերոյ աշխարհին մինչև ցԱբրամ. իսկ ի ժամանակս Աբրամայ յորժամ սկսան բռնաւորք յարձակիլ յերկիր մեր, Աբրամ զնոսա հալածական արար, և Նինոսի որ զօրաւոր էր՝ հնազանդ եղև։

Ս. Գ. ՀԱՅ-ԲԱԶ.
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

'ի 20. "Ա յս Անուշաւան բաւական ժամանակս արհամարհուեցեալ կրեալ 'ի Զամեսեայ, (որ էր Նինուսա որդի Համիրամայ,) տուայտի 'ի դրան արքունի (ասորեստանեայց). իսկ օգնեալ 'ի բարեկամաց՝ շահի զման ինչ աշխարհիս հարկահանուած ինամել. զինի ապա և զբոլորս,,: Ուր երկու ինչ յայտ առնէ. մի՝ զի ոչ կարաց միանգամայն իշխան լինել աշխարհիս. և երկրորդ՝ զի հարկատու եղև. զոր պարտ է իմանալ և վասն Աւրայի և Աւրամայ:

ՅՕԴՈՒԱԾ Բ

Կառավարութիւն դապէպական:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆ այս ըստ երից կանգնելոյ թագաւորաց յաշխարհիս մերում, երրակի անուամբ յորջորջի. որք են Հայկազնեայց, Արշակունեաց, Բագրատունեաց: Յաւուրս իւրաքանչիւր թագաւորութեցս այսոցիկ թէ յինչ վիճակի էր կառավարութիւն Հայաստան աշխարհիս, զինչ պատճառք էին բարձրանալոյ և զօրանալոյ նոցա, և ապա զինչ՝ օր ըստ օրէ վատթարելոյ և խափան անկանելոյ նոցա, առաւել յայտնի լինի գիտելով զկառավարութիւն մերոյ մերոյ 'ի թագաւորացն երեցունց տոհմից: Վասն որոյ յայսմ վայրի զկարգ թագաւորաց նոցա արձանագրեցուք, զարարս նոցա ոչ ըստ օրինակի վիպագրաց, այլ խորհրդածութիւն հանդերձ պատմաբանեալ. որովք ընթերցողացն տեղեկացեալ՝'ի վերայ հասցեն հաւաստեաւ իւրաքանչիւրոցն ոգւոյ կառավարութիւն յօգուտ կամ 'ի վնաս աշխարհին, իմացեալ նովաւ և զընդհանուր տեսչութիւն աշխարհիս մերոյ: Այլուամ տեղւոյ թողեալ զնուիրեալսն՝ որ արտաքոյ է հայաստանեայց:

Պահէիր կառավարութիւնէ իւրաքանչիւր ընտանուոյց վերոյ . որ է
հնազոյնագոյնը եւ բարոյական պատմութիւն նոցին փնտրէր ։

Ա. ԺԱՄԱՆԱԿ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՑԿԱՋՆԵԱՑՑ

Ի սկիզբն և ի մէջն գտանիմք քաջութեի միացեալ ընդ բարեբարոյութեն ։
Ի վերջն աղուկ շփոթի առ ի յափշտակել զերութեի ։

Ի նախագրելոցս մինչև ցաստ՝ յայտ է թէ յարշաւանաց չորքակայ բռնաւորաց ստիպեցաւ քաջն Ադամ զոբաժողով լինել՝ տիրել և իշխել . և յայնժամ ահա երկի վերջանալ նահանի տանուտիրական կառավարութեան , և սկիզբն առնուլ նոր իմն եղանակ գրեթէ միապետական , այլ ընդ գերագոյն տէրութիւ՛ն ասորեստանեայց , և առանց անուան թագաւորի ՝ միանգ ցՊարոյր նահապետ՝ որ կարող եղև զբառամբ ածել տիրապետ զթագաւորութիւն , և զազգ մեր անցոյց ՚ի կարգս այլոց թագաւորութե՛ն ։ Զի Վարբակէս Մար կամ Մեդացի կամելով զթագաւորութե՛ն ՚ի Սարդանաբաղայ լինքն գրաւել , և տիրել Նինուէի և ասորեստանի , լինքն յանկոյց զքաջ նահապետն մեր զՊարոյր ՚ի Թիլունս օգնականու՛ խոստանալով նմա զթագաւորութե՛ն ՚ի վերայ Հայոց . վասն որոյ թագաւորութե՛ն մերոյ աշխարհիս ընդ թագաւորութե՛ն Մարաց միանգամայն սկիզբն էառ ։ Խորենացի՛ ա . 22 . ՚ի ցուցանել թէ յաւուրս Վարբակայ որ էառ զԲաբիլո՛ն՝ գոյր և մեր թագաւորութե՛ն , ՚ի վկայուէ երեմիայ մարգարէի ցուցանէ , որ ծա՛. 27 . ՚ի դիմաց Ասուածոյ հրաւիրէ զզանազան ազգս կործանել զԲաբիլո՛ն , ուր ՚ի հրաւիրելն նաև զՀայս՝ անուանի թագաւորութե՛ն . " Պատուէր տուք կինէն Ադարատեան թագաւորուէն [2] , և Աքսանագան գնդին ,, , Եւ քանզի նորոգ թագաւորութե՛ն Պարոյրայ նոր շուք և շինուածի եղև աշխարհիս , նորին ազգաւ Խորենացին առանձին իմն խնդութե՛ն ցուցանէ յայնմ համառօտագիծ պատմութե՛ն իւրում՝ , ասելով՝ ա . 21 . " Ա՛յժմ ահա զբ-

1 Տես ՚ի գլուխն Պատմութե՛ն զոր ինչ գրեցաք վասն Ադամայ ։
2 Ադրաթաեան անուանի խմանան սուրբ գիրք գՀայս , որպես գրեալ է մեր ՚ի գլուխն Ընտան ։

ւարձացայց ոչ փոքր ինչ կրելով ինդուեթէ . հասանելով 'ի տեղիս մերում իակ քնկի նախնւոյն՝ յորում սերունդք թա գաւորութէ հասանէն յաստիճան ,, :

ՀԱյս մինոց ժամանակի՝ յառաջ և զինի գրաւելոյ մե ծոյն զանուն թագաւորութէ , թէ որպիսի աշնւական բաղք , և բարեկարգ և արգար տեսչուէ փայլէր 'ի մեր՝ յայտ առնէ այս բան Խորենացւոյն ։ 22 . "Ինձ այսքիկ աղբ 'ի մերոյ թագաւորէն սիրելիք , որպէս քնիկք և իմոյ արեան առուք և հաւատոյ հարազատք ։ Եւ սիրելի եր ինձ յայնժամ գալ Փլիկէն և զնս գնել . և առ նոքօք յաշ խարհ զմեան իմ լինել , և նոցա տեսուեթէն խրախճա նալ , և յարդեացս վտանգից ապրիլ ,, ։ Յորս աքանչելի իմն օրինակաւ հանդիսացաւ մեծն Տիգրան . զի եղև ոչ անուամբ և եթէ թագաւոր՝ այլ յինքն բերելով զամենայն ձիրս թագաւորի , զբարեյաւուեթէ 'ի գնացս , զքաջուեթէ 'ի պատերազմի , զլինուեթէ աշխարհի և զբարեկարգուե՛ , Բայց յետ նորա մի միայն զվահագն գտանեմք քաջուեթ եւեթ փայլեալ . վերջինն 'ի նոսա Վահէ անուն՝ ապստամ բեալ 'ի մեծէն Աղեքսանդրէ մեռանի . և այնուհետև , ասէ Յոհաննէս կաթողիկոս , " Սամարտիկոս շինօրուեթէ զմիութեամբք եւեալ և այր ընդ առն 'ի կռիւ կաքաւեալ , մինչև դիւրամուտ զօտարաշխինն 'ի բնակուեթիս իւրեանց առնելին (այսինքն զպարթեւն Վաղարշակ), և անյայտ զիւ րեանցն զերծոյց ,, ։ Եւ այսպէս զայս թագաւորութէ բնիկ Հայկազանց՝ երկպառակուեթեամբ իւրեանց վերջացուցին , այր զարամբ եւեալ առ 'ի տիրել աշխարհիս , որպէս գրէ և Խորենացին ։ 31 ։

Բ . ԺԱՄԱՆԱԿ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ

Ի սկիզբն գահանեմք քաջուեթէ զինուորական , և աշխարհաչէն բարեկար գուեթէ միանգամայն ։ Ի մէջն տկարուեթէ 'ի զինուորուեթէ , և անփոյթուեթէ յաշխարհաշէն գործս ։ Ի վերջն բոլորովին Թուլուեթէ 'ի զինուորուեթէ , ա պականուեթեան վարուց , կեալ ընդհանուամբ ըստ հանգոյց , երկպառակուեթեան ծայրացեղ ։

ՎԱՂԱՐՇԱԿ Ա

Պարտ է զսա համարել նորոգօղ կառավարուեթէ , և իբր հիմնադիր ընտիր բարեյականուեթեան յաշխարհի մե-

1 Տես վասն այսր 'ի գլուխն Պատմուեթէ և 'ի գլուխն Բարուց ։

բում. որ արժանապէս գովելի գտաւ ըստ ասելոյ խորհ-
նացւոյն ը. 7. " Արժանի բանից ողորկագունից և յոլո-
վից ". այնու զի փափագող գտաւ բազմատեսակ աշխար-
հաշէն բարեկարգութեանց, զհետևողութեանէ, գլորութեանէ և ըն-
տիր բարոյականութեանն, որովք առաւել քան զամենայն
թագաւորս մեր գովելի հանդիսացաւ. " Համայն ասել
օրէն թագաւորութեանէ, և որ ինչ շուրջ զթագաւորութեանէ ".
խորհնացին ը. 7. Ջերկուս զայսոսիկ յետին բարեկար-
գութեանս միանգամայն ընդ առաջոցն՝ ոչ որ ի թագա-
ւորաց մերոց ի կիր արկ, և ոչ իսկ մեծին Տիգրան, զորս
մի առ մի ունիմք յիշել ի տեղիս իւրեանց. յայր սակաւորե-
նացին առանձին գլուխ կարգեալ ը. 7. դնէ վերնագիր,
թէ Վաղարշակ " որպէս և զհարդ կենցաղավարել հրա-
մայեաց ". Եւ զարմանք մի մեծ այն է, զի և ոչ առ մեծի
զբաղմանց յօգուտ հասարակաց, և ի կարգաւորել զար-
քունիս իւր և զժողովուրդն՝ արգելաւ երբեք անձամբ
մտանելոյ ի գժնդակ պատերազմունս, որպէս է տեսա-
նել ի պատերազմին՝ որ ընդ Հզօրին Մորփիւլիկեայ. յո-
րում մահ առաջի կայր նմա եթէ չէին ահապարեալ և
օգնեալ քաջազունք ի մերոց հայկազանց և ի սեհեբերիւ-
մանց. գանի գովելի և այն կարգադրութեն երկուց յի-
շեցուցեալ առ բարւոք կառավարութեն թագաւորին, զո-
րոց գրէ խորենացին ը. 8. Եւ հաստատէ " Յիշեցուցա-
նօղս երկուս ի ձեռն գրոյ. այլ ոմն զքարի յիշողութեին
առնելով, և այլ ոմն զվերաժինդրութեացն. և բարւոյ յի-
շեցուցանողին հրամայեաց ի բարկութեէ աքքայի և յան-
իրաւ հրամանս՝ յիշեցուցանել զիրաւն և զմարդասի-
րելն ".

ԱՐՁԱԿ Ա

Որդի Վաղարշակայ " Նախանձաւոր և հետևօղ հայրե-
նի առաքինութեացն լեալ բազումս կարգս ուղղութեանց գոր-
ծեաց ". ասէ խորենացին ը. 9. Բայց թէ զինչ կարգ,
զինչ ուղղութիք էին, ոչինչ նշանագրէ.

ԱՐՏԱՇԷՍ Ա

Որդի Աբգակայ. " Ել, ասէ ը. 11. այր հպարտ և պա-
տերազմասէր ". Յայն սակս միայն ոգւով աշխարհակա-
լութեէ եւայր, և արդեամբք զաշխարհակալաց կատարէր
զգործ, որ իբրև զայլ ոմն Քսերքսէս եգիպտացի էևևեալ

յաշխարհի, "Զամենայն զտիեզերս ընդ իւրև նուաճել ի մոի եդեալ", որպէս ասէ Դիոդորոս սիկիլիացի ըզքաջերքեայ[1]. վասն որոյ և մեր խորենացի զարշաւանս Արտաշէսի կոչէ Տիեզերակալութիւն. որ և ի յիշատակ իւրոյ տիեզերակալութիւն թողոյր զկարկառա քարանց կուտելոյ յամենայն իջևանս ըստ մարդաթափուի իւր զօրուն՝ զորոյ զթիւ բազումքն ոչ կարեր ի համար արկանել. "Մինչ զի չափոյ պէտք եղէն (ասէ եւագարոս առ խորենացւոյն ք. 13.) առաւել քան զհամարոյ", և ի մեծն է յայնպիսի փառս մեծազօր հնքնակալութիւնք և Ճոխութիւնք զորս յիշեցաք ի գլուխն Պատմուե, չուներ քնաւ անձնապալ ծուխն ըստ նորին պատմագրի, այլ յաւէտ յիշել զուշացուցանէին աշխարհիս. "Ընդ այս ոչ հպարտացեալ, ասէ, այլ արտասուեաց ասելով. Աշաղ ֆառաջս անցաւորէ", Ցորմէ մէ երևի թէ կրթեալ էր ի մանկութենէ ընդ բարեկիրթ դաստիարակօք ըստ կանոնաց սահմանելոց առ ի հաւոյս իւրմէ Վաղարշակայ։ Բայց յանչափ նահատակութեանց իւրոց և արշաւանաց յայնչափ հեռակայ սահմանս՝ չեղև ինչ օգուտ աշխարհիս և ազգիս, որպէս է սովորական և այլ ամենայն այսպիսի աշխարհակալաց, որոց անձամբ մեծ է ընդարձակել զծագս սահմանաց տերութենէ իւրեանց, բայց ոչինչ փոյթ ունին շինութենէ գեթ առաջին փոքրիկ աշխարհին իւրեանց հայրենեաց։

ՏԻԳՐԱՆ Բ

Որ կոչի մինչև Տիգրան. ի սմա երևի կրթութենէ պատերազմի, քաջութիւն առն պատերազմականի, որ էր պատուղ կրթութենէն՝ յորում հայոց նորա ա. Արտաշէս ետ կրթել զնա ի մանկութենէ. "Տայ, ասէ խորենացին ք. 11. զՏիգրան որդի իւր ցպատանի ոմն Վարաժ անուն... ի նետաձգութիւն կօրովութեան ուսուցանել զՏիգրան", Զյիշատակ քաջութեան գործոց սորա կարես տեսանել ի գլուխն Պատմութեան։ Բնութեամբ էր կրօնասէր ըստ մեծի պաշտամանն ժամանակին. զոր յայտ առնէ խորենացին յասելն ք. 14. "Աշաջինն գործ զմեհեանսն շինել կամեցաւ", Ցայտ է և ի նեղուէ անտի, զոր ետ ազգին բագրատունեաց վասն կրօնի։ Բայց մեծ պակասուի

[1] Դիոդորոս սիկիլացի հատոր ք. Թղթաչամաբ 63. ըստ տպագրութեն Վէսսելինգայ։

Տիգրանայ Հայոցի՝ Թերեւհատուիլ Նորա վասն պատա-
նեցոյն Միհրդատայ՝ անսալով ի հարկէ բանսարկութեան
այլոց, թէ չէ իբր քուերորդի. յորմէ զկնի եկն ապըս-
տամբելն Միհրդատայ և անկանելն առ Հռոմայեցիս և
զրկելն բոլորովին յիշխանութենէ կեսարիոյ։

ԱՐՏԱԻԱԶԴ Ա

Որդի Տիգրանայ, զորմէ Խորենացին ՟բ. 22. ասէ. "Ոչ
ինչ գործ արութեան և քաջութեան եցոյց. այլ ուտե-
լեաց և ըմպելեաց պաբապաեալ, մօրից և եղեգնապուրա-
կաց Թափառեալ շրջէր և առապարաց. (որով զանկարգ
սէր Նորա զորսորդութենէ կամի ծանուցանել.) զիշավայրիս
և զհովս արածելով։ Չխմաստութենէ և զքաջութենէ և
զբարւոյ յիշատակաց անփոյթ արարեալ՝ ծառայ և ստրուկ
արդարև որովայնի լինելով՝ զաղբիսս մեծացուցանէր"։
Խակ յորժամ լուաւ զբրթինջիւնն զորաց իւրոց "վասն ա-
ռաւել պղերգութենէն և սաստիկ որկրամոլութենէն", յայն
ժամանակն ինն զգաստացեալ՝ զոր բազում Հանեալ
Հալածական արար զՀռոմայեցիս ի Միջագետաց։ Բայց
կամելով դադարեցուցանել զնուաճելի զորաց իւրոց՝ անձ-
նամուխ եղև մեծաւ յանդգնութենէ ի պատերազմ, ոչ յա-
ռաջատես լեալ և իրազեկ մեծի զօրութենէն զոր ունէին
յայնժամ Հռոմայեցիք, և ոչ քաջութենէն Անտոնիոսի.
յորմէ ձերբակալ լեալ ի պատիժ յանդգնութեան իւրոյ
մատնեցաւ ի ձեռս կղեոպատրայ, որ օխայրն ընդ նմա։

ԱՐՇԱՄ

Որդի Ա՟րտաշիսի եղբօր Տիգրանայ. ի սմա, որպէս
և յայլս բազումս ի Թագաւորաց մերոց, զայն Թերութենի
տեսանելեաւք պատՀառ բազմաց ինասուց, զի ունկն մատու-
ցեալ քսութեանն Զօրայի գնեմունեայ, առանց քննելոյ
չարչարեաց զնՀանոս բագրատունիս։ Կոյսպէս ոչ փոքր ինչ
անարգանք էին Թագաւորութենէ իբրեւ սր ինչ անցք
անցին ընդ նա և ընդ Հերովդէս արքայ Հրէաստանի. զի
իրացն չէղեալ նախատես՝ զլացաւ նախ առաքել զգազմու-
թիւն գործավարացն, զոր խնդրէր արքայն Հրէից. բայց
ապա յահէ զօրութենէ Նորա նուաստանայ և "Երկրպագէ
Հերովդէի, ասէ Խորենացին ՟բ. 25. իբրև տեառն ամե-
նայնի, տալով զոր խնդրէրն գործաւորս"։

ԱԲԳԱՐ

Որդի Աբջամայ, առ հեղուքեճ ևիմաստութեճ իւրոյ կոչեցեալ յայս ամուն. "Կոչեր Աւագ այր, ասէ Խորենաց կին ը. 26. վասն առաւել հեղուքեճին և իմաստութեճն, որում յետոյ և տիքն. զայս ոչ կարելով ուղղախօսել Յունաց և Ասորւոց՝ կոչեցին Աբգարիոս ,,: Այս Աւագուճ ամուն զոր ետուն նմա ժողովուրդք իւր՝ բաղում ինչ յուսյանէ նորա գործեալ, որով սիրելի արար զինքն ժողովրդ գեան. այլ յամենայն գրելոյն վասն նորա իմանամք զնա լինել այր կենցաղակիրճ. զի իբրև ապստամբել կամէր ՚ի հռոմայեցւոց՝նախ գաշնակից իւր արար զՊարսս, և զՈւրհա յայմմ վայրի շինեաց քաղաք գօրանիստ, յորում էր զօրուճն հռոմայեցւոց, այսինքն ՚ի Մ[illegible]ետս. և ապա ընդ յառնել ձախորդութեճն՝որ էր երկապառակութեճ Պարսից, գիտաց զինքն սանձել և գաղարիլ. Գիտեմք զսա և ՚ի հաւատոյս լինել եռանդնոտ. նախ ՚ի մէյր պաշտամունս՝ և ապա ՚ի Ճշմարտուճ. զի ոչ ինքն միայն հաւատաց, այլ և այլոց Թագաւորաց գրով եղև քարոզիչ. այսինքն կայսեր, Պարսից և ասորեստանեայց. զորմէ տես և ՚ի գլուխն կրճնի ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Վերեւորդի Աբգարու, քնուճ ժամտ և անգութ սըրտիս, որ իբր յոչինչ համարեր ստել զերդումն իւր. զամենայն զաւակ տանն Աբգարու ՚ի սուր մատեաց բաց յայրճկանց, վասն որոյ և արժանապես գրէ Խորենացին ը. 36. " Որ ինչ գործ եղեալ Սանատրկայ, ոչինչ միշտակաց արժանի համարեցաք, բայց ՚ի շինուածոց Մծբնի քաղաքի ,,։

ԵՐՈՒԱՆԴ Բ

"Չետ մահուանն Սանատրկայ չիոճի Թագաւորուճն ,, ասէ Խորենացին ը. 37. և Թագաւորէ ոչ որդի Թագաւորի՝ այլ Երուանդ ամն որդի հնոյ արշակունւոց, բայց այր խոհեմ և կենցաղագէտ, որ եղև գլուխ ամենայն նախարարաց. "Եւ խոնարհութեճ և առատաձեռնութեճ զամենայն ոք լինքն յանգուցանէր ,,։ Բայց զի կոտորեաց զամենայն որդիս Սանատրկայ բաց ՚ի միոյ մանկանէ Աբտաշէս կոչեցելոյ, որոյ ՚ի հասանել չարբուհս՝ գրեճ ամենայն

նախաբարձք վնա կամիլին հաստատել յամառ թագաւո-
րութիւնէ, և ոչ զերծուանդ, ոչ օգտեաց յայնժամ երբուան-
դայ իւրն առատաձեռնութէ. « Որչափ առատանայր, ասէ
Խորենացին ՚ի. 45. առաւել և առէլի լինէր. քանզի
գիտէին ամենեքեան եթէ ոչ առ առատութէ տայ, այլ
առ երկիւղի վատնէ. և ոչ այնչափ սիրելի զայնոսիկ առ-
նէր՝ որոց շատն տայր, քան թէ ընչաւի զայնս՝ որոց ոչն
տայր պերճագոյնս ,, ։

ԱՐՏԱՀԵՍ Բ

Որդի Սանատրկայ, որ եղև արգարև ծաղիկ և պար-
ծանք ոչ միայն ՚ի Թագաւորս արշակունեաց, այլ նաև
յամենայն կարգս այլոց Թագաւորաց մերոց. զի որ ինչ ան-
է Թագաւորի՝ ոչ զանց արար ՚ի գործ արկանել. Առաջին
պարտք են Թագաւորի ՚ի դիւրուն պահել զժողովուրդն,
այսինքն փութալմնդուն խնամ տանել՝ զի դիւրաս հայթ-
հայթեսցեն զկարևոր պէտսն ընտանեաց և զգեստուց
և բնակարանաց, երկրորդ՝ ՚ի հանգստեան և ՚ի խաղա-
ղութէ պահել ոչ միայն յարտաքին Թշնամեաց, այլ և
՚ի ներքին երկպառակութեաց, երրորդ՝ ծաղկեցուցանել
զամենայն արուեստս և զամենայն դպրութիս, որք եր-
կուց առաջնոց են պատճառք. Յառաջինն և վերջորդն
գտանեմք ՚ի գիրս յայտնի ՚ի գործ եդեալ Արտաշիսի
առաւել քան զամենայն Թագաւորս մեր. վերկրորդն ևս
իմաստասիրեմք ոչ զանց արարեալ զոր Վաղարշակայ էր
քաջ սահմանեալ. մանաւանդ զի Արտաշէս ունէր իւր
դայեակ զՄմպատ բագրատունի, որ միանգամայն էր քաջ
զօրավար, այլ հմուտ պատերազմի. եւ այսպէս « յետ ա-
մենայն առաքինութեց և գործոց ուղղութեց Արտաշիսի,
հրամայէ զահմանս գիւղից և ագարակաց որոշել ,, ասէ
Խորենացին ՚ի. 56. Այս ուղղութ նորա գործք կենցաղո-
գուտք գոլով զանազան՝ ՚ի զանազան գլուխս ունիմք յի-
շատակել. որպէս և նորին խսկ բերթողահօրն այսպէս ՚ի
գէպ վարկուցեալ ասէ ՚ի. 59. « Քանզի բազում ինչ գործք
յաւուրս Արտաշիսի գործեցան, վասն այնորիկ ՚ի բա-
զում Ճառս կոտորեցաք ,, ։

ԱՐՏԱՒԱԶԴ Բ

Որդի Արտաշիսի, այլ այնպիսւոյ հօր այնպիսի զաւակ

անարժան, որ "ի ծննդենէն Աեթ մինչեւ Նոյ էին եւ վախճանեցաւ". ըստ ասելոյ Խորենացւոյն է. 61. և 'ի յորսորդութենէ աղմկել կորեաւ։

ՏԻՐԱՆ Ա

Նոյնպէս որդի Արտաշէսի. "Սորա ոչինչ պատմին գործք մեծամեծք, այլ միայն թէ մտերմութենէ ծառայեաց հուսմայեցւոց. եկաց խաղաղութեան, որսոց և զբօսանս պարապեալ". Խոր. է. 62։

ՏԻԳՐԱՆ Գ

Որդի Արտաշէսի, որ և կոչի վերջին. "Ոչինչ գործ արժանի յիշատակի ցուցեալ, ասէ Խորենացին է. 64. միայն զկրսերագոյն ազգ նախարարութեանց հաստատեալ. զոր յիւրում տեղւոջ յիշատակեսցուք։

ՎԱՂԱՐՇ

Որդի Տիգրանայ, չինող միայն երկուց քաղաքաց յիւր անուն անուանելոց Վաղարշաւան և Վաղարշակերտ. և պարսպաւ պատեաց զերևելի մայրաքաղաքն Վաղարշապատ կոչեցեալ։

ԽՈՍՐՈՎ Ա

Կենաւանեալ Մեծ, որդի Վաղարշայ. որոյ գործքն ցուցանեն զնաւսութենէ նորա առաջնոց արշակունեացն հաւ մեմատ, և զսէր յաշխարհաշէն մեծագործուձիս հանդերձ պատերազմական քաջագործուքէ. նոյնպէս և զթերուի 'ի կրթուէ և 'ի նախատեսուէ ձանաչելոյ զշահ իւր։ Ընդ լսելն զխռովութենէ պահլաւեանց իւր ազգականաց յօտար աշխարհ՝ այսինքն յաթոռն Պարսից, մոռացաւ զաշխարհ իւր. 'ի տարապայման հոգոց առ հասանել նոցա յօդնուէ, մնաս մեծ եհաս գահոյն իւրոյ և աշխարհին, և առաջաժամ մահ կենաց նորա, որոյ կեանք օգտակար ունէր լինել աշխարհին. զամս տասն 'ի պատերազմունս գեգերեալ մինչ այն առ 'ի անդրէն գարձուցանելոյ զթագաւորութիւն Պարսից յառաջին ցեղն պարթեւական կամ պահլաւեան՝ եր կիցս խաղաց 'ի վերայ սասանեան Արտաշրի Պարսից թագաւորի, յառաջնումն թափելով 'ինմանէ զասորեստան և

զայլ աբբայանիստ աշխարհս , որպէս գրէ Խորենացին
ք. 7ձ. և յերկրորդումն՝ « Հալածական առնելով մինչև
յաշխարհն Հնդկաց ». անդ գլ. 73։ Բայց ի յաղթութէ
աստի չերձև օգուտ և ոչ մի. այլ կամելով բարի առնել
իւրոց հեռաւոր ազգակցաց և օտար աշխարհի, արար չար
իւրոց մօտաւոր համազգեաց և աշխարհիս. զի ինքն սպա-
նեալ գաւով ԱՆերսաշըհ, համազգիք իւր և աշխարհս
ձնացին ընդ լծով նորին Ներսաշըհ զամս 27 մինչև ցԹա-
գաւորել Տրդատայ ։

ՏՐԴԱՏ

Որդի մեծին Խոսրովու , կրթեալ ի մանկութէ կըր-
թութէ հռոմայեցւոց . իսկ բնական քաջութէ և ուժով
գերազանցեալ քան զայլ ամենայն Թագաւորս մեր , նմա-
նելով Վահագնի։ Եղև սա մի յերևելեացն ի կարգս Թա-
գաւորաց մերոց. և առաւել երևելի Հանդիսացեալ գարձ-
մամբ իւրով ի քրիստոնէական հաւատս , և գաղձուցա-
նելով զամենայն աշխարհս Հայոց միանգամայն, որով և
պատմութէն վարուց իւրոց կացուցանէ նոր ինն Թուականն
ի պատմութէ կրճռի ազգիս , որպ և ամենայն բարեկար-
գութէն և աշխարհաշինութէն զոր արար՝ եղեն առաւել
ի հոգևորս. բայց ձեռամբ հռոմայեցւոց գոլով Թագա-
ւորեալ՝ եղև իբրև առիթ իշխելոյ հռոմայեցւոց ի վե-
րայ աշխարհիս ։

ԽՈՍՐՈՎ Բ

Կոչեցեալն Փոքր . զի ըստ ասելոյ Խորենացւոյն ք. 6.
« Փոքր էր յանձնէ և անարի ոսկերօք , ոչ գոլով ի նմա
նուէն պատերազմողական հասակի ». և ի ք. 83. « Ոչ հա-
սեալ հասակի ծնողաց իւրոց »։ Եւ ի ք. 83. « Ոչ հա-
սեալ հասակի ծնողաց իւրոց »։ Եւ ի ք. 83. « Ոչ հա-
սեալ հասակի ծնողաց իւրոց »։ Եւ ի ք. 83. « Ոչ հա-
սեալ հասակի ծնողաց իւրոց »։ Եւ ի ք. 83. « Ոչ հա-
սեալ հասակի ծնողաց իւրոց »։ Եւ ի ք. 83. « Ոչ հա-
սեալ հասակի ծնողաց իւրոց »։ Եւ ի ք. 83. « Ոչ հա-

կանաց դիմել առաքինել առ կայսեն, որպէս վի զօրաք և օգնութիւք կարասցեն նատուցանել Թագաւոր զօրհնաւոր ժառանգն՝ որ էր որդի Տրդատայ։ Եւ այսպէս յանկարգութիւն Թագաւորաց և նախարարաց մերոց աստի և անդր առնային արշակունի Թագաւորք հրամանաւ կայսերն Նբսատան, և երբեմն հրամանաւ Պարսից։

Օ վչիչակ շուառութիւն աշխարհիս որ յայսմ ժամանակի՝ խորենացին ՟բ. 4. նմանեցուցանէ անիշխանութիւն ժամանակի երբայեցւոց՝ յորժամ յետ դատաւորաց իւրաքանչիւրոք ըստ հաճոյից իւրոց գնային [1]։ Ակնարկութիւք որ գՀետ եկին մնհուան Տրդատայ եղեն երբեակ. առաջինն՝ նախաբարաց զմիմեանս կոտորել. "Յանիշխանութիւն ինայեալք, ասէ խորենացին ՟բ. 2. յարեան ազգ յազգի վերայ նախաբարութիւք կոտորել զմիմեանս. ուստի և երեք տոհմքն [2]... սպառեալ բարձան ՚ի միմեանց,,։ Երկրորդ՝ զի ընդ լսելն Նանատրկայ զմահ Տրդատայ, ինքն Թագաւորեաց ըստ ոչ իրաւանց. "Թագ կապեալ ինքեան, ասէ խորենացին ՟բ. 3. ունի զքաղաքն Փայտակարան. զօրութիւն օտար ազգաց խորհեր տիրել բոլորումն Հայոց,,։ Եւ երրորդ՝ զի տեսեալ զայն Բակրոյ բդեշխին Աղձնեաց, ինքն ևս տիրագլուխ եղև [3] առ Պարսս դիմելով։ Ահա առաջին նուագ դիմելոյ առ Պարսիկս, և մուտ համարձակութեան տալոյ Պարսից իշխել ՚ի վերայ մեր։

Ի պատճառս երկուց ապստամբացս, խոսրով ոչ կարէր ինքնին նատել Թագաւոր, այլ պէտք եղեն ժողովով նախարարաց և վրթանիսի եպիսկոպոսապետի ինդրել ՚ի կոստանդեայ կայսերէ Թագաւորեցուցանել զնա։ Ի Թղթին զոր գրեցին առ նա՝ զՀայաստան կոչեն աշխարհ կայսեր [4]. "Մի տացես զաշխարհն քո Պարսից անաստուածս ձեռ, այլ օգնեսցես մեզ զօրաք՝ Թագաւորեցուցանել զորդի Տրդատայ զխոսրով,,։ Ա՚նպէս արար կայսրն. զի առաքեաց զօր ծանր, ծիրանիս և սպակ [5]. և ՚ի Թղթին

1 Տես զբանս Նորա ՚ի գլուխն Պատմուէ. յոգ. ՟բ. վասն նուազման աշխարհիս. դար ՟բ։

2 Ո՚ւստն այսր տեսցես ուր ունիմք խոսել զնախաբարութիւնց։

3 Տես Նոյնպէս ՚ի դարն ՟բ. Նուազման աշխարհիս։

4 Ա՚նպէս կոչեն կարծեմ, ըստ որում աշխարհ մեր այնպէս կոչեր Դիոգոֆէէք կոչեցեալ, որպէս ուՆիս տեսանել յայս գլուխս, ուր ունիմք խոսել զբաժանմունէ հռոմայեցւոց։

5 Ակրակոս ոչ Թղթով այլ երթալովն մեծին Վրթանէսի պատճառ Թագաւորեալ խոսրովու. "Խակ մեծն Վրթանէս երթեալ առ Կոստանդին կայսեր, Թագաւորեցուցանել զխոսրով զորդի քաջին և առաքինոյն Տրդատայ. զոր և արար խակ,,։

խրատ գրէ առ մերս. Զայս արարաք, "որպէս զի բարեկարգութեի՛ հաստատեալ, մեզ ծառայեսջիք միամտութե՛ն,, Բայց ահա և սկիզբն իշխել տալոյ և կայսերացդ ի վերայ մեր ի պատճառս երկպառակուե՛ մերոյն։ Աչխարհ մեր նահ. յայնմ ժամանակի հմայսզգործեր տալ հարկս կայսեր, զի ասէ ՟ք. 6. վասն Աթոռոյս զոր առաքեալ էր զօրագլուխ. "Եբ իւր ժողովեալ զՀարկն՝ առ կայսր գնայ,, Տայր և ուրոյն հարկ ինչ առ թագաւորն Պարսից Շապուհ, զոր ապա խափանեաց, գիտելով թէ ձեռն Շապհոյ ընդ թէհմախն է, այսինքն է՝ ընդ Սանատրուկ և ընդ կովկասայինս, որք արշաւեցին ի վերայ Խոսրովու. վասն որոյ "Լուծանէ, ասէ ՟ք. 10 զնաղաղուէն ընդ նմա (ընդ Շապհոյ), և զմանաւանր հարկին արգելու ի նմանէ՝ տալով կայսեր, և ածելով զզօրս Յունաց,,

Վ.յսպսի ինչ սակս խռովութեանց՝ որ ի ժամանակս թագաւորելոյ փոքուն Խոսրովու. իսկ սակս գործոց նոր քա չէք ինչ արժանի ի յիշատակել. "Ոչինչ արուեստ քաջուէ ցուցեալ որպէս զՀայրն, ասէ Խորենացին ՟ք. 8. այլ և ոչ վասն հատուածելոց կռմանցն (Սանատրկոյ և Բակրոյ) հակառակեցաւ ինչ... ամենևին իմբ ոչ ունելով փարել աչխուհական մտածութե՛ն... զքաջուէ և զառաքինի յիշատակաց անհոգի արարեալ, զբօսանաց՝ հաւորսութե՛ց և այլոց որսոց պարապեալ,, Մի՛այն ի բանից Բուզանդայ ՟ք. 3. խմնամք ի խաղաղութե՛ն ձեացեալ յայնժամ աշխարհին. զի ասէ. "խաղաղուէն և չինուէն, մարդաշատութե՛ն և առողջուէն, պտղաբերութե՛ն և ստացուածոց աճատութե՛ն և շահեկանութե՛ն, և մեծն աստուածասէրը պաշտօն ի հաՀոյակատարն բարուեցեալ յամն յաւուրս սոցա առնել բազմացաւ,, այսինքն է յաւուրս Խոսրովու և սրբոյն Վրթանէսի։

---

1 Թոմա արծրունի ժՁ. առաւել և գովելով գխորով գրէ. "Խաղաղասէր բարեկարգութե՛ն հաստատեալ յօրինէ զկարգս աշխարհիս նախարարս ըստ հանգիպի, և ոչինչ փոյթ եղև ումեք հոգալ ուստեք արշաւանս և զգիւրութիս. բայց ընդ Յունաց թագաւորութե՛ն առաւել միայն հնազանդութե՛ն առալ զնալ զիմեք։ ... և զզօրն տուեալ ի ձեռս վահանայ ամատունւոյ հոգալ զգործ պատերազմաց, թէ արդեօք գէպ լինիցի ուստեք... ըստ կարգաց քրիստոնէութե՛ն վարէր ըստ արժանի պատուիրանաց տեառն, և ըստ խրատ տու մերին վրթանէսայ յապոհովա նայր ամենայնիս. ... իսկ զՀարկացն տուրս յարքունեան գնաւորւ ի ձեռն գործակալին վճարէր առ կայսր,,

ՏԻՐԱՆ Բ

Յետ մահուն խոսրովայ առ Թագաւորեցուցանել զՏիրան զորդի նորա՝ հարկ եղև առ կայսրն անկանիլ, և ի ձեռն նորա կացուցանել Թագաւոր. բայց այս ձեռնտուհի կայսեր՝ յայլմէ կողմանէ միաս բերեր աշխարհս. զի գրգռեր զպարսիկն իշխել ի վերայ Հայոց փոխանակ կայսեր. վասն որոյ Շապուհ արքայ Պարսից աճապարեալ զՆերսէհ զեղբայր իւր բազում զօրօք առաքեաց ի Հայս, առ ի կացուցանել Թագաւոր ի վերայ աշխարհիս Հայոց, " Իբրև անառաջնորդ զսա վարկուցեալ ,, ասէ Խորենացին էջ. 10: Եւ Աբշաւիր կամնաբական՝ առ որ յանձն աբարեալ կայր յայնժամ աշխարհս՝ այր հաւատարիմ և զօրաւոր՝ փախստական արար զայնչափ զօրս Պարսից: Տիրան Թագաւորեալ, " ունի զաշխարհս մեր խաղաղութիւն, հաշտութի՛ւն ընդ Պարսս առնելով և ոչ պատերազմունս. Հարկելով Յունաց, այլ և մանուածս ինչ Պարսից ,, էջ. 11: Գործս այս խոհեմութի՛ւն կարծեցեալ առ Նմա, ամենևին նուաստամտութի՛ւն էր գործ. նմին իբրև ասէ Խորենացին էջ. 11. " կայր ի համդարտութի՛ւն իբրև զհայր իւր. ոչինչ արութի՛ւն քաջութի՛ւն և սուր ցուցեալ. նաև ոչ հայրենի առաքինութի՛ւն հետևեալ, այլ թուլացեալ յամենայն բարեպաշտութի՛ւն գաղտնի, ոչ իչխելով համարձակ պատուհել զանան ի մեծէն Վրթանիսէ ,,:

Լ. Յայլ ահագին եղև չարուն նորա յանդգնեալ ի սպանանել զերկոսին լուսաւորսն՝ զսուրբն Յուսիկ, և զեպիսկոպոսունն Դանիէլ, զնորին զանեծան ժառանգելով. որոյ պատիժ համարիս խորենացին զգնացն նորա՝ ի կոչ Շապհոյ. և յիրաւի, զի որ գիտաց պատճառել իւրոյ անկաւ գալ ի ձիավարել, և հրաժարեցաւ յընկերելոյ Յուլիանոսի մինչև ի Պարսս, զնաղդ ոչ կարաց հրաժարել ի կոչոյն Շապհոյ. այլ կուրացեալ մնաց կորոյս բնաւ զկորագիտութի՛ն, և " խելագարեալ գնաց առ նա. քանզի արժանն տանէր գնա ի տեղի հատուցմանն ,, էջ. 17: Յայնժամ Շապուհ կալեալ գնա կուրացոյց զաչս նորա. զայն " լոյս աչերա՛ն, ասէ, յորմէ խաւարեցոյց Տիրան զՇապուհ, խաւարեցաւ և ինքն ,, : Բայց առաւել զարժանաւոր պատիժ ընկալաւ, յորժամ հրամանաւ որդւոյն իւրոյ Աբշակայ ընկալաւ զմահ իւր հեղձամահ լինելով, որպես ինքն էր արարեալ երկուց հոգևոր հարց իւրոց:

ԱՐՁԱԿ Բ

1. Մեռանէր Տիրանայ՝ Հապուհ Պարսից արքայ յոյժ առաւել խորագէտ քան զիւրս, ինքն կացոյց Թագաւոր Հայոց զԱրշակ զորդին Տիրանայ, որպէս զի ինքն տիրեսցէ՛ի վերայ աշխարհիս Հայոց և մի Յոյնք. "Ակն ածելով՛ի զօրացն Հայոց, ասէ Խորենացին Ճ. 18. զի մի խափան ինչ առաջի արկեալոց իւրոց գործոցն լինիցին. այսպիսի ինն պատճէ համարեաւ, բարերարութիւն առնելով՛ իւր հաստատել զաշխարհն", եւ այնչափ իշխեաց՝ մինչև "նուաճեաց և զազգ նախարարացն, պատանդս առնելով յամենեցունց", Վասն որոյ և համարձակ փոխեալ զքաջն Վահան ամենայնի՛ի սպարապետութենէ, փոխանակ նորա զիւր հաւատարիմն կացոյց, որ էր Վաղինակ անուն, նմա յանձն արարեալ զՀայս, որպէս ասէ Խորենացի իշխելն Պարսից՛ի վերայ մեր՝ հարկաւորապէս ուներ զբերդ գալ զՅոյս. յոյր սակս յուշ առնէ Վաղենտիանոս կայսր գրելով առ Արշակ. "Պարտ էր քեզ յիշել զաւրիսն՝ որ անցին ընդ ձեզ յանապատածիցն Պարսից, և զերաքտիսն որ՛ի մէնջ՛ի վաղնջուց մինչև ցքեզ. և հեռանալ՛ի նոցանէ, և մօտել՛ի մեզ",

Հայց Արշակ յայնժամ եցոյց զիւր գոռոզութիւն և զծանձաղամտութի՛ւն, յորժամ ոչ միայն չարար ինչ պատասխանի ետ զնոցանէ, այլ և խրոխտանօք արհամարհեաց զդեսպանս առաքեալս՛ի կայսերէն. Այլ թէ քանի անմտութենէ էր գործն՛ի ցասումն չարժել զՎաղենտիանոս յորժամ՛ի պատանդի կայր առ նմա եղբայր իւր Տրդատ, ծանեաւ զինի՛ յորժամ նա ինքն Վաղենտիանոս յայնմ ցասման պահու՛ի վրէժխնդրութենէ Արշակայ հրամայեաց սպանանել զՏրդատ, իսկ՛ի վերայ Հայոց զօր ծանր առաքել. Հարկ եղև յայնժամ և Արշակայ նուաստանալ, և միջնորդ առաքել զինծն Ներսէս. որով "՛ի հաշտութենէ մտղթեալ՝ տայ լինով (Արշակ) զհատիանեալ Հարկըսն,,. Ճ. 21. Բայց զայս առնելով ընդ կայսերն՛ի միւս կողմանէ զՀապուհ Պարսից արքայ բարկացոյց, որ "յայսնեաց ղցասումն զոր ուներ առ Արշակ, վասն ոչ նմա՝ այլ կայսեր հարկելոյ զայնքան ամն",

Յորմէ՛ւ Արշակ անգէտ գոլով ամենևին կառավարութենէ և կենցաղագիտուե՛, ըստ ասելոյ Խորենացւոյն Ճ. 19. "Այնհաճ եղեալ պարծելով հանապազ՛ի գինւոր

367

բուս և յերգս վարձակաց ,, . երբեմն Յունաց ծառայելով և երբեմն Պարսից, ոչ միոյն հաճոյ լինելը և ոչ միւսում. իսկ աշխարհ մեր երբեմն 'ի Յունաց կայսերէն, և երբեմն 'ի Պարսից թագաւորէն վըդովեալ աւերեր : Ա֊յլ ևս առաւել անմոռացաւ Աբրշակ յորժամ զԱբրշակաւան շինելով զքաղաքն անխրատաց՝ զամենայն նախարարս իւր թշնամացոյց ընդ ինքեան. զոյս վըդովումն զոր օտարք ունէին առնել, ինքն արար 'ի մէջ իւրոց աշխարհին և ընտանեաց. նորին աղագաւ արժանապէս կոչի զոյն խորենացին՝ գործ անմոռաւք . ասա նախարարքը իւր առ 'ի վըէժիմդրութի՝ զպարսիկս կոչեցին մուծին 'ի Հայս . " Որ աւերեալ գերեաց զաշխարհս մեր, մինչև զոսկերս անգամ Հարցն բրեաց 'ի գերեզմանաց ,, . որպէս բոզոք բարձեալ գրէ նա ինքն Աբրշակ առ Վաղէս կայսր . ՟բ . 29 :

Ել յայս վերջացաւ ինաս Աբրշակաւանին, այլ և 'ի կոտորել նախարարաց զնահիկս նորա յառնէ մինչև ցկին. և յայմմանէ գրգռեցաւ մարտ սաստիկ և բազում արիւն հեղուի 'ի մէջ թագաւորին և 'ի մէջ իւրոց նախարարաց . զի Աբրշակ 'ի վըէժիմդրուն ընդդէմ նախարարացն՝ թէ ընդեր կոտորեցին զնահիկս Աբրշակաւանին՝ ժողովեալ զզօրս Վրաց եւ 'ի պատերազմ ընդդէմ նոցա . նոքա ևս ձակատ տուեալ ըմբռնացան . որով յարեաւ քաղաքական պատերազմ 'ի մէջ Հայազանց . յերկուց կողմանց անկան բազմութիւն Հայկազանց . յայմմ վայրի և զօրք Վաղէսի կայսեր հասին պատերազմել ընդ Աբրշակայ : Տեսեալ Աբրշակայ անմիտ կառավարութիւն իւրով թշնամի եղեալ զանձն միանգամայն Պարսից , Յունաց և իւրոց նախարարաց, դիմեաց առ մեծն 'Ներսէս՝ կեղծաւորելով ապաշխարութիւն . զինք ինքն միջնորդ կալեալ, զպապ զորդի իւր և զորդիս սմենայն նախարարաց պատանդս տուեալ , և զՀարիւն վճարեալ, ջանայ 'ի հաշտուի ածել զկայսրն Վաղէս . բայց հաշտուէ ոչ գտաւ տեղի . և մեծն 'Ներսէս 'ի պատճառս նորա աքսորեցաւ յանապատ և յանջրդի կողմն : Իսկ ինքն Աբրշակ փոխանակ շահելոյ զսիրտս իւրոց նախարարաց , զՀեռանալ մեծին 'Ներսէսի ժամ դիպող համարեալ իւրումն անմիտ վըէժիմդրութեան՝ զբազումս կոտորեաց 'ի նախարարաց , ստելով ուխտին զոր արարեալ էր միջնորդութեամբ մեծին 'Ներսէսի , որպէս պատմ խորենացին ՟բ . 29 . " Եթէ մինչդեռ նախարարքն հաստատեցին ուխտ , զի յայմմ հետէ թագաւորն վարեսցի ուղղութեամբ . և նոքա (նախարարքն) ծառայեսցեն միամտութեամբ ,, : Ա֊յլ ստեաց

ընդդէմ՝ ուխտին՝ տալով քարկոծել զնորատուն իւր զեպիսկոպոսն զկաղ։

Վասն յանդգնութեան էր ցասումն Աբրահայ ընդդէմ Վաղէսի կայսեր՝ թէ ընդեր արգելեալ կալաւ զմեծն Սեր սէս, և յայմանէ աւերել զերկիր նորա, առաքելով զզօրաւոր իւր զՎասակ, որ ըստ Խոռենացւոյ Գ. 11. «Հարկանեցեր աւար առնոյր զկողմանս Գամրաց մինչև՝ ի քաղաքն յանկուրացւոց. զվեց ամ զնիմանց զհետ աւերէր զաշխարհ սահմանացն Յունաց»։ Զխարդ և իցէ, հաղիւ խաղաղացեալ ընդ դրան Յունաց, նեղեալ՝ ի զօրացն Պարսից՝ փախեաւ. բայց տեսեալ թէ թափուր և օտարացեալ մայր իւրոց նախարարաց, որք «կամաւ երթային առ Շապուհ, տաղտկացեալ յիւրեանց արքայէն Արշակայ», և պատուով դառնային՝ ի Հայս, որպէս ասէ Խորենացին Գ. 34. Ջանաց որսալ զզօրագլուխն Պարսից, որ էր պահլաւիկ աղգակից Արշակայ. խոստանալով նմա բաղում ինչ պարգևել իբրև իւրում աղգակցի, եթէ թողցէ զնիքն փախչել յերկիրն Յունաց. բայց ըստ գործոց իւրոց պատասխանի ընկալաւ, եթէ դու ոչ խնայեցեր՝ ի կամաբարկանս՝ որ քան զիս բազմաց առաւել մերձաւոր քո էին, զինքդ յինէն ակնունելոյս խնայուես։ Արշակ յանհնարինս մտեալ յակամայս գնաց առ Շապուհ. բայց գնաց իբր դիմելով առ մահ իւր, զի շղթայիւք կապեալ արկաս յԱնյուշն կոչեցեալ բերդ. անդ յօտարակուտս եղեալ անձնասպան եղև։

Ի՛չ այսպէս առ անմիտ ագահուէն զոր կարծէր լցուցանել չինելով զԱրշակաւան՝ այնքան կոտորածք եղեն բազմութեամբ քնակաց քաղաքին և նախարարաց, և ինքն իսկ զրկեցաւ՝ ի կենաց. և ոչ այսչափ միայն՝ այլ և նոյն խստապարանոցութեամբ և անմտութեամբ իւր պատճառեալ եղեն մահուան նաև այլոց բազմաց. զի բաց՝ ի նախագրելոցս՝ ինքն Արշակ տարապարտուց սպան զԳնել զերջորդն իւր, առանց քննելոյ ամենևին զամբաստանութիւն բանսարկուացն, և ոչ կամելով լսել միջնորդութեամբ մեծին Սերապէի, յոր մ՚ ընկալաւ զանէծս նորա. էառ և զկին Գնելայ զփառանձեմ, սպան և զՏիրութ և զԱրարդան։ Եւ՝ ի վերայ ամենայն չարեացս այսոցիկ՝ հասաներ և համաչխարհական աւերումն՝ ի վերայ աշխարհիս Հայոց. զի յետ գնալոյն Արշակայ՝ ի միոյ կողմանէ բազմութեամբ նախարարաց փառասէր յաշխարհն Յունաց, և՝ ի միւս կողմանէ երկու ուրացօղք յազգէս՝ Մերուժան և Վահան՝ զօրաց Պարսից

մոեալ՝ի Հայս, և Թափուր գտեալ յամենայն զօրութիւն՝ վերջին աւերուին ածին աշխարհիս. քանզի Ըսպուհ Պարսից արքայ այնպէս հրամայեալ էր, "զի քանդեալ աւերեսցեն զամրոցն ամենայն քաղաքաց" աշխարհիս Հայոց, որպէս ասէ Խորենացին Ճ. 35։

Ի գրելոցս աստի յայտնի երևի լինել Աբշակայ այր բարուք ժանտ, ագահ և չարանախանձ, մեծաց անխոհեմ հուրդ, ծանծաղամիտ, գործովք անգուսթ և արիւնարուշտ։ Մեծ էր արդարև անգթութիւն զոր արար տոհմին կամաբարկանաց, յոչինչ պատճառս կոտորելով զնոսա, միայն առ յափշտակել զերկիրս նոցա զԱրտագերս և զերուանդաշատ. այլ մեծագոյն՝ թողուլ զնոսա անթաղ առ՝ի կերակուր լինել շանց. իսկ առաւել մեծագոյն՝ սպանանել նաև զայլորդսն թէ ընդէր թաղեցին զմարմինս տերանց իւրեանց կամաբարկանաց, զորմէ պատմէ Խորենացին Ճ. 32։ Մի միայն բարեկարգութիւն յիշատակեալ վասն Աբշակայ է կարգադրութիւն իշխանաց՝ զոր արարեալ գրէն Մեսրոպ, և Բուզանդ. որ Ճ. 2. ասէ. "Եւ նորոգեցաւ զուարթացաւ տերութիւն Թագաւորունն Հայաստան երկրին որպէս և զառաջինսն. մեծամեծքն յիւրաքանչիւր գահս, և գործակալքն յիւրաքանչիւր չափս"։

ՊԱՊ

Որդի Ճ. Աբշակայ. որ նստաւ միջնորդելով մեծին Պերսից առ հայսն, և օգնութիւն կայսեր. ընդ նստել՝ գիտելով մեծին Պերսից թէ ամենայն պատճառք աւերմանն աշխարհիս Հայոց՝ եղև յանիրաւուէ և յամմարդի բարուց Աբշակայ, և զի յայնմանէ հետեւեալ էր երկպառակութիւնն՝ի մէջ նախարարաց և արքային, "Դներ, ասէ Խորենացին Ճ. 38. վկայութիւն՝ի մէջ արքային և նախարարացն, գնալ յամենայն ձմեռապարհս արդարութիւն. զի վկայեցեն ըստ հաւատոց քրիստոնէութիւն և գործքն, և զի արքային մի հօր իւրում (Աբշակայ) նմմանել, անիրաւել և զրկել. այլ վարեսցի ուղղութիւն՝ հայրաբար խնամով առ նախարարսն. և նոքա մի ևս յաւելցեն վտարանդել նշխարհելով գնա. այլ ծառայել միամտութիւն"։ Եւ արդարև Պապ հեռի եկաց՝ի զրկանաց, որպես վկայէ նոյն մատենագիրն. "Յոյժ անընդհատիրաբար յուշացեալ զիւր ախորժակսն. և առատաբար կայր"։ Վասն որոյ՝ի կամաբարկանն Սպանդարատ գարձոյց զՀրիրակ և զԱրշարունեաց

գաւառ. բայց "ոչ իբրև զանիրաւ զազահուն հօր իւրոյ Աբշակայ, այլ որպէս պարգևս ընդ վաստակոյ քաջին Սպանդարատայ՝ որ սպան զԱրեկաց արքայ. այլ և զայլոց նախարարացն գարձոյց զզերկանս,,։

Ա. Այլ ո՞ հաւատայր, թէ սուրբն Ներսէս իբր 'ի հա- տուցումն արդեամց այսպիսի գեղեցիկ իրատու իւրոյ և բարեկարգութեանն տեսանել ունէր զիւրն թունաւորեալ 'ի նմանէ. բայց արդարև այնչափ եղև անգթութիւն և բարբարոսութեն Պապայ, և այնչափ խստապարանոց յա- մառութեն յանարժան գործս անառակութեն իւրոյ, մինչև կեղծաւորել զզջումն սուտ, չիւր սեղան հրաւիրել, և անդ ձեռամբ իւրով արբուցանել այնքանոյ առն աս- տուածարեալ հայրապետի դեղ մահու, և այնպէս լուծա- նել 'ի կենաց զայն՝ որ համարձակ աշխարհիս Հայոց եկաց իբրև զայլ ոմն Լուսաւորիչ, և նորին իսկ արքայի մեծ բա- րերար. զի առ աղաչանս մեծի հայրապետին զկնի- կայսեր նստոյց զՊապ թագաւոր. և դարձեալ զնոյն ինքն զՊապ աղօթիւք իբր յայտնի սքանչելեօք փրկեր 'ի կորըս- տենէ մահտին. քանզի միայն աղօթից սրբոյն Ներսէսի ըն- ծայեն պատմագիրք զյաղթուհին որ 'ի Ձիրաւ դաշտի ընդ- դէմ Շապհոյ Պարսից արքայի, որ ամենայն զօրուբ իւ- րով խմբեալ ձակատեր ընդդէմ Պապայ 'ի կորուստանել զնա։ Եւ այնչափ երախտիս նորա այսպիսի առնելով ապ- երախտուն, ընկալաւ զանէծս սրբոյն. զի յորժամ լուաւ զխռովուն կայսեր Թէոդոսի 'ի Թեսաղոնիկէ՝ անմտացաւ զանմտութեն մեծ, եցոյց զիւր յետին ծանծաղամտութեն՝ ժամ բարեպատեհ համարեալ նշկահելոյ զզօրս կայսեր և զզօրագլուխս նոցա զՏերենտիանոս. որով և զարժանի հատուցումն ընկալաւ՝ սակրով վճարեալ 'ի կենաց։

ՎԱՐԱԴԱՑ

Հաջորդ Պապայ, և չէր արքայորդի, այլ միայն 'ի տոհմէն արշակունի. և թէպէտ էր կորովի մարմնով և քաջ սրտիւ, այլ Բուզանդ Ե. 34. կոչէ զնա "Խմաց Թեթեհ, մանկաբարոյ, աղայահանճար, մանկամիտ,,. զի հասակաւ էս մանուկ էր. միայն յանձնապատան լինելով 'ի բնական այժ մարմնոյն՝ ոչ ումեք անսայր. "Աբրեաւ, ասէ խորենացին Գ. 40. 'ի մանկուենն արուէս, առ այսո- քիւք և 'ի թագաւորուենն, ոչ հնազանդէր խրատու վերա- կացուաց զօրացն Յունաց,,։ Մեծ բարերաղդութի էր նորա

ունել զայրախիսի հաւատարիմ և աշխարհաշէն զօրավար՝ զոր օրինակ էր Մուշեղ սպարապետ, որ ըստ գրելոյ Բուզանդայ Ե. 34. «Խրատ բարեաց Թագաւորին մանկանն Վարազդատայ մատուցանէր. և հոգայր հանապազ վասն Թագաւորութեանն աշխարհին Հայոց, և զիարդ կամ որպէս չէին լինել մարթասցէ. և հանապազ երկս արկանէր բարեխօսութիւնս, զի հաստատուն կալ կարասցէ Թագաւորութիւնն,,: Բայց՝ի գլ. 35. գրէ Թէ մեծ նախարարքն Հայոց տեսեալ զի Վարազդատ «մանուկ բանսերծուկ է, զոր՝ի բարոյ որոշել չգիտէ... նա առաւել ունին զնոսա մանկտոյն՝ որ՝ի տիոց հասակակիցք էին նորա, առաւել քան ծերոցն խնամանոց՝ որք կարող էին զօգտակար խրատուն մատուցանել նմա,,: Վասն որոյ և նախարարքն Հայոց, ասէ, «սկսան այնուհետև ըստ կամաց իւրեանց վարել զԹագաւորն. որպէս և կամէին, բանիւք իւրեանց տանէին և բերէին զնա,,: Նմին իսկ և Բատ նահապետն Սահառունեաց տոհմին՝ որ դայեակ մնուցիչ էր լեալ Վարազդատայ՝ ինքն կամելով յափշտակել զսպարապետութիւնն Հայոց, քանզի մատուցեալ յունին նորա՝ եւս սպանանել զՄուշեղ զայրն քաջ և զերախտաւոր:

Արդիւնք իւրոյ անմտութեանն այն եղև՝ զի անձին օգուտ համարեցաւ ելանել՝ի տերութենէ կայսեր՝ որոյ ձեռնտուութեամբ ունէր զԹագաւորութիւնն, և դարձուցանել զաշխարհս Հայոց առ տերութիւնն Պարսից. և զայս ոչ զանխուսիւնչ, այլ յայսմանէ՝ խնդրելով՝ի Շապհոյ Պարսից արքայէ զդուստր նորա՝ի հնութենէ իւրմէ՝ի հատուցումն փոխարինի: Զայն զգացեալ Թէոդոսի կայսեր՝ հրամայեաց իւրոց զօրավարաց ունել և առաքել առ ինքն զՎարազդատ. որ և ինքնակամ գնաց, չյիշելով ամենևին Թէ խորհուրդ իւր զոր երևնէր՝ ի վեր ելեալ ինչ իցէ, այլ կարծեր Թէ կարող իցէ ստել զամբաստանութիւնն անձին և պատրել զկայսրն. զայն ինչ ոչ կարաց զմտաւ ածել, Թէ զինչ ուներ առնել՝ յորժամ և ոչ իսկ խօսել Թոյլ տային նմա, որպէս և եղև իսկ. զի կայսրն, ասէ Խորենացին, և ոչ իսկ տեսութեան արժանի արարեալ՝ ետ տանել երկաթի կապանօք՝ի Թուղես կղզի. և անդ եղև վախճան նորա:

ԱՐՇԱԿ Գ. ՎԱՂԱՐՇԱԿ Բ

Սոքա էին երկու եղբարք որդիք Պապայ, որք կային՝ի Բիւզանդիա. մեծն Թէոդոս յետ Վարազդատայ զերկո-

սին զոսա միանգամայն Թագաւորեցոյց . որպէս զի եր-
կու գոլով՝ գԺուարին լիցի նոցա վտարանդիլ : Արշակ եկն
յարևելեակողմն հայաստան աշխարհիս , իսկ Վաղարշակ
յարևմտեան կողմն . այլ սա ի նմին ամի մեռաւ :

Ձայսմ ժամանակի ք. Տապուհ Պարսից արքայ և Ար-
կադիոս որդի մեծին Թէոդոսի արքին հաշտութիւն ընդ
միմեանս , բաժանելով ի մէջ իւրեանց զաշխարհս Հայոց .
յորմէ սկսաւ անուանի բաժանումն այն աշխարհիս մերոյ
յերկուս , զորմէ գրեցաք ի խօսելն զնուազմանէ աշխար-
հիս : Ասյս բաժանումն պատճառս ետ Արշակայ Թողուլ
զբաժինն Պարսից և անցանել ի բաժինն Յունաց . «Վասն
որոյ , ասէ Խորենացին ք. կձ . Թողեալ Արշակայ զնուն
Թագաւորութեան Հարց իւրոց զԱրշարատ , և զամենայն
մասն բաժնին Պարսից , գնալ տիրել արևմտեայ կողմանց
աշխարհիս մերոյ՝ որ ի մասն բաժնին Յունաց . ոչ միայն
մնրն աղագաւ որ էր ի կայսերական քաղաքէն , այլ լաւ
համարեալ նուազ կողմանն տիրել և ծառայել քրիստո-
նեայ Թագաւորի , և ոչ յոլովից իշխել և մտանել ընդ
լծով հեթանոսաց » : Բայց աւերման աշխարհիս այն եղև
պատճառ , զի և բազմութիւն նախարարաց որ ի բաժինն
Շապհոյ՝ հանդերձ որդւովք գնացին զհետ Արշակայ .
յորմէ Շապուհ զարհուր գանգատ գրեաց առ Արշակ .
իսկ Արշակ պատասխանի արար՝ Թէ « Վասն զի ոչ համ-
բերեին ընդ պարսիկ առաջնորդաւ վարիլ , (վասն այնո-
րիկ) եկին զհետ իմ » :

ԽՈՍՐՈՎ Գ

Ձայս խոսրով որ էր արշակունի՝ Տապուհ կացոյց Թա-
գաւոր իւրոյ բաժնին սակս նախագրեալ բանին Արշա-
կայ . և յայնժամ արդարև դարձան վերստին նախարարքն՝
տեսեալ զմուրհակ ուխտին Շապհոյ՝ որով ապահովութիւն
խոստանայր նոցա . Բայց այս յերկուս բաժանումն նախա-
րարաց՝ ունէր լինել յաւուր միում պատճառ կռուոյ , որ-
պէս և եղև իսկ . որում նաև Արշակ ետ առիթ՝ անխորհուրդ
դաբար անսալով քաւութիւն այլոց առանց քննելոյ . այսպէս
ունին մատենագանելով բանասարկութիւն այլոց՝ եհան ի ձե-
ռաց զնահակ ասպետ զայրն քաջ . որ առ ի վերծանիլ՝
փախուցեալ անկաւ առ Խոսրով . և ի կողմանէ Խոսրո-
վայ եկն յարձակեցաւ ի վերայ զօրացն Արշակայ , Յոր-
ժամ զգացան արքունի հանեալ յամրոցէն Անի՝ տանել
կամէին առ Արշակ , Սմպատ յինքն գրաւեալ զայն առ-

նային տալու առ Խոսրով. և նա զկնի գանձուն յղեաց առ Շապուհ։ Եւ այսպէս մի միայն անասին Աբրշակայ տալ բարպարտուց սուտ քսուելեաւ զկնի յայնպիսի առնէ և յայնչափ գանձուց. իսկ զայնչափ ինչս վայելեալ ժառանգեաց օտարազգին պարսիկ։ Բայց ոչ եթէ այս միայն էր վնասն, այլ որպէս ասէ Խորենացին Գ. 45. "Այս եղև սկիզբն պատերազմին Աբրշակայ և Խոսրովայ "։

Յետ քաղցր պատգամաւորութեանն՝ երկու գունդք Հայոց՝ ազգայինք ընդ ազգայինս տան պատերազմ սաստիկ յոյժ, կոտորեն և փախստական առնեն զԱբրշակ. իսկ Յոյնք և Պարսիկք ոչ պատճառ եղեն և ոչ խափանիչք այսմ պատերազմի ըստ գրելոյ նորին Խորենացւոյ, այլ միայն կային ի գնին կորստեան Հայոց ի միմեանց ի պատճառս խորհրդակցութեան կառավարութեանն աքսային։ Ի մեռանելն Աբրշակայ Յոյնք աշուհետեւ ոչ ևս կացուցին ի բաժնի իւրեանց Թագաւոր, այլ իշխանս յաղգէն իւրեանց. միայն Պազասեան գլուխ էր և առաջնորդ յայնժամ՝ի վերայ ամենայն նախարարացն՝ որք էին յայմ բաժնի. որոց ելեալ՝ի բաժնէն Յունաց՝ եկին ի բաժինն Պարսից առ Խոսրով։

Խոսրով տիրեաց նաև բաժնին Յունաց խնդրելով յԱրկադեայ կայսերէն, և խոստանալով տալ նմա Հարկս։ Բայց կենցաղագէտ ոք, զոր օրինակ էր Մեսրոպ՝ այր վարժեալ՝ի գրան աքքունի, յայտնի տեսանէր զմտաւորս կորուստ Թագաւորութեն. վասն որոյ, որպէս գրէ Խորենացին Գ. 47. "Տեսեալ Թէ՝ի վերջ հասեալ է Թագաւորութիւն Հայոց, և զխուովութիւն նիւթ իւրոյ համբերութեն գտեալ Մեսրոպայ... սիրեաց զմիակեցութեանն վարս "։ Բայց գլխաւոր պատճառ վերջանալոյ տերութեանն Աբրշակունեաց՝ էր անխոհեմութիւն, ոչ գիտէին զշահ օգտի իւրեանց, ոչ զկենցաղագիտութիւն և ոչ զկառավարութիւն պետութեանն։

Օ՜ ինչ անխոհեմութիւն էր Խոսրովայ՝ տեսեալ զգասուն Շապհոյ վասն բարեկամանալոյն իւրոյ ընդ Արկադեայ, խրոխտալով և անարգանօք արձակել զպատգամաւորսն Շապհոյ. և նախ քան զվիանալն ընդ Արկադեայ՝ իբր արգիլն միաբանեալ այնպէս խրոխտալ. ոչ զմտաւ էած՝ Թէ սուղ ինչ յառաջ նախարարքն Աբրշակայ ելեալ՝ի բաժնէն Յունաց եկին՝ի բաժինն Պարսից, և անուն ապստամբութեն Թողին առ Արկադեոսի. Թուղթ իւր և Թուղթ նախարարաց էին առ Արկադեայ, տարեալ անդր և մատ-

նեալ 'ի ձեռն Սամուէլի մամիկոնոյ, զորմէ պատմէ Խորենացին Գ. 48. զիաւրդ կարէր այնուհետեւ հաւատարմացուցանել առ Աբիւգեսս զիւր խոստումն, և ակնուհնել օգնութեան առ 'ի նմանէ։

Իսայց Հասպուհ Պարսից արքայ առաւել խորագէտ քան զխոսրով, իսկոյն առաքեաց զորդի իւր զԱրտաշէր 'ի Հայս զօրու ծանուս, զի ոչ պակասեին 'ի նախաթաթս մեր մատնիչք արքայի. օրք և ծանուցեալ էին Հասպհոյ թէ զինչ խորհեր խոսրով. այս է ասելն Խորենացւոյն Գ. 50. Թէ գործեաց Հասպուհ զայս "ի հրապուրելոյ գուշակութեանն հաճախուածս մերոց"։ Աբիւգեսս հրաժարեցաւ յօգնելոյ խոսրովու, որով խոսրով մնաց զրկեալ յամենայնէ. և չկարեր ոչ զդէմ ունել Հասպհոյ՝ կամ Արտաշրի յաջորդի նորա, և ոչ փախչել. ակամայ կամաք մնկաներ առ Արտաշիր Պարսից արքայ. որոյ ընկերեալ զնա 'ի թագաւորութեն՝ զեղբայր նորա զՎռամշապուհ կացոյց թագաւոր, և զխոսրով առաքեաց Լ՚Այրուշն բերդ։

ՎՌԱՄՇԱՊՈՒՀ

Լ՚ղբայր խոսրովու, թագաւոր բարեացակարտ ազգիս. զորոյ զերախտիս ունիմք պատմել 'ի գլուխն Դալոուեան. սա թէպէտ զերկոսին բաժինս եւս ունէր ընդ ձեռամբ, բայց որպէս ծառայ հարկատու. վասն որոյ ասէ խորենացին Գ. 51. "Ծառայեր երկոցունց թագաւորացն տալով զհարկս. զմասին Պարսից՝ (տայր Պարսից արքային) Վռամայ, և զմասին Յունաց՝ (տայր կայսեր) Աբիւգեայ"։ Բայց թէոդոս փոքր ոչ հաւատաց զիւր բաժինն 'ի ձեռս Վռամշապհոյ. այլ իւրովք գործակալօք կալաւ։

ՀԱՊՈՒՀ

Հետ մեռանելոյ Վռամշապհոյ՝ և կրկին թագաւորելոյ խոսրովու զմի ամ և եթ, Յակէբոս Պարսից թագաւոր զորդին իւր զՀապուհ կացոյց թագաւոր 'ի վերայ Հայոց. որպէս զի նովին գիւրին լիցի դարձուցանել զՀայս 'ի դէմս Պարսից, զոր միշտ երկներ. "Գանգղի, ասէ Խորենացին Գ. 55. մեռեալ Համազասպայ՝ և 'ի սպի մեծի եղեալ Սահակայ՝ ոչ ոք 'ի միաբանութեն հաւաքեաց զգունդս Հայոց. վասն որոյ գիւրամուտ եղև յաշխարհս (Հայոց) Հապհոյ"։ Բայց յետ չորից ամաց իրրև գնաց Հասպուհ 'ի

Տիսբոն և Մեռաս անդ, նախարարքը Հայոց ժողովեալ՝ հաւրէն և ցուռեցին զգունդ զօրացն Պարսից որ էին ի Հայս. և զի գիտէին թէ պարսիկն զմի ուներ առնուլ զվիճակ իւր վասն այսր, " Ինքեանք (նախարարքն, ասէ Խորենացին ե. 56.) ցրուեալք, տիրագլուխք, անձնասպահապետք, յամենայն կերիս և յամուրս շրջէին ... ուստի աղակաւ և բաղում խռովութիւն ինացեալ աշխարհս մեր յանիշխանութեան ամն երից՝ աւերեալ ամայանայր. վասն որոյ պակասեալ լինէին հարկք արքունի, և հատեալ ձաւ նապարհք առեւտից, և ամենայն բարեկարգութիւն վըզովեալ ապականեր ".

ԱՐՏԱՇԻՐ

Յայնմհետէ Վռամ Պարսից արքայ գիտացեալ, ասէ Խորենացին ե. 58. " Եթէ առանց նախարարացն Հայոց ոչ մարթի ունել զաշխարհն " Հայոց ի խաղաղութիւն, այլ առհասարակ ուներ ինալ միշտ ծիւեալ ի խռովութեան, որով նուաղեր և շահ իւր. վասն որոյ, ասէ, " Հաշտութիւն խօսեցեալ ի ձեռն Սմբատայ ասպետի ... հաստատեալ զհաշտութիւն, մնըմեալ մնռացման յանցանաց ինքեր, ըստ խնդրոյ նոցա Թագաւոր կացուցանելով զԱրտաշէս որդի Վռամշապհոյ. և փոխեալ զանունն՝ Արտաշիր կոչելով, զաշխարհս Հայոց ի նա հաւատաց առանց պարսիկ վերակացուի. որ տիրեաց ամ վեց ".

Այս Արտաշիր կամ Արտաշէս իւրովք անառակ գործովք անցոյց զինքն ի կարգս վատթար արանց. բայց նա խարարք Հայոց սուղ լինչ զինի գործեցին ի վերայ նորա գործ մեծի վատութիւն և անշնարին անմոռնալեաւն. զի գործ Արտաշրի՝ էր յանցանք և կորուստ անձին, իսկ գործ նախարարաց՝ կորուստ համօրէն տէրութիւն. քանզի միահամուռ միաբան առ Թագաւորն Պարսից բողոք բարձեալ աղաղակաւ ամբաստանեցին վասն անառակութեան Թագաւորին իւրեանց Արտաշրի. զոտար Թագաւորն Պարսից իբր զնիկ Թագաւոր իւրեանց ձանաչելով, իսկ զիւրեանցն իբր օտար մերժելով. ի բազմութիւն անտի նա խարարացն չգտաւ և ոչ մի՝ որ կենդանագործ մնօք քաջ կշռեալ զարարս իւրեանց՝ ի վերայ հասանէր չարեացն որք ունէին զնետ գալ. Այլ մի միայն եկեղեցական գտաւ մեծն Սահակ, որ իբրև այր կենդանակիրթ նախատես լինելով ամենայն չարեաց՝ հակառակ եկաց այսմ, և գունգործեցից խափանել. բայց նախարարք Հայոց այնչափ կու-

բացեալ էին մնոք յայնժամ ընտրել զշահ և զվեսաս անձանց, և ոգւով վրէժխնդրուէ բորբոքեալ ի կատարումն կամաց իւրեանց, զի միաբանեցան և զայնպիսի այր ի բաց հանել յաթոռոյ՝ ասելով ըստ Խորենացւոյն էջ. 63. "Վասն զի ոչ համակամեցաւ մեզ չթագաւորել նմա, արդ և մեք կամեցաւք և քեզ չքահանայանալ մեզ"։ Եւ որ չար ևս է, առ ի դիւրաւ յառաջ տանել զանկումն Թագաւորի իւրեանց՝ ինքեանք ինդրեն և թելադիր լինին Թագաւորին Պարսից՝ յայնմհետէ մի՛ և ևս կացուցանել զոք Թագաւոր Հայկազնեան, այլ պարսիկ հրամանատար. "Մահ նահատակ զի, ասէ Ղազար հկ. լուսաւ Թագաւորն Աբգեաց ամենայն աւագանեաւք դրանն ի դատախազայն Աբտաշէսի, Թէ քնաւ զի իսկ պիտոյ է մեզ Թագաւոր, այլ իշխան պարսիկ ըստ ժամանակի եկեալ վերակացու լեցի մեր. որ և միւրաքանչիւր ուրուք ի մէնջ ծանուցեալ զՀպատակութիւն և զանհպատակութիւն՝ ցուցցէ ձեզ"։

Վասն սոցին ևս ոչ ինչ ասէ Ագաթանգեղոս, այլ քանի ծանաւմնութիւնք գործ մերոց նախաբարաց. զի զոր Թէնաւին ուներ ասէ՝ի շահ իւր և՝ի միտս Հայոց, ինքեանք ասեն առ Թէնամին առանց նախատես լինելոյ քնաւ՝ Թէ զինչ չարիք ունէին անտի ծնանիլ. և զոր սուղ ինչ յաւել ինքեանք ոչ կամէին, և ցասուցեալ էին ի վերայ Յազկերտի Պարսից Թագաւորի Թէ ընդեր զՀատուց զորդին իւր ի վերայ Հայոց կացոյց Թագաւոր պարսիկ, այժմ ինքեանք ինդրեն առանց մտադրելոյ ամենևին Թէ սովին բանիւ քանի համարձակութիւն տային դրան Պարսից բոլոր ուրեք իշխելոյ ի վերայ արքունեաց Հայոց, նաև ի վերայ նոցին իսկ նախարարաց։ Ամբաստանութիւնն իւրեանց եղեն պատճառք ոչ միայն ընկենուլ զԱբտաշիր ի Թագաւորութիւն, այլ նաև "Զամենայն ինչս ազգի նորա ուշել յաղբունիս. նոյնպէս (ընկենուլ յաթոռոյ) և զմեծն Սահակ, և զտունն կաթողիկոսական ուշել յաղբունիս"։

1 Ամենք կարծելով Թէ յորդորեալ խարեաց առ մեծն Սահակ՝ եր վասն միաբանելոյ առ ի ընկենուլ զԱբտաշիր իւրեանց իշխանութիւն, առանց մատնելոյ Պարսից. և սակս չմիաբանելոյ յայս մեծին Սահակայ՝ յայնժամ գնացին մատնիչքն ի ձեռս Պարսից. նմին իսկ սպգամանն յայսմ զառիբն։ Ա՛լ այս է չմանալ զպատմութիւն. զի խորենացին էջ. 63. յայսմ մի գրէ, Թէ նախարարք կոչեցին զՍահակ միաբանել ի չարախոսել առաջի Պարսից արքայի, առ ի ընկենուլ զԱբտաշիր Թագաւոր. և Թէ Սահակ ասէր առ նախարարս. "Ջ՚ինդ լինիցէ այդ, փոխանակել զիմ անուանցեալ ոչխարի ընդ առաջ գազանի (որ է պարսիկն), որպ առաջնութիւն է մեզ պատուհաս"։

եւ այսպէս իբր Թէ ձեռօք իւրեանց զայնչափ ինչ քաղաքական եւ եկեղեցական ստացուածոց եւտուն Պարսից նախարարքն մեր վատախորհուրդք։

Ի պատմութիւնէ համօրէն ազգիս՝ չկայ այլ անմիտ կառավարուի առաւել քան զոր գործեցին միահամուռ նախարարքս իմաստուն տեսուչք կարծեցեալքն ընդդէմ շահու անձանց, եւ զրկեցան յայնպիսւոյ հայրապետի՝ որ սրբութիւն եւ իմաստուն տնտեսութիւնք ըստ Հոգւոյ եւ ըստ մարմնոյ լուստատու էր ազգիս, սիւն հաստատութեան հայաստանեայց եկեղեցւոյ, եւ ամուր ապաւէն երերեալ պետուն աշխարհիս։ Վասն Պարսից Թագաւոր մտադիւր կատարեաց զկայցուած նախարարացն, կացուցանելով արդարև զմարզպան պարսիկ Վեհմիհրաշապուհ անուն ՚ի վերայ աշխարհիս Հայոց։ Իսկ Աբրտաշէսի Հայոց Թագաւորի ոչ ինայր ինչ առնել, քայց եթէ գանգատել զնոցա նախարարաց, զոր Ղազար բերէ ՚ի Թղթ. հ2. "Որպէս սովոր էն ՚ի քէն թշնամանել զտեարս իւրեանց՝ ըստ նմին օրինակի և այժմ կամին կատարել զայր կամաց իւրեանց զնդիրս. քանզի միշտ իշխանափոխք լեալ էն և տիրատեացք "։

Այսպէս ահա վերջացաւ Թագաւորութիւն Աբշակունեաց. ընդ որ զարմացոյս արդարև՝ տեսեալ Թէ զիարդ ազգ մի ողջոյն միանգամայն՝ այնչափ զօրաւոր նախարարքօք տակաւին յոտին կացեալ, և այնչափ բարերեր գաւառք ՚ի ձեռս իւրեանց՝ ինքնակամ խոնարհին աղաչեն զթագաւորն Պարսից՝ զի նա տիրեսցէ ՚ի վերայ Հայոց աշխարհիս. և այնպէս զողջոյն Թագաւորութիւն հայկական մատնեն արկանեն ընդ ոտիւք Պարսից։ Զայս եթէ նորին իսկ վատամայ էր առաջարկեալ նախարարաց մերոց՝ անմտուէ էր նոցա յանձն առնուլ. որպիսի՞ անգամուէ չկէց ապա ինքնին նախարարացն ընդդիմել զոյն։ Այլ էր Թէ ինքեանք միաբան խորհրդով զթագաւորն՝ հաւասարակատութիւնէ օրինօք վարելին զաշխարհս, որպէս և առ այլ ազգս տեսանի այս, քան վատախորհուրդ միաբանութեամբ մատնել զինիկ Թագաւորն և զաշխարհ օտար Թշնամւոյ։

Ահա այս ընթացք էր յոլովից ՚ի Թագաւորացն Աբշակունեաց՝ և այս կառավարուէ նոցա՝ զորոց միանչև ցայժմ զրեցաք. որոց վարք ՚ի ժամանակս քրիստոնէութեան յայտ առնեն Թէ միայն արտաքուստ ընկալան զքրիստոնէութիւն, այլ գործովք ոչ կամեցան Թողուլ զհեթանոսականացն՝ զոր ՚ի ժամանակս կռապաշտուէ ՚ի կիր առնուին. "Ցոր-

մէ հետէ առին նոքա, ասէ Թուզանդ Ք. 13. զանուն քրիստոնէութեն, լոկ միայն իբրեւ զկրօնս իմն մարդկուէ յանձինս իւրեանց և ոչ ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալեալ,, : Աչքի քանզի օրինք բարոյականութէ պարտի համաձայնիլ ընդ հաւատոյ, ուրմեօք այլ էն բաքը և այլ հաւատք, և ուր չիշխողաց ումանք գնան ըստ հաւատոյ՝ և ումանք ոչ, այս այլևայլութէն բազում երկպառակութիւնս ծնանի, և ոչ պակասին անդ խռովութէք:

Վ ման որոյ և զկործանումն Աբշակունեաց ի չարուէ բարուց նոցա յառաջ եկեալ գրէն պատմագիրք. յորս Թուզանդ Ք. 12. զՏիրանայ խօսելով ասէ. " Իակ Թագաւորն Տիրան և այլ մեծամեծ աւագանին նախարարացն՝ կամաչխարհն ամենայն՝ ոչինչ ըստ Աստուծոյ կամացն վարս յանձն առեալ իմաստուն ինչ գնացեալ լինէին. քանզ զամենայն մանաւանդ Թագաւորն կամ իշխանքն սպանութէ՝ անխտիր ի հեղուլ զարիւն արդար ի տարապարտուց՝ գործէին, և այլ մեղս բազումս. և ոչ հայէին ի հրամանս վերնոյն,, Թուէ ապա Ք. 13. և զայլ չարագործութէս նոցա: Ըստ այսմ և Ղազար Թղթ. 22. գրէ. " Որոց գտեալք անարժան ազգն Աբշակունեաց յաղագս անարժան գործոց իւրեանց, ըստ բանի առնն Աստուծոյ Նէբսէսի, գտան եղեալ ընկեցիկք յերեսաց Աստուծոյ. մատնեցան ի բաժանումն Թագաւորին Պարսից և Յոյնաց,, : Իակ բան սրբոյն Նէրսէսի էր անէծք՝ մանաւանդ Թէ գուշակութէ բարձման նոցա, վասն խորդաւանացն սպանութէն զոր արար Պապ Թագաւոր. առ որ խօսելով ասաց սուրբն. " Փոխանակ զի չատախեցեր ի չարիս մեծամեծս առաւել քան զՀայկն քո Տիրան, և քան զայլ նմանիսն քո՝ որք եղէն չարք և անպարիշտք յաղգէն Աբշակունեաց, և ոչ նմանեալ նախանձեցար լսեացն... կործանումն որ բերանով մարգարէին ասացաւ՝ հասցէ ի վերայ ձեր, ըմպել ազգիդ Աբշակունեաց գյետին բաժակին. արբջիք արբեսջիք և կործանեսջիք, և այլ մի հաստատեսջիք,,:

Ա ռաջին և գլխաւոր մոլութիւն նոցա էր զհետ լինել մարմնական ախտից, յորմէ Թէ քանի չարիք յառաջ գան և անձին և աշխարհի տեսչութէ, խնդնայ ամենայն ոք խոհական. զի պատաղեալ ի զբօսանս հաճոյից իւրեանց՝ ոչ լինէին մտագիր ի գործառնութէս կառավարութէան որպէս պարտ էր: Իակ ուր գլուխ կառավարութէն այսպէս՝ ապա հարկաւ բազմանան անդ հրամանատարք և

քսուք և բանսարկուք առ ՚ի կորզել ՚ի ձեռաց միմեանց զիշխողուն և զբարձ պատուոյ. զչարիլ, խանդալ, գըժդժիլ ընդ իրեարս՝ հասարակաց օրէնք լինին յայժամ ՚ի մէջ մեծամեծաց, որք բազումք գործս ՚ի նմանակարս և սպասնուելիս գործել տան թագաւորին։

Այսպէս եղև արդարև յաւուրս Արշակունեաց ՚ի ժամանակս քրիստոնէուն. յայնմանէ վէրստ գայր քրիստոնէութիւն ՚ի ժողովուրդն և ՚ի նախարարս՝ և ոգի վերջինքնորոգեալ. իսկ վերիժառուք յորժամ՝ ոչ կարեն յաշխարհին իւրեանց առնուլ զվերիժ, դիմեն յօտար թագաւորս՝ թիկունս վնասս առնելով ՚ի գործ դնել զվերիժ իւրեանց. յորմէ վէրստ գայ յայտնի ապստամբութիւն և աւերումն աշխարհի։ Եւ եթէ անընդհատ յաջախեն աղէտքս այսոքիկ, ոչ կարէ կալ թագաւորութիւնն այն. այսպէս եղև յամենայն ինքնակործան թագաւորութիւնս, զորոց զկործանումն ոչ ոք ակնունէր տեսանել, որպէս ուսուցանէ ընդհանուր պատմութիւն ամենայն ազգաց՝ Ջոյն և ՚ի պետութեան Արշակունեացս է տեսանել. զի որ Թուէրն անդրդուելի կալ ՚ի վիճաւորական ահեղ զօրութենէն կշռեալ, դրդուեցաւ և անկաւ։ Ջի յորմէ հետէ անձնատուր եղեն նոքա անարժան ախտից, և առ ոտն հարեալ զբանս խրատուացն՝ խոտապարանոցութիւնք յամառեալ անդեցան ՚ի նոյն չարիս՝ լաւ համարեալ ունկնդիր լինել հարձից իւրեանց քան ամբիծ քրիստոսական օրինաց հայատակել, նմին իրի և պետութենէ նոցա երթայր և վատթարանայր. քանզի ՚ի պատճառս ախտիցն այնոցիկ պակասեալ էր ՚ի նոցանէ և հանճար և խմաստութիւն։

Ո այս առնացն աղէտս կրից դառնութեաբ խորհեացին ե. 92. իբրև ՚ի հիմանց ՚ի վեր հանելով յաւէտ առնէ ՚ի խօսելն զՏրդատայ. նախ պատմելով թէ Տրդատ զիարդ գուն գործեր հատանեցուցանել զամենեսեան "լինել արդարև Քրիստոսի, որպէս զի վկայեսցեն հաւատոցն առնեցուն և գործքն"։ Ապա զազգին ընդհանուր մխալիս ՚ի մէջ բերեալ՝ ասէ. "Ա՛լ զխստասրտութիւնն կամիմասել, թէ և զամբարհաւաճութիւն ազգին մերոյ յիակրեալ և այսր. որպէս անհամբոյր (եղեն) բարւոյ և ճշմարտութեան անհարազատ, կամ՚ել քնութեի ունելով զբարձրայօնութիւն և զկամակորուն, ընդդիմանան կամաց Թագաւորին յաղագս կրօնից քրիստոսականաց, զհետ երթալով կամաց կանանց և հարճից"։ Ահա այս օրինակ կամակորութեաբ և յանդգնութեաբ էր՝ որ հանապազորդեալ

էանց ՚ի նոցանէ ՚ի յետագայ արշակունիս, միայն փո-
խեալ ՚ի նախաթարաց առ Թագաւորս, որք եղեն սանձար-
ձակք, խստապարանոցք, ամենևին անմտան ՚ի կենցաղա-
կրթուհէ. ըստ Թագաւորաց և բազումք ՚ի նախաթարաց
նմանեցան. յոր սակս կոչէ զնոսա յորդւս իւր Իշխանս աշ-
խարհաբեր:

Յայսպիսի խստապարանոցուհէ Թագաւորացն արշա-
կունեաց և նախաթարաց, և յանլսող և յանհամբոյր բա-
րուց նոցա ընդդէմ սուրբ և աշխարհաշէն հայրապետաց՝
յայտնի երևի Թէ արքայորդիք նոցա էհրահանգեցան ՚ի
մանկութենէ ընդ կրթուհէն դաստիարակաց ՚ի սանձահարել
զկիրս խրեանց, և զգուշանալ ՚ի փոքունս, որ կարևոր
ձիրք էն ՚ի պետս ազնուիկ՝ որոց առաջի կայ առաքինորդ ժո-
ղովրդեան կարգել զանձինս. այլ ՚ի ձեռս ընտանեաց ինա-
ցեալք ՚ի մանկուհէ՝ աներկիւղ ՚ի չարիս անկղեամբ էին,
յոր վարէ հասակն անտիական: Թերութենի՛ անհանդուր-
ժելի և ախտ մահացու յորդիս մեծամեծաց՝ յաճախեալ
և յղկեալ դարս յադգի մերում. զի ընդ առնել հասակին,
առնէն և ախտքն ընդ նոսին. նմին իրի և Թշուառութիւնք
և աղէտք մեծամեծք պատրաստ կան վասն նոցա, և ժո-
ղովրդեանն իսկ ընդ նոսա և համօրէն աշխարհին՝ որոց
տիրեն: Յայտ է Թէ չունէին Թագաւորք մեր և ոչ զիարա-
տատուն զայնսոսիկ վերկոսին հանապազօրեայ յիշեցու-
ցիչն բարւոյ և չարի, զոր Վաղարշակ՝ Թէպէտ և կուա-
պաշտ, սահմանեալ էր յիւրում Թագաւորութենէ: Իսկ սո-
քա Թէպէտ հաւատով քրիստոնեայ՝ այլ մնեալք ըստ հա-
ճոյից, զոր ինչ կամէին՝ զայն գործէին ՚ի տհաս հասակէ
անտի. այսպէս եղեն փոքրն Խոսրով, Տիրան, Արշակ,
Պապ և Արտաշիր, որոց անսանձ բարք և Թիւր կառավա-
րութենէ եղեն պատճառք զհայաստան բոլորովին ՚ի ներքոյ
արկանել ծառայութենէ երկուց օտար տէրութեց, Յունաց՝
և մանաւանդ Պարսից. յորմէ զհետ եկին այնքան համ-
աշխարհական աւերմունք և աղէտք ոչ միայն քաղաքա-
կանք, այլ և որ առաւել ցաւալին է՝ նաև եկեղեցականք.
զորմէ ունիս տեսանել ՚ի գլուխն Կրճնի:

Գլուխ վեց ծանանիկ Արշակունեաց:

Ա. Վասն տեւողութենէ Թագաւորութենէ Արշակունեաց
տարաձայնին պատմագիրք. Թումա արծրունի նուազ դնէ՝

ասելով ՝ ե. 15. «Ցամի երկրորդի Ցազկիերտի որդւոյ Վռամայ երկրորդի՝ բարձաւ Թագաւորութիւն ՝ի տանէն Հայոց, որ տևեաց ամս չորեքհարիւր հնգետասան... իսկ զտեղի Թագաւորութեան Հայոց հրամմնաւ Ցազկիերտի ունի Մ՝ենան զօրավար Պարսից »։ ԵՒս աւելի դնեն Ասողիկ ե. 1. գրելով. « Աստանօր դադարէ Թագաւորութիւն յազգէն Արշակունեաց, սկսեալ յերկուտասներորդ ամի երկրորդ Եւերգետեայ Պաղոմէոսի Թագաւորի եգիպտացւոց. և դադարեալ ՝ի քսանևերորդ չորրորդ ամի Թէոդոսի Թագաւորի Յունաց. կալեալ ընդ ամենայն Թագաւորութիւն ազգին Հայոց արշակունեաց ամս հինգ հարիւր լիսուն և ինն »։ ԵՒս աւելու քան զայս կիրակոսին՝ յասէլն. «Յայսմ հետէ բարձաւ Թագաւորութիւն Արշակունեաց յետ Արտաշրի, որ Թագաւորեաց ամս վեց. և տևեաց Թագաւորութիւն Արշակունեաց ՝ի Հայս՝ ամս հինգ հարիւր վեցասուն և ութ »։

Բ. Ներունդ այսը ցեղն տևեաց մինչև յԱբգար Թագաւոր. զնի այնը՝ ՝ի կողմանէ հինոջ ելէն միայն արշակունի. զի Անանուն որդի Աբգարու մեռաւ անորդի. քանզի ոչ լինտակի ոք նորա որդի. իսկ Սանատրուկ որ յետ Աբգարու Թագաւորեաց՝ քեռորդի էր Աբգարու. «ԵՒս անուն որդի նորա (այսինքն Աբգարու, ասէ Խորենացին ե. 34 .) կապեաց Թագ Թագաւորեալ Յեդեսիայ, և քեռորդի նորա Սանատրուկ ՝ի Հայս »։ Իսկ սկսեալ ՝ի ե. Խոսրովայ՝ և ոչ իսկ յարքայական տոհմէ էին Թագաւորք։

Գ. Բայց ՝ի Թագաւորական ցեղէ նաև այլ ցեղք գտանին յԱրշակունեաց զարմէն, որպէս յայտ առնէ այս բան Խորենացւոյն ե. 1. «Որ յետ նորա (Վաղարշակայ) եղեն Թագաւորք աշխարհիս մերոյ ՝ի նորին սերմանէ, որպէ ՝ի հօրէ առնլով զտերութիւն՝ անուանեցան Արշակունիք յԱրշակայ, աւելորդքն յազգ և ՝ի բազմութիւն ածեցեալք, և միանկ ըստ կարգի հետևանայ ՝ի Թագաւորութիւն »։ Որով կամ ասել՝ թէ բայ ՝ի ցեղէն որ ունէր տերերութիւն կամ զթագաւորութիւն, աւելի ցեղ գոյր արշակունի. այն աւելի ցեղն յազգ ՝ նախարարութիւն ածեցեալ բազմացան. միայն մի ազգն կամ ցեղն արշակունեաց էր որք հետզհետէ կարգաւ Թագաւորեցին ։ ի սոցա համարի պարտ է դնել և զՈսրո-

1 Ջի յայսմիսի խոսս ազգ, որպէս և գործ անուամբ մատենագիրք մեր իմանան զտոհմ և զառն նախարարական ։

սեան ցեղը, որք էին հարազատ որդիք վերջնոյն Տիգրանայ, ուստի և հարազատ արշակունիք. բայց Տիգրան ՚ի Թագուհւէն զԼուսիկ զմայր նոցա, նաև զեղբեսին որդիսն, ասէ Խորենացին ե. 64. « կարգէ ընդ այլ նախարարութիւնս, զի մի անուանեսցին Ա֊րշակունիք ,, : Ի սոցա սակի գուցէ գնել կամի Խորենացին և զՎամաւազականս, և արտաքոյ հայաստանեայց գուցէ և զՊահլաւեանս :

Դ. Ա֊րշակունեաց բարեւտհմութեի յաւուրս կառավարութեան գրեթէ վերջացաւ յԱրտաշէս ե. իսկ որդի նորա Ա֊րտաւազդ և յաջորդ նորա Տիրան և այլք՝ եղեն անարգիք. յետ որոյ սերունդ Ա֊լանաց՝ուստի էր Սաթենիկ մայր Ա֊րտաւազդայ, խառնեալ ՚ի սերունդ սոցա՝ թուի թէ այլազոհութեալ իցէ բնութի նոցա հայկական և արշակունեան. զի բաց ՚ի մեծէն Խոսրովայ և Տրդատայ՝ գրեթէ զամենեսին ՚ի վատութեի տեսանեմք :

Ե. Ա֊րշակունիք անկեալք ՚ի մէջ Յունաց և Պարսից՝ ՚ի հնազանդիլ միոյն զայրացուցանէին զմիւսն. յանցանէր առ Յոյնս՝ Պարսիկք խաւսէին և Թշնամանային. իսկ յանցանէր առ Պարս՝ Յոյնք Թշնամանային: Եթէ էր առնոսա օգնիք կենցաղագիտութեի՝ պարտ էր միաբան կալ և ընդնիշխան վարել զսերտութիւն, կամ միւսմանէ ևեթ ՚ի սոցանէ ծառայել անվտանգ. այլ զի պակասեր ՚ի նոսա, նմին իրի և այնչափ յաձախեաց առ նոսա այս վտանգաւոր, մինչև օտար տէրութիւն այնոքիկ առ բառնալոյ զպատճառս կռուոյ ՚ի մէջ իւրեանց՝ յերկուս մասունս բաժանեցին զՀայաստան :

Յոյնք վաղու ևս բարձին զՀայկական Թագաւորութիւնն յիւրեանց մասին. իսկ Պարսիկք յերկարեալ՝ յետոյ ուրեմն ՚ի ինդրոյ նախարարաց մերոց բարձին զԹագաւորն. այլ իշխողութեի Պարսից ՚ի վերայ մերոց Թագաւորացս էր ՚ի վաղուց անտի, մինչև զԱրշամ հրամանաւ Ա֊րշկէլի Պարսից Թագաւորի կացուցանել զօրացոյն Հայոց Թագաւոր ՚ի վերայ ինքեանց, որպէս գրէ Խոր. ե. 24. նոյնպէս և առ բազումս ձգէր իշխողութեի նոցա, մինչև ՚ի յետին ժամանակս Հարկ էր Թագաւորին մերոյ հրամանաւ Պարսից կացուցանել զպարապետ Հայոց, որպէս յայտ առնէ Խորենացին ե. 51 :

Զ. Ա֊րշակունեաց գերեզման էր յԱնին Դարանաղեաց : Ռուզանդ. ե. 11. գրէ վասն փոքուն Խոսրովու. « Տարան (զմարմին նորա) առ իւր նահնիսն յԱնի. յերկեղեցապատառն Դարանաղեաց ,, : Նոյնպէս և Խորենացին ե. 10.

դրէ վասն նորա "Թագէկին յԱՆի առ Հարս իւր ,,[1]։ Վասն որոյ իբր անարգուէն ինն յիշէ Ը. 22. ոչ Թագին անդ Տիրանայ արքայի. "Ի նմին աւանի Կուաշ Թագէցաւ, ոչ արժանի եղեալ Հարցն գերեզմանաց ,, ։ Իսկ վասն Համեցոյ անտի Պարսից զսակերն՝ տես ՚ի խորենացին Ը. 27։

Դ. ԺԱՄԱՆԱԿ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ

Ի սկիզբն աւանդեմք խնամոյն կենցաղակրթութեի հանգերձ քաջութի, ի մէջն անհոգութիւն հասարակաց, երկպառակիլ ՚ի միմեանց, տենչ յամենեսեան Թագաւոր անուանելոյ։ Ի վերջն անհնարին աչկածութեի յարուսքն և ՚ի ներքին Թշնամեաց։

Հայազունք, որպէս և Յունքինեանք, արուէժ քաջութե տիրապետեցին. իսկ Բագրատունիք ազնուական բարուք, հանճարով և խնամոտութ, որ փայլեալ երևեցաւ յանձն Աշոտոյ՝ զորմէ գրեսցուք։

ԱՇՈՏ Ա

Սա է Թոռն Մսակերն Աշոտոյ և որդի սպարապետին Սմբատայ, որ Աղլաբան կոչեցաւ ըստ Ասողկայ. ոմանք զամենայն ձիրս կենցաղավարութե, որ քան զամենայն ինչ առաւել հարկաւոր է ղեկավարող անձին. քանզի մինչ դեռ տակաւին միայն "պայազատէր զսպարապետութե Հայոց՝ գրեթէ ամենեցուն քան զնա նախագունելոյն վեհագոյն Ճանաչիւր ,, ասէ Յոհաննէս կաթողիկոս. և որ մեծն է, միւտ փոյթ տանէր կրթելոյ զանձն յամենիսիա՝ որ պիտանի են ընկերութե և առաջնորդութե. զդրամն շահեալս ՚ի կիր առնոյր՝ ոչ ՚ի շահիլ անդրէն և յաւելուլ զստացուածս, որ սովորական սխտ է բազմաց իշխանաց, այլ ՚ի շահել զսիրտ ժողովրդեանն. և այսու առատաձեռնութե առաւելապէս ամրարձաւ ՚ի նախագահութի իւն, նախ կոչելով իշխանաց իշխան, և ապա Թագաւոր։ Զայս ամենայն յայտ առնէ պատմութի Յոհաննու կաթողիկոսի՝ որ գրէ վասն Աշոտոյ. "Մինչ ՚ի հրահանգս բարուց կրթութե զինքն վարժէր, և բարի ազդումն իւրոյ ոգւոյն տայր. ընդ ամենեսեան սէր սերտ, և ոչ ՚ի հակառակուիս

[1] Թէպէտ և զՏրդատ Հայր նորա այլոցս Թագէցին։

ինչ և ՚ի կռիւս ընդ Թշնամին մաքառեալ, քան Թէ բա-
ւականացաւ բանիւք և բարի օձանաւ զնոսա ածեալ յօղ-
ղութիւն և ՚ի կամս իւր. իսկ զպաշարանս մեռոյն շահուց
զնաս իւր վարկեալ և առատաձեռն առ ամենեսեան գը-
տեալ, յինքն զազգացդ միտս յանգուցանէր սիրալիր սէր-
տիւ. որպէս զի յայսմ սակի ամենեքեան իսկ նմա հաձեալ
հաւանեալ էին ,, : Եւ ՚ի լինելն իշխանս՝ կոչէ զնա
,,Մեծ իշխանատ և քաղցրաբան, և առ կեղակուրս խրախճա-
նաց զգաստ , ոչ խանդացեալ նորա ընդ լաւագոյնսն ,
և ոչ արհամարհեալ զնուաստագոյնսն , այլ հասարակաց
՚ի վերայ տարածէր զգեստ խնամոյ իւրոյ. և լծակօք
ինն կշռեր նախ զնա՝ և ապա զամենեցուն կենցաղս. մի-
անգամայն իսկ ասել՝ եթէ որ ինչ մարդկունս է սիտաս
նի՝ ոչինչ կասեցուցանէր ,, :

Օ այս ամենայն բարեբաստն կառավարէ տեսեալ
իշխանաց և նախարարաց աշխարհիս՝ ինքեանք եղեն խընդ-
րօղք յամիրապետէն Թագաւորը զնա կացուցանել. որ և
բան ինդրոյ նոցա առաքեաց Թագ արքայական՝ յամին
885 : Աշոտ ընդ առնուլ զթագն՝ անդէն սկսաւ առաւե-
լուլ ոչ զամբարհաւաճուն, այլ զչինուն և զարբեկարգուն
յաշխարհիս Հայոց. ,,Գրեթէ , ասէ Ցոհաննէս կաթող.
հարստագոյն և խոհեմագոյն քան զամենայն Թագաւո-
րութիւնս գտանիւր . և այսպիսի նորոգատուր Թագաւո-
րութիւն բարձրացուցանէր զազգս Թորգոմեան ,, :

Յե այսպէս ՚ի պատճառս անառակութիւնէ վարուց , և
ըմբոստ և խրոխտ առաջնորդութիւնէ վէրջին Թագաւորացն
Աբրշակունեացն՝ ինդրեցին նախարարքն կորուսանել զԹա-
գաւորութիւնն Հայոց . իսկ ՚ի պատճառս բարեբաստու-
թիւն վարուց և քաղցր կառավարութեան Աշոտոյ բագրատու-
նւոյ՝ նորին և նոքա ինդրեցին վերստին կանգնել
զնոյն : Վասն որոյ ասէ Ասողիկ չ . ։ . ,, Չի էր այր քաղցր
և հեզ և անարատ և անբամբաս կեանս կեցեալ , և ոչ
անօրինեալ արտաքոյ օրինաց բնութեանն ,, : Իսկ Թոմաս
արծրունի չ . ։ . կոչէ ,, Աւաւելեալս իմաստութիւ Աշոտ ,, :
Եւ ՚ի ձ . ասէ . ,, Որ բարձրագոյնն և հանճարեղագոյնն

1 Սամուէլ ՚ԻԱՀ . 885 . գնեցուլ զԹագաւորութիւն Աշոտոյ ամն հինգ , ասէ . ,,Ի բառնալոյ Աբրշակունեաց Թագաւորութենէն մինչև յԱգաւորութիւնն Բագրատունեաց լինին ամք չորիք հարիւր երեսուն և չորս ,, :

Իսկ Վարգան գրէ . ,,Ի ձեռն Ցխեբ ազգ առնէն ամիրապետին , և նորա զուարթ պսակեաւ զԹագս և հան. գերձս և երիվարս . զնոյնս և կապուիվա. սիլ առաքէ . և օրհնէ զնագն սէր Գէորգ ՀՀՀ . Թոմեի ,, . 887 :

էր քան զնաւս Հայաստանեայս, և զընդհանուր կացեալս 'ի ներքոյ երկնից ։։

ՍՄԲԱՏ Ա

Որդի ։ Աշոտոյ, համանման յամենայնի հօրն առաքի նուէր, պատմագիրք կոչեն զնա հեզահամբոյր, խաղաղասէր, այնչափ կատարեալ՝ մինչև մեծ ներքինապետն Ափշինի "ի տեսանելն զարքայ՝ խոստովաներ ոչ զոք Թերևս հաւատամտ նմա տեսանել ։։ ասէ Յովհաննէս կաթողիկոս ։ Ուչ պակաս սեալ նաև 'ի քաջագործուէ, որով զգազրամ երկիրս օտարացեալս անդրէն գրաւեաց ընդ տերութիւն Հայոց. տես 'ի գլուխն Պատմուէ ։ Բայց այս Թագաւոր այսպէս բարեմասնուէր Ձոխացեալ՝ ոչ գիտեմ յինչ պատճառս չեղև սիրելի իւրոցն, և ոչ բարեյաջող՝ նման իւրում նախորդին Աշոտոյ. այլ առ իւրով կառավարութէ անպակաս էին 'ի նմանէ դժբաղդութիք և վիշտք ։ Մի՝ առ նախանձու դաւաճանուէ, մատնուԹէ և երկպառակուԹէ իւրոց նախարարաց և իւրոց ներքին Թշնամեաց. զի նախ քան զԹագաւորելն իւր՝ հօրեղբայր նորա Աբաս սպարապետ խանդացեալ ընդ նմա՝ ինքն կամէր Թագաւորել. յոր սակս եղեն կռիւք և պատերազմունք. յետ սակաւուց քեռորդի նորա Աշոտ իշխան Վասպուրականի զբարեալ ընդ մեծուԹէ Սմբատայ՝ բազում ընծայիւք գնաց առ Ափշին ոստիկան՝ ակնուռնեղով 'ի ձեռն նորա ինքն Թագաւորել առանձին, Թէպէտ և 'ի գերև էլ ։ Ջկին այնր Գագիկ արծրունի՝ աներ այր Աշոտոյ արծրունւոյ՝ բանս եդ ընդ Ափշատայ պյլազգւոյ՝ մատնել զզօրս Սմբատայ 'ի ձեռս նորա՝ ակնուռնելով նովքին հասանել մեծի իշխանուԹեան կամ ԹագաւորուԹեան. այսր աղագաւ բազում ՚ի նոսա Հասոյց Սմբատայ. զորմէ տես 'ի գլուխն Բարուց ։ Ապա Աղուերսէհ՝ զոր Թագաւոր Վրաց էր կացուցեալ Սմբատ, փոխանակ բարերարուԹեն Թշնամուէ կալաւ ընդ Սմբատայ. միաբանեցան ընդդէմ նմա և նախարարք Հայոց Թշնամացեալք ընդ Սմբատայ սակս առաւելելոյ զՀարկն. քան եդին սպանանել զնա, յորմէ բազում արեանհեղուԹիք վերծաւ Սմբատ։ Սուղ ինչ զկին Գագիկ արծրունի քեռորդի Սմբատայ գնաց առ Յուսուփ ոստիկան, և առեալ 'ի նմանէ Թագաւորուի՝ ինքն և եղբայր իւր Դուրգէն մանչին զՅուսուփ 'ի Հայս 'ի խնդիր Սմբատայ, յորմէ եղև մահ նորա ։

Երկրորդ՝ չարաչար վիշտս կրեաց յերկուց ոստիկանաց իւրոյ ժամանակին, որք էին Ափշին և Յուսուփ. զի նախ

« Ահնու զթագն Սմբատ որպէ նորա (Աշոտոյ) յԵդ . Թը-
ւին ամն քսան և չորս կամակցութիւք Աւսոի որգւոյ Վաս
լնի,, որպէս գրէ Վարդան յետ Ասողկայ : Ապիւին ոստի-
կան որ նոտեր յԱտրպատական՝ զգաբեալ ընդ այս բարե-
կամուէ Սմբատայ ընդ կայսեր Յունաց՝ Թէոփանէ ցու-
ցանէր , զոր առ 'ի խաղաղել « Հապուհ կրսեր եղբայր
Թագաւորին Սմբատայ՝ եդեալ զանձն իւր 'ի մէջ մահու
և կենաց՝ գնաց առ Ապիւինն . . . առնու 'ի նմանէ Թագ
Թագաւորութիւն, բերեալ գնէ 'ի գլուխ Սմբատայ եղբօր
իւրոյ հաստատելով զթագաւորին նորա ,, որպէս գրէ
Ասողիկ ՟Գ. 3. բայց էր 'ի հրամանէ ամիրապետին ըստ
պատուելոյ Յոհաննու կաթողիկոսի , որով Թագաւորէին
Սմբատայ եղև հրամանաւ երկոցունց՝ կայսեր և ամի-
րապետին: Ապիւին տեսեալ ապա զմնասիլ զօրաց Սմբա-
տայ 'ի ժամանակս յարձակման Աշխատայ բռնաւորին ,
ժամ դիպող համարեալ զայն՝ եկն զօրօք 'ի վերայ Սմբա-
տայ . իսկ նա նուաղեալ 'ի զօրաց , օտարացեալ և յիւ-
րոց նախարարաց՝ որք ոչ կամեցան միաբանիլ ընդ նմա
առ 'ի ընդդէմ կալ Ապիւնի, ակամայ խաղաղութիւն խո-
սեցաւ ընդ նմա :

Այնմանգամ գրգռեալ Ապիւնի յիշխանաց մերոց՝ խա-
զաց 'ի վերայ Սմբատայ, Թէ ընդէր զԱտրներսէհ իշխանն
Թագաւոր կացոյց 'ի վերայ Վրաց . յայնժամ Հարկ եղև
Սմբատայ փախչել մինչև 'ի Տայս : Դարձեալ ուժգնր գալ Ապի-
ւին 'ի վերայ Սմբատայ՝ այլ մեռաւ . և Յուսուփ եղբայր
նորա եղև ոստիկան 'ի տեղի նորա : Սմբատ արբայ ձանձ-
րացեալ 'ի դաւադրուժ բարուց ոստիկանաց՝ գրեաց առ
ամիրապետն 'ի Բաբիլոն աղաչելով՝ հանել զնա 'ի ներ-
քուստ ձեռն ոստիկանաց, և անմիջապես արկանել զինքն
ընդ տերութիւք իւրով: Ընդ որ հաւանեալ ամիրապե-
տին՝ կրկին անգամ առաքեաց առ նա զգեստ և Թագ
արքայական, և զանձն արքունի Թէոֆանոյն: Նմին իրի
ասէ Յոհաննէս կաթողիկոս , « և այնուհետև 'ի կարգս այ-
լոց ևս հնազանդելոց և նա ևս մնաներ 'ի կալուածս լծոյ
ամիրապետին ,, : Իսկ Յուսուփայ զբաղեալ ընդ այս արարս նո-
րա՝ ջանահնար լիներ գարձեալ ընդ իւրև արկանել . այլ
սակս գրեաց առ ամիրապետն , այլ չեղև լսելի . ապա եկն
զօրօք 'ի վերայ Սմբատայ 'ի նուաճել, բայց տեսեալ զա-
ռաքելագոյն պատրաստուէն նորա՝ փոխեաց զինամուին 'ի
սեր և յուխտ խաղաղութե . նաև զանձն արքունի 'ի կամս
անձին նորա եթող , ետ այսօրիկ և զգեստ և Թագ ևս

արքայական առաքեաց առ նա՝ խակ ինքն Սմբատ ուխտիս սիրոյ կապեալ ընդ կայսեր իբրև որդի ընդ հօր, ընդունեաք ի նմանէ ամի ամի պարգևս և պատիւս. որպէս և ինքն տամնպատիկ յաւելուածով հատուցանէր նմա զիմաստասիրեան «իբրև վէհագունի քան զինքն և հօր հարազատի»։ որպէս ասէ Յովհաննէս կաթողիկոս։

Սակաւ ինչ ամն այսպէս ի խաղաղութեան վայելեալ՝ դարձեալ սկսաւ տառապիլ ի Յուսուպայ, որ եկն զօրօք ի խնդիր Սմբատայ, և փախեաւ Սմբատ. բայց ի գալ Յուսուպայ ի վերայ՝ եւ ընդդէմ նորա պատերազմեալ. և ի սաստկանալ մարտի՝ Սևորդիք որ ի զօրս նորա էին՝ քանզի բան եդեալ էին ընդ Յուսուպայ՝ թողին զՍմբատ և փախեան։ Սմբատ սակաւուք ոմանք ինայելովք գնաց ամրացաւ ի բերդն Կապոյտ. այլ Յուսուպ և անդ ևս պաշարեալ զնա՝ ի պատերազմէն ընդ բերդին՝ զբրիստոնեայսն զօրս Հայոց յառաջ մատուցանէր. յայնժամ Սմբատ խնայեալ ի կոտորումն քրիստոնէից՝ զօրս բերդական զօրն իւր նետահար առնելով կոտորէին, յետոյ երդմամն առեալ ի Յուսուպայ վասն ոչ սպանանելոյ զինքն և զզօրս իւր՝ անվնասուս եղև նմա, բայց ապա չարաչար լլկանօք տանջեալ ի Յուսուպայ վասն քրիստոնէական հաւատոյ՝ արիաբար գլխատեալ նահատակեցաւ։

ԱՀՈՑ Բ

Որդի ՚ի՛. Սմբատայ՝ Երկաթ անուանեալ վասն արիութեան և կորովումն ըստ ասելոյ Վարդանայ. նմին իբրև և Թագաւոր պահակին զնա. «Ջան տեսեալ ապա (ասէ Յովհաննէս կաթողիկոս, այսինքն է՝ գքաջագործումն նորա,) Թագաւորն Վրաց, այլ և զօրացն իւրոց... Թագ նմա կապեալ Թագաւորեցուցանէին փոխանակ հօր իւրոյ»։ Քաջագործութիւնք այս Աշոտոյ բազումք էին, յորոց գերևելիսն ունիմք յիշել ի գլուխն Բարուց. այլ այս զարմանալի քաջութիւնք նորա ոչինչ օգուտ գործեցին համօրէն աշխարհիս Հայոց, այլ միայն մանուածոր ինչ տեղեաց, ի բաց հալածելով անտի զմանս ի հինից արաբացւոց։ Գլխաւոր պատճառ այսմ եղեն անհնարին տարաձայնութիւնք, գժտութիւնք և թշնամութիւնք իշխանաց մերոց ընդ միմեանս. զի որչափ ինչ յաճախէին արտաքուստ արշաւանք և հինահարութիւնք արաբացւոց յաւուրս Յուսուպայ ոստիկանին, զոր մարթ է կոչել գլուխ խորամանկաց և ան-

գուԹ արանց, նոյնպէս և յաՀախեր երկպառակուԹիւն մերոց իշխանաց։

Ի յայ Յուսուպ զԴագիկ արծրունի յաւուրս Սմբատայ կացուցեալ էր Թագաւոր Վասպուրականի, որպէս գրեցաք ի վերոյ. իսկ այժմ յաւուրս սորին Ը. Աշոտոյ՝ նաև զմիւս Աշոտ շահուՀեան Հօրեղբօրորդի նորին յաՀել Թագաւ պսակել և առաքել ի Հայս, որ եղև խոչընդոտն Աշոտոյ Հարազատ Թագաւորի. զի ընդ գալ նորա ի Հայս՝ ի միջ երկուց Աշոտոց սկսաւ բորբոքիլ պատերազմ. և այնր աղագաւ ամենայն նախարարք բաժանեցան յերկուս, ոմանք միւմ, և ոմանք միւսում օգնելով. "Եւ քանզի խոստանակ ոտիկանն (Յուսուպ, ասէ Յոհաննէս կաԹողիկոս), խորհրդաբար ի մտի եդեալ սուր ՀակառակուԹե ի միջ նոցա արկանել, այսպիսաբար նախարարան մնօք Թագ կապեալ սպառասէնին Հայոց (որ էր Աշոտ շահուՀեան), և սուսեր ընդ միջ ածեալ՝ առաքէ յաշխարՀն իւր. որ գրեԹէ գիրկընդխառն ի գիմի միմեանց Հարան՝ ինքն և Համ անունն իւր արքայորդին"։ Ցետ բազում Հնաուսուց և Հարուածոց Հաղիւ ի ՀաշտուԹ եկեալ՝ միսանգամ ի մարտ ելին ընդ միմեանս, և միսանգամ Հաշտեցոյց զնոսա կաԹողիկոս. նոքա երրորդ անգամ սկսան պատերազմել չարաչար՝ ի վարձու կալեալ զօրս յօտար ազգաց բազում գնձիւք. և քանզի աւերեին զերկիրս իրերաց. զօրս Հաղիւ խաղաղացոյց դարձեալ կաԹողիկոս։

Իսկ խորամանկն Յուսուպ ակնկառոյց միայն լեալ ի Հեռաստանէ ՀակառակուԹեցս այսոցիկ՝ յորժամ զօրուն Հայաստանեայց տիարանայր ի պատճառս աւերման սոցա՝ յայնժամ ինքն արշաւէր ի Հայս գիւրութ. իսկ յորժամ առպատակք Յուսիպայ գերէին և աւերէին զՀայաստան՝ մատակայ ազգք երկուցեալք զի մի գուցէ նաև ի սահմանս իւրեանց յարձակեսցին ասպատակքն այնոքիկ՝ ինքեանք և ա՛ի սահմանակից գաւառս Հայոց արշաւեալք զաՀնային գիւղօրէնս քանդեալ աւերէին, և զընդդիմակացն ի սուր սուսերի մաշէին, որք էին Յոյնք, եգեբացիք, կովկասային ազգք, և և Հայք գուցաթացիք և ուտեստիք՝ որք աւազակաբարոյք։ Աշոտոյ Հարկ լինէր և ընդ սա մարտնչել և ընդ արաբացիս. բայց որ առաւել վշտալին է՝ Հարկ էր մարտնչել նաև ընդ նեբքին Թհնամիս և ընդ ընտանիս իւր. զի բաց ի միս Թագաւորէն շահուՀեանն Աշոտոյ՝ յարեան ի վերայ նորա և այլ երկու ընտանի Թհնամիք, Աբաս եղբայր իւր և Սահակ Սևադայ աներ

իւր իշխանին Դարդմանայ, որ նորոգ հաշտեալ էր ընդ նմա, յարձակեալ յերկիրը նորա աւարելը, և առնոյր ևս զերկուս ամրոցս. յորոյ վերայ յարձակեալ Աշոտ յաղթեաց. յինքն եաւ զերկիրը նորա որ էր Դարդմանն, և կալեալ զՍահակ և զորդին նորա զԴրիգոր կուրացոյց և այնպէս եթող։ Յարեան նաև այլ ապստամբք, Վասակ գնդապետն վերակացու Գուգարաց նահանգին, Մովսէս վերակացու Ուտի նահանգին, գարձեալ նոյն Վասակ Գուգարաց, և Ամիրամ Ցլիկ կոչեցեալ նոյնպես վերակացու Ուտի նահանգին՝ միացեալ ընդ Գուրգենայ Թագաւորին Աբխազաց՝ խոստանալով տալ նմա զամրոցն Շամշուդէ. զոր պատերազմելով Հաղիւ նուաճեաց, բայց Հաղիւ զերծաւ ի վտանգէ մահուան։ Ալ յայնմ ժամանակի միւս Աշոտ Թագաւոր յարձակեալ յերկիրը Շահնշահին Աշոտոյ ասպատակ սիրէր։

Ի մէջ այսչափ պատերազմաց ծանր եղև յոյժ կռուիլ նորա ընդ հարաւոյս եղջըր իւրում Աբասայ, զոր իշխան իշխանաց էր կացուցեալ. և էր յոյժ սիրելի միանգամ մայն ընդ Գուրգենայ մեծի իշխանին Վրաց[1]։ Բայց այս երկոքին սիրելիք Աշոտոյ արքային այնպէս թշնամացան ընդ նմա, մինչև բան եդին սպանանել զնա. Աշոտ իրա-զեկ լեալ փախեաւ, և զօրաժողով լեալ խաղաց յերկիրն Աբխազաց, յաւարի էառ և զերկիրը չաղուհեանն Աշոտոյ, որպէս և Գուրգէն ընդ Աբասայ միանգամայն աւերէին զերկիրն Աշոտոյ։ Վասն այսր պատճառի եղև բազում անգամ մարտիւ հարկանել զմիմեանս, մինչև Վասակ սիւնի հօրաքեռորդի Աշոտոյ ի մէջ մտեալ հաշտեցոյց. այլ միշտ գնեթ թշնամութեամբ կրեր Աբաս ի սրտի, և խաւարն լինէր յաջողաճոյն գործոց նորա. վասն որոյ ի մերձենալ մահուն՝ խրատ ետ նմա կնալ ի խաղաղութեան, և մեռաւ անտրտի. և փոխանակ նորա յաջորդեաց Աբաս եղբայր նորա։ Բայց յայսցանէ էին նորա և այլ վէշտք. քանզի և այլքն ի նախարարաց չէին միաբան ընդ նմա. նմին իրի աւերեր և նա զերկիրս և զգիւղօրէս նոցա և լինքն զրաւեր՝ յորժամ և Սիսականեանք

1 Յոհաննէս կաթողիկոս ի կրկին տեղիս կոչէ այսպէս. Իշխանն Վրաց Գուրգէն աներ միւս Աշոտոյ շաղուհեան. զոր և որոշէ ի Թագաւորէն Վրաց յասելն. "Բայց Թագաւորն Աշոտ... չուէ յաշխարհն Վրաց. և անդ ընդ իւր զԹագաւորն Վրաց առբնեբսէ առեալ, երկաքանչիւրքն նոքա՝ իմարտ ընդ իշխանին Գուրգենայ մնեալ.։ Բայց ոմանք զայս Գուրգէն կոչեն Թագաւոր Աբխազաց։

և Աբծրունիք զերկիրս միհեռից աւերէին։ Թշնամացաւ և ընդ Աթմենեսեի Թագաւորին Վրաց, ընդ Աղուանս, որպէս և ընդ Աբխազս։ Եթէ սոքա առնեսքին փոխանակ զմիմեանս եղծանելոյ միաբան կացեալ ընդդէմ եւ լանեին զօրացն Յուսթինոսի՝ ոչ լինէին այն ազէտք ի վերայ աշխարհիս Հայոց։

Եւ այսպէս ոչ ընդ արաբացիս, այլ ընդ միմեանս մարտ եդեալ անդադար կուռէին առ Աշոտաւս. որ թէ պէտ փոյթ կալաւ երբեմն զայս՝ և երբեմն զայն նուաձել, բայց թուի անփոյթ լեալ նորա զսիրտս այլոց շահել և յինքն յանկուցանել, որ է առաջին գործ հարկաւոր առնային իշխանաւորաց. այս ձիրք միայն ։ Աշոտոյ պահել էին, յորոյ աւուրս ոչ ոք յընտանեաց կամ ի համ ազգեաց եկաց Թշնամի նմա. այլ զամենեսին արար իւր սիրելի։ Վասն որոյ զայս ։ Աշոտ կոչեմք երևելի ի քաջագործութեն, այլ ոչ երևելի ի կառավարութեն և ի կենցաղագիտութեն, որ առաջին խնդրելին է յիշխանաւորս։ Ցայտ է թէ կամ առ պակասութեն իւրոյ կառավարութեն և կենցաղավարութեն, և կամ առ պակասուե հասարակաւորութեն մերոյ իշխանաց էր՝ զի հայաստան յայն վիճակ Թշուառութեն եհաս յաւուրս սորա, մինչև ըստ պատմութեն Ցոհաննու կաթողիկոսի առաւելագոյն քան զառաջին աղէտս, ոչ միայն պատերազմաց, հինաւրութեանց և նեղըլին հակառակուեց՝ որ չէր լինչ նոր, այլ նաև սաստիկ սովու՝ յորմէ և մահ բազմաց։ Զայս առնային հարուածս միանգամայն ի վերայ հասեալ ի հայաստան՝ հազիւ երբեք է տեսանել։

Աշոտ իբրև ի կաբաւաբերդ ամրոցի կղզւոյն Սևանայ նստեր՝ ինչ հագարացին եհաս ի վերայ նորա, յորոյ վերայ դիմեալ նաւուք նետահարութեն ի փախուստ դարձոյց։ Ըսբուք ոստիկան եւ այսմ Աշոտոյ մանկանուն պատուոյ կոչել Շահնաղ. այսինքն Աբբայից աբբայ, ըստ որում և այլ երկու Թագաւորք նորոգ պսակեալ էին յայնժամ ի հայաստան ստուկագոյն քան զնա ։ Վարգան նաև զԹագաւորն Վրաց յիշէ ասելով. « Ետկ Աշոտ պսակեալ ի ԵՒւհան (կայսերէ) գառնայ ի Հայս ի Հ. Թուական։ և գտանէ Թագաւորեալ զՀմմանուէլն իւր զԱշոտ որդի Տօրեղբօր իւրոյ, զոր հնազանդեաց ի նեղըլոյ իւր, որպէս և զԴագիկ Թագաւոր տմին Աբծրունեաց, և զըլ Մ՚ուսէս բանացաեալն յԱղուանս (այսինքն յՈւտի), զորոյ խաւարեցոյց զաչս. և մեծազօր գտեալ քան զնոսա և

քան զթագաւորն Վրաց 'ի Բերսէհ, կոչեցաւ 'ի վերայ նոցա Շահնշահ»։ Մարթ էր յաւելուլ և զթագաւորսն Եգեսացւոց և Ախիաղաց, զի և 'ի վերայ սոցա իշխէր։ այլ ըստ այսմ յաւէտ զառաջին թագաւորսն անկ էր կոչել։ ոչք և յոյժ առաւել քան զԱշոտ իշխէին 'ի վերայ սոցա, բայց և չառին զայս պատիւ Աբբայից աբբայ կոչելոյ։ վասն որոյ անուամբ ևեթ այսպէս կոչեցեալ համարեսցուք զԱշոտ 'ի զանազանութիւն միւս սուտանուն թագաւորաց։

ԻԲԱՍ

Լուեալ Աշոտոյ երկրորդի։ պատկեցաւ թագաւոր հաւանութեամբ նախարարաց և Գագկայ աբբային Վանայ պուրականի։ Յաւուրս սորա (ասէ Սամուէլ 'ի թուին յՀէ. 928.) եղև խաղաղութիւն աշխարհիս Հայոց, զի երբէք զնուովաբար աւազակին»։

ԱՀՈՑ Գ

Որդի Աբասայ Ողբմած անուանեալ. զինն ամ առանց պատկելոյ պայազատեալ, ապա նախարարքը Հայոց պատկեալ թագաւոր կացուցին զնա՝ կոչեալ 'ի Ժողովն և զԱղուանից աբբայն զՓիլիպպոս, և զկաթողիկոս նոցա զՅոհաննէս։ Սա եղև առաջին ընդարձակող Սնի քաղաքին Հիրակայ, որ յառաջն էր սոսկ բերդ։ Խակ յողբմածութենէ Աշոտոս այս գերագոյն հանդիսացաւ, որպէս ունիս տեսանել 'ի գլուխն Բարուց։ որոյ ողբմածութենէ ոչ այնչափ էր 'ի հասարակաց շինութիւնս՝ որպէս մեծին Բերսէսի, քան թէ յառանձին գութ աղքատաց[1]։

ՍՄԲԱՏ Բ

Լուեց որդի Աշոտոյ ողբմածի, որ քան զքաղցր թագաւորս զօրացեալ՝ երբէք յաշխարհէն իւրմէ զամենայն ասպատակութիւնս թշնամեաց, վասն որոյ կոչեցաւ Տիեզերակալ։ բայց պիտակաբար. զի աշխարհ նորա փոքու սահմանաւ անջրպետեր յայնժամ՝ Հիրակաւ և շրջակայիւք

1 Յաւուրս սոցա էր Դաւիթ Նահապետ Բագրատունի կուրապաղատ կարգեցաւ կողմանցն Տայոց նահանգին 'ի բաժին այնոցիկ։ Յունաց, որ պատուհաս 'ի կայսերէ

նորա. որովհետև նաև զնման ինչ երկրի իւրոյ ՚ի բաժին հանեալ էր միւս եղբօր իւրոյ Գաւրգենայ. կոչեցաւ Սմբատ նաև Շահնշահ արմէն։ Մուշեղ Թագաւոր Կարուց Տօր եղբայր Սմբատայ Թ ընտանացաւ ընդ նմա. Սմբատ խաղաց ՚ի վերայ նորա, և ոտնակոխ արարեալ զերկիրը Մուշեղայ՝ էառ զամուր բերդն նորա Շատիկ կոչեցեալ. բայց քանզի կուրապաղատան Դաւիթ եկն յօգնութիւն Մուշեղայ՝ Սմբատ հաշտութիւն խոսեցաւ ընդ Մուշեղայ, որոյ սպարապետ էր Վասակ որդի պահլաւունեան Դրիդորոյ. Մուշեղ գրգռեաց զամիրային Դբինայ, որ եկեալ ՚ի Հիւրակ ատ և անդ ասպատակեր. մարտ դներ նաև ընդ Ապուտեփայ ամիրային Գողթնոյ. բայց քանզի Ապուտեփ զօրացաւ ՚ի վերայ ամիրային Դբինայ, Սմբատ գաշն խաղաղութիւն հաստատեաց ընդ նմա ՚ի ձեռն խաչիկ կաթողիկոսի երդմամբ հանդերձ՝ կեալ ՚ի խաղաղութեն ինքեանք և յաջորդք իւրեանց։

Օ. այս թ. Սմբատ՝ Աղողիկ ժ. 11. կոչի Խաղաղաթէր և Իշխաթաթ. պարտ էր յաւելուլ և Աշխարհաշէն. զի սա լիր արկեալ ընդարձակեաց զԱնի՝ յԱխուրեան գետոյ մինչև ցձորն Ծաղկոցաց պարսպափակ առնելով և մնհարձանօք զարդարելով. Բայց " յորժամ յաջողեցաւ, ասէ ժ. 29. գործ Թագաւորին Հայոց Սմբատայ ՚ի նեբքնոց և յարտաքնոց, և մեծացաւ յոյժ . . . . . անօրինեցաւ նա. բարձրացաւ սիրտ նորա, և բարձրացաւ առաւել քան զինքն. գործեաց նա երիս չարիս . . . . և այս ամենայն չարեօք բարկացոյց նա զանբարկանալին Ած. և անդէն եհար Աստուած ցասմամբ մեծաւ ,, և այսպէս և սա և յանցեաւ մեծամտութիւն և գոռոզութիւն, զի ըմբռստացեալ արհամարհեաց զօրինս եկեղեցւոյ՝ առեալ իւր կին զդուստր քեռ իւրոյ. եհեղ և արիւն տարտարատ առանց քննելոյ այրելով զնմն, զորմէ ամբաստանեին հրկիզ արարեալ զհամբարանոց խոտոյ Ապի քաղաքին, որպէս պատմէ Աղողիկ ժ. 29. 30։

ԳԱԳԻԿ Ա

Ինքին որդի Աշոտոյ ողորմածի. յաւուրս կենդանութե՛ եղբօր իւրոյ թ. Սմբատայ՝ հաշտեալ ընդ նմա կարգեցաւ ՚ի նմանէ իշխան իշխանաց. իսկ յետ մահուան նորա կացուցաւ Թագաւոր. " Տիրեաց նա յոլով բերդից և գաւառաց, ՚ի սահմանսն Վայոց ձորոյ, խաչէնոյ և

փառիսոսոց, առաւել քան զերջայր իւր»[1], որպէս գրէ Աւդղիկ։ Բայց ի նմին ժամանակի ի կողմանս Տաշրաց տիրէր Գուրգէն եղբայր Գագկայ, իսկ ի Կոգովիտ և ի Ծաղկոտն տիրէր Աբուսահլ քեռորդի Գագկայ, որով սահմանն սորա չէր ինչ մեծ՝ համեմատեալ սահմանացն տիրելոց ի նա։ Աշոտոյ, և ի նա։ Սմբատայ։ վասն որոյ և սա վայրապար կոչեցաւ յամենից Շահնշահ, ի զանազանել նուաճիւն փոքունց ոմանց ընձեռակայից անուամբ ևեթ Թագաւորելոց։

Արկուս բարեբաստութիւնս տան սմա պատմագիրը, մի՝ վարժութիւն յարուեստ պատերազմի, որով սանձահարեաց գյարձակումն հինից, և երկրորդ՝ կարևոր ամենայն Թագաւորաց առատաձեռնութիւն, որով զտուրս նուաղեցոյց։ Զառաջինն յիշէ Լատիվերացին գ. կոչելով «Աչք հղօր և յաղթող ի պատերազմի. սա ի խաղաղուն կալաւ զաշխարհս Հայոց»։ Իսկ զերկրորդն միանգամայն յիշէ Աւդղիկ գ. 30. ասելով Թէ յաւուրս սորա «ոչ ոք էր որ զարհուրեցուցանէր զՀայաստանեայսս մինչև ցօր գրելոյ իմոյ զգան յիշատակիս այսորիկ. զի էր այր սքանչ և վարժ ի պատերազմի և առատաձեռն ի բաշխելն, և զբաժ հարկաց յոլովից տեղեաց ազատեաց»։ Եւ Թէպետ այսպէս գովէ զսա՝ մինչև յաւելուլ ասել, «Եւ զնիւթակեացն ըզցայգան պաշտօն սաղմոսերգուէ կատարէր», բայց ապա գրէ. «Աչաղ միամ չարին որ արգել զգան գովեստի պատմութիւն իմոյ»։ առանց այլ ինչ յիշելոյ[2]։

ՅՈՀԱՆՆԷՍ

Կոչեցաւ նաև Սմբատ. էր երէց օրդի ա։ Գագկայ. «Ի նմէ Թուին, ասէ Վարդան, մեռաւ Գագիկ՝ տուեալ ըզ Թագաւորութիւն երից որդւոց իւրոց՝ Յոհաննիսի, Աբասայ և Աշոտոյ։ ԶԹագն տայ Յոհաննիսի, և զՆնձի և զՇիրակ. Զսուրբ Գրիգոր Ձորոփն Աշոցայ և զՆնձերդ և զգաշտն այրարատեան, զԿայեան և զԿայծն և զՏաւուշ գաւառն

1 Ա՛յս ամենայն սահմանք են ի Սիւնիս և Աղուանս, վասն որոյ չէն ինչ մեծ. բայց մի յայնժամ Թշնամիք տիրեալ էին, նաև ի ժամանակս եղբօր իւրում Սմբատայ Թագաւորի Թէոդոս և տիեզերակալ կոչէր, վասն որոյ սովին բանիւ զերիւղ նորա առաւել քան զերայր իւր կամ յայտ առնել։

2 Խիթալն է այս մեծաբեմ բանից Աւդղկայ, որ չէր բաւեկամ ընդ Յոհաննէս, այլ Թեւս Գագիկ Կանայր բառնալ զերկպատակութիւն քրիստոնէից. որպէս փոքէնցաւ առնել և միւս Գագիկ աբբայ Արծրունեաց ի Վասպուրական։

Սևորդեաց և զայլ միացեալսն՝ Աշոտի և Աբասայ բաժանել»։ Բայց Աշոտ եղբայրը Յոհաննու եւ ընդդէմ նորա. զի Յոհաննէս Թանձրամարմին էր և անկար՝ ի պատերազմի, իսկ Աշոտ քաջակորով յամենայնի. զոյն լըւեալ Դաւթի կամ Դեորդէ Թագաւոր Վրաց և Աիխազաց՝ Թագ արքայական առաքեաց առ Յովհաննէս։ Այս առաքին նուազ է՝ ի Թագաւորէ Վրաց առնուլ զթագ մերոցն. զի յառաջագոյն՝ ի կայսերէն և յամիրապետէն առնուին։

Այս հակառակուն Աշոտոյ ընդդէմ Յոհաննու՝ բազում վնասուց եղև պատճառք, և գրեթէ հինն էարկ վերջին կործանման Թագաւորութեանն Բագրատունեաց. զի ոչ զի-ջեալ՝ ի յամառութենէ իւրմէ՝ այլ զօրս ժողովեալ՝ ի Սեւեբերիմայ արքայէն Վասպուրականի՝ եկն՝ ի վերայ Յոհաննու, որ եւ ընդդէմ նորա 60 հազարաւ, այլ պարտեցաւ. Պետրոս գետադարձ կաթողիկոս և նահապարքը ընդ մէջ մտեալ, հաշտեցուցին, պայման եդեալ Յոհաննու իշխել Աղուոյ և Շիրակայ գաւառին իբրև Թագաւոր Հայոց. իսկ Աշոտոյ իշխել միացեալ գաւառացն, զոր Դրուց կամ արտաքին աշխարհ կոչեն պատմագիրքը. վասն որոյ ասէ Մատթէոս՝ի Թիւն երեսներորդ եօթնեներորդ.«Եւ յայնժամ սուրբ Հայրապետն Պետրոս և իշխանքն եկին առ Աշոտ, և մեծաւ երդմամբ նստուցին զԱշոտ Դրուց աշխարհին Թագաւոր ամենայն տանն Հայոց, և Յոհաննէս նստցի Թագաւոր՝ի քաղաքն Անի. և եթէ մեռանի Յոհաննէս, Աշոտ լինի Թագաւոր ամենայն տանն Հայոց. և յայնժամ եղև խաղաղութիւն աշխարհին Հայոց»։

Այլ քանզի հակառակասէր բարք ազգային՝ նաև յետ հաշտութեն ոչ եթող զսոսա կալ յանդորրու. զի նախարարքն ազգիս յերկուս բաժանեալ՝ ոմանք զայս զբըր գռէին և ոմանք զայն, մինչև գրգռեցին նաև զԴաւիթ Վրաց Թագաւոր ընդդէմ Յոհաննու, որ յանկարծ կալ-լաւ զՅոհաննէս, և յետ երից թերդս առնելոյ՝ի նմանէ՝ հաղիւ արձակեաց զնա։ Յետ այնորիկ Աշոտ եղբայր նո-րա կալաւ զՅոհաննէս. զի ստութիւ հիւանդացեալ՝ կո-չեաց զնա առ ինքն իբր առ միսիթարութիւն իւր. բայց՝ի գնալն նորա յանգէտս՝ անկաւ յորոգայթն գաղանի լա-բեալ յորմէ զերծոյց Ապիրատ իշխանն, և նստոյց՝ի գահ իւր Անի։ Իսկ Աշոտ գնացեալ՝ի Բիւզանդիա առ Վա-սիլ կայսր, և առեալ իւր օգնութիւն, զորօք կայսեր

հնազանդեցոյց զնախարարս իւր զհերձեալս յկնքենէ. " Խոկ 'ի վերձէն նոցա, ասէ Վարդան, զինի այսորիկ գայ Թագաւորն Ասիսազաց Գորգի որդի Բագարատայ՝ որդւոյ Գուրգենայ՝ որդւոյ ողորմածին Աշոտոյ, և առնէ իրաւունս 'ի մէջ նոցա և գնայ։ Եւ զի ոմանք յիշխանացն անհնազանդ լինիցին՝ գնայ կրտսերն Աշոտ առ կայսրն Վասիլ, և առնէ 'ի նմանէ զօր՝ գայ և հնազանդէ զամենեսեան և նստի Թագաւոր Դրուց աշխարհին, և Աբաս 'ի կարս ,, ։ Եւ այսպէս հռչակաւոր քաջութիւն Աշոտոյ այսմ չափ գովեալ 'ի պատմագրաց՝ փոխանակ օգնելոյ եղբօր իւրում Յովհաննու, և նուիրն զօրացուցանելոյ զԹագաւորութիւնն Հայոց ընդդէմ Թշնամեաց՝ պատճառ եղև առաւել ևս տկարացուցանելոյ և վտանգելոյ, որով ձանձարձրհ եթող ամենայն Թշնամեաց, և գիւրացոյց զմուտ նորատեսիլ Թշնամեացն տուղիւրեան թուրքաց։

Խոկ Յովհաննէս Թագաւոր յամենայնի անկար՝ տեսեալ զինքն աստի և անտի վտանգեալ, գործեաց գործ՝ որ եղև նիւթ բորբոքման հակառակութեան 'ի տան իւրում. զի զանխուսք յամենեցունց ետ գիր առ կայսրն Վասիլ 'ի ձեռն Պետրոսի կաթողիկոսի, խոստանալով յետ մահուան իւրոյ 'ի նա տալ զԱնի և զամենայն սահմանս նորա, միայն Թէ պաշտպանեսցէ նմա։ Եւ գիր ահա ետ զվերջին կորուստ Թագաւորութեն. զի ասէ Լաստիվերացեր ։ " Ընդ եղև Հայոց կորստեան գիր և նմանակ. քանզի Յովհաննէս պատուէր տուեալ էր հայրապետին՝ եթէ գրէ գիր, և տուր կտակ Թագաւորին, զի յետ իմոյ վախճանին զիմ քաղաքս և զերկիրս նմա տացի 'ի ժառանգութեն. քանզի ոչ գոյր որդի Թագակալ Թագաւորութեն, վասն զի որդին նորա վաղ վախճանեցաւ, և չժամանեալ 'ի պատիւ հօրն ։

ԳԼՈՒԽ Բ

Վասնզի Յովհաննէս անորդի մեռեալ էր, այս Գագիկ որդի Աշոտոյ եղբօր Յովհաննու եղև ժառանգ. բայց փոքրիկ գոլով նորա, նախարարք Հայոց ոչ փոյթ կալան պըտակել զնա Թագաւոր և կարգել նմա զոք Թագաւորհայոց հաւատարիմ և կենցաղագէտ, որպէս օրէն է յայլ ամենայն պետութիւնս։ Զայն առիթ իւր առեալ Վեհան Սարգիս սիւնի և ազատութեն գտեալ, ինքն եղև իշխող ամենայնի՝ որ հոգաբարձուն էր միայն Յովհաննու

Թագաւորի ՚ի մահուանէ նորա։ Միքայէլ կայսր ինդրեաց յայնժամ զԱնի, յոչ առնելով Հայոց զթուղթ խոստմանն Յովհաննու Թագաւորի. իբրև Հայք ոչ յանձն առին տալ առաքեաց անդ զօրս 100 հազար, որոց գաղտ ձերնտու լինէր Վեստն Սարգիս։ Հայք 50 հազար զօրք յարձակեալ ՚ի վերայ նոցա՝ սպարապետ ունելով զքաջն Վահրամ պահլաւունի, հարին և վանեցին զՅոյնս։ Իսկ Վեստ Սարգիս առաւել ևս բռնացեալ ինքն կամէր Թագաւորել ՚ի վերայ Հայոց. յայնժամ Վահրամ սպարապետ գլուխ լեալ, յորդորեալ նաև զայլ նախարարս, զԴագիկ պատանին որ փախուցեալ կայր ՚ի բունութենէ Սարգսի՝ հնարիւք ինն մուծեալ յԱնի, անագան ուրեմն կացուցին Թագաւոր. Դագիկ սկսաւ տիրել քաղաքաց և դաւառաց զորս յաւիշտահեալ էին Յոյնք, եհար և վանեաց նաև զԹուրքս տուղրիլեանս։

Յետ այսորիկ Մոնոմախ կայսրն Կոստանդին լուեալ զերկպառակութենէն նախարարաց Հայոց ՚ի գրգռութենէ Սարգսի՝ բազում ինչ խոստացաւ նոցա և նմին Սարգսի, առ ՚ի համոզել զԴագիկ՝ տալ զԱնի ՚ի ձեռս Յունաց։ Նախարարք միաբան ընդ Սարգսի հնարս և որոգայթս խորհեալ գրեցին առ կայսրն՝ զի առ ինքն կոչեսցէ զԴագիկ, և յայնժամ դիւրին լինի առեւ կայսեր ՚ի յծոյղ բռնել դատել զԴագիկ, դիւրին նաև ինքեանց ՚ի հեռաստանէ յարդարել զամենայն ըստ կամաց նորա։ Դագիկ յետ միանգամայն երկիցս կոչելոյ կայսեր՝ զնաց ականջ՝ վստահացեալ յերդումն նախարարաց իւրոց, որք երդուան հաւատարիմ և պաշտպան կալ նմա։ Կայսրն յետ ընդունելոյ զնա պատուով՝ պահանջէր ՚ի նմանէ զԱնի, խոստանալով փոխարէն տալ նմա զքաղաքն Մելտենի. և ՚ի չկիջանելն Դագկայ՝ եարկ զնա ՚ի դիպահոջ, որպէս երեւի ՚ի միում ՚ի մերձակայ կղզեաց Բիւզանդիոյ։ Յայնժամ նախարարք Հայոց որք կամակից էին կայսեր՝ որոց գլուխ էր Սարգիս՝ զբանալիս Անի քաղաքին զանխուլ ՚ի միւս նախարարաց առաքեցին առ կայսր, զոր ընդ տեսանէր Դագկայ՝ ականջ կամաք ետ զԱնի և զաչխարհ իւր ՚ի ձեռս կայսեր ՚ի նոյն. Թուին. 1045. տուեալ վանն այսր Թուղթ, որպէս պահանջէր կայսրն. իսկ կայսրն փոխարէն ետ Դագկայ զՊիկու և զայլ տեղիս ՚ի կողմանս Խորձէնայ և Լիկանդիոյ, և պալատ մի ՚ի Բիւզանդիա հանդերձ ռոճկօք. Յորժամ ծանեան, եսէ Մատթէոս, Թէ Թագաւորն Դագիկ այլ ոչ ևս ունի դառնալ յա-

ըևելս յԱՆի, "անձարաւեալ հաւանեցաւ քաղաքն (ԱՆի) և ամենայն զօրքն. և գրեցին առ զօրապետն Հոռոմոց 'ի Պառակամանոն, և երդմամբ կոչեցին զնա 'ի քաղաքն ԱՆի, և ետուն զքաղաքն ԱՆի 'ի ձեռս Հոռոմոց. և խախտեալ փլաւ տէրութեն ազգին Բագրատունեաց,,։

Պատճառ այսր կործանման Սամուէլ 'ի Թուխն նշան. դնէ զանարի լինելն սորին Դագկայ Թագաւորի. "Որ ոչ պատերազմական արուեց Ջանայր, ասէ, որով վարի իշխանութեն. մանաւանդ զի առ այսու ժամանակաւ աւելի ինի 'ի գէպ էր քաջանալ, զի շփոթումն իսմայէլականացն՝ և 'ի վերայ յառնել սկիւթացւոցն՝ որպէս ասացաք յառաջագոյն, ընդ այսու ժամանակօք կարծի գոլ. և Յաւնացն (տէրութեն) չէր անվըդով, զի ընդ կնոջ ձեռամբ նուաճէր և նոցա Թագաւորութիւն։ Բայց սա (Դագիկ) զի 'ի մանկութենէ ընդ դպրութեի գրոց վարժեալ էր՝ 'ի նոսին զօտնայր և 'ի տէրութենն աւուրս,,։ Շփոթումն իսմայէլականացն ասելով՝ իմանայ գյարձակումն տուղբիւնացոյ Թուրքացոց 'ի վերայ իսմայէլեան արաբացւոց՝ և զտէրեն 'ի վերայ Պարսից. որպէս և իմանայ Կիւրակոս, որ զայս բան բառ առ բառ օրինակէ 'ի Սամուէլէ ասելով. "Իշխանսուն Իսմայէլի շփոթեալ էր. քանզի սկիւթացիք (տուղբիւնեան Թուրքք) յարեան 'ի վերայ նորա,,. այսինքն 'ի վերայ Իսմայէլի, որք էն արաբացիք։

Եւ արդարև այս յարձակումն տուղբիւնացոց սկիւթացոց 'ի նուաճել զտէրութի արաբացւոց և առ 'ի տիրել Պարսից՝ մեծի յաջողութե էր առիթ մերոց 'ի քաջանալ և 'ի վանել զթշնամին, բայց պակասէր 'ի նախապարս մեր միաբանութե, և փոխանակ այնր յաձախեալ էր երկպառակութե յոյժ առաւել քան զառաջինն ժամանակս. յորմէ Դագիկ վերջին Թագաւոր վտանգեալ կայր յամենայն կողմանց. 'ի նեբբուսատ նեղէր զնա այս երկպառակութե նախապարագ, մանաւանդ հնարիմաց խորամանկութե Վեհան Սարգսի, նաև արարք Դաւթե ԱՆհողոլնի և ղեւանից Թագաւորի, որ և նախ քան զթագաւորեն Դագկայ ասպատակ սփռեալ 'ի գաւառն Հիւրկայ յաւարի առնոյր. իսկ արտաբուսատ նեղէրն մեծագոյ ամիրայք արաբացիք, սկիւթացիք, նաև Յոյնք։ Թշնամիք միաձայնեին, և այնպէս առ սակաւ սակաւ գրաւէին զաշխարհ մեր. իսկ մերքն բաժանէին, և Ճանապարհ հոդէին թշնամեաց հանդարձակ տիրելոյ։

Յետ լսելոյ զայս ամենայն աղէտս որ անցին ընդ ազգս

մեր, կարևոր է լսել և զգլխաւոր պատճառս նորա առ
ի հասու լինել ազգային թերութեանց ի տեսչութեան
աշխարհի։ Տեսանեմք յայսմհետէ ժամանակի ի յաճա-
խութեի արշաւանաց արաբացւոց և սկիզբն ազատ՝ ռամիկ
ժողովրդեանն նեղել յանհնայն կողմանց խուռն դիմել,
ի մի վայր ժողովել յԱնի՝ իբր ի միջոցի աշխարհիս ՝,
մինչև ի վերջին ժամանակս Բագրատունեաց լինել Ա-
նւոյ իբրև զմի ի քաղաքաց, յորում կարծեալ լինէր թէ
մեծ մասն աշխարհիս Հայոց անդ իցէ, որպէս ասէ Մատ-
թէոս. զորոց զթիւ համարիմ զանցանել յայնժամ քան
զմիլիոն մի մարդկան, յուշ ածեալ միանգամայն զազա-
տութեի 60 հազար զօրացն՝ զորս եհան անտի Յոհաննէս
Թաղաւոր, զազգութեի եկեղեցեացն որ ի նմա, զմեծա-
դիր տարածութեի աւերակաց նորա, որ կայ մինչև յայսօր
և զազգութեի վերջին յրուէրոցն անտի Լեւբոսիա. որք
մոլ քաղաքի բնակիչ գոլով զեզան կալան բնակութեի և
լցին զազգութ քաղաքս. և չէն ինչ զարմանք, զի և այլ
բազում քաղաքք Հայաստանեայց եղծեալ դատարկա-
նային, և ի միում յայն ամփոփեալ պատապարէին փախչե-
տականքն։

Այժ երանի թէ որպէս Հասարակ ժողովուրդ՝ նոյնպէս
և իշխանք ամենայն կողմանց Հայաստան աշխարհիս մի-
աբան ամենայն զօրօք իւրեանց ի միում ևեթ վայրի հա-
ւաքեալ գտանէին յաթաբայութեան Շիրակ և ի համա-
րէն շրջակայս նորա մինչև ցերկուս գետոն մեծամեծս
կուր և երասխ. անդ մանկ էր նոցա իբր ի ցամաքէ կղզւոջ
ինչ կարգել զամենայն զօրս իւրեանց ի պահպանութեի,
զշուր գետոցն առնուլ իբր ի պարիսպ ինչ իւրեանց,
գոն գործել ի զօրացուցանել զնաւատուրն իւրեանց,
և ի չթողուլ թշնամեաց յայսկոյս քան զգետոն անցա-
նել։ Եւ յայսմ միանալովն իւրեանց և այսպէս պատսպա-
րեալ գոլով ի շուրջ՝ յայնժամ բազմօք դիւրանայր նո-
ցա ընդդէմ կալ անհնարին բազմութեի և յաճախութեի
հինից թշնամեաց ։ որպէս և ետ այսմ օրինակ ինչ Վահ-

1 Քանզի Դաւին հին իշխանութիւնք քաղաքն և շրջակայքն նորա սիրեալ գո-
լով առ հասարակ յայնաբացւոց՝ ազգն ոչ գտանէր յայն կողմանս խաղաղու-
ինչ և ապահովութեի, ոչ ի կողմանէ ընչից, և ոչ ի կողմանէ հաւատոյ,
այլ Անի միայն գտանէին։

2 Ա յսմ օրինակ եւտուն սուգ ինչ
գնի, յերկոտասանեւրորդ գարուն Ջա-
քարիա և Խաչէ, որոց գոլով յատա-
կ, եւ գտանդայն ժամանակի, բայց
գոլով միարան իւրեանց՝ այնչափ զօրա-
գան, մինչև զկորուսեալ տեղիսն ևս
առնի ի ձեռաց Թշնամեաց։ Եթէ

ըսաւ, որ զգեստն ի կիր էարկ ի յայդոլմէնէ յաղթուելէ իւրոյ ի վերայ տուղրիլեանց սկիւթացւոց։ Բայց անվախ քան զոլով իշխանացն՝ և ոչ մնադրելով այսմ՝ այլ իւրաքանչիւր ուրոյն ուրոյն գունն գործեցին պաշտպանել անձանց. վասն որոյ և իւրաքանչիւր տպարացան ի բերանոլէնէ Թշնամեաց, յորոց զերծանիլ կամեցեալ՝ փոխանակ միանալոյ՝ զզուելին և զայլուր փոխադրիլն համարեան անձանց փրկութեն առ Յոյնս ապաւինելով։ Ընտրելին օրինակ այսմ էտ Դաւիթ կուրապաղատ Տայոց, որ ի տանեերորդ գարուս զամենայն զիւր սահմանս էտ Վասլի կայսեր, Թէպետ և էր վասն այլ պատճառի. յորմէ իբր օրինակ առեալ և Սեհեբերիմ արքայ Վասպուրականի ի մեռասաներորդ գարուս էտ կայսեր զերկիր իւր և փոխադրեալ բնակեցաւ ի Սեբաստիա. զնոյն և նոյն ինքն արքային Հայոց Յովհաննէս Թագաւոր էտ զՆկի ի ձեռս կայսեր. յետ նորա նոյնպէս արարին և Գրիգոր մագիստրոս և Գագիկ Կարուց Թագաւոր, զերկիր իւրեանց տուեալ կայսեր՝ ինքեանք անցին առ Յոյնս։ Որոց անկ էր պաշտպանել զՀայաստան՝ Թողին, իսկ որոց չէր հնար առնել ինչ՝ ձեացին[1]։

Յետս մեռասաներորդ գարուն էր՝ զի և Գող Վասիլ իշխանն էանց յաշխարհն Եփրատացւոց, և խաչենեցի իշխանք ոմանք և այլք ի կողմանս Կիլկիոյ. Թող և զբազմութեն որք անցին ի Վիրս։ Սոքա և որք հետեւեցան սոցին՝ ամենեքեան կարծելին գտանել փրկութիւն փախուստեամբ յօտար երկիր, այլ խաբեցան. զի փախուցեալ

և Աշոտ զայն զօրութեն և զբաշխութեն որ ի կիր էարկ ի կործանել զերդայր իւր զՅովհաննէս Թագաւոր՝ ի կիր առնոյր առ ի զդէմ ունել պշուանայց արաբացւոց և տուղրիլեանց, մի միայն այս քաջութեն Աշոտոյ միակցեալ ընդ քաջ զօրագ մերոց՝ բաւական էր տալ տեւել ընդդէմ նոցա յայնմ վայրի պատսպարեալ ի Կարս և Հերասխ գետոց. և մի միայն կառավարութեն վճռորանց պահպանութեան որ կատարեալ էր յայնմ ժամանակի ի զօրաւորութեն կարէր զամենայն ըստ կարգի անօթիներ, եթէ կարգեալ լինէր զօրագլուխ։

մատը և կամքն իւրեանց կուրացուցին զաչս իւրեանց. զի ինքեանք կործանելովքն զԹագաւորութեն իւրեանց, ՆենգոմԹէ և անհնազանդութեն իւրեանց, և էղեն ոտից կոխան, և ծառայք և գերիք այլոց ազգաց և Թագաւորաց։ Ուր ի ժամանակ Նեղուեց իրիք ի վերայ ինքեանց՝ իբրև ոչ գտան Նէն զօգնութիւ յուսալեք, անշար մնացեալ փախստական ընալ Հոգոսպրին այսր և անդր... ամենայն ազգն Հայոց էգեալք վտարանդիք էղեն իւրաքանչիւրոց տեղեաց և Հայրենեաց և և բնակութեանց և յաշխարհաց, և տարագիմ գնացեալ ընդդէմ երեսաց՝ չկու ան էղեալք սփռեցան ընդ ամենայն աշխարհս։։

[1] Ա յայմանէ ժամանակէ՛ ի վերայ հասեալ և Աբասեան պատմագրի, գրէ՛ ի Հղմ. 145. "Ազգս Հայոց որք մա-

սէհնէքերիմեանք զվնի ժամանակաց մի առ մի սպանեալ սպառեցան ի Յունաց. ի Կիլիկիա փախուցեալքն յետոյ ուրեմն յեզ ելատացւոց կամ սպանան և կամ գերի վաճեցան, փախուցեալ իշխանքն ԱՆՇուոյ ի Գրիմ՝ ի միւմ աւուր կոտորեցան ի Կէտիք Ակմէա փաշային. միայն փախուցեալքն յառաջ և զվնի յերթալոյ՝ ապրեցուցին զանձինս, բայց ոչ զազգն. զի անդ ծնեալ և սնեալ որդիքն և թոռունքն նոցա ի նոցին յաւելան ազգ ամենայն հանգամանօքն, օտարացեալք ի քրիստ ազգէ իւրեանց։

Յետ առնլոյ Յունաց զԱնի՝ նոքա սերեցին սահմանացն Բագրատունեաց։ Ընդ գագարիլ, ասէ Կիրակոս, Թագաւորական իշխանութես Բագրատունեաց, "Թէպէտ և գոյր ուրուք գաւազան տէրութե, որպես և Կիւրիկէին (զոր մէ տեսցես ստորև), կամ այլ ուրուք, յորժամ տեսին զանհնարին աղէտս կործանման զգլխաւորի տեղւոյն՝ (որ էր Բագրատունեացն), անձնատուր եղեալք ընդ ձեռամբ վիճապին, կամաւ ելին փախստեամբ առ կայսրն Յունաց, և նոքա սերեցին ընդհանուր աշխարհիս"։ Կամի ասել. տիրեալ միջնաշխարհիս Հայոց, ուր էր Շիրակ. զի յայնմ ժամանակի բազում սահմանք Հայոց ելին ոչ ընդ տէրութե Յունաց, այլ արաքացւոց և սիւնեաց. զորմէ տես ի գլուխն Պատմութե։ Յոյնք ոչ կարացին պահել զառեալ տեղիսն, զի ոչ կարէին յանչափ հեռաւոր աշխարհէ հետզհետէ բազմութիւն զօրաց առաքել՝ ի պաշտպանել զԱնի և զշրջակայս յայնչափ յերկար ժամանակս ընդդէմ յարձակման Տուղրիլայ և Ալփասլանայ։ Մանաւանդ զի մեացեալ իշխանքն Հայոց ԱՆի՝ միշտ նենգուին խորհելով յանհնարին երկարակութե կալին, և զմիմեանս մատնէին կայսեր իբր ձեռնտուս առ թշնամիս. իսկ հասարակ ժողովուրդն անտէրունչ մնացեալ՝ զամենեսին արհամարհէին. "Խակ բնակիչք աշխարհիս, ասէ Կիրակոս, զմիմեամբք ելանելով անձնուն յոխորտանօք, և ի միմեանս արձակեալ խորամանկութիւն և ստաբանութիւն, խորհէին զիարդս նենգութիւն մատնելով զմիմեանս կայսեր"։ Կատարած այսր ամենայնի եղև այն՝ զոր գրէ Սամուէլ ի նիշս. "Այսպս զնի Գագկայ Յոյնք տիրեցին ասն քսան և մի, զի ոչ ոք էր ի նմին ազգէ. և զնի քսան և մի տին եկն Ալփասլանն, և առ զմայրաքաղաքն Հայոց զԱնի, և յոյժ կործանեաց զեկեղեցիսն Աստուծոյ"։ Եւ որպես գրէ այլուր, "Բնաջինջ արար զազգս մեր"։

Դիտելիք վասն ձամանակի Բագրատունեաց։

Ա. Նախկին Բագրատունիք զթագն Թագաւորական առնուին յամիրապետէն և ի կայսերէն և։ որ է ասել Թէ հրամմնատ նոցա նստէին Թագաւոր. որպէս և յայսմնի գրէ Սամուէլ ի Թուին չԲ. Թէ Ալի Աբմնի կռչեցեալ ոստիկանն "եկեալ յամիրապետէն յետ սպարապետութեն՝ իշխանաց իշխան ինա Հայոց կացուցանէր զամն երեսուն. և ապա յաղագս առաւել լաւութեան Թագաւորական պսակաւն Ձոխաբար Թագաւորեալ, Թագ կապեալ յերկոցունց Թագաւորացն՝ յիսմայէլացւոց և յունականէն,, ։ այս էր ։։ Աշոտ ։ Միայն զԱշոտ չԲ. առանց խնդրելոյ Թագ՝ ինքեանք նախարարք նստուցին "յինքնակալուե ինն պայմանի պատուոյ զնա համարեալ,, ։ Զայս ասէ Ցոհաննէս կաթ. իբր զի ոչ սպասեցին նախարարք հրամանի և Թագի, ոչ կայսեր՝ ընդ որում գժուարին էր յայմ խռովայոյզ ժամանակի հաղորդակցել, և ոչ յամիրապետէն կամ յոստիկանէն նորա՝ ընդ որում ի կռուի էին յայնժամ. բայց իբրօք չգոյր ինչ ինքնակալութէն, այլ Աշոտ բաց ի հարկատու լինելոյ ոստիկանի ամիրապետին քստ այլոց, նաև ընդ իշխանութէ նորա Թագաւորէր, և գիտութէ կայսեր ։ վասն որոյ գրէ Ասողիկ չԲ. 3 ։ վասն ։։ Սմբատայ ։ "Զկնի Աշոտոյ կին ։ Թուականին Թագաւորէ Սմբատ որդի նորա ամն քսան և չորս կամակցութէ Ամիրի Թագաւորի Յունաց,, ։ Զայսոյ պարտ է իմանալ և վասն այլոց Թագաւորաց ։ ուստի յորժամ զկնի դէպ եղև չԲ. Աշոտոյ գնալ ի Բիւզանդիա, յայնժամ կայսրն Կոստանդին Պերփերուժէն "Թագաւորական հրաշանգաց հանդիսիս Ձոխացուցանէր ։ ։ ։ և զարդարէր զնա ծիրանի նէզզեաց փառաք ,,, ասէ Ցոհաննէս կաթողիկոս ։ որ էր ընդունել զնա Թագաւոր ։ Իսկ զկնի յամենանաւն այսր չԲ. Աշոտոյ ընդ գտեր Սահակայ Սևադայի մեծի իշխանին Գարգմանաց՝ յայնժամ և Յուսուփ ոստիկան առաքեաց նմա, ասէ, Թագ արքայական։ Եւ քանզի յետ այնորիկ տէրունէն Հայոց օրըստօրէ երթայր և նուազէր, և սահմանն հայաստանեայց հետզհետէ անցանէր ի ձեռս արաբացւոց և այլոց, նախարարք ոչ սպասէին հրամանի և Թագի ի մեծ ոստիկանէ ամիրապետին, կամ ի կայսերէն ։ իսկ վերջին Թագաւորք Բագրատունեաց ոչ ի ժա-

մանակս Թագաւորելոյ իւրեանց և ոչ զԿնի ընկալան Թագ-
'ի նոցանէ։

Բ. Յաւուրն Թագաւորը Բագրատունեաց, որպէս և ՚ա. Սմբատ, տիրէին նաև 'ի վերայ Վրաց. "Ակ Սմբատ (որպէս գրէ Ասողիկ ՚ը. 3) Թագաւորեալ տիրէ բոլոր Հայրենեաց իւրոց Հայոց և Վրաց, ժառանգելով զքաղաքս հակառակորդաց իւրոց"։ Մանաւանդ Թէ ինքն Սմբատ էր որ Թագաւոր Վրաց կացոյց և երկրորդ իւր զոյն՝ որ յառաջ առ Թոռնայի արծրունւոյ կոչի Իշխան, իսկ առ Յոհաննու կաթողիկոսի Կոստաղաց. "Բայց մեծ կուրապաղան Վրաց Աղրներսէհ, ասէ, անվրդով և անշուշտ ուխտ խաղաղուէ և սիրոյ միաբանուէ ընդ արքայի Սմբատայ պահէը 'ի բոլոր մասունս . . . ընդ որ յաւէտ իւին հաճեալ հաւանեալ արքայն Սմբատ . . . ապա Թագ կապեալ նմա . . . նաև զինու զարդարեալ ըստ օրինի Թագաւորաց՝ կացուցանէ զնա Թագաւոր Վրաց աշխարհին, և երկրորդ զնա իւրոյ տերուձէն հաստատեալ"։ Սորին վասն զՅայս չէ պարտ համարել Թէ ընդ տերութիւնէ Վրաց լեալ իւրէ 'ի բանից ինչ Յոհաննու կաթողիկոսի, այլ կալուածս միայն ունել 'ի նմա սորին Աղրներսէհի, որպէս յայտնի գրէ յասելն վասն Սմբատայ Թագաւորի. "Տաղնապաւանկանեալ 'ի կողմանցս ամրոցային Տայոց՝ 'ի կալուածս կուրապաղատին Աղրներսէհի սիրելւոյն իւրոյ"։ Եւ յայ Սմբատ տիրէը նաև 'ի վերայ Աղուանից, որպէս ցուցանէ այս բան Թոռնայի արծրունւոյ ՚ը. 10. "Գրեթէ ամենայն իշխանք Հայոց, Վրաց և Աղուանից եկեալ էին ընդ զօրս Հայոց 'ի վերայ աշխարհին Աղուանից"։ Նաև Յարկս առնոյր ըստ նորա ՚ը. 5. "Յայնժամ Թագաւորն (Սմբատ) զեսպանս արարեալ յամենայն սահմանս տերութիւնէ Հայոց, Վրաց և Աղուանից, և առ քաղաքացիսն, և հազարապետս, գաւառակալս, և որք սիրողաբար առ նա ըզհնազադութիւնն Յարկ Յարկանէին"։ Իշխերնաև 'ի վերայ եգերացւոց Թագաւորին, զորմէ գրեալ եմք 'ի գլուխն Պատմութեան։ Աւրդ որպէս այս ՚ա. Սմբատ՝ նոյնպէս և այլ նախնին Թագաւորք Բագրատունեաց՝ Թուին տիրեալ 'ի վերայ Վրաց և Աղուանից։

Գ. Յետին ժամանակս Բագրատունեաց սկսան բաժին երկրի հանել և միւս աբքայորգւոց, զոր չէք տեսանել մինչև յաւուրս ՚ը. Աշոտոյ ողորմածի. այսպէս ՚ը. Սմբատ զմահ ինչ իւրոյ երկրին 'ի բաժին Եհան միւս եղբօրն որ կոչէր Գուրգէն. որոյ Հրամանաւ ժառանգեր

Դուրգին ըստ Վարդանայ՝ զՏաշիր, զՏաւուշ Սևորդւովք Զորագետայն, զկայեան, զկայծակն և զսոռակերտ և զԲաղկերտ և զայլ բերդս անուանին, որք և անցին ժառանգութիւք յորդւոց յորդիս։ Այսպէս յաւուրս Յովհաննու Թագաւորին ոչ խաղաղացաւ երկիրն ի ձեռաց Աշոտոյ եղբօր նորա, մինչև նախարարքն Հարկադրեալ հանին նաև նմա բաժին արտաքոյ Հիրակ գաւառին, որ կոչեցաւ Պրուց աշխարհ։ Այլ մանաւանդ յաւուրս վերջին Թագաւորաց յայն վայր եհաս ըմբոստանալ Թագաւորաց՝ զնոցա՝ զի և այլ մերձաւորք Թագաւորին սկսան ոչ միայն ուրոյն երկիր սեփականել, այլ և զանուն Թագաւորի առնուլ։ զորմէ ստորև։

Դ. Ի սկսանիլ տերութիւնէ Բագրատունեաց՝ մեծ դըժբաղդութիւն նոցա եղև երևիլն և զօրանալն արաբացւոց, իսկ մերձ յաւարտին՝ երևիլն սկիւթացւոց Թուրքաց, զոր Տաղիստանս կոչեմք։ ընդդէմ որոց ոչ կարաց տոկալ և ոչ իսկ Յունաց կայսերական զօրութիւն։ և եթէ մերոց քաջութիւն ոչ զդէմ ունէր հանապազորդեան մնաքառամամբ՝ գուցէ և նա ի վանդիլ լինէր կորստեան։ այլ ցորչափ տևեաց այս տերութիւն Բագրատունեաց՝ եկաց իբրև նահապարիսպ կայսերական սահմանաց ընդդէմ արաբացւոց անընդհատ պատերազմաւ։ Երբեմն պատերազմէին Բագրատունիք, և երբեմն հարկս հարկանէին արաբացւոց։ բայց և յայնժամ այլ ինն վանդ ի վերայ հասանէր նոցա։ զի ի հարկելն արաբացւոց՝ Յոյնք զչարեին։ իսկ յանդիման առ Յոյնս՝ արաբացիք կատաղէին։ Եւ այնպէս ընդմէջ երկուց անկեալ՝ ոչ գիտէին զինչ գործիցեն։ Յովհաննէս կաթողիկոս պատմէ վասն ։ Սմբատայ՝ թէ միայն նորոգելն նորա զՀին ուխտ սիրոյ ընդ Ահմի կայսեր Յունաց՝ բաւական եղև գրգռել զԱփշին ոստիկան խաղալ զօրօք ի վերայ Սմբատայ։ "Իսկ իբրև զայս ամենայն լսեր Թագաւորն Սմբատայ ոստիկանն Ափշին, և գՀաստատուն անշուշտ սիրոյ միակամութիւն նորա ընդ կայսեր, ի խոր խոցեալ և խանդագեալ ընդ իրսն՝ եթէ դաւ ինչ նմա ի նոցանէ լինիցի, առեղծանել հատանել փութայր զկայ միաբանութ սիրոյ նոցա,,։ Սմբատ ոչ զերծաւ ի ցասմանէ նորա մինչև եղ ընդ առաջ նորա և խեղամեծցոյց ասելով, Թէ այն սէր զոր կալաք ընդ կայսեր Յունաց՝ հայեր յօդուտ և ի շահ արաբացւոց։ "Ընդէր, ասէ, զչարեալ դիմեալ գաս յոչինչ պէտս։ զի Թէ սէր ընդ կայսեր եղէ, և այն ևս վասն ձեր օգտի, զի Թերևս որ պիտոյ է

ամիրապետին մեծի, և զբո ևս դիւբաւ զվեհս յոմնակա-
նաց անտի գտանել մարթացից, և ի նպաստ օժանդա-
կութեան ձեզ ընծայել զերեւելի հանդերձիդ և զար-
դուց և զպաստուց վայելս. այլ և վաճառականաց որք
ընդ գենիպ քո բացեալ ճանապարհ, զի արասցեն մնալ
յաշխարհս նոցա, և ի նոցա լուծել թենէն փարթամա-
ցուսցեն զձեր գանձարանդ ,,: Սոքա արաբացիք և տուղ-
ըիլեանք եղեն երկու թշնամիք զօրաւորք և աշխարհի
ահարկուք, որք ոչ գտանէին յաւուրս Աբրշակունեաց.
և սոքա եղեն գրեթէ գվաւուր պատճառք կործանման
Բագրատունեաց. և ըստ այսմ մասին արգարացեալ
երևին Բագրատունիք քան զԱբրշակունիս՝ որք ինքնա-
կամ պատճառք եղեն վերջանալոյ Թագաւորութեան
իւրեանց. միայն զի և յաւուրս Բագրատունեաց որչափ
առաւելան արտաքին թշնամիք հզօրք՝ նոյնչափ և առա-
ւելան նեղքին երկպառակութիւնք և նեղքին թշնամիք:

Դ. ԱՄՓԱՆԱԿ ԲԱԺԱՆՄԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ Ի ԲԱԶՈՒՄ ՀԱՑԿԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՍ ՑԱՒՈՒՐՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ

Թագաւորութիւն Աբծրունեաց կամ Վասպուրականի:

Ի մէջ զանազան Թագաւորութեանց որք յաւուրս յաւ-
ուրս Բագրատունեաց՝ առաջին այն է, զոր կանգնեաց
Գագիկ իշխան արծրունի ի սկիզբն տասներորդ դարու
ի Վասպուրական, մինչդեռ Թագաւորէր ի վերայ Համա-
րէն Հայոց ։. Սմբատ արքայ, որոյ էր քեռորդի: Տես
զայսմանէ և ի պատմութենէ առհմին Աբծրունեաց: Թէ-
պէտ միտք Գագկայ էր Թագաւորել ի վերայ Համարէն
Հայոց, որպէս ցուցանեն բանք Յոհաննու կաթողիկոսի,
բայց ի Վասպուրական միայն Թագաւորեաց. ուր և յա-
ջորդութիւն կալեալ՝ մի վիճի միոյ պայազատեցին սուին
կարգաւ.

Ա. Գագիկ:
Բ. Դերենիկ Աղոտ որդի Գագկայ:
Գ. Աբուսահլ Համազասպ՝ որդի Գագկայ՝ եղբայր
Դերենկան:
Դ. Աղոտ Սահակ՝ որդի Աբուսահլի:

Ե. Պօղոսիկ՝ եղբայր Աշոտոյ՝ որդի Աբուսահլի։

Զ. Սենեքերիմ՝ Յովհաննէս եղբայր Դաւիթի, որ զերկիր իւր տուեալ ի Յոյնս՝ փոխադրեցաւ ի Սեբաստիա ի 1021. զորմէ տես ի մեծ Հայս ի Վասպուրական։ Իսկ ի Սեբաստիա նստան մանկանուամբ Թագաւորք՝ Դաւիթ արծրունի որդի Սենեքերիմայ, Աշոտ արծրունի և Աբուսահլ եղբայրք Դաւիթի։

Երկրորդ Թագաւորութիւն եղէ Աշոտոյ որդւոյ Շապհոյ. սակայն միայն սպարապետ էր, և էր հօրեղբօրորդի Գ. Աշոտոյ Հարազատ Թագաւորի Հայոց։ Զկնի որ ի մէջ երկոցունց Աշոտոցս և գՀաշտուեցիս՝ Յովհաննէս կաթողիկոս, որպէս և յիշեցաք ի վերոյ. այլ Ասողիկ Գ. 5. այսպէս յուցանէ՝ Թէ միտք Յունիայ էր կացուցանել զսոյն զայս Աշոտ իբր յաջորդ Սմբատայ Թագաւորի, և ոչ յաւելեալ ինն Թագաւոր. « Այլ և եղբօրորդին Սմբատայ, ասէ, Աշոտ՝ խորհրդակից եղէ նմին չարախորհ վիշապին (Յունիայ ոստիկանին), Թագաւ կասլն ի նմանէ ի տեղի հօրեղբօր իւրոյ » Սմբատայ։ Այլ սորայս ոչ կալաւ՝ ոչ յաջորդութեն ինչ և ոչ անուն, այլ յանձն իւր վերջացաւ։

Թագաւորութեն կարուց յամ Վանանդայ։

Երրորդա այս Թագաւորութեն սկիզբն կալաւ ի Մ՝ուշեղայ, որ էր եղբայր Աշոտոյ ողբմածի, և նստէր ի Վանանդ. « Զինի Աբասայ, գրէ Ասողիկ Գ. 7. Թագաւորեաց Աշոտ որդի նորա, որ և Շահնշահ կոչիւր, ամս քսան և հինգ[1]. և Մուշեղ եղբայր նորա առ նովաւ Թագաւորեաց ի Կարս ». Զի քանի մի նախարարս առ ինքն ժողովեալ՝ նորօք նստաւ Թագաւոր ի Կարս քաղաք Վանանդ գաւառի. վասն որոյ երբեմն կոչի Թագաւոր Կարուց, և երբեմն Թագաւոր Վանանդայ. զոր օրինակ յասելն Ասողկայ Գ. 43. « Եւ սակաւ ինչ յառաջ խաղացեալ Թագաւորն Վասիլ, եհան առ նա Թագաւորն Վանանդայ մինուինն Աբաս »[2]։ Այլ ոչինչ գրժամանակեալ եղև յայնմանէ ի մէջ երկուց եղբարց և երկուց Թագաւորաց։

1 Տիրապէս Շահնշահ կոչեցաւ Գ. Աշոտ՝ Երկաթին ասացեալ. իսկ ամ է Գ. Աշոտ Ողբմած յորջորջեալ։

2 Տես և ի մեծ Հայս ի Թղթախաղ մասն 435։

Յերկրորդ՝ Աբաս որդի Մուշեղայ նստաւ զԻնի Նորա. «Յայնմ ժամանակի (ասէ Մատթէոս[1]. այսինքն՝ի ժամանակին յորժամ Հաշտեցուցին զԱշոտ ընդ եղբօր իւրում Յոհաննու Թագաւորին Աւստ) նստաւ Աբաս ի Կարս Թագաւորական իշխանութիւն՝, հրամանաւ ազգապետին իւրոյ Գագկայ Հայոց աբքային (Աւստ), և Գունդէն յԱզգանից աշխարհն»։

Յերկրորդ՝ Գագիկ որդի Աբասայ, զորմէ գրէ Վարդան. «Իսկ Թագաւորն Կարուց Գագիկ.... Նեղեալ յերկիւղէ Թուրքացն[2], տայ զՀայրենիս իւր ի Յոյն. և առնու զԾամիդաւ և զԱռափիա և զԱյնտիա և զԻոմանիա և պատատիս Ձ. որ է գեաղան»։ Սա գնաց առ կայսրն Միքայէլ որդի Տուկիծայ, որ նստաւ կայսր ի 1071։ Ըստ այսմ և Մատթէոս ի Թիւն ՌԺԳ. ասէ, Թէ ի գալն Ալփասլանայ ի վերայ Աւստ, Թագաւորն Կարուց Գագիկ հնարիւք ինն զերծաւ ի նմանէ. «Եւ եղև զինի առւերցս այսոցիկ Թողեալ Գագիկ զկայսր և գնաց ի Հռոմոս. և Թագաւորն Տուկիծ տայր նմա զԾամիդաւ, և անդ եդեալ Գագիկ ազատաք իւրովք, և Թողեալ զտունն Հայրենեաց իւրոց»։

Թագաւորութիւն Բաղաց, կապանի, Սիւնեաց կամ Սիսական, և Փառիսոսոյ։

Ձորրորդ Թագաւորուն կանգնեցաւ նոյնպէս ի ՄԶԷն անդ տասնեերորդ դարուն ի Բաղաց զաւառին Սիւնեաց ըստ Ստեփաննոսի օրպելեանն, և յանուն զանազան տեղեաց զանազան անուանիք կոչեցաւ[3]. ըստ այսմ Վարդան

1 Գովուեցեր Աբասայ մեծ է առ Ամոզեայ Ե. 17. վասն որոյ զբանն նորա յառաջ բերցուք. «Սա յառաջքան զԹագաւորելն երկնեցուկ փոյթ և կալ տառ, և կարծիս տալ սեւսղացն անհաղորդ լինել բարեաց ինչ գործոց հոգևորաց. իսկ յորժամ եհաս նա յաթոռ Թագաւորութեն՝ երևեցաւ նա այլ շքեղ, լի հանճարով և իմաստուն՝ ընդ առաջին խոստուհան հաստատեալ և զարձաւ նա յայլ այլ, և սկիզբն արարեալ նա ամենայն բարեգործութեանց՝ նախ և առաջին էբարձ նա յաշխարհէն իւրմէ զաւազակսն և ... նա և որ սովորութ անկաթգութեն էր յաշխարհս Հայոց իշխանաց և ազատաց՝ որովայնութեն ապականեալ զիարբեալ առատս պահոց, զորովքեամբ և զոբթամբ և զաւուրս շաբաթուց, բաց ի մոց կենդանի կերակրովք, զոյն անճառս օրինակեալ, ոչ ի կենդանւոց ինչ և ոչ ի ձկանց ճարակեալ, և հացիւ և բանջարեղէն միգոք անցուցանէր զաւուրսն զանիսկի զօրհնաբանութիւնս։ Զայլ բարեկարգութիւնս նորա տես ի գլ. Բարձց։

2 Իմն զառաջինեանս. յաջորդ Տուկիծայ եղև Ռոմանոս։

3 Տես վասն այսր ի մեծ Հայս ի Թղթահամարն 256. 294. և 309։

յանուն Սիմեհայ կոչէ յասելէն . " կոչէն զՀալածեալն Դաւիթ , և տան նմա զթագն . և աճէն նմա ի հնութենէ զկատարմամեհ զուստր Սահակայ Սիմեհայ Խաֆաւորի ,, : Նոյնպէս կոչէ և պատմութիւն օրպէլեան գլուխ է . " Եւ եր աճեալ զբռամբ (Բաչուռ գլխաւորն Թամգաց) զփոքր Խաֆաւորն Սիմեհայ զՊաւլիթ . և կայր նա ի մէջ բանակի նոցա ի կալաս ,, : Մատթէոս յանուն Կապանին կոչէ զայս Թագաւորութիւն , յասելն ի ձէ . Թէ յորժամ յաւուրս Յոհաննու Հայոց Թագաւորի Ապուսաւար մեծ ամիրան Պարսից եկն ի վերայ Դաւիթի Աւխոզկնի , Դաւիթ օգնուի ինդրեաց ի շրջակայ Թագաւորացդ . " Նոյնպէս և յաղարկեալ ի Կապանին Խաֆաւորն , զի և նա տայր նմա արս երկու Հազար ,, : Եւ ի Թիւն իջ . յորժամ Ամիրայ կիկ կայսր խաղաց ասէ ի վերայ Տաճկաց , նախ ի Հայս եմուտ . " Յայնժամ ամենայն Թագաւորազունքն Հայոց , ազատքն և իշխանք , մեծամեծք յաշխարհս տանն յարևելից Ժողով արարին առ Թագաւորն Հայոց Աշոտ բագրատունի , Խաֆաւորն Կապանին Փիլիպէ , և Թագաւորն Աղուանից Դաւրգէն , Աբաս Կարուց տէրն , և Սեհնէքերիմ Վասպուրականաց տէրն , և Դաւրգէն Ագձևացեաց տէրն , և բոլանդակ ամենայն տունն Սասանու [1] : Յայս բան Մատթէոս գրէթէ զամենայն Թագաւորս Հայկազեանս յիշէ . և միայն զԹագաւորն Բաղաց կամ Սիսեանց ոչ յիշէ . զի զոր ատ Կարուց , Վասպուրականաց , և Ագձևացեաց տեառս կոչէ , այլուր Թագաւոր անուանէ նշանակէ . որպէս գրեցաք ի վերոյ :

Արդ զարմանք մեծ լինիին՝ եթէ յայսպիսի մեծ ժողով ամենայն Թագաւորաց Հայոց՝ ոչ գտանէր երևելի Թագաւորն Բաղաց , որ առաւել ծաղկեալն էր ի ժամանակին . ապա յայտ է Թէ Կապանի Թագաւորացն իմանայ զԲաղաց կամ զՍիսեանց Թագաւորսն . զոր և իբր երևելի յառաջ քան զամենեսին յիշէ , որոյ մայրաքաղաք զինի արքայ եղեալ Կապան : Եւ Թէ ի կարգս Թագաւորացն Բաղաց յիշատակելոց ի Սեփհանոսէ՝ զոր եդեալ ունիմք ի մեծ Հայս 237 . ոչ յիշատակի Փիլիպէ անուամբ Թագաւոր , մարթի է լինել եղբայր Թագաւորի , կամ այլ ոք Թագաւորազունց , զոր Մատթէոս ըստ իւրում սովորութեան կոչէ Թագաւոր :

Յանուն Փառիսոսոյ կոչէ զայս Թագաւորութիւն Ապո-

1 Որպէս Թուի պարտ է լինել տունն Սասնոյ :

զիկ ե. 17. զի զմայր Թագաւորին կարուց Աբասայ՝ կոչէ "քոյր Թագաւորին Փառխոռոյ Սենեքերիմայ և Դրիգորայ,, Եւ զի փառնէա գաւառ, ուստի ելանէ անունս Փառխոռոյ, է յԱբցախս հարևանդի, յայտ է թէ այս տերութիւնն ձգեալ էր և 'ի սահմանս Աբցախոյ՝ յաւէտ խնամութիւն. զի որպէս պատմէ Ստեփաննոս օրպելեան՝ Դրիգոր որդի Սենեքերիմ մոյ ունէր մի միայն դուստր՝ զոր ետ 'ի կնութիւն Հասանոյ կոչեալ զնա 'ի Խաչենոյ, և կացուցեալ ժառանգ Թագաւորութիւն. իսկ Հասան գաղտ փախուցեալ 'ի Բաղաբերդէն ընտանեօք հանդերձ գնաց 'ի Խաչէն [1]: Եւ քանզի Աբցախ զինի կոչեցաւ և Խաչենք [2], իշխանքն Խաչենոյ յետ այսո րիկ գտան անուանիք իրք ժառանգք այնը Թագաւորուե:

Ոստան կամ մայրաքաղաք Թագաւորուե Բաղաց էղև Բաղք և Կապան [3]. իսկ ոստան Խաչենեցոց էրևի լինել Հայթերք, 'ի քանից աստի Մխիթարայ Գօշի 'ի յիշատակարանի գատաստանագրոց. "Ի Թուականութես Հայոց ոլգ. . . . 'ի ժամանակի մեսգելոց սակաւ իշխանաց 'ի կողմանս Խաչենոյ ընդ ժամանակս . . . Վախթանգայ 'ի գղեակին որ անուանի Հայթերք՝ գլխաւորի այլոց իշխանաց ,,:

Իսկ Թէ զիարդ սկիզբն կալաւ Թագաւորութիւս այս Սիսեանց կամ Բաղաց՝ չունիմ ասել առ պակասելոյ ծե. գլխոյ պատմութիւն Ստեփաննոսի օրպելեան. բայց որչափ ինչ գտանեմք 'ի գլ. ծիե. այս է. Սմբատ Թագաւորէ, ասէ, արիւն և բարեպաշտն՝ "որդին Սահակայ եղբօրն Սմբատայ, որք էին որդիք բարեպաշտին Աշոտի՝ եղբօր մեծին Սահակայ որ իշխանիկ կոչիւր. և սորա որդիքն երանելոյն Փիլիպէի, եղբօր Սահակայ որ 'ի Դուին սպանաւ 'ի պատերազմին Հոլայ ամիրային, որդիքն Վասակայ մեծ նահապետին Սիւնեաց. իսկ յետ Սմբատայ Թագաւորէ որդի նորուն Վասակ, այր քաղցր և աստուածասէր, և յաջողած յամենայն գործս. որ տուեալ էր զբոյր իւր կին Աշոտի 'ի նոյն Սիսական տոհմէ, որ էր իշխանաց իշխան յամենայն Թագաւորութիւնս. և ունէր երկուս որդիս, Սմբատ և Գրիգոր ,, : Վասակ քանզի անզաւակ մեռաւ, վասն որոյ Թագաւորեցուցանեն, ասէ, " զՍմբատ որդի ազատի ,, . որ էր քեռորդի Վասակայ և որդի վերոյիշեալ Աշոտոյ. զայս յայտ առնէ յետագայ բանին՝ որ ասէ. " Աշնոս զԹագաւորութիւնն նորա (Սմբատայ) եղեալր իւր Գրիգոր.

1 Տես 'ի մեծ Հայս 238:
2 Տես 'ի մեծ Հայս 303:
3 Տես 'ի մեծ Հայս 295:

և սոքա երկոքեան որդիք մեծին Աշոտոյ, որ Աւագ աշո-
տեանք կոչին. իսկ Գրիգոր առեալ իւր կին զամիհօրՀնեալ
և մեծահաւատ բարեպաշտուհին Շահանդուխտ՝ ի տանէն
Ազուանից, դուստր Նոցին Թագաւորազնին մեծին Սեւա-
դայի ,, : Բայց քանզի և սա ևս անորդի մնաց , “ Ապա
խորհեալ, ասէ, ’ի միասին ընդ իշխանին՝ ածին յԱզուանից
զՍենեքարիմ եղբայր Նոցին Շահանդխտոյ, Թագաւորազն
մանուկ, յոյժ գեղեցիկ տեսլեամբ և առնդգ հասակաւ,
հանձարեղ և խմաստուն և երկիւղած յԱստուծոյ. և
ստանան զնա ժառանգ իւրեանց Թագաւորութե ամն ինչ ,,:
Վասն զի յաւուրս սորա յոյժ զօրացեալ էր ասէ տէրունէ
Տաճկաց , “ Եւ յորոյ գառաւս շորթեցեալ Հանին ’ի Սիսա-
կան աշխարհիս ’ի ձեռաց ընկէզ տերանցն ,,: Ա՛յլ յորժամ
Մելիք շահ եղև սուլտան՝ գոյով այր բարեբարոյ՝ յոյժ
մեծարեալ եղև ’ի նմանէ Սենեքարիմ, և մինչև ’ի մահ
Մելիք շահին՝ որ մեռաւ ’ի շինծ. 1092 . “ Յոյժ երևելի
փառօք Թագաւորեաց , ասէ , ’ի տանս Բաղաց . և ընդար-
ձակեաց զամենայն սահմանս տերութե իւրոյ ,, : Սմա եղեն
երեք որդիք , Գրիգոր, Սմբատ, Սևադայ և դուստր մի. և
քանզի զինի Մելիք շահին ամենայն ամիրայք կամէին լինել
անձնիշխան, ամենայն չկնութեի աշխարհիս քայքայեցաւ.
մինչև Փատլուն ամիրայն Դամձաղայ և Պարտաւայ յար-
ձակեցաւ առնուլ զՍիւնիս. այլ տեսեալ զամբութե բեր-
դորիդից նորա , անյոյս լեալ կոչեաց զՎրիգոր շիրակացի
իշխանն որ ընդ նմա էր , բանս եդ սիրով ի բերդացանել տալ
զՍենեքարիմ արքայ ’ի բերդէն, երդումն տուեալ ոչինչ
մնասել նմա . ապա թէ ոչ՝ սպառնացաւ փոխանակ Սենե-
քարիմայ զիւր գլուխն հատանել : Գրիգոր զայս ամենայն
ծանուցեալ Սենեքարիմայ՝ այն ինչ հաւատալով բանից
երդմանն էջ առ ամիրայն Փատլուն, խնդրեն ետ սպանանել
զՍենեքարիմ. “Ահա այսպէս շինջաւ, ասէ , Հրաձգն քրիս-
տոնէից՝ որ կայր ’ի միացեալ յամբարսն Բաղաց ,, :

Եւ այսպէս գլխաւոր պատճառ վերջնանալոյ այսր Թա-
գաւորութե եղև անզգաստութիւնն կամ սպառազինն ցեղին [1].
որպէս և Վարդան յայտնի գրէ . “ Թագաւորքն որ անդ
(’ի գառաւոն Բաղաց և Կապանի) հայկականք էին . և ոչ
բարձաւ մինչև ’ի յետին աւուրս եղելոյ երկուց եղբարց

1 Ջ՛ամանակին նշանագրէ Սահ- գառաւոն, և ամուր աշխարհին Բա-
մանոս օրսկեան առելով ’ի գլ. կե . ղաց , և սպառելոյ տէրութե նոցա ,
“ Յամի յորում էր Թուականն Հայոց Թագաւորաց և իշխանաց ,, :
ՃՄԲ . եղև սկիզբն աւերածոյ Կապան 2 Ջորմէ առն՝ի մեծ Հայս :

անզաւակաց Սմբատայ և Գրիգորայ, որ առեալ զմանուկն Սենեքերիմ հայազարմ՝ եդին Թագաւոր Ժառանգորդ իւրեանց, որ և սպանաւ հրամանաւ Փառլուզոյ. շինեաց Շիրազն որ անդ, և տիրեցին Պարսք ,, : Վարդան յայս բան մինչև ՚ի Սմբատ և ՚ի Գրիգոր իշուցանէ զգեղն. զի Սմբատ և Գրիգոր մեռան անորդի. զկին Գրիգորի Թագաւորեաւն Սենեքերիմ՝ էր եղբայր Շահնդխտոյ կնոջ Գրիգորի. և այսր Սենեքերիմայ որդին էր նախագրեալն Գրիգոր, զոր յիշեցաք ՚ի վերոյ : Բայց Ասողիկ Ջ. 48. նաև զՍենեքերիմ և զորդի նորա զԳրիգոր զնա ՚ի կարգս ցեղին. ,,Յայնմ ժամանակի, ասէ ՚ի ՆԺԶ. Թուին. իշխանքն Փահլաւոյ որ ՚ի հայկազեան ազգին՝ բառեալ մինչև ցՍենեքերիմ և ՚ի Գրիգոր՝ սպառեցան մանուաւոք, զորոց զաշխարհն բաժանեալ հակառակութեամբ ՚ի միջի իւրեանց՝ առ քաջն Հայոց Դաւիթ և Փառլուզ ամիրային Գանձակայ ,, :

Ահա չորեքին այսոքիկ Թագաւորութիւնք են զորս յիշատակեն գրեթէ ամենայն պատմագիրք, որոց և տեղիք են յայնմանէ ՚ի մեծ Հայս, Թագաւորեալք պայազատութեամբ սակաւ կամ բազում՝ ասն մի զինի միոյ. միայն չապուհեան Աշոտոյ Թագաւորութին եղև երկրորդ ՚ի կարգին, որ անշուշտ ինացեալ յանձն իւր սկսաւ և յանձն իւր աւարտեցաւ ըստ նախադրելոցս : Ալ բաց ՚ի չորեցունց տասն յիշատակին ՚ի գիրս և այլ զանազան Թագաւորութիւնք, որք Թեպէտ Հայկականք են՝ բայց կամ այլով անուամբք՝ և կամ յոմանց միայն յիշատակին. զորոց ուրոյն ուրոյն խօսեցուցք յայսմ վայրի, հմմուտս առնելով զընթերցողսն կարևոր տեղեկութեամբ՝ յատակ և որոշ իմանալ որ ինչ ՚ի գիրս նախնեաց կան յաղագս այսոցիկ :

Թագաւորութեն Բագրատունեան Աղբանից, Կուխեցւոց և Սիւնեաց :

Աշոտ Ջ. բագրատունի Ողորմած անուանեալ՝ եթող, ասէ Վարդան, երիս որդիս. առաջին Սմբատ, որ պայազատեաց զինի հօր իւրոյ ԱՆԻ. երկրորդ՝ Գագիկ, որ նախ Հալածական եղև վասն կարծեաց ինչ դրժամտաց, բայց ՚ի մեռանել Սմբատայ՝ կոչեն և Թագաւորեցուցանեն, որ եղև ա. Գագիկ. իսկ կրտսեր որդին Գուրգէն, որ յետ տասներորդ գարուն՝ ,, ժառանգէ, ասէ, զՇաւիղը Սևորդւոյն Զորոգետին և զկայեն և զկայծոն, զխոռխոռուն, նիք որ ՚ի Խոռաչ չինեցաւ, որ է Խոշոռնի և Խոռակերտ,

և զԲաղկերտ ի գաւառն Տաշրայ, և այլ բերդ անուանիք եհաս Գուրգենայ՝ զոր Վիրք Սամսէթ կոչէն. և ի նմանէ սերեցան Թագաւորքն Դաւիթ, Աբաս և Կիւրիկէ, յորոց կանայքն կրօնաւորք՝ Մարքան և Ռուզբան։

Ընդ մեռանելն Գուրգենայ՝ պայազատեաց որդի նորա Դաւիթ. որպ ընդարձակեալ զսահման իւր՝ զԹագաւորէն ընկալաւ զանուն, արքայանիստ իւր արարեալ զՇամշուդէ, զորմէ գրէ Ասողիկ էջ. 30. "Խակ եղբօրորդի նոցա Սմբատայ և Գագկայ (Թագաւորացն բագրատունեաց) Դաւիթ որդի Գուրգենայ հանդերձ եղբարբն իւրով Սմբատաւ՝ ունի զկողմանս Տաշրայ և Վրաց դաշտի, զՇամշուտեայ մեծ քաղաքանիստ գեհէնն նիստ արքունական պատրաստեալ ինքեան, արագապէս տիրէ քաղաքին Դմանեայ. Հնազանդեցուցանէ և զամիրայն Տփխեաց քաղաքաւն իւրով։" Վասն որոյ և ստորև կոչէ զնա արքայ՝ասելով. "Խակ Դաւիթ գեղեցկածաղիկ մանուկն և նորատունկ արքայն"։ Այս Դաւիթ կոչեցեալ Անհողին՝ հօրեղբօրորդի Յոհաննու արքային Հայոց՝ օրըստօրէ զօրանալով իշխեաց և ի վերայ Աղուանից, և ետ որդւոյ իւրում Գուրգենայ՝ զոր Կորիկէ կամ Կիւրիկէ կոչեցին. "Այս Կիւրիկէ, ասէ Վարդան, որդի էր Դաւթի (Անհողին կոչեցելոյ), որդւոյ Գուրգենայ, որդւոյ Աշոտոյ ողորմածի։ Սմա (Կիւրիկէի) հայրն Դաւիթ (Անհողին) չինեաց զԼոռէ և այլ ևս երկոտասան բերդ. որ կայ Թաղէալ ի Սանահինն. որոց Թոռունքն Աբաս և Դաւիթ նեղեալ ի Վրաց՝ չոգան ի տեառնն Ռանայ (գուցէ Աւանայ), և առին մեն մի բերդս, և կային տառապանօք"։

Իսկ այսպէս Կորիկէն կամ Կիւրիկէն կոչեցաւ Թափառօղ Աղօնանէդ. "Աւաքեաց (ասէ Մատթէոս վասն սուլտանին Ալփասլանայ) առ Թագաւորն Աղօնանէդ Կորիկէ, և խրճդրեաց զզուստսըր իւր ի կնութէն, զոր յաղագս ահին տրեալ, և ապա արար սուլտանն ընդնմա սէր և խաղաղութիւն, և առաքեաց զԹագաւորն Աղուանից զԿորիկէ զորդի Դաւթի Անհողինի ի քաղաքն իւր Լոռի"։ Յորմէ յայտ է Թէ արքայանիստ քաղաք Դաւթի եղև Շամշուդէ. իսկ Կորիկ կէին եղև Լոռի։ Եւ Թէպէտ կոչեր Թագաւորութէն Աղուանից՝ բայց էր հայկազանց. վասն որոյ և Սամուէլ ի խօսէն զայսմանէ ի Թուին նղէ. խօսի իբր զմիոյ ի մերոց Թագաւորութէից. զի յետ պատմելոյ զվերջնոյն Գագկայ Թագաւորէ, ասէ. "Այլ դէն զի դադարեաց իշխանութի

Թագաւորական, պարտ է և՛ի կանոնացս (յաղխսակացս) դադարեցուցանել (զկարգ յաջորդութեանն նոցա). զի թէ պէտ և գոյր ուրուք գաւազան տէրութեանէ, որպէս և կիւրիկէին, կամ այլ ուրուք ,, : Ուր բանն է զամենայն Հայաստեան Թագաւորութեանց. և իբր օրինակի աղագաւ յիշէ զայս կիւրիկէին Թագաւորուն որպէս զմի ի Հայկազեան Թագաւորութեանց. նմին իւրմէ և այլոյր զկիւրիկէ յայտնի կոչէ Հայոց Թագաւոր, որպէս և զԳորգի Վրաց Թագաւոր. "Ի չիշ. Թուին ի սուլտանն գնացին Հայոց և Վրաց Թագաւորքն կիւրիկէ և Գորգի ,, : Իսկ կիրակոս միայն զգեղն յիշելով կոչէ Բագրատունի. "Իսկ կիւրիկէ Բագրատունի որ ի Լօռէ քաղաքէ՝ զամենայն ժամանակս իւր կացեալ ընդդէմ Վրաց՝ ի հաստատուէ պահէր զՀայրենիս իւր. և յետ մահուան նորա գաւեալք ի Վրաց՝ որդիք նորա եղեալ ի տանէ Հայրենեացն՝ գնացին ի Պարսիկս՝ Դաւիթ և Աբաս ,, [1]:

Ապ այս Թագաւորութէն Աղուանից՝ յորոյ անուն կոչեցաւ Թագաւորութէն կիւրիկէից՝ էր ինչ այլ ի Թագաւորութէն, զոր սկզբնաւորեաց Դաւիթ Անհողին, այլ էր նոյն հետզհետէ ընդարձակեալ. և ես համարիմ Թէ սահմանն նորա ոչ ելանէր արտաքոյ Հայոց աշխարհին, այլ ձգէր ի Գուգարս, ԱՀրցախ և յԱրտս. վասն զի ի տեղւոյն յիշատակեալս որք ընդ տէրութէ Դաւիթ և կիւրիկէի՝ ոչ գտանեմք տեղւ ինչ քրիստ Աղուանից երկրին՝ որ էր յայնկոյս Կուր գետոյ, այլ յայսկոյս Կուր գետոյ՝ որ էր աշխարհ Հայոց: Համարիմ և Թէ նոյն իսկ Աղուանք տակաւին գոլով յամենայն, Թողեալ զերկիր իւրեանց ի ձեռս այլազգեաց Թշնամեաց՝ գաղթեալ զերեալ էին յայսկոյս Կուր գետոյ ի սահմանս երից նախագրեալ նահանգաց Հայաստանեայց, որք և համօրէն չէին զերծ ի բռնութէ այլազգեաց. զոր օրինակ Գանձակ, որ էր տեղի Արցախ նահանգի, անկեալ կայր ի ձեռս ամիրային այլազգեաց: Վասն որոյ և ի պատմութէնս այնր ժամանակի ուր ուրեք յիշատակին տեղիք յանուն Աղուանից՝ անգամաւ գտանեմք զսահման երից նահանգացս այսոցիկ այսպէս անուանեալ. և այս կրկին պատճառաւ. մի՝ զի այն սահ-

1 Որպէս և այլուր գրէ նոյն իսկն Կիրակոս ,,Աղբմերն գաղարեաց գաւազան Թագաւորին. որպէս Կիւրիկէին որ ի Լօռէ քաղաք, և որ շուրջ զնովաւ. զի և սա յաղթէ Բագրատունւոյ նենգ էր ,, : Եւ պատմութէնն օրպէսզի ան գլուխ է. յասէն վասն օրպէս լեանց Թէ խնամութէն կոչեն ,,զնգ Թագաւորին Հայոց Կորիկեանց, որք էին բագրատունիք ,, :

մանք անցեալ էին ի ձեռս Աղուանից. և երկրորդ՝ ալ և ի քնակիչս գտանէին ոչ միայն Հայք՝ այլ նաև Աղուանք անդր փոխադրեալք, յորոց վերայ Թագաւորեաց այս ցեղ Դաւթի Անհողնիւն Յորմէ վշտեալ գայ Թէ արտաքոյ մեծին Հայոց ոչ գոյր յայնժամ ոչ Թագաւորութիւն Աղուանից և ոչ երկիր ընդ տէրութիւնք Աղուանից, բայց եթէ գուցէ տակաւ ինչ տեղիք. վասն որոյ և յայնմ ժամանակի յիշատակեալ Թագաւորին Աղուանից ի գիրս մերս՝ պարտի համարիլ այլ Թագաւորութիւն յԱղուանից որ կայր ի հնումն, վասն տարբերութեան ցեղի Թագաւորին, և վասն տարբերութեան երկրին։

Թագաւորութիւն Զորոյգեցոց։

Յիշատակեալ ի Վարդանայ՝ յասելն վասն փառացն ամիրային. « Դուռ դնէ ընդ Դագկայ Թագաւորին Զորոյգեցոց, և ընդ Կիւրիկէի Թագաւորին Աղուանից, և ընդ Բագարատայ Թագաւորին Վրաց. և նեղէը զնոսա,, Բայց այս չէ այլ ի նոյն իսկ ի Թագաւորէ Բագրատունեաց որ էր յԱնի. զի որպէս գրեալ է մեր ի մեծ Հայս կ16. Զոր զոյգեցս կոչէր Անի իւր գաւառաւն. և Զորոյգեցոցն կոչին անեցիք. Զայս յայտ առնէ և նոյն իսկ նահապետ գրեալ զան Վարդանայ, յորում յիշէ զԹագաւորն Աղուանից, և զԹագաւորն Վրաց. միայն զՀայոցն ոչ յիշէ. վասն զի անուամբ Զորոյգեցոց կոչեաց զնա. որպ Թագաւոր էր Դագիկ Թագաւորեալ յԱնի։ Յայնպէս և յասելն նորա. ,,Ոմն ի նոցանէ Թագաւորեաց Դաւիթ անուն, որ խնամացաւ ընդ արքային Զաքարէոյ,, իմանալ զնոյն իսկ զԹագաւորն Հայոց որ յԱնի. Թէպէտ և դիպուածն զոր պատմէ՝ անճանօթ է յայլուստ։

Թագաւորութիւն Աչէացեաց։

Յիշատակեալ ի Մատթէոսէ ընդ. « Եւ առեալ Աչոտ (եղբայր Յովհաննու Թագաւորին Անւոյ) զօրս ի նմանէ (ի Սենեքերիմայ Թագաւորէն Վասպուրականի) և անցաւ, նեղը առ Դուրգէն Խաֆաւոր Աչէացեաց,, Իսկ ի Թիւն խէ. միտ զանուն Թագաւորի տայ Դերենիկան. « Թագաւոր Աչէացեացն՝ որում անուն Դերենիկին ասէին... արար զին ձերբակալ զԴերենիկին զԹագաւորն... տարան զԹագաւորն Դերենիկ ի Հեր քաղաքի,, Բայց զայս ևս չէ

պարտ որիշ Թագաւորութիւն համարել՝ ի Վասպուրական-նէն կամ յԱրծրունեաց. այլ քանզի դէպ եղև վասպուրականի իշխանութեանն առնուլ զանուն Թագաւորի, յորժամ բազում եղբարք լինէին՝ մի ումն առնուր զվճռաւորն իշխանութիւնն Վասպուրականի, և միւս եղբարքն բաժանէին զերկիրն՝ ի մէջ իւրեանց. յայսմանէ զհետ եկին Մատթէոսի զնոյն եղբարս ևս կոչել Թագաւոր, մանաւանդ որ տիրէրն Աշնևացեաց։ Թէպէտ նաև նախ քան զառնուլն Վասպուրականաց զանուն Թագաւորական, զԱշնևացեացն կոչէ Թագաւոր. այլ Թագ առնուլ նորա ոչ պատմի ուրեք երբէք։ Ըստ այսմ և զկրտսեր որդին Աբուսահլի Արծրունեաց Թագաւորի զԱշնեքերիմ՝ դէպ եղև ոմանց կոչել Թագաւոր Ուշտունեաց,

Թագաւորութիւն Դաբէանդոյ։

Յիշատակեալ՝ ի Մատթէոսէ՝ ի թիւն ԺԾ֊ից զի՝ ի պատմէն զանցս չէ. ասի՝ նախ յիշեալ զԹագաւորս Աղուանից՝ ապա ասէ. "Ելին և այլ Թագաւորք Հայոց՝ ի Դաբէանդ աշխարհին՝ որ ասի Կապանք, սահմանակից Աղձոց (Օձոց) և Աղուանից. որք ելին Թագաւորք անարատք և սրբակրօնք, որք յիշատակին՝ ի տուրք պատարագն ընդ այլ աստուածասէր տուրք Թագաւորացն՝ որք ելին անուանք այսոքիկ. Վաչական և Գուշակատին Նորին որդին, Փիլիպէ որդի Գուշակատինի, Սևադա որդի Փիլիպէի, Սենեքերիմ որդին Սևադայի, Գրիգոր որդի Սենեքերիմայ՝ որ դեռ ևս կենդանի (էր), մինչև գրեցաք զայս մատենագրութիւնս մեր",

Հայելով յանուանս Դաբէանդ, և՝ ի դնելն սահմանակից Օձոց՝ այժմ անուանելոց Օս, հայելով նաև յանուանս Թագաւորաց՝ որք որիշ են յանուանց Թագաւորաց բազաց կամ Կապանին, զորս յիշատակեալ է մեր՝ ի մեծ Հայս 237. երևի Թէ այս կապան ոչ է Սիւնեացն[1], այլ է կապանն Ճորայ որ էր առ Դարբանդաւ։ Վասն որոյ անվրէպ համարեալ զգրչուէ Մատթէոսի՝ Թուի լինել ևս այնմ ցեղինչ Բաղաց տէրութեան Թագաւորեալ յայս կողմն. զի

1 Տես վասն այսր՝ ի մեծ Հայս՝ ի Թղթատետրին 29ի. բակ կապանն Ճորայ յիշատակեալ՝ ի խորհրդայն ի֊. 65. և ի֊. 12. Նոյն է ըստ այնմ որ կոչի Դուռն Ճորայ, նաև Դուռն Հոնաց. առ որով գնէ Վաղդ գէ. ժի֊. զՏարպանգ քաղաքն յասելն. "Որոց հակառակ և մարտ եգեալ՝ ի զօրս Հոնաց որ՝ ի Տարպանդ քաղաքի ,, ։

այս գեղ որպէս նշանագրեցաք ի վերոյ՝ ի պատճառս խնա-
մուեն ծաւալեալ գտաւ մինչև յԱբրցախ, ի խաչէն. մարթ
էր նոյնպէս ձգիլ և ի կողմանս Դարբանդայ, որովհետև
դնէ անդ Թագաւորս քրիստոնեայս հաստատուլ, և կոչէ
Թագաւոր Հայոց. իսկ քրիստոնէուեն հեռի էր ի քնակչաց
կողմանցն այնոցիկ. և դնէ անուանս մերձաւորս տունին
տէրութեն բաղաց, Թէպէտ և օտար անուանք են։

Ապա ահա զանազան անուամբ Թագաւորութիս
գտանեմք յիշատակեալ ի գիրս մեր ի վերջին ժամա-
նակս անդ Բագրատունեաց, յորում նոյն իսկ ընիկ հա-
րազատ Թագաւորութեն երթայր և տկարանայր։ Զոյն
ի տեսանել և ի կործանման այլոց Թագաւորութեց, յո-
րում բազումք Թէկն ածէն անուան Թագաւորի՝ յորժամ
յերերել կայ ընիկ Թագաւորութե նոցա։ Ալ յայսչափ յոր-
նաթիս Թագաւորութեն չորս միայն դնէ Լաստիվերացի
ժէ. այսինքն է՝ զորս յորդւոց յորդի պայազատութէ
կալան ի Հայս։ ա. Բագրատունեաց յԱնի։ բ. Աբծրու-
նեաց ի Վասպուրական։ գ. Վանանդայ ի Կարս։ դ. Սիւ-
նեաց ի Բաղք և ի Կապան. "Զորս անուանս Թագաւորուե
ունեք Հայք, Թող զի (զոր) ի հիւռապաղատին իշխանութէն,
և զոր ի Հոռոմից ,, իշխանութէն ունեք։ Զի որովհետև
հիւռապաղատութիւն Դաւթի ի տասներորդ դարուս քա-
զում գաւառաց և քաղաքաց տիրապետող եղև, Աստղիկ
պատմութէն նորա կոչէ Թագաւորուե. իսկ զորս ի Հոռո-
մից իշխանութէն յիշէ Լաստիվերացի, Թուի ամենայնիւ
զԹագաւորութեց անդր ի Յոյնս փոխադրելոց, այսինքն
զԱբծրունեացն փոխադրելոց ի Սեբաստիա, և զկարուցն
ի Ծամնդաս, որք էին յիշխանուե և ցերկրէն Հոռոմից.
բայց սոքա չէին այլ Թագաւորութիք ի նոցանէն։ Մոյնպէս
ոչ յիշատակի առ Լաստիվերացւոյն ի կարգս սոցա Թա-
գաւորութիւն շապուհեանն Աղուանից սակս չունելոյն ինչ
յայնորդութէ։ Առաւելապէս ի դէպ էր ի կարգս սոցա
դասել զԹագաւորութէն Կիւրիկէից, որ և էր ի ցեղէ Հայ-
կազեան Բագրատունեաց, և տահմանն նորա ի Հայս, որ-
պէս նշանագրեցաք ի վերոյ. վասն որոյ և Հայկազեան
կոչեցին Սամուել և Կիրակոս, միայն զօտար անուն Աղուա-
նից ի վերայ առեալ։ Ալ վասն ցեղին Բագրատունեաց
պիտէ պարտ է, զի և յայլ ընդակայ Թագաւորուէս սփռեալ
գտաւ ցեղ սոցա. զի ըստ Ասողկայ Ճ. 28. և ըստ Վար-
դանայ, Թագաւորքն Վրաց սկսեալ յԱմբերսեհէ բագ-
րատունւոյ որ ի տասներորդ դարուն՝ սերեալ են ի Բագ-

բատուհեաց. նոյնպէս և Թագաւորքին Ափխազաց ըստ Վարդանայ, որպէս ունիս տեսանել՝ի պատմութիւն ցեղի նոցա։

Ե. ԵՂԱՆԱԿ ԿԱՄ ԿԱՐԳ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՒՈՐԱՑ Ի ՍԵՓԱԿԱՆ ՑԻՐՈՒԹԵԱՆ

Աբգուսնիէ և ներսէհ նախաբար։

Աբգուսնիք կոչին՝ի գիրս մեր և Ոստան, զորմէ տես՝ի մեծ Հայս 168. կոչի և Աթաբանք, և Դուբան, նաև Պաղատ. զորոյ զպաշտօնեայս՝ի սպասաւորութիւն արքային մի ըստ միոջէ կարգեացուք յառաջիկայդ որչափ ինչ յիշատակին՝ի գիրս։

ԹԱԳԱԴԻՐ

Ոյսմանէ խօսեցարուք անդ, ուր բանք լինին յաղագս տոհմին Բագրատունեաց։

ԱՍՊԵՏ

Ի.ւյս անուն պատուոյ՝ որ բազմաց է տուեալ առ եւրոպեանս, կոչեցեալ՝ի նոցանէ Էֆոէս, Քավալիէոե. և գաղղիարէն Շեվալէ, առ մեզ սեպհականեալ է Բագրատունեաց տոհմին Լեռն. զորմէ տես անդ։

ԹԻԿՆԱՊԱՀ

Այր՝ի ձեռս տոհմին Մամիկոնէից. զորմէ տես՝ ուր ունիմք խօսել զնախարարութենէն նոցա։

ՋԻՆԱԿԻՐ

Ձիշատակի առ Խորենացւոյն Ե. 22. յաւելն վասն Տիրիթայ. "Մատուցեալ առ արքայն Հանդերձ բարեկամաւ իւրով Ջինակիրս արքայի՝ որ՝ի Մամիկոնեան տոհմէն էր" և ապա Ե. 25. ասէ. "Եւ առաւել ևս գրգռէր զարքայ (զԱրշակ) Վասակ Ջինաէիր նորա"։ Սա էր այլ՝ի թիւնապահէն՝ որ Մամիկոնէից էր սպասաւո-

րուքՅ. իսկ զինակրուքՅ գուցէ միշտ Մամիկոնէանցն էր գործ, ըստ որում նոցա էր սպարապետուքիւն։

ՍԵՆԵԿԱՊԵՏ

Յիշատակէալ առ Ռուզանդայ Ջ. 20. «Որոյ անուն Փիսակ կոչիւր, որ Սենեկապետն էր արքային Տիրանայ ազգաւ սիւնի»։ Եւ խորենացին Ջ. 22. վասն նորին Տիրանայ ասէ. «Հեղձամահ եղեալ յիւրոց Սենեկապետաց»։ Սենեկապետն կրէր ընդ մէջ իւր սուսեր արքունի ըստ գրելոյ Ռուզանդայ Ջ. 3. վասն մեծին Ներսէսի. «Ա՛յլ ի ժամանակին յայնմիկ էր ի վարս զինաւորուքեան ի գործս կալուքեան, սիրելի Սենեկապետ արքային Աւրշակայ, հաւատարիմ ի վերայ ամենայն կարգաց կենաց թագաւորուքեան ի ներքոյ և արտաքոյ»։ և «կայր ի սպասու թագաւորին մեծ ի մնարս արքային, զարքունական սուսերն զպողովատիկն զսենեկապետական հանդերձ ականակալ մարգարտազարդ կամարաւն ի սպասու նորա բարձեալ ուներ»։ Ա՛յլ առաւել քաջայայտ գրէ այսպէս. «Թագաւորն Աւրշակ ինքն ձգտեալ զսուսերն արքունական կամարաւն, զոր նմա Ներսէսն բարձեալ ուներ ի սպասու թագաւորին ըստ օրինաց սենեկապետուքեանն, ի բաց հաներ ի նմանէ»։ Ջոր և կրկին Մեսրոպ ի Թիւն Ջ. ասելով վասն Աւրշակայ Թագաւորին. «Ինքն առնոյր զզսուրն պողովատիկ մարգարտապատ կամարաւն՝ զոր ունէր Ներսէս ի սպասու թագաւորին»։

Կայր քանզի կրել զարքունի սուրն՝ էր գործ Թիկնապահի և զինակրի՝ Թուի արտաքոյ կարգի տուեալ Ներսէսի ի սենեկապետուքեան. կամ Թէ մարթ էր մեծին Ներսէսի լինել Թիկնապահ կամ զինակիր արքայի, և նմին իրի կրել զսուր. լինել միանգամայն և սենեկապետ, որ էր այլ սպասաւորուքիւն. զի Մեսրոպ ի Թիւն Ե. նաև այլ իմն սպասաւորուքեանցն պատուոյ տայ նմին մեծին Ներսէսի ի վերայ գանձուց. «Եւ եկեալ Ներսէս, և Սենեկապետ էր աւենայն փանջոյ նորա. վասն զի Հօրաքեղբ որ զի էր Աւրշակայ Թագաւորին»։ Իսկ ի Թիւն Ջ. այլ իմն պատիւ. «Սենեկապետ և Ախոռապետ Հաւատարիմ ի վերայ ամենայն կենաց Թագաւորին... և ի մնարս նորա զարքունական մատանին ի սպասու նորա ունէր»։ Յայսմանէ մարթ է ասել՝ Թէ մեծն Ներսէս էր նաև Սենեկապետ Թագաւորի։

ՋԳԵՑՈՒՑԱՆՕՂ ԿԱՄ ՀԱՆԴԵՐՁԱՊԵՏ

Լ՚ը գործ Գնթունեաց տոհմին ։

ՅԱԿԱՌԱՊԵՏ

Ի ձեռս Գնունեաց ցեղին . և ՄԱՏԱԿԱՐԱՐ ԿԱՄ ՀԱՄԲԱՐԱԿԱՊԵՏ, Ի ձեռս Գաբեղէն ցեղին . զսոցանէ ստորև ։

ՁԻՒՆԱԿԱՆՔ . Տես ստորև ՚ի նախարարութեին ։

ԿԱՐԱՊԵՏ

Լ՚գաթանգեղոս յՅԵ . ՚ի յիշելն զիշխանս զորս Տրդատ առաքեաց ածել զերկուս որդիս Լուսաւորչին , երրորդ իշխանն էր , ասէ , " Դատ անուն՝ կարապետ արքային " ։

ԴԱՀՃԱՊԵՏ

Լ՚ը Բուզանդայ Ջ . 15 . " Գայր արտաքուստ Դահճապետն երազմամբ , մտանէր ՚ի խորանն արքունի " ուր էր յայնժամ Ք . Աբրշակ Թագաւոր ։

ՀԱԶԱՐԱՊԵՏ

Հիշատակեալ առ Խորենացւոյն Ք . 53 . " կարգէ Աբուսուշէս զԱրսէր Հազարապետ, զայր խնամատուն և բանաստեղծ . և հաւատայ ՚ի նա զամենայն գործս տանն արքունի " ։ Ուր բայն յայտ առնի թէ Հազարապետ կոչէր յայնժամ ինչ՝ որ ունէր զհոգ տնտեսութեն տանն արքունի . գուցէ նաև զհոգ տնտեսութեն Համբրկն Թագաւորութ Հայոց , զոր խնամատասխրել կարեմք նաև ՚ի բանից աստի խորենացւոյն Ք . 67 . " Իսկ Տրդատ ՚ի Հազարապետութեան Հայոց զՕտայն կացուցանէ, զնորհակալութեամբ պատուէ զնա " ։ Տես և զնախարարութեին գնունեաց .

ՈՐՍԱՊԵՏՔ

Ասէրոպ Ժք . յիշէ զայս ընդ այլ իշխանս Որսկեպետ . կոչելով , Իսկ Ագաթանգեղոս յՅԵ . ՚ի թուելն զիշխանս՝

զորս Տրդատ տարաւ ընդ իւր ՚ի Հռոմ, յիշէ զիշխանին Սպահապետութենէն։ Զայս պաշտօն ՚ի պէտս զօրագրութեան ընկալան տոհմքն անուանեալք Հաւնունիք, Սլկունիք, Մանդակունիք, Վարաժնունիք, Աբծրունիք. զորոց տես ՚ի նախաբարութիւնս նոցա։

ՀԱՒՆՈՒՆԻՔ ԿԱՄ ՀԱՒԵՆՈՒՆԻՔ

Ազգս էին յօրսորդութենէ բազէակիրք և բազէակալք, յորոց սերեցաւ և ցեղ նախաբարութեան, որպէս ունիս տեսանել ստորև։

ԱՐԾՈՒԻԿՆԻՔ

Կոչին պէս ՚ի վերայ օրսորդութենէ. որոց ցեղն կոչեցաւ Աբծրունիք։ Եւ ՍՊԱՆԴՈՒՆԻՔ էին ՚ի վերայ զէնարա-նաց։ Զերկոցունց զսոցանէ տես ՚ի նախաբարութիւնս։

ԸԱՀ ԱԽՈՌԱՊԵՏ

Օր յիշէ եղիշէ ՚ի թղթ. 174. որ եմուտ ՚ի գունդն Վարդանանց՝ Աբբունի անուն տալով։ Մեսրոպ ժէ. ընդ այլ իշխանս յիշէ և Շահ-ապետ՝ ՚ի ժամանակս Աբշա-կայ արքայի։ Ան եւրոպեանս կոչի Մաւելչ. և առ կի-լիկեցիս կոչիւր Գունդստապլ, այսինքն կոմս ախոռոյ։

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Յիշէ զայս խորենացին գ. կդ. ՚ի գրելն վասն սրբոյն Մեսրոպայ. "Մնեալ և ուսեալ առ մեծին Ներսէսի. և յետ ելից նորա յաշխարհէ, ՚ի գրան աբբունի կարգեալ քաթուղոսը"։ Զնոյն յիշէ և ՚ի գրելն գ. 52. վասն Վռամ շապհոյ արքայի. "Ոչ փոքր ինչ կրկ աշխատութեի յա-ղագս քաթուղոսին. զի մինչև գնաց Մեսրոպ յարքունական գրանէն՝ ոչ զզք ՚ի ձարտարաց գտանէր անդ ՚ի դպրաց"։

ԳՐՉՈՒՆԻՔ. ՆԱՄԱԿՈՒՆԻՔ

Ի կարգս այլոց իշխանաց յիշէ զսոսա Մեսրոպ ժէ։

ՄԱՐԴՊԵՏ

Իւր է ներքինապետ . որոց նահապետ կոչէր Հայրէչեան ։ Խոր . ք . 7 . և ՟ք . 15 ։ Տես ՟ի նախարարութիւնս ՟ի ցեղն Մարդպետական ։

ՇԱՀԱՊ

Ի գաթանգեղոս յԾ՟Շ . ընդ իշխանս զորս Տրդատ առաք քաց ՟ի կեսարիա , զորեքտասանեքորդն յիշէ՝ իշխան՝ Շահապ . և յՁ՟Թ . ՟ի յիշելն զիշխանսն զորս Տրդատ տարաւ ՟ի Հռոմ , յիշէ զՇահապն Շահապիվանի . և Մեսրոպ ՟ի՟ . յիշէ Շահապունեաւ ։ Որ ըստ ցուցանելոյ անուանին՝ էր կամ պահապան և վերակացու (որպէս սահապ) արքունի տեղեաց , և կամ իշխան կարգեալ ՟ի վերայ շահու եւ կամուից արքայի , կամ գուցէ և համօրէն տէրութեն ։

ՈՍՏԱՆԻԿ

Պռունդ զօրաց կարգեալ ՟ի պահպանութիւն արքունեաց . զորմէ տես ՟ի կարգս նախարարաց դրան ։

ՁՈՐՐՈՐԴԱՊԵՏ

Յիշատակի ՟ի գիրս վանորէից՝ զորս շինեցին նախարարք Հայոց յերուսաղէմ յաւուրս Տրդատայ . ուր գրի . " Սուրբ Պողոքատոսի վանքն շինեալ Ձորրորդապետին Հայոց ՟ի հիւսիսոյ կողմն ,, ։ Որ մարթ էր լինել պետն ՟ի վերայ չորից գնդից Ոստանիկ անուանելոց ։

ՈՐԵԱՐ ԴՐԱՆ

Ա՟յսպէս կոչին ամենայն արք ՟ի գուռն արքունի բնակեալք ։

ԴՐԱՆ ԵՐԿՑ

Կոչի քահանայն որ ՟ի սկիզբ դրան արքունեաց սահմանեալ . որպէս առ Բուզանդացի Ճ . 15 . " Ապա Դրան եբէց ումն արքունի՝ որ էր ՟ի ժամանակին յայն՝ որում անուն Մերլ Ջինիկ . . . զնա ՟ի բանտ արկանէր փառանձեմն ,, ։ Յիշատակի և առ Կիրակոսի . " Յայսմ ժամանակիս Թուխս մին . էր

Սահմանոս Դրան երէց, որ ի բանիբուն Ճանաչիւը ,, : Եւ այլուր . " Ընդ նմա իսկ եկեալ էր և Թորոս քահանայն , և կուսակրօն և կարապետ , որ Դրան երէց էր արքային ,, և հետ ի Հեթմայ : Ձիշատակի և վանս կիւրիկէ , որ Թէպէտ Թագաւոր Աղուանից կոչի , այլ էր Հայ ազգաւ որպէս նշանակեցաք ի վերոյ . "Ձնարգիս ոմն , ասէ Կիրակոս , Դրան երէց Կիւրիկէի՝ ձեռնադրեն եպիսկոպոս Հաղբատայ ,, : Ձոր Վարգան Աւագ երէց կոչէ . "Ձնարգիս Աւագ երէցն արքունի դրանն (Կիւրիկէի Թագաւորին) արքեպիսկոպոս ձեռնադրեցին երկրեաւն կաթողիկոսքն սուրբ ուխտին Հաղբատայ ,, : Ղազար նաև վերէից իշխանաց Հայս անուն կոչէ , յասելն Թղթ . 129. "Եւ ղԴրան երէցն իշխանին Աբծրունեաց ՝Ներշապհոյ զտէր Մուշէ ,, :

ԴՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ձիշատակեալ ի Կիրակոսէ յասելն վասն Յունաց կաթողիկոսին Աղուանից . "Սա էր Դրան եպիսկոպոս Հայոց , և մինչդեռ ի գերուէ էր Գէորգ՝ սա գայ յԱղուանս ,, : Եւ ի Մատթէոսէ Ռհնէ . "Նստուցանեն յաթոռ կաթողիկոսութեանն Հայոց զտէր Թէոդորոս զԴրան եպիսկոպոսն տեառն Սարգսի Հայոց կաթողիկոսի ,, : Ա յլ զայս մարթ է իմանալ և վասն դրան կաթողիկոսարանին :

Աբրահամ Նախաբարձ :

ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Կարգեալ ի Վաղարշակայ ըստ Խորենացւոյն է . 8 . "Բայց յետ կարգելոյ (Վաղարշակայ) զտուն Թագաւորին, Երէրդոր Թափաոռոնէն լինէր ի զաւակէ Աշդահակայ՝ Մարդոյ եղելոյ Թագաւորի , որ այժմ Մուրացանդ կոչէն . քանզի ոչ ասէն նահապետի ազգին՝ Մուրացան տէր , այլ Մարացւոյն տէր . և Թողու ի վերայ նորա զամենայն շէնս որ ի գերութէն Մարաց ,, [1] : Բայց քանզի միջինն Տիգրան զայս բարձ պատուոյ հանեալ էր ի Մուրացանէ ցեղէն , երեւանդ է . անդրէն դարձոյց առ նոսա . "Կաև

1 Ձայսմանէ և Ցոհաննէս կաթողիկոս . ,, Ապա երկրորդ և Թագաւորութիւնն իւրոյ կացուցանէր ի զաւակ Աշդահակայ, որ այժմ Մուրացանդ անուանի ,, :

Աբգամ տանուտէր ազգին Մուրացան որ ի ծննդոցն Աժդահակայ (գայր առ երուանդ, ասէ խորենացին ե. 44.) ամբոխս հետևակաւ . քանզի էր երուանդայ դարձուցեալ ի նա պահն Երվիրդատիան , զոր հանեալ էր ի նոցանէ Տիգրանայ և տուեալ էր իւրում քեռառն Մխիրդատայ . իսկ յետ մահուանն Մխիրդատայ ոչ լինէր ումեք տուեալ, մինչև երուանդայ դարձուցանել զնա առ Աբգամ „ : եւ քանզի ե. Աբտաշէս խոստացեալ էր " առ Աբգամ նահապետ Մուրացանաց „ , որպէս գրէ ի գլ. 46 . Թողուլ զևրը գահն՝ միայն Թէ ի բաց կացցէ Հերուանդայ , յորժամ՝ առաքեր ըստ կամաց Աբտաշիսի՝ Աբտաշէս ետ նմա զգահն և զայլ արտունս . "Տայ (Աբտաշէս , ասէ խորենացին ե. 47 .) և առնն քաջին և պատուականին Աբգամայ զհոստացեալ գահն Երվիրդատիան „ : Բայց Աբտաւազդ որդի Աբտաշէսի " ընկեցեալ զնա (զԱբգամ, ասէ ի ե. 51 .) ի պատուոյն՝ ինքն առնու վերվիրդատութեն . . . ոչ շատացեալ առնուլ ի բաց ի նոցանէ վերվիրդատութեն պատիւն , յաւելուլ ևս հանել և զնախնեաւսն , և ըստ հիւսիսոյ երասխայ զամենայն գիւղս „ [1] :

Այս գահ երվիրդատական որ էր իբր առաջին փոխարքայութեն , կամ Վերվիրութեն , յիշատակի և յաւուրս Տիգրանայ արքայի , զոր և ետ այլում տոհմի , որպէս գրէ խորենացին ե. 62 . " Յաւուրս սորա (Տիրանայ արքայի) ասեն լեալ զպատանի ոմն յազգէն Ամնևացեաց սէգ յաւելոյն երախտաւոր անուն կոչեցեալ . . . զոր սիրեալ արքայի՝ տայ նմա զգահն Երվիրդատիան , զոր ունէին Աբտաւազդ . և զհոգս արևելեան զօրուն ի նա հաւատացեալ „ : Բայց յետ այնորիկ ոչ գտանեմք ինչ յիշատակութիւն այսր անուան . այլ ի գործոյ պաշտամանն ի կառավարութեն իսմանաձ յաւուրս վերջին Թագաւորաց Աշակունեաց զերկրորդ արքային կոչեցեալ Մարդպետ և Հայր էղեան . իսկ յաւուրս Թագաւորաց Բագրատունեաց կոչեցեալ Իշխանաց էղեան . որպէս ունիս տեսանել յիւրաքանչիւր տեղիս [2] :

1 Վասն այսր գեղի տես ի կարգս նախարարաց մերոց :

2 Վասն գեհատուց երկրորդի արքայի տես ի գլուխն Մամլոնեից , ուր ունիմք խօսել զգեհատուց իշխանաց :

ԲԴԵՇԽՈՒ ՁՈՐՔ

Այսօր ոչ միայն ՚ի զինուորական կարգին Կիլիկ՝ այլ նաև ՚ի մեծի գործառնութեան կառավարութիւնէ խորհըրդակից ալքայի. զի կոչին Բարձերէց, Գահերէց տաճարին. ուր տաճար անուանին զխորհրդատոց ալքայի ի մանայ Ագաթանգեղոս. որ ՚ի Թղթ. յՀՃ. ասէ վասն Տրդատայ, Թէ ՚ի գնալն իւրում ՚ի Հռոմ՝ առնոյր ընդ իւր զոս "՚ի զինուորական կողմանէն զբոբեսին գահերէցս իւրոյ տաճարին՝ որ Բդեշխն կոչէին"։ Լսատ այսմ և Բուզանդ ՚ի յիշէն Գ. 10. զԲակուր բդեշխն Աղձնեաց, ասէ. "Որ եր մի ՚ի չորից, Գահերէց Բարձերէց տաճարին ալքունի". կամելով ասել Թէ նաև միւս գահերէցքն էին բդեշխք։ Վասն որոյ և յիշատակեալքն յայս բան Ջէնոբայ, "Գրեաց ինքն (սուրբն Գրիգոր), և Թագաւորն, և Գահերէց իշխանքն չորեքեան", էն նոյն իսկ չորք բդեշխք։ Եւ այսպէս սոքա չորեքին բդեշխք էին գլխաւորքն ՚ի մէջ Նախարարաց. որպէս յուշացանէ և այս բան Բուզանդայ Գ. 50. "Նախ այսմ գնալոյ սկիզբն առնէին մեծամեծ աւագանին. նախ բդեշխն Աղձնեաց, և Նոշիրական բդեշխն, և Մահկերը տանն, և Նիհորական"։ Յետ սոցա ստորև յիշէ և զբդեշխն Գաւգաթաց՝։

Ի մէջ սոցա քան զամենեսին զօրաւոր էր բդեշխն Աղձնեաց, որ իջանէր ՚ի ցեղէն Սանասարայ որդւոյ Սենեքերիմայ, որպէս գրէ Խորենացին Ա. 23. ուր յետ յիշելոյ զսերունդն Սանասարայ, ասէ. "Իսկ սերձքն և գլխաւորքն ՚ի նոցանէ լեռոյ ուրեքին մնեղրմուէ վաստակոց առ Թագաւորսն մեր ցուցեալ՝ Բդեշխութիւն կողմանցն արժանացուրեցան առնուլ"։ Ազաթինն որ զայս անուն բդեշխութիւն էառ ՚ի Վաղարշակայ՝ եղև Շաւարշան սերունդ Սանասարայ, զորմէ տես ՚ի մեծ Հայս ՚ի Թղթ. 64։ Մեծութիւն այսր բդեշխի Աղձնեաց հետզհետէ այնչափ առաւելաւ,

1 Վասն որոյ պիտակաբար Բդեշխ կոչեցեալ Համարիմք յՈտոզայ Ը. 2. զՍարգան մամիկոնեան, զայն՝ որ գնացեալ ՚ի Բիւզանդիա յանդիման լինէր Յուստինիանոսի, որ չինեաց ըզսուրբն Սոփիա. և յիւր անուն ասացր կոչել զառաջ գուռն. "Ընդ որ զայրացեալ (ասէ) Վարդանայ Բդեչխի որդւոյ Վասակայ, որ էր յազգէն Մամիկոնէից... զՍուրբն մարզպան յերկիր կործանեալ"։

մինչև կոչել զնա Բուզանդաց՝ ի վերնապրի անդ Ե. 16. գլխոյն՝ Թագաւոր. այլ զայս իշխանութեի և զանուն խափանեալ յուցանէ այս բան Յոհաննու կաթողիկոսի յառուրս ն Սմբատայ. «Մեծ իշխանն խոսրովեանն Աշմատ, որ տիրեալ ունէր զմիջագետս Այորւոց մինչև ցՊաղեստին՝ ձերբակալ արարեալ զիեւսայացեաըն Աբծրունեաց Ապըլմախոբ, որ ի ծածուկ ունէր զՀատատ քրիստոնեայ կան, և փոխանակ Բգեղևացւոյ պայազատէր զաշխարհն Աղձնեաց, և ի բանտի զնա եդեալ յԱրքն գրաւեր զսեպ Հակոնութեի տանն»։ Նմին իրի յառուրս Բագրատունեաց ոչ գտանեմք ինչ յիշատակութիւն, ոչ վասն բզեղինն Աղձնեաց, և ոչ վասն երից այլոց։ Այլ զնձնեաց և զԴուգարաց տես ի մեծ Հայս։

ՍԱՀՄԱՆԱԿԱՒՔ

Առաք գալով ի զինուորական դասէ՝ կարգեալ էին ի պահպանուի վերջին սահմանաց Հայոց մեծաց, զոր մեծն Վաղարշակ սկսաւ կարգել. բայց յամուսաց սահմանաց տարբերին։ Ագաթանգեղոս այսպէս յիշէ ի նախագրեալ բանի. «Զառաջինն Սահմանական ի Նօր շինական ՝ կողմանէն. երկրորդ Սահմանական յԱյորեստանեայց (յԱղձնեաց) կողմանէն. երրորդն յԱբուաստան կողմանէն. չորրորդն ի Մազքթաց (ի Դուգարաց) կողմանէն»։

ԿՈՒՍԱԿԱՒՔ. ԿՈՂՄՆԱԿԱՏՔ. ԿՈՂՄՆԱԿԱՒՔ

Ի մինայն իշխան որ պահէր զկողմն ինչ աշխարհիս՝ յայս անուն կոչէր. ըստ այսմ իշխանն որ պահէր զՃոպաս՝ յայս անուն կոչի առ Յոհաննու կաթողիկոսի. «Ընդ որոց ասպա և Աբքեղաւոս ոմն կոստակալ Ճոպաց աշխարհին կշտամբեալ ի նմանէ սակս չար գործոց իւրոց»։ Ըստ այսմ և իշխանքն Յուտաց, որք ի կողմանէ նոցա եկեալ էին ի Հայս ի պահպանել զառեալ տեղիս, յայս անուն կոչին առ Մատթէոսի հէ. «Յայնժամ Թագաւորն Յոհաննէս և ամենայն նախարարքն Հայոց գրեցին . . . և զիշխանս Հռոմոց որք եկեալ էին կոստակալք, կացուցանելին զնոսա միջնորդ»։

1 Առ մատենագիրս մեր այլեայլ օրինակաւ գրի անունն՝ Նոր Ներսէսի, կամ Նուէրսէսի։

ԳՈՐԾԱԿԱԼՔ

Հանուանէն իսկ յայտ է լինել նոցա ի կարգէ իշխանաւորացն՝ որք յարքունի գործս պարապէին. յիշատակեալ առ Եղիշէի ի Թղթ. 174. "Եւ ամենայն գործակալն արքունի իւրաքանչիւր զօրաքն Հանդերձ" մինչ ի գունդն Վարդանայ։ Գործակալութիւն յանձնեալ լինէր նաև նոցա՝ որք և երկրի տանուտէրաբք էին. զի զայդ ցուցանէ բան Բուզանդայ՝ որ ի գ. 2. սովին անուանէ կոչէ. "Թող զնահապետս մեծամեծս, և զՏանուտէրս՝ որք Գործակալք միայն էին"։

Վասն այսմ անուամբ յիշէ Բուզանդ ուրեք զնշխանաւորս արտաքին սահմանաց, զորս աստանօր յառաջ բերցուք. ի գ. 20. ասէ. "Ապա ժողով լինէր նախարարացն և իշխանացն, Գործակալք և Զօրագլուխք, Գետք և ամենայն Աշխարհաժողովք բազմանէին եկեալոց կուտեցան"։ Եւ ի 21. "Ապա առաւել ժողովեցան ի մի ժողով միաբանութեամբ աշխարհին Հայոց. Նախարարք մեծամեծք, Ազգք, Կուսակալք, Աշխարհակալք Ազատք, Զօրագլուխք, Դատաւորք, Գետք, Իշխանք. բայց ի զօրավարացն, այլ և ի շինականաց անգամ առանձին մարդկանն"։ Եւ ի գ. 51. "Ապա ժողովեցան մարդիկ ամենայն աշխարհին իշխանութեն Թագաւորութեն Հայոց. և եկին առ մեծ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս, Մեծամեծք, Նախարարք, Կուսակալք, Կողմնակալք, Գաւառատեառք, Գործակալք և Դասապետք շինականաց"։ Եւ ի Ե. 1. յիշէ. "Մեծամեծք, Գաւառակալք, և Գաւառատեառք"։ Այլ ի մէջ ամենայն անուանցս՝ միայն անունս Նախարար տուաւ առհասարակ ամենայն իշխանաւորաց. որ և ի զանազան ցեղս սերեալ հանասպազորդեցին և մեծ իշխանութեն կալան յաշխարհիս մերում. վասն որոյ և յամենայն պատմական գործս կառավարութեն և զինուորութեն լինի բան յազագս նախարարութեանց. նմին իրի և մեզ անկ է խօսել զնոցանէ յայսմ վայրի ըստ կարգի։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԵԼԻՔ ՑԱՂԱԳՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ

Ա. Աշտան։

Ոչուն նախաբար ինքնին յայտ առնէ ածանցեալ յանուանցս նախ և աբար. իբր նախկին 'ի յարարս, կամ նախարգեալ իշխան, որպիսի էր և առ Լատինս անունն Բռէֆէկտոս, ցուցանելով գյառաջադահուԹէն և գնախադասուԹէն քան զայլս։ Ըստ մեծի մասին յանուն գաւառաց կոչին որոց իշխեն. բայց են և որք յանուն ցեղին կոչին. զոր օրինակ իշխանն Վասպուրականի՝ կոչի առ Ասողիկ ՚ե. 2. իշխան Արծրունեաց. և իշխանն Ուտի նահանգին՝ յանուն Սևորդեաց. առաւել գահերէց և մեծ նախարարք են որք յանուն ցեղին կոչին՝ Բագրատունեաց, Մամիկոնէանց, Ամգեղտան և Մարդպետականաց։

ԱԶԱՏ և ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ասսկս կոչին նախարարք և նախարարուԹիք. որպէս առ Խորհրդոցն ա. 3. յասէլն. "Մանաւանդ որ 'ի սեփականն Աշոտոէնն պայազատուԹիւն". ուր իմանայ զնախարարուԹիւն։ Սոյնպէս և առ Եղիշէի՝ յասէլն ԹղԹ. 18. "Գունդ կազմէր 'ի Հայոց մեծաց ղԱշոտ և ղԱշոտորդի, և յարքունի տանէ զոստանիկ մարդիկ"։ Եւ առ Ղազարայ 82. 83. "Բաղումք են այս երից աշխարհաց յԱշոտորեցոյ, որք են աւագ քան զիս և գահու և աւուրբք... Եւ լուեալ այլ Աշոտանդն որք էին յերից աշխարհէ, Հայոց, Վրաց և Աղուանից"։ Զորս սուղ ինչ ստորև կոչէ նախարար. "Ցայնժամ 'ի մի վայր ժողովեալ Նախարարացն աւանեցուն, որք էին յերեցունց աշխարհացն, Հայոց, Վրաց և Աղուանից"։ Եւ 'ի ԹղԹ. 220. Ազաքեր, ասէ, "և յայգս գաւառին Այծձացեաց և Մոկաց, և առ Աշոտորեցեան Բուրչտունեաց"։ Ըստ այսմ է տեսանել և առ Թոմայի արծրունւոյ յասէլն ՚ե. 6. "Որ գործեցաւ 'ի ձեռն զօրացն վասպուրական Աշոտանդն"։ Եւ 'ի ՚ե. 2. "Ըմբռնեալ լինէր յայնժամ (՚ի զօրացն Բուզայլ) մի ոմն 'ի Հայոց Աշոտանդն տոհմից Վահեւունեաց"։ Այս անուն տան և զօրաց նոցա. զոր օրինակ Թոմայ արծրունի ՚ե. 6. յասելն վասն Աշոտոյ վասպուրականի. "Աշ-

նու զօրավարէն Աղաթաֆոնդ զօրաց՝ ըստ տոհմի ազգաց իւրաքանչիւր զօրաց»։ Իսկ թէ ընդէր Աղատ կոչեցան նախարարքն՝ քննեսցուք ստորև՝ ի խօսելն վիշխանութենէ նախարարաց։

ՑԵՐ և ՏԱՆՈՒՏԵՐ

Ի յայսմ կոչէր նա՝ որ գլխաւոր էր իւրաքանչիւր տոհմի նախարարութենէ, կոչելով Տէր Սիւնեաց, Տէր Մամիկոնէից։ յորոյ ի ձեռին էր տերութենէ երկրի նոյն տոհմին, և նա և տերութենէ ի վերայ զօրաց այնը տոհմի։ Ըստ այսմ Խորենացին ե. 44. «Աբգամ Տանուտէր Մուրացեան» կոչէ, որ էր գլուխ Մուրացան տոհմին։ Եւ առ Ղազարայ 306. ընթեռնումք, զի Վահան մամիկոնեան յետ առնուլոյ զսպարապետութեան պատիւ, խնդրեաց ի Վաղարշայ Թագաւորէն Պարսից ընծրհել «Տանուտիրութիւնն Կամսարականին»։ Զայսպիսի գլխաւորուն նախարարութիւն կոչէն Տանուտիրական պաշտօն։ Ըստ այսմ Թոմա արծրունի. «Եւ ընդ նմա (ընդ Աշոտոյ վասպուրականի) ոմանք յաջատաց իւրոց՝ Մուշեղ վահևունի, որ Տանուտիրական պաշտօն ունէր»։ այսինքն է՝ որ գլխաւորն էր և ժառանգ Վահևունի տոհմին։ Եւ ի էջ. 17. «Իսկ ընդ աւուրսն ընդ այնոսիկ սպանեալ էր Ուռհմանկացն որ յամուրան նստեին զԱտամ վարաժունի՝ որ Տանուտիրական պաշտօն յայնժամ ունէր զվասպուրական աշխարհին»։ Կամ ասել, գլխաւոր տերութենէ Վասպուրականին էր ի ձեռս նորա։

ԻՇԽԱՆ

Այս անուն թէպէտ ընդհանուր է՝ բայց տիրապէս սեփականեալ այմ տոհմի՝ որ իշխէ և տէր է երկրի իւրում. որով միանայ ընդ նախագրեալ անուանցս Տէր և Տանուտէր։ Յայտ է այս և ի բանից աստի Ղազարայ 212. ուր ասէ վասն միաբանեալ նախարարաց. «Եւ որք պատրաստեալք այնուհետեւ ի պատերազմին կազմեցան, սիւնին Բաբգէն, զոր անուանեցին ի ժամուն իշխան պէրոզենն Սիւնեաց»։ Այս Բաբգէն թէպէտ էր սիւնի, բայց իշխան և տէր Սիւնեաց այլ ոք էր և ոչ նմքն. բայց յայմ ժամանակի խռովութենէ հաւատոյ՝ յորում ոմանք ուրացեալ էին և ոմանք երկպառակեալ, զայս Բաբգէն յիւրեանց միաբանելոց կարգեցին տէր և իշխան Սիւնեաց, որպէս

զի տէր լեալ և զօրաց երկրին՝ առ ի միաբան ընդ նոսա պատերազմել ընդդէմ Պարսից։ Ըստ այսմ՝ի գործ ածի և առ Յահաննու կաթողիկոսն. «Ձեռ վախճանելոյ Աշոտոյ մեծի և հռչակաւորի Իշխանի տանն արծրունի... պայազատ զինչիանական պետութիւն զայն Գրիգորը որդի նորա»։ Եւ առ Ստեփաննոսի օրպելեան 38. «Մեծ նախարարն սիւնի, և գահերէց Իշխանն Աշոտ»։

ՆԱՀԱՊԵՏ

Իւրաքանչիւր նախարարական տոհմի գլխաւորն որպէս կոչէր Տանուտէր, սմբատեան կոչեր և Նահապետ. զոր օրինակ է տեսանել յայս բան Ռուզանդայ էջ. 16. «Եւ վասն զի պատգամաւորը լրացա այսոցիկ եր Տանուտէրն Նահապետն Մամիկոնեան տոհմին երէց եղբայրը Վասակայ սպարապետին, որում անուն Վարդան կոչէր»։ Ըստ այսմ զոր՝ի գլ. 18. կոչէ Տանուտէր, յասելն. «Իսկ Վարդանն, մանկիկոնեան տոհմին Տանուտէրն, գայր հասաներ հրեշտակ կաթողիկոսին Պարսից առ արքայն Հայոց Աբշակ»։ զնոյն ապա սուղ ինչ ստորև կոչէ Նահապետ. «Եւ յորժամ եկին Նահապետն Վարդան առ Աբշակ, ոչ գիտէին անդ կրսեր եղբայրն նորին Վասակ առ արքայն»։

Իսկ՝ի Ե. 37. միանգամայն գտանեմք ասացեալ. «Եւ ազգին Մամիկոնեան տոհմին Տանուտէր Նահապետ կայոյց Թագաւորն (Վաղարշապատ) Վասէ անուն՝ի նոյն տոհմէ»։ Որպէս և յայս բան անգամօր. «Եւ Մանուէլն ունէր զնա հաղթողն ազգին Տանուտէրութեն պատուին»։ Ըստ այսմ և առ խորենացւոյն է. 8. գլխաւորն նախարարացն է որ կոչի Նահապետ. «Ոչ սահն Նահապետ ազգին Մուրացան տէր. այլ մարզպանն տէր»։ Եւ՝ի է. 44. զոր նախ կոչէ «Արգամ Տանուտէր ազգին Մուրացան»։ զնոյն ապա է. 46. կոչէ «Արգամ Նահապետ Մուրացանայ»։ Սոյնպէս և տեսանել և՝ի է. 50. ուր ասէ. «Աղէ Շապուհ՝ի հրապուրելոյ գուշակութեն Նահապետացս մերոց՝ նոյնհետայն առաքէ զորդին իւր»։ զի հրապուրօղքն էին գլխաւորք նախարարաց։ Եւ որպէս երևի նոյն Նահապետք կամ գլխաւորք նախարարացն էին՝ որք առ Յահաննու կաթողիկոսի կոչին Գահերէցք, Բարչերէցք։ Մինչն պարտ է առնել թէ ուրեք ուրեք նաև ամենայն նախարարուքք ընդհանրապէս յայս անուն կոչին. որպէս առ խորենացւոյն գ. 12. «Եւ՝ի սոցանէ ասեն լեալ զնահապետութեն Մա-

նաւաշէան և զԲիւնուենեաց ,, . այսինքն է վնասարարուհի : եբ 'ի ը. 8. " Խակ 'ի հովտին Մէծին Բասենոյ կարգէ Նա- հապետ զՄորդունին անուանեալ ,, . այն է նախասարարուհի :

ՍԵԳՈՒՀ

Յայս անուն կոչին իւրաքանչիւր անձինք ամենայն նա- խարարութենէ սակս գոյց յաղնուական տոհմէ . բայց սո- քա չէին տեարք կամ տանուտեարք տոհմին և ոչ երկրին . այսինքն չէին գլխաւորք . յայտ է այս մտադիր քննողաց 'ի բանից անտի վկայագրաց մերոց : Ղազար 80 . ասէ . " Եւ նախզոյն հարցեալ ցՀայոց Տանուտէսն և ցՍեպուհն ,, : Ուր տանուտեարս կոչէ զգլխաւոր իշխանսն՝ որք տեարք էին երկրին և իշխէին . իսկ սեպուհս կոչէ զնուագեալսն իւրաքանչիւր ցեղի : Նա ինքն Ղազար 114. յետ յիշելոյ զիշխանսն՝ ապա ասէ . " Իշխանն Ուրծայ Ներսէհ . և այլք յոտանկաց . և Սեպուհք ոմանք յիւրաքանչիւր տանէ ,, նախարարաց . ուր զատուցանէ զիշխանն 'ի սեպհոյ . սե- պուհ կոչելով զամենայն ազատագլուխ , իշխան կոչելով որ միայն տէր էր և ժառանգ երկրի նոյն տոհմին և գործոց , և տանուտէր և կառավար : Այսպէս է տեսանել և 'ի Հետևեալ բան Նորա 103. " Եւ ժողովեալ . . . զատագ տանուտեարսն Հայոց , և զՍեպուհսն առանձինն ,, : Եւ 'ի 78. " Հրամայէր գրել յերեսին Տրուաբատական , զի ամե- նայն տանուտեարքն և աւագ Սեպուհքն երեցունց աշ- խարհացն փութով և անխափան 'ի դուռն եկեսցեն ,, : Եւ 'ի 94. " Արդ եկեալ Հասանէին տանուտեարքն Հայոց Հանդերձ Սեպուհս ,, : Ուր յայլ կարգի զնոսէ զտանուտեարս , և յայլ կարգի զսեպուհս :

Այս որոշումն յաձախ է յոյժ առ Ղազարայ . զի սո- վորութենէ է Նորա միշտ որոշել զպատուոյ անուանս . 'ի 97. ասէ . Իրագաձ եղեալ " ամենայն տանուտերանցն Հայոց և Սեպուհսն ,, : Եւ 'ի 98. " Հանդերձ ամենայն տանուտե- րամբք Հայոց , և աւագ Սեպուհս ,, : Ուրեք յիշէ զիշխանն Ամատունեաց . ապա 'ի 117. յիշէ " Սեպուհ մի յազգէն Ամատունեաց՝ որում անուն էր Աւանձաբ ,, : Այնպէս և 'ի 124. գրէ . " Յազգէն Պալունեաց (նահատակեալ եղև) երանելի Սեպուհն Աբրատակ ,, : Խակ 'ի յիշելն անդէն զայլ տոհմն՝ որք նոյնպէս նահատակեցան , և ոչ միայն տայ զանունս Սեպուհ . միայն զոստանիկսն յաձախ կոչէ յայս անուն . որպէս 'ի 125. " Բազմութենէ փախստեից Հայոց ,

նախարարը և Սեպուհ Ոսկանիկ և ռամիկք դիմեալ՝ի յեր-
կիրն Տայոց Ժողովելին „։ Ըստ այսմ է տեսանել և առ
Թոմայի արձրունեայ էջ. 2. յասելն. "Իբ Վահրամ Սեպուհ
Թիկնասպետ իշխանին (Աշոտոյ վասպուրականի) ... և
այլք՝ի Սեպուհ պաշտօնեից „։

ՄԱՏՐԱՊՈՒ

Ա յս անուն միայն առ Բուզանդայ և առ Մեսրոպայ՝ի
գործ ածի, և է անուն օտար լեզուի, ՝ի կիր արկեալ և՝ի
Յունաց աշխարհագրաց փոխանակ գաւառակալի ։ Բու-
զանդայ բանն է՝ի էջ. 3. "Այսպ՝ի մի ժողով կուտեցան առ
արքայն Աբրշակ մեծամեծք նահապետք ... ամենայն Սահ-
բաց նախարարքը և ազատք, պետք և իշխանք, զօրավարքը
և սահմանապահքը „։ Ջնոյն կրկին Մեսրոպ՝ի էջ. "Ի մի վայր
ժողովեալ առ Թագաւորն նախարարք և մեծամեծք Հայ-
ոց, ազգատոհմից և գրոշից տեառք, ամենայն Սպարապ և
կուսակալք և զօրագլուխք սահմանապահք „։ Իսկ՝ի գիրս
Յունաց և լատինացւոց Սատրապն վարի որպէս նոյն ընդ
քառիս Նախարար ։

ՁԵՌՆԱԻՈՐ

Ո այս անուն ոչ սակաւ ուրեք՝ի կիր առնու Թոմա
մեծաւիեցի փոխանակ իշխանի կամ գլխաւորի, և այլն։ զոր
օրինակ և յայս բան, ուր՝ի պատմելն զժողովն որ՝ի Ձեռ-
նադրութիւն Կիրակոսի կաթողիկոսի, ասէ. Ժողովեցան
"և բազում միաբանեացք, և ազատք, և որդիք ազա-
տաց, Ձեռնաւորք, և տանուտերք „։

Բ. ՍԿՂԲՆԱՒՈՐՈՒԲԵՔ ՆԱԽԱՐԱՐՈՒԲԵՔ ։

Ա յս խնդիր աշխոյժ կարևոր և ցանկալի Թուեցաւ եր-
կուց իմաստուն հնասիրաց յայգիս՝ Վաղարշակայ պար-
թևի և Սահակայ բագրատունւոյ, մինչև՝ի պատճառս
նոցին լինել երկուց երևելի պատմագրութեց յայգիս ։
Ջի Վաղարշակայ արքայի առաջնոյ գլխաւոր խոյզ և խըն-
դիր եղև, թէ "ուստի (իցեն) նախարարութիւքս որ աստ
կան „ յաշխարհիս Հայոց. որպէս գրէ Խորենացին ։ Ց.
եւ ահա այս խնդիրը նորա պատճառ եղև՝ի լոյս հանելոյ
զպատմագրուն Մարիբասայ ։ Յետ բազում ժամանակաց
դարձեալ այս խնդիրը անկաւ և՝ի միտս Սահակայ ասպե-

տի բագրատունւոյ, խնդրելով ՚ի Խորենացւոյն ։ 3. տե-
ղեկութիւն սկզբնաւորութեան եւ սերնդեան նախարարութեան
Հայաստանեայց աշխարհի. « կարգել զպատմուն ՚ձշդիւ
... զնախարարականաց ազգաց և տոհմից, թէ ... ով ոք
՚ի ցեղեսս որշելոց ընտանի և մերամեայ (էր), և այք ո-
մանք եկք (էին յայլոց ազգաց. և ապա եղեն) ընտանա-
ցեալք և մերազնացեալք ... ՚ի ժամանակէ անկարգ ամ
բարտակին շինուածոյ մինչև ցայժմ »։ Նորին աղագաւ և
Խորենացին առանձին փոյթ կալաւ զնախարարութեց
տիրապէս և ՚ձշգրտիւ խօսել. որպէս և ինքն վկայէ ։ 1.
ասելով. « Աշխատասիրեցայց ածել ՚ի կատարումն ...
զՀայաստանեայցս նախարարութիւն, զամենեցուն զուսոն
և զվիարդն յայտնելով համառօտ, որպէս հաւաստի ՚ի
յունականս ոմանս կայ պատմութիւն »։ Որով և այս խըն-
դիր Սահակայ յաղագս նախարարութեց՝ պատՃառ եղև
՚ի լոյս ածել և զպատմագրութիւն Նորին Խորենացւոյ, և
նովին ՚ի լոյս հանել նաև զառաջին պատմութիւն Մարիեա-
սայ՝ զծածկեալն ՚ի խորշս գրանոցաց յօտար աշխարհի և
զանծանօթ մնացեալն առաջին ազգիս։ Աւրդ քանզի այս-
պէս կարևոր է տեղեկութիւն նախարարութեց, և մեք
աստանօր ըստ կարգի գրեսցուք զնոցանէ առ ՚ի լոյս հա-
նել տեղեկութիւս պիտանիս առաջիկայ Ճառիս՝ որ յաղագս
կառավարութեն աշխարհիս ։

Օ առաջին սկզբնաւորութեն նախարարութեց ըստ նո-
րին Խորենացւոյ պատմութեն գտանեմք ՚ի ժամանակաց
անուի Հայկայ. յորոց և ոմանք ՚ի նմին իակ ՚ի պատմութեն
Խորենացւոյն ։ 12. յիշատակին՝ Մանաւազեանն, Բըզ-
նունեանն, Խոռխոռունեացն, ցեղն Սիսական. յիշատա-
կին ՚ի նոյն գլուխն և ՚ի ԳԼ. 8. և Սկկունեացն, զորոց ա-
սելն սերեալ ՚ի նահինագունիցն քան զՀայկ։ Էին և այլք
ոչ յիշատակեալք. քանզի ՚ի գալ Վաղարշակայ ՚ի Հայս՝
ոչ զզօր եգիտ գլխաւոր և ոչ կարգ ինչ, բայց զազգմունեցն
նախարարութեց, որոց իւրաքանչիւր տեարքն էին լեալ
երկրի և քաղաքաց և գիւղօրէից, և ինքեանք իշխելին
յամենայնի ՚ի վերայ նոցա, զորս ինքն համարեր սրով և

1 Վասն սկզբնաւորութեն և յաջող-
գումեն նախարարութեց ազգիս Հա-
մարիմ տեսանել և զայն բան Խորենա-
ցւոյն ։ 5. « Դիմաբարձուածք և
տաճանելի է որպէս գիւտ ժամանա-
կացն ՚ի սկզբանէ մինչև առ մեզ
առաւել և գիւտ որդեծնութեն նա-
խարարականացն ծննդոց յերից անուն
որդւոցն Նոյի, յորոցան կանք իցեն
խոնարհութեամբ ըստ իւրաքանչիւր դա-
րուց »։

պատերազմաւ առեալ ՚ի ձեռաց այլոց, որպէս և տեսանէր լեալ յայլ աշխարհս ։ և կամէր գիտել թէ յո՞ր պատերազմունս եղեւ այս տիրապետութեն նախաբարաց Հայոց , և յորո՞յ թագաւորի առուրս ։ բայց ոչ գտանէր վասն այսր յիշատակարան ինչ ։ վասն որոյ և գրեր առ եղբայր իւր՝ թէ խորհուրդ եդի ՚ի մտի գիտել, թէ ուստի իցեն այս նախաբարուքեք ։

Այդ յորժամ Մարիքեաս եղեր զվաւերական յիշատակարան վասն սկզբնաւորութեն որպէս ազգին նոյնպէս և նախաբարացն, հաւաստեալ գիտաց յայնժամ Վաղարշակ, թէ պատճառ չգտանելոյ ինչ յիշատակարան առաւել վասն այնորիկ է՝ զի ոչ յապագայ ժամանակս, և ոչ պատերազմաւ և ոչ սրով կանգնեալ կային այս նախաբարուքեք Հայաստան աշխարհիս, այլ նախ քան զնկանիլ պատերազմոյ՝ և նախ քան զնկանիլ թագաւորութեն՝ յառաջ քան զնակէաց անտի սկիզբն առնուին ։ Քանզի ՚ի սկզբան անդ առ ժամանակաւք Նոյի ուր ոչ գոյր ՚ի մարդկանէ՝ անդ առաջին բնակիչն լինէր տէր երկրին իրաւամբք և ոչ բռնութեբ , և ՚ի մեռանել իւրում՝ թողոյր ժառանգուին որդւոյն , և նա իւր որդւոյն ։

Այլ այսպէս քաջ ծանեաւ Վաղարշակ վասն նախաբարութեն Հայոց յորդւոց յորդիս ինքեալ իրաւամբք ժառանգութեն մինչև ՚ի ժամանակս իւր ։ Զի որպէս պատմէ Խորենացին ։ ԺԲ ։ ՚ի մեռանելն նախնի նահապետացն՝ զերկիրն զոր սեփականեալ ունէին անձանց՝ թողուին ՚ի ժառանգութեն որդւոց իւրեանց ։ այսպէս հետզհետէ տիրելովք՝ մինչև յոր վայր կարէին տիրել , անձանց և տանց իւրեանց գրաւէին իբր սեփական ժառանգուն ։ Եւ յոմ տոհմն յորոյ ձեռս ինային տեւողութեբ ստացեալ երկիրք և գերդաստանք՝ երևէլն լինէր քան զայլ տոհմն՝ որոց նախնիք կամ չէին լեալ տէր երկրի և կալուածոց , և կամ անցեալ էին ՚ի ձեռս օտարաց , և կամ սերունդ նոցա սպառեալ, և այն տոհմն համարիւր ՚ի մէջ նոցա մեծ և նախապատիւ քան զայլս . որ է ասել՝ լինէր նախաբար . և ահա սկզբնաւորուն նախաբարուքն ։ Մանաւանդ յորժամ անցմամբ ժամանակաց ՚ի բազմանալն՝ հարկ լինէր ունել արս զինեալս ՚ի պաշտպանել զերկիր իւր ՚ի հինից թշնամեաց, հարկաւ մեծ և զօրաւոր լինէր քան զայլ տոհմս , որոց չունելոյ երկիր ինչ , չունէին և զօրս , վասն որոյ և տակաւ էին քան զնոսա , զօրս իրաւամբք կոչէին նախաբարս ։ Եւ որչափ գիւղականք գտանէին յերկիրսն յայնոսիկ՝ ծառայ

լինելին նոյն տերանց. զորոյ պիշատակութիւն է տեսանել առ Խորենացւոյն ա. 12. յասելն վասն Գէղամայ. "Զմի ճ մասն լընչից իւրոց տուեալ, և ծառայս անձինս բազումս (Սիսակայ որդւոյն իւրոյ), սահմանս հատանել նմա ,, :

Օ այս է տեսանել և յայն ազգս՝ որոց նախինքը ըստ մեր նախնեացն տեղը եղեն զանազան երկրի. և կալան զայն օրինակ կառավարութեանց զոր եւրոպացիք կոչեն Կալուածական (Քեվմէլէ). մեք կոչեմք Տանուտիրական[1]. զի առ տանուտէրը գոլոյ երկրին է՝ որով ունի զոր զայն կառավարութիւն, և կոչի նախարար. որ առ Տաճիկս կոչի Աղա: Բայց գիւղականքն այնոքիկ ոչ օրպէս զգերիս կային ընդ նախարարօք մերովք, որպէս յայլ հիւսիսային երկիրս՝ վաղուց ստացեալ. զի տերութեն մերոյն՝ ի սկզբանէ անտի եղև ժառանգութիւն յորդւոց յորդի. իսկ հիւսիսականացն՝ այլուստ եկեալ և սրով ստացեալ. որպէս և ոչ սովորութիւն եղև գերի վաճառելոյ երբեք յաչխարհի մերում, որ հաստատակ է այլոց հիւսիսականաց:

Այս զանազան տիրապետութիւնք կալուածոյ երկրի՝ ի սկզբանէ անտի՝ ի մեծ Հայս, և զանազան տեղք՝ ի վերայ նոցա, որ է ասել զանազան նախարարք, ինքնին ածին զաժանութիւն երկրի մեծին Հայոց. վասն որոյ և բաժանումն գաւառաց մեծին Հայոց՝ է բաժանումն՝ ի նախարարութիւնս, որպէս ասէ և Պլինիոս. զորոյ զբանս տես՝ ի գլուխն Բաժանման: Ա յսչափ ինչ յաղագս առաջին սկզբն քնաւորութեանց նախարարութեց:

Իսկ զերկրորդ սկզբնաւորութիւնն պարտ է ընծայել Վաղարշակայ, որ "սահմանեաց աշխարհիս (Հայոց) և նախարարութիւնս, և նոցին նախարարութեանցն նահապետութիւնս հաստատեաց զարս պիտանիս՝ որ՝ ի զաւակացն նախնւոյն մերոյ Հայկայ և յայլոց ,, . որպէս գրէ Խորենացին ե. 3. և զորոց տեսցես ստորև՝ ի պատմութիւնս իւրաքանչիւր նախարարութեց: Ա յլ որպէս օտարազգւոյն

1 Բազում՝ առ երևելիք գրեցին զնա. լուածոց՝ զորս ազգ Փրանկաց առին ի Գաղղիա. որպէս և զկալուածոց Ազատանաց և խաղիզ, յորս են և Մենդէսքիէօ և Մաբլիէ. զորոյ զձառն գտանես եդեալ յերկրորդ հատոր գրոցն՝ որ ունի խորագիր, Ազատութիւն տուելոյ գիւղականաս, ի Թղթ. 227: Բայց ի պատմութէ ազգին մերոյ իմանաս, թէ պատմութէն սկզբնաւորութիւնն այնց կալուածոց ոչ համաձայնի ընդ մերում. զի ստացուած կալուածոց այլոց ազգաց եղև գերաւելով և յոտիստակելով յառաջին տերոյն նոցին կամ պատերազմաւ և կամ հնահարութ: Իսկ հայաստան աշխարհիս ոչ այնպէս. այլ առաջին բնակիչք գոլով եղեն և առաջին տիրօղք, և յորոց յորդիս ժառանգութ օրինաւոր տանուտէրութ նոցն երկրին:

Վաղարշակայ նախ խորհուրդ ՚ի մտի անկաւ իմանալ զուսան նախաթարուԹԵՑ և ապա նոր նախաթարուԹիւնս Հաստատել, սջհսպէս և զԱնի Վաղարշակայ խոյզ և խնդիր անկաւ ՚ի միտս օտարազգւոյն ք. Ըապհոյ Պարսից արքայն գիտել զսկիզբն և զծագումն նախաթարուԹԵՑ և զկարգս նոցա . վասն որոյ յաւուրս միւմՃաձ արարեալ , ասէ Ստեփանոս օրպելեան ԼՃ . Նախաթարաց Պարսից և մերոց անդր գտելոց , ասաց առաջի ամենեցուն . ՀՊարսից նախաթարաց կարգս քաջ գիտեմք , " բայց զԱրմենու (զՀայոց) զազատատոհմն , և զնոցին նախապատիւ զնախադասն նախագահուԹիս ոչ կարացաք գիտել , ոչ ՚ի նախնեացն մերոց Հարցն Հարանց Թագաւորաց , և ոչ յայլ ուստեք յամենիմաստ մատենագրաց ; Եւ արդ մի յերկուց առաջի կայ ձեզ նախաթարացդ Հայոց ազատ արանց կատարել զինդիրս մերոյս Աբեւացս աշխարհաժողով ազատազարմ կուսակալաց . (կամ՚) ցուցանել ձեզ զնախնական զդիր ըստ իւրաքանչիւրումն ըստ տանց ազատազարմն եկաց ձերոց զնախաստիՃանն և զնախանիստ պատիւ , և զարձեալ զմեծագոյնն ունել զշքեղաշուք մեծարանս և քան զևս , և (կամ՚) եԹԷ ոչ կարեք ակն ՚ի յայտնի Աբեւացս գնդի ժողովոյ ցուցանել զդիր նախագահուԹեան , (յայնժամ՚) զպատիւ և զտուն , զՀող և զՁուր և զտացուածս ձեր՝ Աբեւացս աշխարհի ազատ արանցս ընտրհեսցուք , և զձեզ ապաշնորհ և ունայնս արձակեսցուք . և տացուածք գիւղից և ապաթանից ձերոց՝ Աբեւացս ազատ արանցս ՚ի ծառայուԹի լեզին ,, : Ուր պատմէ ապա ԹԷ ՚ի գրոց Ագաթանգեղոսի ցուցեալ զնախագահուԹիս իւրեանց՝ յայժմեծարանս ընկալան ՚ի Ըապհոյ ՚ :

Լչ այսպէս յարշակունի Թագաւորս Վաղարշակ եղև առաջին՝ որ կարգեաց նախաթարուԹիս . և երկրորդ՝ վերոՁինն Տիգրան . զի գրե զամանէ խորենացին ք. 64 . ԹԷ նոր նախաթարուԹիւն կանգնեալ Ռոփսեան անուն , " և այլ որ ինչ կրտսերագոյն ազգ , եԹԷ աստ և եԹԷ զհոդմանըք կորՃեին , հաստատէ այս Տիգրան . որք միանգամ անազգիք էին ՚ի վաշտս և անձամբք երևելիք , և վասն նորա

1 Խորենացին ե. 3 . ցուցանէ ԹԷ գասանէին ՚ի ժամանակս իւր ուրոյն գիրք վասն նախաթարուԹեց , յասելն . " Իւրաքանչիւր տանց առանձնակատնուԹց .. այժմ առ մեզ գասանին անբաւ զուարց մատենիք . մանաւանդ որ ՚ի սեփական ԱզատուԹիւն (նախաթարուԹիւն) պայազատուԹիւն ,, : Բայց որ սէս Մովսէս՝ անդ ՚ի գրան Պարսից գտելով յայնժամ՝ զնգամանգեղոս ուներէն միայն առ իւրեանս , և անտի ցուցին :

փրկութեէ պատերազմեալ ընդ Յոյնս, որք ի կորձէից և որք ի մերմէ կողմանէս, զյառաջագունից ասացելոց մեծատոհմից Վշէնից և զարմից Հայազանց, ոմանք ի յեկաց, Զոր ոչ անուամբ պատմեացուք. է ինչ՝ որ վասն յայտնի ոչ լինելոյ մեզ, և է ինչ՝ որ վասն աչխատութէե՛ի վաստակելն խոյս տալով,, Ցայս քան խորհեցաւքն հինգ դաս նախարարութէեց յիշատակին ըստ մեզ. Որք ի կորձէից. այս է մի դաս. Եւ որք ի հերմէ կողմանէս, այս է այլ դաս. զի կորձէք՝ որք են կորդիք՝ ի ժամանակաց անտի խորհեցաւքն սկսեալ՝ զատուցեալ ինն էին առ ի միմեանց. իսկ մեր կողմն կոչէ՝ զորս ուղղակի ընդ մերով թագաւորսաւ էին. Զյառաջափոխէն Տոհառոյց Վշէնից, է երրորդ դաս նախարարութէե. Եւ որք, ասէ, զարմից Հայկազանց. այս է չորրորդ դաս. Որոց ի յեկոց, այս է հինգերորդ դաս եկեալ յօտար ազգաց. Բայց ոչ կարեմք վասն իւրաքանչիւրոցս այսոցիկ գրել ինչ, վասն զի լռել կամեցաւ Փերթողհայրն ասելով. "Եւ յայսոցիկ աղգաս ոչինչ վասն այնց ազգաց՝ որք ի վերջնոյն Տիգրանայ կարգեցան՝ Հաւատացուք,,

Իսկ որպէս երկոքինն սոքա արշակունի թագաւորք հաստատեցին զնախարարուն, նոյնպէս և երկու արշակունի թագաւորք Տիրան և Արշակ ջնջեցին. Քանզի պատմէ Խուզանդ էջ. 18. Թէ յաւուրս Տիրանայ արքային ոմն մարդպետ Հայոց իշխան "զազգսն ի նախարարացն եւս քաջութէե առանց ՀՀատուսն կոտորել, և խանգարեաց զմեծ տէրութէե թագաւորութէեն,, Ջնոյն կրկնէ և ի էջ. 14. ասելով. "Եւ էր մարդպետն Հայոց այր չար ... սա կոտորեաց զամենայն ազգս նախարարացն ի ժամանակս թագաւորութէեն Տիրանայ արքայի,, Ալ առաւել եւս կոտորել ասէ զտոհմն Բագրատունեաց և զտոհմն Արծրունեաց. բայց որպէս զմի մի ի մանկանց երկուց տոհմիցս փախուցեալ և ապրեալ պատմէ անդանօր էջ. 18. յայտ է թէ նաև զայլ տոհմսն ոչ կարաց խսպառ կոտորել. զի ոչ գրէ անդ բնաջինջ լեալ տոհմից նախարարաց. քանզի և Խորենացին և այլ պատմագիրքն յիշեն նաև յետ ախտորիկ զտերունդս այնչափ նախարարութէեց. Մանաւանդ գրէ և վասն Արշակայ թագաւորի, էջ. 19. Թէ "զազգսն ի նախարարացն կոտորեաց, զազգսն ազգատ արարեալ անձինսեաց, և զազգմոց տունս հատանէր յարբունիս,. ընդ որս և զկամնարականացն. զորմէ տեսցես ի տոհմն նոցա.

Այս ոգի հակառակութէե ընդդէմ նախարարաց՝ ոչ

պահասեցաւ և յաւուրս Բագրատունեաց, զորմէ բողոք բառնայ Յովհաննէս կաթողիկոս ասելով. " Իսկ Թագաւորք մեր և պետք և իշխանք՝ զորս ի ճեմ նախաբարեաւք էին՝ ջանային վարատել և խլել յիւրաքանչիւրոցն բնակութենէ, և ըստ ախորժից իւրեանց ձեռնական և նոր ստեղծել պայազատս ,,։

Գ. Իշխանութիւնք և պարտականութիւնք նախարարունեց։

Ա՛ռաջին իշխանութիւն նախարարաց էր ի վերայ երկրին որ սեփական էր նոցա. վասն այսորիկ և երբեմն միայն Տէր անուանեին. զոր օրինակ և առ Թոմայի արծրունւոյ ՟ը. ։. յաւելէն վասն Վարդանայ. "Փութացոյց գիր պաղատանաց առ Տաճատ Ըռշտունեաց Տէր. և առ Վախրէ՛ Ընձաեացեաց Տէր,,։ Որպէս և ուրեք ուրեք առ Բուզանդայ և Թոմայի արծրունւոյ՝ Աշխարհատեարք, նաև Գաւառատեարք առ Բուզանդայ ՟ը. ։2. "Իսկ աշխարհ ամենայն Հայոց լեզուին, ի գաւառաց գաւառաց ... մեծամեծք, աշխարհակալք, Գաւառատեարք, նահապետք, մեծազգեացք,,։ Զի ոչ միայն նահանգք, զոր աշխարհ անուամբ կոչէ, այլ և գաւառք ունէին իշխան առանձին, թէպէտ ոչ ամենեքին։

Երկրորդ իշխանուն նախարարաց էր և ի վերայ բնակչաց երկրին իւրեանց, միչև զդատաստան նոցա ինքեանք վճռէին, եւս և զդատաստան արեան, որպէս Թուխ, Թագաւորք մեր ոչ խառնէին ի դատաստանս բնակչացն Աղձնեաց, Վասպուրականեայց, Սիւնեաց, և այլն։ Ցայտ է այս ի լուծէ մերոց պատմագրաց. զի ոչ ուրեք ընթեռնուք առաքեալ զոք ի Թագաւորէն մերմէ ի նահանգս կամ ի գաւառս առ ի կառավարել կամ ի հատանել դատաստան ինչ այնր գաւառին, ոչ յաւուրս Աբշակունեաց և ոչ յաւուրս Բագրատունեաց. զոր օրինակ տեսանեմք յայլ Թագաւորութենս առաքեալ իշխանս՝ որ առ օսմանեանս կոչին Փաշայք, որք դատեն զամենայն դատաստան երկրին, Զորոյ ցուցանել և սովորին որ գտանի նաև յայլ Թագաւորութենս, ուր են նախարարութիւնք կամ տանուտիրական իշխանութիւնք ի վերայ կալուածոց երկրի. զոր օրինակ էր ի Լեհաստան։

Երրորդ իշխանութիւն նախարարաց էր ի վերայ զօրաց իւրեանց, իւրաքանչիւրոց ունելով իւր առանձին զօրս. զոր բաց ի յանցից դիպուածոց պատմութենէ՝ յայտ առնէ

և այս բան խօրհնացոյն ՟ի . 56 . « ժողովեալ նախարարա-
րացն Հայոց հանդերձ զօրօք իւրեանց՝ տան ընդ գնդին
Պարսից պատերազմ՝, : Մինչև երբեմն և ընդ միանման
պատերազմիչն և զմիանման կատորեին . որպէս եղև յետ
մահուն Տրդատայ, զորմէ գրէ խօրհնացոյն ՟ի . 2 : Եւ սակս
այսոցիկ իշխանութեանց համարիմ ազատ կոչեցեալ զնա-
խարարս , զի թագաւորն չունէր ՟ի վերայ նոցա զայն իշ-
խանութիւն՝ զոր ունէր ՟ի վերայ ժողովրդեան . ոչ խոստէր
՟ի կառավարուի երկրի և քննէին զնախարարաց :

Իսկ սակս պարտականութեանն գործոյ նախարարաց առ
թագաւորն՝ այսչափ ինչ գտանեմք յիշատակեալ ՟ի գիրս :
Առաջին՝ տալ զօրս արքայի ՟ի ժամանակս պատերազմի .
բայց այս չէր պարտականութիւն այնպիսի՝ մինչև ՟ի չտալն
կամ ՟ի սակաւ տալն՝ յանցաւոր համարիլ կամ պատժա-
պարտ : Այսի զհետ գայ թէ իւրաքանչիւր ՟ի նախարա-
րաց փոյթ կալեալ զերկիրը իւր միայն պաշտպանել, ոչ եր-
բեք խմբովին մեծաւ բանակաւ պատերազմեցան ընդդէմ
արշաւանաց արաբացւոց ՟ի պաշտպանել զամենագլխա
մեծին Հայոց . վասն այսորիկ է՝ զի և զհամար զօրաց մերոց
ոչ երբեք գտանեմք առաւելեալ քան զՀարիւր հազար . զի
կառավարութիւն մեր , գէթ ՟ի ժամանակս բազմասուա-
նեաց , ոչ պարտաւորեր զամենայն նախարարս գալ միա-
նալ ՟ի պատերազմ ամենայն զօրօք իւրեանց :

Երկրորդն է՝ զի իւրաքանչիւր նախարար գաւառա-
տէր պարտական էր տալ Հարկս արքային . որպէս յայտ
առնէ նաև այս բան Թոմայի արծրունւոյ ՟ի . 5 . « Ձայն-
ժամ թագաւորն (Սմբատ ՟ա .) դեսպանս արարեալ յա-
մենայն սահմանս տէրութեանն Հայոց , Վրաց և Աղուանից ,
և առ քաղաքացիսն և հազարապետս գաւառակաց , և
որք սկզբնաբար առնն զՀնազանդութեանն Հարկ Հարկա-
նէին ,, : Եւ չտայն Հարկս էր գործ ապստամբութեան . որ-
պէս նա ինքն գրէ ՟ի . 10 . վասն իշխանին Սիւնեաց յա-
ւուրս նորին ՟ա . Սմբատայ արքային . « Ի գալ միւսոյ տա-
րւոյն Սմբատ իշխանն Սիւնեաց ՟ի բաց եկաց ՟ի Հնազան-
դութենէ թագաւորին Հայոց, արգել առնէր զՀարկացն
տալ թագաւորին. թեև կոխեալ Պարսից բռնաւորին Հա-
տուցանել զՀարկս և զՏաս . և ինքն ժողովեալ զզօրս իւր
տան հազար այնոց զօրաւորաց եկին եւուրս յամուրսն
Վայոց ձորոյն ,, : Ջնոյն գրէ և վասն Ապահունեաց իշխա-
նին . ուր յայնժամ իշխեր այլազգի ոք . « Թագաւորն Հայ-
ոց Սմբատ (առաջին՝ խաղայր) ՟ի վերայ Ապահունեաց աշ

խարհին . զի որդիքն Աբդուռահմանի որ Կայսիկքն անուա-
նին՝ ապստամբեալ էին ի պետութենէ Թագաւորին , տալ
հարկս , և զինուորել որպէս օրէն էր ,, ։

Ի որդ սակս երկուց այսոցիկ գլխաւոր պարտականուե-
նաիարարքը ասին լինել ընդ ծառայութիւն արքային . որպէս
է տեսանել յայս բան Յոհաննու կաթողիկոսի , յասելն
վասն Գագկայ արծրունւոյ . "Իսկ արքայ Սմբատ Թէպետ
և ընդ ակամբ հայեցեալ ոչ կամէր զսմն այնպէս լինել ,
սակայն և ոչ ընդ պատուհասից կորզան զիշխանացեալն
Գագիկ հանէր . մնուառանդ զի միամտութենէ սրտի հնա-
զանդեալ նուաստեր ընդ լծով ծառայուե արքային ,, ։ Վասն
զի յառաջ քան զայս պատմէ , Թէ Աշոտ իշխանին Վաս-
պուրականի գնաց առ Ափշին ոստիկանն ընծայիւք՝
"մեծագունի ակնկալեալ բարձի և պատուոյ , և վերընկա-
լուչ զնա առնելոյ ինքնիշխան կամաց ,, ։ Որոյ ակնկալուե-
ի վերս եղ ։ Ջնոյն արար և մեծ իշխանին Սիւնեաց . և
իբրև նա ևս Թափուր եղ , "Ջղջացեալ ասէ , զիեռեկտիրն
ի միաբանուէ արքային՝ խաղալատելով աղերսեր մի ունել
նմա ի քեզ գյանցանս իւր ,, ։ Ապա յայտնի է Թէ ընդ
արքային էին առնոյն նախարարք , բայց սոքա ջանային
ելանել արտաքս , և գերագոյն իմն իշխանուեն ի ձեռս
արկանել ։ Վասն որոյ իբրև մեծ ինչ պատմէ լեալ զինէ՝
զմիաբան լինելն նախարարաց ընդ արքային . "Ձեռս այսորիկ
արքայ Սմբատ իբրև եառս զմիաբանէ խաղաղանէ մեզն ,
Ջհնաւորեալ ի Հայս , և միաբան ընդ նմա լինել նախարա-
բայն յոխտս սիրոյ , եդ ի մտի իւրում երեթալ հաստել
հաստատել նուաստել զաշխարհն ևս Տարօնոյ ,, ։

Ի որդ վասն իշխանուեենց և պարտականուենց առհասա-
րակ առնոյն նախարարաց մերոց՝ այսչափ ինչ գտանեմք
ի գիրս նշանակեալ . իսկ ի բանի կառավարուենէ միայն
զայն նախարարս գտանեմք յիշատակեալ՝ որք ունէին ի
Թագաւորէ զպաշտօն ինչ ի գործս քաղաքականս կամ ի
զինուորականս . զոր օրինակ ի Թագադրուենէ , ի զինա-
կրուե և ի սպարապետութենէ . կամ որք խորհրդակիցք
էին արքային ի ժամանակս Աբշակունեաց , զորս յիշեցաք
և զորս ունիմք յիշել ։ Վասն որոյ ըստ այսմ յերկուս
գասս պարտ է բաժանել զնախարարս . մի՝ որոց էր գործ
ինչ ի բանի կառավարուե , և միւս ևս՝ որոց ոչինչ , այլ միայն
տեարքք էին երկրի . զոր օրինակ էր նախարարուէն Սիւ-
նեաց , որ Թէպետ ունէր երկիր մեծ , և էր ի կարգս մե-
ծամեծ նախարարուենց , բայց չունէր ինչ մասն ի բանի

կառավարուն։ Սմին իրի ասելն Թէ կառավարուի ազգին մերոյ խաւսն էր յաչնուապետուէ և 'ի միապետուէ' վրիպակ մեծ է. այլ զլացարձակ լինելն մերոյ Թագաւորի յայսմի ցուցանէ ինքնօրէն իշխելն և վարելն վերջին Թագաւորաց արշակունեաց, նաև ընդդէմ հաձոյից նախարարաց. զոր օրինակ Եղէն Տիրան, Արշակ, Պապ, և այլք. զայս ցուցանէ և ունելն վերկրորդ աթոռի, որ միապետաց է սեփական. նաև սովորութիւն այլոց հին մերձակայ ազգաց ասիացւոց, Մարաց, Պարսից, ասորեստանեայց, որոց կառավարութիւն միշտ միապետական էր։ Յայնժամ միայն տեսանելմբ զներսն ժողովով նախարարաց կառավարեալ, յորժամ ոչ գոյր Թագաւոր, և գահն 'ի վտանգի կայր անկանելոյ 'ի ձեռս արտաց ապստամբաց. զոր օրինակ եղև յաւուրս փոքունն Խոսրովու. և կամ յորժամ զնոյն իսկ զԹագաւորն կամ ինն ընկենուլ յանդոյ. որպէս եղև յաւուրս Արտաշրի վերջին Թագաւորի Արշակունեաց։ Զմիապետական իշխանութիւն աթոռոյն հաստատէ և այն խրատ մեծին Ներսէսի բերեալ 'ի Խորենացոյն ՟Բ. 38. Աբրքայն, ասէ, " վարեսցի ուղղութիւն, Հայրաբաբ խնամով առ նախարարսն. և նոքա (նախարարքն) մի և յաւելցին վտարանդել նվիսհելով զնա, այլ ծառայել միամտութ ,,։

Դ. Կաթ նախարարք։

Պատմագիրք ընդհանրապէս յերկուս բաժանին կարգս՝ յաւագ և 'ի կրտսերագոյն. զոր օրինակ յիշատակի առ եղիշէի 'ի Թղթ. 344. " Աւյս երեսուն և հինգ աթոռ, են որ յաւագ նախարարացն, և են որ 'ի կրսերագունելոյն, սակայն ամենեքեան ըստ մարմնոյ են նախարարացունք ,, և ե 'ի 355. գնոյն զանազանութիւն գնէ 'ի յիշելն գկանայս. " Զի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ Ճանաչեմ. ոչ որ միայն աւագագոյնքն էին, այլ զբազումն 'ի կրսերագունեաց անտի ,, և խոր. ՟Բ. 64. "Եւ այլ որ ինչ կրսերագոյն ազգ ,, ։ Յորս աւագ Թուին կոչեցեալ նոքա՝ որոց մեծ եր կամ գործ կառավարութիւն և կամ երկիր. իսկ կրտսեր նոքա՝ որոց փոքր եր պաշտօն և կամ երկիր։

Ի. յԼ 'ի նոյն իսկ յաւագագոյնս գոյր կարգ անուանեալ առաջին գահ, երկրորդ գահ և այլն, զոր ուրեք ուրեք յիշատակէն պատմագիրքը. որպէս յայս բան Խոր. ՟Գ. 51. յասելն վասն Արտաշրի Պաբպից արքային. " Հրամայեաց զտունն երկաքանչիւրոցն (կամարա-

կանացն և Ադամտունեաց) զկալանսն յաղբունիս՝ դարձու-
ցանել ՚ի նոսա, բայց միայն ՚ի գահ Հայրենի ոչ հաստա-
տել, այլ ՚ի խնամարհ քան զբազումս մատուցանել նախա-
րարս, ՚ի կարգ կրտսերագունից պատրաստել. իսկ զազգն
Համամազսպայ որ է տոհմ մամիկոնեան՝ ՚ի վեր մատուցա-
նել. զի կարգեցին ունել զՀինգերորդ գահ նախարարացն
Հայոց. և ՚ի գիւանի իւրում գրել ,, Ջնոյն կրկին և ՚ի
Թուղթն Ադամայրի առ Վասակ մարզ արքայ ասե-
լով. “ Ազգի դորա տացես զգահ հինգերորդ պատուոյ
նախարարացդ ,,։

Օ կարգ նախարարունք Մեսրոպ ՚ի Թիւն ժք. ՚ի մեծէն
Խոսրովայ ՚ասէ կարգեալ և յայլոց Թագաւորաց, և ասպ
՚ի մեծէն Կերսեհ Նորոգեալ. զի ասէ. “ Իբրև ձեռնա-
դրեցաւ մեծն Կերսէս ՚ի Կեսարիա, և եհեալ ՚ի Հայս նո-
րոգէր զգահս իշխանացն զոր կարգեալ էր (մեծն) Խոսրով
և այլ Թագաւորքն. զնոյն կարգէր և սա ՚ի ժամ սեղա-
նոյն արքային Արշակայ ,, ։ Բայց ոչ գտանիմք ուրեք նշա-
նակեալ որոշակի զառաջնութիւն և զյետնութիւն նոյն կար-
գի նախարարացն, Թէ ո՞ր նախարար յորմէ կարգի
գտանիցէ։ Ուր Ագաթանգեղոսի յծիշ. ըստ այսմ կարգի յիչ
չատակին նախարարքը, զորս Տրդատ առաքեաց ՚ի Կեսարիա
զգլխաւորս նախարարացն, և զկուսակալս աշխարհացն.
“ Առաջին իշխանն Աշոեղ տանն. երկրորդ իշխանն Աղձ-
նեաց որ է բդեչխ մեծ. երրորդ իշխանն Մարզպետուհի.
չորրորդ իշխանն Թաւակասպ իշխանուհի Ապետուհի (որ է
Բագրատունեաց). հինգերորդ իշխանն Սպարապետութիւն
զօրավար Հայոց աշխարհին. վեցերորդ իշխանն Կորդուաց
աշխարհին. եօթներորդ իշխան Ծոփաց աշխարհին. ու-
թերորդ իշխանն Գագարացւոց աշխարհին, (Թուի լինել
բդեչխին գուգարացւոց). իններորդ իշխանն Ընշտունեաց
աշխարհին. տասներորդ իշխանն Մոկաց աշխարհին. մե-
տասաներորդ իշխանն Սիւնեաց աշխարհին. երկտասա-
ներորդ իշխանն Ծօդեից աշխարհին. երեքտասաներորդ
իշխանն Ուտացւոց աշխարհին. չորեքտասաներորդ իշխանն
Շահապ Ջաբուանդ և Հեր գաւառի (որ է Պարսկաստան).
Հնգետասաներորդ իշխանն Աղձրունեաց աշխարհին (որ

1 Բայց ըստ պատմութեն Խորենա-
ցւոյն լուսաւոր Թուի ասել ՚ի վա-
զարշակ և ՚ի վերջոյն Տիգրանայ
կարգեալ. զի որովհետև սոքա երկո-
քին հաստատեցին զնախարարութիւն,
ընդ հաստատեին՝ յայտ է Թէ ընդ նմին
և զկարգ նոցա սահմանեցին։ Ջնոյն
սոցա գուցէ և մեծն Խոսրով, նաև
Տրդատ՝որպէս երևի ՚ի կարգի եղին։

է Վասպուրական)։ Ա՛յս իշխանիք ընտիրք. կուսակալք, կողմնակալք», թուի թէ այս կարգ նախարարացն էր զոր ցուցին Հասկոյ Պարսից արքային ի գրոց Ագաթան-գեղոսի. բայց այլուր ի Թղթ. յՅԹ. ի յիշելն զիշխանս զորս ընդ իւր տարաւ Տրդատ ի Հռոմ, ոչ սովին կարգաւ յիշէ. այլ յետ իշխանին Մոկաց և Սիւնեաց յիշէ զԱրշուշնեացն։

Ի՛սկ Ստեփաննոս օրպելեան գլ. Է. սովին կարգաւ յիշէ զազատագուրս իշխանս կարգեալս ի Տրդատայ. «Գահագլուխք (ամենեցուն էին) բդեաշխն Գուգարաց և իշխանն Աղձնեաց, իշխանն Աղեղոտն և իշխանն Կորդուաց, Աղպետն թագաւորեալ և իշխանն Աբծրունեաց, իշխանն Սիւնեաց և իշխանն Մամիկոնէից։ Սոքա էին գահագլուխք ամենայն իշխանացն Հայոց»., որք են իշխանք ուԹ. Բուզանդ Դ. Կ. ի պատմէն Թէ որ իշխանք տարան զՄեծն Կեսարէս ի Կեսարիա ի ձեռնադրութիւն յաւուրս Աբրահակ Թագաւորին՝ ըստ այսմ կարգի յիշէ վնախատրաբ. «Ջհայր մեծ իշխանն Մարզպետութիւն, և զԲագարատ մեծ իշխանն Ապարանպետութիւն, և զԳնունիւլ մեծ իշխանն Ծոփաց, և զՄեհենդակ ոշտունի, և զԱնդովիկ իշխանն Սիւնեաց, և զԱբշուիր իշխանն Շիրակայ և Աբշարունեաց, և զԱնդն իշխանն Մուսոյ Ծոփաց, և ըզՊարգև իշխանն տանն Ամատունեաց»։

Ա՛յս կարգ ի նախարարս՝ այնչափ մեծ էր համարեալ, զի յորժամ Շապուհ Պարսից արքայ փոխոխեաց զկարգ նախարարացն, յանհնարինս սքանչեացաւ նախարարն Սիւնեաց, որպէս գրէ Ստեփաննոս օրպելեան գլ. Լ՛. «Եւ գտեալ ի նմա (Շապուհ Պարսից արքայ յԱգաթանգեղոսն) զգիր տանուհէրէթն բարձի ազատացն Հայոց իշխանացն, սկսաւ ըստ այնմ գրոյ նախապատիւս յարդարել յարքունական տաճարին ընիստս իւրաքանչիւրոցն ի սեղանս ուրախութեանէ։ Իսկ տանուհէրէթրդ բարձն Երկաս Անդովկայ Սիւնեաց տեառն. և նա հպարտութեամբ իսրոխատցեալ ոչինչ ձաշակեաց յայնմ ուրախարար արքունականն ընդունելութենէն»։ Յորմէ Թէ զինչ չարիք գՀետ եկին, ունկն խմանալ զկնի յառաձին պատմութենէ Նախարարուէ Սիւնեաց։

Ե. Թիւ Նախարարէց։

Զորեքհարիւր դնէ Ստեփաննոս օրպելեան Է. գԹիւ իշխանաց կարգելոց ի մեծէն Տրդատայ, ասելով. «Նորո-

գեալ նորածին Տիրոջ գՀայս առաքելագործ պլին Աս-
տուծոյ սուրբ քահանայապետն Գրիգորիոս՝ հրամայէ
մեծին Տրդատայ կարգել զԹագաւորութիւն իւր ըստ սահ-
մանի կայսերացն Յունաց, և տալ ըստ իւրաքանչիւր պատ-
շաձի գահ և պատիւ իշխանացն յաջմէ և յահեկէ։ Որ և
զեղեցկապէս յօրինեալ ՚ի ժամ Ճաշոյն նստել բարձս
ըրե+նթբ+ր իշխանաց ,, ։ Նոյնպէս Թուղ դնել լինել և
Մեսրոպ ժէ։ յաւուրս Ը։ Աբրահամ արքայի՝ առեալ վասն
մեծին Կերսէսի ։ ,, Ջնոյն կարգէր և սա ՚ի ժամ սեղանոյն
արքային Աբրահամ բարձ ըրե+նթբ+ր+ն այսպիսի։ Հայկա-
զեանք , Պարթևեանք , Աբրահամեանք , Բագրատունիք ,
Ամատունիք (որք են նոքա)։ Տրպատունիք ,, և այլն։ Յետ
Թուելոյ զազգմունէն անուանց , ապա ասէ ։ ,, Ահա են
գահոյք և այլ ևս յոլովք , զորս ծանր ևս համարեցաք
ածել զգրով, զոր նորոգեաց Աբրահամ Թագաւոր ։ և կար-
գեաց ՚ի ժամ եկեղեցւոյ իւրում (այսինքն ժողովելոյ
իւրոյ) բարձս ըրե+նթբ+ր հրամմնաւ մեծին Կերսէսի ,, ։
տես անդանօր ՚ի Մեսրոպ ։ Բայց ընդ իշխանս Թուեալ և
դասեալ գտանես նաև զԱբասատեանն՝ որ քաղաքապետ է
՚ի փոքր Հայս ։ զՆդեեսեանն՝ որ է քաղաքապետ ՚ի Մէջա-
գետս և ոչ նախարարութեամբ է, և որ առաւելն է՝ նաև ՚ի
սարմանացուց անտի ,յիշատակեալ ՚ի Թիւս նոցա զԱեղ-
մատակեանս , և զայլս ։

Իսկ Բուզանդ Գ. 2. Իննհարիւր բարձ դնել յաւուրս նո-
րին Աբրահամ յասելն ։ ,, Թողզնահապետս մեծամեծս և
զտանուտեարս որք գործակալք միայն էին,ինհարիւր բարձ՝
որ մնաքեր ՚ի ժամ տաճարին ուրախութեն բազմակալացն
կարգելոց ։ Թող զտանկայս գործակալութեն սպասու ,, ։
Նաև ՚ի Գ. 11. յիշէ զայլ և այլ իշխանս ։ և ՚ի Գ. 8.
զաշխարհատեարս յիշելով ասէ ։ ,, Դնեք (փոքրն խոսրով)
օրէնս , զի մեծամեծ աւագանին, նախարարքն աշխարհա-
կալքն աշխարհատեարքն՝ որ էին բիւրաւորքն և հազարա-
ւորքն, կայցեն առ արքային, և ընդ նմա չորեսցին ,, ։ Տես
և ՚ի Գ. 9. և 12. զայլ և այլ իշխանս նահանգաց զորս
յիշէ ։

Այլ յաղագս Թուոյ նախարարաց պարտ է գիտել զի
ոչ միայն նահանգք , այլ և գաւառք աշխարհիս Հայոց ու-
նէին սեփական նախարարս , որպէս անկ է իմաստասիրել
՚ի յիշատակելոցն ՚ի գիրս , և որպէս յայտ առնէ նաև այս
բան Յոհաննու կաթողիկոսի յասելն Թէ Ախլաին Զիկ
անուանեալ վասն ուժոյն՝ գոլով գլխաւոր նախարար Ուտի

նահանգին, "նաև զայլս ևս զբոլոր նախարարութիւն սիւնեաց նահանգի դուռն ընդ ինքեանս տուեալ ի նոյն յարգարեր ապատանութիւն ,, : Որք լայտ է թէ էին նախարարքը գաւառացն Ուտի նահանգին : Այլ թէպէտ նախարարացն պակասեաց կոտորածիւ որ ընդ ժամանակս ժամանակս լինէր . զոր օրինակ պատմէ Բուզանդ Ե . 15 . վասն Մուշեղայ սպարապետին Պապայ , թէ յարձակեալ ի վերայ բդեշխին Գուգարաց՝ որոյ ապստամբեալ ապաւինեալ էր ի Վիրս , "Հանէը ընդ սուր զամենայն Ազատս և զԱզգս նախարարացն զոր եգիտ . զիաւառապետանսն . . . և զզէշերն Գուգարաց . . . կալեալ գլխատեր . և զԱզգն որձակոտոր առնէր ' , և զկանայսն և զդատերսն ի գերութիւն վարէին ,, : Սպասպէս և վասն բդեշխին Աղձնեաց գրէ Ե . 16 . Թէ նոյն Մուշեղ "ձերբակալ արարեալ զզէշերն Աղձնեաց , առ նմին կոտորեցին զկանայս , և զորդիս նոցա ի գերութիւն վարեցին և զինացեալսն ի հարկի կացուցանէը ,, : Բայց ի նախաձառն քաղաքի յորժամ այրեցան նախարարքը ի սկզբան անդ ուր Թէորդ դարձ , կարի յոյժ պակասեաց Թիւ նախարարաց . զորմէ յիշատակեալ է Մեր Ագաթանգն անդ արարացոց . քանզի որպէս գրէ Սամուէլ ի Թուին ՃԿ . բերելով ի Յոհաննու կաթողիկոսէ , "ԵՒս այսու ժամանակ կօք ի ՃԾԸ . Թուին այրեցին զնշխանն Հայոց ի Նախճաւանի . և այնր ազատաւ պակասեաց կարգ այսր գաւազանի . զի գրէ տեր Յոհաննէս յիւրում գեղեցկագրեան շարագրութեն այսպէս , եթէ վասն զի սպառսպուռն տիրեցին հազարապետք հայասանեայցս , և մեծամեծք աշխարհս նուաճեցան ; Եւ Թէպէտ և ինացեալք էին՝ սակայն զօրեալ Թագուցեալ կային ընդ լծով ծառայութեն նոցա , վասն այնորիկ ասէ յայսմ վայրի պակասեաց ի պատմութեն ասի կարգ իշխանացն մերոց ,, : Քանզի պատմէ և Ղևոնդ գէ . Թ . Թէ յետ այրելոյ զզօրս ի Նախճաւանի՝ " բազումք այլ ի նախարարացն Հայոց՝ զոր ոչ բաւեմ մի ըստ

1 Յասելն Բուզանդայ որձակոտոր առնել , և ի չլիելն ընդ գերեալ զբաստրան նաև զաւառս , չէ պատճառ այնպէս իմանալ՝ որպէս Թէ զամենայն ազգն Մուշեղայ , և ոչ զզօրսարուագ ապրեցուցեալ՝ այլ քանզի և յետ այնորիկ յիշատակին առնէը Գուգարաց , յայտ է Թէ զբազմութեն կոտորելոցն կամի ցուցանել , որպէս յայտ առնէ նաև այս բանդ որին Բուզանդայ , որ ի Ե . 17 . ասէ նախ վասն Մեծի Դոփայ , Թէ նոյն Մուշեղ " զազգն (Մեծի Դոփայ) հանէը ընդ սուր ,, : Եւ սուղ ինչ գլխի . "Եւ զազգն (Մեծի Դոփայ) ի հարկի կացուցանէը ,, : Այսպէս ոչ զամենայնն հանեալ էր Մուշեղ ընդ սուր , այլ բազումն ի նմա ցեալէը ի Դոփայոց , զորս ի հարկի կացոյց : Այլև գիտելի է , զի ոճ Բուզանդայ փոքր մի չափազանց է :

միջէ պատմել, զնոսա զամենեսեան բարձեալ՝ ի կենացն՝ անժառանգ առնելին զաշխարհս՝ ի նախարարացն. յայնմ ժամանակի Թափուր եղեալ աշխարհս Հայոց՝ ի տոհմէ նախարարաց ,, և այլն։ Եղեն և տոհմք ինչ նախարարաց ոչք բնաւին բարձան, զորոց ունիս տեսանել՝ ի պատմութիս իւրաքանչիւր նախարարութեանց. և տոհմք ինչ ոչք յապագայ ժամանակս յաղետից և՝ ի գերութեց թշնամեաց երևելին բնաջինջ լեալ կամ կորուսեալ։ Աչս երևի պատճառ՝ յոյր սակս յառաջս Թագաւորացն Բագրատունեաց՝ մանաւանդ վերջինոց, ոչ տեսանելիք յիշատակեալ՝ ի գիրս զանունս տոհմից նախարարութեանց՝ բայց միայն յոյժ երևելեաց. իսկ անուանիք նախարարաց որ՝ ի կողմանս յորրոզդ Հայոց, զոր օրինակ է Աշգեղտան, Մարգպետական, և այլն, ոչ յիշատակին՝ ի վաղուց անտի անցեալ գոլով առ տերութեին Յունաց, և անդ կորուսեալ ոլպէս Թուի։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ

Զայս վայր տուեալ ընդհանուր տեղեկութիս յաղագս նախարարութեց, քանզի կարևոր տեսանեմ գիտել ինչ ինչ նաև զիւրաքանչիւրոցն առանձին առ կատարեալ տեղեկութի՝ կառավարուե աշխարհիս մերոյ, աստանօր ձառեսցուք զնոցունց մի ըստ միոջէ ըստ այմ կարգի.

Ա. Զաղագս Թագակալ նախարարութեց, այսինքն է՝ որք զանուն Թագաւորի ընկալան, և մի ըստ միոջէ պայազատեցին։

Բ. Զաղագս նախարարութեց, որք մնին՝ ի գործ ինչ կառավարութե։

Գ. Զաղագս նախարարութեց, զորոց ոչ յիշատակի գործ ինչ՝ ի կառավարութե։

Զամենեցուն զոսոցա յիշեցուք զսկզբնաւորութիւնն ցեղից, զերկիրս, զպաշտօնս և զերևելին անձինս. բայց անթերի կարզել զպատմութե նոցա, և զամենայն անձինս՝ ի նոյն ցեղից՝ որք յիշատակին՝ ի պատմութե՝ յիշել աստանօր, չէ տեղւոյս։

Ա. ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԲԱԳԱՏԻՆԻ։

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ

Դ. ԲԱԳՐԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ։

Ի. յս տոհմ սկզբնաւորեալ է ի Հրեից[1]. որոյ առաջին նահապետ եղև Շամբաթ ի ժամանակս Հրաչեի մեծի Հայկազեան թագաւորի, որպէս եդաք ի գաղթականս. տես անդ. վասն որոյ խորենացին ա. 22. մերժէ զորս ասէին վասն Բագրատունեաց ի ժամանակաց անտի Հայկայ լինել։ Զամուսանէ աստի ածանցեալ է անունն Սմբատ. "Բայց ծանիր, ասէ, զՍմբատադ անուն, զոր յաճախ Բագրատունիք ի վերայ պատանեաց կոչեն, Ազմարիտ Շամբաթ է ըստ նախնի իւրեանց խօսիցն՝ որ է երջանկագիր"։

Պ. ԲԱԳՐԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ։

Ի Շամբաթայ աստի սերեալ ոմն Բագարատ այր զօրաւոր և իմաստուն յաւուրս Վաղարշակայ՝ քանզի նախ քան զամենեսին եկն ի հպատակութիւն Վաղարշակայ, վասն որոյ և Վաղարշակ ընդ դադարելն ի պատերազմէ և ի սկսանելն զիւր բարեկարգութիւս, յատաջ քան զամենեսին սմա վարձահատոյց եղև կրկին մեծամեծ պաշտօնս տալով նմա։ Մի՝ Թագադիր լինել ազգային յորդւոյ յորդիս, որով և զերծունդ նորա անցոյց ի կարգս նախարարաց. "Նախ և առաջին, ասէ խորենացին ք. 3. փոխարէն բարեաց հատուցանելով առնն զօրաւորի և իմաստնոյ, որ ի Հրեից՝ Շամբայ Բագարատ. տալ (տալով) նմա իշխանութիւն ազգաւ Թագադիր լինել Աբշալումեանց։ Եւ որ ի նմանէ ծնեալ ազգ՝ լինել յանուն նորա կոչ. մամբ Բագրատունի, որ և այժմ մեծ նախարարութիւն (է) ի մէջ աշխարհիս"։ Հայոց։ Իսկ ի 7. գլ. առաւել բացայայտ գրէ. "Աբգ նախ և առաջին օրհնադրէ Թագաւորն զինքն և զտունն իւր. սկիզբն առնելով ի գլխոյն իւրմէ և ի թագէ. և զկնի եցեալն Բագարատ որ ի Հրե-

1 Բան ոմանց սերունդ էր Դաւթի հրէից էր, զորմէ Հարեւանն լինել ըստ գրելոյ Յովհաննու կաթողիկոսի. յայգէ Դաւթի, Թագադիր Թագրատայ կաղանդն իւրոյ գոլ Հայաստանեայ։

իւին՝ չնորհակալութիւն նմա վասն յառաջագոյն անձնատուր ձեռնտուութեան առ Թագաւորն՝ և միաւորութեան և քաջութեան՝ զյառաջասացեալ տանուտէրսկան պատիւն ազգին պարգևելով. և իշխել նմա Թագ՝ի գլուխ դնել Թագաւորին, և կոչել Թափպէրք և Աղէա ,,[1]: Զայս յիշատակէ և Բուզանդ վկայելով Ե. կէ. "Տայր նմա (ք. Վաղարշակ արքայի) զղուստր Աշտիճին բագրատունոյ՝ի Սպեր գաւառէ. որ Թագաւորքն Թափպապն լեալ էին՝ի քմէ ազգին Թագաւորուէն արշակունոյ ,,: Վասն այսր Թագակալ իշխանութեանէ և որով՝ի կարգս նախարարաց առաջին դասեցաւ տոհմն Բագրատունեաց, զոր Սահփանիոս օրպէլեան ՚ի նորին Վաղարշակայ այսպես կարգեալ ասէ. "Հրամայէ Բագրատունեայն Թագադիր լինել. և անուանէ զնոսա այսպէս, և հնարէ ունել էնախնա կան բառն՝ի վերոյ քան զանէնայն ,,: Յայմմէտեաւ Թագաւորութիւն այնպէս սեփական եղև այսր տոհմի, մինչև առանց Բագրատունեաց Թագաւորելն ապօրինաւոր համարեալ լինէր՝ի ժամանակս Արշակունեաց, որպէս և համարեալ եղև ՚ք. Երուանդ ըստ յուշանելոյ Խորենացւոյն ՚ք. 37. յասելն. " Մի թաքանել Թագաւորեցուին զնա առանց արանց յազգէն Բագրատունեաց լինել Թագադիր ,,:

Լչրկրորդ պաշտօն էտ Բագարատայ Վաղարշակ՝ կացուցանելով զնա Կողմնակալ իշխան. այսինքն՝ զօրապետ զօրաց յարևմտեան կողմն աշխարհիս Հայոց. զայս յայտ առնէ Խորենացին ՚ք. 3. յիւր յառաջին բանն, ուր յետ պատմելոյ զԹագադիր լինելն նորա՝ ապա գրէ. "Եւ սա՝ի դրան արքունի. իսկ՝ի ծայրս Հայերէն խօսից՝ Կողմնակալ էշխան բիւրուց և Հազարաց յարևմտից կուսէ ,,. Ասյս ինքն է, զոր գրեցաքն Թագադրութէն, էր սա պաշտօն և իշխանութէն՝ի դրան արքունի, իսկ՝ի ծայրս՝ որ է՝ի սահմանագլուխս տեղիս՝ կարգեցաւ նոյն Բագարատ կողմնակալ իշխան կամ զօրապետ՝ի վերոյ արևմտեան զօրաց Հայաստանեայց. Զայս առաւել որոշակի յայտ առնէ նա ինքն ՚ք. 14. յասելն վասն Միջոյն Տիգրանայ. "Անդուն՝ի նոցանէ (՚ի Բագրատունեաց) ՚ի բաց վիշանուէն զօրուն. բայց միայն զԹագակալ ասպետութէնն ոչ Հանէ ,,: եւ՝ի 47. յասելն վասն ՚ք. Աբտաշէսի. "Տայ դայեկին իւրոյ

1 Թէ զինչ սահմանեալ էր վաղարշակ՝ի նշան Թագադիր ասպետուէ, տես՝ի գլուխն Սովորութ՝ի գահասս։

Սմբատայ . . . աւելի քան զՀայրենական գիւր Թագաւոր ասպետութիւնն, և զիշխանութիւնն արձակեալ զբոլոր (զոր ունէր), հաւատայ ՚ի նա զամենայն զօրս Հայոց ,, : Սմբատ էր բագրատունի, որոյ Հայրենական պատիւն էր Թագաւոր ասպետութիւն, նաև իշխանութիւն կամ զօրագլխութիւն ՚ի վերայ արևմտեայ զօրուն . այլ այժմ, ասէ, ՚ի նա յանձնեաց ք. Աբուսահլ նաև զսպարապետութիւն ՚ի վերայ ամենայն զօրաց ՚ : Ա յսպէս արար և ք . Խոսրով արքայ ընդ Սահակ ասպետ, որ էր բագրատունի . զի յորժամ Սահակ ելեալ ՚ի բաժնէն Յունաց էանց ՚ի բաժինն Պարսից ուր նստէր Խոսրով, "Մե՛ծ ապուհ ուրախ եղև, ասէ, խորհեսցին ք. 43. ընդ գալն Սահակայ ասպետի, և Սպարապետ զնա ՚ի վերայ զօրաց իւրոց կարգեաց ,, : Ըստ այսմ ՚ի հարկէ և զԲագարատ՝ որոյ անունն ցուցանէ լինել ՚ի բագրատունի ազգէ, Բուզանդ ք . 4 . կոչէ "Մե՛ծ իշխանն սպարապետութեան ,, : Որպէս և զիշխանս բագրատունի Թոմա արծրունի կոչէ Սպարապետ Հայոց : Երևէլի սպարապետ եղև նաև Սմբատ բագրատունի յաւուրս Պահպայ ազգայի, որ և առաջնորդ եղև ՚ի հնչակաւոր մարտին որ ՚ի Ձիրաւ դաշտին . Խոր . ք . 37 :

Պապուանեան Բաժանութեանց :

Ա յս տոհմ բագրատունեաց էառ և ուրոյն պատուանուն, որ է կոչիլ Աշոտ . զայս անուն սեփականեալ ցուցանէ Խորենացին Թագադիր պատուոյն . զոր օրինակ ՚ի նահապետել բանին, ուր միանգամայն յիշէ յաստեին՝ Թէ Վաղարշակ հնորհեաց բագարատայ կոչել Թագադիր և Աշոտ : Եւ յայլ բանս իւր ք . 14 . և 47 . ընդ յիշելն զասպետուն բագրատունեաց՝ յիշէ ՚ի կրկին տեղիս Բաժանութիւն Աշոտ կոչելով . յայտ առնելով Թէ Աշոտ անուանեցաւ վասն Թագ կապելոյն ՚ի գլուխ արքայի, Վասն որոյ և յորժամ Սմբատ բագրատունի զերկաթ հրացեալ բոլորելով ՚ի գլուխն Մերուժանայ գնէր, Պապ-

1 Ի բանիկ ասելն յայտ է Թէ բառնալն Տիգրանայ ՚ի բագրատունեաց զնշխա-նութիւն արևմտեայ զօրուն՝ առ ժամս նակ մի միայն տեւեաց . գուցէ միայն յաւուրս նորին Տիգրանայ . զնոյն այնորիկ անգրկէն գարձեալ էր առ բագրատունիս . զի Թոմա արծրունի ա-

9 . զնշխանս բագրատունի որ յաւուրս Աբշամայ արքայի կոչէ Սպարապետս Հայոց , և յորս սակս գրեաց խորենացին ՚ի վերոյ՝ Թէ ք . Աբասչէս առաւել քան զիշխանութիւն արևմտեայ զօրուն՝ յաւել այժմ տալ և զՍպարապետութիւն ամենայն զօրայ :

կէմ զքեզ Թագաւոր, ասելով ընդ խաղս, ասպետութե՛ տայ զԹագաւորիս լինելն. "Քանզի ի հնոցիս էիր (ասե, առ Խորենացւոյն ՟Բ. 37.) Թագաւորել Հայոց, և ինձ Աղաթօնէս պարտ է զքեզ պահել ըստ սովորական իշխանութե՛ իմոյ Հայրենեաց" բագրատունեաց: Վասն որոյ և Աղաթանգեղոս յԴ՟Բ. ի յիշելն յանուանէ զայլ և այլ իշխանս՝ զԲագրատունեացն առանց անուան յիշէ, կոչելով Իշխանն Թափաղ իշխանութեան Աղեքսանդրեան. և ի Թղթ. յՄԹ. կոչէ միայն զՆախափոքրն Աղեք: Վասն որոյ և այլք նաև զԹագաւորութե՛ն զանուանն չյիշելով միայն զասպետութե՛ն անուանն յիշէին իբր նոյն, և իբր սեփական նեալ Թագաւորութե՛ գահին և պաշտօնին. "Աքանչելի Աղեքսանդր Սահակաւ մարզպանաւ" ասէ Ղազար 224: "Յետ մահուանն մեծին Սահակայ բագրատունոյ սպասպետի Աղեքի և զօրավարի Հայոց" Թոմա արծ. ա՟. 15: Եւ Յովհաննէս կաթողիկոս ի յիշելն զՎարազտիրոց բագրատունի՝ "Աղեքն Վարազտիրոց" կոչէ: Յայսմանէ Թուի ինձ պիտակարար լեռն Աղեքս կոչեցեալ ի Մաւիսնոսկ իբր. զԹ.ադորս ուշտունի, և ի կիրակոսէ զՋաքարիա՝ յասելն. Ժողովականք, որ ի հրամայելոյ Աւետի Թագաւորին Ժողովեցան ի Սիս, գրեցին. "Մեծապատիւ Աղեքն և շահնշահ ալևալեան կողմանց Ջաքարիա": Ա՟յս տոհմ զինի էառ և զմեծն ի պատուանունս զանուն Թագաւորի [2]. և որ նախ Աբրահամնեաց տանն զնեբ Թագ, զինի իւրով արգեամբք իւրոյ տանն եղև Թագադիր, և արժանայաւ կոչիլ Թագընկալ:

Երիւր Բագրատունեաց:

Ի վաղ ժամանակաց անտի ի յիշելն պատմագրաց զԱՊեր, սեփական լինել ակնարկէն այսմ տոհմի Բագրատունեաց, Թէպետ և յայտնի ինչ չգրեն [3]. որպէս և ի յիշելն զՄամգատաան ի նմին գաւառի, որում և բագրատունեան անունս Սմբատ վկայէ. և այս բան Խորենացւոյն

1 Մէսրոպ ի Թիւն ՃՀ. ի յիշելն զնախաթարս յառաջ քան զամենեսեան յԵս Թագաւորական տոհմին իսկ և իսկ յիշէ զԲագրատունիս, և զնոի այնը անգէն յիշէ զԱպահունիս. զոր կարծեմ ի գրչաց անջատակ. փոխանակ ի մի յօգելոյ: Բայց որ անտեղի է ստորև գարձեալ յիշէ զԲագրատունիս:

2 Ջորմէ տես ի կարգս Թագաւորաց Բագրատունեաց:

3 Ցես վասն այսր ի մեծ Հայս ի Թղթ.համարն 26:

Ք. 43. «Բայց եկիր ոմանք և ի նախաբարացին՝ որք ունէին զիշխանութիւն իւրեանց ի բաժնին Յուդայ առ Աբշալայ. որպէս Սահակ ասպետ (բագրատունի), որ էր լեալ անդր Վաղարշակայ եղբօր Աբշակայ» արքայի. իշխանութիւն ասելով իմանայ աստէն զերկիր նոցին նախաբարաց. արդ զինչ այլ երկիր կարեմք դնել սեփական իշխանութեան բագրատունեաց քան զՍպեր յայնմ ժամանակի՝ յորում աշխարհս Հայոց յերկուս բաժանեալ, և յերարատ և մեծ մասն մեծին Հայոց էր ի մասին Պարսից և ոչ Յունաց. ի մեծին Վաղարշակայ, որպէս ինձ թուի, պարզ գևեալ էր բագրատունեաց այս երկիր Սպերոյ, յորժամ կողմնակալ կացոյց արևմտեան կողմանն, լինել նոցա իբր քաղաք զօրանիստ, որ և էր յարմար. զի յայնմ ժամանակի հետէ մինչև ի բնականալ նոցա յայրարատեան նահանգ՝ ոչ ինչ այլ երկիր յիշատակի վասն տոհմին բագրատունեաց. Նորին աղագաւ բագրատունին Աշոտ մասկէր յորժամ զԻնոնիս կամեցաւ յապահով տեղւոջ բնակեցուցանել, ի Տայս փոխադրեաց, ասէ Վարդան, որ սահմանակից էր իւրում գաւառին Սպերոյ, կամ թէ գուցէ մինչև ի Տայս ձգեալ էր յայնժամ բագրատունեաց զսահման իւրեանց.

Ա. ՅԼ ըզոր յայնմի գրէն պատմագիրք՝ ե վասն բնականալոյ նոցա յայրարատեան նահանգի. զի Թոմա արծրունի ա. 9. յաւուրս Աբշամայ մերոյ արքայի՝ զԲագրատունիս բնակեալ ասէ յԱյրարատ, գրելով վասն Եանոսի որ յայնժամ նահապետ էր Բագրատունեաց. «Զոր առեալ Ջաջուռ (իշխանն արծրունի) աղխիւ և ամենայն պատրաստ կազմուք բնակեցուցանէ ի կողին Աբաղածոյ ի գիւղն Թալին կոչեցեալ. Սա (Եանոս) առաջնին ի տանէն Բագրատունեաց եկեալ կայանայ զայսու կողմամբ այրարատեան նահանգի»» և ոչ միայն բնակութիւն կալեալ՝ այլ նաև զերկիր ինչ սեփականեալ ցուցանէն յայնմհետէ բանք պատմագրաց վասն այսր տոհմի. զի զԲագարան որ ի Կոգովիտ գաւառին Աշրարատոյ՝ շինեալ ասէ Խորենացին ք. 45. ի Սմբատայ բագրատունոյ որ յաւուրս ք. Արտաշէսի, էր ՅԵ-ակեր կոչեցեալ, և ի նմա բնակեցուցեալ զիւր գերութեին իբր յիւրում սեփական երկրի. Զքաղաքն Դարունք, որ էր ի Կոգովիտ, Ղևոնդ կոչէ Հայ հանգիպեան Խոյոյ վասն Աշոտոյ պատրիկի բագրատունւոյ որ ի յիւր եօթնեերորդ դարուն. նաև զեկեղեցի ևս շինեալ ի նմա իբր յիւրում սեփա-

կան երկիրն։ Եւ Վարդան վանն Աշտոյ որդւոյ Սմբատայ գրէ, Թէ որովհետեւ զչլուխս մեռելոյն մամիկոնեան Դրիք գորոյ առաքեաց առ Մահմետ ոստիկան՝ հրամմանաւ Ջաւրիլ ամիրապետին, " պատուէ զԱշոտ, տալով նմա զգաւառն Բագրեւանդ (որ էր Դրիգորի), և արծաթ բիւրս հինգ։ Իսկ վանն մնակերն Աշտոյ բագրատունւոյ գրէն զաղբուս նիս իւր ի Կոգովտեհ փոխեալ յԱրշարունիս. ապա յայտ է Թէ յառաջ քան զնա արքունիք Բագրատունեաց էր ի Կոգովիտ։ Զհինի այնորիկ Արշարունեաց գաւառն Աբարատոյ եղև սեփական երկիր Բագրատունեաց արծաթ Թոյ գնելով, որպէս պատմէ Ասողիկ ե. 2. " Իսկ ըստ իշխանացն կարգին՝ զհին Սմբատայ որդւոյ Աշտոյ՝ Աշոտ որդի նորա ոք մնակերն կոչիւր՝ ամն քսան. սա գձմեռնին արար զգաւառն Արշարունեաց յայգիէն Կամսարականաց և զաղբունիսն ի Կոգովտեհ յԱրշարունեաց փոխեաց ", և Ա յլ նաև յառաջ քան զայն Աշոտ՝ էր ի ձեռս Բագրատունեաց. յայտ առնէ Խորենացին ե. 45. " Յայնժամ Սմբատայ զծառայսն Երուազայ զոր գերեցին ի Բագադանէ (Աշրարունեաց), տարեալ քնակեցուցանէ ի Թիկանց Մասեաց (ուր անկանի Կոգովիտ). ի նոյն անուն Բագարան կոչելով (նաև) զձեռակերտն ", և Ղևոնդ վանն Աշտոյ պատրկի որ բազմաք յառաջ է քան զվանն կէրն, գրէ. " Շինէր զեկեղեցին Դարունից յիւրում ոստանին ". Եւ Թէ Թաղեցաւ ի կայս Հանգստեան իւրոյ ի գիւղն Դարունս, " որ էր ի Կոգովիտ գաւառի "։ Իսկ Յովհաննէս կաթողիկոս վանն մարմնոյ քաջին Սմբատայ բագրատունւոյ, որ յելս անդ վիցերորդ գարուն, գրէ. " Բարձեալ տարան զմարմին նորա ի Հայք, և դնեն ի Դարոյնս որ ի Կոգ գաւառի "։ Եւ վանն Վարազտիրոցի և վանն Սմբատայ եղբօրորդւոյ ից. Սմբատայ, " Ցարեալ Թաղեցին ի Դարօնս ընդ հարս իւր "։ Եւ որպէս Թուի, Հաւանաբար զԷիրակ գաւառ. զի քաղաքք Շիրակայ գաւառի, ընդ նոսին և Անի, յայնմհետէ ի ձեռս Բագրատունեաց լեալ յիշատակին ։։ Եւ այսպէս երկիրք Բագ-

1 Աչքով պարագայիւք պատմէ զայս Վարդան. ։։Իսկ որդիքն Սմբատայ Աշոտ (մանկիկ) և Շապուհ հասան բան բաժանեցին գհայրենիս իւրեանց. և զի քաղաքն (համայնապն, որոյ կին եղև մին ի չորից դստերացն Մուշեղայ) յայրեալ ամենայն էր զմանն ինչ յԱրքունեաց, և խորհէր սիրելոցն աշխարհին ի ձեռն կնոջն, զոր առին յիշեցեանս Աշոտ և Շապուհ, և եւ լեալ գիգոմմարքն Շիրակայ, և հարեն զգօրսն խաղալիք որ անդ. և առին զՇիրակ, և զԱլշոգք, և զգաւառն Տայոց։ Եւ այսպէս բան բանտին եւ խաղաղ առեալ զԱնի որ ի Շիրակ). և

բատուհեաց եղև նախ Սպէր գաւառ ՚ի բարձր Հայոց Նահանգի, ապա Կոգովիտ, Աբշարունիք, Հիրակ ևԱյրարատ Նահանգի. այլ ընդ ժամանակս ինչ և զՏարօն գամեամբ ՚ի ձեռս արանց տոհմին Բագրատունեաց լեալ. զայս ցուցանէ բան Թոմայի արծրունւոյ ՚ը. 5. «Իշխանն Տարօնոյ Բագրատ վասն զի ունէր յայրիժամ զգլխաւորուն բարձակեցուն իշխանաց Հայոց, որ էր ՚ի տոհմէն Բագրատունեաց, առաքէ զամենս ՚ի մեծամեծաց»: Եւ Յովհաննէս կաթողիկոս յաւուրս ։ Սմբատայ արքայի գրէ. «Իակ յետ ամաց ինչ ապա վախճանեալ և մեծ իշխանն Տարօնոյ Դաւիթ բագրատունի. փոխանակ նորա կացուցեալ ՚ի տեղի եղբօրորդի նորին Գուրգէն, ապա և ընդ նմա և Աշմաստոյ մարտ եղեալ մինչև սպանաւ ՚ի պատերազմի. իսկ Աշմաստ ոմն առ ոմն յառաջ մատուցեալ միապետել ջանայր զկողմանն զայնոսիկ»:

Ոսկան Բագրատունեաց:

Ոյ Լոնդ ՚ի գլուխն ՚ը. զԴարունն գնէ, յասելն վասն Աշոտոյ պատրկի՝ որ հրամանատար էր յԵլս եօթնեերորդ գաւառն. «Շիներ զեկեղեցին Դարունից յիւրում Ոստանին»: Զկին Դարունից ոստան նոցա երևի լեալ Բագարան որ յԱբշարունիս. զի անդ գնեն զարքունական ապարանս կամ զտուն. որպէս կարես տեսանել ՚ի մեծ Հայս 395. ոստանօր յաւելցուք և զայն բան Թոմայի արծրունւոյ ՚ը. 13. զոր գրէ վասն ։։ Աշոտոյ նախ քան զթագաւորել իւր. «Եւ անյապաղ զլխաւորեալ խորհրդոյն առ ընդ իւր զԴերենիկն, և էանց գնաց ՚ի տուն իւր ՚ի Բագարան»: Իսկ յաւուրս ։։ Սմբատայ նորին յաջորդի արքունական ապարանք միշտ յերազաւորս յիշատակին լեալ առ Յովհաննու կաթողիկոսի, զորմէ կարես տեսանել ՚ի մեծ Հայս 428. վասն որոյ և Վարդան յառաջ քան զընդարձակիլ Աշոտ քաղաքին՝ «Ցա էր, ասէ, նախագահ Թագաւորացն Բագրատունեաց»: Որով յայտ առնէ զերազաւորս լինել նոցա ոստան յայնմ ժամանակի. իսկ յորժամ ՚ը. Աշոտ ողորմած ձայնեալ զաւառիցն ընդարձակեաց զբերդն Աբն ՚ի Հիրակ գաւառի,

բնակեցուցանէ ՚ի նմա զընտանիսն.։ Սմբատաս անայ՝ որ է բերդ ՚ի Սպեր
Ապա գովելով և զնախնին նորա առէ. գաւառի.։ Ձէտ որոյ և զազգն Գնունի.
«Եւ ինքն նմանեալ նախայն իւրոյ Նեաց հանեալ առէ նոցա յԱրևմտեայս,
Սմբատայ որդւոյ Բիւրատպայ իշխանի և բնակեցուցեալ ՚ի Տայս:

յայնմհետէ յայտ է Թէ Աքէ եղև ոստան Բագրատունեաց, և արքայանիստ քաղաք նոցա. անդ նստէին Թագաւորքն բագրատունիք, և անդ օծանէին մինչև ցվերջն։

Հէրիմ Բագրատունեաց։

Կամ յիշատակի ի Դարձն լեալ շիրիմ Բագրատունեաց. զի Սմբատ բագրատունի Քաջ անուանեալ կամ Բազմայաղթ որ ի լեր վերադրոզդ դարուն, Թէպէտ ի Տխրոն մեռաւ, այլ " բարձեալ տարան զմարմին նորա ի Հայք, և դնեն ի Դարոյնս որ ի Կոզ գաւառի ,, որպէս գրէ Յովհաննէս կաթողիկոս։ Եւ Վարազտիրոց որդի նորա, ասէ Վարդան, " յառնուլ զիշխանութիւնն (հուրաղատութեան) մեռաւ և Թաղեցաւ ի Դարձնս առ հօր իւրում քաջին Սմբատայ ,, ։ Որպէս և Աշոտ պատրիկ, զորմէ Ասողիկ ։ կ. " Իշխանն Աշոտ պատրիկ . . . . . վաղձանեալ և դնեալ ի տապանի ի գիւղն Դարիւնս ,, ։ Թակ զորմս Վահունդայ տես ի մեծ Հայս 451։ Յետ այնորիկ շիրիմ նոցա երևի լեալ ի Բագարան Աբուշարունեաց, ուր Թաղեալ ասէ Յովհաննէս կաթողիկոս զԱշոտ ։ Թագաւոր և զՇապուհ զպարարապետ Հայոց զեղբայր ։ Սմբատայ արքայի։ Երբեմն և խառն Թաղելոյն. զի Յովհաննէս կաթ. վասն մանկանն Մուշեղայ որ զհայ ։ Սմբատայ ասէ. " Տարեալ Թաղեցին ի Դարձնս ընդ հարս իւր ,, ։ Յետ սոցա յընդարձակիլն Աքէ քաղաքին Ընթրակայ և ի նստիլն անդ Թագաւորացն Բագրատունեաց՝ Աքէ սկսան Թաղիլ. զի Մատթէոս ձա. գրէ. " Եւ բերաւ Աշոտ (Թագաւոր եղբայր Յովհաննու Թագաւորի) ի քաղաքն Աքէ, և Թաղեցին զնա ի տապանատունն առաջին Թագաւորացն Հայոց ,, ։ Եւ ի Թիւն ձէ. գրէ. " Ի նմ. մեռաւ Թագաւորն Հայոց Յովհաննէս, եղբայրն Աշոտոյ որդի Դաւիթայ, բագրատունի ազգաւ, և Թաղեցին զնա ի քաղաքն Աքէ ի գերեզմանսն առաջին Թագաւորացն Հայոց ,, ։

1 Ուր չխոթելովընդ միւս Աքէքա- Աքէ Ընթրակայ, ոչ նստէին անդ Թագաւորքն Դարանաղեաց այսպէս գրէ. գաւառք, և ոչ Թաղեալ լինէին։ Տես զի յառաջ քան զԱշոտ ողորմած, և զոր ինչ գրեցաք վասն այսր ի մեծ զՀայս ։ զոր ընդարձակեցին զայս Հայս ի Թզթ. 10 և 419։

Հատուած Բագրատունեաց։

Օ արմանք մեծ էն, զի այս տօհմ Բագրատունեաց յա-
ւուրց անտի առաջնի նահապետին իւրեանց Համբարձայ՝
միշտ իւրեանց հրեղէնէ օրինօք կենին, ոչինչ քակտատու-
թէ լեալ նոցա ի մերոց Թագաւորաց հայկազունեաց. մի-
այն ի Վաղարշակայ ասէ խորենացին ՟բ. 8. " Ազերբաէլ
որ ի Հրեից Համբայ Բագարատ, որ և Թագադիր և աս-
պետ, Հանդերձ հարկեցուցանող քանիւք Թողուլ զօրինս
հրէութէ, և պաշտել զմեհեանս. զոր չառեալ յանձն՝
ըստ կամաց Թողու զնա արքայն Վաղարշակ ,, : Այսպէս
ոչինչ այլայլութէն մնացեալ ի հաւատս նոցա, մինչև ի յա-
ջորդն Վաղարշակայ Աբրշակ առաջնի՝ որ քակտատել սկը-
սաւ, զորմէ պատմէ խորենացին ՟բ. 9. "Ի ամենէ նեղեալ
ոդիւք Բագարատայ վասն գկուռա պաշտելոյ, երկու ի նա-
ցանէ սրով կատարեցան արիաբար ի վերայ հայրենի օրի-
նացն. զոր ոչ պատկառիմ ասել հետևօղ լինել Ասո-
նիանցն և եղիազարեանց։ Բայց այլքն յանձն առնուն այս
չափ միայն, ի շաբաթու հեծանել յորս և ի պատերազ-
մունս, և գմանկունս Թողուլ անթլփատս, յորժամ լի-
նիցին. քանզի անկին էին ։ Եւ հրամայեցաւ Աբրշակայ
մի տալ նոցա կանայս յամենայն նախաբարուեցին, եթէ
ոչ ուխտ պայմանի հաստատեսցին՝ Թողուլ զթլփատու-
թէն. զոր յանձն առնուն զերկուսս զայս միայն, այլ ոչ
զերկրպագութէն կոչին ,, ։

Երկրորդ անգամ հալածանս կրեաց այս տօհմ ի միջ
նոյն Տիգրանայ, որպէս գրէ խորենացին ՟բ. 14. " Եւ այս-
պէս մեհեանս շինեալ և առաջի մեհենիցն բագինս կանգ-
նեալ՝ զոհս ամենայն նախաբարացն հրամայէ մատուցա-
նել հանդերձ երկրպագութէ. զոր չառեալ յանձն ազ-
գին Բագրատունեաց, վասն լեզուն հատեալ՝ որում անուն
էր Աստղ՝ վասն պատկերացն անարգութէն, ոչ այլ իւիք
խոշտանգէ. քանզի յանձն առին ուտել ի զոհիցն և զմս
խոզի, թէպէտ և ոչ ինքեանք զոհէցին երկրպագութէ։
Վասն որոյ առնու ի նոցանէ ի բաց զնշխանուն զօրուն.
բայց միայն զթագակապ ասպետութէն ոչ հանէ ,, ։

Երրորդ անգամ կրեալ հալածանս Աբրշակայ ար-
քայէ ասէ խորենացին ՟բ. 24. վասն յանցանաց ինչ ենա-
նոսի նահապետին բագրատունեայ, և յաւէտ վասն քսու-
թէ Զուրայի ուշտունեայ, և յայնժամ յանձն առեալ ըզ-

կռապաշտութեէ. "Զայսու ժամանակաւ եղև մեծ ցասումն Աբրահամայ ի վերայ Ենանոսի ասպետի որումն Թագաւորի . . . Հրամայեաց տանջանս պիսպիս ի վերայ Ենանոսի կուտել. և վախճան գործոյն՝ կամ Թողուլ իսպառ զօրինս հրէութէ և երիկիր պագանել արեգական և պաշտել զկուռս արքայի, ընդ որով հարկեալ արքայ տացէ նմա զնոյն իշխանութէնն, կամ կախել զինայտ և ընաջինջ լինել աղգի դորա: Եւ սպանեալ մի յաղգակառացն առաջի նորա որում անուն էր Սարիայ, և առընթեր զօրպիսն մատուցեալ ի տեղի սպանմանն՝ որոյ անուանքն Սափատիայ և Ազարիայ, յերկիւղէ մահուան որդւոցն և ի թախանձելոյ կանանցն կատարէ զկամն արքային հանդերձ ամենայն ազգատոհմիւն, և յառաջին պատիւն իւր հաստատի,,:

Յայսմհետէ և հրէական անուանց նոցա փոխեալ ասէ խորենացի է. 63. "Բայց գիտեա, զի ի Թողուլն աղգին Բագրատունեաց զօրինս հարցն, նախ խժական ժառանգեցին յորջորջումն, Բիւրատ և Սմբատ, և այլ այսպիսի կոչմունս, զրկեալ ի նախնական անուանցն՝ որպէս կոչէին յառաջ քան զուբռնալն, Բագարատիա, Տուբիա, Սենեքերիա, Աշուդ, Սափատիա, Վազարիա, Ենանոս: Եւ հնձ Թուխ Թէ որ այժմ կոչին Բագրատունիք Բագարատ՝ Բագարիա է գա, և Աշուդ՝ Աշոտ. դոյնպէս և Վազարիա՝ Վաղարշ. որպէս Շամբատ՝ Սմբատ,: Բայց եղեն և ոմանք ի սոցանէ որք ոչ ուրացան զՀրէութէ, և արժանի եղեն յառաջ քան զամենայն նախարարս ընդունել զքրիստոնէութէն ի սրբոյն Թադէոսէ. "Որոյ եկեալ (ասէ խորենացին է. 33. Հեղեսիա) ի տուն Տուբիայ իշխանի Հրէի, զոր ասէին լինել յազգէն Բագրատունեաց, որոյ խնամեալ Աբրահամայ ոչ ուրացաւ զՀրէութէն ընդ այլ ազգականս իւր, այլ նոյն օրինաքն եկաց՝ մինչև հաւատալ ի Քրիստոս ,,:

Երեսէվ անչէնք ի Բագրատունեաց:

Ի սկսանելոյ այսր տումի ի ժամանակս Թագաւորութէ Աբրահամեանց Թէ քանի անձինք էլլեն երևելիք՝ յայտ եղև ի միջատակելոցս մինչև ցայժմ. յայսր սակս իրաւացի են գովութէնք խորենացւոյն ։. ուր գրելով առ Սահակ ասպետ բագրատունի՝ այսպէս ասէ. "Ձի և ազգի ևս նախնականի (Բագրատունեաց, որ եղև) և քաջ և արգասաւոր ոչ միայն ի բանս և ի պիտանաւոր խոհա-

կառավարիչս, այլ և՛ մեծամեծ և՛ բազում գործս արժանաւոր, զոր յիշատակութեամբ և՛ կարդի պատմութեան, յորժամ զորդի՛ն Հօրէ ծննդաբանելով ազգաբանիցեմք զբանդակն»։ Ալ որ առաւել գովութիւն է այսր տոհմի, նաև յետ բառնալոյ Թագաւորութեան Արշակունեաց ոչ պահասեցան՝ ի նմանէ անձինք երևելիք, որք և գլուխ եղեն ազգին յայնմ ժամանակի. որպես յետ հինգերորդ դարուն Սահակ աստիճան. յետ վեցերորդ դարուն քաջն կամ բազմայաղթն Սմբատ, որ եղև մարզպան նաև Վրկան աշխարհի. սոյնպէս և այլք ոմանք յետ հինգերորդ դարուն հրամանատար ազգին կարգեալք։

Ի՛նչ՛ի կարգս սոցա առաւելեալ գտաւ Աշոտ բագրատունի որդի Վասակայ, որ երևելի և սիրելի լեալ նոցին իսկ արաբացւոց՝ Մրուան ոստիկան նախքան զլինելն իւր ամիրապետ՝ կացոյց զնա հրամանատար՝ ի վերայ Հայոց՝ ի դ֊հ֊։ Յորժամ արաբացիք յաւուրս ամիրապետին որ կոչեր Ճաֆեր իւլ մանսուր, լսեալ մեզ ջափրէ, անշնաղին ծանրացուցին զՀարկն, իշխանք Հայոց խորհեցան ապստամբիլ. և յԱրդեմ դառնային Աշոտոյ՝ Թէնամիք նորա մամիկոնեան իշխանքն Դրիգոր և Դաւիթ կալեալ կուրացուցին զնա. բայց սերունդ իւր այնչափ երևելի եղև՝ մինչև պատմագիրքն զայս Աշոտ Համարկին իբր սկիզբն և նախահաւ նորոյ Թագաւորութեան՝ որ սկիզբն կալաւ՝ ի բագրատունեաց տոհմէն՝ ոչ միայն Հայոց, այլ և Վրաց. վասն ո֊րոյ գրէ Վարդան. «Սա է նախնի Թագաւորացն Հայոց և Վրաց»։ Եւ այսպէս կարդէ զազգաբանութիւն նորա. «Բայց ասելի է ասա զսկիզբն Թագաւորացն Հայոց և Վրաց որք՝ ի Բագրատունեաց անտի սերեցան. քանզի որպէս ասացաւն, զնոսին քաջին Վարդանայ իշխանք Հայոց կացին ըստ դիպելոյ միւսեւ՝ ի Սմբատ բագրատունի, և զնոսին նորա Աշոտ որդի Վասակայ զոր կուրացուցին մամիկոնեաքն։ Սմա լինին երկու որդիք, Սմբատ նախնի Թագաւորացն Հայոց, և Վասակ սկիզբն Թագաւորացն Վրաց... Խոկ Հայոց նախնւոյն Սմբատայ որդի Աշոտ մանկիր, որոյ որդին Սմբատ խոստովանօղն (Աղուաբաս ձայնեալ), որոյ որդին այս Աշոտ բարեպաշտ, որ անուանեցաւն իշխանաց իշխան՝ ի յԱլեհայ որդւոյ Վահէի հրամանաւ ամիրապետին Ջաֆէրայ»։ Սա է որ ասպա եղև Թագաւոր՝ կոչեցեալ։ Աշոտ. զոր և Ձոհաննէս կաթողիկոս գովելով ասէ. «Պատուական նագոյն և առաջին նա գտեալ եղև քան զամենայն նա֊

խաբարձիս Հայոց ,, ։ Որով տոհմն այն որ պատիւ ունելով Թագակալ ասպետուէ՝ զլուսիս այլոց պՀնէր Թագաւորական Թագուն , զկնի ժամանակաց վիւրն և վիւրացն պՀնեաց յորդւոց յորդիս հանապազորդեալ ընդ ամն 160. զորոյ զԹագաւորութիւնն բազում ամաՀ յառաջ գուշակեալ էր մարգարէութիւն նոյն ինքն պատմաՀարն Բագրատունեաց երանելին Մովսէս խորենացի 'ի նամակի անդ՝ որ առ Սահակ սպարապետն ։

Ծաւալումն տէրութեան Բագրատունեաց ։

Այեծութիւն այսր տոհմի ոչ սահմռկեալ ինաց միայն 'ի Հայս՝ Թագաւորելով 'ի Հիւրակ գաւառի, այլ բարգաւաՀեալ ծաւալեցաւ Թագաւորելով նաև յայլ տեղիս աշխարՀիս Հայոց, որպէս 'ի Վանանդ գաւառի. զի տոհմ Թագաւորացն Վանանդայ կամ Կարուց էր բագրատունի. Թագաւորելով նաև 'ի հիւսիսակողմն աշխարՀիս յանուն Աղուանից, զորմէ գրեցաք 'ի վերոյ։ Սոյնպէս ծաւալեալ գտաւ նաև արտաքոյ աշխարՀիս Հայոց յայլ ըզՔակս ազգս Թագաւորելով 'ի Վիրս և յԱբխազս։ Վասն Վրաց գրէ Վարդան 'ի նախադրեալ բանս իւր. " Զկնի նոցա (Սմբատայ) Աշոտ որդի Վասակայ, զոր կուրացուցին մամիկոնեանքն. սա լինէն երկու որդիք, Սմբատ նախնի Թագաւորացն Հայոց, և Վասակ սկիզբն Թագաւորացն Վրաց, որոյ որդին Աւրներսէհ. սորա որդի Աշոտ, սորա Բագարատ, որոյ եղբայրն Գոմար [1]. յետ սմա Դաւիթ որդի Բագարատայ, որ սպանաւ 'ի Գոմարայ Հօրեղբօրէն իւրմէ, որոյ որդին Աւրներսէհ, սորա որդի Դաւիթ, սմա եղբօրորդի Գուրգէն, որոյ որդին Բագարատ, որ առ իւր կին զդուստր Սենեքերիմայ Թագաւորին Վասպուրական. այս է կարգն ,, ։ Որով յայտնի կացուցանէ զսերունդն Թագաւորացն Վրաց լինել 'ի տոհմէն Բագրատունեաց. յորս Աւրներսէհ ձեռնտուութիւն մերոյ ազգային ։ Սմբատայ Թագաւորեաց 'ի Վիրս [2]։

Յակ վասն Աբխազաց Թէպէտ չունիմք ակնարկութիւն Թէ բացայայտ որպէս զՎրացն, բայց գրէ նա ինքն Վարդան. " Թագաւորեաց Աբաս որդի Գուրգենայ որդւոյ

1 Յայլսմ օրինակի գրի Գոթամ ։ Բագարատ յաղթէ Հրեից որք . . .
2 Ջբագրատուոնիս նաև Թոմա մեծ Ծոփեցի փոխադրեալ փախուցեալ դնէ 'ի Վիրս . "Յակ Թագաւորն Վրաց Թագաւորք եղեն յետոյ . . . և 'ի ձեռ զուշ անօրինաց փախուցեալ 'ի տունն Վրաց ,, ։

Աշտոյ ողորմածին 'ի վերայ Ափխազաց ,, ։ Եւ զայս քեզ 'ի պատմութիւն Մխիթարայ երիցու ' ։ Թող և զթագաւորութիւնն՝ զոր Ռուբէն սերունդ այսր տոհմին Բագրատունեաց կանգնեաց արտաքոյ աշխարհիս Հայաստանեայց 'ի Կիլիկիա ։ Ոչինչ այլ տոհմ նախարարութիւնե արդարև գտանեմք այսչափ ծաւալեալ յայլ և այլ թագաւորուես ։ յորմէ ստուգեալ արդիւնացեալ տեսանի նաև 'ի վերայ այսը տոհմի աստուածային օրհնութիւն ասացեալ առ նախնի նահապետ իւրեանց Աբրահամ՝ յիշատակեալ նաև 'ի խորենացւոյն ։ ։ ։ Թէ ,, Թագաւորք ազգաց 'ի քէն ելցեն ,, ։

Ծաւալեալ գտաւ այս տոհմ նաև խնամութիւ ։ զորոյ զառաջին խնամութիւնն ընդ Աբծրունիս պատմէ Թոմա արծրունի լեալ 'ի ժամանակս անդ կառավարութե յաւուրս Աբշամայ արքայի ։ զի յայնժամ, ասէ, Ջաջուռ արծրունի միջնորդեալ վերծոյց զնիանոս բագրատունի 'ի մահուանէ ։ և զդուստր նորա կուէցեալ Սմբատայ 'ի կնութ որդւոյ իւրում Սահակայ ։ ,, Եւ յա առաջին խնամանալ եղև ընդ միմեանս , Բագրատունեաց և Աբծրունեաց ,, ։ Թողեալ զայլ խնամնեալ նոցա ընդ Աբծրունիս՝ յորոց մի էր և Գրիգոր Դեբեկիկ արծրունի փեսայացեալ ։ ։ Աշտոյ բագրատունւոյ , և զխնամնեալն ընդ այլ և այլ նախարարս մեր , նաև ընդ թագաւորացն Աբշակունս նիս , քայց և արտաքոյ հայաստանեայց կալան սոքա խնամութե ։ այսպիսի է նաև ընդ կայսերականս ։ զի նախ քան զթագաւորելն Բագրատունեաց յորժամ Հաւաստիկան 'ի սկիզբն հինգերորդ գարու եկն 'ի Դուին , ,, էք , ասէ Ստեփաննոս ։ ։ և այր մն անդ 'ի կայսերական տոհմէ , Սեւա գա անուն , որ առեալ էր իւր կին 'ի բագրատունի տանէ զԱբուսեակ ։ և սակս այնորիկ բռնացեալ ունէր զյաւուլ մասն աշխարհիս Հայոց ,, ։ իբր սերփական համարեալ հնոյն բագրատունւոյ ։

1 Ա. Թոմայի մեծոփեցւոյ Ափխազաց ընդ վիրս գասին ։ ուր գրէ , Թէ Բագարատ Թագաւոր վեցաց ասաց առ Ջաղոմայ ։ ,, Ջի ուրեմն լեզուս է մեր ազգն ։ ։ ։ որ են այսքիկ ։ Դրալ , Օսէթ , Խիրալ , Խիկիրէլ , Ափխազ , Սնիքեր ։ Վացի , Սեսի ,, ։ Վարդան սուղ ինչ զնոին նախագրեալ բանիցն գրէ , Թէ յորժամ երեք որդիք Գագկայ Թագաւորին մերոյ կագէին վասն սահմանաց իւրեանց , ,, Գայ Թագաւորն Ափխազաց Գորգէ որդի Բագարատայ , որդւոյ Գուրգենայ , որդւոյ Աշտոյ ողորմածին , և առնէ իւրաւունս 'ի մէջ նոցա և գնայ ։ ։ Որով բանիս գարձեալ հայասատի Թագաւորքն Բագրատունեաց ԱՓխազաց ։

ԱՐԾՐՈՒՆԻՔ

Ծափոտն Աբծրունեայ։

Ալսկին ծագումն և սկզբնաւորուն այսր տոհմի է՛ի Սեւեբերիմայ թագաւորէն ասորեստանեայց, զոր և յայս առնն տուբք գիրն. "Աբրամելէք և Սաբասար որդիք Նորա (Սեւեբերիմայ) սպանին զնա սրով, և ինքեանք գնացին փախստական՛ի Հայս„. Եսայի լէ. 38։ Զայս յուշ առնելով Խորենացին ա. 23. պատմէ ասպա Թէ զինչ եղեւն յետ գալոյ նոցա՛ի Հայս. "Ուրեմն ամեն աւելի կամ պակաս յառաջ քան զԹագաւորուին Նաբուգոդոնոսոր, այ էր և Սեւեբերիմ կացեալ արքայ ասորեստանի, որ զՆերսեսազեմ պաշարեաց առ Եզեկիայիս Հրեից առաջնոր դաւ, զոր սպանեալ որդւոց Նորա Աբրամելայ և Սանասարայ՝ եկին փախստական առ մեզ. յորոց զմին յարևմտից հարաւոյ աշխարհիս մերոյ մերձ՛ի սահմանս նորին ասորեստանի բնակեցուցանէ Սկայորդին մեր քաջ Նաիրն (որ էր նախորդն առաջին Թագաւորին մերոյ Պարոյրայ), այսինքն զՍանասարն . . . իսկ Աբգամազանն[1] յարևելից հարաւոյ նորին կողմանին բնակեալ։ Ի սմանէ[2] ասէ պատմագիրն (Մարիբաս) լինել զԱբծրունիս և ըզԳնունիս„։ Զնոյն կրկնէ և է. 7. ասելով. "Եւ էին այս երկու տուընքս՛ի զաւակէ Սեւեբերիմայ, Աբծրունիս և Գնունիս„։ Ասի և այսր յիշատակութի՛ն այսորիկ միշտ մնացեալ կայր՛ի Հայս, որպէս և յայտ լինի յայս բան Յոհաննու կաթողիկոսի. "Զայսու ժամանակաւ մեծ իշխանն Աբծրունեաց Աշոտ՝ որ՛ի բոզոջոյ բուսոյ Սեւեբերիմայ արքայի էլեալ զգնայր„։ Մինչև նաև անուանս Սեւեբերիմ հասարակաց լինել բազմաց Աբծրունեաց։

Օտևաւորութի՛ն այսր ականատես տոհմի Աբծրունեաց գտանեմք յիշատակեալ առ Թոմայի արծրունեայ ա. 9.

1 Ի վերոյ կոչեաց Աբրամել, համաձայն անուանս Աբրամելէք՝ի սուբբ գրոց յիշատակել. իսկ ասա կոչէ Աբգամազան, որ գուցէ էր երկրորդական անուն նորա ստացեալ՛ի Հայս. Թերևս պղպղեալ ԱԲբայազան անուանեցս։

2 Ի սմանէ ասելով իմանայ ԱԲգամազանէ կամ ՅԱբրամելէքայ, և ոչ՛ի Սանասարայ. քայց Ըստ ասոյ արծրունւոյ առ Խորենացւոյն է. 55. ՛ի Սանասարայ ասէ զինքն սերեալ. "Հանգեաւ և զեա աբքայրորդի՛ի սերմանէ Սանասարայ. և ունիմ լիշանաւել ընդ եզբարս քո զարձն արքայի համբուրել, որպէս և անուանակոչեցաս եմ„։ Գիտելի է, զի Սաբասար և Սանասար նոյն անուն է։

յիշելով զխուրանն արծրունի զայրն երևելի յաւուրս Աբգարու Թագաւորին. զորմէ ստորև։ Եւ ի ՈՒ. 11. յաւուրս Ը. Արտաշէսի. յորոյ աւուրս զքանաի մի անձինս ի նոցունց յիշէ պատմելով. " Սահակ որդի Վասէի կացեալ ի գրան Արտաշէսի չքեղ երևելին Ռոմանէից՝ յոր ձեռս հաւատաց Արտաշէս զգաւառն Աղբակ. զի յայն վայր ոմանք ի զարմից Աշդահակայ մնացի քնակելին անդ, արք քաջք կորովալիկք և դիպաղեղունք. բայց նուաղեալ ազգին՝ ոչ զոք ունէին՝ որ կարօղ լինէին զգործ պատերազմաց վճարել, և զպաշտօն Թագաւորին... Բայց կին ոմն յազգէ Աշդահակայ քնակէ յամուրսն Ջլմաք, և ի Սրինգ, ի գաւառին փոքր Աղբակ. և անուն կնոջն Ջայլմար, որ և զամուրսն յիւր անուն անուանէ. և ունէր կինն գամձ բազում. և նորա գուստր մի Ասոյշ անուն։ Աշնոյ զնա Սահակ կնութեամբ հրամանաւ Արտաշէսի. և ինքեաւ զաշխարհն հաստատէ Սահակայ ի սեպհական ժառանգութիւն... Սահակայ առեալ ի պարգևի զաշխարհն Թողու զորդի իւր զԱշոտ զլեռնակողմանքն ա ռաջին իւրեանց տերութեանն չինել քնակել ժառանգեցուցանել զերկիրն վերատին ի ժառանգութեի իւրեանց ազգի ի զաւակ տանն Արծրունեաց... Եւ նուազեալ ազգին Արծրունեաց՝ ոչ զք ինայր, բայց մանուկ մի Համամ անուն՝ որդի Աբշարւի ծերոյ եղբօր Խուբենայ որ կայր ի դրան արքունի. զորոյ նախնեացն ջան և վաստակ յուշ արարեալ Թագաւորին զնախնեացն Համամայ՝ յառաջ մատուցեալ ի գահ և ի բարձ հայրենեացն ձգեալ զնա, ժառանգեցուցանէ զերկիրն Աղբակ, որպէս Սահակայ նոյնպէս և Համամայ։"

Խոյց յաւուրս Ը. Տիրանայ Թագաւորի ի ջրերոյդ դարու ե հաս այսր տոհմի միանգամայն ընդ տոհմին Ռշտունեաց մնգազսյուր զերծանիլ ի քնակինք լինելոյ. զի որ ունէր զհաղարապետութեի տան Տիրանայ արքայի՝ ներքինի ոմն "այր ժանտ չարաբարոյ, ասէ Թոմա արծրունի ՈՒ. 14. որոյ Հայր մարդպետ անուն էր, սա մատուցեալ առ Թագաւոր Տիրան սկսաւ քսութեաբ խօսել ի գաղտնիս ընդ տանէն Աբծրունեաց և Ռշտունեաց, զի հին ազգք ձոխք և երևելիք, քաջք և անուանիք և ամենեցուն պատկառելիք։ Աստ՝ թէ ոչ բանիսս կորուսանես ի միջոյ վերակուս նախարարութեիսդ, ոչ բարիոքագոյն քո թագաւորութեդ խորհիս խորհուրդ. զի ձեռն նոցա է ընդ Շապհ Հոյ արքայից արքայի"։ Յայնժամ, ասէ Բուզանդ ՈՒ. 18.

«Մի՛ահաղոյն զտոհմն Ռըշտունեաց և զտոհմն Աբծըրունեաց բառնային ՚ի միջոյ առանց ամենայն ՀՀետեւս և յանցանաց, մինչ անգամ և զեգան կոտրեցին ազգացն ,, ։

Յայնմ ժամանակի Արտաւազդ և Վասակ մամիկոնեանք զօրավարք Հայոց՝ սուսերամարդ՚ի վերայ հասեալք յարիչտակեցին զերկուս տղայս ամպրեայս, զՏաճատ որդի Մեհենդակայ ոչտունեայ և զՇաւասպ որդի Վահեի արծըրունւոց , և տարան յամուրսն Տայոց , և անդ նստան ամս բազումս մնուցանելով զմանկունսն . իսկ յաձել նոցա՝ զդստերս իւրեանց ետուն նոցա ՚ի կնութիւն . « Ուսոի , ասէ , գարձեալ միւսանգամ ազգն այն սերեցան ,, . մինչև յաւուրս Աբշակայ աքբայի դարձան յերկիրը իւրեանց։ Եւ այսպէս ՚ի միջի աստի Շաւասպայ սկսաւ նորոգ բազմանալ տոհմն Աբծըրունեաց ։

Ա՛նուն և պաշտօն Աբծըրունեաց ։

Խորենացին ե . 7 . ՚ի պատմէն կարգաւ զնախարարուԹիւնս և զպաշտօնս զորս սահմանեաց Վաղարշակ , ոչ գրե յայտնի Թէ զԱբծըրունիս կարգեաց ՚ի նախարարուԹիւն , այլ ՚ի յիշելն զնախարարուԹիւնս զԱբեղեան և զԴաբելեան , ապա ասէ . « Եւ զԱբծըրունիսդ գիտեմ ոչ Աբծըրունիս , այլ արծիւ ոռնիս , որք արծուիս առաջի նորա կրկեին ,, ։ Ցայս բան այնպէս ցուցանէ Խորենացին՝ Թէ Աբծըրունիք արդէն յառաջ քան զՎաղարշակ կոչեին այսպէս . իսկ Վաղարշակ յանուանէ նոցա յարմարուԹի իմն հանեալ ասաց ոչ Աբծըրունիս , այլ Աբծիւ ոռնիս . իբր զի կամարդէն արծիւ կրկեին առաջի իշխանին ՚ի ժամանակի որում ըստ յարմարուԹե անուան իւրեանց , և կամ ինքն Վաղարշակ կրկ սահմանեաց . նման առնելոյ անուանակոչուԹե գնուներաց ՚ի յարմարուԹենէ ձայնին առեալ . զորմէ զինի . և այսպէս Վաղարշակ յետ գտանելոյ զյարմարուԹի անուան ըստ գործոց նոցա , և զԱբծրունս կարգեաց ՚ի Թիւ նախարարուԹե . վասն որոյ և յաւելու Խորենացին . «Եւ են այս երկու տունքս ՚ի զաւակէ Սենեքերիմայ , Աբծրունիս և գնունիս ,, ։ Տուն ասելով իմանայ աստանօր զտունս նախարարականս , զի գնախարարուԹենէ է բանն . որպէս և յանուանէ յայտ արար վասն տանն գնունեաց լրկել նախարարական ։

Ո՛յս առաւել յայտնի գիտեմք առհասարակ ՚ի կենտագայ պատմուԹենէ ազգիս , որք զԱբծրունեաց տոհմն

դասեն ընդ մեծամեծ նախարարս . զոր օրինակ Դաղար՝ի յիւրէն գԱղան արծրունի՝ գովելով յիւրէ զտոհմին . " Որ էր ազգաւ՝ի հայակաց և յակնաւոր տոհմին Արծրունեաց ,, ։ Նոյնպէս և՝ի 220 . " Աւագքեր զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան յերևելի և յակնաւոր ազգն Արծրունեաց ,, ։ Աւասիկ՝ի խորենացւոյն սակս անուանակոչութեանէ այսր տոհմի , Թէ Թոմա արծրունի զերիս կարծիս բերէ վասն այսր ։ 8 . ասելով վասն Վաղարշակայ . " Ասեն զնա զինա Արծրունի , առաջին լինելով նորա՝ի դաշտավայրին Արծռուէ կոչելոյ . զարձեալ ըստ պատահմանն և տարբերութեան արծռունիսն կերպարանաւք (լինելոյ նոքա) . բայց ոչ գիտեմ Թէ յանուն աշխարհին՝ Թէ ըստ կերպարանին անուանեաց զնոսա Արծրունիս , երկրորդ՝ վասն բնակութեանէ նախնեացն նորա Ագլամէլեայ և Սանասարայ Արծն կոչեցին Արծրունիս [1] ։ երրորդ՝ վասն արիութեանէ քաջութեանն արծռաբերք (արծուաբար) քաջասրբատակս խիզախութեցն՝ի մարտս պատերազմացն՝ յարծուիս առակեցին զնոսա ։ Բայց Թէպետ և երկաքին պատճառք անուանակոչութեցն պատճանաբար վարկանելի է , որպէս իմաստասիրացն Հաճոյ Թուի , այլ ինձ զառաջինն ախորժելի զհաւատարմութեանն՝ի մէջ առնուլ ,, ։

Իշխանութիւն Արծրունեաց ։

Արծրունեաց իշխանք միշտ ընդ առաջին նախապատիւ իշխանս յիշատակին . որպէս ունիս տեսանել՝ի բանս մատենագրաց՝ի վերոյ յիշատակելոս . և առաւել առ Թոմայի արծրունւոյ , որ ասէ ։ 14 . " Իսկ՝ի տանէն Արծրունեաց ընդ մեծ նախարարսն Հայոց մկրտեալ լինէր Տիրոց որդի Բաբգէնի երկրորդի այր հզօ խոհական խորհրդական , հաստատ՝ի բանս . . . . . (որ) վասն հզոյ և ցած բարուցն կամաք յանձին կրել՝ ոչ յառաջագոյնն՝ի բարձր նախագահս ձգտանալ երևելեօքս . . . ոչ եթէ ոչ ունէր նազելի և բարձրագահ պատիւս՝ի մէջ մեծ նախարարութեցն Հայոց . զի ոմն ոք այլ ձգտ քան զնմանէ քերմայոյն , զոր համարձակախօսն եսայիաս հրապարակէ առ իարայելեան զարմն զսորայս մեծապատուութեն . այլ և մակեդոնացին Աղէքսանդրոս ոչ սակաւ դրուատեօք արձ-

1 Պարտ էր յատկապէս նշել այս նոցա Ագլամէլեայ և Սանասարայ պէս . " Վասն բնակութեն նախնեացն ,Արծն՝ կոչեցան Արծրունիս ,, ։

ձանապրէ՝ի մտեռանս գիւանապահ աւանդուին (Թերևս ըստ Մարիբասայ) զսորայս մեծափառ գլխաւորութիւն»՝։ Բայց չիք ուրեք գտանել Թէ Աբծրունիք զինչ գործ ունէին՝ի բանի կառավարութեան. միայն յաւուրս Վաղարշակայ՝ի խորհրդոցն գիտեմք արծուիկիսս լեալ նոցա, զոր ոչ միայն՝ի պէտս որսոյ արքային է իմանալ, այլ միանգամայն՝ի գործս զինուորութէ պատիւ ինն կալեալ ըստ ասիացւոց Թագաւորաց, որպէս և երբեմն էր տեսանել՝ի գործս զինուորութէ օսմանեանց կարգեալ յաւագագոյն բարձս զԴուռնաձի պաշին, և զՋաղարձի պաշին. այլ յետ Վաղարշակայ նաև այս անուն պատուոյ արծուիկիսը գոլոյ ոչ յիշատակի ուրեք։ Ապա պարտ է ասել, Թէ մեծութէ իշխանութէ Աբծրունեաց՝ առեալ էր՝ի տանուտիրական պատուոյն, այսինքն է՝ վանս տէր գոլոյ ընդարձակ երկրին Վասպուրականի. յորում էին այնչափ բերդք զօրաւորք, աւանք և շէնք. վանս որոյ և Յովհաննէս կաթողիկոս զԱբծրունեաց իշխանութէն մեծապատիւ յուցանէ ասելով. «Պայազատէ զիշխանական պետութէն գայն Գրիգորայ Դերենկին կոչեցեալ. և Թէ, զինչ Դերենկին «պայազատէ զիշխանութէն մեծ Աշոտ որդի իւր»։ Յորժամ մեռանէր իշխանն Վասպուրականի՝ որդիք նորա բաժանէին զաշխարհն՝ի մէջ իւրեանց, բայց մին լինէր գլուխ և կոչէր Վասպուրական էշխան. որպէս է տեսանել յայս բան Թոմայի արծրունւոյ Ջ. 1. «Ելեալ իշխանքն յանցնիւբ տեղեաց գնացին յանդիման լինել նմա. Դերանիկն, տէր Գագկի և տէր Գրիգոր և միւս այլ տէր Գրիգոր վասպուրական իշխան»։ Ըստ այսմ և՝ի Ջ. 2. կոչ «Չիշխանն վասպուրական զԴերանիկին»։ Եւ այս գլխաւորութէն էր՝ որ կոչէր իշխանաւրէ. «Եկին այնուհետև (ասէ Թոմա արծրունի Ջ. 2. յետ սպանութեան նեղոյ Թշնամեաց զԴերանիկին) Շապուհ որդի Թագաւորին Աշոտի. և ետ զիշխանաւրէն (այսինքն Վասպուրականի) ՝ի ձեռս Աշոտի որդւոյ Դերանկին»։ Իսկ մնացեալ երբք որդիք այսր մեծի Դերանիկ իշխանին բաժանեցին զաշխարհն՝ի մէջ իւրեանց յերիս մասունս. Աշոտ որ էր անդրանիկ նորա՝ բաց՝ի յերկրէն էառ, ասէ Թոմա արծրունի Ջ. 4. նաև «զգաւհն նահնականն իշխանութէն, զոր և զանազան անուամբ՝ի նոյն գլուխս կոչէ Ճոխաւրէ էշխա-

1 Ա յս Տիրոջ իշխան այն է՝ որ ընդ սուրբն Գրիգոր՝ի կեսարիա, որպէս այլ մեծամեծ Նահապետս տեսաւ ըզ- ասէ անդէն։

նախն փառնէալոցն. Իշխանական պատուոփրոցն. Իշխանաբանական փառնէալոցն՝ ։ Իսկ ի տարաժամ մեռանելն Աշոտոյ՝ " առնուս, ասէ զ. 11. գԻշխանուհին վասպուրական տերութեանս Գագիկ եղբայր նորին. և եկեալ ի մի վայր Գագիկ և Դուրգէն եղբարքն համահաւք և միով մօր ծնունդք՝ յերկուց քաջատոհմիկ գահակալութենէ Սենեքերիմայ և Դաւթի ² ... զբոլոր երկիրս իւրեանց տերութենէ բաժանեցին յերկուս մասունս ³ ,, ։

Ի սմին Վասպուրական աշխարհի կէին և այլ կրկին նահապարութիքը երևելիք՝ անուանեալք Ուշտանեաց և Ամձաձաց. բայց յետ Դեբանկին քանզի որդիք նորա Աշոտ, Գագիկ և Դուրգէն զօրաւորք եղեն՝ և այն երկիրքը անցին ընդ իշխանաւք Վասպուրականի, որպէս յայտնի գրէ վանն Ամձաձաց Թոմա արծրունի զ. 10. "Էր ընդ իշխանսն (Հայոց) և մեծ իշխանն Վասպուրական Աշոտ որդի Դեբանկին, (այս է վերոյիշեալն Աշոտ), և ընդ նմա Գրիգոր իշխանն Մոկաց և զօրք Ամձաձաց. վասն զի իշխանին Մոկաց և իշխանն Ամձաձաց նուաճեալ կէին ընդ ձեռամբ վասպուրական իշխանուհին ,, ։ Եւ ի զ. 4. զԴուրգէն գէն զեղբայր նորին Աշոտոյ կոչէ Ամձաձաց ոչ. և գկնանգուար բերդն կոչէ Էջ աղաբն ։ Իսկ վասն Գագկայ գրէ Ե. 2. յերկրորդելն զվարս նորա. "Ձիկըն ձգեալ կորզէ զզաղումբ գանձս և զմեծս յօտար ազգաց, տիրեալ բերդից և գաւառաց նոցա առաւել քան զհարս իւր ,, ։ Մանաւանդ թէ զայս յատաջանալ Գագկայ պատճառեալ ասէ գժգոհութենէն որ ի մէջ ։ Սմբատայ արքային և տոհմն Գագկայ՝ որ էր քեռորդի նորին Սմբատայ ։ Զի Ե. 3. յետ պատմելոյ թէ Գագիկ ուշերկոյզ զօրագլուխս զոմիքաջ և մեծիմաստ թադէոս անուն, կարգեալ ի վերակացութիւն գաւառին Ճուռաշայ և Շամիրամ բերդի, և ի ձեռն նորա ցրուելոյ զայլազգիսն, և օրըստօրէ յառաջանալոյ զզաղումբ տեղիս գրաւելով ի ձեռաց պյուզեաց՝ ասէ. " Զայն տեսեալ Սմբատայ թագաւորին Հայոց՝

1 Որպէս յասէն. " Բայց Ապուսմրուանն երկիրքն գայր զիշխանութիւնն ծնանել գահակալել ի վերայ աշխարհս ,, ։ Եւ ի գլուխ Ե. կոչէ "Իշխանական Տոհմութենէ բարձրագոյն ,, ։

2 Զի կին Դեբանկինն և մայր Գագկայ և Գուրգենայ Սոփի անուանեալ՝ էր գուստր ։ Աշոտոյ բագրատունւոյ նախ թագաւորի. և զի Բագրատունիք սերեալ էն ի Շամբատայ երբայեցւոյ, որ և բան ամանց սերունդ էր Դաւթի արքայի, վասն այնորիկ ի մեր կողմանէ ի Դաւթայ լինել հաստատի ։

3 Վասն այսր կրկին բաժանմանն թէ ո՞րպէս էառ, կարես տեսանել ի մեծ Հայս 157. 158։

ոց՝ մխայեալ ընդ իրն, և զարթուցանել զանայր զայնազգին կրկին անգամ 'ի վերայ իշխանին (Գագկայ), և իբրև այնու ոչինչ կարաց ստանալ, ապա պատրուգական բանիւք և խոստմամբք դաւաճանել զայր՝ զոր կարգեալ էր յամրոցին Ամիւկ, որումմանուն Ձանաչիւբ Ապուսահր 'ի տանէն Վահունեաց... (որ) տայ զբերդն 'ի ձեռս Սմբատայ Թագաւորին Հայոց. և Սմբատայ առեալ զբերդն՝ գարձեալ վաճառէ իշխանին Գագկայ, և առնու 'ի նմանէ գանձս բազումս. և յայնմ օրէ անկանի կասկած չարուէ յիւրաքանչիւրսն միտս. վասն որոյ և ոչ սիրով խաղաղութեամբ զմիմեանցիւք Թեակոխէին, որպէս յառաջագոյնն»: Ա֊յլ յամենայնի՝ զոր գրէ արծրունին Թոմաս 'ի մեզայդրութէ Սմբատայ և յիւրաւունս Գագկայ, կայ միշտ կուսակցութիւն աղքային իւրոյ, և պակասի անաչառութէն. զոր քաջ իմանայ՝ որ ընթեռնու 'ի միւս կողմանէ և զանայ Յոհաննու կաթողիկոսի:

Թագաւորութիւն Աբծրունեաց:

Ա յս գժգոհուէ էր՝ որ ետ հնարել կանգնել նոր թագաւորութիւն 'ի Վասպուրական. և պատճառ այնորիկ էր վասն Նախջուան քաղաքի, որպէս յիշատակեալ է մեր 'ի մեծ Հայս 'ի Թղէ. 219. 'ի Յոհաննու կաթողիկոսէ. այլ Թոմա արծրունի է. 3. ոչ զգժգոհութէն և ոչ զմխայնս դնէ պատճառ, այլ յետ պատմելոյ զըմբռնել ա. Սմբատայ աղքային՝ Յուսուփ ոստիկան զԳագիկ եգիտ, ասէ, անձն յորմար Թագաւորուէ. "Տեսեալ (Յուսէյն) եթէ ոչ ոք է որ կարողանայ տիրել և ունել զաշխարհս Հայոց, բայց միայն Գագիկ, զորոյ զվոթձ առեալ գիտէր զնա այն պիսի այր. զոր ոչ Թողեալ 'ի կամս անձնիշխան կամացն, Թագաւորեցուցանէ զնա 'ի վերայ Հայոց. և եգեալ Թագ 'ի գլուխս նորա զուտ ոսկի բազմաքուեա յօրինմամբ հիւսեալ մարգարտովք, և մեծագնի ակամբք պատուակաս նօք... (և զպատմուճան և զգօտի սուսերաւն) ոսկեհուռն փայլեալ զարգու, որ 'ի վեր քան զմիտս և զան անցանէ պատմողաց... Եւ այսպիսի փառաւորութէ՛ն հաստատեալ տայ 'ի ձեռս նորա զբոլոր Հայաստան աշխարհս հանդերձ մեծամեծ քաղաքօք և ամենայն վայելչութէ՛ն»: Ապա և վասն Ջաֆր ամիրապետին գրէ՝ Թէ առաքէ "Նմա Թագ և հանդերձս զարդուց զարմանալիս. և յանձն առնէ նմա զՀարկս արքունի»: Նաև կրկին անգամ բերեալ, ասէ,

"Թագ և Հանդերձս պատուականս յարքունուստ (այս ինքն 'ի Ջաֆրայ), և չքեղացուցանէին զԹագաւորին Գագիկ կրկին փառաւորութիւն առաւելեալ քան զոր վերագոյնն ասացաք ,, ։

Եւ որպէս յայիրապետէն Նոյնպէս և 'ի Յուսիպ կրկին անգամ ասել պակասել . զի յորժամ յուԹամեան քանտէն էառ իշխանութիւն 'ի վերայ Պարսից և բոլոր Հայոց՝ " առաքէ, ասէ, և Թագ և Հանդերձս երևելիս Թագաւորին Հայոց Գագկայ , Հաստատել 'ի ձեռս նորա զՀայաստան աշխարհս ,, ։ Որով ըստ Թոմայի չորից լինի պակասել . այլ Յոհաննէս կաԹողիկոս երիցս միայն ասէ . այսինքն է՝ երկիցս 'ի Յուսիպայ ոստիկանէն՝ և երրորդ անգամ 'ի Փարկիկի ոստիկանէն պակասել զորմէ գրէ . " Բերեալ Թագ զնեբ 'ի գլուխս Թագաւորին Գագկայ . երեքկին զնա պակասել 'ի վերայ Հայաստանեայցս ,, Ա. յս բան տայ մեզ իմաստասիրել, Թէ Յոհաննէս կաԹողիկոս որ ըստ այլ մասանց անհամաձայն է ընդ Թոմայի արձրունւոյ, միաբան նի յայսմ . զի զԳագիկ ոչ ասել 'ի վերայ Վասպուրականի՝ այլ 'ի վերայ համօրէն Հայաստանեայցս Թագաւորեալ ասէ՝ յայտ է Թէ 'ի ձեռն ասոնցայն Սմբատայ՝ զոր և Հաստատել 'ի գրելն վասն Յուսիպայ, Թէ յորժամ կրկին եղև ոստիկան՝ Հայցեբ 'ի Գագկայ տալ զՀարկս աշխարհին, այլ և զընծայս վասն անձին . "Յուշ և ս նմա արարեալ միանգամայն իսկ զերեսփոխս Թագակապութենն՝ և ձեռնէրեց զնա առնել առ 'ի տիրելոյ նմա բոլոր Հայաստանեայցս ,, ։ Ա.յլ պարտ է ասել Թէ այս էր միաք և բանք Յուսիպայ որ կամէր յաւէտ սովին պատճառաւ խռովութենէ արկանել 'ի մէջ երկուց Թագաւորաց . բայց իրօք միայն 'ի Վասպուրական իշխեաց Գագիկ . զի ազգն զՄբաատ ։ . յետ նորա զՆոտ զ . զորդի նորա երկաթ յորջորջել՝ Ձմնաչէբ իւր Թագաւոր Հայոց . զայս ոչ միայն Յոհաննէս կաԹողիկոս , այլ նաև յետագայ պատմագիրք Ասողիկ , Կիրակոս և Վարդան այսպէս պատմեն ' ,

' Վասն որոյ ոչինչ իւրք միաբանին ընդ Ոչխարիս պատմութեն այս բանք Թոմայի արձրունւոյ. որ զԳագկայ խօսի իբրև զԹագաւորէ Հայոց ասելովն. Յ.ՈՒԵ գաբձնալինքն արքայ վառեալ 'ի վեն և 'ի զորգ անհաւատ քաջուն , միապետեալ զբոլոր աշխարհս Հայաստան . . . իբրև զնոյն բազմացուցանէ զնա զորդի նորա Աբուսահլ , ։ Եւ 'ի վ. "Յայ (Յուսուփ) 'ի ձեռս արքայի զաշխարհս Հայոց և Վ.րաց ,, ։ Ա.յլ յայտնի է Թէ Գագիկ ոչինչ իշխանուն կալաւ 'ի վերայ Վ.րաց ։ Բայ այսմ ասէ և է . զ . վասն Աբասայ զորդւոյ Սմբատայ . "Կամեցեալ յառաջագոյն քան զաքսորսան մեծի Թագաւորին Հայոց Գագկայ անձին ինչ առանձնալ պարծանս ,, ։

Խակ Թէ՛ի պատճառս զայս օրհնակ Թագաւորելոյն Գագկայ և կուսակից Յուսիկայ լինելոյ՝ անցին այն անցք աղէտից յայսմեամ՛ի Հայաստան, յայտ է՛ի բանից Յովհաննու կաթողիկոսի՝ որ զնոսի՛ի զղջումն եկեալ ասէ զնա. "Զայս ապա տեսեալ և զմտաւ միանգամայն ածեալ Թագաւորն Գագիկ Հանդերձ եղբարբն իւրով Դուքգենաւ, իբր Թէ՛ի ձեռանէ նոցա և՛ի կարապետելոյն այս ամպրոպ չարուէ զեղեալ չուրջ զեկեղեցեաւն Քրիստոսի, և զԱստուածոյ հաւատացեալ ժողովրդովք, այլ և զիւրեանց և անձանց զխարդաւանական մեհեանս կարծիս՛ի մոխ եդեալ, և զանգիտեալ յերկիւղէ բռնադատին, այնուհետև աստուածայինին գոգցես երկիւղիս կշտամբեալ և յանդիմանեալ զանձինս իւրեանց և զղջացեալ՛ի սիրտս իւրեանց, ապաշխարելոյն ապաշխարողական կարգ,,: Ապաշխարողական կարգ նախնեաց քանզի հրաւարակաւ լինէր, չմնորԹէր զայդ ստուԹ ասել պատմիչն. որոյ և գոլով կաԹողիկոս՝ գուցէ ինքն էր եդեալ զայն կարգ ապաշխարուԹե՛ի վերայ Գագկայ և Դուրգենայ: Այլ այս ԹագաւորուԹե՛ն Աբծրունեաց կամ Վասպուրականի՛ի վեց Թագաւորս միայն կալաւ պայազատուԹե՛ն. յետ այնորիկ տուեալ զերկիրը իւրեանց Վասլե կայսեր, ինքեանք՛ի սկիզբն մեհեանաներդոյդ գարու փոխադրեցան՛ի փոքր Հայս՛ի Սեբաստիա՝ ուր՛ի տիրապետեին Յունաց եղին զնմն գլխաւոր զոր Լաստիվերտցի Թ. կոչէ Գոռոոսպէկ Վասպուրականի:

Երկիր Աբծրունեաց:

ՊատմուԹի՛ւք առ հասարակ յայտ առնեմն զՎասպուրական նահանգն լինել սեփական երկիր Աբծրունեաց. բայց ոչ խորենացին և ոչ այլ ոք պատմագիր նշանագրեն ուրեք Թէ երբ էանց՛ի ձեռս սոցա այս նահանգ՝ որ մեծագոյնն է քան զամենայն նահանգս մեծին Հայոց. միայն խորենացին՛ի յիշելն ա. 23. Թէ՛ի գալ սոցա՛ի Հայս՝ Սկայորդին մեր որպէս զնակեցոյց զՄանասսէ մերձ յասորեստան, նոյնպէս և զնահապետ Աբծրունեաց զնակեցոյց առ նոսա, և որպէս գիտեմք զնահուԹի՛ն սանասարեանց լինել յԱղձնիս, նոյնպէս և զսոցա զնակուԹիւն անկ է

1 Տես վան այսր՛ի մեծ Հայս՛ի ԹղԹ. 159:

դնել ՚ի Վասպուրական. մի՝ զի սահմանակից է Աղձնեաց, և երկրորդ՝ զի որպէս ասացաք, ՚ի սկզբանէ անտի ՚ի յիշեցն զՎասպուրական՝ սեփական դնեն Արծրունեաց. մինչև երբեմն զՎասպուրական կոչել Աբծրունեաց աշխարհ. զոր օրինակ է տեսանել առ Ագաթանգեղոսի յԱրշ. և առ Լաստիվերտացոյն Թ։

Ի.յլ զարմանք են, զի զԱրծրունեաց անունն փոխանակ յերկրէն Վասպուրականի գտանելոյ՝ գտանիմք յԱղձնիս. որպէս ցուցանէ մեզ նախագրեալ քան Թոմայի արծրունւոյ, նաև այլ քանք և անուանք տեղեաց, զորոց տես ՚ի մեծ Հայս յԱբրէն գաւառ Աղձնեաց։ Վասն որոյ ՚ի զանազան քանից Թոմայի արծրունւոյ և խորենացւոյ և այլոց՝ Թուի ինձ ՚ի սկզբան անդ յԱղձնեաց նահանգի քնակեցուցեալ մերոյս Սկայորդւոյ զերկոսին որդիսն Սենեքերիմայ, ՚ի կողմն ինչ զՄանասար, և այլ ուրեք զնպրամէրեք. ապա մեծին Տիգրանայ զՀամօրէն Աղձնիս կամ գԵթ ըստ մեծի մասին պարգևեալ ՚ի ժառանգութեի սերնդոյն սոցա [1]։ Սերունդ սանասարեանց ելից զբեառն Սիմ որ ՚ի Տուրուբերան, որպէս յայտ առնէ խորենացին ։ 23. ապա յորժամ Վաղարշակ արքայ ՚ի սերնդոց սոցա կարգեաց իշխեսքեն, յայնժամ պարգևեաց նոցա ընդ Սիմ լերինն նաև զԱբձն կամ զԱբրէն գաւառ շրջակայիւք, որպէս ասէ խորենացին ։ 8։ Իսկ յորժամ նա ինքն Վաղարշակ ՚ի սերնդոց Աղբամէրեքայ զԱբծրունիս կարգեաց ՚ի նահարարութեի, յայտ է թէ պարգևեաց նոցա և գերկիր ինչ, որ գուցէ ըստ մասին էր յԱղձնիս և ըստ մասին ՚ի Վասպուրական. որովհետև Թոմա արծրունի վասն Աղձնեաց գրէ ՚ի ձեռաց Աբծրունեաց հանեալ և յարքունիս գրաւեալ Սանատրուկայ, ապա ։ Արտաշէսի անդրէն առ նոսա դարձուցեալ. յետ այնորիկ հետզհետե ընդարձակելոյն զսահման իւրեանց, տիրապետեալ վասպուրական աշխարհի, յոյր սակս ոչ գտանեմք որոշ ինչ առ մատենագիրս [2]։

1 Որպէս յայտ առնէ Թոմա արծրունի. զոյզ զբանս տես ՚ի մեծ Հայս ՚ի Թղթ. 64։

2 Նա Թոմայի արծ. ։ 6. գանի բան ինչ, ուր ցուցանէ Թէ այլ էր տէրն Աղձնեաց նախարարացն վասպուրական իշխան, և այլ էր տէրն վասպուրական իշխան, և այլ էր տէրն Աղձնեաց. " Իբրև յանդիման եղեն, ասէ, գնապանքն մեծ իշխանին Աշոտոյ ... համագունդ ժողով առնէր ամենայն աշխարհին, և ամենայն փութանային և վաղվաղակի իւրաքանչիւր զզոքք անգր հասանէին ... և ՚ի տունէն Աբծրունեաց վաշան և վասակ ... սոքա ամենեքին արք վերշանան ՚ի տանէն Աբծրունեաց զզոքն իւրեանց ,, ։ Այլ ասելոյն մեծ իշխան վասպուրական տէրունէն՝ պատ է խմանալ զանունս տէրն յԱբծրունեաց տունէն, որ և էր իշխող վասպուրա-

Ոսոան և Հրիփ Աբծրուհեաց։

Չագամակերտ էր ոսոան Աբծրունեաց ըստ Թոմայի աբծրունւոյ. այլ զնաև զնախաձաւանն կոչէ Ոսոան Վասպուրականի, երևի Թէ երբեմն այս և երբեմն այն եղև ոսոան Աբծրունեաց[1]։ Խակ չերիմ նոցա էր ի մենաստան խաչին որ ՀԱղբադ գաւառի, նաև նախ քան զԹագաւորսն Աբծրունեաց. տես և ի մեծ Հայս 207 զբանս նորին Թոմայի. յաՀ և զայս զոր ասէ Ջ. 12. վանս Գրիգորի վասպուրականի. " Տարեալ Հանգուցանեն զնա ի վանս սրբոյ խաչին ՀԱղբադ գաւառի,,։ Եւ այս Գրիգոր էր յաւուրս Բուղայի նախ քան զԹագաւորսն Աբծրունեաց։ Եւ Ջ. 13. գրէ վանն Գուրգենայ արծրունւոյ. "Տարեալ Հանգուցանեն ի տեղոջ Հանգստարանացն իւրեանց ի սուրբ խաչի վանս,,։ Եւ վանք էր ՀԱղբադ գաւառ ի գիւղն Օսի, որպէս գնեն նա ինքն Ջ. 11. յասելն վանն Աշոտոյ իշխանին Վասպուրականի, որոյ քեռին էր նա. Սմբատ Թագաւոր. "Եւ տիկինն Սեդայ առեալ զգի նորա տարեալ Հանգուցանեն ի ՀԱղբադ, ի գեօղն Օսի, ի վանս սուրբ խաչին,,։

Եւ յետին մատենագիրս գտանեմք Թագեալ նաև ի սուրբ խաչն որ ՀԱղթամար, որպէս գրէ ընդարձակող Թոմայի արծրունւոյ վանս Աբգէմեհի արծրունւոյ, զոր երբեմն կոչէ կուրապաղատ, և երբեմն արքայ. "Եւ ինքն բարերք ծերունի Թէ ննջեաց առ Հարս իւր, և Թագեցաւ ի նոյն աստուածաբնակ կղզոյն ՀղթամարՀ ի գուռն սուրբ խաչին... և էր Թուականն Հայոց ՄԻՆ վոխեցաւ արքայն Աբգէմեհ ՀՀ. և սրբատեալ ամուսին իւր... եգաւ ի նոյն տապանի,,։ Բայց վրիպակ պարտ է համարել զգան Մատթէոսի կէ. որ զգերեզմանս տանն Աբծրունեաց գնէ ի Վարագ, շինեցելով զվանս սրբոյ խաչին ՀղբազաՀ ընդ Վարագայ, յասելն. "Հայսմաւմի մեռաւ Սենեքերիմ Թագաւորն Հայոց, և տապան գնա ի գերեզմանատունն Հարց իւրոց, ուր առաջին Թագաւորքն Հայոց Թաղեալ կան ի Վարագ ի վանքն սրբոյ Նշանին, և անդ Թաղեցին զՍենեքերիմ ընդ Հարան իւր,,։ Եւ Թէ և զՍենեքերիմ

1 Չյաանս Թոմայի արծրունւոյ տես ի մեծ Հայս ի Թղթ. 206 և 217։

կանի. խակ այլքն էին ի նոյն առՀմն Աբծրունեաց, բայց չէին գլխաւորք իշխողք Վասպուրականի։

քերիմ դիցուք ի Վարագ թաղեալ ըստ բանի նորա, բայց առաջին թաղաւորք Աբծրունեաց ընդ ին անդ թաղեալ։

Տեղւ ֆՂբեղ և բանակելոյ Աբծրունեաց։

Աբծրունեաց ձմերոց էր աւանն Մառական. որպէս յայտ առնէ Թոմա արծրունի ընդ զմահ Դրիգորի վասպուրական իշխանի. "Եւ մեծանուն իշխանն ըստ նախնական սովորութեան յաւ արարեալ ընդ ձորն Ընձաձոյ՝ եկն ի խերական կոչեցեալ գաշտ, և կամէր փութ թապէս անցանել ի Ձերոյս արքունի ի գաւառն Ճուռաջ յաւանն Մառական „։ Նախնական սովորութիւն ասելով յայտ առնէ, թէ նախնիք նորա անդ նստէին ի ձմերայնի. որպէս և առաւել յայտ առնէ ի գ. 2. կոչելով Ձերոյ վասպուրական իշխանաց „։ Թէպէտ և ոչ յիշէ զմառական զանուն տեղւոյն. որպէս և յասելն. "Ի գնալ Դերանկին ի Ձերոյս վասպուրական իշխանացն՝ Ձմեռնապարհ արարեալ ընդ ձորն Ընձաձոյ „։ Իսկ տեղի բանակ կազմելոյ Աբծրունեաց՝ էր գլուխ Օձ ձորոյ, ուր ապա չինեցաւ Գագկաբերդ. "Որ տեղի բանակի զաշխ (զակիշ) առնելոյ էր տանն Աբծրունեաց „. Թոմա արծրունի գ. 11։ Տես զայս ա նուն ի մեծ Հայս 227։

Երևելի անձինք յԱբծրունեաց։

Խազմուճ գտանին յԱբծրունեաց տոհմին երևելիք ի սրբուճ և ի նահատակուճ՝ յորոց յաւուրս Վարդանանց ընդ կացեալ նախարարն յիշէ Եղիշէ ի 343. "Յազգէն Աբծրունեաց՝ Վերշապուհ և Շաւասպ և Ընգին և Մերհրուժան և Պարգև և Տաճատ „։ Ստորև յիշէ. "Յարծրունեաց տոհմէն Ապրքամ „։ Երևելին եղև և Ազան արծրունի, որդի Վասակայ եղբօր Տաճատայ և Գոտորդի, այնչափ ձգնասէր և աղօթասէր, մինչև զվարս նորա նահատակութեի կոչել Ղազարայ Թղթ. 15. " Եւ կատարեալ զընթացս նահատակութեիե իւրոյ հանգչէր. և եղեալ ի մատրանն ի յԱպահակաբերդ. որոյ յիշատակարանն ընդ անուանս վկայիցն սրբոց պատմեալ քարոզի „։ Եւ Սահակ և Համազասպ արծրունիք նահատակեալք ի 785. գուշակեալք ի խոբեճացոյն, զորս ոտնի եկեղեցիս Հայաստանեայց։

Նոյնպէս բազումք երևելիք ի քաջութե, և ի կառավարութեան որպէս խուբան զոր և խուբէն կոչէ Թոմա

արծրունի ՟ա. 9. զօրավար Աբգարու Թագաւորի, "Ա՛յր խնաստուն և քաջամարտիկ, կորովի յաղեղն և՛ ի զէն և յաստղագէն,,։ Զպատմութիւն այնր ժամանակի պանծալի կոչէ, "սակս բարձրագահ Համաթոռ Ձոխագլխի ազգապետուն Աբծրունեաց, մեծ զօրսի Սենեքերիմայ Ծնողոց, որ ըստ աՀման և սերելոյ նախարարութեց եկեալ Հա-յաստալ՛ի Քրիստոս. ընդ որում և մեծ իշխանն Աբծրունեաց Խուրան, և մկրտեալ՛ի ձեռաց Թադէոսի առաքելոյ, որ յետ Հաւատոյն որ՛ի Քրիստոս՝ բազում ուղղութիւն և երկիւղածութիւն կրօնս ըստ արժանի Հաւատոյն ցուցեալ գրեթէ՛ի ծայրս առաքինութեն զաՀուն Հաւատոյն տարեալ Հասուցեալ,,։ Պատմէ ապա թէ այս Խուրան տեսեալ զօրգիսն Աբգարու խոտորեալ՛ի Հաւատոյ՝ նախ էանց առ Ձոյնս. ապա լուեալ զգնացն Հեղինեայ տիկնոջ Յերուսաղէմ, գնաց անդ. և յաւուրս սուվոյն առեալ զօսկի տիկնոջն և փութ՝ գնաց Յեգիպտոս գնել ցորեան, և բերեալ բաշխեաց օրջոց և այրեաց, և անդ Յերուսաղէմ մեռաւ։

Յետ լինելոցն զարուն և՛ի սկիզբն տասներորդինքան զաւգուստ գերագոյն գոտւ Դեբարիկին, զորմէ Թոմա արծրունի ՟է. ւ. "Առաւելոյր և առատանայր օր ըստ օրէ առ շինուի և խաղաղուի աշխարհիս շինել և տածել և խնամել զաշխարհս. և դադարումն լինէր յաւուրս սորա հինից և ասպատակաց՝ի վերայ երկրին. և քաջավայելչապէս բաւ ըստ ձևամանայր կարգք սրբոյ եկեղեցւոյ Քրիստոսի, և երկիւղ և կասկած և ոչ ուստեք։ Եւ ծնանի նորա երիս որդիս Սարգիս որ և Աշոտ լիւղ. Թուականութ՝ Հայոց, Խաչիկ որ և Դաւիթ լիւղ. և Դուրգեն. մանկունք կայտառք և գեղապանծք և բարեհաճք, և ամենեցուն ցանկալիք. ծնաւ և երիւս դստերս,,։

ՍԻՒՆԻՔ

Ծագումն և երկիր Սիւնեաց։

Ի՛ մի՛ի հին Հայկազեան զարմ, զի Խորենացին ՟ա. 12. ՛ի Յիշելն զԴեղամ և զԴեղաբունի զերկիր Դեղամայ, ասէ. "Այս ծնաւ զորգի իւր զՄիսակ, զայր սեգ և անձնեայ, բարեգեղ, կորովաբան և գեղեցկազեղն. սմս զմեծ մասն յընչից իւրոց տուեալ, և ծառայս անձինս

բազումն, սահմանս հատանէ նմա ժառանգութե՛ւ ի ծո-
վէն (Գեղամայ) ընդ արեւելս, մինչև ցդաշտ մի՝ ընդ որ
գետն երասխ հատեալ զբարձաձաս լերանց՝ անցանէ ընդ
խոխոմաձիւկս և նեղս ահագին ղնդնդմամբ իջանէ ի
դաշտն։ Ասա քնակեալ Սիսակ ընտ չինուք զսահմանս քնա-
կուե՛ւ իւրոյ, և զաշխարհն կոչէ իւրով անուամբն Սիսական։
այլ Պարսք յստակագոյն իակ Սիսական կոչեն»։ Որպէս աշ-
խարհն նոյնպէս և իւր տոհմ կոչեցաւ Սիսունք, բայց նա-
խարարութե՛ւն տոհմիս սկսաւ ի ժամանակէ անտի Վաղար-
շակայ, որպէս ծանուցանէ անդէն Խորենացի. «Ի սորա
(Սիսակայ) ծննդոց աստ ուրեմն Վաղարշակ ... գտեալ
արս անուանիս, տեարս աշխարհին կարգէ, որ է Սիսա-
կանդ ազգ. և զայս առնէ Վաղարշակ՝ի պատմուձէն (Մ՝ա-
րիքասայ) ստուգեալ»։

Այլ այս նախարարութե՛ւն Սիսունեաց եղև կողմնակալուե՛ւ,
միանգամայն ընդ նախարարութե՛ւն Կաղմեայ, որպէս ասէ
Խորենացին ե՛. 8. «Եւ յարևելից կողմանէ զերծրը Հայ-
կական խօսից (այսինքն՝ ի սահմանագլուխս, կարգէ Վա-
ղարշակ) զերկու ցեղից նահապետութե՛ւնն՝ Սիսակեան և
Կաղմեայն»։ Սահմանսնոս օրպէլեան ա՛. ԿՀ. այլովք առա-
ւելո՛ւք պատմէ, զոր ոչ լիշէ Խորենացին. «Իակ յարևելից
կողմանս ասէ, կարգէ (Վաղարշակ) մե՛ծ և առաջին նա-
հապետութե՛ւն զՍիսական տոհմ, ընդ սմա և զԿադմեանն.
և հրամայէ՛ի Սիսականացն հրամանատար լինել՝ի վերայ
ամենայն աբքունի զօրացն. և երկրորդ Ռափաորե՛ւ էոյց. և
ընդ դմ՛ կալ Հանապազ պատերազմաւ գրանն Հմնաց, որոյ
անուն առաջնոյն Սիսան կոչիւր»։ Այլ ըստ Խորենացւոյն
երկրորդ Թագաւորութե՛ւն եղև ի ժամանակս Վաղարշա-
կայ ի Մուրացան տանէ։ Ասա տոհմ Սիսական ՚ի՛ե՛ ա-
նուանէ, որպէս կոչէ Խորենացին ե՛. 8. բազմացեալ զհին
ժառանգեաց նաև զդաշտն՝ որ Աղուանից աշխարհ կոչե-
ցաւ. զորմէ տես յԱղուանս։

Ասքան է տեղեկուի՛ վասն ծագմանն և սկզբնաւորուե՛ւ
այսր տոհմին, զի Թէպէտ պակասի առ մեզ ե՛. գլուխն
Ստեփաննոսի օրպէլեան որոյ խորագիրը ի ցուցակին գրի
սակս ազգաբանուե՛ Սիսունեաց. բայց բանը ե՛. գլխոյն յայտ
առնեն Թէ չգոյը ինչ աւելի տեղեկուե՛։։ Մ՚իայն Թէ յա-

1 Զի ասէ անդէն. «Եւ որդ ըստ
կարգի և հարազատութե՛ն նահապե-
տացն և իշխանացն Սիսունեաց ոչ ունիմ
ինչ ասել զանուանց և զծննդոց նոցա

մինչև յայս վայր. զի և յառաջագոյն
պատմագրաց անյայտ էին ըրքե՛ն. և մեք
Թէ և բազում անգամ քանացաք,
այսքան միայն գտաք զոր վերագոյն

ւուրս է. Շապհոյ Պարսից արքայի տոհմն այս ի մեծի վե-
տանգի կայր քաջքինջ լինելոյ, որոյ պատճառ. որպէս յի-
շեցաք ի վերոյ, եղև փոփոխելն Շապհոյ զկարգ նախարա-
րին Սիւնեաց. ընդ որ ցասուցեալ Աշնդովիկ՝ որ յայնժամ
էր իշխան Սիւնեաց, 1700 զօրօք գնաց ի Տիսբոն իբր ի
տեսուչ ի ւն արքային Շապհոյ՝ մինչդեռ նա ամենայն զօ-
րօք իւրովք գնացեալ էր ի պատերազմ ընդդէմ Խազ-
բաց. ուր և եգիտ պատիւ մեծ. այլ քանզի միաք նորա
էր վրէժ առնուլ ի վաղիւ մտոր վաղ քաջ ընդ այգն՝
ամենայն դարանամուտ զօրօք իւրովք յարձակեալ ի մէջ
քաղաքին յապարանս արքունի և իշխանաց նորա, զամե-
նայն յաւարի առեալ դարձաւ ետին եմուտ ի Բաղաբերդ
ի Սիւնիս, զոր ապա բաղում զօրօք պաշարեալ Շապուհ,
բայց երիցս կոտորեալ ի բերդականացն, եթող զպաշա-
րումն, այլ զամենայն վերկիրն Սիւնեաց հրամայեաց ետ յաւե-
ր դարձուցանել։ "Հրաման եղև, ասէ Ստեփանոս ի. յար-
քունուստ եթէ մարդ և անասուն ձեզ Ասրեաց աչխարհի
զօրաց ի ծառայութի լեցի ,, ։ եւ Բուզանդ. է. 58. գրէ
վասն Շապհոյ և զօրաց նորա. "Զազգն Սիւնեաց տոհմին
զամենայն այր ի չափ հասեալ կոտորեցին, և զկնայսն
սպանին. և զամենայն մանր մանկտին նեղքինիս հրամայ-
եր առնել, և խաղացուցանել յերկիրն Պարսից. և առներ
զայս ամենայն վասն վրէժուցն Աշնդովկայ ,, ։ Աւյս է ասել
Խորենացւոյն է. 28. վասն Շապհոյ. "Ընտայազատ զՍիւ-
նեացն հրամայէ առնել զտոհմ ,, ։ Աւյլ Աշնդոկ պա-
րապորդ գտեալ եղ, ասէ Ստեփանոս "Ցամբոցէն Բա-
զաբերդու մեծ աւարաւն անցանել յաչխարհն Հոռոմոց
առ մեծ ինքնակալն Թէոդոս արքայն Յունաց, և ի նը-
մանէ պատիւ մեծագոյն գտեալ. այս ինքն Պատրկաց պատ-
րիկ արարեալ զԱշգոկ, վախճանի անդէն յաչխարհին
Հոռոմոց ,, ։

կարգեցաք։ Նմանապէս և յառաջի-
կայսդ է խմանալ... որպէս ի սկզբան
պատմեցաս ցուցաք, Թէ ոչ գոսպ
յառաջնոց փոյթ եղեալ զայսմանէ.
և գրէլ ուրոյն առանձին զպրոյցք և
զորպիսութիք այսմ աչխարհի և առ նոսա
որպէս զայնոցդ տեսաք, զՄամիկոնեանն
զՏարօնոյն, զԲագրատունեացն, զՐ-
ւաստրբասանացն (զԱրծրունեաց)
որք յետոյ Թագաւորեցին, զԿա-
զմաւանիցն ։ և ասն այնորիկ ոչ երե-
ւին կարգ եչխանացն ։ և Թիւ ժամա-
նակացն. այլ յիր և ցան գոսպ յառաջ-
նոցն վիպագրուխն ասա և անդ ընդ
աղօտ նշանակեալ ,, ։

Ն. ԲՈՒՔԵՆ ԵՐԿԻՐՆ ԵՒ ԻՇԱՆՈՒԲԵՆ ՍԻՒՆԵԱՑ։

{Յետ այսպէս հետախաղաղ քանդեալ աւերելոյ Սիւնեաց երկրին՝ Թէպէտ անոյշ էր նորոգուելն նորա, բայց այնպէս իմն յաղողեցաւ դառնալ նմա յառաջին վիճակ իւր, մինչև հրաշալի իմն Թուխլ-զի մի միայն մնացեալ որդին Աղուկայ Բաբիկ անուն՝ եղեալ ի Յունաց գնաց ի դուռն Շապհոյ առանց ծանուցանելոյ զինքն ամենևին. և ի պատերազմունս բազում քաջուներս արար ի կողմանէ Պարսից, զհոն Հրանգուր մեհանպետուելոյ սպանեալ զերծոյց զՇապուհ ի մահուանէ. ընդ որ և Շապուհ զոր մայեալ առաջարկեաց ինդրել զոր ինչ և կամի. յայնժամ համարձակեցաւ Բաբիկ ծանուցանել զինքն Շապհոյ, և խնդրել ի նմանէ զսեպհական զաշխարհն իւր, և յինքն դարձուցանել զտերութեն ազգին։ Յայնժամ, ասէ Ստեփաննոս Ժ. «Ընդհակառակն նմա արքայիցն արքայի Շապհոյ՝ առաքէ գնա մեծաւ պատուով յաշխարհն իւր Սիւնիս. և աւանդէ նմա նախագահ լինել ընդ Պագրատունն (բագրատունիս), և ընդ Մամիկեան համամպատիւ եղաւնել»։ Իբրև Բաբիկ եկն ի Սիւնիս, «Տեսանէր ասպա (ասէ Ժ։) որդին տեսակաւ զգանկալին աչխարհս այս, ապաւերն ի մարդոյ և յանասնոյ, և հիմնախիլ արարեալ զգեղեկայարմար աւանս շինից, գեղից, և ագարակաց, վատեալ զամենայն և յաւար դարձուցեալ»։ Ա յսպէս մնացեալ էր աշխարհն զամն քսան և հինգ։

Տայց այս Բաբիկ չինեալ նորոգեաց զամենայն երկիրն, և ի սմանէ աճեցան սերունդք նորա։ Ա յս «Բաբիկ, ասէ Ժ. որդի Աղուկայ, գործով գովելի և հաւատով գեղացից քնաւից՝ յետ առնոյ զսեպհական տերութեին Սիւնեաց՝ և շինելոյ զամենայն աւերեալ գաւառան կրկնապատիկ քան զառաջինն՝ ստանայ ուստր մի Վասակ անուն. և ի զարգանալ հասակին ընծայեցուցանէ զնա ի դուռն արքունի Վռամայ Պարսից արքայի... իսկ Բաբիկ առեալ զտերութեին Սիւնեաց ի վաթսներորդ ութերորդ ամի Շապհոյ Պարսից արքայի, վարեալ զիշխանութիւնն ամս քսան և մի փոխն յաստեացս»։

{Յետ Բաբկայ՝ Վռամ Պարսից արքայ տէր Սիւնեաց կացոյց զսենեկապետն նորին Բաբկայ կոչեցեալ Սամ գնթունի, որ տիրեաց ամ մի, յետ նորա Վաղինակ ի ճնիկ

ցեղէ իշխանացն Սիւնեաց [1] ամն ինն. իսկ յետ նորա «Վասակ որդի Բարկայ առնու ՚ի Վռամ Շապհոյ զտէրութիւնբ. և վարէ ամն երեսուն և ինն»։ Աչքապէս զմիմիանց պայազատաբեալ միմեանս եհան ՚ի Գրիգոր. «որ վասն առաւելութեանէ և առոյգ և ուժգեղ հասակի՝ քաջաց նոխերակ կոչեցաւ» ասէ ՚ի գլ. ԺԶ. և վասն քաջութեանն զգուստոր Խոսրովայ Պարսից արքայի էառ ՚ի կնութիւն. յորմէ իմաս ցիս, ասէ Ստեփաննոս, զոսոս «այնքան բարձր և փառաւոր գոլ, զի հաւասար էին խնամութեանբ ընդ Պարսից Թագաւորութեանէ և ընդ Հայոց»։ Հայոց ասէ, զի խնամութեանն կալան նաև ընդ Բագրատունիս, որպէս պատմէ ՚ի գլ. լէ. «Պայազատէ զտէրութեանն նորա (Սուփհան Գրիգորի) Վասակ որդի իւր, որ ըստ գգուանաց փաղաքշականին Գաբուռ կոչիւր. սա փեսայացաւ Աշոտի բագրատունոյ որդւոյ Սմբատայ, որ Թագաւորեաց իսկ Հայոց, և էառ զդուստր նորա Մարիամ իւր ՚ի կնութիւն. որ և ՚ի տիրէնն Աշոտի՝ յոյժ հպատակ էր սա գործոյ իւրոյ անէրոյն (որ էր նոյն Աշոտ). և նա մտերմաբար հոգայր վասն Վասակայ. սակս որոյ և անցեալ եղև փառաւք և իշխանութիւբ ընդ նախնիս իւր, խաոնեալ ՚ի Թագաւորեալ ցեղն բագրատունի»։

Ասէ այս իշխանաբ Սիւնեաց Թուխ Թէ հրամանաւ դրանն Պարսից նստեալին. զի Սահակ եպիսկոպոս Ընշտունեաց յամբաստանեալն զուբացելոյն Վասակայ առ Պարսս, ասէ առ եղիշէի Թղթ. 239. «Ետուբ զմա զտէրութիւնն Սիւնեաց, լուարուբ յայգականաց այսի դրան, զինչ պատմեն զդմանէ»։ Եւ Թէպէտ ինքն ուրացեալն Վասակ հնարիւբ էր առեալ զայն, որպէս յայտ առնէ ՚ի Թղթ. 264. «Չի ոչ ըստ կարգի ունէր նա (Վասակ) զտէրութիւն Սիւնեաց աշխարհին, այլ նենդաւբ և քաւբ ետ սպառնանել զՏօրեղբայր իւր զՎաղինակ, և տարաւ զտէրութիւն իբրև քրտիկաբ յաբքունիս»։ Բայց Յոհաննէս կաթողիկոս նաև վասն նախայիշեալ իշխանին Սիւնեաց գրէ յարքունուստ կացուցեալ, զորոյ զՏրամանն էառ Աշոտ ։։. յորժամ չև և էր Թագաւորեալ, այլ էր իշխանաց իշխան. «Ցայսմ ժամանակի, ասէ, Վասակ Հայկազուն որ Գաբուռն յորջորջիւբ, վասն զի փեսայացեալ էր Աշոտոյ Շապհոյ՝նաև այլք ՚ի ցեղէ իշխանացն Սիւնեաց։

1 Աչք բան Ստեփաննոսի գուցա-նէ. Թէ բաց ՚ի յորդւոյն Բարկայ վերծեալ Տեսցեալ էին ՚ի կոտորածէ

իշխանաց իշխանի, իշխան գնա Սիւնեաց ապա կացուցա-
նէր. յաջորդումս (որ է 'ի գրանէ պարսից) նմա առնլով
պատիւ, որ բաղում Ճոխութիւն վարեալ զիշխանական պե-
տութիւն իւր, տիրելով միանգամայն Սիսական ազգին ,,։
Աւելորդ տիրել միանգամայն 'ի վերայ Սիսական ազգին՝
զոյն յուշ ածէ, զոր գրեալ եմք 'ի մեծ Հայս 'ի Թղթ.
234. Թէ 'ի Սիւնիս երկու ցեղք և երկու իշխանութիւնք
էին, երկոքին ևս նախարարութիւնք, զի երկոքին ևս խառն
յիշատակին ընդ նախարարս, բայց մի ցեղն էր միայն գա-
հագլուխ իշխան Սիւնեաց նահանգին, որոյ ունել ինչ պաշ
տօն 'ի կառավարուել մասին ոչ ուրեք ընթեռնումք. զի թէ-
պէտ վասն Դարայ Սիւնոյ՝ որդւոյ Բաբկայ տեառն Սիւ-
նեաց ընթեռնումք առ Խորհնացւոյն Ճ. 43. 46. սպարա-
պետ լեալ Ճ. Աբշակայ արքայի, այլ այն ըստ դիպաց
իմն էր լեալ, յորժամ երկու թագաւորք էին Հայոց Աբ
շակ և Խոսրով, և յորժամ երկոքին ևս ընդ միմեանս
պատերազմ մղէին, վասն որոյ և այն կողմնակալուճն զոր
ետ Վաղարշակ, ոչ թուի տեւեալ։

Թագաւորութիւն Սիւնեաց։

Յոհնին Սիւնեաց՝ որ նախ իմամուխթէ կապեցաւ ընդ
Թագաւորեալ տոհմին Բագրատունեաց, ապա 'ի տաս-
ներորդ դարուն ինքն ուրոյն ամբարձաւ 'ի գահ Թագա-
ւորուճ լիւր անուն յորջորջեալ. յոյր սակս Ստեփաննոս
դնէ խորագիր ծԹ. գլխոյն. “ Վասն Թագաւորացն Սիւ-
նեաց ,,։ Ապա 'ի սկսանիլն յիշել, նոյնպէս զնիսական ա-
նունս յիշելով ասէ. “ Աբդ՝ առաջին Թագաւորեաց 'ի
Սիսական աշխարհիս արին և քաջն հզօր և բարեպաշտ
արքայն Սմբատ ,,։ Աւլ քաց յանուանէ աստի կոչեցաւ
և այլ զանազան անուամբ՝ բազաց. կապանին. և Փառի-
սոսոյ, զորմէ գրեցաք 'ի վերոյ 'ի յիշելն զգնանազան Թագա-
ւորուիս, որպէս և 'ի մեծ Հայս 236. և 309. Բայց և 'ի
ժամանակս անդ Թագաւորուճ գնԹ 'ի սկզբանն կարգեալ
կայր նաև այլ ոմն իշխանաց իշխան կոչեցեալ Սիւնեաց.
զոր յայտ առնէ Ստեփաննոս ծԹ. 'ի գրելն վասն Վասա-
կայ երկրորդ Թագաւորի Սիւնեաց, Թէ զքոյր իւր տու-
եալ էր “ կին Աշոտի 'ի նոյն Սիսական տոհմէ, որ էր իշ-
խանաց իշխան յամենայն Թագաւորութիւնս ,,։ Որպէս 'ի
գրելն՝ Թէ Վասակ Թագաւոր չունելով իւր որդի, “ Թա-
գաւորեցուցանէն զՍմբատ որդի Աշոտի, և կարգէն 'ի

տեղի հօր իւրոյ զԴրիգոր եղբայր սորա Իշխանաց իշխան Սիսական աշխարհիս ,, ։

Ոսոան և Հէրիմ Սիւնեաց ։

Վլխաւօր տեղի իշխանացն Սիւնեաց էր Ծղուկք գաւառ, զորմէ գրէ Ստեփաննոս Ք. " Որ ունի զգուն գահ իշխանացն և Հայրապետացն Ծղուկք գաւառ ,, ։ Իսկ Շաղատ [1] գիւղաքաղաք այսր գաւառիս էր ոստան նոցա ուր նստէին իշխանքն, որպէս գրէ նոյն ինքն ։ " Այցեալ ի գաւառն Ծղկայ՝ հասանէ յաւուրն իշխանանիստն Շաղատոյ ,, ։ Որոյ և եկեղեցին հրամմնաւ Բաբկայ Սիւնեաց տեառն սահմանեցաւ լինել ըստ նորին Ստեփաննոսի " Մայր եկեղեցեաց . և մայրաքաղաք ամենայն աշխարհին սիւնեաց ,, ։ Յաւուրս Յովակիմայ եպիսկոպոսի վերստին հաստատեցաւ Շաղատայ լինել մայրաքաղաք . նաև ի վարդապետուէ գնահագահուէ ունել ։ Գերեզմանն կամ շիրիմ Թագաւորաց Սիւնեաց էր ուխտն Վահանու ։ " Բայց ձեալ տարան (ասէ Ստեփաննոս ծէթ . վասն Սենեքարիմ արքային) ի սուրբ ուխտն Վահանու , և անդ եդին ի շիրիմ ընդ այլ Թագաւորսն ,, , Թէպէտ ի վերոյ վասն Սմբատայ Թագաւորի գրէ . Թէ " Դնի ի Յովհաննու վանս առդրան տաճարին ,, ։

Երեելի անձինք ի Սիւնեաց ։

Լ.ուրաքանչիւր բազումք ծաղկեցան ի ցեղէ Սիւնեաց արք երևելիք քաջութ , գիտութ և աշխարհակալութ , որպէս յայտ առնեն շինութիւնք այնչափ բերդոցն , աւանաց , մենաստանաց , և եկեղեցեաց , որք գտանէին ի Սիւնիս . զորոց գիտակութիւն սքռեալ գտանես յայսմ ներքոյ ծռութ և ի մեծ Հայս , այլ եթէ յիշել կամիս զերեւելին անձինս երկուց ցեղից Սիւնեաց և Աբծրունեաց , զորոց գրեցին Ստեփաննոս և Թովմա արծրունի , հարկ էր ուրոյն մատեան յօրինել ։ Եւ որ առաւելն է՝ նաև ի կանայս Սիւնեաց եղին անձինք երևելիք , յորոց մին եղև Բիւրեղ տիկին , զորմէ գրեալ կայ ի պատմութիւնէ խաչէն Հացունեաց , Թէ յորժամ Հերակլ կայսր ի սկիզբն

[1] Շաղատ երևի լինել այժմեան Ձուտ . որպէս էր և Շաղատ . որպ և Շուռեթ . զի բայ ի մերձաւորութիւն եկեղեցին է յանուն սրբոյն Սանահնուան՝ նաև գրեաք մերձ է ի Նախ . վանսնոսի . որպես էր և Շաղատայն ։

եօթներորդ դարուն բազմաթիւ զօրաց խաղալը՝ ի վերայ Պարսից յառնուլ զսուրբ խաչն ի նոցանէ. «Ողու արա- րեալ եհաս յաշխարհն Վասպուրական. և իբրև լուաւ Բիւրեղ տիկինն Սիւնեաց, և եկն ընդ առաջ նորա. և բերեալ գանձս բազումս և հանդերձս, ձիս և ջորիս և սպառազէնս, զրահս հազարս, և զնիս ոսկեկուռս չորեք- հարիւր, և սաղաւարտս հազարս, և զոր պատերազմի երից հազարաց զինի նորա. և երկնա կին գեղեցիկ և իմաստուն յոյժ. և հաճոյ Թուեցաւ յաչս արքային», նոյնպէս և ի գործն Հերակլեայ ասէ. «Դնին գաւազան տիկինն Սիւ- նեաց ընդ առաջ արքային. և խնդութեամբ երկիր եպագ խաչին. և բերեալ պատարագս բազումս առաւել քան զառաջինն»: Որոյ փոխարէն ընկալաւ ապա զմեծ ինչ ի փրկական խաչէն:

Լ. Յայսմ անձինքեղէն արդարև պարծանք տոհմին Սիւ- նեաց. բայց ելին ի Սիւնիս և բազումք՝ որոց ի չարիս անկղնիտացեալ՝ չարութիւ իւրեանց արատաւորեցին զանուն տոհմին, զի տիրեալ գոլով ի նոսա գեր քան զամենայն հեթ և ոչի վրէժխնդրութիւ բազում՝ աւերմանց պատճառք եղեն ի սկզբանէ մնոի ոչ միայն երկրին իւրեանց, այլ նաև ընդհանուր հարուածոց ի վերայ համարկեն Հայոց աշխարհին: Հուչակաւոր եղև ի պատմութիւն ոխակալու- թիւն որ ի մէջ ուրացելոյն Վասակայ և Վարազվաղենի փեսային իւրոյ, որ այնպէս չարեաց պատճառ եղև. սոյն- պէս և նախանձ Բաբկենի ընդ Գրիգորոյ. «Մինչ վարէր զիշխանութիւն Հոխաբար Գրիգոր, ոչ ժուժկալեալ չարին, ասէ ստեփանոս ղէ. այլ արկ նախանձ չար ի սիրտ Բաբ- կենի եղբօր Փիլիպէի որդւոյ Վասակայ միւս նահապետին Սիւնեաց՝ որ է ի նոյն ցեղէ. և խանդացոյց և գրգռուէ չար ի մէջ նոցա զարթոյց զօրէն Կայենի և Հաբելի, որք և գումարտակ ի վերայ իրերաց կարգեալ պատերազմեցան. և սպան Բաբկէն զԳրիգոր»: Եւ այն զօր պատմէ Յո- հաննէս կաթողիկոս վասն երկուց եղբարց, Թէ փոքրկէն Բաբկէն սիւնի յանիրաւի զրկեալ համարեալով զինքն ի Սահակայ սիւնոյ, գնաց առ Նսր ոստիկան առ ի ամբաս- տանել և վրէժ առնուլ. և նա ոչ միայն զՍահակ՝ այլ և զնա ինքն զԲաբկէն կալեալ եդ ի բանտի երկաթի կա- պանօք, որով ոչինչ չահեցաւ, այլ երկոքին ևս ծանր տուգանս վճարեալով հազիւ զերծան:

Տիրեալ էր ի նոսա և անհնազանդուն առ Թագաւոր իւրեանց, և յարիլ յօտարին, յորոց մին եղև Սմբատ,

զօրմէ Թոմա արծրունի էջ. 10. " Սմբատ իշխանն Սիւնեաց 'ի բաց եկաց 'ի հնազանդութենէ Թագաւորին Հայոց (ա. Սմբատայ), արգել առնելով Հարկացն տալ Թագաւորին, Թէ ակոսեալով Պարսից բռնաւորին հատուցանել զՀարկս և զՀասս. և ինքն ժողովեալ զզօրս իւր տանն հազար արանց զօրաւորաց՝ եկն եւուտ յամուրսն Հայոց ձորոյն,,. Սմբատ Թագաւոր եկն 'ի վերայ սորա բազմութիւք զօրաց աւելի քան զ25. հազարաց. բայց Աշոտ իշխանն Վասպուրականն ընդ մէջ մտեալ համոզեաց 'ի խաղաղուի. որով Սահակ եղբայր իշխանին Սիւնեաց եկն առ Թագաւորն ընդ իւր բերելով զՀարկն. Ախտ ոխակալութեան մինչև 'ի կանայս անգամ հալակեալ գտաւ 'ի Սիւնիս. զոր օրինակ էր Փառանձեմ սպանօղն Ալամիսագայ տիկնոյ. և կինն այն, որ սպան զՄուշեղհայնոս սիւնեցի.

Ի յայսիսի բարոյական պատճառաք եղեն գրեթէ, որք կրկին անգամ չարաչար աւերուին աճեին 'ի վերայ նահանգին Սիւնեաց՝ սաստկագոյն քան զայլոց ժամանակաց աւերմունս. մի՝ յաւուրս Անդոկայ, զորոյ զպատճառն յիշեցաք 'ի վերոյ, և երկրորդ՝ յաւուրս Յուսիկայ ոստիկանին՝ որ զամենայն քանդեաց, զորմէ պատմէ Մուշեղհայնոս օրպէտեան 'ի գլուխն ըր.

Ինկ էր 'ի կարգիս գրել և զտոհմէն Աբրշակունեաց, բայց զնմանէ լուռ գրեցաք 'ի վերոյ 'ի կարգէն զԹագաւորս արշակունիս սկսեալ 'ի Վաղարշակայ. քանզի ընդ սկսանիլն Թագաւորութէն 'ի մէջ, սկիզբն կալաւ և Աբրշակունեացս տոհմ. և ոչ որպէս զԲագրատունեացն, Աբծբունեացն և Սիւնեաց, որոց այլ սկզբնաւորութէն է տոհմին և նահապարութէն և այլ Թագաւորութէն, որ յետոյ է ժամանակաւ. Ոչ եդաք սոյնպէս 'ի կարգիս Թագաւոյ նահապարութէց և զԱնանդացն, զի Թագաւորք որք 'ի Վանանդ Թագաւորեցին՝ չէին վանանդեցիք, այլ բազբատունիք. վասն որոյ յիշատակութէն նոցա 'ի գէպ գայր միայն 'ի կարգս բազմաւորութէն Թագաւորութէց, ոլպէս և յիշեցաք անդանօր. իսկ զնախարարութէց նոցա ունիմք յիշել զնոսն 'ի կարգս այլոց նախարարաց.

Բ. Նախարարութիւն ի կառավարութիւն գրան արդոնի։

ԱՂՋՆԻՔ. ԳՈՒԳԱՐՔ

Օ սոցանէ մնկ էր խօսել աստանօր, ըստ որում էին գահերէց իշխանք արքունի տաճարին. բայց քանզի գրեալ է մեր զնոցանէ ի մեծ Հայս, տես անդ։ Վասն Աղձնեաց տես ի Թղթ. 64. և ինչ ի ինչ մատենիս ի գլուխն պատմուճ, ուր խօսեցաք զնուազմանէ աշխարհիս։ Աստա. նօր յաւելցուք միայն որ ինչ պատմի առ Բուզանդայ ։ 9. յաղագս աղգահատուցին այսր տէմի. զի յետ ապստամբ բուցին Բակուր զդեշխին Աղձնեաց՝ ։ Խոսրով արքայ Հայոց առաքեաց, ասէ, զօրս ի վերայ նորա, որք "առհասարակ ընդ սուր հանին զամենայն. և սպանին զդեռաշխին եղբարբը և որդւովք իւրովք հանդերձ. բայց զաղջիկ մի զդուստր նորածին, և զդստին Բակուր զդեշխին բերին առ արքայ. և իբրև այլ ոչ էր միացեալ յաղգէն՝ եան արքայ զաղջկին ի կնութիւն սիրելւոյն արքայի Վաղինեկայ սիւնեաց, և զտունն Աղձնեաց. և արար զնա դեռաշխ և պայազատ տան նորոցն։ ձառանգեն քաղմացաւ, և հանդերձ աշխարհաւն և ամենայն ուժովն կայր դեռաշխն Վաղինակ ի ծառայութիւն արքային հանապազ "։

Այս ցեղ ի կողմանէ աղձկան միայն սերեալ է. բայց զնոսին պատմէ նաև ի կողմանէ արեւի միացեալ. " Բայց յորդւոցն Բակուր զդեշխի, ասէ, պատահեաւ մի փախեաւ անկաւ առ զօրավարն Հայոց Վաչէ, և անդ ապրեցաւ Թագուհեալ ի տան նորա, որ առ յապա ժառանգ տան նորա լինէր, որ յայլում ժամանակի գարձաւ կալաւ զդտուն իւր. որոյ անունն խեղայ կոչէր "։

Իսկ վասն ազգահատուցին ցեղին Գուգարաց այսպէս գրէ Բուզանդ ։ 15. Սպարապետն Մուշեղ, ասէ, ։ Աբրշակայ արքայի " զդեռաշխն Գուգարաց որ յառաջն ծառայեր Թագաւորին Հայոց և ապստամբեաց, կալեալ գլխատեր. և զաղջն որձակոտոր առնէր, և զկանայսն և զդստերսն ի գերութիւն վարէին "։ Բայց քանզի և զկնի յիշատակին ի գիրս սերունդք Գուգարաց, յայտ է թէ նաև ի ցեղէ աստի ապրեալ գտան պատանեակք, իսկ զայլ տեղեկութիւնս վասն Գուգարաց՝ տես ի մեծ Հայս ի Թղթ. 354. և աստ յարտաքին նախարարս, ուր գրեցաք զդեշխից։

ԱՆԳԵՂՅՈՒՆ

Նաղագա սկզբնաւորութիւն այսր ցեղի գրէ Խորենացին Ա. 23. " Բայց զԱնգեղտունն ասէ Նոյն պատմագիր (Մաբիբաս) ի Պասքամայ ումեմնէ ի Հայկակայ Թոռնէ լինել ,, . Հայկակ կրկին գոլով ի մէջ, մին ի կարգս նահապետաց, և միւսն ի կարգս Թագաւորաց, ոչ որոշէ Թէ ո էր, բայց զանուն Թոռին՝ և զայսմհետ Անգեղտան անուան՝ բացայայտ ասէ ի Է. 8. " Իսկ զայր խոժոռագեղ և բարձրը, և կոպտար անձն, և տափաքիթ , խորակն և դժնաՀայեաց , ի գաւակէ Պասքամայ ի Հայկակայ Թոռնէ Տոլք անուն կոչեցեալ , որ վասն առաւել ժահադիմութեանն ձայնէին Անգեղեայ , վիթխարի Հասակաւ և ուժով, հասատակ կռւսակալ արևմտից. և իբրեւացն անպիտանութիւնէ կոչէ զանուն ազգին Անգեղ տուն ,, . Ցայս բան յայտ արար և զպատճառն նորա , այն է կռւսակալ արևմտից. բայց յաւելումն ի գուխն 3. վասն Բագարատայ գրեալ էր՝ կացուցեալ կողմնակալ իշխան յարևմտից կռւսէ , զոր և Ե. 47. Բագրատունեաց սեպհական և Հայրենական կոչէ զայն իշխանութիւն արևմտեայ զօրուն .

Վ ան որոյ պարտ է ասել, Թէ Վաղարշակ որպէս յաբևելեան կողմն զերկուս կողմնակալս կացոյց. զմին ի քնիկ յարևելից՝ ի ձեռս սիսակեան և կադմեայն ցեղից. իսկ զմիւսն յարևելից հիւսիսոյ ի ձեռս Աբանայ ըստ նշանագրելոյ Ե. 8. նոյնպէս և յարևմտեան կողմն զերկուս կացոյց. զմին ի ձեռս Բագրատունեաց, որ Թուխ լինել յարևմտից հիւսիսոյ , ուր եղև և Սպեր քաղաք նոցին սեփական. իսկ զմիւսն ի քնիկ յարևմտից ի ձեռս Անգեղտան; եւ այսպէս Թէպետ ցեղն էր հին՝ այլ նահապարութեամբ և Անգեղտուն անուամբ ցեղին՝ սկիզբն էառ ի Վաղարշակայ . կացուցաւ ի նմանէ կռւսակալ արևմտեան կողմանն, և դասեցաւ ընդ նախասպատիս իշխանս . զի Ագաթանգեղոս յԱՀ. ի Թուեն զիշխանս զորս Տրդատ տարաւ ընդ իւր ի Հռոմ, յետ ջրից բդեշխից յիշէ " զմեծ իշխանն Անգեղտան ,, ; իսկ ի յԾզ. յառաջ քան զամենեսին՝ նաև քան զզունէն Աղձնեաց՝ յիշէ զԱնգեղտան իշխանն . և Բուզանդ Ե. 7. ի յիշելն զԴրաստամատն ներքինին զիշխանն Անգեղտան , " Բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն ,, ասէ .

Լրկիր Անգեղտան իշխանին էր ի մեծ Ծոփս . այսինքն՝

ըստ Ռուզանդայ՝ ի Ծոփք անուանեալ գաւառին յորրորդ Հայոց. որպէս յայտ առնէ այս բան նորա Գ. 24. " Եւ ինքեանք ի Ծոփս մեծ արշաւեցին . . . պահ արկանէին շուրջ զԱնգեղ զամուր բերդատն՝ որ էր յԱնգեղ տանն գաւառին ,, : Դարձեալ Ե. 7. " Իսկ Դրաստամատն նեղբ քինին, որ յամն Տիրանայ Թագաւորին Հայոց և Աբշա կայ որդւոյ նորա Թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին, և ամենայն բերդացն արքունի՝ որ ի կողմանս յայսմ. այսպէս և յերկրին Ծոփաց ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ ,, : Ա յլուր ի Գ. 12. զԲնաբեղ բերդն պնդ ի մեծ Ծոփաց գաւառին. իսկ ըստ նորա մեծ Ծոփք է գաւառն յորրորդ Հայոց, իսկ Ծոփք Շահունւոյ՝ է հա մօրին նահանգն կոչեցեալ յորրորդ Հայք.

Ի դէպ այս մեծ Ծոփք կոչեցեալ գաւառ յորրորդ Հայոց, որ էր երկիր Անգեղտանն, կոչէր Ոստան. որպէս ասէ Ռուզանդ Ե. 18. " Հարկանէր և յԱնգեղ տունն զաս զումն, և հանէր ընդ սուր. բայց աշխարհն զի Ոստան ա ռանձն լեալ էր, վաղ վաղ քանակիւք գաւառին և ինքեանք կայէն ի հարկի ծառայութեան ,, : Եւ այս հայի բան Խո րենացւոյն ա. 30. ուր յետ ասելոյ Թէ մեծն Տիգրան յօշարակեաց զբոյր իւր զՏիգրանուհի ի Տիգրանակերտ քաղաք մեծաւ ամբոխիւ, այսինքն է՝ բազմութ, ապա ա սէ. " Զգաւառսն զայնոսիկ ի ծառայութեն նմա հրա մայէ. և զՈստան անուանեալ կողմանցն այնոցիկ ազատու թեն (այսինքն ազնուականութիւն), ի զարմից տոհա սակ (Մարիբասս) լեալս իբր Թագաւորական զարմն ,, : Որ է ասել, Թէ ազատագրիք կամ ազնուականք որք քնակեալ կան ի կողմանսն յայնոսիկ, և կոչին Ոստան, Մարիբաս պատմագիր ասէ, Թէ ի զարմից Տիգրանուհւոյ էն, և հա մարին իբր Թագաւորական զարմն: Եւ այսպէս այս բան երկոցունց յայտ առնէ, Թէ Ոստան կոչեր ուրոյն տեղի ինչ, ուրանօր սփռեալ քնակեալ էին զարմք Տիգրանու հւոյն, որք և նոյնպէս կոչէին Ոստան:

Ի դէպ Ծոփք գաւառ որպէս և համօրէն յորրորդ Հայք կարեն կոչիլ գաւառք կողմանցն Տիգրանակերտի, համա ձայն բանից խորենացւոյն, զի ընդ հիւսիսակողմն Տիգրա նակերտի միացեալ է յորրորդ Հայք: Եւ քանզի յայնմ ժա մ նաև յայլոց հինն զարմից Թագաւորացն, Վաղարշակ նեղբինիս արար, որպէս ասէ խորենացի Գ. 7. նմին իբրև նահապետ նոցա կոչեցաւ Հայր իշխան և Մարդպետ, որ

է հնեքքինապետ. այն զի՝ և երբեմն կամ քաղաւմանգամ՝ ի նոյն իսկ Աշնգեղտանի եղև մարդապետն, յորմէ և մարդապետն կոչեցաւ իշխան Աշնգեղտանն, եւ զի՝ ի Հայկակայ Թոռանէ զՏօրքն յորջյորջեալ Աշնգեղեայ՝ Վաղարշակ կարգեաց կուսակալ արևմտից՝ որոյ զօրանխատ տեղի եղև մեծ Ծովք ըստ Բուզանդայ, որ է գաւառ չորրորդ Հայոց, վասն որոյ և ազգն նաև տեղին յանուն նորա կոչեցաւ Աշնգեղտունն. բայց բազում ուրեք՝ ի գիրս առաջինն անուանն Ծաց Ոստան, վասն որոյ և Աշնգեղտունն գաւառ յետ Բուզանդայ ոչ յիշատակի, իսկ Ծովք սակաւ ուրեք։ Ջայս յայտ առնեն իշխանքն յիշատակելոք առ Վաղարայ առնուամբ յՈսոանէից, որպէս և Աշոտազան յՈսոանէից փանէն. սոյնպէս և յիշատակեալն առ Եղիշեէի յարձանի փանէն Ոսոանէից մարդէ. կամ Բաղամ և այլ մարդէ զոր Ոսոանէից անուանէքն յարձանի փանէ [1]։

Սոքա այսպիսիք յայտ է Թէ էին Աշնգեղտանէ, կամ՝ ի գաւառէն Ծովից որ կոչեր և Ոստան, ուր էին և ոստանիկ կամ Թագաւորական զարմք Հայկազանց՝ մինչև ետ Տիգրանուհւոյն [2]. զի բաց՝ ի նախագրեալ պատ-

1 Որ ինչ գրեալ է մեր ի մեծ Հայս ի Թիւ ՀԵՑ. վասն Ոստանի, ոչ հակառակի այսմ. զի հաւաստի է Թէ գուշդն ի վաղարշակայ բնաբեալ ի պահպանուել գան արքունի Ոսոանէ կոչել սկսան յայնժամ պարսկական անուամբ. զի էին արքունական զարմք յորմէ և զարքունին Ոսոան կոչէին յետ ժամանակաց յանուանէ այսր գնդի յորըչնեալ յոյժ հաւանական երևի, և յայնմանէ ածանցեալ Ոսոան կոչէնաև զնախագահ քաղաքս ամենից նախարարաց։ Բայց ըստ այժմեան ասացելոցս՝ պարս է ի վերայ այնր յաւելուլ եւս, Թէ պատմութիւն Աշնգեղտան և Մարզպետական նախարարութեան յայտնի կացուցանէ Ոսոանկամ Ոսոանէն լինել նաև յատուկ անուն որոշ տեղւոյ՝ ուրեր նախնական բնակութեի այսր արքունի կամ ոստանիկ զարմի, որ այն ինքն է Ծովք գաւառ չորրորդ Հայոց, և ոչ նահանգն Ծովք որ էր համօրէն չորրորդ Հայք։

2 Ինձ Թուի եթէ Ոսոանէից, կամ Սուրբի ոսոանէից կոչին ոչ միայն որք ի զարմից Տիգրանուհւոյն են սերհասեալք, այլ նաև այլ Թիգռազունք Արշակունեաց, սերեալք յորքայորդւոց զրոյ վաղարշակ բնակեցուց ի Հաշտեանք գաւառ չորրորդ Հայոց, և յայնմհետէ ամենայն արքայորդւոց արշակունեաց՝ որոց ոչ անկաներ Թագաւորել օրէն եղև բնակիլ անդ ի Հաշտեանս, որոց գինի այնչափ եղև բազմանալ՝ մինչև սփռիլ նաև Աղձնիսկն և Ասպետական։

Արդ յայտ է Թէ ի բառնիլ Թագաւորուն արշակունեաց ոչ բարձան սերունդքն նոցա և ոչ սպառեցան, այլ ճեացին յիւրեանց քաղաքս և ի գիւղորէս որ նոցին էր սեփական, ուրեք օրըստօրէ բազմանային. բայց զինչ զարմանք զի այսպիսի զարմք բազմամեծիւք երևելիւք և արքայազունք՝ որոց յայտ է ի մեծի հանքի լինել յաւս ամենայն նախարարաց, ոչ ուրեք ի գիրս յիշատակիլ, ոչ նախարայ անուամբ, և ոչ իսկ արքայազուն կամ արքայորդիք անուամբ։ Նայս յայտ է Թէ նոցին վիճ Ոսոանէի անուամբ յիշատակէին որպէս զարմք Տիգրանուհւոյն՝ նոյնպէս և զարմք նոցա, երկոցուն ևս գոլով զարմ արքայական, կամ որ նոյն է զարմ ոստանիկ. երկոցունն ևս տեղի բնակութեի գոլով մեծակաց միանց, որ նոյնպես կարէր կոչիլ Ոսոան։

Ձառաց՝ նաև Բուզանդ ՚ի քանս զոր ՚ի վերոյ յառաջ բե-
րաք՝ զվերդմն եղեալս յԱնգեղտան կոչ Աբբունի. մա-
նաւանդ զԻնաբեղ բերդն Ծոփաց գաւառին ՚ի Ճ. 12.
կոչէ Աբբունի, որ նոյն է ասել Ոստան. յայն բերդն
աբբունիս, և որոշակի յԱնգեղ բերդին՝ յիշատակէ ՚ի
Ճ. 24. լեալ գանձք աբբունի նաև գերեզմանք. „ Պահ
արկանէին (ասէ Պապիկք) շուրջ զԱնգեղ զամուր բեր-
դատն որ էր յԱնգեղ տանն գաւառին. զի անդ էին բա-
զում Հայոց Թագաւորացն (իսս և Թագաւորազնեայցն)
գերեզմանք չիրմացն արանցն արշակունեաց „. Թերևս և
Հայկազնեայց. Բաց ՚ի շիրմաց ասեի նաև „ Բազում
գանձք, (ասէ, անդ) մեծերեալ ՚ի ձեռաց կային ՚ի նախ-
նեացն ՚ի հնոց ժամանակաց հետէ „։

Ի.րդ այսպէս աբբունական բերդորայք աբբունական և
գանձք ՚ի հնոց ժամանակաց հետէ, այսինքն գուցէ նաև
՚ի հայկազանց Թագաւորաց հետէ ինացեալք, պատճառ
եղեն ուրոյն սեփական անուամբ Ոսոան կամ Աբբոանի կո-
չել զայն գաւառ, որ յառաջին կոչէր Անգեղտուն, և մնաց
էր չորրորդ Հայոց. և Ոսոանիկ կոչել զաբբունի զարմն
բնակեալս ՚ի նմա։ Թուի և Թէ յետ գադարելոյ Թագա-
ւորութեանն Աբշակունեաց՝ բարձաւ և գահն Հայր իշխանի
և Մարզպետի, նմին իբրև յետ այնորիկ ոչ
այս իշխան և ոչ ցեղն, այլ փոխանակ այնր յաջենայն
Ժողովս նաև ՚ի պատերազմունս՝ ուր պատմի առ Եղիշէի և
Ղազարայ Ժողովիլ իշխանաց Հայոց, անդ ՚ի բազումն
յիշատակին Ոսոանիկ կամ մարդիկ յԱբբոանի և յՈսոանիկաց
ոանէն, որք յայտ է Թէ տոքա էին. այսինքն բնակեալքն
՚ի Ծոփք գաւառ չորրորդ Հայոց, երբեմն Անգեղտան գա-
ւառ յորոջելոյ, Թերևս նաև քնակեալքն ՚ի շրջակայս
նորա։ Եւ գուցէ իշխանն որ էր անդ փոխանակ Մարզպե-
տին՝ զկնի ՚ի Յուննոց կուբապաղատ, յորմէ սակս
Ցոլաթ կաթողկոս որ յեղս ուԹերորդ դարուն՝ ասի լինել
յՈսոանէն ՚ի Կուբապաղատին ազգանէ. մանաւանդ Թէ՝ որ-
պէս ինձ Թուի, որ ինչ գործ էր Կուբապաղատին առ

Վասն որոյ ՚ի պէսպէս բանս որպէս և յայս բան Եղիշէի Թղ. 3կ4. զօ-
ցանէ համարիմ գրեալ. „Ես բազում և այլազան մարդիկ, են որք յԱբբոա-
նի տանէ (նոյն է ասել Ոսոանիկ), և են որ ՚ի տանէ նախարարացն կամ
նոցուն „։ Ուր որոշ զաբբունի մար-
գիկ կամ զոստանիկ յայլոց նախա-
րարաց։ Այսինքն և գերեզմանքն յի-
շատակեալ ՚ի Բուզանդայ յանուն ա-
նանց արշակունեաց. Համարիմ լինել
գերեզմանս սոցա այսինքն ոստանիկաց
կամ աբբայաղանց։

Յոյնս՝ նոյն գործ էր և Մարդպետին առ մեզ. այսինքն է՝ հոգ և վերակացուել պալատան, ըստ որումէր ներքինապետ, յորմէ չէր տարադէպ Յունաց զՄարդպետն մեր կոչել Կուրապաղատ։ Որով՝ ի նահագրեալ բանս վանն Յովաբայ կաթողիկոսին, իմանամք լինել Յովաբայ յոստանէն Ամգեղտան յապարանից Մարդպետին, ուր թէ և մարդպետութիւնն խափանեալ էր յայնժամ, բայց ցեղն Ոստանայ և ապարանք Մարդպետին ծագեալ գոլով՝ այնմ պալատան երից էր Յովաբ, և մարթ էր յայն անուն կոչիլ։

Իսկ այսպէս զանն Յոհաննու կաթողիկոսի, պարտ է իմանալ, թէ Յովաբ էր յՈստան տեղւոջէն յապարանից իշխանին Կուրապաղատին, որ ի հնումն առ մեզ կոչէր Մարդպետ իշխան։ Եւ յս ապարանք էն որ առ Ստեփաննի գիրք ժա. Թղթ. 527. յիշատակի Աբբայակերտ անուամբ ասելով. "Աբբունիք Սոփենոյ (այս է Ոստանն Ծոփաց) է Գադադիոկերդա"։ Ուր պարտ է բառնալ զաւանչն և զկերջին տառան ի յունական հնչմանէ մնծեալ. և զկերտ վանին հայկական ուղղել յԱբբայակերտ. զի ի Սոփենի որ է Ծոփք՝ ոչ գտանեմք ի գիրս մեր արբունիք ինչ լեալ, բայց եթէ ապարանք այսոցիկ աղբայազանց որ կոչէր Ոստան, և ի հարեւ յաբբայից կերտեալ գոլով կոչէր և Աբբայակերտ։ Յիշէ զայս և Պլինիոս ՚ը. 9. գնելով ՚ի մեծ Հայս առ Տիգրիսիս. այսինքն ՚ի սկիզբան Տիգրիսի, որ բղխէ ՚ի լերրորդ Հայս ՚ի Հաշտեանք գաւառ ուր բնակէին արքայորդիք Համաձայն գրելոցս։ Նոյն համարիմ և զոր յիշէ Պտղոմէոս Ե. 13. ՚ի կողմանս Ծոփից և Հաշտենից Վաթիլոխի տեղի, որ է Թարգմանեալ արքայական անուանն. զի անգ անկաներ և ապարանք Ոստանից։ ըստ այմ է տեսանել և զԶարիւշատ քաղաք Ալիովտի գաւառին՝ ուր նստէին արքայազունք, Աբգարեան քաղաք կոչեցեալ առ Խորենացւոյն Ը. 23։ Տես ստորև և զցեղն Մարդպետական, նաև զՈստանիկն։

ՄԱՐԴՊԵՏԱԿԱՆ

Նախարարութիւս այս սովին ձայնիւ միայն առ Մագիստրոսի կոչի՝ ի Թուղթն որ առ Սարգիս վարդապետ յատեին. "Ազէ հարցիր ընդ բոլոր յաբեթեան նահանգի. զինչ յաւուրս յայսոսիկ ՚ի բոլոր տանս Մարդպետական եղեալ գործառնութիւնս"։ Ուր և բանն է անյայտ։ Իսկ յայլ գիրս նախարարն միշտ Մարզպէտ կոչի. և նախարարութիւնն՝

Մարդպետութենէ. որպէս է տեսանել յայս բան Բուզանդայ Գ. 17. "Տան զնա ի ձեռս իշխանին Մարդպետունեաց, որ բուժէ անուն իւր Հայր կոչէր"։ Եւ ի 18. "Որ առնէր զպատիւն մեծի Մարդպետութենէ. այլ ներքինի՝ չարասիրտ չարախորհուրդ չարագործ, որում Հայր կոչէին"։

Ըստ պաշտօնին եր ներքինապետ արքային. որպէս յայտ առնէ Խորենացին Գ. 7. յասելն վասն Վաղարշակայ. "Եւ նաև ներքինիս հրամայէ ի նոյն ազգէ խոզել (այսինքն յազգէ հին զարմից Թագաւորաց Հայկազնեայց, յորոց էին և ոստանիկք՝ զորոց խօսի ի վերոյ.) և նահապետ նոցա զՀայր իշխանն մասին ԱՀարտապատականէ մինչև ցՃուաշ, և Նախճաւան"։ Ասկսիքն է նահապետ նոցա կարգէ զՀայր իշխանն՝ որ էր տէր այնր մասին երկրի՝ որ սկսեալ ԱՀարտապատականէ ձգէր մինչև ցՃուաշ և ցԱխճաւան։ Եւ զոր ասէ կոչէ Հայր իշխան, ի Գ. 15 Մարդպետ կոչէ. "Տիրանայ զայս լուեալ և յոյժ զարհուրեալ, առաքէ զՄարդպետն կոչեցեալ Հայր"։ Մարդպետ անունս եղև հասարակ անուն այսմ բարձի և պատուոյ։ "Մարդպետն, ասէ բուզանդ Ե. 6, որ անուանեալ կոչէր ըստ գործոյն՝ Հայր Թագաւորին"։ Որով և ներքինապետութենէն կոչեցաւ մարդպետութենէ։ "Եւ քանզի, ասէ Ե. 7. այս գործակալութենէ և մարդպետութենէ, որում Հայրն կոչէին Ներքինեայ՝ գործ լեալ էր ի ենէ ժամանակաց ի Թագաւորութենէն արշակունոյ, և զայս Դրաստամատն ներքինի զիշխանն զԱնդեղ տանն գերեալ տարեալ էր յերկիրն Պարսից ի ժամանակին՝ յորժամ կալան զԱրշակ արքայն Հայոց"։ Սոյնպէս յայտ առնէ և յայս բան Ե. 3. "Ի նորա տեղի Հայրութեան մարդպետութենէն զԴգոյակ ոմն անուն, որ յաւուրս Արշակայ Թագաւորին կամ Տիրանայ հօր նորա գամէ միօք լեալ նոյն գործ մարդպետութեան"։

Այլ երեք ինչ կան ի քննել՝ յաղագս այսր մարդպետին։ Առաջին յայտ է ի նախակարգեալ բանից, Թէ գործ նորա էր լինել իբր Հայր Թագաւորին, և վերակացու և հաղարապետ ապարանից նորա. զայս յայտ առնէ բաց ի յատացելոցս՝ նաև այն կամին ուրումն մարդպետի յարքունիս գրաւել զտեղիս ինչ Աշխիշատուն Տարօնոյ, զորմէ պատմէ Բուզանդ Գ. 14. և Մեսրոպ Ժ. պատմէ վասն տեղեաց ինչ Աշրարատու։ Ցայտ է ևս Թէ կոչէր Ներքինի. զի բաց ի յատացագրեալ բանից Բուզանդայ Գ. 14. (ըստ ձեռ. 13.) գնոյն անձն ի վերոյ կոչէ Խոր-

պէս Հայր, իսկ ստորև կոչէ Ներսէսիկ, բայց Թէ արդեօք խըզելով Ներքինացուցանելին որպէս արար Վաղարշակ, և որպէս մարթ է կարծել նաև վասն այլոց կռապաշտ Թագաւորաց արշաւունեաց, Թէ միայն անուամբ կոչէին Ներքինի՝ ի ժամանակս քրիստոնէութեան [1], այսչափ է. ո՞վ կարէ գտանել այս գործ՝ ի պէտս և՝ ի պահպանութիւն բազմամեայ կռապաշտից Թագաւորաց սահմանեալ գոլով աւելորդ էր՝ ի ժամանակս քրիստոնէութեան. և զի զվերոյիշեալ Դրաստամատն Թէպետ Ներքինի կոչէ Բուզանդ, բայց այնչափ և այնպիսի քաջութիւն պատմէ վասն նորա որ զանցանէ Թուի քան զնմանութիւն Ներքինոյ։

Յերկրորդ՝ անկ է քննել յաղագս ցեղին. զի Թուի Թէ նախաթարմութիւնս այս կամ մարդպետական իշխանութիւնս ոչ իջանէր սերմնաւ յորդւոց յորդիս՝ որպէս զայլսն, այլ՝ի զանազան ցեղէ լինելին Մարզպետ, որպէս և նախադրեալ Դրաստամատն էր Յունդեղամանէ. իսկ զՆդշակ յայլմէ տոհմէ ակնարկէ լինել՝ եւ Ագաթանգեղոս՝ի չծզ. ուրոյն յիշէ զիշխանն Աղձեղտան, և ուրոյն զիշխանն մարզպետութեան. բայց՝ի բաւի կառավարութիւն ընդ երևելի իշխանս և դասեալ Մարզպետաց. զոր օրինակ է տեսանել յայս բան Բուզանդայ է. 33. որ յետ մահուան Պապայ արքայի ասէ. “Յաղթվեցան եկին ամենայն իշխանքն Հայոց մեծաւ ուժ՝ի վայր՝ի միասին, և Մուշեղ սպարապետն, և Հայր Մարզպետ, և ամենայն իշխանքն”։ Եւ զկնի չկոչ գտանել զյիշատակութիւն Մարզպետի, ոչ՝ի ժամանակս գադարման Թագաւորութեանն Արշակունեաց, և ոչ՝ի ժամանակս Թագաւորաց Բագրատունեաց. յորմէ Թուի ինձ ընդ բառնալ Թագաւորութեանն Արշակունեաց՝ որպէս ընտանիք և տուն Թագաւորական և ամենայն կարգ և հանդերձանք նորա բարձան, նոյնպէս և վերակացուն կամ հաղարապետ տան Թագաւորի բարձաւ. որ այն ինքն էր պաշտօն մարդպետութեանն, կամ Հայր իշխանին, զի ցորքափ յոտին կայ Թագաւորութիւնն՝ յոտին ինան և հին կարգք պաշտօնէից պալատականաց. միայն ինայիքն յայսմ հետէ արքայազունք հանդերձ ազատանօք իւ-

1 Փաւստոսի գրէ Թէ՝ի սկզբան անդ Ներսէսիկ կոչէին սենեկապետք արքայի, իբր Ներքին բնակարանաց պահապանք, և հոգաբարձուք, ուր ընտանիք արքայի բնակէին. ապա նա իանձ իշխանութեանց և ազգականութ

բարուց պատճառ եղև հնարել զնոր-նմ Ներսէսիկ կոչելոյն զնոսա ծառայից կարգելոց՝ի Ներքին ծառայութիւն ընտանեաց։ Եւյայմ՝ի դէպ գայ և մեր հայկական անուանս Ներսէսիկ. իբր որ կարգեալք՝ի Ներքին ազատաւորութեան արքայի։

բանց որ ՚ի Ծախ. ոչք Աստանիկ անուամբ յիշատակին ՚ի գիրս, այլ սոցա ևս տոհմ ոչ տեւեաց՝ որչափ ինչ տեւեաց միւս նախարարացն։

Յերորդ՝ վասն երկրի Մարդպետին կան ինչ ինչ քննելի. զի ՚ի նախագրեալ բանից Խորենացւոյն իմանամք, թէ Մարդպետն էր իշխան երկրին Ճուաղայ և Նախճաւանու. բայց զինչ զարմանք, զի ոչ ուրեք առ պատմագիրս գտանեմք զնախձաւան երկիր յանուն Մարդպետ իշխանի կամ Մարդպետականի ձայնեալ, այլ փոխանակ քաղաքական իշխանին զեկեղեցականին այսինքն զեպիսկոպոսն Նախճաւանու գտանեմք Տպդպեպական անուամբ յորջորջեալ առ Թոմա արծրունեայ. զոր օրինակ կարես տեսանել ՚ի մեծ Հայս 220 և 221. որ արգաւև՝ յայտ խոկ է՝ թէ առ սեփական գոլոյ Մարդպետ իշխանին՝ եպիսկոպոսն Նախճաւանու ընկալաւ զանունս Մարդպետական. Նա զի մերձ ձակայ գաւառն և Մարդաստան՝ յանուանէ Մարդպետին այսպէս կոչեցեալ Հաւանական երևի մեզ, որ թէ ևս էր ընդ իշխանութեամբ նորա։

Յառաջ զարմանալին այն է՝ զի Բուզանդ ոչինչ յիշատակեալ զնախձաւանայ, փոխանակ այսր՝ սեփական երկիր Մարդպետին զՏարօն ասէ լինել ՚ի գ. 14. "Նա էր Մարդպետն Հայոց՝ այր չար և ժանտաբարոյիւք անօրէն և անիրաւ քան զառաջինն Հայր անուն Մարդպետին. սա կոտորեաց զամենայն ազգս նախարարացն ՚ի ժամանակս թագաւորութեանն Տիրանայ արքայի. և սոյնպէս առ թագաւորութեամբն Արշակայ՝ ևս չար քան զառաջինն գործել չար առ ամենայն մարդ. Այր եղեալեր սա չղջէր ընդ մարդպետութեամբ իւր. (կամ ասել ընդ երկիրս որ մարդպետութեամբ էին սեփական) ապա եկն էջ Հայր Մարդպետ ՚ի գաւառն Տարօնոյ ընդ իւր գիւղն տեսանել . . . եկն էջ և Հայրն Մարդպետ զիւրով իշխանութեամբն չղջել,, ։ Ուր թէպէտ իւր գիւղս ասէ իշխանութեամբ՝ իբրև սեփական Մարդպետին, այլ զՏարօն՝ մամիկոնէութեանց գիտեմք լեալ սեփական. որպէս և ինքն Բուզանդ Ե. 3. խառն յիշեալ զերկոցունց ասէ. "Ապա մինդեռ Մարդպետն Հայոց զիւրով իշխանութեամբն չղջէր յերկրին Տարօնոյ, և Մուշեղ սպարապետն Հայոց (մամիկոնէից) էր ՚ի նմին գաւառին յիւրում բերդին՝ որում Ողական կոչեն ,, ։

Զգ ՚ի միաբանել զայս ամենայն պարտ է ասել, թէ այս պատիւ մարդպետութեամբ բարձեալ էր ՚ի ժամանակս Թոմայի արծրունեայ, որպէս ասացաք ՚ի խօսիլն զԱն-

գեղ տանէ. և միայն յեկեղեցական կարգէ յեպիսկոպոսս ձեռացեալ՝ հին անունս Մարզպետական։ Վասն որոյ որպէս իշխանն Անդեղտան, յորմէ բազումք եղեն Մարզպետ կամ Հայր իշխան, զառաջին բարձ ունելով պիշխանաց՝ յառաջ յիշատակի քան զայլ իշխանս, այսպէս և եպիսկոպոսն մարզպետական նախ քան զայլ եպիսկոպոսունս յիշատակի զինի կաթողիկոսի [1], մինչև երբեմն լինել և մետրապօլիտ։ Եւ զի բնակեալքն ընդ իշխանութիւն Մարզպետին կոչէին Աստանիկք, սակս գոլոյ զարմ Թագաւորական, և զի Նախճաւան էս էր ընդ իշխանութիւնն Մարզպետին, յայսմանէ ապա Նախճաւանու կոչեցեալ համարիմ Աստան. ուր գուցէ ստ ժամանակ մի բնակէր և մարզպետն և եպիսկոպոսն էս ընդ նմա. ապա ի բառնալ աշխարհական իշխանին՝ եպիսկոպոսն որ մնաց ի Նախճաւան, պահեաց յիւր վերայ զհին անունն Մարզպետական եպիսկոպոս, կամ Որպան եպիսկոպոս անուանելով. որով իմանայ զՆախճաւան քաղաք [2]։

Յակ վասն Տարօնոյ մարթի է ասել, Թէ Թևպետ սեփական էր մամիկոնէից՝ որպէս նշանագրեն և այլ ամենայն պատմագիրք, բայց ի Տարօն էին գիւղօրէք ինչ՝ որք էին կալուածք մարզպետութեանն, կամ կալուածք արքունի՝ որոց եկամտից տէր էր Հայր Մարզպետն [3], վասն որոյ և կամեցաւ գրաւել զեկեղեցին Աշտիշատու, և ապաքան չհնել անդէն արքայի, զորմէ Բուզանդ. Կամ Թէ այս Մարզպետ էր յերկրէն Տարօնոյ՝ և կամ յայնպիսի տոհմէ՝ որում սեփական կալուածք էին գիւղօրէք ինչ Տարօնոյ։ Եւ զի քանիս խորենացւոյն անկ է մեզ կրկնել զայս գլուխ բանի, որպէս և նա զքոլուխն ցԵ. 7. յետ գրելոյ զՀայր իշխանէն ասէ. « Բայց Թէ որպէս է, և ուր ստեղ իրք անցին անյիշատակելի, ես ոչ գիտեմ »։

ՄԱՂԽԱԶՈՒՆԻՔ

Ակիզեն այսր ցեղի է ի Խոռայ. զորմէ տես ի Խոռխոռ.

1 Ցես ի մեծ Հայս 220։

2 Ցես վասն այսր ի վերոյ և զԱնգեղ տունն։

3 Զի ոտ յայս է ի բանից Խորենացւոյն ցԵ. 12. վ ահռելի քրմապետք զՀեքսակաչ զառնապատակէն բերեալ ի ii. Եւ սկսաքեսէ. « Կանգնեցին ի Տարօն յիւրեանց սեփական գիւղն Ա-ծոյ ձոյ գիւղ միջին Տիգրան յալքունիս գրաւեաց ասէ ի գլ. 14. « Ցառաւելեալ ընդ վաղուն եթէ ընդէր յիւրեանց սեպհականին իշեցին կանգնել զպատկերն Երկակի... զիւղն յորքունիս առնու »։

ուն[ին]. իսկ սկիզբն այսր Մաղխազ անուան սկսաւ ընդ սկզբնաւորութեան Պաղտ[ին], յորժամ Վաղարշակ գոմն Մաղխազ ի տոհմէն խոռխոռունեաց կարգեաց իւր Թէկ-Նապահ « Եւ Թիւնապահս իւր զինու հանդերձ (կարգե, ասէ խորենացին ք. 7.) ի զաւակացն Խոռայ հայկազնեայ արս ընտիրս և քաջս, նիզակաւորս և սուսերաւորս և գլուխս նահապետ նոցա զՄաղխազ ոմն, բայց անուն ազգին գնահատականն պահէ »։

Այրկու ինչ պարտ է ի միտ առնուլ յայս բան. մի՝ զի Վաղարշակ բազում Թիւնապահս սահմանեաց վառելոյ զինու, որոց գլուխ եղև Մաղխազ. բայց ի յետագայս ի յիշելն՝ միայն և եթ տան զանունս Թէկնապահ. և զայն փոխանակ կոչելոյ Թիւնապահ՝ կոչէն Մաղխազ. երկրորդ՝ խորենացին ասէ, Թէ անուն ազգին գնահատականն պահէ, այսինքն է խոռխոռունի. բայց պարտ է ասել, Թէ յորոշումն ազա անունս Մաղխազ էանց ի սերունդս և ի յայ Ջորդս Մաղխազայ, և եղև անուն ցեղի նաև պաշտօնի. զոր օրինակ առ Ղազարայ 75. ի յիշելն գնահատականն՝ յիշէ և Վրիւ Մաղխազ. և ի 212. Գարջոյլն Մաղխազ, փոխանակ ասելոյ Թիւնապահն Վրիւ և Գարջոյլ սերեալ ի Մաղխազայ։ Եւ Բուզանդ է. 38. նախ յիշէ Գարջոյլ Մաղխազ. ապա զնոյն կոչէ խորխոռունի. « Եւ էին Հայոց Գարջոյլն խորխոռունի յերկրին Հայոց »։ Իսկ ի է. 43. զերկոսին միանգամայն յիշէ ասելով. « Եւ զմարմինն Գարջուայ Մահազու խոռխոռունոյ եդին »։ Որպէս և խոռենացին ք. 9. առաւել որոշակի. « Եւ փոխանակ Միհրդանայ կարգէ զԳարջոյլ Մահազ նահապետ խոռխոռունեաց ի վերայ զօրուն »։

Լ[ազարդ]անգեղոս յՀ[այ]. զԹիւնապահուԹէն նաև զանուն ցեղին կոչէ ՄաղխազուԹէն, յասելն վասն Տրդատայ Թէ ի գնալն ի Հռոմ էառ ընդ իւր « Եւ զիշխանն ՄաղխազուԹէ տանն »։ Սոյնպէս կոչէ և Մեսրոպ Է. յաւուրս ք. Աբշամայ Թագաւորի. բայց ուրոյն յիշէ « Զիշխանն խոռխոռունեաց Հմայեակ »։ Ապա « Զիշխանն ՄաղխազուԹէ տանն »։ Իսկ ի Թիւն ժք. ուրոյն մի զինի միոյ յիշէ զերկոսին. « Մաղխազեանք խոռխոռունիք »։ Ապա յետ բազում իշխանաց յիշէ և զանունս Մախազունիք. Զայս անուն իշխանուԹէ կամ ցեղին ոչ գտանեմք յիշատակեալ առ այլս, բայց զանուն մարդոյ ուրեք ուրեք զոր օրինակ ի պատմուԹէ խայնի Հացունեաց յասելն վասն Մօրկայ. « Եւ զՄաղխազ ոմն յաշխարհէն Հայոց

կացոյց յարևելս ,, ։ Ինձ Թուի Թէ Մաղխազ՝ և իւր սե-
ռունդք միայն զպաշտօն Թիկնապահութեանն ընկալան, իսկ
ուրոյն երկիր սեփական ոչ ընկալան ՚ի Վաղարշակայ, այլ
երկիր նոցա էր առաջին երկիրն խոռխոռունեաց, յորմէ
՚ի հարկէ ունէին իւրեանց հաս և բաժին։

ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ

Յաղագս Ծագմանն այսպիսանաւոր զարմի խորենացին ե-
8ւ . ուրոյն գլուխ կարգելով "ԵԹԷ ուստի և զիարդ ազգ
Մամիկոնէից ,, պատմէ անդանօր զծագումն նոցա զոր յա-
ւաջ քերդուբ . "Ի մէ աւուրս (Արտաշրի Պարսից արքայի)
եկեալ ՚ի Հայս Նահնի ազգէն Մամիկոնէից յարևելից հիւ-
սիսականէն , ՚ի քաջատոհմիկ և ՚ի գլխաւոր աշխարհէ, և
ամենայն հիւսիսականաց ազգաց առաջին , ասեմ իսկ զՁե-
նոյն՝ որ ունէին զոյգք այսպիսի ։ Յամն կատարման կենացն
Արտաշրի՝ Արբոկ ոմն Ճենքակուբ , որպէս ասի ՚ի նոցա
լեզուն պատիւ Թագաւորուն . սորա երկու դայեկորիք
Բղդոմ և Մամգուն անուն կոչեցեալ մեծ նախարարք , և
չարախօսեալ Բղդոմայն զՄամգունայն , հրամայեաց Թա-
գաւորն Ճենոյ Արբոկ սպանանել զՄամգունն . զոր իմա-
ցեալ Մամգունայն ոչ գոյ ՚ի կոչն արքային , այլ փախու-
ցեալ աղխիւ իւրով անկանի առ Արտաշիր Թագաւորն
Պարսից ,, ։ Պատմէ զինի Թէ Ճենոյ Թագաւորն Արբոկ
իրազեկ լեալ այսմ ինդրեաց յԱրտաշիր . բայց Արտաշիր
յայնժամ մեռեալ գոլով , ։ Ետուն յաջորդ նորա
զՄամգուն առաքէ առ գործակալս իւր որ ՚ի Հայս . գրե-
լով առ Թագաւորն Ճենոյ վտարանդի արարեալ զնա ՚ի
մէտս արևու յերկիր ինչ մահաբեր . և այսպէս խափանէ
զպատերազմն՝ զոր ունէր յարուցանել Թագաւորն Ճենոյ .
"Իսկ Մամգունայ (ասէ անդէն խորենացի) յոչ կամաց ե-
կեալ յաշխարհս մեր հանդիպեցաւ գալստեանն Տրդա-
տայ ... և Տրդատ ընկալաւ զնա ... ետ տեղի աղխի նորա,
և ուձիկ ՚ի կերակուր . փոփոխելով տեղ ՚ի տեղւոջէ ցեռ-
վանդակ ամն ,, ։

Ի յայ ցեղ Հանապազորդեալ տևեաց ՚ի Հայս մինչ յին-
ներորդ դար . այլ ՚ի մէջն անդ ինչ երորդ դարու յաւուրս
Բուզանդայ՝ Գրիգոր Մամիկոնեան զերծեալ ՚ի բանտէն, և ե-
կեալ ՚ի գաւառն Բագրեւանդ՝ կամելով ամրանալ ՚ի գա-
ւառն Գաբեղենից մեռաւ . զորոյ զգլուխ մեռելոյն հա-
տեալ Աշոտ որդի Սմբատայ առաքի առ Մահմէտ ոստի-

կան, իբը զկենդանւոյ հատեալ ցուցանելով. «Եւ յայմմ հետէ, ասէ Վարդան, բարձաւ ՚ի Հայոց աշխարհէս ազգն Մամիկոնէից»։ Այլ զայս պարտ է իմանալ վասն իշխանացն Մամիկոնէից. զի չէրև ինչ կոտորած այսր ցեղի որմո ընդեռնուամբ վասն այլոց բազմաց. իսկ միայ ուրուք Գրիգորի մեռանելոյն ոչ բառնի ցեղն։ Ո՛չ թողցուք զի և ինքն իսկ Վարդան նաև զկնի Բուղայի ՀՀացեալ ցուցանէ զմամիկոնեանս յայս բան իւր. «Ջայսու ժամանակաւ եմուտ սուրբ խաչն Նոնեայ ՚ի ԱՀՀնի ... ապա ազգ արարեալ Մամիկոնեանն Գրիգորայ որդւոյ Հմայեկի՝ տարաւ ՚ի Կապոյտն կոչեցեալ բերդ, և անտի փոխեցաւ ՚ի Վանանդ, և կոչեցաւ Վանանդայ խաչ։ Եւ ՚ի բառնալ տանն Մամիկոնէից յանօրէնն Սոփեմանայ՝ բերաւ ՚ի ԱՀՀն ՚ի Հայրապետուքէն տեառն Բարսղի, և կարգեցաւ նմա տօն կիրակէն՝ որ զկնի ութօրեիցն Խաչվերացն տանի»։ Եթէ բառնումն տանն Մամիկոնէից եղև յաւուրս Բարսղի կաթողիկոսի, ապա միտք յերկար մետասաներորդ դարուս կայր ցեղն այն բազում ժամանակօք զկնի Բուղայի, որ եր ՚ի մէջ անդ հնգետորդ դարուն։

Ա՛րդ որպէս տեսին քանիս Վարդանայ առաջնի իւր բան ՚ի դերև ելանել, օգնական և այս բան նորա. մանաւանդ զի կիրակս յիշէ զՄամիկոնեանս նաև յերեքտասաներորդ դարուն յասելն։ «Ջայս պատմեաց մեզ Գրիգոր իշխանն որդի մարզպանին, եղբայր Աշոն Գիկին Սարգսի և ամբոխային յազգէ Մամիկոնէից»։ Ջորոց և զքոյրն յիշէ, ՚ի պատմելն թէ Հեթում Թագաւոր ՚ի գնալն առ Մամգոն խանն Թաճարաց յերեքտասաներորդ դարուն, ՚ի Վարգենս գիւղն՝ «Ջտեղի առ ՚ի տան իշխանին զոր Հուրդ առնուանէին Հայ ազգաւ, կրօնիւք քրիստոնեայ, որդիք իւր Վասէ և Հասան, և կին նորա Խորիշահ յազգէ Մամիկոնէից, դուստր մարզպանայ, քոյր Աշոն Գիկին և Գրիգորայ»։ Մեսրոպ ՚ի Թիւն ժէ. յանուանէ յիշելով զիշխանս զանազան ցեղից, նաև յիշէ զՄամիկոնեանս, ապա յետ քանզում ցեղից յիշէ Մամիկոնէ երէցդ. այլ այսպէս անուանել կարծեմ նախ զանուանէր ևզնահապետ տանն Մամիկոնէից, ապա երկրորդ զիւս նախարարս ՚ի նոյն մամիկոնեան ցեղէ։

Երէցէր Մամիկոնէից։

Որպէս տեսաք ՚ի վերոյ ՚ի գալն Մամգունայ ՚ի Հայս՝ տեղւոջէ ՚ի տեղի փոփոխեր զնահապետն իւր սակս չունե-

լոյ երկիր ինչ սեփական, մինչև ի ժամանակն յորում Մամգունն երթայր ըստ հրամանի Տրդատայ աթոռալի զալըս տամբեաւն զՍղոմէ նահապետ Սկիւռնեաց. զորմէ տես ի ցեղն Սկիւռնեաց. զի յայնժամ "Ուրախացեալ Տրդատ տայ, ասէ Խորենացի էջ. 84. գրէ հրովարտակ իշխել նմա ամենայնի,, Այսինքն իշխել ամենայն երկրին՝ որ էր Սկիւռնեաց տէրմին, որպէս խոստացեալ էր Տրդատ յառաջագոյն ասելով. "Որ ոք ածէ առ իս զնահապետն Սկիւռնեաց (զՍղոմէ) տաց նմա յաւիտենական իշխանութեամբ զգեօղս և զդաստակերտս, և զամենայն իշխանութիւն ազգին Սկիւռնեաց ,, : Եւ զի Տարօն էր երկիր Սկիւռնեաց՝ Մամգունն և տոհմն իւր Մամիկոնեան՝ տէր եղև Համբէնն գաւառին Տարօնոյ, մինչև երբեմն փոխանակ Տարօնոյ զանուն տոհմին տալ. տես ի մեծ Հայս զՏարօն: Եւ Զենոբիայ 27. գասանեմք Դեմետրեայ որդւոյ Երձանայ քրմապետին ասացեալ առ իշխանս Հայոց. "Մեք պատերազմաւ ձեզ չկարեմք ընդդիմանալ զի այս տուն է Թագաւորին Հայոց ,, : Զայս վասն այնորիկ ասէ, զի Աշտիշատ Տարօնոյ յարքունիս գրաւեալէր երբեմն՝ որպէս նշանակեցաք ի վերոյ: Եւ առ այլս յայլոց ցեղից իշխան Տարօնոյ գտանեմք ուրեք ուրեք յիշատակեալ. զոր օրինակ առ Յոհաննու կաթողիկոսի ի Բագրատունեաց յասելն. "Եկ յետ ամաց ինչ ապա վախճանեալ և մեծ իշխանն Տարօնոյ Դաւիթ բագրատունի. փոխանակ նորա կացուցեալ ի տեղի եղբօրորդի նորին Դուբգէնն,, Որպէս և առ Թոմայի արծրունեայ էջ. 5. զԲագարատ բագրատունի. իսկ ի է. 1. 2. յԱրծրունեաց յիշէ զմին Աշոտ կուրապալատ Տարօնոյ, որոյ յաջորդ Դերանիկ իշխան Վասպուրականի կամ Արծրունեաց՝ կացոյց զԴաւիթ զեղբայր նորա իշխան ի վերայ Տարօնոյ: Յորմէ զհետ գայ ասել Թէ Թէպետ զինի նաև յայլոց ցեղից եղեն իշխանք Տարօնոյ, բայց ընակիչքն էին Մամիկոնեանք, և երկիրն էր կալուածք նոցա՝ մինչև ունել վասն այսր և սեփական գիրս. "Եւ անդ էն (ասէ Զենոբ) նոքա մեծամեծք, որպէս կայ ի գրի իշխանացն Մամիկոնէից ,, :

Ւնց ի Տարօնոյ Բուզանդ բազում ուրեք զՏայս սեփական լինել յուցանէ Մամիկոնէից. զի ասէ է. 18. "Եւ անդ

1 Խոկ Թէ Բուզանդ է. 14. ընդէր գրեցաք վասն երկրին նախարարութեանն զՏարօն սեփական ցուցանէ լեալ մարդպետին: Մարզպետին, տես ի վերոյ զոր ինչ

դիպեալ Աբրահաղդ և Վասակ առք ի մամիկոնեան տոհմէն, որք էին զօրավարք ամենայն զօրացն Հայոց ... չոգան յաշխարհն Խոզնեաց յամառս Տայոց, և անդ նստան ամն բաղումս ընտանեօք իւրեանց ,, : եւ ի գ. 2. "Յայմմ ժամանակի ինդիր ելաներ արքայն Աբշակ տոհմին զօրավարաց ազգին քաջացն Մամիկոնենից. մանաւանդ զի իւր դայեակք և մնուցիչք էին. ապա երթեալ գտանէր զնոսա յամուրս աշխարհն Տայոց յԽոզնեաց աշխարհն. և դարձուցանէր զնոսա յընտանութենէն. զի պառակտեալք և քակտեալք էին յընտանութենէն և յամենայն գործոց Հայոց ,, : եւ ի 18. " Ապա երթեալ գտանէին զնա (զՎարդան մամիկոնեան) յԽոզնոյ գաւառն ի Տայս, յԽոզ ամուր բերդին՝ որում անուն Էրախանի կոչի ,, : եթէ ոչ գտանէաք զայսչափ կրնութենէ մարթ էր կարծել վրիպակ գրչաց, գուցէ ի մերձաւորութենէ անուանցս Տարօն և Տայք չիմեթեալ, որովհետեւ ոչ յիշատակի այս յայլ պատմագիրս, բայց միայն առ Մեսրոպայ Ե. որ իբր օրինակելով զանս նորին Բուզանդայ գրէ, Թէ Աբշակ Թագաւոր գտանէր զՄամիկոնեանս "յամուրս աշխարհին իւրեանց Տայոց ,, : Սովին օրինակաւ խօսից և Վարդան զԲագրեւանդ սեփականէ Մամիկոնէից, յասելն վասն նախայիշատակեալ Գրիգորի Մամիկոնէի. "Ելանէ ի բանտէն, և գայ մնանէ ի գաւառն իւր Բագրեւանդ ,, :

Ոսկան և Հէրիմ Մամիկոնեանց :

Ոզական բերդ Թուի լինել ոստան կամ նախագահ քաղաք Մամիկոնէից. ըստ որում ի նմա ամփոփեալ յիշատակին երբեմն երբեմն գլխաւորք Մամիկոնեան տոհմին : Որպէս և Հրիմ նոցա երևի լինել վանքն Գլակայ. քանզի Մեսրոպ զմարմին Մուշեղայ և զՄանուէլայ մամիկոնեան զօրավարացն դնէ Թաղեալ ի վանս Գլակայ. զոր օրինակ յասելն վասն Մանուէլայ. " Եւ տարեալ զնա ի Տարօն իւր գաւառն, և Թաղեցին զնա ի վանսն Գլակայ ,, :

Պապ և Էլիսաւուէ Մամիկոնեանց :

Պատմագետութենն սեփական եղև այսր տոհմին, որպէս յայտնի ցուցանեն պատմութիւնք, նաև այս բան Բուզանդայ գ. 11. " Եւ հրամայեաց մեծ եպիսկոպոսապետն Վրթանէս հանդերձ Թագաւորաւն՝ Աբշաւրայ և Ներսեհայ մնուցանել զպատանեսին զԱբրահաղդ (զոր

դի մամիկոնեան Վասէի,) զի կացցէ ՚ի տեղի նախնեացն իւրոց և Հօր իւրոյ, և գործ քաջութեան գործեսցէ առնետն Քրիստոսի. և առաջի իւրոյ մարմնաւոր քնատեղւոյն արշակունեաց քաջ արանց, և տան և կենաց. և խըզնամակալիցի այրեաց և որբոց, և զնորուն գործ քաջութեան Սպարապետութեն անուանի զօրավարութենն յայնմըժամուն զամենայն աւուրս կենաց իւրոց»։ Եւ այս բան է. 37. «Յորժամ եկաց Մանուէլն (մամիկոնեան) ՚ի փառս տերութեէ իւրոյ...յինքն յատկացեաց զզօրավարութենն սպարապետութենն. զի այն ինչ որ իւրոց նախնեացն ՚ի բնէն կալեալ էր ՚ի սկզբանէ... զայն Մանուէլ յինքն հանեալ ունէր զիշխանութենն»։ Աւելի եղև սեփական՝ մինչև զազգն մամիկոնեան՝ կոչել ազգ Սպարապետութէ ՚ի ՟ք. 4. «Աբձակեաց Թագաւորն (Խոսրով) ՚ի վերայ նոցա զՎասէ որդի Արտաւազդայ զնահապետ մամիկոնեան տոհմին՝ յաղթէ Սպարապետութենէ Հայոց, զմեծ զօրավար զօրաց իւրոց»։ Որպէս և Թումա արծրունի ՟ճ. 5. զերկրէրն Տարօն յայն անուն կոչէ. «Եւ տիկինն Սպարապետական Տարօնոյ եկեալ, և նշանացի զդի նորա գտեալ, տարաւ ՚ի Պարսկ յիւր աւան»։

Յաւ արդարև զրեթէ միշտ ՚ի Մամիկոնէից լեալ տեսանեմք զսպարապետս Հայոց. որք քանզի յաւուրս Տիրանայ արքային Թողեալ զամենայն, խոյս տուեալ ՚ի մայեալ կային յամուրսն Տայոց, Արշակ վերստին կոչեալ, ՚ի նոսա յանձնեաց զսպարապետութենն, որպէս գրէ և Մեսրոպ ՚ի Թիւնէ. յետ Բուզանդայ. «Դարձուցանէը (Արշակ Թագաւոր) զնոսա առ ինքն ընդ իւր, վասն զի պակասեալ էին յընտանեացն և ՚ի զօրավարէ և յամենայն գործոց Հայոց ՚ի ժամանակին Տիրանայ Թագաւորին։ Եւ էին յազգէն մամիկոնէից եղբայրք չորք, և անուանք նոցա Վարդան, Վասակ, Վահան, Վարուժան՝ որդիք Արտաւազդայ որդւոյ Վասէի մամիկոնէի. և կացուցանէը զնոսա զօրավարս Հայոց մեծաց, զոր առաջին Թագաւորքն վաղճանեալ էին յիւրեանց յաւուրսն. և տան գունդն Հայոց ՚ի ձեռն Վասակայ կալ ընդդէմ պատերազմաց Սպարապետութենէ. և զերիս եղբարս նորա ընդ նմա հազարապետս կացուցանէը»։ Վկայէ այսմ և Ղազար 305. յաստէն վասն Վահանայ մամիկոնէի, Թէ առաջի Վաղարշու Թագաւորին Պարսից «բազմեցուցանէին զնա ՚ի գահոյս տերութենէ Մամիկոնէից. տուեալ ցնա ըստ օրինի նախնեաց իւրոց և պատերազմաց Հայոց աշխարհին»։

Յե Թէպէտ երբեմն լինէր նաև ի բազատունեան ցեղէ կարգել սպարապետ, որպէս յաւուրս Ե. Աբեաւէսի եղև Սմբատ, և յաւուրս Ե. Խոսրովու Սահակ աստէտ, բայց ընդ մեռանել նորա սուբըն Սահակ ինդրեաց յԱբտաշէսէ Պարսից Թագաւորէ զմեհեանն իւր զՀամազասպ Մամիկոնեան կացուցանել սպարապետ. իսկ Աբտաշէս ի ընդհս մեծին Սահակայ ոչ միայն սպարապետ կացոյց, այլ և հրամայեաց "զազգն Համազասպայ՝ որ է տոհմ Մամիկոնեան, ի վեր մատուցանել, զի կարգեսցին ունել զհինգերորդ գահ նախարարացն Հայոց. և ի գիւանի իւրում գրել,, , որպէս ասէ Խորենացին Ե. 51 : Ի հատատուն այսմ Թուղթ հրամանի գրեաց առ Վահանդուհ Թագաւոր մեր ասելով. "Զօրդիացեալդ դորա (Սահակայ) զՀամազասպ կացուսցես ի վերայ զօրացդ Պարսից մեր հրամանաւ. և ազգի դորա տացես զհինգերորդ պատուոյ նախարարացդ, և զգիւղս և զդաստակերսն՝ զոր տուեալ է նախնեացն քոց՝ հարց դորա, կալցին գոլա ,, :

Իսկ ի սպարապետութէ՛ն ունէին մեծութէն իմն արքայակերպ. զի ասէ Ցոհաննէս կաթողիկոս վասն Գրիգորի Մամիկոնեան իշխանի որ ի մէջն անդ եօթնեքորդ դարուն, Թէ ի քաղաքագեօղն Աբուձ, որ է յԱբազածոն գաւառի, շինեաց եկեղեցի. "Եւ ի հարսւոյ կողմանէն գնդ պարսկական իւր յեզր քարաժայռ ձորակին, յորում բղխէ աղբիւր պղպջակեալ ,, :

Ա՛ևորոյ Ե. ի գրէն վասն Աբշակայ Թագաւորի՝ այնպէս իմն ցուցանէ, Թէ Մամիկոնեանք լինէին նաև մատուցիչք և դայեակք Թագաւորին. զի ասէ. "Ապա յորուց ցեալ լինքնին իսկ Թագաւորն զօրօքն իւրով՝ ի ինդիր լիներ քաջ ազգին Մամիկոնէից, որ էին Սնոյնէք և Մանդակունք Թագաւորին ,, : Ա՛յլ ըզայս պարտ է իմանալ միայն վասն նորին Աբշակայ Թագաւորի. զոր օրինակ առաւել բացայայտ նշանակէ Բուզանդ Ե. 2. "Եւ կայսեր արբայն (Աբշակ) զԱրտգնս գերեզ եղեայրն ի նահապետութէն ազգին իւրմանց (Մամիկոնէից), և զԱսաակ զինքին եղբայրն ղէս Դայեակն ի սպարապետութէն զօրավարութէ՛ն յիւրս պատերազմացն. սմիսպէս և զկրտսերն ի պետս զօրացն կացուցանէր,. զի այլ և այլ Թագաւորաց յայլ և այլ ցեղից լինէին դայեակք. զոր օրինակ Սանատրկայ Թագաւորին ի Բագրատունեաց և յԱրծրունեաց էին. "Զօրս ժողովէ, ասէ Խորենացին Ե. 35. ի ձեռն քաջայն Բագրատունեաց և Աբծրունեաց Դայեկաց իւրոց ,, :

ՄԵԾՈՐԵ ԵՒ ՎԱՍՊԱԿԻ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ։

Ի յս տոհմարդեամբք եղեալ զմեծուն Թագաւորազուն տոհմին իւրոյ, ոչ միայն ի զինուորական քաջագործուն, այլ նաև ի բարոյական բարետոհմիկս։ Բուզանդ Գ. 2. այսպէս գովի զՄամիկոնեանս. "Այնպէս սարսափելովք սպառազինութեամբն զօրավարութեամն մարտի կուռելոյ ... աներկիւղք քաջասիրտք նահատակք քաջանուանք, բարեհնչուն բարեհամբաւք բարեգործք յաջողակք ի գործ պատերազմաց ի բուն ի նախնեացն կարգաց ի մամիկոնեան ազգին, ի վերայ իշխանութեանն բալանգամ ի վերայ ամենայն զօրաբաց զօրավարութեան բազմութեան Հայոց մեծաց, հանապազ յամենայն ժամ յաղթօղ ազգին (մամիկոնէից) պարգեւեալ յերկնից բարիանուն իրաքանչ ի մեծի նահապետութեանն պատերազմի "։

Յօրժամ արքն չարանախանձք և քսուք երկիցս ամբաստանեցին զՄուշեղայ քաջ զօրավարէ մամիկոնեան, մի զի զկանայս Շապհոյ Պարսից արքայի ձերբակալ արարեալ ի մարտի՝ պատուով առ Շապուհ էր արձակեալ. երկրորդ՝ զՈւռնայր արքայ Աղուանից յորժամ կարօղն էր սպանանել ոչ սպան, նա այնպիսի փաստիւք զանձն արդարացոյց, մինչև Պապայ արքայի յարտասուս հարեալ, ասէ Բուզանդ Ե. 14. "Արիականք զնովաւ գիրկս, և լայր ի վերայ պարանոցին Մուշեղի, և ասէ. մահապարտ էն այնքանիկ որ իշխէն խօսել չարութիւն զՄուշեղէ, զառնի քաջէ և զգաստուականէ. զի այր որ ազգաւ պատուական է իբրև զմեզ, և նահանջքն դորա իբրև զնահինսն մեր, և Թագաւել նահանեացն դորա զԹագաւորութիւնն Ճենաց աշխարհին, և կեալք առ մեզ նահանջքն՝ ի նահանեացն մերոց ի վերայ կեցեալք և մեռեալք են, և Հայր սորա ի վերայ Տօրն իմոյ մեռաւ, և սա միամօրք մինչև ի մահ վատահեալ է... ի ձեռն դորա ընդհեցաւ բազում խաղաղութիւն, զնդրդ ասեն ցիս զայս բանս, եթէ Մուշեղ քեզ մահու սպասէ "։ Ջնոյն մեծութիւն տոհմին և Մանուէլ մամիկոնեան յանդիման առնէ Վարազդատայ Թագաւորի առ Նորին Բուզանդայ Ե. 37. "Նա մեզ չեմք իսկ լեալ ձեր ծառայք, այլ ընկերք ձեր և ի վերոյ քան զձեզ. զի մեր նախինքն լեալ էին Թագաւորք աշխարհին Ճենաց, և վասն եղբարց իւրեանց գրգռուէին, զի արիւն մեծ անկեալ է ի վերայ, վասն այնր եմք գնացեալք (ի մեր երկիրն), և վասն բա-

բայ հանգստի գտանելոյ եկեալ գադարեալ եմք (՚ի Հայս). առաջինն Թագաւորքն արշակունիք, որք գիտեին զմեզ ոչ էաք, կամ ուստի էաք. այլ զի դու քանզի չես արշակունի,, և այլն։

Պարծանք մեծ է մամիկոնեան զարմին գովեստն՝ զոր միաբան ասեն նախարարքը Հայոց Ժողովեալք ՚ի գուռն Պարսից՝ առ Ղազարայ 85. «Վասն զի տեսեալ էր ամենեցուն, և լսող ՚ի գրոց Ճանաչէին, եթէ ամենայն իրք այսպիսի գործոյ ՚ի բնէ յոլով Մամիկոնէիցն ազգաս, և նոցա միաբանութիւնք եղեալ էին ՚ի գլուխս,, Եւ ինքն Ղազար 97. զայս գովեստ տայ նոցա. «Քանզի տեղեկացեալ Ճանաչէին ամենեքեան՝ թէ առանց առաքնորդութեան ազգին այսորիկ՝ և ոչ մի ինչ իրք և գործք աշխարհիս Հայոց երբ թեալ էին ՚ի գլուխս,, Եւ ՚ի 193. ՚ի խօսելն զուարցէլոյ՝ ասէ. «Եւ այսպիսի անպիտան իշխանք ժամանակին (ուրացեալք) իբրև տեսանէին օր ըստ օրէ զաճումն յաւասլքայիմանէ յորդիս ազգի նահատակելոց մամիկոնէից, զոր ոչ ՚ի տուչուէ մարդոյ վստահեալ ունէին յանձինս, այլ օգնութիւնք վերին ինամակալուէ ՚ի բարեխօսուէ սուրբ արեան նախնեացն իւրեանց.. Թէպէտև արհամարհեալք էին առ նախանձու, սակայն լաւագոյնք էին և երևէին յամենայնի, և ականատեսք ՚ի խորհրդի, մտաւորք և իմաստնագիտք, ՚ի նետաձգութենէն գեղեցկաձիգք և գիտողեցողք. յորս (՚ի յորմորդութենէ) Թեթևաշարժք և նախասպանք, յերկոցունց ձեռաց աջողակք, և յամենայն կողմանս ուղղակիք և ճշորհալիցք,,։

Մեծ են արգաբև գովութիւք տուեալք այսմ ականատեսք տոհմի, մեծ են և արգիւնք նորա. բայց անօրէնն Բասան սահատունի, որ գայեակ և մտուցիչ էր Թագաւորին Վաղարշատայ, առ ՚ի յինքն կորզել զսպարապետութենէ պատիւ ՚ի ձեռաց մամիկոնեանն Մուշեղայ՝ սկսաւ զամենայն զտոհմէն նոցա չարախօսել յունկն Վարազդատայ՝ այսպէս ասելով առ Բուզանդայ Ե. 35. «Խակղեան ՚ի նախնեացն հետէ զձեր արշակունեաց տոհմին (զօգուտ) Մամիկեանց կորուսեալ. զի հակառակորդք ձեր գոքա լեալ են ՚ի բնէ աստի. և համակ զերկիրս Հայոց գոցա է կեղեալ, մանաւանդ Մուշեղի. մանաւանդ զի այր չար է և նենգաւոր. զի սիրելի է Թշնամեաց ձերոց, և ատելի սիրելեաց ձերոց. և համակ ընդ ձեզ նենգաւ է գնացեալ, երկմտութ և դժխեմութ,,։

Ա. Յայիսի բանիւք այնչափ յաճախեաց զիւր չարա-

խօսուԹի՛ն, մինչև զայրն քաջ և զօրաեացապարտ զՄուշեղ
Էա սպանանել ՚ի զուր. յայր սակս ՚ի խոր խոցեալ Մանու-
էլ մամիկոնեան՝ այսպես բողոք բառնայ ՚ի գիմաց Մամի-
կոնէանց առ Վարազդատ ըստ գրելոյ Բուզանդայ Ե. 37.
"Փոխանակ ամենայն (մամիկոնեան) ազգին մերոյ վաստա-
կոցն, զոր ՚ի նախնեացն ՚ի հնոց ժամանակաց հետէ միամը-
տուԹի՛ առ ձեզ Արշակունիս վաստակեալ եմք, և եդեալ
զանձինս մեր ՚ի վերայ ձեր, կեցեալ և մեռեալ եմք ՚ի վե-
րայ ձեր, ամենայն նահանջն մեր առաջինքն անկան ՚ի պատե-
րազմունս ՚ի վերայ ձեր, Վասակ հայր Մուշեղի կորեաւ ՚ի
վերայ Արշակայ արքայի, և մեք հանապազ վաստակեալ
և աշխատեալ եմք ՚ի վերայ Թագաւորուէ ազգիդ ձերոյ,
և փոխանակ կեանս առնելոյ ընդ վաստակոցն, արդ որք
(ոմանք) ՚ի Թշնամեացն մեռան, (իսկ) որք մնացինն՝ զայն
դուք Արշակունիքդ կոտորեցիք: Արդ Մուշեղ այր քաջ
եղբայր իմ, որ ՚ի վերայ ձեր մնաւեաց զանձն իւր ՚ի մահ-
կուԹի՛ իւրմ, վանեաց կոտորեաց զԹշնամիս ձեր, և (զոր)
ոչ կարացին Թշնամիքն սպանանել, դուք կալար ՚ի բազմա-
կանի խեղդեցեր զնա ,, :

Օգնոյն օրինակ գանգատ և մեծն Վարդան առնէ առ
նախարարս Հայոց առ Վաղարայ 100. "Թէ որպէս ՚ի վերայ
ընկերի բարւոյ առաւել քան զանձին միշտ հոգալով զանձն
եդեալ է այսմ (մամիկոնեան) տոհմի, զայն և ամենայն
դուք Հայք գիտէք ստուգուԹի՛ ՚ի պատմուէ գրոց, և ՚ի
լսելոյ ձեր յաւագաց. բայց ՚ի նենգաւոր խաբեուէ ձերմէ
զոր արարեալ է ձեր ընդ նախնիսն մեր հանապազ, զայն
ամենայն յիչելով գնացեալ եմք լինել անձնասպուծ. որպէս
ցանկ ձեր մղեալ է զմեզ ՚ի նեղս և զձեր անձինս ՚ի բաց ու-
նելոյն մեր միայն ազգս (մամիկոնեան) պատահեալ է վշտաց
մեծաց և մահուց ,, : Նոյնպէս գանգատ և Վահան մամի-
կոնեան առ նմա 207. "Բայց միաբանել խորհրդոյդ ... ոչ
կարեմ ասել և չիշեմ. վասն զի ... և զձեր (խաբէուէին)
ծանուցեալ է փորձիւ իմ, Թէ որպէս Հարանց մերոց ուխ-
տեցին երդմամբ և ստեցին ... բայց քան զանձնայն և
առաւել յանձանց երկերուք. վասն (զի) մնորդիկ սուտք
էք և անվստահք ,, :

Երեսելի անձինք ՚ի Մամիկոնէից :

Խազում երևելի անձինս գտանիմք յայսմ տոհմի ՚ի
զօրավարուէ և ՚ի քաջուԹի. զոր օրինակ Վասէ յաւուրս

փոքուն խոսրովու Թագաւորի առ Բուզանդայ Ճ. 4. իսկ յետ մեռանելոյ Վաչէի ի պատերազմի, ասէ Ճ. 11. "Փոքրիկ մանկիկ մի վնորուն զորդի ի հայրենի բարձ գահուն մատուցանէին, որում անուն էր յանուն հօր իւրոյ Արտաւազդ. առաջի Թագաւորին զհօրն պատուն ի գըլուխն գնէին, և զսպարապետութեն նորուն տեղւոյ. զի կորի որդի վատակաւորի էր, և ի վատահասուց ասէին. զի այլ յազգին ոչ գտաւ հուժկու, զի ի մեծ պատերազմին մեռան,, : Եւ զի այս Արտաւազդ որդի Վաչէի մանուկ պոլով ոչ կարէր գործ սպարապետութեն առնել, վասն այնորիկ, ասէ պատմիչն, "զզօրավարութեն զգործ յանձն առնէին Աբշաւրայ կամաւորական իշխանին Ճիրակայ և Աբշարունեաց գաւառին, և Անդովկայ իշխանին Սիւնեաց. զի նոքա փեսայք էին տանն մամիկոնեան տոհմին,, : Այսպէս երևելի եղեն և քաջաւրեցան և կերպարասնօք երկոքին եղբարքն մամիկոնեանք որդիք Արտաշիսայ Մանուել և Կոմս, զորոց ասէ Բուզանդ Ճ. 37. "Ոչին երկոքեան մեծք անհեդեդք, երկոքեան անձնեայք որպես սկայազունք,, : Եւ ստորև վասն Մանուելի գրէ. "Իբրև զաչս ի վեր ամբառնայր արքայն Վարազդատ, և նայեր ընդ գալն իւր և տեսանէր զսպարապետն Մանուէլն, ի մեծութենէն հասակին և ի շքեղուն անձինն, և յամրակուռ յերկաթ ապատ ոտիցն մինչև ցգլուխն առհասարակ յանվնաս գնէին, ի հաստատուստ անձնէն, և ի հաստատուն երկարութեն, և յասպազէն վառելոյն յանշարժ սպառազինէն համարեցաւ կշռեաց գնա ի միտս իւր իբրև զքեառն մի բարձր զանմատոյց,, : Մեծ քաջագործութենի պատմէ Ճ. 37. արարեալ սորին Մանուելի ի զօրս Պարսից ընդդեմ Բուշանաց:

Ո արմանալի գովութենէ պատմին ի գլխո պատմագրաց և վասն մեծին Վարդանայ մամիկոնէի հրամայկալ ի գունդն Պարսից. զոր օրինակ առ Ղազարայ 135. յորժամ յետ նահատակելոյն Վարդանայ՝ Մինհրնեսեհ հազարապետ և այլ առաջանին դրան Պարսից յանդիմանէին զքաջն, նայս ասելով. "Կորուսեք ձերով կախարդութեր զայնպիսի քաջ այր զՎարդան. զի օգտակարուն էր Աբեաց տեառն. և զմեծամեծ գործոց նորա յիշումն առ Աբեաց աշխարհին՝ զոր բազում զօրագլուխք և այլ Արիք յիշեն՝ ընդ որս նորա և կռիւ եղեալ էր, այլ և զոր իւր իսկ աստուածամանման տեառն իւրով աչօք տեսեալ էր ի Մարվիռատ զնորա քաջասրտութենին. սակաւ մարդիկ են յԱբեաց

աչխարհին որ կարէն ասել ըստ արժանի գովուէին յայլն և 'ի նորա արարած ,, . այսինքն և 'ի նորա արարս կամ 'ի գործս : Ա յսպէս առ Յաղկերտ արքայ յայտնէն առ Վասակ Սիւնեաց տէր . "Ջայնպիսի ծառայ մի զմեր որպէս զՎարդան՝ և կայսր՝ և կամ Հմայոց արքայ՝ (եթէ) բռնութիւ լինիս հանել կամիցին, ամենայն Աբեաց ուժովս կռուելի , և չտայի հանդչել , մինչև այսպէս լիս հանելի ,, : Մի լինելի արանց մամիկոնէից գառաւ և Վահան , առաւելեալ ոչ միայն 'ի գործս քաջութեան , այլեւս յամենայն արգահատմութեան , 'ի կառավարուն , 'ի բարեբարուն , նաև 'ի գործս կենցաղոգուտս , զորս կարես գտանել 'ի մատենիս սիրեալ 'ի պատմս գլուխս ըստ պատմութեան գործոց նորա :

Այլ յիրաւի՝ ըստ ակնարկելոյ պատմագրոյ՝ մանաւանդ Վաղարշ , 'ի Մամիկոնեանս սերունդեամբ գտանէին տպաւորեալ սկզբունք գովելի բարեյատկութեանց , և բնական ինն յօժարուն և յատկութեանց 'ի կրթել զմանկունս 'ի հրահանգս բարի քաղաքավարուն , ոչ միայն զիւրեանցն , այլ և զայլոցն . և զայս ոչ միայն յորս էր տեսանել այլ և 'ի կանայս նոցա . "Նոքօք զարդարէին (ասէ 'ի 193. վասն մանկունսդոյեալ ինքեանց և յատկացնալ փութային . և զորդիս երանելոյ կամնարականին Աբշալոյ տեառն Աբշարունեաց , որք և ազգախառն իւրեանց էին , ծնունդք գտեր մարտիրոսին Վարդանայ , խրատել և հրահանգել ըստ իւրեանց իմաստութեանն և արուեստի ջանային ,, :

Այս բնական յօժարուն կրթուէ էր որ ետ Մանուէլի մամիկոնայ 'ի մեռանել իւրում խրատել զորդի իւր յայսպիսի գործս , որք արժանի են քաջատոհմիկ առն . զորմէ ասէ Բուզանդ Ե . կգ . "Ձետ այսորիկ հիւանդացաւ սպարապետն զօրաւոր Հայոց Մանուէլ զախտ հիւանդութեանն մահու . և կոչեաց զորդի իւր զԱրտաշիր , և ետ նմա զտէրութիւն իւր և զսպարապետութեն զօրավարութիւն իւրոյ . և պատուիրէր նմա հնազանդ հպատակ կալ արքային Արշակայ , և լինել միամիտ . ջանալ և վաստակել և տալ պատերազմ փոխանակ աչխարհին Հայոց զանձն քո , որպէս քաջ նախնիքն 'ի վերայ աչխարհին մնոպիւր մեռան նել . զի , ասէ , առ Աստուած այն արդարութիւն մեծ է և ընդունելի , և ոչ Աստուած Թողու 'ի ձեռաց՝ յօրժամ այնպէս լինիք : Ա յսուն քաջութիւ յերկրի Թողուք , և զարդարութիւն յերկինս ընծայեցուցանէք . և ամենևին 'ի

մահուանէ մի երկնչիք ... զնեցգուն և զպղծուն և զա-
րուեստ յանձանց ձերոց ի բաց արարէք ... ի վերայ աս-
տուածապաշտ աշխարհի համարձակութիւն մեռարուք, զի
այն ինքն մահ վասն Աստուծոյ է, փոխանակ երկնեղեցաց
նորա և ուխտի նորա. և ի վերայ ընակ տեղանց աշխարհիս
արշաւօնոյ ,, : Եւ յայ խրատ հաւատարիմ լինելոյ և ան-
խոնջ աշխատելոյ ի պատերազմի գրեթէ միշտ հաստատուն
պահել եղև ի զօրավարս մամիկոնէից. և ինքն Մա-
նուէլ, որ էտ զայս խրատ, առ ի օրինակաւ իւրով ցուցա-
նել, յառաջ քան զմեռանել իւր կոչեաց առ ինքն զամե-
նայն աւագս. և առաջի ամենեցուն մերկացեալ զմար-
մին իւր եցոյց յայն վիճակ հասեալ, "Չի քան զդրամ
խայծ ոչ գտաներ ողջ ի մարմնի նորա, զոր խոցեալ էր ի
պատերազմի ,, . որպես ասէ Բուզանդ :

Ի տոհմէ մամիկոնէից յետ բառնալոյ Թագաւորուն Արշակունեաց եղեն և հրամանատարք աշխարհիս Հայոց, որպէս բաց ի նախայիշեալ Վահանայ, որ յետ զօրավարու-
թեն եղև և մարզպան և հրամանատար, Վարդ մամիկո-
նեան, Վարդան ե. փոքր՝ մամիկոնեան, Համազասպ մամի-
կոնեան, զորմէ տես ի գլուխն Դպրուե, և Գրիգոր մամի-
կոնեան՝ զորմէ Յովհաննէս կաթողիկոս. "Սա էր այր բա-
րեպաշտ և երկիւղած յԱստուծոյ ... որ գրեթէ յաշխար-
հի իբրև յանապատի գոլով հետեւիւր զկնի ամենայն աւ-
գար վաստակոց ,, : Տես և ի գլուխն Բարուց զաշխարհա-
շէնս. իսկ վասն կրթուելոյն կանանց նոցա տես ի վերջն
գլխոյն Դպրուե :

ԳՆՈՒՆԻՔ

Օսկզնաւորութիւն այսր տոհմի տես զոր գրեցաք վասն
արծրունեաց տոհմին. իսկ զսկզնաւորուէ և զպատուոյ
այսր նախարարութեն պատմէ Խորենացին ե. 7. "Գիտեմ
զԳնունիսդ՝ էնի ոմէս, որ առաջի Թագաւորին պատրաս-
տեր զմնիելիան, որ աքանչելի ինն գիպեալ եղև ըստ գօր-
ծոյն և անունն. քանզի պատրաստեր զմնիելիան արքայի
յընտիր և հմուտ գինեաց, ուստի և կոչումն անուանն
Գնին, ընդ որ կարի զուարճացեալ ասեն, Վաղարշակ կոր-
գէ ի Թիւ նախարարութեն ազգաց մեծապէս : Եւ էն այս
երկու տունքս ի զաւակէ Սենեքերիմայ Արծրունիս և
Գնունիս ,, : Ջնոյն գրէ և ա. 23. "Ի սմանէ ասէ պատմա-
գիրն (Մարիբաս) լինել զԱրծրունիս և զԳնունիս ,, : Արդ
ըստ պատմելոյ Խորենացւոյն այս տոհմ նախարարութեն

կարգեցաւ լինել տաճառաւպետ արքային. այսինքն պատրաստող զգենի, և վերակացու մի երամոցաց գնալոյ, որ ըստ ձիւդ առման տարբերի՝ ի մառաւսակ՝ որ ի սեղանի մատակարարել գնի: Բայց մատենադիրն է. 19. պատմէ և՝ ի գործ գնուորութեէ՝ ի կիր արկեալ՝ ի սոցանէ, յաւելեն վասն բարզափրանայ սպարապետին միջոյն Տիգրանայ. "Զգենել ոմն Տակառապետ արքային Հայոց որ էր յազգէն Գնունեաց, առաքէ Յերուսաղէմ հանդերձ հեծելազօրաւ,,:

Իսկ Բուզանդ է. 2. զայլ մեծագոյն պաշտօն տայ այսմ տոհմի ասելով. Կացոյց Արշակ արքայ "սկիզբն գործակալութեէն հազարապետութեէն աշխարհատեռն խնամակալութեէն... աշխարհատարած գեհկանուէ, չինականաց չէն ազգն Գնունեաց, Հազարապետն ամենայն երկրին,,: Այլ զիարդ և իցէ՝ ընդ մեծ նախարարս յիշատակի և այս ցեղ. Խորենացին է. 43. յիշէ ընդ նախարարս զոմն "Աատատ յազգէն Գնունեաց,,: Եւ Ղազար 124. ընդ նահատակեալ նախարարս յիշէ "Ջազգէն Գնունեաց երանելին Վահան,,: Եւ ի Թղթ. 75. յիշէ ընդ ժողովեալ նախարարսն "Տէրն Գնունեաց Աւոտ,,: Թոմա արծրունի է. 4. յիշէ և զոմն Պատրիկ անուանէ. "Եւ Գնունիք Վահան և Համազասպ և Ապուսահլ և Պատրիկ,,, որ էր՝ի զօրս Դուքս գենայ եղեալ Աշոտոյ վասպուրականի յաւուրս Բուզայ ոստիկանին: Ի մէջ նահատակեալ վկայից այսր տոհմի հռչակաւորս են առ պատմագիրս յաւուրս Յուսիկայ ոստիկանին, "փառաւոր և մեծ իշխանքն Դաւիթ և Գուրգէն՝ ի տանէն Գնունեաց,,, որպէս ասէ Վարդան. զօրս և Ասողիկ է. 5. կոչէ "մեծք և պատուականք,,:

Իսկ վասն երկրին Գնունեաց Թէպէտ յայսմի ինչ ոչ գտանելիք՝ի գիրս, այլ՝ի բանից Վարդանայ յայտ է լինել Աղիովիտ գաւառ Տուրուբերանոյ. մանաւանդ զի շարունակող Թոմայի արծրունւոյ զԱրձէն քաղաք Աղիովիտ գաւառի կոչէ "Քաղաք Գնունեաց գաւառի,,: Տես՝ի մեծ Հայս 125. 126: Նոյնպէս և զԵահապիսան լեառն Ծաղկոտն գաւառին Աղբարատու՝ի մերձ կողմանէ Ժառանգուէ Հասեալ Գնելոյ գնունւոյ ասէ Խորենացին է. 23. "Գնելայ բազում երէս քան զայն առնել ընդ նոյն աւուրս յիւրում լերինն՝ որ Շահապիսանն անուանի, որ՝ի մայրինի Հասեալ Խրոյ Գնելոյ գնունւոյ Հասեալ էր ցնա,,: Բայց մեկն իմն է յիշատակէ՝ի Մեսրոպայ՝ի Թիւն է. "Ապա մի ոմն՝ի մեծ նախարարացն՝ի գաւառէն Շի-

բակայ, որ էր միանձնացեալ ի լերինս յայգէն Գնու-նեաց, որում՝ անուն էր Պարգև ,,։

ԱԲԵՂԷՆ • ԴԱԲԵՂԷՆ

Յօրինեացն ՟ը. 7. գրէ վասն Վաղարշակայ, Թէ կարգէ "զԳաբաղ սմն ի վերայ կուտից. և զԱբեղ սպասաւար և գահաւոր, և շինս պարգևէ նոցա. յորոց և անուն կոչին սպասիս և նախարարութիւնքն Աբեղէն և Գաբեղէն ,, ։ ի վերայ կուտից ասելով իմանայ զկոյս մԹերից ցորենոյ և այլոց ի պետս պարենից ։ . որոց պարգևեալ երկիրն ի Վաղարշակայ՝ կացոյց զերկուս գաւառս Ախրատատ նա-հանգին յանուն նահապետացս կոչեցեալ։ Ա.յլ ի գիրս զԳաբեղենից գաւառն գտանեմք յիշատակեալ, որպէս ունիս տեսանել ի մեծ Հայս 388. իսկ զմիւսն ոչ. միայն զիշխանս նորա գտանեմք յիշատակեալ, և այն գուն ու-րեք. որպէս առ Խորենացւոյն ՟ը. 60. " զԱբեղոյ զմին նա-հապետ Աբեղենից տոհմին ,, ։ եւ առ Ղազարայ 75. Տէրն Աբեղենից Գազրիկ. և ի 114. Իշխանն Աբեղենից Ար-աւէն ։ Ա.յս տոհմ առ Մեսրոպայ ժ՟ը. կոչի Աբեղոտնիք ։ իսկ յիշատակեալ իշխանքն ի գաբեղենից տոհմէն՝ առա-ւել առ Ղազարու գտանին. որպէս ի Թղթ. 233. " եւ տուեալ զկողմն աջոյ ի ձեռս Բաբշղի վահնունւոյ, և Սա-տունի Գաբեղենի ,, ։ եւ ի 262. "Բայց ի Հայոց գնդէն Գաբաղ միայն սեպուհէն Գաբեղենաց կամաւորութեամբ կռուեալ, և մեծ արուի ցուցեալ խոցեցաւ ,, ։ Նոյնպէս և առ Մեսրոպայ Ֆ. յիշատակի " Վաղազվաղեան իշխանն Գաբեղենից ,, ։

ՀԱՒՆՈՒՆՔ

Յօրինեացն ՟ը. 7. կոչէ Հաւհնունիք. կարգեաց, ասէ, Վաղարշակ " և զՀաւհնունիսդ՝ բազէակիրս և բազէա-կալս, յաղագս ի մայրիս բնակելոյ ,, ։ Զայս է ասել՝ ի վերայ որսոց արքայի կարգեալ այս նախարարութիւն, որոյ և սերունդ յիշատակի ի գիրս, Թէպէտ և գուն ուրեք. զոր օրինակ յասելն Յոհաննու կաթողիկոսի վասն Հասա-նայ՝ որ հրամանատար էր Համբրէն տէրունի ։ Ամբատայ.

1 Ե զի կղզաք սմին և երամակք տատնելոյ ի գաշտս, և պահելոյ զան-ձինս. որոց վերակացուի անկ էր ըստնդ նոցա։
ինամ ունել արքունի երիվարաց վասն

«Քակիր յարքայէ զոմանս, և յայլոց ևս նախարարացն Վանանտացեաց և Հաւնունեաց զհամազգիս իւր զգլխա-ւորս . . . և ապա զոմն Հաւնունի զաներ Հասանայ . . . յուղարկելին ՚ի սպանումն արքային ,, : Եւ յասելն վասն Գագկայ արքային Վասպուրականի, թէ առ ոստիկանն Սիւնեաց առաքեր «ապա զոմն Գէորգ Հաւնունի ՚ի կրճնա-ւորական կարգէ ,, : Սոյնպէս և առ Թոմայի արծրունւոյ էջ. 6. յիշատակի «Վահան Հաւնունի սեպուհն Դաւիթ ,, որ եկն յօգնութիւն բագարատայ իշխանին Տարօնոյ ՚ի պա-տերազմել ընդդէմ Մուսէի հագարացւոյ : Յաշխարհա-գրութեանն Խորենացւոյն ևս ՚ի գլուխս Աշրարատու գրի Հաւունիք . այլ տես զայսմանէ ՚ի մեծ Հայս 380 :

ՍԱՄՈՒԷԼ

Սոքա ևս ՚ի վերայ որսոց կարգեալ գոլով, զնի Հաւ-նունեաց յիշեսցուք . զորմէ գրէ Խորենացին էջ. 8 . «Ա-յլ մեռացաք և զգժնեայ Սլաքն անուանեալ այր . զոր ոչ կա-րեմ Հաւաստեաւ ասել, ՚ի Հայկա՞յ՝ եթէ յառաջագունից քան զնա եղելոց յաշխարհին՝ զոր հին զրոյցքն պատմեն լինել : բայց եր այր քաջ : Զսա կարգէ սակաւ արարիք պահել զնեառնն , որսալ զքօշն . որք անուանեցան Սլիու-նիք ,, : Սերունդ նախարարութեանս Թէպետ հին, գուցէ առաւել քան զՀայկ, որպէս յոլ առնի Խորենացին յայս բան , այլ յետ ժամանակաց ապստամբութեամբ իւրով ար-համարհեցաւ , մինչև բնաջինջ լինել Համարհն ազգի իւ-րոյ յաւուրս Տրդատայ Թագաւորին : Զի յորժամ Շա-պուհ Պարսից արքայ յարոյց զհիւսիսականսն ընդդէմ Տրդատայ ՚ի գնալն նորա ՚ի Հռոմ, միաբանեցաւ ընդ Շապհոյ և Սղուկ նահապետ ազգին Սլիւնեաց, և յայտ-նի ապստամբեալ ՚ի Տրդատայ՝ սպան զՕտայ նախարար մուսոյզ խոսրովիդխոյ , և զնաեր ամենեցուն՝ ամրա-ցեալ ՚ի բերդն իւր Ողական յերկրին Տարօնոյ . զի Համա-րէն Տարօն էր իւր սեփական երկիր . Տրդատ խոստացաւ տալ զերկիրն Սլիւնեաց զՏարօն պիտի՞ որ զՍղուկ սպրս-տամբ կալեալ ածցէ առ ինքն : Զոր և կարող եղև առնել Մամիկոն նահապետ մանիկոնեանց որ նորոգ եկեալ էր՝ի Ճենաց . և սպանեալ զՍղուկ՝ յինքն հաւ զՏարօն . զորմէ Ղևոնդ պատմէ Խորենացի էջ. 84. Մամիկոն, ասէ, «նաև զազգն Սլիւնեաց խորհեցաւ բառնալ, և կոտորեաց զա-մենեսեան . երկուք ոմանք փախստական անկան յաշխարհն

Դ.ոփաց...բայց (Տրդատ) ձեռացելոցն Սկիւռնեաց հրամայէ չվնասել,,։ Յորոց էր Գինդ յազգէն Սկիւռնեաց, յիշատակեալ՝ի Խորենացւոյն ՚ի. 20. յաւուրս մեծին Նեռսի. և Աղրուկ Սղկունի՝ յիշեալ առ եղիշէի 174. որ եմուտ՝ի գունդն Վարդանայ. այլ՝ի գիրս չկը այնպէս ինչ յիշատակութիւն զՍկիւռնեաց։

ՄԱՆԴԱԿՈՒՆԻՔ

Խորենացին ՚ի. 8. յետ գրելոյ՝ Թէ Վաղարշակ կարգեաց զՍկիւռնիս որսալ գ.ջօջս, ասպա ասէ. "Ապացէս և՝ի նոյն իրս (կարգէ) և զՄանդակունիք,, և՝ի սմանէ (սերեալ էին) Մանդակունիք,, ։ Որով յայտ առնէ, Թէ և Մանդակունիք կարգեալ էին՝ի վերայ որսոյ։ Ի ցեղէ սոսի էր Արտաւազդ Մանդակունի, որ զՏրդատ արքայ՝ի մանկութիւնէ իւրմէ զերծոյց՝ի կոտորածէ Արտաշրի Պարսից արքայի հասուցեալ՝ի գուռն կայսեր. այսմ՝ի վերայ հասեալ Արտաշրի, ասէ Խորենացի ՚ի. 78. Թէ որ զերծոյն էր "Արտաւազդ յազգէն Մանդակունեաց, հրամայեաց զամենայն ազգն Ջնջել սատակմամբ... և սատակէին սրով ամենեքեան. բայց կայս մի գեղեցկադիտակ՝ի քերցն Արտաւազդայ գողացեալ Տաճատայ ուրումն՝ որ էր լեալ յազգէն Աղոցան՝ի զաւակէ Դուշաբայ հայկազեոց, փախուցեալ՝ի կեսարացւոց քաղաքէն ապրեցուցանէր, ամենամաւրեալ ընդ ինքեան վասն չքնաղագեղ կերպարանին,, ։ Ահա՝ի յազգկանէ սատի սերեալ են յետագայք այսր տոհմի՝ սակաւ ուրեք յիշատակեալք. որոց պարծանք եղև Յոհան մանդակունի հայրապետ։ Ալ Տրդատ՝ի հաստատել՝ի Թագաւորութեն՝ի՝ի շնորհակալութեի պատուէ "զիւր դայեկորդին զմանդակունի Արտաւազդ, վասն լինելոյ նորա նմա պատճառ փրկութե, և հայրենականացն հասելոց փառաց. յազգս որպ՝ի ձեռն նորա տայ զսպարապետութեի զօրացն Հայոց,,. որ և մեռաւ՝ի մեծի պատերազմին որ ընդդէմ հիւսիսականացն. այլ սպարապետութեին ոչ մնաց՝ի ձեռս տոհմին, և տոհմն իսկ անյիշատակ մնաց։

ՎԱՐԱԶՆՈՒՆԻՔ

Ան է՝ի տոհմէ սերելոց՝ի քսիկ հայկազանց. "Իսկ ղԴատ (ասէ Խորենացին ՚ի. 7. վասն Վաղարշակայ), ՚ի

զաւակէ Դաւնկայ որ ՚ի Գեղամայ՝ ՚ի վերայ որսոց արքունականաց կարգէ. որոյ որդի եղեալ Վարժ՝ յանուն նորա անուանի ազգն. բայց այս վկնի յաւուրս Աբրատշիսի ,, Ջօրմ և գրեալ եր՚ա. 12. "Ի սորա (այսինքն Գեղամայ) ծննդոց ասա ուրեմն առ Աբրատշիսիս Թոռամբ Վաղարշակայ ոմն Վարժ անուն պատանի լեալ, աջող յորս եղծերուաց և այծեմանց և վարազուց, դիպաձգութեբ նետից կորովի, զոա ՚ի վերայ որսոց արքունեաց կարգէ. և չկնա պարգևէ նմա առ եզերբ գետոյն՝ որ անուանեալ կոչի Հրազդան. և ՚ի սմանէ ասեն լինել զտուննն Վարաժնունեի ,, ։ Որով բանիւ յայտ առնէ՝ Թէ Դատ՝ Թէպետ եղև որսապետ, բայց զիւր անուն ՚ի վերայ տոհմին ոչ լինքն՝ այլ իւր որդին եԹող. զորմէ դարձեալ պատմէ՚ը. 11. յասելն վասն ա. Աբրատշէսի Թոռանին Վաղարշակայ. "Տայ զՏիգրան որդի իւր ցպատանեկ ոմն Վարաժ անուն՝ ՚, որդի Դատայ՝ որ ՚ի զաւակէ Դաւնկայ որ ՚ի Գեղամայ. քանզի էր պատանին նշանակ ՚ի նետաձգուն կորովութեբ ուսուցանել զՏիգրան, Ջնա իշխան արքունականացն ա. բարեալ որսոց, և չկնա պարգևեալ նմա առ Հրազդան գետով, յանուն նորա կոչի ազգն Վարաժնունեի ,, ։ Ա յ՝ որպէս և նախագրեալ բանին ցուցանեն Թէ Վաղարշակ չէր ինչ պարգևեալ Դատայ երկիր կամ կալուած, այլ վկնի ա. Աբրատշէս պարգևեաց։

Վ ամն Վարաժնունեաց երկրին որ ԱՅրարատ նահանգ գի՝ տես ՚ի մեծ Հայս 457. բայց քանզի նաև ՚ի Տուրուբերան և ՚ի Վասպուրական նահանգս գոն գաւառք Վարաժնունեի անուանեալք, պարտ է ընտրութեբ առնել ՚ի գիրս. զի յիշատակեալն ՚ի գիրս Թոմայի արծրունւոյ Թուի լինել այն՝ որ ՚ի Վասպուրական նահանգին. զոր օրինակ յասելն ՚ը. 7. "Բայց միայն զԱշակ (զԱշոտ) ոմն ՚ի տոհմէն Վարաժնունեաց ինդրեալ դստերն Շապհոյ բագրատունւոյ, զոր առեալ յայնժամ Ափշնի կնութեբ յանօրէն ամուսնութեբ. զսա աղէբսեալ տիկինն վասպուրական Սեդայ կին Աշոտի, և դուստր Ադոմնուանայ՝ զերծին զնա ՚ի սրոյն Ափշնի ,, ։ Ջի յայնժամ յաւուրս ա. Սմբատայ զորք Ափշնի ոստիկանին ՚ի Վասպուրական եկեալ էին ՚ի կոտորել զիշխանս, որպէս գրէ նա ինքն։

1 Այս կոչէ Վարաժ. խակ ՚ի ը. 7. Ձգուշ այսպէս անուանեալ. այլ յայլոյ Վարաժ. յորոյ ՚ի գործ սպա- նուն տոհմին հայելով որ Վարաժնունեաց հայելով առաջինն Թուի նի կոչեցաւ երկրորդն երևի ուղիղ։ ուղիղ սակս վարաժ գոլոյ ՚ի նետա-

Եւ յայս բան Ե. 17. «Խակ ընդ առաւօտն ընդ այնոսիկ սպանեալ էր Ուէթմանկանցն որ յամառօտն նստէին զՈրսաժոմ Վարաժնունի, որ զտանուտիրական պատիւ յայնժամ ունէր զԱսպետրական աշխարհիս»։ Աս՝ ի ունել զտանուտիրական պատիւ Վասպուրականի՝ որ է ասել գահակալել իշխան Վասպուրականի՝ հարկ եր լինել ի Վասպուրականի, և ոչ յԱյրարատոյ։ Սոյնպես ի յիշել զՎաչժնունիս միացեալս ընդ զօրս Գուրգենայ արծրունոյ եղբօր Աշոտոյ ընդդէմ Բուղայ՝ ասելով Ե. 4. «Եւ Վաչժնունիք և Մլէհ և Բռատոմ և Վարազշապուհ»։ ի մինոյ զՎարաժնունիս Վասպուրականին, ուր էին Աբծրունիք։ Այլ թէ այս տոհմնոյն եր արդէօք ընդ Վարաժնունիս Այրարատու՝ մեզ չէ յայտ։

ՍՊԱՆԴՈՒՆԻՔ

Խորենացին ի Ե. 7. գրէ. «Աեմ և զՍպանդունիսդ ի վերայ զենարանաց»։ Աչխինքն Վաղարշակ կարգեաց նախարարութէ ի վերայ զենարանաց, զոր կոչեաց Սպանդունիս. յորոց սերդոյն յիշէ զոմն նա ինքն խորենացին Ե. 56. ասելով. «Սպանանէ Աղրսամ Սպանդունի զզօրագլուխն»։ Եւ Մեսրոպ ի ժԲ. ընդ այլ իշխանս յիշէ զՍպանդունիս։

ՁԻՒՆԱԿԱՆՔ

Ա՛ռն այսր տոհմի գրէ Խորենացին Ե. 7. «ՁՁիւնական (կարգեաց Վաղարշակ) ամառայնոցաց պահակս, և Ձիւնակիրս, և յառաջադիմէ՛ք ազատացեալս որպէս ընտանիք Թագաւորաց»։ Աչխինքն յառաջադիմէ՛ք կամ հետզհետէ յառաջագէմ լինելով այնր ցեղին՝ ազատացեալ եղեն, կամ անցին ի կարգս ազատաց՝ որ է նախապարագ, այնպիսի իւն ազատութէ՛ կամ ազնուականութէ՛ որպէս էին ընտանիք Թագաւորաց. որովհետև պահապանք էին Թագաւորական տանց կամ ապարանից որ յամարանոցս։ ՉԱրիեն Ձիւնական յիշէ Վազար 75. ընդ նախարս ժողովոյն՝ որ ժողովեցան ընդդէմ առաջարկուէ Պարսից։ Եւ Մեսրոպ ժԲ. ի կարգս իշխանաց յիշէ զՁիւնականս։

ԳՆԹՈՒԹԻՒՆ

Որպէս գրէ Խորենացին Ը. 7. Վաղարշակ կարգէ "զգնեցուցանողս իւր զՁեռէս [1] ի զաւակաց քանանացւոց, անուն կոչէ ազգին Գնեհունիս". Սովին բանիւ ծանուցանէ աստէն միայն զծագումն նախարարութեանն Գնեհունեաց ի Վաղարշակայ սկսեալ. իսկ զբնիկ ծագումն ցեղին ծանուցանէ ի ԺԹ. 19. ուր ի գրելն՝ Թէ յաւուրս Ցեսուայ ոմանք ի քանանացւոց փախուցեալք նաւեցին ի Թարսիս, ապա ասէ. "Յայսմ դրոշմամբն որ յարձանն արիւնկերոց աշխարհին՝ գրեալ կան մինչև ցայսօր ժամանակի արգարասէս այսպէս. Ի Ցեսուայ գողոյ փախուցեալ մեր նախարարքն քանանացւոց եկաք բնակել աստ. յորոց մի և Քանանիդաս [2] պատուականագոյն մեր (գնաց) ի Հայս [3]; եւ ստուգեալ հաւաստի գտաք զսերունդս ազգին Գնեհունեաց՝ ի սմանէ առանց հակառակութեան լեալ. զայս և բարք արանց ազգի յայտնեն քանանացի գոլ". Վասն որոյ և Լամբրոնացին ի Ձառն ժառանգաւորաց՝ քանանդեցիս կոչէ զսոսա. և Յոհաննէս կաթողիկոս ազգին Տայեցւոց Գնեհունեաց յարակցեալ ի միասին չիշատակէ. զոր օրինակ յասելն. "Եւ պահնակ ամրոցին էր քանանիտ յազգէն Գնեհունիս Հասան անուն, յոյժ հաւատարիմ և հրամանատար ի վերայ ամենայն տանին արքային". Սմբատայ: Եւ այլուր. "Բայց յետ այսորիկ ստուգեալ մերկացեալ երևեր ապստամբութիւն քանանիտ Գնեհունեացն Վասակայ. որում հաւատացեալ եր պահ-

1 Ի բանից ասի երևի Թէ Ձեռէս է անուն մարդոյ, որ եր ի զաւակաց քանանացւոց. այլ Վիպագիրքդ Թադէոսի խորենացւոյն՝ հայելով միայն ի ազգաբանն՝ ուր վերագրեալ գնէ զՅեռ., համարեցան վասն Ձեռ. նոյն ասացեալ. և զի Ձեռնոյ ի բարբառ գաղղիական և իտալական կՀնե ի կոչի, համարեցան ի կվանեթ բառէս Գնեհունեաց առեալ զանուն իւրեանց: Զայս սուտ ստուգաբանութիւն ասելոյն առնել յաւելս ի բանէ Խորենացւոյն, որ ասէ ըստ ազգաբանութեան. "Եւ անուն կոչէ ազգին Գնեհունիս, ոչ գիտեմ էր ազգաբանութիւն, այլ ի Ձեռագիրսն չկա այս յաւելուած ոչ գիտելոյ. և զնմանզգ կարեր ասել զայս, ուր ի ԺԹ. 19. ինքն Խորենացին ըստ բառականին յառաջ բերել զծագումն ազգին Գնեհունեաց, ակնարկել նաև զծագմանէ անուան. որ է ածանգեալ յաւելս քանանդեցս:

2 Աս Լսողսյ ԺԹ. 6. գրի Քանդեաս. "Եւ զգեցուցանողք զՁեռէս ի զաւակէ քանանացոց և Քանիդեաց".

3 Զայս յիշէն և Պրոկոպիոս յերկրորդ գիրս պատերազմին Վանդալից. գլուխ 10: Եւ Մուիգա ի բառն Քանան:

պանուԹէ ամբողին Շամշուտեի „ . որ էր յաւուրս ՚ի . Ա-
շոտոյ Թագաւորի ։

Զ քարուց գՆԷՈՒնեաց յայտնի ինչ ոչ նշանակէ խորհ-
նական . բայց ՚ի պատմուԹեանց Յոհաննու կաԹողիկոսի
երևի բնական բարք լեալ նոցա նենգուԹէ և ապստամ-
բուԹէ . յայտնի է և առ խորենացւոյն ՚ի . 24 . քսուԹէ
Զօրայի նահապետի ազգին գՆԷՈՒնեաց , զոր մատու-
ցաներ յոմնին Աշշամայ արքայի վասն Ենտնոսի բագա-
տանեայ , որով պատճառ եղև նմա ՚ի հրեուԹէ դառնա-
լոյ ՚ի կռապաշտուԹէն . Ա յլ պարծանք եղև տոհմին նա-
հատակեան ընդ Վարդանանց՝ յիշատակեան ՚ի Ղազա-
րայ 124 . “Ցազգէն գՆԷՈՒնեաց երանելին Տաճատ „ ։

Ա ման երկրին գՆԷՈՒնեաց ոչ գտանեմք ուրուն ինչ յի-
շատակուԹ ՚ի գիրս . բայց ՚ի գրելոյ խորենացւոյն ՚ը . 4 .
վասն Վաղարշակայ Թէ զօրս ժողովեր արս քաջս , “և
զծովեզերեայն մանկունս որք ՚ի Վեղամայ և ՚ի Քանա-
նացւոց „ , մարԹ է կարծել Թէ որպէս Վեղամեանք , նոյն-
պէս և գՆԷՈՒնքիք բնակեին զծովեզերքն Վեղամայ նախ
քան զամբառնալն ՚ի նախարարուԹէն , զորս աստ կոչէ
Քանանացիս ։

ՈՍՏԱՆԻԿ

Վասնդ կարգեալ ՚ի պահպանուԹէն գրան արքունի ,
որպէս է տեսանել առ խորենացւոյն ՚ը . 7 . յԼեւբոպացւոց
կոչեցեալ Քծոփս ոչ ԽոՀոՀպա . և յօսմանեանց Գոփոճի
պաշէ ։ Ա յս Ոստանիկ անուն , որպէս նշանակեալ է մեր ՚ի
մեծ Հայս 458 . նշանակ Աբքունի . վասն որոյ և երբեմն
կոչի այս զարմ Ոստանիկ , և երբեմն Աբքունի , որ է
նոյն ։ ՍկզբնաւորուԹէն սոցա գոլով յարանց ընկերելոց
Տիգրանուհւոյն՝ կոչեցան Աբքունի կամ Աբքունական .
մի՝ զի էին զարմք արքայազունք . “Ի հին զարմից Թագա-
ւորացն որ ՚ի Հայկայ „ , որպէս ասէ խորենացին ՚ը . 7 . և
երկրորդ՝ զի էին ՚ի գործս արքունիս կարգեալ , այս-
ինքն յընկերուԹէ և ՚ի պահպանուԹէ պալատին Տիգրանու-
հւոյն . զայս յայտ առնէ խորենացին յասելն ՚ա . 30 . “Յու-
զարկէ Թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծ առ
բոխիս ՚ի Հայս „ ։ Ուր առքոխ առելով իմանալ զզօրմուԹէ
ծառայից ապստաւորաց , զզօրմուԹէ զօրաց և պահապանաց
՚ի գրան նորա որպէս Թագաւորի , որով արդարանայ ա-
սելն՝ Թագաւորապէս . և քանզի Տիգրանուհին էր Թա-
գուհի Մարաց , ՚ի նոցին բարբառ , առ որս մնացեալ էր և

պաբսկականն, կոչեցաւ այս իւր գունդ պահապանաց երբեմն Ոստանիկ, և երբեմն Հայկական անուամբ Աբբունի։

Այս տոհմ Թերևս չէր Տիգրանուհւոյն ոչ միաց ի սպասաւորուն կամ ի պահպանուն պալատան արքունի, բայց նոյն տոհմն միաց մինչև ի ժամանակս Մարիբասայ, որ վկայէ ի պատմագրուն իւրում, Թէ Ոստան կոչեցեալ ամուսազարքն՝ որք կային ի ժամանակս իւր՝ որում և ի ժամանակս Վաղարշակայ ի կողմանս գաւառացն Տիգրանակերտի՝ էին ի զարմէ Տիգրանուհւոյն. զայս յայտ առնէ բան Խորենացւոյն ա. 30. «Եւ զՈստանն անուանեալ կողմանցն ախոցիկ ազատութիւն (նախարարութիւն կամ ամուսազարմուն,) ի զարմից սորա (Տիգրանուհւոյ) ասէ (Մարիբաս) լեալս իբր Թագաւորական զարմն»։ Ուր և յայտ առնէ Թէ նոյն Ոստան անուն միացեալ էր ի վերայ այնր ցեղի. Վաղարշակ ի ցեղէ աստի առեալ նոր գունդս՝ կարգեաց զնորս ի նոցանէ ի պահպանութիւն արքունեաց իւրոց, որք նովին հնի անուամբ Ոստան և Ոստանիկ առնուանեցան. զայս արար իբր նորոգել կամելով զհին սպասաւորութիւն իւրեանց՝ կարգեալ ի մեծէն Տիգրանայ։

Եւ այլ ինչ գիտելի վասն սոցա. զի այս ցեղ Ոստանիկն՝ որ պարտ էր ընդ աւագ նախարարսն յիշատակիլ, գոլով ցեղ արքայազարմ, այլ սակայն ոչ ուրեք առ նախնիս գտանի յիշատակեալ ընդ նախարարսն, ոչ առ Ագաթանգեղոսի և ոչ առ Բուզանդայ. նոյնպէս և ոչ Մատենադարանս յիշէ, յորժամ կարգաւ դասաւորէ զհին գահագլուխ իշխանս Տրդատայ. այլ փոխանակ Ոստանկայ՝ առ Ագաթանգեղոսի և Բուզանդայ գտանեմք պատուով յիշատակեալ կամ զիշխանն Մարզպետութեան, և կամ զիշխանն Աղձեղտան, որ գլուխ և նահապետ էր Ոստանկայ՝ ի լինելն մարզպետ. իսկ առ Եղիշէի և Ղազարայ ոչ գտանեմք զանուանս իշխանացն Աղձեղտան և Մարզպետութեան ընդ այլ իշխանս յիշատակեալ. բայց եթէ երբեմն զգօրս նոցա. այլ փոխանակ նոցին բազում ուրեք յանուանէ յիշատակին Ոստանիկք. որով յայտ է՝ Թէ այն իշխանք կամ անուանք իշխանացն խափանեալ էին յայնժամ, և միայն զարմն Ոստանկայ մնացեալ։

Խորենացին ե. 7. տարակոյս ի մէջ բերէ ի լոյ այլոյ՝ փոխանակ առաջին ցեղին՝ այլ կամ տարբեր գունդ հին յաւելուածեալ զհինն նովին Ոստան անուամբ. բայց քանզի հինն տարակուսելով գրէ, որպէս լսեմ՝ ասէլով. իսկ այլ պատմագիրք մեր՝ որք այնմ յայտնի յարքունի տանէ լեալ յիշեն,

սովիմբ իմմանալ զընիկ Հայկական զարմն արքայական, որ-
պէս էր ցեղն առաջին . վասն որոյ և լինաճ հաւատալ Երևի
ասացեալն նոցա . զի եղիշէ այսպէս յիշէ 160 . "Բաղումս
և այլ ազատ մարդիկ , զոր Ստանիկին անուանեն ՅԱբ-
քունի տանէ ,, : Եւ ՚ի 126 . առանց դնելոյ զՍտանիկին ,
յիշէ "բազումս և այլ այրուձի որ յԱբգարոնի տանէ անտի
էր ,, : Աստ յայտ է ասել, թէ համբուխ ժողովրդի և
ամենայն նախարարքն՝ արքայական զարմ համարեին զնոսա .
վասն որոյ և եղիշէ այսպէս համարձակ յԱբգարոնի տանէ
ասէ . իսկ եթէ իրաւացի էր տարակոյս խորենացւոյն՝ ոչ
այսպէս համարձակ ոճով խօսէր եղիշէ։ Այսպէս երևի և ՚ի
պատմելն Ղազարայ . և որ առաւելն է՝ նաև մինչև ՚ի
ժամանակս Յովհաննու կաթողիկոսի կայր այս ցեղ ազ-
նուական՝ նոյնպէս թագաւորական ցեղ համարեալ յա-
մենայն ժողովրդենէ , որպէս և ինքն վկայէ . " ՚ի սմանէ,
ասէն լինել զՍտանիկ ազատութեն (ազնուազարմութեն) ,
որ այժմ դեռ և կայ պահի անուամբ իբր թագաւորական
ինն զարմ զնոսա իմացեալ ,, :

Կայց յայսգայ ժամանակս խափանեալ մնայ Ստան
կոչել զցեղն, այլ սովորութ եղև Ստան կոչել՝ ուր նստէր
գլխաւորն նոցա հայր իշխան կամ մարդպետ . և զի սա իշ-
խէր ՚ի վերայ Նախճաւանու , որպէս ասէ Խորենացին ք. 7 .
վասն որոյ այն քաղաքաք էառ մահմետն Ստան կոչէր . և
յայնմանէ ածանգեալ կարծեմ սովորութ և այլոց նախա-
պարաց մերոց զլիւրեանց գլխաւոր քաղաքն կոչել մահա-
նստան Ստան ՚ : Եւ յայն երկրի Ստանակաց տոհմին՝
և յազգս այլոց տեղեկութեց , տես զոր լինչ գրեալ է մեր
՚ի նախարարութ Աղուանից և ՚ի Մարդպետականն , և
յՍտան գաւառն ՚ի մեծ Հայս 458 :

1 Յաւել՚ի վերայ և զայս , Թէ այն ցեղ, զի ամենայն բնակիչք գոլով
աշխարհ որ ուրեք ՚ի գիրս իբր յա- Թագաւորացուցք՝ ամենեքին էին ա-
ռաւել անուն կոչի Տանուտերական, էր նուտեաք աշխարհին կամ երկրին .
երկիր Ստանակաց , ուրանօր բնակէին չէին որպէս բնակիչք այլոց գաւա-
տոքա , որպէս կոչի առ Թոմսոյի որ- ռաց, ուր միայն իշխանն էր ստեղ-
ծրութեսյ ք . 3 . ՚ի պատմելն Թէ խոս- ծէր . իսկ այլ բնակիչք երկրին էին հա-
լով Պարսից Թագաւոր կամեցաւ տալ ռապակ ժողովրդք , և ոչ ազնուա-
առ Մորիկ կայսր ,, ՚ի յերկրէ Հայոց զարմք : Իսկ անուանել զնոսա Տա-
զաշխարհ Տանուտէրական իշխանուն նուտերական գունդ , էր վասն գոյց
մինչև ՅԱբրահամ ,, : Ուր Յովհաննէս բնակաց կարգեալ ՚ի յոյս գունդս
կաթողիկոս ՚ի նմին պատմելն Մորիկայ պահպանութեն աշքռնեաց յատուկ
զոյն աշխարհ կոչէ Գունդ . ,, Եւ ՚ի անուն վազաքրակաց . նաև սակս ու-
Հայոց , ասէ , զայն աշխարհ՝ որ Տա- նելոյ զզօրավարուն արևմտեան գնդի
նուտերական Գունդն անուանէր ,, : զօրաց . որպէս գրեցաք ՚ի նախարա-
Եւ համապիսի Տանուտերական կոչե- րութեն Աղուանից :

Գ. Նախարարութիւն, որոյ չիշատակէն ինչ գործ չիցս պեղտութեան աշխարհի։

Յո քանզի տեսաք ևս համարեալ են ի Թիւս նախարարաց, մանաւանդ ումանք ի ցեղից աստի ընդ գլխաւոր և ընդ երևելի ցեղս նախարարաց գասեալ, վասն որոյ առ ժամի համարեցաք յիշել աստանօր մի ըստ միոջէ. զի Թէպէտ ի կարգս տեսչուե ոչ յիշատակի ինչ գործ սեփական ցեղի նոցա, բայց գոլով նոցա տեառքը աշխարհի՝ ունելին պատիւ տանուտերական, և մնանելին ի պատերազմունս աշխարհիս Հայոց, և ումանք մնին նաև ի գործ իրիք իրիք անտեսուե. Թող զի նաև ումանք ի տոհմից ունելին գործ, բայց այլով անուամբ՝ զոր յառաջ եդաք։ Եւ զի՝ առ ի զանազանութենէ միւս գասուս նախարարաց միւուս ցարդ յիշելոց՝ անկ է ընթերցողին առաջի աչաց ունել և զայս գասս նախարարաց, որք բազմագոյն են, և ումանք ի նոցանէ ստէպ յիշատակեալ ի գիրս։

ԱԿԱՑԻՔ

Ա՛ աղարշակ հաստատեաց նախարարութիւն, որպէս գրէ խորենացին ե. 8. "Նախարարութիւնս հաստատ. նոյնպէս և զկորդուացիս, զամձևացիս, զԱկեացիս ի նոյն գաւառաց"։ Կամի ասել՝ Թէ յայսմհետ գաւառս հաստատեաց նախարարութիւս, որով յանուն գաւառացն կոչեցան այս նախարարութիւնք. զի Ակէ՝ որպէս և Ընձևացիք՝ էին գաւառք Վասպուրականն նահանգի։ Ըստ այսմ Ակեացիք կոչին և առ Եղիշէի 174. որք մնին ի գունդն Վարդանայ. նոյն է՝ որ առ Թոմսոյի արծրունեայ ե. 4. գրի Ակեացիք. նաև ի յիշելն զտոհմն՝ ասէ անդէն, Թէ յաւուրս Բուզայի նահատակեալ եղեն երկուք. "որոց անուանք Ձանասէին միոյն Գէսորգ յԱկեաց տոհմէ"։ Որպէս և առ Եղիշէի 160. "Իշխանն Ակեաց Ընջուղ անուն"։ Եւ Մեսրոպայ ժե. կոչին Ակեայք։ Ձիշատակին ի սոցանէ արք քաջամարտիք առ Թոմայի արծրունեայ ի նոյն գլուխն՝ յաւուրս ն. Սմբատայ. ուր ասէ. "Եկին տալ պատերազմ ընդ ամրոցին Վան քաղաքի. և զի ի գնալն Աշոտի... Հաւաստացեալ էր Յիսէի եղբօր Թադէոսի, որոց Շերեփայ որդիք անուանելին ի յԱկեաց ի տոհմէ, քաջամարտիք և հմուտք պատերազմական յարդարմանց"։

ԱՂԲԵՐԿԱՑԻ

Յիշատակեալ առ Ղազարու 282. «Աւաքեաց և մա-
միկոնեանն Վահան ... զԱբաւան Աղբերկացի», որ Թուի
լինել՝ի Թուոյ նախարարաց։

ԱՄԱՏՈՒՆԻՔ

Տոհմ՝ի Հերէից իջեալ որպէս բագրատունիքն, և երևե-
լի յաճենայսն, զորոյ զուտն և զայլ ամենայն գիտելիս
ուրոյն գլխով նշանագրէ Խորենացին է. 57. ասելով.
«Յաւուրս սորա (է. Աբրահամեայ) ասեն եկեալ զազգն Ամա-
տունեաց՝ի կողմանցն արևելից Աբեաց աշխարհին. բայց
են սորա քնութիք (այսինքն բնական սերունդեամբ) Հրեայ
՝ի Մանուէայ ուռնինէ, որոյ որդի իւր մեծահասակ և ու-
ժեղ Սամսոն անուն կոչեցեալ, որպէս սովորութիւն է Հրէ-
իցն՝ ըստ յոլսոյ գնահատեալոյն կոչել անուանս։ Բայց և
Ձնմարիտ և այժմ իսկ տեսանել՝ի զարմս Ամատունեաց.
քանզի անձնեպէքն և բարեձևք ըստ պատշաճի վայել էն
ամենայն իրօք և ուժեղք։ Տարեալք են սորա՝ի յԱբրա-
կայ առաջին՝ի Պարթևաց Թագաւորեցելոյն, և յաւա-
ջադիմութիք անգէն յԱբեաց աշխարհին՝ի պատիւ հա-
սեալք՝ի կողմանս Ակմատանի։ Բայց Թէ յինչ պատճա-
ռաց գալուստ նոցա այսր՝ ոչ գիտեմ. այլ պատուին յԱբ-
տաշիսէ գեղիւք և դաստակերտօք, և անուանին Ամա-
տունիք, որպէս Թէ Նիք. և կեսք՝ի Պարսից Մանուեանս
զնոսա կոչեն յանուն նախնւոյն»։

Տիրասիրուի Պարգև անուն նախարարին ամատունեայ՝
պատճառ եղև ինասու անձին իւրոյ և տոհմին. զի սա
ընդ Հաւարշայ կամսարականի միաբանեալ՝ 700 զինուո-
րօք խաղաց՝ի վերայ Պարսից զերծուցանել զնոսօքով
զաքքայն Հայոց մինդեռ՝ի կալանս էր, այլ գործն ոչ
յաջողեցաւ. զի փոխանակ նորին լինքն կալեալ եղև, զոր
Արտաշիր Պարսից արքայ «տեսեալ գործեալ ուռուց-
մամբ հրամայեաց գնել յանդիման խոսրովայ Հանա-
պազ», որպէս ասէ Խորենացին է. 50։ Եւ զառն նորա

1 Նիք կոչեցեալ ասէ զնոսա. զի կողմանց Ակմատանի, մարթ էր կոչել
ամոք՝ի բարբառ Պարսից նշանակէ նէ։ զնոսա Ամոքունս։
բայց գուցէ և վան նկեալ գոլոյ՝ի

ընդ կամաբարկանացն հրամայեաց յաքբունիս ունել. բայց ապա սակս աղաչանաց մեծին Սահակայ, ասէ, "Հրամայեաց զտունս երկաքանչիւրացն (զկամաբարկանաց և զԱմատունեաց) զկալեալսն յաքբունիս՝ դարձուցանել ի նոսա,, : Ընդ Թեպետ զտունս նոցա դարձոյց, բայց զպահիւ նախարարութեն նուաստացոյց, ի կարգ կրասերագոյն նախարարացն ածեալ անցուցեալ, մինչև Թագաւորեաց Վաւամ Պարսից Թագաւոր. յայնժամ դարձեալ աղաչեալ մեծին Սահակայ՝ զի գեթ ի նուաստուէ ի վեր հանեալ զտոհմն՝ ընդ այլ նախարարսն դասեսցէ՝ յորում կարգի և կամեցի աբգարն. և կամ գոնէ որպես զաքբունի գոծնակալ կալցի ի գործ իւր, մինչև ի ձեռն այլոյ ուրուք Թագաւորի ի կարգ հայրենի նախարարուե եցէ: Ջայս ամենայն կատարեաց Վաւամ Թագաւոր, ասէ խորենացին, զորոյ զամս կարես տեսանել ի նախարարուե կամաբարկանաց:

Իսկ այսպէս Ամատունիք միշտ ընդ երևելի նախարարս են յիշատակեալք. "Տէրն Ամատունեաց Վահան,, որ յիշատակի առ Վաղարշ 75. գտաւ ի ժողովն նախարարաց որ ընդդէմ Պարսից: "Ամատունիքն Մուշեղ և Ասիէ և Սահակ,, յիշատակեալք առ Թոմայի արծրունւոյ էջ. 4. որք միացան ընդ զօրաց Դաւդհենայ արծրունւոյ ընդդէմ Բուղայի: Սոյնպէս "Շապուհ յԱմատունի տոհմէ,, էջ. 7. յաւուրս Ակինի ոստիկանի: Յորոց և քաջք ոմանք ընդ ժամանակս ժամանակս երևեալք, որպէս Վահանն Ամատունի յաւուրս փոքուն Խոսրովու ի պատերազմին որ ընդդէմ հիւսիսականաց. զորմէ խորենացի էջ. 9. և ի էջ. 67. կոչէ զնա հալարապետ աշխարհիս Հայոց, "զօրաւոր հաւատովք և ճոխուբ մարմնաւորաւ,, : Եւ Ասմնձոր, զորմէ եղիշէ 184. "Սեպուհ մի յազգէն Ամատունեաց Ասմնձոր անուն՝ ընտրեցեալ յամենայն զօրականէն լի իմաստութիբ և քաջութիբ,, : երևելի եղև և Օտտա նախարար ամատունի մուրացօղ խոսրովիդխտոյ, յիշատակեալ առ խորենացւոյն էջ. 77. որպէս և առ Ագաթանգեղոսի:

Իբրևիր Ամատունեաց տոհմին երևի լինել Արագածոտն գաւառ Այրարատու. զի առ խորենացւոյն էջ. 9. Օշական գիւղ Արագածոտան գաւառի պարգևեալ ի փոքունէն խոսրովայ աբգարայ առ նախագահել Վահան ամատունի. և Ջաքարիա եպիսկոպոս ունի կոչել զինքն, "Ասոջնորդ Ամատունեաց սրբոյ կարապետիս որ ի ստորոտս Արագածու,, : Տես և ի մեծ Հայս 438:

ԱՆՁՆԻԱՑԻՔ

Ի սախարարութեէ սահմանեալ ի Վաղարշակայ . «Ա՝ խարքունս հաստատ . նոյնպէս և զկորդուացիս , զԱնձևացիս, զակիացիս ի նոյն գաւառաց ,, , ասէ Խորենացին էջ . 8 : Որով բանիւ յայտ առնէ թէ յառաջագոյն գոյին այսոքիկ գաւառք և անուանիք նոցա , զոր Վաղարշակ ամբարձ ի նախարարութէ : Անձևացեաց իշխանիք ընդ երևելիս գասեալ կան ի գիրս . զոր օրինակ առ Խորենացւոյն էջ . 39 . «Գնել նահապետ Անձևացեաց , և սպարապետ Պապայ արևելեան զօրուն ,, : Եւ առ Ղազարայ 73 . տէրն Անձևացեաց Շմաւոն . իսկ առ Յովհաննու կաթողիկոսի՝ Գուրգէն իշխանն Անձևացեաց , որ ընդ իշխանին Մոկաց մարտուցեալ սպան զնա . առ Թոմայի Արծրունւոյ էջ . 6 . Պատրիկ անուամբ յիշատակի , որ ընդ այլ նախարարս եկն յօգնութէ Բագարատայ իշխանին Տարօնոյ . բայց Թուխ յատուկ անուն առն , և ոչ անուն պատուոյ . զի ի էջ . 4 . բացայայտ ևս գրէ ասելով . « Եկին յարեցաւ ի Պատրիկին Անձևացի ... Եւ Անձևացիք Պատրիկին և Գէորգ , Դաւիթ և Հասան ,, : Յովհաննէս կաթողիկոս Տէրութէն կոչէ յաս սէն՝ Թէ յետ մեռանելոյ Դուրգենայ "պայազատէր զտէրունն զայն մեծն Աւոմ որպէ նորա ընդ նորա ,, : Որպէս և Թոմա արծրունի էջ . 14 : Իսկ Թէ զկարդ կոչի այն նաև Թագաւորուն , տես զոր գրեցաք զզնազան ԹագաւորուԹէնց . բայց ըստ ասելոյ Թոմայի արծրունւոյ՝ յատուկ անուն առաջնոյն Սմբատայ էր " ընդ ձեռամբ վասպուրականի իշխանութեանն ,, :

Օ սոր ծանր հարկատուութէն յիշէ Յովհաննէս կաթողիկոս , զոր պահանջէր ի նմանէ Յուսուփ ի լինելն երկրորդ անգամ ոստիկան . « Դեսպանս առ իշխանին (Անձևացեաց) Աւոմ առաքէր , տալ նմա զսակ հարկացն արքունի , և ըստ սովորակի հրահանգացն տուեալ , տալ (նաև) զօժտուն նորա , որպես զի ընկալեալ երԹ այցէ ,, : Հարկն արքունի էր վասն ամիրապետին . իսկ օժտուԹէնն էր վասն ոստիկանին , զոր ըստ սովորութէ քաղաքական կարգաց պարտ էր տալ : Աւոմ , ասէ , « ոչ ևս ինայէր ի գանձս և ի կարասիս , և վաղվաղակի հասուցանէր նմա ըստ ձեռնին բանականի զնաւս Տարկին կրկին յաւելուածով , այլ և ընծայս ձեռաձիրս առատապէս պարգևէր ,, : Բայց Յուսուփ և զինացեալ ամայն վճարիս պահանջէր ի նմանէ .

վան որոյ և Աստմ "զինագէտքն Հարկաց ըստ ծանուցս [illegible] պատմագրս յաղագաստոհմի տուեալ լինէր, զոր առեալ ընկալեալ չուի գնայ ,, : Տես և ի մեծ Հայս 196 :

ԱԸՈՑԱՑ

Ի նահանգի Հայկազանց տոհմէ . իսկ նախարարութիւն նորա ի Վաղարշակայ կարգեալ, զորմէ խորենացին ք. 8 . "Բայց զերկրութիւն Աղձոյս, և զսպհականութիւն Տաշրայ՝ կարգէ Վաղարշակ ի զաւակացն Դուշարայ Հայկազնոյ ,, : Ա֊յս Դուշար էր յորդւոցն Հարայի, որպէս ասէ անդէն: եւ քանզի ի Վաղարշակայ անտի սահմանեցաւ տէրութիւն Աղձոյս, վասն որոյ զգան խորենացւոյն ք. 82 . ասացեալ վասն Տաճատայ՝ որ էր ի տոհմէ Աղձոյս, թէ Տրդատ "իշխան ի վերայ գաւառին Աղձոյս կարգէ ,, չէ պարտ իմանալ՝ որպէս թէ յայնժամ կարգեցաւ այս իշխանութիւն, այլ վասն անձին միայն պարտ է իմանալ . այսինքն է՝ զամանուտիրական պատուն յայնժամ ետ Տրդատ Տաճատայ, որ ի նոյն տոհմէ էր . որով Տաճատ եղև յայնժամտիր և իշխան Աղձոյս գաւառին Աղբատատու: Ա֊յս Տաճատ է՝ որ զգացոյց եղբօր կնոջ իւրոյ Աբատաւազդայ մանգակունւոյ՝ և նա Տրդատայ աղբայի՝ նախ զլինէին Գրիգորի սրգի Անակայ, և ապա վասն որդւոյն Գրիգորի եղելոյ ի Կեսարիա : Ագաթանգեղոս յՀդ . յիշէ յասելն . "Երկրորդին Տաճատ անուն իշխան Աղձոյսց գաւառին ,, : Խորենացին ք. 65 . յիշէ "Հմայեակ Աղձոյս տէր ,, : եւ Ղազար 75 . "Զտէրն Աղձոյս Հրահատ ,, :

ԱՊԱՀՈՒՆԻՔ

Տոհմն Հայկազեան, իսկ նախարարութիւն ի Վաղարշակայ . զորմէ խորենացին ք. 8 . Հաստատէ, ասէ, Վաղարշակ "այլ և զնախարարութիւն Ապահունեաց , և զմանաւազեանն և զԲզնունեաւքն՝ ի նոյն զաւակացն Հայկայ , ի բնակաց գտեալ պերճագոյն , տեառս կարգէ յանուն չինիչ և գաւառաց կոչելով ,, : Սոքա անուանի եղեն ի քաջութիւն, զոր յայտ առնէ խորենացին ք. 32 . յասելն . "Եւ քանզի էին նորա տագնապք գտեալք ի մեծ նախարարութիւնեցն , ի կորովի և ի քաջ ազգէն Ապահունեաց ,, : Յաւուրս Աբգարու Թագաւորին ընդ գլխաւորս գասի նահապետ այսր տոհմի առ խորենացւոյն ք. 30 . "Աբ որ

(առ Մաւրիոս հազարապետ Հռոմայեցւոց) առաքեաց Աբգարիոս երկուս ՚ի գլխաւորաց իւրոց, զՄարիհաբ բըդեշխն Աղձնեաց և զՇամշադրամ Տաճատեան Ապահունեաց տէրն», ։ Յիշատակի առ նմա ՚ի. 65. յաւուրս մեծին Սահակայ նահ. «Մանէ՛ Ապահունեաց տէր ». ոպէս և առ Ղազարայ 75 ։ Ալ յաւուրս ՚ի. Սմբատայ տիրեին անդ Տաճիկք բռնաւորք, թէպէտ և հարկատուք. զորոց զաւպատմբութէ գրէ Թոմա արծրունի ՚ի. 10. «Ընդ այն ժամանակս զօրաժողով եղև Թագաւորն Հայոց Սմբատ ՚ի վերայ Ապահունեաց աշխարհին. զի որդիքն Աբգառհամանի որ կայսիկքն անուանին՝ ապստամբեալ էին ՚ի պետութէ Թագաւորին, տալ հարկս և վճռաւորել ոպէս օրէն էր. և գրեթէ ամենայն իշխանք Հայոց, Վրաց և Աղուանից եկեալ էին ընդ զօրս Հայոց ՚ի վերայ աշխարհին Ապահունեաց ».

ԱՌԱՒԵԼԵԱՆՔ կամ ԱՌՈՒԵԼԵԱՆՔ

Յետ՝ եկեալ Ալանաց. զորմէ խորենացին ՚ի. 58. յաւրջին գլուխ վերնագիր եդեալ՝ «Վասն Աւաւելինից տոհմին, թէ ուստի սերեալ ազգ», ասյս այսպէս պատմէ. «Ի սորա (՚ի. Արտաշէսի) աւուրս և Աւաւելեանքդ՝ յազգէ Ալանաց մերձաւորք Սաթինկայ զՀետնորա (Սաթինկայ Թագուհւոյն) եկեալք, կարգեցան յազգ և ՚ի նախարարուն աշխարհիս Հայոց ոպէս հարազատք Թագուհւոյն մեծի, և ՚ի ժամանակս խոսրովու Տրդատայ իմամայեալ ընդ ումեն քաջի Բասղացն եկեալ Հատուածի», ։ Ի յետ աստ յիշատակի «Վահան Աւաւելեան» առ խորենացւոյն ՚ի. 43. իսկ առ եղիշէի 343. ընդ կապեալ նախարարս յիշատակի «Յազգէն Աւաւելինից Փապակ և Վարազդէն և Դաղ», ։ Որպէս և առ Ղազարայ 75. Փապագ «տէր Աւաւելենից», ։ Աւաւելանք յիշատակին և առ Մէսրոպայ ժ՚ի.

ԱՌԱՒԵՆԵԱՆՔ

«Նախարարութէ սերեալ յորդւոյ քաջազնոյն Վահագնի, ոպէս գրէ խորենացին ա՛. 31. «Ի սորա (Վահագնի) կրտսեր որդւոյն Աւաւանայ (սերեալ է զարմն՝ կոչեցեալ) Աւաւենանք», ։ Ալ սակաւ ուրեք յիշատակեալք. ոպէս առ խորենացւոյն ՚ի. 43. «Ի ըստում՝ Աւաւենան», ։ եւ առ Ղազարայ 267. ՚ի պատերազմին որ ընդ Վահանայ

մամիկոնեայ "յարձակեալք նահատակեցան 'ի ժամուն ե-
թանելին Քոռնէ Աւաւենեան ,, ։ Երկիր սոցա սեփական՝
Թուխ լինել յորդորդ գաւառն Մոկաց՝ Աւաւենից ձոր կո-
չեցեալ, զորմէ գրեալ է մեր 'ի մեծ Հայս 134 ։

ԱՐՁԱՐՈՒՆԻՔ. ՏԵՍ ԿԱՄՍԱՐԱԿԱՆՔ

ԲԱԳԵՆԻՑ

Ա'իայն առ Բուզանդայ յիշատակեալ գտանեմք "Կիչ
կին նահապետն Բագէնից ,, . Ջ. 11 ։

ԲԶՆՈՒՆԻՔ

Վրիպոր մագիստրոս'ի Թուղճն իւր որ առ Մարգիս վար-
դապետ՝ զԲաղուկ համարի գլուխ Բզնունեան տոհմին, չը-
փոթելով ընդ Բազ անուան , որ ըստ խորենացւոյն ա.
12. էր գլուխ Բզնունեաց, բազմաց յառաջեալ քան զԲա-
զուկ նահապետ. "Թողեալ (ասէ, Աբմեհակայ) երկուս
յեղբարց իւրոց զխոռ և զՄանաւազ... և զորդի Մանա-
ւազայ զԲազ. յորոց Մանաւազ ժառանգէ զՀարք. իսկ որ-
դի Նորա Բազ՝ յարևմտից հիւսիսոյ զերդ ծովուն ապտց ,
և զգաւառն և զծովն անուանէ իւրով անուամբն. և 'ի
սոցանէ ասէն լեալ զնահապետութիւնս (զնախարարութիւն)
Մանաւազեան , և զԲզնունեաց , և Որդունին անուանեալ.
որք աստ ուրեմն յետ սրբոյն Տրդատայ բարձեալ ասին 'ի
միմեանց պատերազմս ,, ։ Կամ ասել՝ Թէ 'ի սկզբան անդ
Թէպետ տեառքը էին երկրին, բայց չունէին պատիւ նա-
խարարութեան, այլ զկնի Վաղարշակ Հաստատեաց, որպէս
գրէ Ջ. 8. զորոյ զքանս տես 'ի վերոյ յԱպահունիս. որ և
'ի Ջ. 62. յիշէ զԻատաբէ զիշխանն Բզնունեաց ։

Այս տոհմ զկնի մահուն Տրդատայ բարձաւ որպէս գրէ
խորենացին Ջ. 2. Չի աշխարհս Հայոց յայնժամ յան-
իշխանութեան մնացեալ, ասէ, "յարեան ազգ յազգի վէ-
րայ նախարարութիւք կոտորել զմիմեանս. ուստի և երեք
տոհմքն որ Բզնունականն և Մամաւազեանն և Որդունին
անուանեին՝ սպառեալ բարձան 'ի միմեանց ,, ։ Աւ-
զանդ Ջ. 8. յաւուրս փոքուն խոսրովու յիշելով զայս
ցեղ, ոչ 'ի միմեանց բարձեալ ասէ, այլ 'ի հրամայելոյ
խոսրովու արքայի, յայտնելով և զպատճառն այսպէս.
զԻատաբէն, ասէ, զգլխաւորն Բզնունեաց՝ խոսրով առա-

քեաց ՚ի վերայ Պարսից զօրաց, այլ նորա միաբանեալ ընդ զօրս Պարսից՝ ետ կոտորել զզօրս Հայոց, նա զի կամէր անկանել և ՚ի վերայ Խոսրովու. իսկ յորժամ զօրք Խոսրովու նոր բանակ կազմեալ ՚ի ձեռն զօրավարին Վասչէի յաղթեցին զօրացն Պարսից, յայնժամ զԴատաբէն կալեալ քարկոծեցին առաջի արքային իբրև զդաւաճան. « և զազգ նորա և զկին և զորդիս գտաներ յամենայն անդ իշխանին Ըռշտունեաց յանուանեալն ԱՂԹԱՄԱՐ կղզւոջ. ՚ի նաև ելեալ Վասչ սպաթապետն, անցեալ ՚ի կղզին՝ առՀաս սարակ ոչ զեզ Թողոյր և ոչ զարու. և այսպէս բարձաւ ազգ գատոհմն նախարարուէն այնորիկ. և զտուն նոցա յարքունի նիս կալան »: Իսկ Մեսրոպ ժԷ. նաև յաւուրս Ա՛րշակայ ՚ի գահս իշխանաց յիչէ զԲզնունիս, որպէս և զԲազնունիս:

ԳԱՐԳԱՐԱՑԻՒՔ

Օ ղրմէ Խորենացին Է. 8. « ի սորա (Աբանայ) զաւակէ ասէն սերեալ զազգ ուտէացւոց, և գարգմանացւոց, և ծովգէացւոց, և Գարգարացւոց իշխանութիւն »: Ա՛յլ ոչ գտանեմ զսոսա յիչատակեալ ընդ Թիւս նախարարաց. վասն որոյ այնպէս համարիմ, Թէ սորա՝ որպէս և միւս ցեղք յիչատակեալք յայս բան Խորենացւոյն՝ էին միայն տեառք երկրին, վասն որոյ և կոչէ իշխանութիւն: Զլեզուն Աղուանից Խորենացին Է. 54. կոչէ՝ լեզու Գարգարացւոց, կամ վասն գոլոյ մի և նոյն լեզու, և կամ վասն նմանութեան աղխազուց կոկորդախօս հնչման, զոր անգէն յիչէ: Տես և ՚ի մեծ Հայս 342:

ԳԱՐԴՄԱՆԱՑԻՒՔ

Օ բան Խորենացւոյն որ վասն սոցա՝ տես ՚ի վերոյ, զոր ՚ի կարգի նախարարութեանն ըստ Գարգարացւոց համարիմ լեալ Թէպէտ և սորայս յիչատակի ուրեք ուրեք. որպէս առ Խորենացւոյն Է. 43. « Պերոզ յազգէն Գարգմանաց »: Եւ ՚ի Է. 55. « Խոսրով Գարգմանացի »: որ էր այր ոմն զօրաւոր: Իսկ Բուզանդ Է. 17. Իշխան կոչէ՝ յատեղն վասն Շահակայ կաԹողիկոսին, Թէ ետուն տանել գնա ՚ի ձեռս մարդպետ իշխանին. « Եւ յաւաչագ գումարեն ընդ նմա զիշխանն Գարգմանաց ձորոյն »: Որպէս և Խորենացին Է. 60. զխոսրս կոչէ իշխան Գարգմանայ: Զի որպէս գրեցաք ՚ի վերոյ՝ տեառք էին երկրին, և իշխանութիւն ունէին ՚ի վերայ երկրին: Տես և ՚ի մեծ Հայս 338:

ԳՈՂԹՆԵՑԻ

Ի յերեւելի ցեղից սերեալ ՚ի Սիսակայ որդւոյ Դեղամայ, և կարգեալ նախարարութեի ՚ի Վաղարշակայ, որպէս գրէ Խորենացին Ե. 8. զորմէ տես ՚ի մեծ Հայս 214։

ԴԻՄԱՔՍԵԱՆ

Ի նախարարուէ յաւուրց անտի Ե. Արտաշէսի. զորոյ զանունն և զպատճառն այսպէս պատմէ Խորենացին Բ. 46. Թէ ՚ի պատերազմի Ե. Արտաշէսի ընդ Երուանդայ՝ այն ինչ ամենեքեան հասեալ էին ՚ի վերայ Արտաշէսի սպանանել զնա, "որոց դիպեալ՝ հետի ընդ մէջ անցանէր Դիսակ, որդի սանտուխտի Արտաշիսի, և սատակեալ զնոսա, ուր և զինս դիմաց նորա ՚ի վայր բերեալ սուսերաւ, դյաղթութիւն սացեալ մեռանի ՚ի վերայ այսպիսեացս"։ Վասն որոյ և Արտաշէս փոխարէն, ասէ Ե. 47. "զՆերսէս զորդի որդւոյ իւրոյ սանտուխտի Դիսակայ՝ ազգ զնա սերելով, զանուն կոչէ զնահատակուեցն Հօրն Դիմաքսեան (իբր դիմաց հիսեաս). քանզի որպէս ասացաքն՝ զինս դիմացն սուսերաւ ՚ի վայր բերէին ՚ի վերայ Արտաշիսի"։ Ազգ ասելով՝ իմանայ զնախարարութեի, որպէս և ՚ի Ե. 43. ընդ նահապետս յիշատակի "Աշխադար յազգէն Դիմաքսեանից"։ Նոյնպէս և Ղազար 111. ՚ի գրէն վասն մեծին Վարդանայ. "Սիզականից տայր զՄուշ զաւագ սեպուհ յազգէն Դիմաքսեանից. և զահեակ կողին տայր ՚ի ձեռն Խորենայ խորխոռունոյ. և զօրավիգն ընդ նմա կացուցանէր զՀմայեակ Դիմախսեանն"։ որ և ընկալաւ զնահատակութիւն։ Ալ ոչ յիշատակի երկիր այսր տոհմի։

ՋԱՌԱԻԵՆԵԱՆՔ

Յեղ սերեալ ՚ի հայկազուն թագաւորաց, որպէս գրէ Խորենացին Բ. 8. յասելն վասն Վաղարշակայ. "Սապէս և Ջառաւենեանն և Ջարեհաւանեանն գտեալ ՚ի զարմից առաջին թագաւորացն՝ կարգէ ՚ի նոյնանուանս աւանս"։ Ալ իշխանք սորա անյիշատակ ՚ի գիրս։ Ալ են և Ջառաւենեանք ըստ նախագրելոցս։

ԶԱՐԵՀԱՒԱՆԵԱՆՑ

Ի վերոյ խորհնացին ի զարմից Թագաւորաց միայն ասէ լոկ անորոշ եթող. այլ ի ա. 30. յետ յիշելոյ զՆերսէհ, որ էր որդի Թոռին մեծին Տիգրանայ, ասէ. "Սորա (Ներսեհի որդի) Զարեհ. ի սորա զարմից (ելլին) և որ Զարեհ հաւանիցին կարդան ազգք ,, : Աւելք գրեն Զաբդիհաւանին, որոց իշխանաք նոյնպէս անյիշատակը : Տես և ի մեծ Հայս 153. 154. և 410 :

ՆՆԴԱՑԻՆՑ

Վրէթէհ մի միայն յիշատակեալ ընդ քաջ նահատակսն ընկերս սրբոց Վարդանանց առ Եղնէհի Ջ. " Յազգէն Ընծայոց արդարն Ազաէն եօթն արամաքը ,, զոր յիշէ և Ղազար 124. "Յազգէն Ընծայուց երանելին Ազաէն ,, : Թուի լինել նոյն որ առ Մ Եսրոպայ Ժ. կոչի Ընչոյոց ի կարգս նախարարաց :

ՆՆՏՐՈՒՆԻՑ

Միայն առ Թոմայի արծրունւոց յիշատակեալ, որ ի. 6. եկիւն, ասէ, յօգնուէ Բագարատայ իշխանին Տարօնոյ "ի տոհմին Ընտրունեաց Աբասաւազդ եօթեն հարազատօք և զօրօք իւրեանց ,, : Խակ ի Ջ. 2. յիշէ "Վահրամ յազգէ Ընտրունեաց ,, : Ի Ջ. 4. գնացին, ասէ, ընդդէմ Բուղային ընդ զօրսն Գուրգենայ եղբօր Աշոտոյ վաստրպետականի "և Ընտրունեքն Գէորգ և Յիսէ ,, : Գուցէ նոյն է ընդ Տրունիս յիշատակեալսն ի խորհնացւոյն :

ԽԱԴՈՒՆՑԻՑ

Միայն յիշատակեալ առ խորհնացւոյն Ջ. 52. յասելն վասն Վահանայ Հոյոց. "Աստաբեաց հրեշտակ կոչէ զայր մի պատուական և հաւատարիմ իւր Խադունի ազգաւ՝ Վահրիճ անուն ,, :

ԽՈՒԽՈՒՒՈՒՆՑԻՑ

Ցեղ հին յոյժ, որպէս է տեսանել առ խորհնացւոյն, ա. 12. "Խակ Խոռն (որ է որդի Հայկայ, եղբայր Արմենայ) ի կողմանս հիւսիսոյ բազմանայ. կարգէ զչէնս իւր,

և ՚ի նմանէ ձգեալ ասի մեծ նախարարութիւն ազգին խոսխոռունեաց, որք քաջք և անուանիք. որպէս և որք առ մեօք են այժմ երևելիք,, ։ ի սորա զաւակէ երեւելի գտեալ Մաղխազ ոմն՝ Թիխնապահ արքային կարգեցաւ ՚ի Վաղարշակայ սերմնաբամբ, զորմէ տես ՚ի Մաղխազեանս։ Իշխանք այսր ցեղի գտանին յիշատակեալ ՚ի գիրս. զոր օրինակ առ խորենացւոյն ՚ը. 43. "Սուրբն խոսխոռունեաց,։ Եւ առ Ղազարայ 114. " Իշխանն խոսխոռունեաց Գաղիշոյ ,, , նահատակեալ ընդ Վարդանանց։ Վասն համանունն երկրի սոցա որ ՚ի Տուրուբերան՝ տես ՚ի մեծ Հայս 131։

ԾՈՎԴԻԱՑԻՔ

Խորենացին ՚ը. 8. Թէպէտ յԱստանայ ասէ սերեալ զոսա, բայց գրեթէ միայն առ Ագաթանգեղոսի յծ՚ը. գտանելի յիշատակեալ սովին բանիւ. "Երկոտասանեերորդ Իշխանն Ծոդէից աշխարհին ,, ։ Որոց և ոչ աշխարհն մեզ յայտնի ։

ԾՈՓԱՑ ԻՇԽԱՆ

Խորենացին ՚ը. 8. ասէ վասն Վաղարշակայ. " Բայց զինի դորա (Աղգեղտանին) հաստատէ զմեծ նահապետութիւն Ծոփայ ՚ի յորրորդն կոչեցեալ Հայս ,, ։ Զայս ասէ զինի գրելոյ զանգեղեայն Տորքայ, Թէ Վաղարշակ հաստատեաց զնա կուսակալ արևմտից. Թող՚ի բաց զառաստղեին վասն ուժոյ Տորքայ, զի այն միջանկեալ բան է ։ Այսպէս վասն անմիջապէս գրելոյ խորենացւոյն՝ և վասն Ծոփայ գաւառին երկիր Աղգեղտան գոլոյ ըստ Բուզանդայ, Թուի մեզ՝ Թէ այս նախարարութիւն Ծոփայ միակցեալ էր ընդ նախարարութե Աղգեղտան գէթ զինի ժամանակաց. բայց այս նախարարութի այլ էր ՚ի միւս նախարարէն կամ իշխանէն Ծոփայ, որ էր իշխան Համաբէն Ծոփայ, այն է Համաբէն յորրորդ Հայոց. զի ասելն առանձնաւոր խորենացւոյն՝ ՚ի յորրորդն կոչեցեալ Հայս, յայտ առնէ՝ Թէ էր ՚ի մէջ յորրորդ Հայոց, և յուցանէ լինել զԾոփք գաւառն՝ որ էր ՚ի յորրորդ Հայս, և ոչ զԾոփայ նահանգն՝ որ էր Համաբէն յորրորդ Հայք[1]։

1 Զբերդոցունց սոցա զիշխանս ընդ իշխանն միւսոյ Ծոփայ. ուր ՚ի յիշելն այլ իշխանաց յիշէ Բուզանդ ը. 4. և զայլ իշխանս ոմանս՝ ոչ յիշէ զիշխանն Աղգեղտան, ըստ որում նոյն զԾոփեիէլ մեծ իշխանն Ծոփայ, և զիշ-

ԿԱՊՄԵԱՆՔ • ՏԻԵ ՍԻՍԱԿԵԱՆՔ

ԿԱՄՍԱՐԱԿԱՆՔ, ԱՐՇԱՐՈՒՆՔ, ՊԱՀՎԱԽՈՒՆՔ

Յաղագս ծագմանն այսը զարմի՝ որ երիւք անուամբք կոչեցաւ, գտանեմք ի պատմուձէ Խորենացւոյն ք. 28. ուր լսանօք պատմէ Թէ յորժամ Աբգար գնաց ի Պարսս խաղաղել զալբայորդիս վասն Թագաւորելոյ, զայս ինչ ասէ մանեաց. զի Աբտաշէս Թագաւորեսցէ ի վերայ Պարսից յորդւոց յորդիս՝ որպէս և կամէր. բայց միւս երկու եղբարքն և մի քոյր նոցա յուրոյն ցեղ որոշեսցին վերագոյն քան զամենայն ցեղս նախարարուձ Պարսից. իսկ յորժամ սպառեսցի ցեղ Աբտաշէսի՝ յայնժամ նոքա Թագաւորեսցեն։ Ձերեսին զայսոսիկ ցեղս նոր անուամբ կոչեաց Կաբենի պահլաւ զայն՝ ուստի եղեն կամսարականք։ Սահրենի պահլաւ՝ ուստի եղև սուրբն Գրիգոր. և զքոյրն Աշտամպեակ պահլաւ, զի այր նորա սպարապետ էր Պարսից՝։ Ահա ցեղ որ առ Խորենացւոյն ք. 73. կոչի Կարեան կամ Կաբենան պահլաւ, կամելով փախչել ի Հայս առ մեծն Խոսրով Թագաւորն մեր ի ձեռաց սասանեան Աբտաշրի՝ կոտորեցաւ առհասարակ ի նմանէ, միայն զտղայ մի ևեթ ապրեցոյց Բուրզ՝ փախուցեալ յերկիրն Բուշանաց, և յանձնեալ ի ձեռս ազգականաց իւրոց. և այն տղայն կոչեցաւ Պերոզամատ. «Սա է, ասէ Խորենացին ք. 73. Պերոզամատն նախնի մեծի ազգին Կամսարականաց»։ Իսկ Կամսար է առաջին որդի Պերոզամատայ. որ ըստ պատմելոյ Խորենացւոյն ք. 87. «ամենայն ընտանեօք իւրովք և աղխիւ գայ առ Տըրդատ մեր Թագաւոր... Այս Կամսար աշխոյժն քաջուձէ նահատակեալ առ հարսն ի պատերազմունս, ի շահատակելն իւրում հարկանի յումեմնէ սակերք զգլուխն. և վերացուցեալ մանն ինչ յոսկերք սկաւառակին, բժշկեալ ի գեղոյ, (այլ) պակաս գոլով քողրուքիւն գագաթանն՝ անուանեցաւ Կամսար այնր աղագաւ»։

Ակզբնաւորուձէ նախարարուձէս եղև յաւուրս Տրդատայ ընդ Դուփայ. այլ յետ միայն զերծ[1] եղեալ Մարդպետուձէն, ըստ որում էջխանք Մարդպետք լինէին նաև երբեմն պարագայիւ Ընդհանուր։ Ի սմանէ կարես տեսանել և ի մեծ Հայս։

[1] Խորենացին յետ այս գրելոյ, ասէ. «Ձի ծանիցես զազգս (զթագս) զայս մեծ՝ Թէ հաւատասի սրբուն վաղարշապատին, այսմիկքան զայսմ Աբրշակայ մեծի, եղբօր վաղարշակայ»։ Դարձեալ գրէ անդէն. «Նէ ասեն զառաքելն Գրիգոր ի Մուբենեանն պահլաւէ, և զհամասարականս ի Կարենեանն պահլաւէ»։

տայ, զորմէ այսպէս պատմէ Խորենացին ք. 90. "Յայմ ժամուս և ազգային նոցա (սրբոյն Գրիգորի և Աբիսատակէսի) կամեցաւ միրտի իւրայոցն Հանդերձ 'ի ձեռն մեծին Գրիգորի, արքայի (Տրդատայ) ընդունելով 'ի ջրոյն, տալ (տալով) նմա ժառանգուել զմեծ դաստակերտն Աբատաչխի, որ այժմ ասի Դրասխանակերտ, և զգաւառն Շիրակ, որպէս ազգականի իւրում և մտերիմ հարազատի. այլ նա ոչ աւելի քան զեօթն աւուրս յետ սկզբնաւորելոյն վախճանի։ Բայց Թագաւորին Տրդատայ միանգամ աւելի զգալոյ որդւոյն կամեցայ զԱբշալոյ, զնովքն փոխանակ ծնողին սահմանելով, ազգ գնա սերեալ յայնոյն ցօղոյն, և կոչէք 'ի Ռխ Նախարարունեց. յաւելու և այլ պարգեւս՝ զքաղաքն Երուանդայ և զնորին գաւառն մինչև ցկատար ձորոյն մեծի. միայն զի 'ի մնայ նորա հեռացուցեալ գիշատակ բնիկ աշխարհին որ Պահլաւն կոչի, որպէս զի անվրդով զհաւատոն պահիցէ։ Իսկ Աբշալիր առաւել սիրեալ զգաւառն՝ յիւր անունն անուանեալ Աբշարունիս. քանզի յառաջ Երասխաձոր կոչիւր ,,։ Եւ այսպէս կամարականն է առաջին անուն այսր ցեղի. իսկ Աբշարունի՝ երկրորդ անուն յորդւոյն Կամսարայ սկսեալ [1]։ Երկիր նոցա առաջին եղև Շիրակ, ապա Աբշարունիք. իսկ ոստան նոցա՝ Երուանդաշատ։

Ա՛յլ ասի ինչ այսպէս ծագիկեալ յառաջնայր այս տոհմ ազնուական, կոտորել տայր Աբշակ ք. զամենայն զտոհմին. յորմէ մի միայն որդի զերծեալ մնաց. "Կոտորեաց (Աբշակ, ասէ Խորենացին ք. 31.) զազգսն 'ի նախարարսն, մանաւանդ զազգն Կամսարականաց բառնայր 'ի միջոյ, չարակնելով ագահեալ յամուրն Աբատագերս, և 'ի քաղաք ոստանի նոցա Երուանդաշատ... միահաղոյն զարս և զկանայս Հանդերձ մանկամբք հրամայեաց կոտորել. և ոչ ոք 'ի նոցանէ ապրեցաւ, բայց Սպանդարատ որդի Աբշարհի... Հանդերձ որդւովքն Շաւարշաւ և Դաւաւոնիս, և բոլոր ընտանեօքն գնաց փախստական 'ի Յոյս ,, ։ Ա՛յլ այս Սպանդարատ՝ քանզի քաջօրէն մեծ արար 'ի պատերազմին որ 'ի Ձիրաւ դաշտի յաւուրս Պապայ արքային, "Յայնժամ դարձոյց 'ի կամարականն Սպանդարատ զաւ-

1 Նմին իրի և ուրիք ուրիք Երկրքին անուանքը Եւ յիշատակին. "Ապա ապաքէնին, ասէ Բուզանդ ք. 21. զԱիգովկ Նահապետն Սիւնեաց և զԱբշաւիրն Կամսարական զնահապետն Աբշարունեաց ,, ։ Եւ Ղազար 111. "Ընդ կողմանն կացուցանէր զզօրագլուխն զնշխանն Աբշարունեաց զԱբշալիր Կամսարականն ,, ։

մենայն ինչ՝ զոր յափշտակեալ էր Հօր իւրոյ Աբշակայ ըզ-
գաւառն Շիլբակայ և զԱբշարունեացց , ոչ իբրև զանիրաւ
զգահոյնի (Համարելով) Հօր իւրոյ Աբշակայ , այլ որպէս
պարգեւս ընդ վաստակոց քաջին Սպանդարատայ՝ որ սպան
զՂենկաց արքայ ,, , որպէս պատմէ Խորենացին ՟ի . 38 ։

Իբրօրդն Խոսրով արքայ Խոստացաւ Գազանւոյն դրել
Աբշակունի . “Եթէ զքեզ Գազանն , ասէ , արիւն իմ և հա-
րատուԹի , ոչ ըստ վարդնոյց ազգականացն , այլ ըստ
արգեանս՝ որ ՟ի մերէ քումէդ Աբշանուշայ արշակունոյ՝
հանեալ զքեզ ՟ի հայրենեացց քոց Կամսարականաց , և ՟ի
մայրենիս քո յիմն առեալ ազգ՝ Աբշակունի անուամբ
պատուեցից ,, . 48 ։ Բայց և յետ այսր նոյնպէս Կամսարա-
կան կոչեցաւ այս տոհմ, զորոյ զերկիրն յաղբունիս էառ
է . Արտաշիր Պարսից արքայ . Տարաւ , ասէ Խորենացին
ՀԷ . 50 . Արտաշիր ընդ մերում Թագաւորին Խոսրովու և
“ զԳազանն , կասկածեալ յառնն քաջուէ (որ ընդդէմ
Պարսից) . և զառն նորա հրամայէ ունել յաղբունիս ,
նոյնպէս և զեղբօրն նորա Շաւարշայ , և զՊարգեւայ առա-
տունեայ ,, ։ Եւ զինի ՟ի խնդրոյ սրբոյն Սահակայ յետս
դարձոյց . “Որոյ զնաւն կատարեալ խնդիրս , ասէ Ի . 51 ։
. . . վասն ինայելոյն մեղուցեալ նմա ազգացն Կամսարա-
կան և ամատունի , որ սուգեալ զղեալ էին յայսպէս տե-
ղիս , վասն որոյ մաղԹեաց գԹալ . . . . . Որոց ինայելոյն
պարգեւեալ (Արտաշրի) զկեանս , հրամայեաց զտունս երդ
կաքանչիւրոյն զկալեալսն յաղբունիս՝ դարձուցանել ՟ի
նոսա , բայց միայն ՟ի գահ հայրենի ոչ հաստատել , այլ ՟ի
խնամարհ քան զաջազումն մատուցեալ նախարարս՝ ՟ի կարգ
կրասերագունից պատրաստել ,, ։

Յորժամ Թագաւորէր Վռամ արքայ Պարսից , յայն-
ժամ սուրբն Սահակ անդրէն ՟ի կարգ առաջին ետ հա-
տել , միջնորդ կալեալ առ Վռամ զՏաղարտպետ նորա
զՍուրէն պահլաւ , ասելով նմա . “ Դու հաւանեցուցեր
զնա (զՎռամ Պարսից արքայ) տալ ինձ զերկուս զայս
միայն . զգահ նախարարացն Հայոց՝ որպէս կարգեալ է
յԱրտաշրէ , և (որպէս) վարեցան մինչև ցայժմ, նորին օ-
րինակաւ հրամայեսցէ և առ յապաղ . . . . . Եւ միւս՝ զի
դարձուսցէ զտուն ազգականին իմոյ և քո , զմանկանն Վռա-
զաւանի զորդւոյն Հրահատայ , Թէ և ոչ յիւրում եռեղ՝
զԱբշակունին յաչաղելով անուն , գԹէ ՟ի կարգ ընկերեալ
ընդ այլ նախարարսն Թուեսցի , յորում տեղւոջ ինքն կա-
մեսցի , որպէս համալն նորա կամարականն և կամ զամա-

տունին, Թափեալ ի Հարցն պատուոյ և յառաջամասինն գահէ ի ստորնակայինն. և կամ գրեթէ որպէս զարքունի գործակալութէն նմա հաւատացեալ, և նորուն զաւակաց համանմանակի ընտանութէ, մինչև Աստուած քաղցրասցի դարձուցանել ի կարգ հայրենի... Եւ յայմ լսող եղեալ Վռամայ՝ հրամայէ զամենայնին կատարել,,. Խորենացին էջ. 65։ Իսկ թէ գիտէր ազգս Կամսարականք զերկիր իւրեանց վաճառելոյն, տեսցես ի տողին Բագրատունեաց։

Ընդ ժամանակս ժամանակս ելին ի կեղէ աստի արք երևելիք ի կառավարուէ և ի քաջուէ. յաւուրս Տիրանայ արքայի գալեալ է առ Խորեն. էջ. 10. Աքրշաւիր կամսարականն. "Եւ ժողովեալ մեծին Վրթանէսի զամենայն նահարարս Հայոց, հանդերձ զօրօք և զօրապետօք՝ յանձն առնէ Աքրշաւրի կամսարականի, որպէս գլխաւորի և յոյժ պատուականի յետ արքայի զաշխարհս Հայոց,,։ Ուր և ի տորև պատմէ զքաջուէթէ նորա։ Յաւուրս Պապայ արքայի քաջուէ երևելի եղև Սպանդարատ. իսկ յաւուրս էջ. Աքրշակայ՝ Գազաւոն. "Աչն օր, ասէ Խորենացին էջ. 46. աշագին նահատակութիս յուցեալ Գազաւոնի որդւոյ Սպանդարատայ՝ բազում անգամ դարձեալ յարձակմամբ ղրուէ վշտասմուտս,,։ Մինչև ի տորին քաջուէթէ և էջ. Աքրտաշիր Պարսից արքայ երկնչէր։ Յայնմի են առ եղիչեի և Փարպեցւոյն երևելին Աքրշաւիր արշաւունի կամ կամսարական, և որդիք նորա։ Ի սկիզբն երկոտասաներորդ դարուն՝ Տղայ Վասիլն զորմէ գրէ Վարդան. "Բայց մինչ կենդանի էր տէր Բարսեղ՝ մեռաւ պարոն Վասիլն մեծ իշխանաց իշխանն, որ Աստուծոյ յաջողելոյն տիրեալ էր բազում բերդից և գաւառաց, և հոգաց ըզտունն նորա պատրիարգն Բարսեղ. և ետ զիշխանութէնն ի Տղայ Վասիլն՝ ձեռնասուն մեծ Վասլին, յազգէ կամսարական. զի տունն Վասլին էր յայնժամ հաւաքարան Թագաւորացանց և ազատաց Հայոց, և աթոռ հայրապետաց,,։

ԿԱՐԵՆԵԱՆՑ. ՏԵՍ ԿԱՄՍԱՐԱԿԱՆՑ

ԿՈՐԴՈՒԱՑԻՑ

Խորենացին էջ. 8. գրէ վասն Վաղարշակայ. "Ջմնիակայնն ի նոյն գաւառէ գտեալ այր, որ ունէր ընդ իւրեաւ սրիկայս բազումս՝ նախարարութէնս հատատել, նոյնպէս

և զկորզուացիս ,, ։ Թէ զնոյն մեծուքեն ունէին յաւուրս Տրդատայ , տես ՚ի մեծ Հայս 143 ։

ՀԱՄԲՈՒԾԵԱՆՔ

Յիշատակեալ առ Մեսրոպայ ժբ . իսկ առ Բուզանդայ ը . 11 . յիշատակի " Վրկէն նահապետեան Հաբուժենից ,, ։

ՀՐՍՒԶՈՐՈՑ

Յիշատակի առ Բուզանդայ ը . 11 . " Սուրիկ նահապետեան Հրսիձորոյ ,, ։

ՄԱՐԱՑԵԱՆ

Ի Թիւս նախարարաց յիշեալ առ Թոմայի արծրունւոյ ը . 6 . որք եկին յօգնուի Բագարատայ իշխանին Տարօնոյ . "Սմբատ Մարացեան , սեպուհ մի Սահակ ,, ։ Թերևս Մուրացան . զորմէ տես ստորև ։

ՄԱՆԱԶԿԵՐՏԵՑԻՔ

Ղ աղաղ 191 . իբրև զաղջ ինչ կամ զզարմ նախարարացն յիշէ , յասելն . " Տէր Մելիսէ կաթուղիկոս յաղգէն Մանազկերտեցեաց ,, ։

ՄԱՆԱՒԱԶԵԱՆՔ

Յաղագս ծագման այսր ցեղի և նախարարութեան՝ տես զԱպահունիս և զԲզնունիս . իսկ վասն բարձման ցեղին՝ զոր Խորենացին միայն յիշատակէ , այսպէս պատմէ Բուզանդ ը . կ . Յաւուրս փոքուն Խոսրովու , ասէ , երկու մեծ իշխանք Մանաւազեան տոհմին և Արդունոյ տոհմին՝ հակառակութեն ՚ի մէջ իւրեանց բորբոքեալ սաստկապէս կռուէին , և զերեսաց կոտորէին . Խոսրով առաքեաց զեպիսկոպոսապետն Վրթանէս , և զեպիսկոպոսն Աղբիանոս հաշտել ՚ի խաղաղութիւն , նոցա անսաստեալ՝ աւերէին նաև զտունն արքունի . յայնժամ Խոսրով արքայ առաքեաց ՚ի վերայ նոցա զՎաչէ զօրավար իւր , որ " հարեալ ներ վաներ զազգն Երկոսեան . և ոչ թողոյր զերկոցունց տոհմացդ զոյն կորիւն և ոչ զմի ,, ։ Տես և ՚ի մեծ Հայս 118 ։

ՄԱՆՈՒԱՆՔ. ՏԵՍ ԱՄԱՏՈՒՆԻՔ

ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻՔ

Դիշատակեալ առ Մեսրոպայ ժբ. յորոց և ոմն Գէորգ անուն քաջուձք երևելի՝ յիշատակի առ Յոհաննու կաթողիկոսի։

ՄՈԿԱՑԻՔ

Նախարարունի՝ հաստեալ՝ի Վաղարշակայ. տես վասն այսը զամս խօրենացւոյն՝ի վերոյ՝ի Կորգուացիս։ երկիր այսը նախարարունէ էր նահանգ ի ոջէջն Մոկք անուանեալ ինն գաւառօք. բայց զարմանք մեծ՝ զի իշխան սորա ոչ այսպէս երևելի, և այնչափ յիշատակեալ, որպէս և ոչ քաղաքք և ոչ վէնք սորա. յորմէ ինձ Թուի՝ի վաղուց անտի խառնեալ սոցա ընդ գրացի ազգս Մարաց և Պարսից մանաւանդ ասորեստանեայց, և՝ի Թիս նոցա յաւելեալ. զկնի խառնեալ նոցա գուցէ ըստ մեծի մասին նաև ընդ արաբացիս՝ յորժամ տիրեցին այնց սահմանաց։ Բնակիչք Մոկաց գոլով լերանայինք և սրինկեայք ըստ ասելոյ Խորենացւոյն, ելին և պատերազմականք. և զի պատերազմական արանց իբր անհնարին ինն է՝ի հանդարտուէ կալ, պարտ էր՝ի պատերազմունս ազգին մերոյ ստէպ լինել յիշատակուն զսոցանէ. այլ զայս քանզի հազիւ ուրեք է տեսանել՝ յայտնի երևիլ ընդ օտար ազգս խառնեալ սոցա որպէս սովորական ընտի է ազգիս, և՝ի նոցին պատերազմունս շահատակեալ. վասն որոյ և առ Թովմայի արծրունւոյ պատմի վասպուրական իշխանաց ընդ իւրեամբ նուաճեալ զիշխանն Մոկաց, յայտ է Թէ վասն զի սակաւ արամբք ոմանօքք ինացեալ տկարացեալ կայր։ Սակաւ ուրեք յիշատակին և իշխանք սորա. որպէս առ Խորենացւոյն ե. 43. «Սուրայ յազգէն Մոկաց». և՝ի 55. «Աւտոմ Մոկացին»։ Եւ առ Ղազարայ 75. «Տէրն Մոկաց Ափտակ»։ Տես և՝ի մեծ Հայս 133։

ՄՈՒՐԱՑԱՆ

Այս ոչ էր՝ի կարգս միւս նախարարունեց Հայոց. այլ քանզի ե. Վաղարշակ զմն՝ի ցեղէն Մարաց Աժդահակայ՝ իւր երկրորդ Թագաւորութիւնէ կարգեալ ուրոյն ցեղ որոշեալ սերեալ գառաւ, վասն այնորիկ եդաք յայս կարգ։

Իսկ վասն ուսնելոյն զերկրորդ գահն՝ գրեցաք ի պատմութեան արտաքին կառավարուն. իսկ աստ գրեցուք վասն ցեղին, զորմէ պարտ է գիտել, զի Արտաւազդ արքայ նախ քան զքաղաւորիլ իւր յոյժ հակառակուէր բերել ընդ ծերունւոյն Աբգամայ նահապետի Մուրացան տոհմի առ ի կինսն գրաւել՝ ի նմանէ զպատիւ երկրորդական գահի, ամբաստանուելեն յարուցեալ ի վերայ նորա, նախ զքաղաւումն յազգէն Մուրացան „ետ սպանանել, և զկախ Ձաւան և զամենայն գիւղս նորա կինսն յափշտակել: "Ա յմ ոչ կարացեալ հանգերել որդւոյն Աբգամայ, ասէ Խորենացին ե. 51. ընդդիմանայ նմա պատերազմաւ. բայց յաղթեալ արքայորդւոյն (Արտաւազդայ) սատակէ զա մինայն ծնունդս Աբգամայ հանգերձ Հարքն, և որք միանգամ երևելիք էին յազգէ Մուրացան. և գրաւէ կինսն զնէնս և զամենայն իշխանութիւնս նոցա. և ոչ ոք ապրեաց ի նոցանէն՝ բայց միայն անչնաւորք ոմանք և կրտսերք փախուցեալ առ Արտաշէս (արքայ Հայոց Արտաւազդայ) ապրեցան ի գրան արքունի „: Սոցա սերունդք էին, զոր Մարոպ ժբ. ի Թուէլեն զնչնանս ասէ. " Եւ այլք (իշխանք) որք չէին ի գահս „: Ա յլ անունն գրի առ նմա Մաշտեան. կամ ըստ այլ օրինակի Մոյաշեան. որպէս և Մաթաշեանն անուն զոր յիշատակեցաք ի վերոյ՝ Թուէլ լինել նորն: Յաղագս սկզբնաւորութեանն այսր տոհմի տես ի գլուխն Բնակչաց՝ զԴաղթանեան եկեալ ի Մարաց „ [1]:

ՆՈՐ ՇԻՐԱԿԱՆ

Ա՛ռ Թուէլ ելանել այս անուն ի բառէս Նոր Սէբէա, որ է նոր Ասորիք. քանզի զոր օտար ազգք Սէբէա կոչեն՝ մերքն Ասորէ կոչեն, որպէս և յայտնի գնի ի Թագրամանուելեն քրոնիկոնին եւսեբեայ հտ. ք. Թղթ. 96. "Ասորոցն Սիրոս պատմի լեալ երկրածինն, յորոյ անուն կոչ և Սիրիա անուանեցաւ, որ են Ասորիք „: Ա յլ վասն նախարարութեան քանզի խօսեալ է մեր ի մեծ Հայս 530. տես անդ:

1 Ըս Ղազարայ 267. յիշատակի. յանէ լինել զայմ նախարարութիւն, և
" Յարձակեալք նահատակեցան ... ոչ իսկ յիշատակեալ է այլուր, զանց
երանելին Կելա (Կեբեսէս) յոմանց արտաքոյ գնել սասունոր ի կարգի ի-
պեան„: Ա յլ քանզի ոչինչ նշան ցու- րամ, որպէս և զայլ այսպիսիս:

ՈՒՏԻԱՑԻՔ

Խորենացին ե. 8. գրէ. "Ի սորա (Ածամայ) զաւակէ ասէն սեբեալ զազգ Ուտեացւոց ,, ։ Տես զոր ինչ գրեալ է մեր վասն սոցա 'ի մեծ Հայս 134. և 'ի գլուխն Քնակեաց՝ 'ի ստորագրութեն գետոյն Գնհմնի ։

ՈՐԴՈՒՆԻ

Ոչ ծագումն սորա նշանագրէ Խորենացին ե. 8. յասելն վասն Վաղարշակայ. "Իակ 'ի Հովտին մեծի Բասենոյ կարգ է նահապետութեն զՈրդունին անուանեալ, որ 'ի զաւակացն Հայկայ ,, ։ Իակ վասն բարձման այսր ցեղի՝ տես զոր գրեցաք 'ի ցեղն Մամաւազեան և Բզնունեան. և 'ի մեծ Հայս 384։

ՈՒՐՆԱՑԻ

Մինայն առ Ղազարայ 114. յիշատակի Ներսէհ անուն իշխան սորա. և 'ի 210. Սեպուհն Ուրծացի ։ Տես 'ի մեծ Հայս 535։

ՊԱԼՈՒՆԻՔ

Յիշատակեալ առ Մեսրոպայ ժե. իսկ առ Ղազարայ 75. յիշատակի տէրն Պալունեաց Վարազշապուհ, զոր 'ի 114. կոչէ "Իշխանն Պալունեաց Վարազշապուհն ,, ։ Եւ ընդ Վարդանանց նահատակեալ ասէ "յազգէն Պալունեաց Երանելի սեպուհն Ապտակ,, ։ Տես 'ի մեծ Հայս 212 ։ Որոց երկիր էր Տարօն, ուր էր Կուառս ։

ՊԱՀԼԱՒՈՒՆԻՔ· ՊԱՐԹԵՒԱԿԱՆՔ

Պարտ է գրել և զսոցանէ սակս Լուսաւորչին ', զորմէ գրէ Խորենացին ե. 91. "Սա որպէս ամենեցուն յայտնի է՝ աշխարհաւ Պարթեւ, գաւառաւս Պահլաւ, յազգէ Թագաւորեալ զատուցեալ արշակունի, 'ի ցեղէ սուրենական ,, ։ Զսկզբնաւորութէ այսր ցեղի գրէ նա ինքն

ազգականաց մերոյ Լուսաւորչին քաջահմուտ կամեցեալ լինել ընթերցողացն ,, ։

1 Ունի է 'ի դէպ առնուլ զբան Խորենացւոյն ե. 68. "Մրի առասպօր բամբասանացս զմեզ, իբրև զաւելագործ ոք ... այլ գիտեա զի սխորժելով վասն

ի. 68. «Աբրահամայ նահապետի բերելով ի քեռուբայ հնոլէին իւրմէ. «Յորոց սերեալ ազգ Պարթևաց, և ի նոցանէ Աբշակ քաջ, որ ապստամբեալ ի մակեդոնացւոց՝ Թագաւորեաց յերկրին Քուշանաց... ապա Աբշակ նոցին որդի որ կոչեցաւն մեծ... լուեալ ի Բահլ Հայոստանեայ զթագաւորումն իւր ամն յիսուն և երիս վասն որոյ զարմք նորա Պահլաւք անուանեցան»[1]: Ապա յայտ է թէ Պահլաւունիք անուանեցան ի Բահլ քաղաքին որ էր յերկրին Քուշանաց, և ուր էր նախկին ընակութիւն իւրեանց: Վասն որոյ Աբրատիր Պարսից Թագաւոր ասաց առ Աշակ ըստ ասելոյ Ագաթանգեղոսի ՚ի. եթէ զնոսրով Հայոց Թագաւոր սպանանիցես, «զընակութիւն պարթևացն զձեր սերիհական Պահլաւն ի ձեզ դարձուցից»: Իսկ ի Թղթ. ՚ը. գրէ վասն նորին Աշակայ. «Եւ ի բուն աշխարհն փախագէր որ Պահլաւն կոչէր»: Եւ խորենացին ՚ը. 74. գրէ. «Խոստանայր զբուն տունն դարձուցանել ի նոսա որ Պահլաւն կոչէր, զարքայանիստ քաղաքն Բահլ և զամենայն աշխարհն Քուշանաց»: Նոյնպէս և ՚ը. 90. ասէ վասն Աբշաւրի որդւոյն Կամնարայ, թէ Տրդատ ջանայր՝ «զի ՚ի մնոց նորա հեռացուսցէ զնիշատակ բնիկ աշխարհին՝ որ Պահլաւն կոչի»:

Այլ այս ցեղ կոչէր և Պարթև, վասն սերեալ գոլոյ Աբշակայ պարթևէ. նորին աղագաւ Ագաթանգեղոս ասէ անդէն վասն Աշակայ, որ «գլխաւոր նահապետ էր Պարթևաց տէրութեանն»: Եւ վասն նորին Աշակայ ասէ Թղթ. Է. «Իբրև զայն լսեր Պարթևն», փոխանակ ասելոյ Պահլաւն. որպէս և ՚ի Թղթ. Թ. գրէ. «Բայց միայն երկուս մնակուսս յորդւոցն Պարթևին» Աշակայ: Նոյնպէս և սուրբն Սահակ երբեմն անուանի Պարթև, և երբեմն Պահլաւիկ. զորմէ ՚ի գրէն խորենացւոյն ՚ը. 51. մեծաբէր, ասէ, Աբրատիրն Պարսից Թագաւորէ «վասն քաջատեսիկ ազգին Պահլաւիկացն»[2]: Իսկ վասն ցեղին սուրբնեան Պահլաւի աստի ծագելոյ՝ տես ՚ի ցեղն Կամսարական:

1 Զոր և յիշէ Վարդան ՚ի ներքոյ Լուսաւորչին ասելով. «Մեծն Աբրահամ. ծնանէր [կ՚ենանուրայ որդիս մեց զնչմուան և զնբաան, զՄագան և զՄաւդիսան, զնչսրսկ և զՍովիւէ. և սապնեալ նչմբանայ զնչբան և զՄագիսան, զանի հարեալ Աբրահամու. գոլցէ և զնաահակ սպանցէ զնին մանու նորա, այլ նմա և եգեարցն ինչս և արձակէ յարեևելս. յորոց չինեցաւ Բահլ քաղաք, յանուն որդւոյ նչմբանայ. յորմէ և կոչեցաւ ազգն Պահլաւ»:

2 Խորենացին ՚ը. 90. երկուս ցեղս կոչէ զոսոս. «Նմա ասացաք և զսահակ Տաճատ գաղտեաւն երկուց ցեղիցն Պարթևաց և Պահլաւից»: Վասն զի զնեղն Թագաւորական կոչէ ցեղ Պարթևաց, որ եկն առ մեզ ՚ի Հռոմ և զ-

ՌՄԲՈՍԵԱՆ

Յիշատակեալ առ Եղիշէի 122. որ եղև մի՛ ի զրողացն ընտանի առ Թէոդոս կայսր. ուր նախ յիշատակի Յովսէպի եպիսկոպոս, Վասակ մարզպան, և երրորդ՝ Ներշապուհ Ռմբոսեան։ Թերևս Ռոփսեան։

ՌՇՏՈՒՆԻՔ կամ ԸՌՇՏՈՒՆԻՔ

"Իսկ զՈՒշտունիս և զգողթնեցիս (ասէ խորենացին էջ. 8. ի գրելն զնախարարութեանց զորս սահմանեաց Վաղարշակ,) գտի պատմեալ ի սիսականէն արդարև հատուած. (քայց) ոչ գիտեմ Թէ յանուն արանցն զգաւառն անուանեալ, և Թէ յանուն գաւառացն զնախարարութիւնն կոչեցեալ։" Որով յայտ առնէ Թէ այս ցեղ ի Սիսական կայ յորդւոյ Դեղամայ, զորմէ գրեալ ունի ա. 12։ Վասն այսր ցեղի՝ Թէ որպէս մարդպետն կամեցաւ կոտորել յաւուրս Տիրանայ աքսորի, և վիարդ վերծեալ գտաւ մի միայն տղայ, ուստի սերեցան յաջորդքն նորա, տես զոր գրեալ եմք ի ցեղն Աբծրունեաց։ Յորոց և ոմանք՝ որպէս Բաբգաւիրան և Զօրայ, եղեն և սպարապետք. այլ զայսցանէ՝ որպէս և վասն անցից Մանաչէրի և Զօրայի տես ի մեծ Հայս 164. և 172։

Յրևելեալն անձինք այսր մեծի տոհմիս բաց ի նախագրելոցս եղեն Մեհենդակ Ուշտունի, ընդ այլ երիս իշխանս, "մեծք և գլխաւորք նահապետք" յորջորջեալք ի Բուզանդայ էջ. 16։ Եւ Թէոդորոս Ուշտունի ի սկիզբն եօթնից երրորդ դարուն. որ և եղև հրամանատար ազգիս՝ ձախող ժամանակի նորոգ երևելոց արաբացւոց. զորմէ Ասողիկ էջ. 3. "Իսկ իշխանն Հայոց Թէոդորոս Ռուշտունեաց տէր, որ շինեաց զԱղթամար կղզին՝ պատերազմեցաւ ընդ Նասա ի Կոգովիտ (ընդ համայնլեան զօրս որ յաւուրս յաջորդին Մահմետի), և ոչ կարաց յաղթել. և եղև այս յաւն եղբայր կաթողիկոսի՝՝։ Չմահուանէ սորա գրէ Յովհաննէս կաթողիկոս. "Բայց Թէոդորոս Ըռշտունեաց տէր գնայ ընդ իսմայէլեան զօրուն յասորեստան իւրայոլքն Համազօք,

պարչակայ, զորմէ գրեալ էր էջ. 68. իսկ ցեղն նահապետական՝ կոչէ ցեղ Պահլաւկայ, որ ելն առ ի ձեռն Նահակայ, մանաւանդ Թէ ի ձեռն սպեղն Գրիգորի և որդւոյ նորա, զորմէ գրեալ էր էջ. 74. և 80։ Այլ սպանաւ էրևոյսն ցեղիցս էր պարթևական, սպեղ յայտնի եղև ի նահապետէ լոցս։

և անդ մեռաւ. և մարմին նորա բերեալ եդաւ ի գերեզմանի Հարցն իւրոց,, : Պանծալի տօհմս վկայուհի նշանաւոր եղև Համազասպուհի. զորմէ քանզի չէք ինչ գտաւ նել յիշատակութիւն առ այլս՝ բերցուք աստանօր զոր ինչ պատմէ Թոմա արծրունի ա. 14 : Ձեռ պատմէոյ նորա գչարիան զոր առնէին յաշխարհի մերում ուրացեալքն Մեհրուժան և Վահան յաւուրս Աբրահայ արքայի՝ եկին մինն սոքա զօրագ Պարսից նաև յերկիրն Ուշտունեաց. որոյ տէրն Գարեգին հպատ կարաց փախել առ կայսրն Յունաց. իսկ նոցա, ասէ, "կալեալ զտիկինն Ընշտունեայց վկին Գարեգնի, զքոյր Վարդանայ մամիկոնի, աճեալ ի Վան Տոսպ ի քաղաքն Շամիրամայ՝ մանանէն ի խոշտանգանս և ի տանջանս դառնագոյնս, ստիպեն լքանել Քրիստոնէութեն, հնազանդել պաշտել զօրէնս մազդեզական մխրաապաշտութեն. զոր չառեալ յանձն սուրբ տիկնոջն Համազասպուհեայ՝ տանին հանեն ի բարձրաւանդակ ամրական բերդաքաղաքն. մերկանան ի հանդերձից, զի քրիստոսեան փառաքն զգեցցի. արկս նեն տոհմուհւոյ սրսնան, կախեն գՀիւսիսայիս աշտարակին Դոհացող համբերութիւն ընդունի զվհիռ մարտիրոսական. գայեակին նորա մնալով ի ներքոյ կախաղանին, առիսիսկ զսուրբ գանձն ի ծոց իւր, տարեալ փոխէ ի վկայարան հանգստի ի ձեռն սրբոյն Ներսէսի. զոր տարեալ հանգուցանեն ի տեղւոջն" զոր այժմ Ձորոյ վանս անուանեն ի վկայարան սրբոյ Հռիփսիմեանց, զոր շինեալ էր սրբոյն Գրիգորի ,, :

ՌՈՓՍԵԱՆ ԿԱՄ ՌԱՓՍՈՆԵԱՆ

Այս ցեղ ի հօրէ իջանէ ի վերջին Տիգրանայ արքայէ. իսկ ի մօրէ ի Հռոմայեցւոյ. զի ըստ պատմելոյ Խորենացւոյն ե. 64. Դաւիկիանոս կեսար արձակեալ զմեր վերջին Տիգրան որ ի կալանս էր, "եւ զԻռոփէ ի զկոյս գմերձաւոր իւր նմա կնութեն, զոր եկեալ ի Հայս՝ ի բաց թողու. և ի նմանէ լեալ պատանիս չորս՝ ազգ սերէ յանուն մօրն իւրեանց Ռոփեայ՝ Ռոփսեան. և զառաջին մանկանցն գԼուիս նահապետ կացուցանէ և կարգէ ընդ այլ նախարարս[1] Հայոց, զի մի անուանեսցին Աբրահունիք ,, : Եւ յաքսն փոյթ էր յայնժամ մերոյն յորոշումն ցեղից նախարարաց

1 Մերձ առ այս անուն Հռոմայեցի -ԽՈ. կամ որպէս կոչին առաւիկք Հ-ԽՔ. գառաւիկք Հռովմէական անուանս Հ-ԽՔ. -ԽՈ :

կանաց։ Ի սերնդոց սորա գտանեմք յիշատակեալ առ Վազաբայ 148. «Ի տոհմէն Ռոխանեից Բաբիկ և Յոհան»։ Ուր առ Եղիշէի 344. այլ ազգ յիշատակի. «Յոսեփաննեան տանէն Բաբիկ և Յուլիանն»։ Նոյն Թուխն ընդ սուտ Աթաթաոնիէ կռնչեալքն առ Մեսրոպայ ժԸ։

ՍԱՀԱՌՈՒՆԻՔ

Լ. յս անուն ի կրկին տեղիս Բուզանդայ Ե. 35. գրեալ կայ Սահառնի. Թէպետ և ի 37. գրի՝ որպէս և գրէն այլք Սահառունի։ Յիշատակի առ Մեսրոպայ ժԸ. ընդ այլ նախարարս, որպէս և ուրեք ուրեք առ այլ պատմագիրս. զոր օրինակ առ Վազաբայ 252. «Երանելին Որդի ի տոհմէ Դիմաքսենից, և երանելին Քաջայ ի տոհմէն Սահառունեաց եգեալ զանձինս ի վերայ ուխտիս սրբոյ՝ պահեցման» յաւուրս Յոհաննու մանդակատեայ։ Ի տոհմէ ասացեալ էր «Բատ, որ նահապետն էր, ասէ Բուզանդ Ե. 35. աղգին Սահառունեաց տոհմին, դայեակ մնուցիչ Թագաւորին Վաղարշապատայ, կամեցաւ նա զգործ զօրավարութեան սպարապետութեանն Մուշեղայ յինքն յափշտակել ի նմանէ»։ Երևելի գտաւ Դաւիթ սահառունի յեօթեներորդ դարուն. «Ի սմին յայսմիկ աւուրս, ասէ Յոհաննէս կաթողիկոս, կայսրն Հերակլ զԴաւիթ Սահառունի կուրապաղատ արարեալ իշխան Հայոց կացուցանէր, որ մեծաւ Հոնսուբ և յաղթութեամբ բազմաւ քաղաքավարիր զիշխանութիւնն ամենից»։ Ի տոհմէ աստի երևի Թերևս ի մայրենի տանէ և Բուզանդ պատմագիրը, ըստ որում գրի առ նմա այսպիսի ինչ ի Ե. 12. «Եւ զմերոյ տոհմի ազգի իշխանն Սահառունեաց»։ Թէպետ և հայրենեաց հանդերձ է Բուզանդ Փոստոսս այս՝ բուզանդացի չէն, ոչ այնչափ բարեկամազգիս. որպէս յայտ է քաջ քննողաց վէմենայն բանս նորա։

ՍՈՒՐԵՆԵԱՆՔ

Ձեզ սրբոյ Հօրն մերոյ Դրիգորի լուսաւորչին և մեծին Սահակայ, զորմէ տես զոր ինչ գրեցաք ի ցեղն Կամսարական և Պահլաւունիք. յաւէլ աստանօր և զայս պատմական գալիս՝ զոր Ագաթանգի Պարսից արքայ գրէ առ Վռամշապուհ Թագաւոր մեր. «Ընկալայ զդրեալս քո որ ինչ վասն եպիսկոպոսիս Սահակայ, և յիշեցի զերախտիս նախնեացդ որ, որք էին նահապետք Սուրենեան Պահլաւից և

կամաւ յանձն առին զաւերութիւն իմոյ նախնւոյն և համանուանն Աբտաշրի . . . իսկ որդի սպանողին (Աթակայ) Գրիգոր՝ զնեցաս և զթագաւորութեն կորուսեալ հիւանդութէ Տրդատայ՝ վերստին ետ իւրով բժշկութէ . և առաւել առ ձեզ եղիւ երախտաւոր ,, . խորենացի էջ . 51 :

ՍՐՈՒԱՆՁՏԵԱՑՔ

Դիշատակեալ առ Վաղարշ 124 . ընդ նահատակեալ ընկերս Վարդանանց . "Յաղթէն Սրուանձտայ երանելի Գաւեգին ,, : Իակ առ Եղիշէի 174 . յիշատակի "Խուրս Սրուանձտեաց ,, : Եւ Մեսրոպայ ժէ . գրի Սբոռածոյ :

ՎԱՆԱՆԴԱՑՒՔ

Օ սկզբնաւորուէ սոցա և զեղուզակօղ բարուց գրեալ է մեր 'ի մեծ Հայս 431-435 . անդ ունիս գտանել զամենայն . աստանօր զայս միայն ունիմք ծանուցանել , զի ոչ ուրեք առ Խորենացւոյն գտանեմք վասն Վանանդացեաց կարգեալ նախարարուէն , ոչ 'ի Վաղարշակայ և ոչ յայլմէ ուրեք 'ի Թագաւորաց . բայց 'ի յիշէն պատմագրաց մերոց զՎանանդացիսն 'ի կարգս նախարարաց գտանեմք դասեալ զնոսա և անուանեալ . Զի Վաղար 75 . 'ի յիշէն զնախարարս սակ . "Եւ որք 'ի նախարարացն էին Ժողովեալք տէրն Սիւնեաց Վասակ , և տէրն Աբծրունեաց Ներսեհս . . . տէրն Վանանդեայ Աբասան ,, : Եւ 'ի 267 . Սեպուհ կոչէ զոմն 'ի վանանդացւոց՝ որ է անուն սեփական նախարարաց . "Յարձակեալք նահատակեցան . . . երանելին Աբգէն Սեպուհն վանանդացի ,, : Եւ առ Յոհաննու կաթողիկոսի . "Քակէր յարքայէ զոմանս , և յայլոց էս նախարարացն Վանանտացեաց ,, : Ի կարգս նախարարաց դասէ ցուցանէ և այս բան խորենացւոյն էջ . 56 . "Ժողովեալ նախարարացն Հայոց հանդերձ զօրօք իւրեանց տան ընդ գնդին Պարսից պատերազմ . . . յորում Համարէն Վանանդացիք երևեցան նահատակեալ քաջութ ,, : Վասն որոյ և Մեսրոպ ժէ . յաւուրս է . Աբշակայ 'ի կարգս նախարարաց Թուէ՝ Վանանդեանս կոչելով : Յորմէ համարիմ նախարար կոչեցեալ զնոսա սակս գոլոյ տէր երկրի . որով ունէին և պատիւ տանուտիրական , որ է և նախարարական : Ի վերջին ժամանակս Թագաւորութէ բագրատունեաց ընկալան և զանուն Թագաւորական . բայց քանզի Թագա-

ւոր անուանեալ ցեղն ՚ի Բագրատունեաց էր՝ և ոչ ՚ի սո-
յանէ, վասն որոյ ոչ եգաք ՚ի կարգս Թագաւորաց նախա-
րարութեց։

ՎԱՀՆՈՒՆԻՔ. ՎԱՀԵՒՈՒՆԻՔ

Խորենացին ա. 30. յետ գրելոյ զՎահագնէ որդւոյ մե-
ծին Տիգրանայ, ասէ. "Եւ սորա են զարմք Վահնունիք ,,։
եւ ՚ի ք. 8. ասէ վասն Վաղարշակայ. "Բայց յորդւոցն
Վահագնի գտեալ արս՝ որք ի՛ւրքեանքեամ ինդրեցին զմե-
նին պաշտամունս, պատուէ մեծապէս ՚ի ձեռս նոցա տա-
լով զքրմութիւն, և կարգէ ընդ առաջին նախարարութեն,
և անուն կոչ Վահնունիս ,,։ Եւ ՚ի գիրս ոչ գտանեմք
յիշատակեալ զայս անուն, բայց եթէ առ Մեսրոպայ ժք.
առ որում ուրոյն ուրոյն յիշատակին Վահանէ և Վահեւա-
նէ. որպէս և առ Թոմայի արծրունւոյ ղ. 6. և ե. 3. յիշա-
տակի Ապուսահլ Վահունի։ Եւ առաւել յիշատակեալն է
Վահեւանէ. որպէս առ Ղազարայ ն. Տէրն Վահեւունեաց
Գիւտ. զոր և ՚ի 114. կոչ իշխան Վահեւունեաց Գիւտ։
Եւ առ Թոմայի արծրունւոյ ք. 6. յիշատակի խոսրով
Վահեւունի, որ էին յօգնութեն Բագարատայ իշխանին
Տարօնոյ. և ղ. 2. "Մուշեղ Վահեւունի՝ որ զտանուտիրա-
կան պատիւն ունէր ,,։ ՚ի ք. 6. յիշատակին Վահեւունիք,
որք ընդ զօրացն Գուրգենայ արծրունւոյ գնացին ընդ-
դեմ Բուղային։ Իսկ առ Եղիշէի 173. յիշատակի գունդն
Վահեւունեաց։

ՏԱՀՐԱՑԻՔ

Խորենացին ք. 8. այսպէս գրէ. "Զսեպհականութենն
Տաշրայ կարգէ Վաղարշակ ՚ի զաւակսն Գուշարայ Հայ-
կազնւոյ ,,. վասն որոյ ընդ տոհմն նախարարաց Թուխարյ
Ղազար յիշէ ՚ի 148. "Ի տոհմէն Տաշրացեաց Վրէն ,,։
Զոր Եղիշէ 344. գրէ "Յազգէն Տաշրացեաց Վրէն ,,։ Իսկ
՚ի 344. Ղազար կոչ Տաշրայ իշխան Վրէն. և Եղիշէ 174.
Վրէն Տաշրացի։

ՏՐՈՒՆԻՔ

Լ՚ախարարութե կարգեալ ՚ի ք. Արտաշէսէ. զորմ
գրէ Խորենացին ք. 47. "Պատմի սորա ՚ի նմին աւուրս սե-
րեալ աղգ և զորգիսն Տուրայ, պատանիս հինգ հանդերձ
տասամբ, յանուն հօրն իւրեանց Տրունիս, ոչ վասն արու-
թեան ինչ գործոց, այլ միայն վասն քաւութե հօրն նոցա,

զոր առնէր ի տանէն արքային (երուանդայ) առ Սմբատ. քանզի ընտանի էր Երուանդայ. սակս նորին և սպանաւ ի նմանէ ,, ։

ՏՐՊԱՏՈՒՆԻՔ

Յիշատակեալ առ Եղիշէի 174. որք մտին ի գունդն Վարդանայ։ նոյն երևի լինել ընդ Աթոպատենէ անուան՝ որ է երեքտասանեւորդ գաւառ վասպուրական նահանգ գի. որ առ Մեսրոպայ ժԷ. ի մերում օրինակի գրեալ կայ Աթոպատենէ ։

ՓԱՌԱՒԱԶԵԱՆ կամ ՓԱՌԱՒԱԶՆԵԱՆ

Յիշատակի առ Բուզանդայ Ե. 15. յասելն վասն սպասրապետին Մուշեղայ. "Վասնէր զամենայն աշխարհն Վրաց. և հանէր ընդ սուր զամենայն ազատս և զազգս նախարարացն զոր եգիտ. զՓառաւազեանսն հրամայն տալոյ սպասրապետին Մուշեղ հանել ի խաչ ի մէջ աշխարհին Վրաց ,, ։ Յայս բան աշխարհ Վրաց կոչէ զԻուգարս , զի Մուշեղ գնաց ի Գուգարս, որոյ զգեշմն ապստամբեալ ի Հայոց մէջ տեալ էր ընդ տէրունճէ Վրաց, և կոտորածն եղև Հայոց նախարարաց , որք անդր հաւաքեալ միաբանեալ էին ընդ զգեշմին Գուգարաց։ Նորին աղագաւ և այս ցեղ էր հայկազեան. յոր անուն և յառաջ իսկ գտանի յազգի մերում նահապետ նաև Թագաւոր ի ցեղէ հայկազանց Փառնաւազ կամ Փառնաւա կոչեցեալ ։

ՔԱՋՔԵՐՈՒՆԻ

Յիշատակի առ Ղազարայ 124. նահատակեալն ընդ ընդ հերս Վարդանանց " Յազգէն քաջքերունեաց երանելին Ներսէհ ,, ։ Եւ առ Թոմայի արծրունւոյ Ը. 6. "Եւ այլք ի նախարարացն վասպուրական իշխանին Սմբատ սպասհունի, Գրիգոր քաջքերուն ,, . որք եկին յօգնութիւն Բա գարատայ իշխանին Տարօնոյ ։ Տես և ի մեծ Հայս 126 ։

ՔՕՂԵԱՆՔ

Յիշատակեալ առ Եղիշէի 174. ընդ գունդս Վարդանանց ։

ՕՐԲԵԼԵԱՆԻ

Այոցս ծագումն է ի Ձենոց. զորմէ գրէ պատմութիւն օրբելեան տոհմէ՝ի Մատթէոս գլ. ա. Թէ յաւուրս փեղքաւոյ Խոսրովու Պարսից Թագաւորի խռովութիւն անկաւ ի Ձենաստան. զի ի մեռանիլ Ձենեաց Թագաւորին Ձենոյ՝ Թագաւորացունքն Ձենոց ընդ միմեանս մարտուցեալ, մի կողմն հանդերձ ընտանեօքն փախստեայ անկանի յախարհն Վրաց տեղի բնակութեանէ ինդրելով. տեսեալ աւագացն Վրաց զսոսա այսքան խոնարհութեամբ և վայելուչս, "եւ տուն, ասէ, նոցա ի տուն բնակութեան և ի տեղի ամրուձեզամառիկ ամուրցն (զՕրբելեան, զոր ի վերոյ յիշէ), որ շինեալ էր ձեռամբն Քարթլոսի. ետուն նաև զգաւառս բազումս, և զաւանս մեծամեծս, և զբերդս ի ժառանգութիւն նոցա: Այդպէս միամտեալ ի տեղւոջն բնակեցան՝ և յՕրբելեան. և վասն անուան բերդին՝ յետ բազում ժամանակաց Օրբուլք կոչեցան. այսինքն՝ Օրբելեացիք ... որ մինչև ցայսօր սակս այսր պատճառի Օրբելք կոչեցան"։ Այնուհետև գրէ խաւարի նոցա ոչ յիշատակի, այլ ասէ լինել "այր յաջողակ և պատշաճագէղ, ուժգեղ և անձնեայ, երիտասարդ հասակաւ"։ Եւ այնմհետև որ յիշատակի ի սոցանէ՝ է Վախթանգ՝ այր անյաղթելի, յամի տեառն 958։ Յետ ժամանակաց ինամութեամբ խառնեալ ասէ զոսոս և ընդ Հայս՝ի գլուխն դէ. "Եւ ծանիր զի սոքա ինամութեամբ խառնեալ եկին ընդ Թագաւորին Վրաց՝ և ընդ Թագաւորին Հայոց կորիկեանց որք եկին Բագրատունիք, և վասն այսր պատճառի առին ի նոցանէ զբագրատունի անուանսն. այսինքն զՍմբատ և զԱնանէ, որ է Յովհաննէս. բայց զՎախթանգ և զեղբայրսն Թոլթորէ եկեալ ունին ի հին նախնեացն՝ որք ի Ձենոյն եկին, նաև զայլ անուանսն առին ի Վրաց"։

Սերոնդ Օրբելեանց։

Ի մեռանիլ Դաւթայ արքային Վրաց ի միջն անդ երբ կոտասանեորդ դարուն, զմանկահասակ զորդին իւր Դեմետրա յանձնեաց նախարարաց իւրոց, մանաւանդ իւրում սպարապետին Խանեայ որդւոյ Սմբատայ Լիպարիտեանց ի տանէ օրբելեան. երդմնեցուցեալ զի ի չափ հասանել Դեմետրէ՝ զնա կացուսցէ Թագաւոր. այլ յորժամ Խանեն՝ ըստ ժամանակին հասանելոյ կամեցաւ Թագաւորեցու-

ցանել զԴեմիա, Դորգէ եղբայր Դաւթի ոք Թագաւորեալ էր ի վերայ Վրաց, կալեալ զԱհանէ և զԴեմիա կուբացոյց զաջս նոցա. և Թշնամացեալ ընդ Համօրէն ցեղին Խանեայ՝ զամենայն զաղգատէնն նորա՝ այսինքն և զօրեկլեանն առ հասարակ նաև զկանայս եւ սպանանէր. "Հրամայեաց, ասէ, Ջնջել զչիշատակ ազգին Օրբելեանց ի պատմագրաց իւրեանց նաև յեկեղեցեացն. և եւ գրել զոյց այսր ապստամբութեանն ոչ օրպէս եղեալ էր... և կարգեաց նաև նզովս՝ զի մի և իշխեցեն զանուն նոցա, և մի Թողցեն ի նոցանէ զոք ի Վրաց աշխարհին. և եղ զայն կտակ չարի յիւրում գանձարանին. և այս եղև յամի տեառն ՈՂՀ»:

Որոց ազգ ի գալատեանէն Ճենաց մինչև յայն ամ առեալ քան զՀազար ամ լեալ հաշուէ. բայց զերծեալ միայ եղբայր Խանեի Իսպարիտ ձայնեալ, որ առ Պարսիկս էր գնացեալ երկու օրգովք, ելիկում և Խանէ անուն, առ աթապէկին Ելտիկուզ: Իսպարիտ փութով վախճանեալ անդէնն՝ օրդիք նորա մնացին առ Պարսս: Յետ մեռանելոյ Դորգեայ՝ թամար դուստր նորա Թագաւորեալ առ ինքն զարձոյց զԽանէ զօրդի Իսպարտին. օրում, ասէ, "Եւ տուն ի հայրենեաց իւրեանց զՕրբելեթ միայն, յորմէ ծնան օրդիք. և այժմ նոքա են Օրբելք»: Ելիկումին եղև օրդի մի կոչեցեալ Նորիպէս Իսպարիտ, իսկ կինն Ելիկումին՝ էր դուստր քեռն Մատիանոսի Սիւնեաց եպիսկոպոսի՝. յորժամ այս Ելիկում մեռաւ ի պաշարման անդ Նիփրկերտոյ՝ ուր գնացեալ էր ընդ Թամարս, եթող օրդի մի Բոլորեալ անուն. յայնժամ Սմբատ եղբայր Ելիկումին տիրեաց, գովչին յամենեցուն, Հանճարեղ, ի հինդ լեզուս խօսող, հայ, վրացի, ուղղիր, փարսի և մուղալ, որ է Թաթար. և էր այր բարեպաշտօն, ասէ, "կանգնիչ և զօրացուցիչ վշտագնեալ ազգիս Հայոց»: Եւ եղև սիրելի յոյժ Դաւթի Թագաւորին Վրաց, (որ էր օրդի նախագրեալ Թամարայ Թագուհւոյն), որ և խնդրեաց ի նմանէ անհետ առնել զայն գիր որ վասն Ջնջելոյ Օրպէլեան տոհմին, զոր Դորգէ գրեալ պահեալ էր ի գանձարանի իւրում. և այնպէս յուզեալ և գաեալ զայն գիր՝ ետ Սմբատ պատառել և ի հուր արկանել ձեռամբ նորին իսկ Դաւթի Թագաւորին: Եւ յայ Սմբատ օրպէլեան Թէպետ զա-

1 Զի Ելիկումն յորժամ էր ի նախաջնաւն՝ հաւ իւր կին զդուստր Աթաբասայ ուրումն՝ որոյ կին էր քոյր Սահմանոսի եպիսկոպոսին Սիւնեաց, որ գոաւ ի Ժողովն Հռոմկլայ:

բաւոր էր և սիրելի՝ բայց անօրդի մեռեալ յամին 1273. սիրեաց եղբայրը նորա Տարսայիճ, այր անպարտելի ՚ի մարտի, վասն որոյ և յոյժ սիրելի Աղաղա դասին։

Ընդ ժամ Դաւիտարի դարձաւ ԱՂԲՂՈՒՆ խանին, "գնաց, ասէ գլուխ Թ. ընդ առաջ Տարսայիճին մեծամեծ պատուով և արքունական ընծայիւք մեծարեաց զնա ազատութիւն։ և նա առեալ տարաւ զնա ընդ իւր յերկիրն աւագեանն ԱՂԲԱՔ բատ, և բազում թախանձանօքն բռնադատեաց գնա. և եղ աթաբակ (Հայրիչեան) ՚ի վերայ ամենայն տէրութեանն իւրոյ... և յայնմհետէ առնէր Տարսայիճն զաթաբակութիւն աշխարհին Հայոց. և զբաղում դիւրութիւն և ողորմութիւն առնէր նեղեալ ազգիս Հայոց ,, ։ Սա է որ ՚ի 1280 ետ ձեռնադրել զերդիկ իւր զՅոհաննէս ՚ի քահանայ, որ ապա գնացեալ ՚ի Կիլիկիա ձեռնադրեցաւ ՚ի կաթողիկոսէն Կոստանդեայ մետրապոլիտ աթոռոյն Սիւնեաց, ուստի դարձաւ յամին 1287. որպէս պատմէ անդէն։

Պաղտ- Օրբէլեանց։

Ի նմին պատմութեան գլուխ Ջ. գրէ. "Լակ պատիւ և բարձրութիւն ցեղին Օրբէլեանց ՚ի տան Թագաւորին էր այս. լինել Սպասալար ամենայն աշխարհին Վրաց. և այնոյ գործակալք տանն արքունի ընդ ձեռամբ նոցին. ունել նաև սեպհական դրօշ երկոտասան, և ընդ իւրաքանչիւր դրօշաւ հազար այր. և զի սահման էր Թագաւորին սպիտակ լինել վառն՝ և կարմիր նշան ՚ի վերայ, հրամայեցին սոցա զկարմիր ունել զվառ., և սպիտակ նշան ՚ի վերայ. և շրջել (՚ի շրջիլն) առաջի Թագաւորին՝ և ՚ի կանգնելն՝ ունել ՚ի ձեռին զգաւազան առիւծագլուխ, և ՚ի ժամ ձաշոյն առանձին նստիլ ՚ի բազմականացն՝ ՚ի վերոյ քան զամենայն դէտեպուլ նախարարսն ՚ի վերոյ բարձի, և ուտել զհաց արծաթի սեղանով։ նաև տոքա էին Թագադիրք Թագաւորին Վրաց ,, ։ Եւ զարմանալի այն է, զի որպէս առ մեզ եկեալքն ՚ի ՃՀնաց Մամիկոնեանք ընկալան զպատիւ սպարապետութեան, զնոյն պատիւ ընկալան և եկեալքն առ Վիրս ՚ի ՃՀնաց. յորմէ երևի սերնդեամբ ունել ազգին ՃՀնաց զքաջասրտութիւնն և զզօրութիւն։ Իւ արդարև պատմութիւնն օրպէլեան այնպէս ցուցանէ, թէ Վիրք յետ տամներորդ դարուս որչափ ինչ գործեցին ՚ի պաշտպանել զերկիրն իւրեանց ընդդէմ արշաւանաց արաբացւոց, Պարսից և Թաթարաց՝ զամենայնն գրեթէ ՚ի

ձեռն քաջաց օրպելեանց կարապին գործել, յորում ժամանակի բազում ինչ ունէին գրաւեալ Վիրք ի սահմանաց մեծին Հայոց։

Երէից Օրբելեանց։

Իրաքին գալուստ սոցա ասի լինել ի Վիրս. այլ եթէ Օրբելեա՝ ուր բնակեցան՝ ե Շամխորէ, որպէս ասէ պատմութիւն նոցա, յայնժամ բնակութեն նոցա լինի ի Հայաստան ի Գուգարս։ Ա յլ եթողեալ մեր խօսել զՕրբելեայ, զկին բնակութեն նոցա եղև ի Լօռէ, որ էր ի Տաշիր գաւառին Գուգարաց. բայց այն կողմանէք գողով յայնժամ ընդ տէրութիւն Վրաց՝ նաև բնակեալ ի Վրաց բազմաց՝ ասին լինել ի Վիրս, որք և ի կողմանէ Վրաց Թափէին ի ձեռաց Տաճկաց զքաղաքս և զերկրս Հայաստանեայց։ Իսկ առաւել զկին՝ օրպելեանք ի Սիւնիս սիրեցան, տեղիք եղեն բազում տեղեաց Սիւնեաց, ուր և ինամութիւն խառնեցան ընդ Հայս, մի համարեալ ընդ նոսա։

Իսկ վարդ եղև այս ամենայն՝ պատմէ պատմուչին օրպելեան, զոր բերեալ համառօտելով։ Ի գլուխն ՟է. գրեթէ յաւուրս Դաւթի Վրաց արքային որդւոյ Գէորգեայ՝ մեծ սպասալարն Խանի օրբելին ընդարձակեաց զսահմանս Վրաց. "Զի առին զՏփխիս ի Տաճկացն, և զՏաւուշ (որ է Յէւտի), զԴագ, զԼօռէ և զԱնի յամի տեառն ՌՃԻՅ. վասն որոյ առաւել սիրեցաւ և պատուեցաւ ի Թագաւորէն։ և ի վերայ հայրենեաց իւրոց (որ էր Օրբելեթ կամ Շամխորէ,) տուաւ նմա ի Թագաւորէն Լօռէ իւր գաւառաւն, և ագարակն ի տեղի գարպասի, նաև Շամխորէ տի որ էր հայրենիք նորին՝ վերստին տուաւ իւր գաւառսն, և մեծ սիրելով և Թագաւորական մատանեաւն հայրենիք հաստատեցաւ նոցա ,, ։ Ա յս Խանէ և որդիքն նորա Սմբատ առին զԼոռնան, "որ ի բազում ամաց էր առ Տաճկացն. և այն ևս հաստատեցաւ հայրենիք նոցա յամի տեառն ՌՃԻՈ ,, ։ Յետ մեռանելոյ Խանէի, ասէ, "առնու զտէրութիւն նորա (օրպելեան) որդին իւր Սմբատ ,, ։ Իսկ միւս Խանէ որդի Աբուլէթի առնու, ասէ, և զԳոմանիա։ Ի նոյն ՟է. գլուխն գրէ գարձեալ. "Ա յս Գէորգէ (արքայ Վրաց) էառ զԱնի քաղաքն յամի տեառն ՌՀԱ և զամենայն տունն Շիրակայ, և չնորհեաց մեծին Խանէի Ամիր սպասալարին Վրաց, որդւոյ Սմբատայ օրբելեանց. և եղև այնուհետև այն ևս նմա հայրենիք ,, ։

Յորժամ յելս երկոտասաներորդ դարուն եղև կատա-

բած օրպէլեան ցեղին զոր յիշեցաք ՚ի վերոյ, և դէպ եղև Թամարայ Թագաւորել, փոխանակ օրպէլեանց որք ոչ էին ՚ի ծառայեալ զորդիսն Սարգսի որոյ Զաքարիայ Հայկազուն իշխանի՝ որք կոչէին Զաքարէ և Իւանէ, "Բարձրացուցանէ, ասէ ՚ի գլուխն Ե. ՚ի փառս և ՚ի պատիւս զՋաքարէ, կացուցանելով ՚ի տեղին օրպէլեանց՝ Ամիր սպասալար Վրաց. և տայ նմա զՀայրենիսն օրպէլեանց զՆոռէ. և զերազայրն Իւանէ կացուցանէ աթաբէկ ՚ի վերայ աշխարհացն Հայոց և Վրաց, որք բազումՋամիս Թափէցին զաշխարհս ՚ի Պարսից,, : Վասն որոյ յորժամ Թամար Թագուհին լեաս դաձոյց ՚ի Պարսից զԻւանէն, զՕրբէԹ ետ միայն, որպես յիշեցաք ՚ի վերոյ. զի Նոռէ սահմանօք իւրովք տուեալ էր Նախայիշատակեալ Զաքարիայ: Եւ յորժամ ելեւիկուզ աթապէկ պարսիկ արձակեաց զԶելիկումն զերազայրն Նախագրեալ Իւանէի՝ ետ նմա, ասէ, զերդն Ելինջակայ, զՄաՀուէլ աւանն և զՆախիջեւան. "Այս յոյզարիկ գնա, ասէ ՚ի գլուխն Ե. բազում փարԹամուք և երեւելի փառօք ՚ի քաղաքն Նախիջեան. եկեալ այնուհետեւ Ելիկումն, և տիրեալ այսմ Նահանգի՝ կոչէ առ ինքն զեպիսկոպոսն Սիւնեաց զտէր Ստեփաննոս որդի տեառն Գրիգորի,,: Ջորոյ զբեռ գուստրն առեալ էր Ելիկումն յիւր կնութ, որպես յիշեցաք ՚ի վերոյ: Սոյնպես և գլխաւորն Պարսից Ալան "Եաւ, ասէ ՚ի գլուխն Ջ. զՎայոց ձոր և զնգեղիս մինչև ՚ի յերերօն գիւղն, որ ի Հանդէպ Գառնւոյ, և ետ զամենայն Ելիկումին, և ասէ. Թրով առածն և ոսկւով գնեցածն միապահ Հայրենիք են մարզոյն. արդարև՝ զոր ես սրով իմով առի գաւառքս այսոքիկ՝ քեզ լեցին ՚ի Հայրենիս և ազգի քումմ... և ապա Հաստատեցաւ այս լինել Հայրենիք տանն և ազգին Օրբելեանց,,: Աստի յայսմանէ յայտ է՝ Թէ երկրորդ նորոգութիւն և գալուստ այսր ցեղի սկսեալ ՚ի ժամանակաց անտի Թամարայ Թագուհւոյն եղև ՚ի Հայս. զի սերունդք Ելիկումայ օրպէլեան ՚ի Սիւնեաց աշխարհիս Հայոց բնակաւորեալ բազմացան, որպէս յայտ առնեն նախագրեալ տեղիք որք են ՚ի Սիւնիս. իսկ Նախջուանն՝ ՚ի Վասպուրական. նորին աղագաւ և վասն Հայաստանեայց բազում պատերազմունս մղեցին:

Զմի ինչ դէպ լինէր մեռանել Ելիկումին՝ պլաղգէք ՚ի Նախջուան պահէին զորդի Ելիկումին Վախարիտ անուն, որպէս և զմայր մանկանն զկին Ելիկումին, այլ եպիսկոպոսն սին հնարիւք խին գողացեալ զերկոսին տաբաւ ՚ի Վիրս. որում բազում շուք և պատիւ ետ Իւանէ աթապէկն. և

տայ Ալիպարսին անանցական գրով զՀրաշկաբերդ իբր գա-
ւառն, նաև զՎայոց ձոր, զյոլով գիւղօրէս ի Գեղաքեռ-
նիս, ի կայեան, նաև զԱղբատաւ, և զայլ տեղիս Սիւնեաց.
" Եւ կացուցանեն, ասէ ի գլուխն Է. Թագաւորն (Վ.թագ)
Լաշայ, և աթաբակին Խանւէ զԱլիպարիան (զորդի Իլխկու-
մին) կողմնակալ այսմ աշխարհին, : Որպէս և զմիւս իշխանն,
ասէ, զՎասակ խաչենեցի՝ կացուցին կողմնակալ ի Վայոց
ձորոյ գաւառին : Եւ յոր Ալիպարսի եղեն որդիք հինգ.
յորոց հինգերորդն կոչէր Տարսայիճ. իսկ առաջին որդին
Իլխկումայ ձայնեաւ՝ փեսայանայր ազգին մամիկանէից :

Յետ այսորիկ դեպ լինէր Սմբատայ օրպէլեան գնալ
առ Մանկու խանն Թաւրեզաց, և տալ նմա ի պարգև
զանգիւտ ակն յաղինէ. Մանկու խանն փոխարէն այնմ՝
ընդհատեաց Սմբատայ գրով վճռեալով զամենայն երկիր զոր
առեալ էր Աղանայ, որ ըստ մեծի մասին էր ի Սիւնիս.
"Եւ ահա, ասէ ի գլուխն Է. այս կրկին հաստատուէ եղև
հայրենեաց նոցա. զի առաջինն Թրով առածն էր, որպէս
ծառայ որ ի ձեռն Աղան նոյնինն. և երկրորդս արքայ-
ատուր, որպէս և գնոյ մեծագունի առեալ ընդ լուսա-
տու գոհվարին ": Եւ արդարև այս մասն Սիւնեաց որ
անկաւ ի ձեռս օրպէլեանց ի ընդհատելոյ գլխաւորին Թա-
թարաց և Վրաց արքային՝ այնչափ սեփականեալ եղեւ
հետզհետէ նոյն ցեղին օրպէլեանց, զի ի մեռանիլ Տար-
սայիճ իշխանին ի 1290, յորժամ որդիքն նորա վիճէին ի
վերայ իշխանութեան՝ Աբղուն խանն Թաթարին, ազատը
և եպիսկոպոսք Հայոց միաբան բաժանեցին ի միջ նոցա
զերկիրն իբրև հարազատ ժառանգութիւն իւրեանց. "Եւ
այնպէս կային միաբանութ, ասէ ի գլուխն Թ. և վարէին
զառերուն այսր նահանգի մեծարգոյ և չքեղազուք իշխա-
նութիւն. պահելով զաշխարհն զայս ի խաղաղուէ, և զվա-
ճորայս ի շինուէ. և զի յայսմ ժամանակի (յերեքտա-
սաներորդ դարու) ամենայն աշխարհ աւերեալ և ապա-
կանեալ էր, և վաճորայք խափանեալ էին ի պաշտամանց,
և ամենեքին առհասարակ գիմեալ ի տերուն սորա՝ ասա
զՀանգիստ առեալ զետեղէին ": Սորին աղագաւ և Թո-
մա մեծոփեցի յաւուրս Ա.ենկթեմուրայ յետս չորեքտասա-
ներորդ դարուն զՏուրլթել անուն զիշխանին յազգէն օր-
բելեանց զաերն Որոտան՝ կուզ իշխան յապէս ձեզ :

Հ Ի Ր Մ Օ Ր Բ Է Լ Ե Ա Ն Ց ։

Օրպէլեանք Թաղէին ի Նորավանս որ ի Վայոց ձոր, որպէս կարես տեսանել ի մեծ Հայս. և Թէ այլուր մեռա- ներ որ ի նոցանէ, զնորա մարմինն այսր բերելին. որպէս զմարմին Էլիկումին բերին ի Մարտիրոսաց քաղաքէն՝ ուր մեռաւ. զորպէլեանին Սմբատայ բերին ի Դավնիժէ. որպէս գրի ի պատմուէճ օրպէլեանց՝ գլուխ Ը. "Բերեալ ի Հայ- ըենն դամբարանն սուրբ ուխտին Նորավանից. և աշխար- հախուռն հանդիսիւ եդին ի տապանի ընդ Հարս իւր ։ Թէպէտ և վինի յայլ տապան փոխեալ ասէ, զոր շինեաց եղբայրն իւր Տարսայիճ, զորոյ մարմին ևս անդ ի Նորա- վանս ասէ հանգուցեալ, որ մեռաւ ի 1290 ։

Պատանօր ի վախճան հասուցեալ որ վանս պատմուճէճ առանձին նախաբարուքեաց են բանք զանազանք, ըստ բա- ւականին համարիւնք տուեալ տեղեկուին գնացուցոյ որպէսի ինչ լիշատակին ի գիրս. Թէպէտ են և այլք սակաւք, բայց անյայտ անուանք են. զոր օրինակ Բարսղ իշխան Սագ անուն լիշատակեալ առ Մեսրոպայ է. Ծորայ իշ- խան Մարաւազ անուն լիշատակեալ անդէն. զորս ասե- լորդ համարեցաք ի կարգս այլոց արձանագրել. ի մէջ այսչափ բազմաթիւ նախաբարուքեաց զորս կարդեցաք, չո- րեքին գտանին երևելիք քան զայլս. յորոց երեքն ծա- գեալ են յօտար ազգաց, որք են բագրատունեացն, Մա- միկոնեանցն և Ամբծրունեաց. իսկ չորրորդն որ է Սիւ- նեաց, է ի բնիկ որդւոցն Հայկայ։ Բագրատունեանք և Մամիկոնեանք արդեամբք իւրեանց գտան պանծալիք յաշ- խարհալէն գործս, այլ երկիր կամ կալուած նոցա նուազ. իսկ Ամբծրունեացն և Սիւնեաց երկիր բազմածաւալ և բազմաբեր, բայց արդիւնք գործոց նոցա նուազ. ի Բագ- րատունեացս և ի Մամիկոնեանս բազում երկին որք օգ- տակարք, բարեկիրթք և երկիւղածք, և սակաւք վատ- Թարք և վնասակարք. իսկ Ամբծրունիս և ի Սիւնիս ապականագործք բազում, որք յոլով չարիս ածին ի վե- րայ համօրէն հայաստան աշխարհիս ։

Օչ նախաբարուքեց որոց գտանին լիշատակք անուանց, նահապետաց, երկրի, պաշտամանն և այլն՝ զորոց ցարդ խո- սեցաք, իրրև ի պատկերի տեսլեաց ի յայրդուդ ։

ԱՂԻՒՍԱԿ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ

ԱՆՈՒԱՆՔ	ՆԱՀԱՊԵՏՔ	ԺԱՄԱՆԱԿ	ԵՐԿԻՐ	ՈՍՏԱՆ	ՇԻՐԻՄ	ՊԱՇՏՕՆ
Աբեղէն	Աբել	Առ Վաղարշակաւ	. . . . .	. . . . .	. . . . .	Սպասաւար
Աղջնիք	Շաւարշան ի Սա-	Առ Վաղարշակաւ	Աղջնիք	. . . . .	. . . . .	Բդեշխ. Դուռսակալ Հա-
	նասարայ		Սիմ	. . . . .	. . . . .	րաւոյ
Ամառունիք	Մանու-	Առ ի Արտաշխիւ	Արագածոտն	. . . . .	. . . . .	. . . . .
	Սամսոն					
Անգեղտուն	Պապքամ	Առ Վաղարշակաւ	Ծովիք գաւառ	Ոստան	. . . . .	Կուռակալ արեւմտեան
	Տղոք					
Արծրունիք	Նդրամելէք	Առ Վաղարշակաւ	Վասպուրական	Հադամակերտ	Սուրբ Խաչ յՕ-	Արծուիկիկը
					սի որ յՆզնագ	
Բագրատունիք	Շամբատ	Առ Վաղարշակաւ	Սպեր	Դարօնիք	Դարօնիք	Թագադիր
	Բագարատ		Արշարունիք	Բագարան	Բագարան	
				Երազդաւորիք	Անի	
Գաբեղէն	Գաբաղ	Առ Վաղարշակաւ	. . . . .	. . . . .	. . . . .	Համբարակապետ
Գնթունիք	Քանանիդաս	Առ Վաղարշակաւ	Ի շրջակայս Ծովուն Գե-	. . . . .	. . . . .	Զգեցուցանող արքայի
	Ջեռէս		ղամայ			
Գնունիք	Գին ի Սենեքե-	Առ Վաղարշակաւ	Շահապիվան	. . . . .	. . . . .	Ցակառապետ արքայի
	րիմայ		Աղիովիտ			
Գուգարք	. . . . .	Առ Վաղարշակաւ	Գուգարք Նահանգ	. . . . .	. . . . .	Բդեշխ
Խոռխոռունիք կամ Մաղխազունիք	Մաղխազ ի Խո- ռայ Հայկազնոյ	Առ Վաղարշակաւ	Խոռխոռունիք	. . . . .	. . . . .	Կողմնակալ Հիւսիսոյ Թիկնապահ

Կամաբարհանք	Կամար	Ար. Տրդատաւ.	Շ.իրակ Արշարունիք	Երուանդաշատ	. . . . .	. . . . .
Մամիկոնեանք	Մամգոն ի ՀԷնաց	Ար. Տրդատաւ.	Տարօն	Ղեկան	Վանք Գլակայ	Սպարապետ
Մարդպետական	. . . . .	Ար. Վաղարշակաւ.	ՀԱտրպատականէ ցԴսխճուան	Նախճուան	. . . . .	Մարդպետ Հայր Իշխան
Ոստանիկ	. . . . .	Ար. Տիգրանու. Հետ. Ար. Վաղարշակաւ.	Ոստան ի Դուին	. . . .	. . . . .	Աղբունի պահապանք
Ռշտունիք	Սիսակ	Ար. Վաղարշակաւ.	Ռշտունի գաւառ.	Ոստան աւան	. . . . .	. . . . .
Սիւնիք	Սիսակ	Ար. Գնդամաւ.	Սիւնեաց Նահանգ	Շաղատ	Ուխտ Վահանու.	Դողնիակալ
Սղկունիք	Սղուկ	Ար. Տրդատաւ.	Տարօն	Ղեկան բերդ	. . . . .	. . . . .
Վարաժնունիք	Դատ Վարժ	Ար. ՚ի. Արտաշ. սիւ.	Ար. Հրազդան գետով	. . . .	. . . . .	Ըսպապետ
Օրպէլեանք	Թագաւորազունք ի ՀԷնաց. առա. Ջին յիշատակէն ի Լիպարիտ	Ցամի տեառն 958	Վայոց ձոր և այլ բերդք ի Սիւնիս	Շահիլդէ Լօռի Հրաշկաբերդ	Նորավանս՝ որ ի Վայոց ձոր	Պապասպալ ստ. Վիրս

ԱՂԻՒՍԱԿ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ

ՄԻՆՉԵՒ ՑԱՑՍՄ ՄՆԱՑԵԼՈՑ

ՆՈՐ ԱՆՈՒՆ	ՀԻՆ ԱՆՈՒՆ	ՑԵՂԻՆ
Պակրատիոն .	Բագրատունիք .	Ի Վիրս .՝ի Ռուսիա .
Ուռպելիուն .	Օրբելեանք .	Ի Վիրս .՝ի Ռուսիա .
Սասունք ՝ .	Սանասունք .	Ի Մուշ .
Սղնախք .	Բաղացք . Սիսա- կանք . Փառիսոսք .	Ի Ղարաբաղ .
Մանդգիկ .	Մամիկոնեանք .	Աւ . Քուրդս .
Սլիվանցիք .	Սկայունիք .	Աւ . Քուրդս .
Ռոշկրցիք .	Ռշտունիք .	Աւ . Քուրդս .
Մալախօվքբի . համ Մալխասօվքբի .	Մաղխազունիք .	Ի Լիթուանիա որ ՝ի Լեհ .
Սաբեղայ .	Գաբելեանք .	Ի Լիթուանիա որ ՝ի Լեհ .

Այս նախնի ցեղք են՝ որք այժմ այսպէս անուանին , զորս ՝ի նախնեաց իջեալս վկայէն և ինքեանք և շրջա- կայք , զորոց և զմանս յայտնի գիտեմք ՝ի գրոց . զոր օ- րինակ են բագրատունեացն՝ որք ՝ի հայաստանեայց ան- ցին ՝ի Վիրս ։ Եւ քանզի սկզբնաւորուն բազմաց ՝ի ցեղից աստ սկսանի ՝ի ժամանակէ անտի Վաղարշակայ՝ հնուն նոցա զանցանէ քան զամն 1900 . որով և լինին հին և նախնագոյն քան զամենայն հին ցեղս որք գտանին յԵ- րոպիա . զի նոցա սկզբնաւորութիւն[1] ոչ յառաջէ քան զմեծն Կարոլոս , որ թագաւորեաց յամի տեառն 800 . որպէս և անուանք աղնուականաց վէնետկեանց ոչ են յառաջ քան զՔհնգերորդ դար յետ Քրիստոսի ։

1 Ոչքա երևին ամենևին անհաւան զի ՝ի սկզբանէ անտի մինչև ցայժմ միացեալք յիւրեանց անմատոյց ի- թէնամի որ չկարաց մատնել անդր ։ րինն՝ սերունդ գոլով Սանասարայ .

ՇԻՆՈՒԱԾՔ ՆԱԽԱՐԱՐԱՑ ՈՐ ՑԵՐՈՒՍԱղԷՄ

Գոտանի՛ ի գիրս ինչ՝ յիշատակութե՛ն զնուազան եկեղեցեացդ և վանորէից՝ զորս շինեցին նախարարք մեր Լուսաւորչէմ, մանաւանդ յատուկս սրբոյն Տրդատայ և Լուսաւորչի. յորոց Հարազատ քանիսին առեալ և մե՛ր՝ ուրոյն ուրոյն կարգեսցուք յատաքինեցդ։

Խոռոյի վանք Հիբաէոցոց, որ Կնէղաւորաց վանք յետոյ ասնուանեցաւ։

Աթբուռնեաց վանք, որ յանուն սրբոյն Գէորգեայ։

Օարեհոռանի վանք արտաքոյ քաղաքին Երուսաղէմի։

Իռիկնեէից վանք, որ յանուն սրբոյ Կարապետին։

Վռաբարաց վանք։

Իրեղէի վանք, շինեալ ի նոյն կողմն՝ որ կոչի սուրբ Սարգսի և Բագոսի։

Սիոնեաց վանք, որ յանուն սուրբ Գէորգեայ, զոր Տա-

---

1 Այս գիր է իբր վերջին գլուխ սեօրինական սեղեացն որ Հերուսաղէմ. զորս յետ մի քան միայն Թուխտոյ գրեն վերնադիր. «ի Հայոց Ազաթանգեղոսէ պատմեն՝ որ էր գալաւոսէս սուրբ լուսաւորչին Գրիգորի, վասն վանորէիցն որ Հերուսաղէմ»։ ի պատմուէն Ագաթանգեղոսէ ասելոյն՝ տայ միգ իմանալ թէ զայս ցուցակ անուանց վանորէից յուրոյն իւն պատմուէիան էր գրեալ Ագաթանգեղոս. զի ոչ գրաստի յայժմեան գիրս պատմուէեան նորին զոր ունիմք։ Եւ ապա սկսանի. «ի ժամանակս Թագաւորութե Տրդատայ և ի հայրապետուէ սրբոյն Գրիգորի լուսաւորչին՝ մեծամեծք Հայոց շինեցին վանորայք ի սուրբ քաղաքն Հերուսաղէմ. որոց անուանք վանրէիցն են այսոքիկ»։

Եւ չեն ինչ զարմանք զանազան և կեղեցիս շինելն Հերուսաղէմ մերոյն Տրդատայ և Լուսաւորչի և նախարացն, քանզի՛ ի սկզբան անդ գտան քրիստոնէուէեն մերոյն յայտնի է թէ ունէին առաւելագոյն իւն եռանդն աստուածպաշտուէե՛ն, և փաւիագ էր. Թագոր և պատուէոյ զուարք տեղիան ուր կոխեալ էր և չրջեալ մաքուով զոր Աստուծոյ, մանաւանդ զի տեսան նէին զրիհանին այսորիկ ի մեծն Կոստանդիանոս և ի Հելենէ դչնոյն, որք ջին Հերուսաղէմ նոքաչէն եկեղեցիսջը. նա գնոյն ինքն գկոստանդիանոս կարծեմ լեալ յորդորիչ մերոյն Տրդատայ իբրև խրատ մանրիմ բարեկամի՝ և խրոց նախարարաց ի չենութեան։ Պատ է և սա համարել թէ առ. Յերմիանդն փափագանաց բազմուէն ուսատաւորաց ի մերոց հայկազանց յաՀաստ խէին գնալ անդր. և նմին իրի գնալ չինէր այլ և այլ նախարարաց գանացն վանորայս շինել ի գիւրութե՛ր որ նակաւէե ուսատաւորաց իւրաքանչիւր ցեղից յուրոյն ուրոյն վանս։

Ա՛յլ չէ պարտ այնպես խմանալ, թէ այս ամենայն վանորայք ի վերոյ յիշատակեալք առհասարակ ի ժամանակս Տրդատայ և Լուսաւորչի շինեցան, զի ինքն իսկ անդանօր յետ յիշելոյ գշինեալսն նախարարաց, զորս և գաք ի վերոյ, գնի ասէ. «Այս ամենայն վանորայքս Հերուսաղէմ՝ ի սուրբ Լուսաւորչէն Հաստատեցան, բայց յորոմէ՛ ի Կերբեսէ, զոր Հրամայեաց շինել ի պատճառս աղօթից ի փրկութե՛ն Հոգւոց. զոր Հայրապետաց տեղոյն յե-

Ի՛շղոռնեայ վանք, որ ուրկանոց էր Հայոց վանորէից ի նոյն կողմն։

Իրէցեաններ, որ ի Դաւրէի դրան է, որ՝ յանուն սուրբ Աստուածածնին։

Սոսրբ Վռնդպեանց վանք։

Որբոյ վանքն չորրորդ Հայոց յարևելից կուսէ։

Ինձնոցեանց վանք յանուն սրբոյն Աշանիայ, որ է մերձ ի Բեթդեհէմ։

Լչ ի ներքս ի քաղաքն է Աբղեռնեայ վանք ի սուրբ Պրոքատիկէ կողմանն։

Դատաստի վանք, որ յանուն սրբոյն Հռիփսիմեայ և Գայիանեայ ի մէջ քաղաքի դրան Յաբուձին։

Կամաբախեանց վանք, զոր Աբղեռնեայ կոչէն, որ յանուն սրբոյն Գրիգորի լուսաւորչին։

Լ՛ֆռոնեայ վանք, ի կողմանէ սուրբ Սիոնի։

Ո՛ւլ վանք Ամոռնեայ, ուր Հաւատատուրքն (կուսանք) բնակէին ի կողմն Սիոնի։

Ա՛նդնէէյ վանք, յանուն սուրբ կարապետի ի նոյն կողմն։

Կրնացոյ վանք, զոր Սմբատ բագրատունին է շինեալ։

Ամռոռնեայ վանք ի նոյն կողմանէ, զոր Քարս վանք կոչէն, որ է Տէառնեղբօր՝ զոր ընկալաւ վէնի։

Պալռնեայ վանք, որ է ի կողմն Գալիլեայ լերին։

Լ՛ուլ Աբղեռնեայ վանք ի նոյն կողմանս։

Օաղռնեայ վանք ի նոյն կողմանէ, զոր այժմ Տաճիկք ունին։

Կոռաչեայ վանք, ի կողմն Զիթենեաց լերին՝ յորում զինն Երանուելին ուսոյց Տէրն աշակերտաց։

Ա՛րաքնոռնեայ վանք, ի նոյն կողմն տաճարին Սողոմոնի։

Ա՛նռնդպեայ վանք, ի նոյն կողմն։

Տ՛այեցոյն, ի նոյն կողմն։

Ո՛ռնոյ վանք, ի կողմն Դեթսեմանի։

տոյ ի նախանձ չարժէալ՝ խանգարեցին զամենեցուն կարգս վանորէիցն։։։ Յայսմ է այս և յանուանէ նոցա քանի վանքն որ յանուն Լուսաւորչի՝ յայս է թէ զինի նորա չունէալ եղև. որպէս և Ղևոնդեանցն զինի նահատակելոցն նոցա բազումք զինի Լուսաւորչին։

Ուր այսպէս նոյն իսկ պատմուածին ցուցանէ, թէ Ագաթանգեղոս յայս ցուցակ նշանագրեաց զվանորայս շինեալս ի Տրդատայ և ի Լուսաւորչէ և յոմանց ի նախարարաց իւրոյ ժամանակին. իսկ զնի Ներսէսի յաւելին այլք ի նոյն ցուցակ արձանագրել և զչինեալսն ի Ներսիսէ և յայլոց նախարարաց. ապա յետագայք նոքա յելին նշանակել և զառումն Տաճկաց և Հաւտոնց, որք յապա ժամանակս եղեն։

Վհաղբերտենեայ վանք, ի կողմն Գալիլիայ լերին։
Սահմոռենեայ վանք, ի նոյն կողմանէ։
Մաղաղեայ վանք, զոր այժմ Հոռմայն ունի։
Կողբայ վանք, ի նոյն կողմն, զոր այժմ Հոռմայն ունի։
Պահդռենեայ վանք։
Ղամանենեայ վանք, որ է աւերեալ։
Վերջնեայ վանք։
Սիմենեայ վանք, յարևելից կուսէ։ Ա՚յլ վանք Սիմենեաց ի նոյն կողմն։ Ա՚յլ վանք Սիմենեաց ի ձորն Սաբայի։ Զորրորդ վանք Սիմենեաց ի ձորն Յովսափաթու։ Հինգերորդ վանք Սիմենեաց, զոր Տաճիկք ունին։
Կաղանդռեայ վանք, որ է ի նոյն կողմն։
Ալբակեայ վանք, ի հարաւոյ կողմն։
Ա՚յլ երեք վանք Աղռանիդ, զոր այժմ Տաճիկք ունին։
Տաշբայոյ վանք, որ յանուն սրբոյն Գէորգեայ յԱբղահոնեաց շինեալ։
Ա՚յլ չորս վանք մեծամեծք ի Մոկսենէդ շինեալք։
Միհրսայն բովանդակ եօթանասուն վանք շինեալ եղև հիշեալ անուանցն Հայոց ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի տեղիս անօրինականացն Քրիստոսի, և յայլ յաստուածակոիս տեղիսն։

ՏԻՐԱԿՑՈՒԹԻՒՆ [1] ՈՐ Է ԵՂԱՆԱԿ ԿԱՄ ԿԱՐԳ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՒՈՐԱՑ ՄԵՐՈՑ ԸՆԴ ՕՏԱՐ ՏԻՐՈՒԹԻՒՆՍ

Ա. Երէրդպահուէ և նախագահուելէ առ այլովք ևս գործոց։

Զառաջինն հաւհատիք մեր հաւ թագաւորք վերկ-
ոորդական ունելին զպատիւ՝ ընդ դրացի թագաւորաց լեալ

1 Տիրակցութիւն՝ իմա օրպէս Տիրակցութիւն՝ որ է բառ յունական ածական՝ որ է բառէս Տիրակցութիւն՝ այս է Կրկնակ. ուստի և Տիրակցեմ կոչեն զպատճէնս գրուածոց դատաստանի կամ իշխանաւորաց, ըստ որում օրինակեցին կրկին բան ակզբնագրին։ Ի բառէ ատի առեալ արդի եւրոպէացք Տիրակցեմն կոչեցին զայն գիտութիւն՝ որ ուսուցանէ Թէ զինարդ անկ է միոյ տեղւոյն վարել ընդ միւս տերութեան, և զքանդն այս բերէ զմերձաւորութիւն, զպարկաւորութիւն և զդրակցութիւն ընդ միւս տերութեան, վասն որոյ և միչ ատի առեալ միով անուամբ կոչեցաք Տիրակցութիւն։ զի արդարև գործարքն են էր այլ ազգ միով բառիւ քացատրել։ Եւ ընդ սովին անուամբ յատաչ բերաք զոր ինչ գտաք արարեալ մերոց Թագաւորաց ընդ այլ Թագաւորս ի կառավարութեն մասին։

ոլք զօրաւորք էին. զոր օրինակ էր ասորեստանեայցն, ապա Պարսիցն. Յայտ առնէ զայս պատմութիւն մերոյն Ա-ւա-մայ, որպ Թագաւոր Պարսից՝ ի վերայ Մադեաց գլխաւորի Մարաց՝ ինքն եղև նախագահ իշխող՝ ի վերայ նոցա՝ ի հարկի կացուցեալ զաշխարհ նորա, որ էր Մարաստան, մինչև յլեառն Զարատպ, իսկ նոքա եղեն երկրորդականք ընդ նովաւ, բայց այս տեւեաց միայն, ասէ Խորենացին ։ 13. մինչև յղթագաւորել Նինոսի՝ ի վերայ Ասորեստանի և Նինուէի. զի ընդ տիրելն նորա՝ ի վերայ ամենայն մերձաւ-կայ տերութեց, յուշ ածեալ՝ ի մտի գնահ նախնւոյն իւ-րոյ Բելայ՝ ի Հայկայ, կամէր հանել զքէն վրիժուս, և "բառ-նալ ընկել զամենայն ձեռ սերմանեալ յարանց քաջին Հայկայ,, Բայց երկիւղ՝ ի սրտի ունելով ծածկէ առ ժամն զիւր չարութիւն, և հրամայէ մերոյն Ա-ւամայ " զայն իշ-խանուն (զոր ունէր) անկասկածաբար ունել, և համար-ձակութիւն տայ նմա վարանակալ աճել մարգարտեայ. և երէրդ նորա կոչել ,, ։ Զայս պատիւ երկրորդականութ Ա-ւամայ ունէր և Ա-բայ, զորմէ գրէ Խորենացի ։ 15. "Ա-բայ սակաւ ամօք յառաջ քան զվախճանիլն Նինոսի ինա-մանալեաց իւրոց Հայրենեացն նոյնպիսուա ընդհէն աշ-ժանաբերել՝ ի Նինոսէ, որպէս և Հայրն իւր Ա-բամ ,, ։

Յ. յսպէս տեւեաց մինչև գառաջինն Ա-բրահաէս. յորում ժամանակի նախագահութիւն էր առ Պարսիկս. այլ այս մերս Ա-բրահէս գոլով զօրաւոր՝ փոխեաց զամենայն. զորմէ այսպէս պատմէ Խորենացի ։ 11. "Յառաջադէմ եղեալ՝ ոչ վերէրդպանն ունի գահ, այլ զառագութիւն թեին ածէ. որում հաւանեալ յանձն առնուս Ա-բշական (Պարսից թա-գաւոր) տալ նմա զնախափանութիւն. քանզի էր այր հպարտ և պատերազմասէր ... և զԱ-բշական ընդ իւրով ձեռամբ կացուցանէր թագաւոր Պարսից ,, ։ Ա-յլ այս տեւեաց միայն՝ ի ժամանակս իւր. զի ։ Տիգրան որդի և յաջորդ Ա-տաշիսի գարձոյց անդրէն՝ ի Պարս. "Աղերսէ (ասէ Խորե-նացին ։ 19. վասն Տիգրանայ)՝ ի սեր զԱրտաշէզ արքայ Պարսից յաղագս հպարտութիւն հօրն (զոր արար), հանե-լով՝ ի նոցանէ զնախագահուն. իսկ սա իւրովք կամօք զերէրդպանն ունելով ըստ իրաւանց՝ գարձուցանէ՝ ի նա զնախափանութիւն. և՝ ի հաշտութիւն ածեալ զԱրտաշէզ՝ առ-նու՝ ի նմանէ զօր յօգնականութիւն ինքեան ,, ։ Ա-յսպէս մնացին նաև առ յաւայս, որպէս յայտ առնէ Ագաթան-գեղոս ։ յասելն զմեծէն Խոսրովայ. " Արդ իբրև յետ մահուն հասանելոյ գուժիս այսորիկ առ Խոսրով Թագա-

ւորն Հայոց, որ էր երէցորդ տէրութենն Պարսից, զի որ Հայոց Թագաւորն էր՝ նա էր երէցորդ տէրութենն Պարսից ։ ։ Եւ այսպէս թէպէտ երկրորդ էր մեր Թագաւորս, բայց սկզբուն էին ընդ Պարսիկս, որպէս ունիմք գրեալ ստորև ։

Ի մէջ որոց ծանօթ են պատմիւնք ազգիս՝ արժան է ասել զամօթ զարմանալ, զմեծաւ ածելոյ զիարգ ազգի միոյ երևելոյ քաջագործութիւն քան զայլ դրակից ազգս՝ որպիսի էր մերն, չեղև անցանել բնաւ ի կարգս առաջինն և մեծամեծ տէրութեանց. այլ մանաւանդ լինել երկրորդ նոցա, և մնալ ընդ նախագահ տէրութիւն նոցա ։ Զորոյ զպատճառան գտցեն լինել զերկպառակուէն մերոյն՝ զորմէ ունիմք ձառել ի գլուխս բազում ։ Եւ յս կորստական ախտ էր՝ որ ոչ թողոյր մերոց քաջ արանց զքաջութիւն իւրեանց ի վար արկանել ի յառաջադիմութիւն ազգիս, այլ ստիպէր գնալ ծառայել սրտի մտօք օտար տէրութեց ի յառաջադիմուէ նոցին ։ Զոր ի ձեռն մերոց զօրանային, ի ձեռն մերոց ընդարձակէին զտէրութիւն իւրեանց. բայց անուն ոչ մերոյն համբաւէր, այլ նոցին ։

Ի բազմից սակաւք գրեցան, այլ այն սակաւ դիպուածք զոյգուցն տան իմաստասիրել իմաստուն ընթերցողն. զի՞ կարէր իմանալ, թէ ի ժամանակս քրիստոնէուէ Պարսիկք ի ձեռն մերոց նախարարաց յաղթէին զօրաւոր թշնամեաց իւրեանց Քուշանաց, Հնոց, Հեփթաղաց և այլոց, եթէ եղիցէ և Ղազար չէին զայս յայտնեալ վասն պատմելոյ զմարտիրոսսն Վարդանանց և զՀալածանս Պարսից. զի գլուխ քաջազունն նախարարացն այնոցիկ էին Վարդան և այլք ոմանք ի նախարարաց։ Նոյնպէս չիմանայաք թէ ի պատերազմին Ճապհոյ Պարսից Թագաւորի ընդդէմ Հնոց՝ մի միայն Բաբիկ որդի Անդոկայ Սիւնեաց իշխանին գտաւ՝ որ կարաց զերծուցանել զՇապուհ ի ձեռաց Հոնանգուր Հակայից յորմէ դողային ամենեքին, եթէ չէր պատմեալ Պետրոս քերթող յորմէ առնու Ստեփանոս օրպելեան ։

Ի մէջ նաև ի հինոն մեր հանեալով զպատմութիւն ազգիս՝ ըստ այսմ չիմանայաք բնաւ, թէ հռչակաւորն այն Կիւրոս որ եբարձ զՀզոր տէրուէն Մարաց՝ ի գլուխս տարաւ զայն ի ձեռն մեծին Տիգրանայ, որ ահագին քաջութեն սպան ի մենամարտուէ զայն վիշապամարն զԱժդահակ վերջին Թագաւոր Մարաց. և յայնմհետէ կարաց Կիւրոս կանգնել զմեծազօր տէրութիւն Պարսից. զայս ամենայն ոչ իմանայաք ասեմ, եթէ Մարիւբա՝ յորմէ և Խորենացին՝ չէին

'ի վեր հանեալ զՀայմարտուքեին, այլ ինայաբ 'ի խաւարի յոյնական կեղծեալ առասպելախօսուէ պատմագրաց։

Հայսմանէ իմանամք թէ և ոչ զբաբիլոնեան տէրուէն կաբէին բառնալ և տիրել, եթէ մեր քաջազուն նախարարք ընդ Թագաւորին մերոյ ոչ գնային յայն պատերազմ յօգնութիւն. զոր և երեսիա մարգարէ ծնաւ. 27. որպէս զազգ քաջ հրաւիրէ 'ի մարգարեուէ իւրում գալ առ 'ի բառնալ զբաբիլոն։ Եւ այսպէս անշուշտ հաստեալ եւ դեալ է իմ՝'ի մտի՝ թէ բարձրանալն այսոցիկ երեցունց մեծամեծ տէրուքեց՝ Պարսից, Մարաց և ասորեստանեայց, եղև յաւէտ 'ի ձեռն մերոց, որք ոգւով չափ անլուր քաջուքե ծառայեին օտար տէրուքեց՝ լինելով զինուորք և զօրապետ 'ի բանակս նոցա. բայց որոյ էր տէրուքե, նորա լիներ և անուն։ վասն որոյ և ոչ որ յիշէր թէ այս որ հայկազուն արար զայս ինչ և զայն քաջուքիւն։ Չյիշատակս այսոցիկ միայն 'ի ժամանակս կայսերաց Յունաց գտանեմք, և զայն զոյզն ինչ. Թէպէտ և ծառայուէն նոցա 'ի գրան կայսեր բազում էր, մանաւանդ 'ի պատերազմունս որ ընդդէմ Բաբղաղաց։

Բ. Բաբեկամուքե կամ պաշտպանուքե ընդ այլ ներփառս։

ԸՆԴ ՀՌՈՄԱՑԵՑԻՍ

Մեծ էր բարեկամուքե Թագաւորաց մերոց և մանաւանդ իմ և սերտ ընդ Հռոմայեցւոց յաւուրս անտի քրիստոնէուէ, քան զոր ընդ այլ տէրուես կալան։ Քանզի Տրդատ 'ի մանկուքե 'ի մէջ Հռոմայեցւոց գոլով մեծաւ, ապա 'ի ժամանակս լուսաւորուքեան երկոքին նորահաւատ Թագաւորք Տրդատ և Կոստանդիանոս՝ առանձին իմն մտերմուէն կալան ընդ միմեանս, գաղն եղեալ հանդիսաւորելոյ 'ի նոյն. որոյ գլխաւոր պատճառ եղև երեքին Տրդատայ 'ի Հռոմ, և անձամբ կենակցին երկոցունց Թագաւորաց։ Մանաւանդ զի Հնոր յայտ առնէ, թէ պատճառ գնալոյն Տրդատայ 'ի Հռոմ՝ եր զայս դնէին զաղաւ. "Ապա խորհուրդ 'ի մէջ առեալ (ասէ 'ի պատճէնն երկրորդ երես 40), գնալ 'ի դուռն կայսեր վասն դնելոյ դաշինս խաղաղուքե 'ի միջի իւրեանց"։ Կոստանդիանոս յետ ցուցանելոյ սեր սրբոյն Գրիգորի որ էր ընդ Տրդատայ, ասէ Ագաթանգեղոս յիշա. "Սոյնպէս և զբայլին Տրդատայ իբրև եղեօր սիրելոյ սեր ցուցեալ ուրախուքե

մեծաւ, առաւել վասն աստուածածնօրհնութեանն նորա, գալչեաս առեալ հաւէր ընդ նմա. միջնորդ կալեալ որ ի տէր Քրիստոսէր. զի անշուշտ միանձն ի բուն (կամաւարածն) զհաւատարիմ սէրն ի մէջ Թագաւորութեացն պահեցուսցէ, զի եւս քան զեւս արքայն Հայոց առաւել հաստատեր ,, : Եւ ի հաստատուն լինել այսր գրոյ դաշանց, ասէ Վարդան. "Եդիմն երկու արքայքն և երկու հայրապետքն Գրիգոր և Սահակ ետրոս գալչեա, կեալ և մեռանիլ ի միմեանց վերայ. զկիր ուխտին ասեն ի գրելն Թագին յահաւոր խորհուրդն ,, :

Յիշատակ այսր դաշանց անմոռաց ունայ ի Հայս. զի զհինն մնհաւան Տրդատայ իսկ և իսկ յուշ առնէ զայս Ժողովական Թուղթն եպիսկոպոսաց և նախարարաց մերոց առ Խոսրեւազն այն ձ. 5. " եպիսկոպոսապետ Վրթանէս և որք ընդ նովաւ եպիսկոպոսունքն և ամենայն նախարարքն Հայոց մեծաց, տեառն մերոյ Կոստանդեայ կայսեր ինքնակալի խրնդալ : Յուշ լիցի քեզ պայման ուխտի հօրն քո Կոստանդիանոսի, որ առ մերում Թագաւորին Տրդատայ ,, : Արդարև այսչափ համարձակուէք գրել զայս առ նոյն ինքն կայսրն ոչ կարէին, եթէ չունէին առ իւրեանս զինոյն Թուղթ դաշանց զաւանգն Հաստատուն: Զնոյն կրկնեն ի գրելն և Ժողովք նախարարաց առ Թէոդոս կայսր, զոր բերէ Եղիշէ 122. " Յումեմ եպիսկոպոս քաղում եպիսկոպոսակցօք խմովք, և ամենայն զօրք Հայոց, Վասակ մարզպան և Ներշապուհ ամբոսեան, Հանդերձ սպարապետաւս և ամենայն մեծաւ մեծ նախարարօքն առ մեծանունդ Թէոդոս կայսր ... ունիմք զանսուտ չեզոպակրանն զառաքինի նահանեացն ձերոց ... Նահինն մեր Տրդատիոս յիշելով զառաջինն սէրն ձեր, որ ի տղայուէ փախուցեալ ի հայրապային մարդ ախողխող հօրենաբարցն իւրոց, ապրեալ մնաց յերկիրդ Յունաց (Հռոմայեցւոց), և ի ձէնջ Թագաւորեալ տիրեր հայաստան աշխարհիս ,, : Աչխատի ստոյգ և հաւաստի լինել ասէ այսմ՝ մինչև զայն գիր ուխտին դաշնագրութեան գտեալ և ընթերցեալ Յունաց յայնժամ ի դրան կայսեր.

1 Զայս նշանագրել կամի և Կիրակոս յաւելէն. "Ոչ այնպէս և վեհն Տրդատ մեծաւարեալ որպէս վայելէր նոքա քաջալեալ, արեւմտեան Քրիստոսի և հաւատոյն որ ի նա՝ գալչեա կռնալ անբակ ունել զսէրն ի մէջ երկուց ազգ գաղթական նոցա ,, : Ա յս բան է որ յիշատակի և ի Թղթին Դաշանց: Իսկ զմանրնկնաւորութեի այսր դաշին նշանագրել կամի բան Ճառընտրի որ ի գովեստ Լուսաւորչին. "Դաշին գնէ ին, կամս գրէին, երդմունս անլուծանելի երդնուին ի վերայ միմեանց, ի կեալ և ի մեռանել ազգ յազգ մինչև յաւիտեան ,, :

"Իբրև յանդիման եղէն մեծի Թագաւորին (կայսեր Թէոդոսի), և ընթերցան զգիր պաղատանաց Հայոց աշխարհին, և դիմեաբաթանն նախնեացն՝ բազում մատեանք ի մէջ եկեալ ընթերցան, որ ցնորս ոչխո Հաստատուէն ի նեբբս գտանէին "[1]: Եւ արդարև մեք ևս գտանեմք առ մատենագիրս Հռոմայեցւոց ինչ ինչ յիշատակունս վասն այսորիկ մինչև ցայժմ ճոգեալս. զի Զոսիմոս գիրբ է. գլ. 27. յայտնի ցուցանէ Թէ Թագաւորն Հայոց ունէր բարեկամութիւն ընդ կայսեր: Յուլիանոս ի բանն ա. առ Կոստանդ, կոչէ զՀայս՝ հին նիզակակիցս Հռոմայեցւոց:

Թէ քանի մեծ էր յայնժամ սէր և մտերմութիւն հաւ մայեցւոց առ Թագաւորն Հայոց, ցուցանէ և այս բարեբարութիւն որ գտանի յիշատակել ի Նոմոսական վճիռսն Կոստանդիանոսի, ուր գիրբ ժա. 1. ասէ. "Բաց յառնունին իրաց մերոց, և ի կաթողիկէ եկեղեցեաց, և ի տանէ բարեյիշատակ Եւսեբիոսի, և Աբշակայ (արշակունւոյ) Հայոց աբբայի, այլ ոչ ոք ծածկեսցի ի մերոց հրամանաց գիաւոր սատարութիբբ ընտանեկան ընչից": Զբարերարութիւնս հռոմայեցւոց յիշէ և Սամուէլ ի Թումին յՀէ. ասելով. "Մեծին Թէոդոսի բազում բարեգործութիւն պատմի յիւրում ժամանակի յաւէտ առ Հայբ": Սոյնպէս և յետ կուրացուցանելոյ Պարսից զՏիրան պաբբայն Հայոց, իբրև նախաթարբբն դիմեցին առ կայսրն լինել ընդ ծառայութիբբ նորա, միայն Թէ օգնեսցէ նոցա, "Իբրև լուաւ, ասէ Բուզանդ Էջ. 21. կայսրն զիրսն զայնոսիկ, մեծաւ փութով և բազում պատրաստութիբբ ի խնդիր ելաև նբբ իրին հասելոյ. և օգնական և Թիկունբ լինէր աշխարհին Հայոց. մանաւանդ զի զուխան յիշեալ պբաշնէն կուռլոյ՝ զերդմանցն հաստատուէ, միջնորդութիբ ի մէջ կայսերն Կոստանդիանոսի և ի մէջ Թագաւորին Տրդատայ եղեալ էր "[2]:

Յայտ էր սէր Հռոմայեցւոց առ Հայս, մինչև մատնաւոր անուամբ պատուել զաշխարհ մեր. որպէս և յաւշ առնէ առ կայսրն նորին ժողով նախարարաց առ եղիշէ. Հռոմայեցիբբ, ասէն, առՀաստատակ ի ձեռն "ունելով զերբոպէ, անցին և տիրեցին ասիացւոց կողմանցն ... և յայնպէս մեծ իշխանուէ Դասպակերբ մեծ և սիրելի զՀայոց աշխարհս անուանէին "[3]: Նոյնպէս և Տրդատ Թագաւոր

[1] Զայս ոչխո յիշէ և Ջնորհալին. "Ի յոչխո Դաւթոյ միաբանեալ, Թագաւորացն երկուց եդեալ".

մեր ՝ի յիշելն ՝ի հրովարտակին իւրում զՅոյնս , յայս ա-
նուն կոչէ զՀայաստան՝ գրելով առ Ագաթանգեղոսի Ծա .
այսպէս . «Ամենայն Հայոց աշխարհիս իմաստուէն Ճուճայ
հասցէ Դասոպէնբիդ [1] կայսերաց ,, : Յայտ արարեալ թէ
Յոյնք այնպէս կոչէին յայնժամ զՀայաստան ։

Կորզուածք այսր դաշանց ուխտի եղև ՝ի ձեռն մեծին
Կերսէսի , որպէս յիշէ Բուզանդ գ . 5 . ասելով . «Եպս
վան խաղաղութիւն ուխտին միաբանութիւն դպրին , որ էր
աշխարհին Հայոց ընդ կայսերն Յունաց , դէպ եղև առա-
քել անդր (զմեծն Կերսէս) կազմութիւն մեծաւ արքային
Հայոց (Աբրշակայ) . . . զի երթիցէ ՝ի մէջ կայսերն (Վա-
ղէսի) և ՝ի մէջ իւրեանց զուխտն հաստուածէ և խաղա-
զութիւն Նորգնեցոցն ,, : Ջնոյն կրկնէ և Մեսրոպ ժգ . յաւել-
լով . «Զի հաստատեցոյն զդաշինն որ ընդ Հայք և ընդ Հո-
ռոմբ , զոր եդեալ էին մեծամեծք Թագաւորացն սրբոյն
կոստանդիանոսի և Տրդատայ , և լուսաւորչացն սրբոյն
Գրիգորի և սրբոյն Սեղբեստրոսի , զի անոխակալ կացցեն
ընդ միմեանս , և մի տեղ պայմանի ուխտին ,, : Վերստին
նորոգեալ ասէ Կիրակոս առ գ . Գրիգորիս կաթողիկո-
սիս , որ էր յաջորդ ։ . Բարսղի . «Իբրև եհաս , ասէ , նա
յերեսաւաղմ , զզոն Փռանկաց որ խնդրէին քաղաքին և
պատրիարգ նոցա՝ առաւել սէր Հաստատեցին ընդ ազգիս
մերոյ վասն նորա . զի էր նա բարի տեսլեամբ , և գիտող
սուրբ գրոց զարդարեալ . զհին դպրին սրբոյն Գրիգորի
և Տրդատայ , և կոստանդու կայսեր և Սեղբեստրոսի՝ վե-
րըստին նորոգեցին առ սովաւ ,, :

Ի՝ալ Թողեալ զհետեւեալ ժամանակաց անցս , վերջին
Թագաւորք Աբրշակունեաց , զոր օրինակ Աբրշակ , և յետ
նորա Պապ արքայ , որ ամենևին անմանն էր և զուրկ ՝ի
ձրից առաքինութենէ և կենցաղավարութենէ եղծեալ զայն
դաշն արքունի յետ մեռանելոյ մեծին Կերսէսի՝ ընդ Պար-
սից արար միաբանութիւն . «Ընդէ՞ս զվիտս իւր , ասէ Բու-
զանդ . 3 . Թագաւորն Պապ և խոտորեաց զսիրտ իւր
՝ի Թագաւորէն Ցունաց , և կամեցաւ խառնել զսէր իւր
և առնել միաբանութիւն ընդ Թագաւորին Պարսից . և ըս-

[1] Թուի սովին անուամբ Դասոպէնբ կոչեցեալ , սակս ազատ կացուցանել ըց ՝ի սկզբան անդ ՝ի սովորական տը ըց արքունի , երբ իւր երկիր կայսերական , կամ կայսեր սեփական . որպէս և են դաստակերաք իւրաքանչիւր տեարց սեփականք : Զայս ազատ լինելն ՝ի արոց աշխարհէս Հայոց գեղ առ Ժամանակ մի՝ մարթի է խնամոտութիւն և ՝ի վերադրեալ վճռոյ Կոստանդիանոսի որ ՝ի Թէոդոսեան մատենի :

կասե Թիկունս իւր առնել զաղբայն Պարսից, և արձակել անդրէն հրեշտակս յաղագս միաբանութե՛ն ... Ա՛յլ Մուշեղ և ամենայն իշխանքն շատ եդին ՚ի մտի ալքային (Պապայ), զի մի՛ քակեսցէ զուխտ յերկրէն Թագաւորութէն Յունաց. և ոչ անսաց նոցա, և յայտնեաց զթշնամուէ իւր զոր ունէր ընդ Թագաւորին Յունաց ,, ։

Ապա ասէ եանց ընդ Հռոմայեցիս ժամանակ արշաւելի Թագաւորաց յետ Տրդատայ, և ժամանակ իշխանացն պայազատելոց յետ բառնալոյ Թագաւորութե՛ Աշխարհացն։ Իսկ ՚ի ժամանակս Բագրատունեացն առաջինն Թագաւորք նոցա յոյժ սիրով եղեն ընդ կայսերս. զոր օրինակ գրե՛ Ցոհաննէս կաթողիկոս վասն ա՛. Աշոտոյ, և Վասլի պայազատելոց յետ բառնալոյ Թագաւորութե՛ն Յունաց Բարսեղ ոչ փոքր ինչ պայման խաղաղութե՛ և նուաճութե՛ և սիրոյ հաստատեր ընդ ալքային մերոյ Աշոտոյ. որդի սիրելի զնա անուանելով, և հաղորդակից կացուցանելով յաջնային Թագաւորութե՛ն ,, ։ Այսպէս և ա՛. Սմբատ ալքայ, զորմէ գրե՛ Ցոհաննէս կաթողիկոս, Թէ "ըստ հայրենի կարգացն ուխտի, ոչ զատեր զնա՛ ՚ի սիրընկեցաց մտերմութե՛ կայսերն Հռոմայեցւոց Լևոնի ... որդի սիրելի՛ կայսր զՄբմպատ իւր անուաներ սիրալիր դաշամբք ուխտից ,, ։ Զինչ պատմէ զսեր և զնախանձութե՛ կայսերն. "Թագաւորն Հռոմոց Լևոն ոչինչ սակաւ նախանձմամբ զաղբային Սմպատ, իբրև զորդի սիրելի անբակութե՛ ընդ նմա բերելով ուխտ միաբանական սիրոյ ... Իսկ և Սմպատ ... հաստուցաներ զդարձ փոխարինին տանուտպատիկ յաւելուածով իբրև վճռագունի քան զնա՛ և ՚ի մեծ պատուի առաւել քան մտերմութե՛ մեաց ՚ի մէջ ե՛. Աշոտոյ, և ՚ի մէջ կոստանդնի Պերփերուժէն կայսեր, որ հրաւիրեաց զԱշոտ գալ ՚ի Բիւզանդիա, որ և "երթայ ասպա, ասէ Ցոհաննէս կաթողիկոս, ՚ի հանդիպումն մեծի կայսերն, և անդ առ ՚ի նմանէն մեծապատիւ գահիւ պատուի առաւել քան զամենայն գահերեցս ընկալեալ զփառաց փարթամութե՛, ոչ իբրև զայլս ոմանս պատուաւորս, այլ իբրև զթագաւոր բազուն բողբոջ, գրե՛թէ ընդ իւրով իսկ կայսր զնա հարթայարմար կացուցաներ ,, ։ Եւ ՚ի դառնալն նորա՝ բազում պատուով և զօրօք յուղարկեր։

Օշնայն գտանեմք յիշատակեալ առ Մատթէոսի խե՛. և յաւելուածն ե՛. Աշոտոյ ողորմածին և Ազիզիկ կայսեր ՚ի խաղալն նորա յարևելս. նախ, ասէ, հրեշտակ կայսերն եկն ՚ի Հայս, և գնաց պատմեաց նմա, Թէ որպէս Հայք պատ-

բաստեալ էին զօրս առ յօգնութիւն նորա, ապա ասէ. "Գնացէք և յիշեցանացէք Հայոց զչնի հրեշտակացն Հոռոմոց՝ իմաստասէրն Աւետ, եւ ստատ իշխանին Թոռնեցի, և այլ եպիսկոպոսք և վարդապետք, և արարչին սէր և խաղաղութիւն ընդ Թագաւորին Հոռոմոց, և ընդ Աշոտ արքային Հայոց .... մնասուցանէին առաքի նորա զԹուղթն Վահանայ Հայոց կաթողիկոսին. և Թագաւորն առեալ ընկալաւ սիրով, և յոյժ մեծարեաց զԹուղթն և զբերօղն. և հաստատեաց ուխտ սիրոյ ընդ Հայք, և խնդրեաց զօրս յԱշոտայ. Որպէս սիրով եղէն առաքին Թագաւորք բազբատունիք ընդ Հռոմայեցիս, նոյնպէս առեալեալ եւ Թէնամուէ յաձախեաց ի վերջինն. որպ գլխաւոր պատճառ եղև մնասութիւն Անի քաղաքին, զոր Յոհաննէս Թագաւոր Հայոց իւրով ձեռագրով ետ կայսեր. և պատճառ այսմ եղև երկպառակուէ և հակառակուէ իշխանացն մերոց, զորմէ գրեալ եմք ի գլուխն Պատմուէ։

ԸՆԴ ՊԱՐՍԻԿՍ

Յառաջին ժամանակս սեր մեծ երևի լեալ ի մէջ մեր և Պարսից, անդստին ի սկզբանէ հիմնեալ միաբեռութեէ նոցա ի ձեռն Կիւրոսի, որուհ մտերիմ գաղնակից եղև աթքայն մեր մեծն Տիգրան, զոր յիշէ Խորենացին ա. 25. "Բայց էր նևւեթ այսպիսւոյ խոհականութեէ, (այսինքն՝ պատճառ այսպիսի երկիւղի և կասկածանաց Աժդահակայ էր) դաշնաւորուէ մրեբմանէ որ ի Կիւրոսէ առ Տիգրան,, : Ջնոյն կրկին և ի գլ. 26. "Ետր, ասէ (Մարիբաս,) յաւուրսն յայնս ոչ սակաւ ինչ վտանգ որ ի Մարացն Աշդահակայ, ի միաբանութեէ Կիւրոսի և Տիգրանայ ,, :

Յետ սիրելոյ Արշակայ պարթևի ի վերայ Պարսից՝ նոյն մտերմութիւն տեսանի սակս Համազգի գոլոյ երկոցունց Թագաւորացն՝ յազգէն Պարթևաց և ի զարմէն Պաշխաւկաց : Թէ քանի ընտանութեէ և զօրութեէ ունէին Թագաւորք մեր յարքունիս Պարսից՝ յայտ առնէ երեմեան Աբգարոս, և խաղաղացուցանէր զարքայորդիս Պարսից, յորժամ՝ ի խռովուէ էին ընդ միմեանս վասն Թագաւորելոյ. և զոր ինչ կարդ եդ Աբգար և օրէնս ի վերայ Թագաւորելոյ նոցա՝ մնադիւք անսային իբրև իւրեանց հօր ընտանեացն, և այնպէս խաղաղացան. զորմէ տես ի ցեղիս Կամսարական։

Ջնոյն զօրութեէ և ընտանութեէ յայտ առնէ և Թա-

գաւազ կացուցանէին մերոյն Ք. Աբրահամէ՛ի վերայ Պարսից. " Ձեռ մեռանիցէ, ասէ Խորհրդոցին Ք. 53. վերջինոյ Աբշակայ Թագաւորի Պարսից՝ Թագաւորեցուցանէ մեր Աբրահամ զհամանուն իւր զԱբրահամ որդի Նորին՛ի վերայ Պարսից աշխարհին ,, ։ Եւ յորժամ ոչ հնազանդեցան բնակիչք լերին Պատիժահար գաւազին Պարսից, նաև կասեցից երկրին, յայնժամ մեր Աբրահամ արքայ առաքեաց զՄխիթար ամենայն զօրաքն Հայոց, որ հնազանդեցուցին զամենեսին։ Ալ " մինչդեռ այսպէս յանդգնութեամբ կեանս ապահովանայր երկիրս Հայոց, ասէ Թոմա արծրունի ։ 13. և ոչ ուստեք գոյր վտանգ կրել, բայց ինքեանք այլոց հասուցանելին տագնապս որպէս ընձեռնուբեն, յեղակարծում ժամանակի հասանել համբաւ մահուան Արտաւանայ, և տիրել Պարսից ստահրացոյն Աբրահամ սաստանականի ,, ։ Որ արդարև մեծ վնաս հասոյց տերունեան մերում. զի մեծն խոսրով Թագաւոր մեր՛ի մոլ եղեալ զառաջին ցեղն պալհաւիկ զիւր համազգին անդրբէն՛ի գահն նստուցանել, ինքն խոսրով սպանաւ. և յայնմհետէ բարձաւ մտերմութիւն այն որ՛ի միջ երկուց տերութեացս, և փոխանակ այնր տիրեաց թշնամութիւն ։

Այլ Թէպէտ ընձեռնուաք առ Բուզանդայ Ք. 16. ։ Շապհոյ Պարսից արքայի որ եղև յաջորդ ։ Աբրահամի՛ առ ինքն կոչել զմեր Ք. Աբշակ արքայ, սեր մեծ ցուցանել, և բազում մեծարանօք պահել, և զտունն երկրորդական որ էր յԱրտպատական՝ Աբշակայ տալ՛ի պատիւ, ուխտ գաղանց կռել ընդ նմա, այլ "երկեաւ, ասէ, Թագաւորն Պարսից Շապուհ, եթէ գուցէ ստեսցէ սիրոյն նորա Աբշակ արքայ Հայոց, և լիցի միաբան ընդ կայսերն Յունաց, և կամ կողաքակ ինչ լիցի՛ի նմանէ. և ոչ հաւատայր նմա, թէ պահեսցէ առ նա զմտերմութիւն սիրոյն, և կացցէ յուխտին միաբանութեան ընդ նմա. վասն այսորիկ երդուաւն պահանջէր՛ի նմանէն, մինչև կարի ստիպեալ բռնագատեաց զնա. հաւանեաց, ասէ, և երդուբիր ինձ յօրինս քո, զի մի՛ ստեցցես ինձ ,, ։ Ապա պատմէ թէ ուրպէս՛ի Տիսբոնէ եւտուն բերել քահանայս և աւետարան. յորոյ վերայ երդուաւ Աբշակ հրապարակաւ, " զի մի՛ այլ և այ ստեսցէ նմա. այլ կացցէ յուխտի նորա, և պահեսցէ զդաշինս նորա ,, [1]։

1 Պարս էր յայնժամ և Աբշակայ չնեղչայ Պարսից զաշխարհս Հայոց պահանջել զերդումն՝ի Շապհոյ վասն և ոչ զնախապատս, վասն չհաւատալոյ

Ա. Այս սէր Շապհոյ առաւել և յաւելեալ՝ յորժամ զօրք մերոյն Աբրշահայ յառաջ քան զզօրսն Պարսից ՚ի վերայ յարձակեալ Յունաց՝ յաղթուէն մեծ գործեցին ՚ի կողմանէ Պարսից, զօրսն պատմէ Ռուզանդ Ք. 20. և ապա ասէ. "Տայր պատասխանի Շապուհ Թագաւորն Պարսից իւրոց իշխանացն, և ասէ... եկայք, անքակ սէր արասցուք մեք ընդ Աբրշահայ արքային Հայոց, զի մինչև յաւիտեան անբաժին լինի նա ՚ի մէնջ. Տացեմ զդուստր իմ ՚ի կնութիւն Աբրշահայ արքային Հայոց, և տաց նմա տուն մեծ. զի յորժամ գնասցէ ՚ի Հայոց գալ առ մեզ, այսպէս տացուք նմա տուն, զի ՚ի Հայոց մինչև ՚ի Տիզբոն մինչև առ մեզ՝ համակ լիուրեամ տան ագռի, մինչև առ մեզ եկեսցէ", Բայց անմիտ անձնասիրութիւն մուծին ՚ի մերոց իշխանացն որոց՝ և հնարիմաց նենգութիւն նորա՝ զայս մեծ սէր ոչ միայն ՚ի դերև եհան, այլ մշտնջենաւորն առեղծութիւն ետ բորբոքել. սա էր Աղգովվ Սիւնեաց նահապետ. որոյ ՚ի լսելն զայս՝ կարծիս ՚ի մոլ եդեալ, թէ յառնուլն Աբրշահայ ՚ի կնութիւն զդուստր Թագաւորին Պարսից, յայնժամ ունի արհամարհել իւր զուստրն Փառանձեմ որ լեալ էր կին Աբրշահայ, վասն այնորիկ ումեմն ՚ի նախարարաց Պարսից ետ գանձ բազում, ասել առ Աբրշակ չհաւատալ քաջնից Շապհոյ, իբր զի առ դաւելոյ և առ սպանանելոյ զքեզ խորհեալ ասէ զայս ամենայն. որումհաւատացեալ ամենայնիւ Աբրշակայ առանց ինչ քննելոյ յանկարծ Թողեալ զամենայն կարասիս իւր ՚ի բանակին, իւրովք նախարարօք փախստական լինի. "Եթէ ոչ դարձաւ, ասէ, այլ անդրէն յերկիրն Պարսից։ Այսպա յայն օրէ հետէ և անդր յաւելցաւ պատերազմ զրգռուէն մարտից Ձակատուց ՚ի մէջ Թագաւորին Հայոց Աբրշակայ, և ՚ի մէջ Թագաւորին Պարսից Շապհոյ առն աւելի քան զերեսունն", Տես վասն այսր և ՚ի գլուխն Կրօնի, ՚ի հալածման Պարսից։

ԸՆԴ ԱՂԱՆՍ

Դաւանադրուէ սոցա եղև յաւուրս Ք. Աբրահամի մերոյ. "Զխաղաղութիւն խնդրեր արքայն Աղանաց, ասէ Խորենացին Ք. 50. տալ Աբրահամի զինչ և ինդրեսցէ. և երթևեկս և դաշինս ասէր հաստատել մշտնջենաւորս, որ

քանէ ոմանց, մանաւանդ ուրացելոց այսմհետ խորհուրդք կենցաղագիտութենէ անձանց, որով յերկուց կողմանց լինի Թէ հեռի էին յայժ ՚ի մտաց վերջին նենգի կարեր լինել հաստատուն. բայց արշակունի Թագաւորաց։

սէս զի մի՛ եւս մանկունք Ալանաց ասպատակաւ հինից ելցեն յաշխարհն Հայոց ,, Ա յսմ հաւանեցաւ Արտաշէս առնուլ յիւր կնուն զդուստր արքային Ալանաց զՍաթի նիկ. "Եւ կոչեցեալ, ասէ, զդայեակն իւր Սմբատ , յայտնէ նմա զկամս սրտի իւրոյ , առնուլ զօրիորդն 'ի կնութեն իւր . և գաղտնի և ոչխոս հաստատել ընդ ազգի քաջացն ,, Վասն որոյ և յորժամ բռնաւոր ոմն կամէր թագաւորել անդ յԱլանս , առաքեաց Արտաշէս իբրև գաշնակից զՍմբատ զօրու ծանուս , որ վանեալ զբռնաւորն , կացոյց թագաւոր նոցա զերջայր Սաթինկանն ։

ԸՆԴ ՀՈՆՆ

Յաւուրս Վաղդամանց յիշատակի գաշնադրութե սոցա առ եղիշէէ 134. որք " գերապանս արձակէցին , ասէ , յաշխարհն Հոնաց , և 'ի բաղում՝ յայլ ազգս բարբարոսաց , որք հանապազորդք էին Հոնաց աշխարհին , բանս գնել ընդ նոսա , և ոչխոյ հաստատել՝ անդրակուքե ունել զմիաբանութիւն ,, Զխնդրելն Հայոց նեղելոց զգործադրութե այսր գաշնադրութե յիշէ եղիշէ 225. "Նաև որ յԱրձախայ մայրենի անկեալքն էին փախստականք , ոչինչ լռեալ դադարեցին խաղաղութե , այլ հանապազ յղեին յաշխարհն Հոնաց , շարժէին և յորդորէին զգունդն Հոնաց , և յիշեցուցանէին նոցա զոխտն զոր եգեալ էր ընդ Հայս , և անօսւտ երդմամբ հաստատեալ ,, ։

Նաև յաւալ քան զայս գաշնադրութե պատմագիրք մեր ցուցանեն կապակցութե ինչ լեալ , մանաւանդ թէ իշխողուն 'ի վերայ Հոնաց . զի Խորենացին է. 85. 'ի պատմութե զմեծ պատերազմն Տրդատայ ընդ Բասլաց , ասէ՝ թէ "Տրդատ անտի ըստ հայրենի օրինաց պատանդս առեալ դառնայ ,, ։ Որով յայտ առնէ թէ հին օրէնք էր Հայրենական պատանդս առնուլ 'ի հիւսիսական ազգաց , որք են սարմատացիք։ Բուզանդ ուրեք զՀոնս օգնականս Հայոց լինել ցուցանէ , յասելն է. 25. "Ապա առնոյր Վասակ (զօրավարն է. Արշակայ թագաւորին Հայոց) զգունդն Հայոց . և զՀոնսն հանդերձ Ալանօքն կոչել յօգնականութե ,, ։ Եւ քանզի Ալանք ըստ հին գաշնադրութե պարտական էին օգնել Հայոց , որպէս յիշեցաք 'ի վերոյ , մարթ է կարծել թէ նաև Հունք 'ի վաղուց պարտական էին օգնել Հայոց . 'ի բանից աստի Բուզանդայ զայս իմաստասիրեալ , որ միօրինակ խօսի վերկոցունց ։

ԸՆԴ ԵԳԵՐՍ

Այգաբաց ՚ի ժամնակս անդ առաջին աշխարհակալաց մերոց էին ընդ տեղեաւքն մերով , որպէս գրեալ եմք ՚ի գլուխն Պատմուձէ , և ունիմք գրել նաև ՚ի խօսեալն զնաղ տեաց . բայց յաւուրս Բագրատունեաց վասն առաջին Թագաւորին Աշոտոյ ընթեռնումք առ Յոհաննու կաթո ղիկոսի՝ միաբանութիւն արարեալ . " Ա՛յլ և զԹագաւորն և՛ս եգերացւոց ՚ի սէր դաբաձոյնքն ընդ իւր կապակցեալ , այն պէս նմա այցելէը , մինչ զի անբնդհատ յորդութեամբ սակի գոլով , մտերմաբար պարտաւճար միշտ նմա ՚ի ծառայուն բերեր ,, : Իսկ յաւուրս ն . Սմբատայ՝ կոստանդին Թագա ւոր եգերացւոց Թէպէտ նախ արար ինչ ընդդէմ նորա , այլ զինի սէր մեծ և հնազանդութեամբ մատուցաներ նմա , զորմէ գրեալ եմք ՚ի գլուխն Պատմութեան . որոյ և նուէն էր դաստր արքային եգերացւոց ըստ գրելոյ նորին վիպա գրի : Այս գաղն սիրոյ էր՝ զոր յիշելով է . Աշոտ որդին Սմբատայ , գնայ և օգնէ էառ ՚ի նմանէ . "Զուէ , ասէ նոյն վիպագիրը , առ Թագաւորն եգերացւոց , վստահս սրտին տուեալ , աներկեայ յաւուրց առեալ զնախնի սէրոյն գաղնս , զի Թերևս պատուոյ ախորժելիս նմա առ ՚ի նմանէն հնձէս ցի . իսկ Թագաւորն եգերացւոց բազմաբաշխ ձեռաց ձըբ ւիւք , և սիրալիր սրտիւք ընկալեալ՝ ամենայնիւ յամենայ նի յարակցեր նմա ՚ի բոլոր սրտէ և յանձնէ և ՚ի զօրուէ . և ապա զմեծն տուեալ նմա չօփնախանութիւն , և զօր բազում գումարեալ ,, :

ԸՆԴ ՎԻՐՍ

Կնդաստին ՚ի վաղ ժամնակաց գտանեմք գիշատակուն առ Խորենացւոյն է . ԱԱ . խնամութեն առնելոյ մերոց ընդ Վիրս , առաջնոյ Աբրահամն մերոց տալով գդուստր իւր զԱբրաշամայ ՚ի կնուն Մ ի հրդատայ , որ էր բդեշխ Վրաց . իսկ յաւուրս Թագաւորութեն Բագրատունեաց՝ զուիտ խաղաղութեն պահելոյ առաջնոյն մերոյն Սմբատայ ընդ կիւրապաղատին Վրաց Աշոտեսայ՝ ի պատմեալ գտանեմք առ Յոհաննու կաթողիկոսի . նա զի՝ ըստ նորին գրելոյ՝ ինքն Աշոտեսայ պահէը ընդ Սմբատայ . իսկ սա փոխարէն Թագաւոր գնա կացուցանէը , և երկրորդ եւրոյ տերութեան չէ նոյն վիպագիրը և գնամանալն ընդ Վիրս , զՈւրդին գինչանն Վրաց կոչելով աներ Աբասայ եղբօր է . Աշո-

տոյ։ Ա՛յլ և ըստ Աղուանից միշտ ընդ ձեռամբ մերոյ Թագաւորին լեալ յայտ առնեն պատմագիրք մեր. յորոց և զօրս ժողովէին երբ և կամէին։

ԸՆԴ ԱՓԽԱԶՍ

Ա՛մն այսր գտանի յիշատակուն ինչ յարձանագրի մալաշէն եկեղեցւոյ, որ դեռ երևի առ ափն կարուց գետոյ, գրեալ. "Ընորհիւն Աստուծոյ ես Մարիամ Աբխազաց և Հայոց Թագուհի, դուստր մեծին Սենեքերիմայ, Թոռն Գագկայ Հայոց աքսայի,,։ Յորմէ անկ է խնամատարել զընտանուն նաև զագգակցուն մերոց ընդ նոսա։

Օ մեր իմ ընտանութենէ մերոյն ընդ Աղուանից՝ տես անդ, ուր առանձին խօսելոց եմք զնոցանէ արտաքոյ մատենիս։

ՅՕԴՈՒԱԾ Գ

Կառավարութիւն Էլխանական։

Յետ բառնալոյ Թագաւորութեան Աբրակունեաց ի սկիզբն հինգերորդ դարուն՝ իշխանք սկսան կառավարել զաշխարհ մեր եգեալք ի կողմանէ Պարսից, և միայն սահման ոմանք ի կողմանէ Յունաց, մինչև ցյաւսնել տէրութեան արաբացւոց ի սկիզբն եօթներորդ դարու. յայնմհետէ իշխանք ի վերայ աշխարհիս երբեմն ի Յունաց և երբեմն ի Պարսից կարգեալ լինէին։ Ի կարգելոյն ի կողմանէ Պարսից մեծաւ մասամբ ի նոցունց անտի էին. Թէպէտ և ի Հայոց ոչ սակաւք։ Իսկ ի կարգելոյն ի կողմանէ արաբացւոց՝ սակաւք ի մերոց, և բազումք յարաբացւոց, մինչև ի ՃԲ՚ն հինգերորդ դարու եգին Թագաւոր Հայոց, որ այն հինգն է Թագաւորութիւն Բագրատունեաց. բայց և յայնմհետէ միշտ գլխաւոր ոմն յարաբացւոց անտի առաքեալ լինէր յամիրապետէն ի Հայաստան։ Առաքեալ և կարգեալ իշխանքն ի կողմանէ Պարսից, Յունաց և արաբացւոց՝ իւրաքանչիւր իւրեանց անուամբք անուանէին. որպէս և մեր հայկազունքն հայկական անուամբք։

Ի՛րդ ոմն կարգի կամիմք խօսել զկառավարուե աշխարհիս մերոյ, նմին իրի զայս ժամանակ կոչեցաք Կառավարութիւն էլխանական, ուրոյն յօդուածով կարգեալ աս-

տանուր, յորում խօսեցոյց եմք զայլ և այլ անուանց իշխա-
նաց զորս ետուն մերքն և Յոյնք և արաբացիք, յիշատա-
կել նաև զայլ իշխանական անուանս՝ զորս ետուն Յոյնք
ոմանց ՚ի մերոց պատուոյ աղագաւ։

Ա. Իշխանի պետութիւն Հայոց ոստանին և Հայկազանից։

ԻՇԽԱՆ

Ի վերջանալ անդ Թագաւորուն Աբրահունեաց՝ սովին
անուամբ կոչեն պատմագիրքք մեր զիշխաւորն՝ զոր կա-
յուցանէին լինել գլուխ ազգին, որպէս է սեպհական առ
Ասողկայ Ք. 2. յատկին. "Ներսէհ կամմարական եհաց
Իշխան ամն չորս ,, ։ Գործ սորա էր վերակացու լինել Հայ-
աստան աշխարհիս, և ժողովել Հարկս. բայց առ զանա-
զանուն միւս հաւասարակ իշխանաց՝ սահեպ է ՚ի գիրս գործա-
ծուելն ընդ յարակցեալ անուանցս Իշխան Հայոց, կամ
Իշխան աշխարհին. "Իսկ զկնի Դաւեթի սահառուսոյ, ասէ
անդէն, եհաց Իշխան Հայոց Թէոդորոս ուռշտունի ամն
քսան և հինգ ,, ։ եւ Թէ. "Գրեալ ՚ի Հայս հրովարտակ ...
և առ մեծն Թէոդորոս Ռուշտունեաց տէր, որ էր Իշխան
աշխարհին, և զօրավար զօրացն ,, ։ եւ դարձեալ. "Իսկ
վաղձանեալ Համազասպայ՝ Հայոց Ներսէս (Համոզիկոս
աշտարակեցի) նահարարքէն Հանդերձ յամիրապետէն
Ս՚երիգոր մամիկոնեան զեղբայր Համազասպայ, որ ՚ի պա-
տանդի իսկ էր առ նմա, կացուցանել Իշխան Հայոց ... ՚ի
Տէր. Թուին Աշոտ բագրատունի Հայոց էշխան եղև ամն
երիս ... ՚ի Տէս. Թուին Սմբատ բագրատունի բիւրա-
տեաւ Հայոց էշխան եղև ամն քսան ... Իսկ զկնի Սմբա-
տայ եհաց Իշխան Հայոց Աշոտ բագրատունի ,, [1]։

1 Որպէս վերջին արշակունի Թա-
գաւորք, նոյնպէս և այս իշխանք լի-
նէին Տրամաքատ կամ կայսեր և կամ
Պարսից. "Իսկ ապա, ասէ Յոհաննէս
կաթողիկոս, վասն զի հաստած է-
զնալ և եկեալ էր ՚ի Յունաց աստեան
և արտաքինոց, ապա մեծ Հայրապետն
Ներսէս (որ է Ներսէս Ք.) ինդրէ
Հաշտեցեալն նմա ՚ի կայսերէ, և տայ
առնել զնա կուրապաղատ և Տրամա-
նաւար Հայաստանեայցս ..... ապա
Ներսէս զորդի նորա զԱմբատ ՚ի պա-
տիւ Հօրն ինդրէ կացուցանել. և Հայ-
ոչ ևս զԻշխանորոս Ռուշտունեաց տէր
՚ի զօրավարութենէն Հաստատել ,, ։ Ըստ
այսմ զՄժեխ Հերակլ կայսր կաթ-
ղեաց զօրավար. յետ նորա Դաւեթ
սահառունի Տրամաքատ նորին Հերակ-
լեայ լինի իշխան, որպէս գրեալ արդեն.
Եւ զԱմբատ որդի Վարազտիրոցի Տրա-
մաքատ Կոստանդեայ կայսերէ ետ կու-
րապաղատ կացուցանել ՚ի. Ներսէս
կաթողիկոս, որպէս ասէ նոյն վկայա-
գիր։

ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ

Ի՛բ զանազանութեի՛ միւս իշխանաց առաւել յարմարագոյն անուամբ Իշխանաց էշխան կոչեցին զառաջնոյդ ազգին, որ է ասել իշխողնա՛ի վերայ այլոց իշխանաց. "Սա (ասէ Ասողիկ ՟ք. 2. վասն Ամիր Մուհնի Ահմատայ ՟ի չժա.) կացուցանէ Իշխանաց էշխան զԱշոտ որդի Սմբատայ, որ եւ կոչ իշխանաց իշխան ամն քսան և հինգ, մինչև յիջ. Թուա. կանն, և ապա Թագաւորեաց ". Զորմէ գրելով Կիրակոս, զոյն անուն և ինքն տայ. "Իսկ զկնի խոստովանողին Սմբատայ առնու զիշխանութեի՛ն Աշոտ որդի նորա. սա ամենայն նախնեաց վեհագոյն գտաւ. վն զկնի սպարապետութեի՛ն Իշխանաց էշխան եղև. և ապա Թագաւորեաց յերկուց Թագաւորաց լիսմայելէին և յունականէն ". Բայց Ասողիկ ՟ք. 43. այլ պատուանուն ևս տայ իշխանաց իշխանին յասելն. "Եւ ամենայն իշխանք և ազատք Տայոց էին ընդդէմ նոցա, և պարտեալ ՟ի նոցանէ մեռաւ մեծ Իշխանաց էշխանն, որում Պապիկարէն [1] կոչէր ".

Այլ յաղագս անուանս այսորիկ գիտելի է նախ, զի անուն Իշխանաց էշխան սահմանեալ յետ վերջնականի Թագաւորութեան Աբշահունեաց, Թէպէտ սեպհականեալ էր այնմ միայն որ գլուխ էր ազգին և աշխարհին, բայց գտանեմք յիշատակեալ նաև յորժամ ազգն Թագաւորս ունէր, այսինքն է՝ յորժամ պայազատէին բազպատանի Թագաւորք. զի ասէ Յովհաննէս կաթողիկոս յաւուրս ՟ա. Սմբատայ. "Վախճան կրեր ՟ի կենացս այսոցիկ և միւս եւ եղբայրն արքայի Դաւիթ, որ եր Իշխան էշխանաց Հայոց, այր հաւատա, և հարթ հաւատարուե՛ի բոլոր գործառնուի բարեաց ". Ապա ստորև գրէ՝ Թէ Յուսուի ոստիկան զերեց որդին Սմբատայ արքայի զԱշոտ " կացուցանէ Իշխանաց էշխանաց Հայոց ", եւ Ասողիկ վասն ՟ք. Սմբատայ ասէ Հաշտեալ ընդ եղբօր իւրում Գագկայ, և կարգեալ զնա Իշխանաց էշխան։ Սոյնպէս և ՟ի ՟ք. 40. յաւուրս Գագկայ Թագաւորին յիշէ զմին ասելով. "Եւ կալաւաւոր առնէն զբաւ կուբեան Իշխանաց էշխան ". եւ ՟ի ՟ք. 41. "Եւ Գագկայ (Թագաւորին Հայոց որ յԱնի) յամենայն զօրացն Հայոց հաւատալ գունդս վեց հազար յընտիր ընտիր վաւելչյն, գումարել ՟ի ձեռն Իշխանաց էշխանին Վահրամայ որդւոյ Գրի-

[1] Վրիպակ Թուի գրչաց, փոխանակ գրելոյ Պապիկ։

գորոյ և Սմբատայ մեժիստռոսի որդւոյ Վահրամայ և մարզպանին Աշոտոյ պահլաւունոյ ,,։

Այս ամենայն յայտ առնէ Թէ յաւուրս բագրատունի Թագաւորաց իշխանաց իշխան կոչիւր այն՝ որ յաւուրս արշակունի Թագաւորաց կոչիւր Երկրորդ արքայի . և որպէս Երկրորդն արքայի զմիւն կոչել սկսաւ Մարդպետ , Հայրիշխան [1] , որք էն անուանք յիշատակելք ի վերջին աւուրս Աբշահունեաց , նոյնն ասպ յաւուրս Բագրատունեաց կոչել սկսաւ իշխանաց իշխան . որ և յիւրս տեսչութէ աշխարհ էի էր Երկրորդ արքայի . զի քան զայս առաւել յարմար բագոյն չունիմ ասել յաղագս Իշխանաց իշխան կոչելոյ ի ժամանակին՝ յորժամ նստէր Թագաւոր Հայոց . և զի նմա անկ էր զՀարկս ժողովել , որպէս և յայտ առնէ Յոհաննէս կաթողիկոս ։ Զայս անուն ոչ միայն առ Թագաւորս մեր՝ այլ նաև առ Թագաւորս Վրաց ի կիր առեալ ցուցանէ Ասողիկ ։ գ . 41 . ուրանօր լետ յիշելոյ զԴուրգին Վրաց Թագաւոր՝ յիշէ անդ և զիշխանաց իշխանն Վրաց ։

Երկրորդ՝ զի պատմագիրքդ զայս անուն տան նաև այլոց իշխանաց . զոր օրինակ Ստեփաննոս օրպելեան տայ Սիւնեաց իշխանին , զորմէ գրեցաք ի նախաբարութէ Սիւնեաց , տես անդ ։ Ասողիկ ։ գ . 13 . տայ վասպուրականեաց , յորժամ գոյր անդ և Թագաւոր . իսկ Լիպէի Թագաւորէր ։ Սմբատ . “Որոց ընդդէմ երթեալ ասէ , Իշխանաց իշխանն Վասպուրականի ամենայն զօրօքն , որում Ապլնասրիսին կռչիւր , հրամմնաւ Աշոտոյ Թագաւորի Վասպուրականի , Հանդերձ Գրիգորիս իշխանաւ և Տիգրանաւ մարզպանաւ,, եւ ի գ . 15 . “ Եւ կիւռապաղատին Դաւթի գումարեալ զզօրսն Վրաց , և զիշխանաց իշխանն զՁոջիկ տայ զմիւն Թոռնըզկայ պատերազմիլ ընդ Վարդայ բռնակալին ,, ։ Սոյնպէս և Վարդան յաւուրս Բաբաղի կաթողիկոսի , զՎասիլ կոչէ Իշխանաց իշխան , որ է Գող Վասիլն ։ Եւ Մատթէոս Ա՛ղթ . ի Թուին չխԹ . ասէ . “Զայսմ ժամանակիս էր զօրապետն Հոռոմոց Իշխանաց իշխանն ի քաղաքն Մարաշ ,, ։ Զոր նախ զօրապետ կոչէ , ապա իշխանաց իշխան , և այն ի կողմանէ Հոռոմոց . զանուն սորա ստորև գնէ լինել Թաղաւոլ ։ Եւ Վարդան . “ի չՀ . Թուին Իշխանաց իշխանն արքայաշունքն Զաքարէն գառն չարաբարոք կղզորեցաւ մահուն Քրիստոսի ,, ։ Եւ շարունակօղն Թոմայի արծրունեայ յաւուրս Սենեքերիմայ արքայի Վասպուրականի յիշատակէ յասելն վասն

1 Տես վան այր՝ ի նախաբարութէիս Մարդպետական և Ագաղռնուն ։

նահատակեալ Աբգէմնէին արձրուսնոյ. « Ածեալ իւր ամենեին զգուստը Դրիգորի արևելեան դուռն, և զթոռն մեծաչուք և սիրելական Իշխանին Աղուանից, որ էր տէր և իշխեցող գաւառացն Ծաղկոտան և Կոգովտի և մեծի աւանին Ամգեղանն »։

Լրբորդ՝ ի բանից Թոմայի արձրուսնոյ գ. 13 յայտ է, թէ յորժամ գերեալ իշխանքն ի Բուղայէ արձակեցան յաշխարհն իւրեանց յաւուրս ։ Զաքարիայ կաթողիկոսի, յայնժամ որ իշխան էր իշխանաց՝ տիրէր նաև ի վերայ Վրաց և Աղուանից. «Բայց քանզի, ասէ, հաւատացեալ էր վերակացուածէն աշխարհիս Հայոց Աշոտի, որ (էր) Իշխանաց իշխան, ձեռն ի գործ արկեալ նուաճէր զիշխանս Հայոց, զՎրաց և զԱղուանից, որ եղև իսկ »։ Սա է որ զչին թագաւորեալ կոչեցաւ Աշոտ ։ որոյ արգարև զօրաւոր գոլով, նաև այլ կինսպաղաչէտ՝ սիրելի ամենեցուն, յառաջ քան զթագաւորելն յորժամ էր իշխանաց իշխան՝ կարող եղև իշխել և ի վերայ Վրաց և Աղուանից. բայց զայս չէ մարթի ասել զամենեցուն՝ որ լինէին իշխանաց իշխան։

ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Որ իշխան իշխանաց կոչիւր ի ժամանակի գադարման թագաւորութէն Աբշակունեաց՝ սակս իշխելոյ նաև ի վերայ այլոց իշխանաց, նոյնն այլով նշանակութէ սակս հրամայող գոլոյ ի վերայ ամենեցուն՝ կոչէր Հրամանատար. վասն որոյ Յովհաննէս կաթողիկոս վերկոսին անուանս եւս ի կիր առնու ի վերայ մի և նոյն անձին. «Եւ վասն զի, ասէ, ի ժամանակին բագարատ բագրատունի Հրամանատարապ և իշխան իշխանացս Հայոց գտանէր »։ Եւ զոր Ասողկ ։ 2. վասն մամիկոնեան Դրիգորի գրէ՝ իշխան Հայոց կացուցեալ, որպէս եգաք ի վերոյ, գնոյն Յովհաննէս կաթողիկոս կոչէ Հրամանատարապ. «Իակ նորա (Մաւեայ ամիրապետի) լուրջ երեսաք զնիդիրոն կատարեալ՝ տայ Դրիգորի զիշխանական պատիւն, և առնէ զնա Հրամանատարապ Հայոց »։

Պատմագիրք՝ որպէս իշխանին, նոյնպէս և հրամանատարին ընծայէն զպատուն Հարկահանութէն. «Յաւուրս սորա (ասէ Յովհաննէս կաթողիկոս, այսինքն Յովհաննու մանգասունոյ) պայազատեր գՀայաստանեայս Վահան մամիկոնեան որպէս Համայեկի, եղբօրորդի սրբոյն Վարդանայ,

որ ... ժողովեալ զՀարկ աշխարհին՝ չինէ այնուիկ զեկե-
ղեցիս աւերեալս ի Թէհնաւեաց ,, : Որով յայտ առնի Թէ
էր Հարկ ուրոյն կարգեալ վասն իւր , և ոչ վասն Պարսից .
զի յայնմ ժամանակի Վահան չէ եւս էր կարգեալ մարզ-
պան ի դրանէն Պարսից , և ոչ իսկ կարէր յայն գործ ծա-
խել զժողովեալ Հարկս վասն Պարսից :

ՀՒՆԱՐԱՊԵՏ

Ընդունս այս և ի ժամանակս արշակունի Թագաւորաց
կայր , զոր յիշեցաք ի կարգս նեղբէին նախարարաց . իսկ
յետ վերջանալոյ Թագաւորութեն՝ որք հրամանատար և
իշխանաց իշխան լինէին աշխարհիս Հայոց ի կողմանէ
Պարսից , քանզի իբրև հազարապետ էին նոցա կամ գոր-
ծակալ , զայս անուն տան նոցա պատմագիրքք , որ չէ իրօք
այլ իշխանութեի ի նախագրելոցն : Ըստ այսմ Խորենացին
ճ . 67 . ասէ վասն Վահանայ . "Բայց յաղթեաց քաջն
Վահան ամատունի , զի էր զօրաւոր հաւատովք և ձո-
խուճէ մարմնաւորաւ . վասն զի ի ժամանակին յայնմիկ ի
նա էր հաւատացեալ Պարսից աշխարհ և Հայոց
աշխարհիս ,, :

Ըստ այսմանկ է լսմնալ և զոր գրէ Կորիւն վասն նո-
րին Վահանայ , Թէ Մեսրոպ ի մերձենալ վախճանի իւ-
րոյ օրհնեաց՝ որպէս զաշակերտսն իւր՝ նոյնպէս և զիշ-
խանս . "ի գինուորական կողմանին՝ առաջնումն Վահան ա-
նուն յազգէն ամատունեաց , որ էր հազարապետ Հայոց մե-
ծաց ,, : Ասյսպէս և Ասողիկ ճ . 2 . զոր նախ հազարապետ
կոչէ՝ ապա մարզպան անուանէ . "խոսրով արքայն Պար-
սից զՍուրէն ոմն ազգական իւր՝ որում անուն էր Ճիհոյը
Վշտասպ , հանէ ի հազարապետութէն Հայոց ... ընդ որ զայ-
լացեալ Վարդանայ թագչիսն ... սուսերահար առնէ զՍու-
րէն մարզպան ,, : Որպէս և զիշխանութէին Դաւթի կոչէ
անդէն հազարապետութէն . "Իսկ յետ սուսերահարն լի-
նելոյ Սուրէնայ՝ ոչ ևս պարսիկ մարզպան առաքէ ի Հայս
Թագաւորն Պարսից , այլ ի ինքզոյ նախարարացն իշխանս
հաստատէ Հայոց զԴաւիթ սահառունի , որ կալաւ զհա-
զարապետութէն Հայոց ամն երեսուն ,, :

Բ. Իշխան պէսոէ՛ի կողմանէ Պարսից։

ՄԱՐԶՊԱՆ

Ի քարքառ Պարսից նշանակի Կողմնապահ. յայս անուն կոչէին Պարսիկք զիշխանն զոր առաքէին յաշխարհ մեր երբեմն ընդ ազգաւ պարսիկ, և երբեմն Հայկազուն։ Եւ որ լինէր մարզպան՝ գլուխ լինէր ամենայն իշխանաց, և՛ ի նա յանձնեալ լինէր վերակացուԹիւն համօրէն աշխարհիս. "Եւ արքայն Պարսից (Յազկերտ, ասէ Կիրակոս,) զվարդան Մարզպէտ (որ է կողմնապահ) արարեալ Հայոց, տայ զաշխարհս ի ձեռս նորա,, Վասն որոյ մնգպահն առ Եղիշէի 104. ի խօսելն ընդ Վասակայ՝ ասէ. "Աւդ դու որ Մարզպանդ ես աշխարհիս՝ պարտ է քեզ հոգ յանձին ունել, գրել և ցուցանել յարքունիս զվիաբանուԹիւն բռնուԹեաց... քանզի ամենայն նախարարացն աւագ դու էիր, և զբոլոր աշխարհս քեզ յանձն արարեալ էր ՄարզպանուԹիւն,, Եւ առ Ղազարայ 145. Յազկերտ ասէ առ նոյն Վասակ Սիւնեաց տէր, որ եղև մարզպան. "Քանզի դու էիր իշխան և գլուխ աշխարհին Հայոց,, Վասն որոյ մնոյն անձն զոր մին կոչէ իշխան, միւսն կոչէ Մարզպան. զոր օրինակ առ Ասողկայ ՟բ. 2. գրի. "Ապա եկաց Իշխան Հայոց Մէժէժ գնունի,, Իսկ առ Վարդանայ. "Մարզպան Հայոց Մէժէժ գնունի, որ կալաւ զիշխանուԹիւնն ամն երեսուն և մի,, Նոյնպէս առ Ասողկայ ՟բ. 2. ԴաւիԹի սահառուն նի կոչի Իշխան և Հաղարապետ. զորոյ չիշեցաք ի վերոյ։ Իսկ առ Կիրակոսի. "ԴաւիԹի սահառունի Մարզպան Հայոց Թէոդորոսոյ ռշտունի ամն քսան և եօԹն,, Իսկ առ Կիրակոսի. "Ձետ ԴաւիԹի սահառունոյ Մարզպան Հայոց Թէոդորոսոյ ռշտունի ամն քսան և հինգ,, Դարձեալ այլուր. "Եւ նեբսէհ շիրակացի եկաց Իշխան ամն երիս,, Ապա գրէ. "Իսկ գնաց պանաէ Հայոց յետ նեբսէհի առնու Աշտատ ամն երիս,,

Ա այս մարզպանուԹիւն յառաջին Թագաւորաց Հայոց և մինչեւ անդ՝ ի Տրդատայ ասէ կարգեալ Թումա արծրունի ՟բ. 6. յասելն՝ Թէ ա. Սմբատ ետ Գուրգենի եղբօր Գագկայ արծրունւոյ "զպատիւ ՏարղպանուԹեան գահակալուԹէ, հաւատացեալ ըստ կարգի բարձրաբերձուԹէ Թագաւորացն Հայոց, մինչեւմեռնիցին Տրդատայ,, Եւ յիւր

զայս առ առաւելն պարտ է իմանալ վասն գործոյ Հազա-
բապետուհւոյ՝ ի վերայ աշխարհին՝ զոր ունէր մարզպանն՝ .
որ և գոյր առ նախն Թագաւորօք մերովք, բայց այլով օրի-
նակաւ և անուամբ . բայց անունս Մարզպան անուր է առ
Ագաթանգեղոսի և Խորենացւոյ . զի որպէս յայտնի գրէ
Ղազար 45 . յետ՝ ի բաց արկանելոյ զԱրտաշէս վերջին
Թագաւոր Աբրշակունեաց՝ առաքեցաւ մարզպան՝ ի Պարս-
սից . «Յայմմէհետէ առաքեցաւ , ասէ , Նախ՝ ի Վռամայ որ
քայէն Պարսից յաշխարհս Հայոց Մարզպան պարսիկ . և
յայմմէհետէ եղեն խսպառ խսպուռ անկեալք ընդ լծով
ծառայութեանէ անօրէն ազգին Պարսից» ։

Ա. յս մարզպանք , որպէս ասացաք՝ ի վերոյ , երբեմն՝ ի
Պարսից լինէին և երբեմն՝ ի հայկազանց . այլ Անդրեկան
մարզպան պարսիկ՝ որ զվեր Վահան մամիկոնեան կամէր
մարզպան կացուցանել , յորդորէ զՂազարայ Թագաւոր Պար-
սից առ Ղազարայ 309 . 310 . ՝ի հայկազանց կացուցանել
մարզպան սովին պատճառաբար՝ նախ, ասէ, օտարազգի մարզ-
պան զիրս աշխարհին Հայոց ոչ կարէ ձանաչել՝ ի սուղ
ժամանակի : երկրորդ՝ « Մարզպանն պարսիկ որ երթայ
յաշխարհն (Հայոց), հնաւ երթայ և որդւովք , գրաւք և
սիրելովք , ծառայիւք և աղախնեաւք . և այնք ամենեքեան
թէ Արեաց տեառն զառձիկ ուտեն՝ չէ սակաւ ծախսն , և
թէ զաշխարհին (Հայոց) ուտեն , շատ վտանգ հասանել
աշխարհին մարդկան . իսկ նա (Վահան՝ Հայկազուն) թէ
լինի՝ զիւր տանն համբար ուտէ , և ամենայն յարքունի
գանձ համարի , և արքունի իրաց օգուտ լինի » ։

Յետ միանգամայնէս սկսանելոյ մարզպանուէն՝ ի կող-
մանէ Պարսից՝ այնուհետև նոյն անուն և պատիւ՝ ի մերս
հանապազորդեալ եմք . զի տեսանեմք մարզպան կար-
գեալ նաև յորժամ սկսաւ Թագաւորութիւն Բագրատու-
նեաց , և յորժամ արաքացւոց ոստիկանք իշխեցին աշխար-
հիս Հայոց . և միշտ՝ ի մերոց հայկազանց : Զի որպէս
գրէ Յովհաննէս կաթողիկոս ՝ա . Սմբատ արքայ բագրա-
տունի զԿուրգէն զեղբայր Գագկայ իշխանին վասպու-
րականի մարզպան կացոյց : եւ Ասողիկ ՝ք . 13 . յաւուրս
ք . Սմբատայ արքային բագրատունւոյ՝ ի յիշեցէն զվաս-

1 Տեսյն գործ լինել յայտ առնել Առ-
ձիկ ՝ք . 2 . Հազարապետի և մարզպա-
նի՝ ուրանօր մի և նոյն անձին Սու-
րենայ ասյ վերկոսին և անուանես ա-
սելով. «Եւ ասյա խոսրով արքայ Պար-
սից զՍուրէն ոմն ազգական իւր՝ որում
անուն էր Ճիճր վշնասպ՝ հանե՛ ի
Հազարապետ-ի Հայոց , որ եկեալ կա-
լցալ վերկիրս մեր... զՍուրէն Մարզ-
պան յերկիր կործանէր ,, ։

պուրականեայս՝ յիշէ և զմարզպան ասելով. « Հրամմաւ Աշոտոյ Թագաւորի վասպուրականի Հանգերձ Դրիգորիւ իշխանաւ, և Տիգրանաւ Մարզպանաւ ,, : Նոյնպէս և Մատթէոս ՚ի. յիշէ ՚ի Թուին նմին. յորում ժամանակի Թագաւորեր ՚ի. Դագիկ բագրատունի. « Յայսմ ամի, ասէ, եղև վախճան Սահակայ Մարզպանին՝ Վարաժնունեաց տեառն ,, : Յաւուրս նորին ՚ի. Դագկայ եղբօր ՚ի. Սմբատայ զայլ ոմն մարզպան յիշէ նաև Ասողիկ ՚ի. 30. « Յայնժամ Մարզպանն Դեմետր որ էր իշխան ՚ի Դագ բերդի ՚ի սահմանս սըն յայնոսիկ ,, : Խակ առ Կիրակոսի նաև յերեքտասանեակ. ըոդ դարու յիշատակեալ գտանեմք մարզպան. յորում ժամանակի ՚ի վաղուց վերջացեալ Թագաւորութիւն Բագրատունեաց ՚ի. Հետևումառաքինեան Թագաւորեր ՚ի կիւ լիկիա. « Զայս (ասէ, սովորութիւն Թագաւորաց) պատմեաց մեզ Դրիգոր իշխանն որդի Մարզպանին, եղբայր Աբելան պետին Սարգսի և ամիրային՝ յաղագ մանկտեղին ,, :

Վաղճ և պաշտօն մարզպանին էր լինել վերակացու և հաղարապետ աշխարհիս, մանաւանդ ժողովել զհարկս, որպէս յայտ է և ՚ի բանից աստի Թոմայի արծրունւոյ յասելն ՚ի. 11. վասն նախագրեալ Դուրգենայ, Թէ բազըոք անօրիներ, « յօժարաբար դեգերել զմարզպանութիւնն արդիւնաւորել անուանակոչութիւնն, զոր խոյակասին Տրդատ կարգադրեալ վայելչապէս հոգաբարձուք զպատերազմանն հարկանել հարկս ընդդէմ հինից արշաւանաց ,, : Բայց որպէս յայտ է ՚ի բանից մերոց պատմագրաց՝ ոչ սոսկ զպատերազմանն միայն ընդդէմ հինից Թշնամեաց ժողովէր մարզպանն, որպէս աստ գրէ, այլ զամենայն հարկս որոշեալս վասն դրան աթոռոյն ժողովել առաքէր :

Ընդ Թէպէտ մարզպանին էր ունել միանգամայն զմարզպանութիւն և զվերակացութիւն կամ զհազարապետութիւն աշխարհիս, բայց գտանեմք երբեմն նաև առ այլ և այլ անձինս բաժանեալ, որպէս առ Ղազարայ 206. « Եւ ե՛կեալք ՚ի գաւառն Ըիրակայ ՚ի դաշան՝ ուր բնակեր Մարզպանն Հայոց Աթրվշնասպ յոգմանդեան, և առ նմին Հազարապետն Հայոց Վեհ Վեհնամ ,, : Ըրպէս և հակառակ այսմ, մարզպանութիւն և սպարապետութիւն որք յայլ և այլ անձինս էին բաժանեալ, յանձն Վահանայ մամիկոնեայ միացան. Զբաժանեալ լինելն յայտ առնէ այս բան Ղազարայ 211. « Ազգ եղև առ տէրն Բագրատունեաց Սահակ, զոր Հայք և զօրավարն Հայոց Վահան ՚ի ժամանակին յայնմ մարզպան կարգէին Հայոց : Ապետն Սահակ զմարզպանութիւն, և

Վահան զտերութիւն մամիկոնէից, և պապաթագէոսենէան Հայոց, որք նախ հաստատուէս ի վերնոյն հրամանէ և ապա ի Հայոց ընկալան զգործակալուէին»։ Իսկ զմիանալն յայտ առնեն այն բանք նորա՝ յորս զերկոսին ևս անուանս ստէպ տայ Վահանայ. որպէս և ի Թղթ. 11. «Տէրն մամիկոնէից Զօրավէրն Հայոց և Մարզպանն»։

Գ. Իշխանք պետութէ ի խղմանէ Աբաբայոց։

ՈՍՏԻԿԱՆ

Յորժամ սիրել սկսան արաբացիքը, ամիրապետ նոցա առաքէր զոմն իշխել ի վերայ արտաքին սահմանաց, և նա կացուցանէր զոմն ի վերայ Հայոց աշխարհիս. «Եւ սիրեաց, ասէ Ասողիկ էջ. 4. փոխանակ Մրուանայ Աբդլայ (ամիրապետ). և առաքէ զերզայր իւր զմիւս Աբդլայ շրջել ընդ ամենայն աշխարհս իւրոյ իշխանուէն առնուլ հարկս... (սա) Թողոյր հրամանատար Հայոց զԵզիտ որդի Ուսադայի. և Եզիտ կացուցանէր իշխան Հայոց զՍահակ որդի Բագարատայ բագրատունեայ, այր գեղեցիկ տեսլեամբ, և ծանօթ երկիւղին Աստուծոյ»։ Այս առաքեալ հրամանատարքն առ պատմագիրս մեր կոչին Ոսթիկան, որ է վերակացու։ Առաջին ոստիկանն եկեալ ի Հայս՝ եղև Աբդլայ յիշատակեալ յԱսողկայ էջ. 2. «Եւ եկեալ Ոսթիկան ի Հայս Աբդլայ անուն՝ կալաւ զիշխանութիւնս Հայոց և խաղացոյց ի Դամասկոս»։

Տէղի մեծի ոստիկանին՝ ընդ որով էին միւս փոքր ոստիկանք՝ էր Աստրպատական, որպէս ցուցանէ Յոհաննէս կաթողիկոս յասելն վասն Ափշին ոստիկանին. «Կակ և իակ ապա Թագ արքայութէ նմա (ա. Սմբատայ) բերեալ մատուցանի յիշխանէ անտի յիսմայէլեանն Ափշէկ որ յԱստրպատականի ի հրամանէ ամիրապետին իւրեանց»։ Ընդ նստեր նաև Վեհդատ որդի Ափշին, նոյնպես և Յուսուփ ոստիկան. «Եւ ապա յուղարկեալ Յուսուփ յարքայէ (Սմբատայ) գնայ ի կողմանս Աստրպատականի»։ Ընդ նստեալ իշխեր ոչ միայն ի վերայ Հայոց, այլ նաև ի վերայ այլոց շրջակայ ազգաց. որպէս ցուցանէ այս բան նորին մատենագրի. «Ջոստիկանն Պարսից, Հայոց և Վրաց և Աղուանից զՅուսուփ, զոր ինքն իսկ եր կալեալ և աճեալ ամիրապետին, Հայցեր արձակել ի պաշարմանէ

բանտին և ՚ի կապարանէն, և ՚ի նոյն յաջորդին գահ նա-
հապետութեանն հաստատել ,, :

Պատիւ և իշխանութեան մեծի ոստիկանին՝ էր պատիւ
կուսակալի . "Ասաքէ զնա (ամիրապետն, ասէ Յովհաննէս
կաթողիկոս) զումարտակիւ զինու յաջորդին գահ կուսա-
կալութեանն իւրոյ ,, : Որում անկ էր առաքել և չայլ տեղիս
փոքր ոստիկանս . "Եւ վասն զի ինքն (Յուսուփ , ասէ նոյն
պատմաբան) ՚ի մեծ քաղաքն դէմ եգեալ էր երթալ
Ռա՝ որ ՚ի Պարս անդ է , առաքէ զոմն նոր անուն Ոաթկան
՚ի Հայս , որ Սբուքն ՚ի բազմաց յորջորջիւր , և ինքն կայ
մնայ անդէն , մինչև Ոաթկանս և պետս և գործակալս յար-
դարեալ կացուցանէ ՚ի կողմանս Աղուանից և Ատրպատա-
կանի ,, :

Գործ ոստիկանին և պաշտօն՝ էր նման մարզպանի , վե-
րակացու լինել աշխարհիս Հայոց և ժողովել զհարկս
իբր գործակալ ՚ի կողմանէ ամիրապետին , կամ ՚ի կողմա-
նէ ոստիկանին Ատրպատականի . վասն որոյ և գործակա-
լութեանն կոչէ զայն Յովհաննէս կաթողիկոս : Տեղի նորա էր
Դուինն , որ մայրաքաղաք էր ՚ի ժամանակս առաջնի բագ-
րատունի Թագաւորաց . և երբեմն և նա Նախճաւան , որպէս
յայտ է և ՚ի բանից աստի նորին պատմագրի . " Իակ որ
յայնժամ իմայելեան ոստիկանն էր յայնմ (Աղձնեաց)
նահանգի Սուլիման անուն ... յետ այսորիկ ապա եհաս
Ոաթկանն այն պայազատել և զգործակալութեն հայաստա-
նեայցս. և ՚ի գալ նորա ՚ի Դոխն քաղաք.. ,, : Եւ այս գլխա-
ւոր գործակալ ոստիկան աշխարհիս Հայոց՝ կացուցանէր
նաև այլ զանազան ոստիկանս յայլ և այլ գաւառս Հայոց .
յայտ է այս ՚ի բանից նորին մատենագրի . "Զայսսու ժա-
մանակաւ եղիտ ումն Ոաթկան ՚ի Հայս յամիրապետէն առա-
քեալ լինէր . որ իբրև եհաս ՚ի Նախճաւան քաղաք , ապա
կուսակալս և գործակալս (իմն ոստիկանս) ըստ գաւառաց
գաւառաց առաքէր . և վասն զի ընդ նոքօք նուաճեալ
էր գաւառն Բագրեւանայ՝ ընդ այն ապա զմի ՚ի պատուա-
ւորաց իւրոց Ոաթկան առաքէ ,, : Սոքա ընդ հրամա-
նաւ մեծի ոստիկանին Հայոց գոլով, որ նստէր ՚ի Դուինն ,
ոչ կարէին գործ ինչ մեծ առնել առանց կարգանելոյ . որ-
պէս և այն ոստիկանն Բագրեւանայ իբրև կամէր սպանա-
նել զկրօնաւորսն, եհարց և այսպէս ասաց . "Հրամանն ըն-
դունի յոստիկանէն (Նախճաւանայ) առանց հարց և փոքճ
առնի կոտորել զսուրբ արսն ,, :

ԱՄԻՐԱՑ

Կնոն արաբացի, որ նշանակէ հրամանատար կամ իշխան։ Յաւուրս տէրութեանն արաբացւոց՝ գլխաւոր նոցա, որ նստեր ի Բաբիլոն կամ ի Դամասկոս, առ պատմագիրս մեր կոչի Ամիրապետ. իսկ հրամանատարք արաբական սահմանաց ընդ նովաւ եղելոց՝ զորս ինքն առաքէր, կոչին Ամիրայք, որպէս և տեսանել առ Ասողկայ ։ 2. "Ի սորա ժամանակին Մամունին Ամրայ եկն ի Հայս ... Խալիպ նման Հայոց Ամրայ եկն ,, ։ եւ ի ։ 4. "Ահմատ որ զԱլի որ գին Յահէի՝ Հայոց Ամրայ առաքեաց ,, ։ Ա յլ սորա ըստ գոր ծոյ իշխանութե ոչ զանազանին յոստիկանին՝ զորմէ գրեցաք ի վերոյ. զի որպէս վասն գլխաւոր ոստիկանին ասեն նըստել յԱթոռապատական, զնոյն և վասն գլխաւոր ամիրային ասեն. զոր օրինակ զԱպուհայայ զորդի Ռոլադայ կոչէ Ասողիկ ։ 18. Ամիրայ Ատրպատականի՝ սակս անդ նստելոյն, որ և իբր գլխաւոր հնդրեաց զՀարկս աշխարհին ի ։ Սմբատայ նաև զանցեալ ամացն։ եւ որպէս զԱխշին և զՅուսուփ կոչէն ոստիկանս Ատրպատականի, նոյնպէս կոչէն Ամիրայս Ատրպատականի. "Յայնմ ժամանակի, ասէ Ասողիկ ։ 4. մեռանի Ախշին. և փոխանակ նորա եկաց Ամրայ Պարսից և Ատրպատականի Յուսուփ եղբայրն նոր բին ,, ։

Իբրև որպէս ոստիկանին Ատրպատականի առաքէր զայլ ոստիկանս վասն Հայոց աշխարհիս, նոյնպէս և ամիրայն Ատրպատականի. վասն որոյ առ Ասողկայ ։ 12. և 14. յիշատակին զանազան տեղեաց ամիրայք. որք են Ամիրայք Գողթան, Խլաթայ և Նփրկերտոյ. և ի 19. Ամրայն Աղձ հառնեաց. ի 30. Ամրայն Տփղեաց և Գառնւոյ. ի 38. Ամբայն Աղահոռնեաց և Նբրկերտոյ հատ անուն։ Նմանապես Ամիրայ առաւել առ Ասողկայ տեսանի ի կիր արկեալ փոխանակ ոստիկանի, որպէս յայտ եղև ի նախագրելոցս. բայց ի ։ 35. նաև զամիրապետն այսպէս կոչէ յատկեն. "Յայսմ ժամանակի Ամրայն Եգիպտացւոց որ ի Բաբելովն ,, ։ Իսկ կիրառ կաս զայս անուն տայ նաև քրիստոնէի, սպասալարի Թագմանրայ Թագուհւոյն Վրաց, ասելով. "Իսկ Ամր սպասալարն Զաքարէ Տրամեն ետ ,, ։

Դ. Իշխան պետութ'ի Կողմանէ Յոռնաց։

ԿՈՒՐԱՊԱՂԱՏ

Ինչուն և պաշտօն՝ ածանցեալ 'ի բարբառոյ Հռոմայեցւոց, առ որս 'ի հնուին կոչէր Քոռոա Բալատին', որ է Տոգ պալատան։ Այս անուն 'ի գիրս Յունաց սուղ ինչ այլայլուած կոչի Քոռոօբալատիս։ Զայս անուն կոչէին մնա՝ որ ունէր զՏոգ պալատան կամ արքունեաց, որպէս յայտ է 'ի բանից Եւագրեայ և Թէոփիլակտեայ Սիմոքագդայ. և առ մատենագիրս մեր կոչի Հազարապետ տան արքայի [2]։ Ա՛յլ յաւուրս Կոդինոսի 'ի հնգետասաներորդ դարու բարձեալ և խափանեալ գոլով անգէտ լինել ասէ զինքն պաշտօնի կուրապաղատին։

Բայց կուրապաղատին պատիւ մեծ էր. որոյ ոսկի գաւազան 'ի ձեռին կրելով առաջին էր որ գնայր առ արքայիւ. մեծ էր և իշխանուի նորա, վասն որոյ և եղեալք կայսեր երբեմն առնուին զայն անուն. և Յուստինոս կրտսերն կուրապաղատ յորնորիչէր նախ քան զլինելն կայսր 'ի 565։ Ա՛յլ Թուով առաւելուին կուրապաղատք ոչ սակաւք. յորմէ յայտ է Թէ հնոյհիին կայսերք զայս անուն նաև հեռաւոր բաց ոմանց առ 'ի պատիւ՝ որոց չէր ինչ գործ ինամ տանելոյ պալատան կայսեր [3]։ Որպէս և մերոց իշխանաց իսկ՝ յորժամ 'ի նոցանէ կարգեալ լինէին։ Վասն Սմբատայ բագրատունւոյ, որ յետ յաղթուելոյ 'ի կռիւն Վարդանակերտի՝ բազում ընծայս և տաճիկ ձիս յաւարէ ազարացւոց ետ տանել առ կայսրն, ասէ Վ. Ուռհայ գլ. ղ. "Եւ կայսրն ընկալեալ զայն նուէրն ... տայր բերել նմա պատիւ կոնքապաղատ ոտ՚ի ըստ օրինի Թագաւորաց. և նորա ընկալեալ զպատիւն

1 Որպէս դնէ Մէուբսիոս 'ի բառարանի յունական անուանց, նաև Զասարիկիոս 'ի բառարանի անուանց Կեդրենոսի։ Նոյն ինքն Մէուբսիոս 'ի բառն Կուրապաղատ 'ի Թղթ. 486. Լէք. գրե, Թէ որ առ Յոյնս կուրապաղատ կոչէր, առ գաղղիացիս Հազարապետ տան (Maître d'hôtel) ասացաւ, ապա Անէնեփանոս։

2 Նոյն գործ էր և մերոց իշխանացն Մարդպէտ և Հայրբէլան անուանեցոյց։ Տես 'ի նախաբանութիւն Ագաթանգ. և Մարգպետականի։

3 Ոմանք յաղագս Հայոց գտանին յիշատակեալ 'ի գիրս 'ի գործ սպասաւորութ պալատան կայսեր, առանց ունելոյ զանունս Կուրապաղատ. որպէս էր Սմբատ յիշատակեալ 'ի ՟ե. Թուղթ Մանուէլի կայսեր առ Գրիգոր կաթողիկոս. "Թագատրութիւն մեր առաքեաց առ ձերդ պատուական Նահապետ Վաղասար պալատանս Ըզ-Սմբատ ,,։ Որ յայտ է Թէ յայլ ինչ սպասաւորութիւն պալատանն էր կալեալ, և ոչ 'ի կուրապաղատութիւն։

'ի կայսերէն՝ առնոյր զզօրս իւր, և երթայր յաշխարհն Տայոց ։ Սոյնպէս և Յովհաննէս կաթողիկոս վասն Վարագ. սիրոցի. «Որ ապա վասն զի հատուած եղեալ և եկեալ էր 'ի Յունաց ասպետին Վաչագանէրոց առ մեծ Հայրապետն ներսէս, խնդրել հաշտուն նմա 'ի կայսերէ, և տայ առնել զնա Կոստաղաւա և հրամանատար Հայաստանեայցս ։ Ըստ այսմ գրէ և վասն Համազասպայ. «Եւ մեծին Ներսիսի (շնորհէ) խնդրեալ յարքայէ (՚ի Կոստանդինի կայսերէ) առնել Կոստաղաւա զՀամազասպ և հրամանատար Հայաստանեայցս ։ Ապա ասէ. «Բայց Համազասպայ չետ երից ամաց առնոյր զպատիւ Կոստաղաւաստանէնն ... վախճանեալ գնի ընդ հարս իւր ։ Զոյն Համազասպ զոր աստ սա Կոստաղաւատ անուանէ, Ասողիկ է. 2. տոկ Հրահմանատար կոչէ ։

Ա այս անուն նաև այլոց տուեալ տեսանեմք առ պատմագիրս մեր, յորս երևելին եղև Կոստաղաւանն Տայոց Դաւիթ, որպէս կոչէ և Ասողիկ է. 11. յաւուրս է. Աշտոյ, և է. Սմբատայ. իսկ չետ մահուան Դաւթի զպատիւ Կոստաղաւատուէ Վասիլ կայսեր ետ Աբիսաղաց Թագաւորին Բագրատայ, զորմէ գրէ Ասողիկ է. 43. և Լաստիվերտացի ա։ Յովհաննէս կաթողիկոս զայս անուն տայ նաև գլխաւորին Վրաց, «Մեծ Կոստաղաւան Վրաց Աղբերներսէս», կոչելով Վաղգան 'ի խօսելն զԱրշակայէ՝ չետ Մեհլիք չահին յիշէ զոմն Թորոս Կոստաղատ, զոր Մատթէոս նախ քաղաքապետ Ուրհայու անուանէ զնոյն Թորոս, ապա միշտ Կոստաղատ կոչէ ։ Իսկ առ Թոմայէ արծրունեաց է. 1. յիշատակեալ գտանեմք, «Աշոտ Կոստաղատ Հայոց իշխան» այլ 'ի միւս Աշոտոյ՝որ իշխան էր իշխանաց 'ի նմին ժամանակի, և զինի եղև առաջին Թագաւոր Բագրատունեաց, որում և առաւել անկ էր տալ զայս պատուոյ անուն. վասն որոյ և համարիմք ինքնօրէն ըստ կամի տուեալ զայս անուն. զի այլոցր կոչէ զնա և Կոստաղատ Տարօնոյ ։ Որպէս և ըստ կամի գրեալ համարիմք 'ի Մատթէոսէ 'ի ՃՃԷ. յաւէն. «Հայսմաւմի (չնե.) զօրաժողով արարՎրիգոր Կոստաղատան յարևելեայսդեղայր տեառն Բարաղի Հայոց կաթողիկոսի», իսկ զոր Վարդան զայս անուն տայ իշխանաց կարգելոց յարաքացւոց, ասելով «Աբձակէ Հեչմ զՄրվան զորդի Մահմատի 'ի Հայս, որ եկեալ կացոյց զԱշոտ բագրատունի Կոստաղատ և կամ Պատրիկ ասել», պարտ է իմանալ իբր մեհենաթէն. կամելով ասել՝ Թե կացոյց իշխան կամ հրամանատար,

իբր կուրապաղատ, կամ Թէ ասել իբրև պատրիկ։ Ջի ընդդէմ համարիմ տալ արաքացւոց գյուռնական անուանս իշխանութեան՝ որոց չէր օրէն 'ի կիր առնուլ յունական անուանս։ Որպէս և անդէպ համարիմ տալն Մատթէոսի Ձձ։ Պարսից զայս անուն ասէլով. «Յայսմ ամի (չնէ.) գայր բազում զօրք սպասալար Արկիարօխին Պարսից սուլտանին՝ որ ասի Կուրապաղատ, գայր խաղայր ահա, գին բազմութիւ յարուցանել պատերազմ ընդ զօրսն Ֆռանկաց»։

Ի կուրապաղատս պատուաւորագոյն պարտ է համարել զոր յիշատակէ շարունակօղ Թոմային արծրունւոյ՝ կոչելով Պոռռ՝ կուրապաղատ. որ է ասել՝ Առաջին կուրապաղատ։ Այսպէս անուանի Աբդլմնեհ ոմն, տոհմակից արքային Սենեքերիմայ, ազգաւ արծրունի, 'ի գաւառն Աղիով, տեսուչ և վերակացու կարգեալ ամրոցաց Վասպուրականի. և քանզի Սենեքերիմ յայնմ ժամանակի յանձնեալ էր զԱսպուրական զիւր աշխարհ 'ի ձեռս Յունաց, 'ի կողմանէ Յունաց էր սա կարգեալ, և վասն այնորիկ յունական անուամբ յորջորջեալ։

ՊԱՏՐԻԿ [2]

Ընդունս այս ոչ միայն 'ի կարգս պատուոյ անուանց գասեցաւ՝ որպէս էր առ նախնիսն հռոմայեցիս, այլ և յիշխանութիւն և 'ի նախաարարութիւն, որպէս անուն կուսակալի կամ գաւառապետի, սկզբնաւորեալ 'ի մեծէն Կոստանդիանոսէ. որպէս գրէ Նիկիփորոս Գրիգորաս։ Զայս ա նուն տան պատմագիրք մեր ոմանց 'ի հրամանատարաց՝ որ իշխէին յետ վերջանալոյ արշաւունի թագաւորացդ. զոր օրինակ Վահունդ գլ. ջ. «Խակ ապա յետ մահուան Գրիգորի յաջորդէ զիշխանութին Աշոտ Պաղրէկ, այր երևելի և նախամեծար 'ի մէջ նախարարացն Հայոց, 'ի տոհմէ բագրատունեաց, Հոռ և պերճ յիշխանութե»։ Սոփին անուամբ կոչէ և Ասողիկ ՟ճ. 2. զՎարդ. «Խակ Վահան (իշխան յաւուրս Գրիգորի տափորի կաթողիկոսի) բարւոք վճարեալ Թոզու փոխանակ իւր զեղբայր իւր զՎարդ Պաղրէկն ամն չորս»։ Եւ յայս անուն Ասողիկ 'ի կիր առնու և վասն իշխանին որ 'ի կողմանէ Տաճկաց կարգեալ եղև. «Յայնժամ՝ ասէ, իշխանն

1 Ընթերցիր Բ-ժդ։

2 Որ է ըստ Յունաց Բատրիկիոս, և ըստ հռոմայեցւոց Բատրէնիոս։

Խմայէլի Հեչմ առաքէ ՚ի վերայ աղգիս Հայոց զՄրեան որպէս Մահմէտի. սա զԱշոտ որպէս Վասակայ բագատուե-նի Պաորէկ կացուցանէ ՚ի վերայ ազգիս Հայոց ,, : Ասյս Աշոտ է՝ զոր Վարդան ոչ միայն պատրիկ, այլ նաև կուբա-պատատ կոչեաց, որպես յիշեցաք ՚ի վերոյ: Նովին անուամբ յիշէ Ասողիկ և զայլս , որք Թէպէտ եւ Հայկազունք , բայց ոչ գլխաւոր Տրամնատաբք ՚ի վերայ Հայոց աշխար-հիս , այլ ՚ի ծառայութեն կայսեր Յունաց. ըստ այսմ է. 37. ՚ի գրելն վասն զօրաց ամիրային եգիպտացւոց ասէ. "Ձերբակալ արարեալ տանէին ընդ այլսն զՂորտուանէլ Պաորէին, եղբօրորդի Թոռնկայ աբեղայի ,, : Զի զայս ա-նուն կայսերք Յունաց և այլոց բազմաց տային ՚ի պատիւ. որպէս յաւուրս Վասլի կայսեր յելս տասներորդ գարուն Պատրիկ կոչեցաւ և զօրավարն Տայոց :

Այլ առաւել պատուաւոր անուն էր Պատրիկաց պատ-րիկ կոչել. որպէս կոչեցաւ Ակդովիկ իշխանին Սիւնեաց ըստ գրելոյ Ստեփաննոսի օրպելեան (Թ. "Ակացանէ յաշխարհն Հոռոմոց առ մեծ ինքնակալն Թէոդոս արքայն Յունաց, և ՚ի նմանէ պատիւ մեծագոյն գտեալ, այսինքն Պաորիկաց պաորէկ արարեալ զԱկդովիկ, վախճանի անդէն յաշխարհին Հոռոմոց ,, . որ է իբր ասել՝ իշխանաց իշխան :

ՄԱԳԻՍՏՐՈՍ

Ինչունս այս ծագեալ է ՚ի հռոմայեցի բառէս Մաճիս-դէս. բայց այլ էր մագիստրոս զօրաց, զորմէ տես ՚ի գլ-նաւորութ, և այլ մագիստրոս սպասաւարկութ ՚ի կառա-վարութ. որոց պատիւ նաև իշխանութն մեծ էր ՚ի պալա-տան կայսեր. ըստ որում էին ներքինի դահճապետ խորհրդ-գակիցք արքային . վասն որոյ ասէ Կասիոդորոս . "Մե-ծաշուք պատիւ ընդունի, որ առնու զանուն մագիստրոսի,, : Զառաջինն էր մի միայն , ապա բազումք կոչեցան , մինչև չորեքտասանք. բայց աւագութն նոցա միշտ մեծապատիւ էր, մինչև ՚ի դասս պատրկաց դասիլնոցա. իսկ յետ ժամանա-կաց ՚ի վերջն զպատրիկս, որպէս յայտ է ՚ի բանից Կեդ-րենոսի . վասն որոյ և աղգականաց կայսեր դէպ լինէր սովին անուամբ փառաւորիլ :

Հայս պատիւ և ոմանք ՚ի մերոց ՚ի տասներորդ դարու և զկնի ամարձան, յորոց ոմանք յիշատակին ՚ի գիրս. որ-պէս առ Ասողկայ է. 33. յասելն վասն կայսեր Վասլի. "Երթեալ պաշարէ զքաղաքն Վեռիայ և առնու զնա . և

«Մ՝ածխապահն զԴրիգոր զորդի իշխանին Տարօնոյ՝ զօրքն Թողու անդէն ընդդէմ Բուլղարին »։ Ի 34. գրէ. «Կոչէ զՀանն պատրիկ, որ սպան զՀորտուանէնն. և զնա Մ՝ածխապահ արարեալ առաքի՝ի Մ՝ակեդոնն ընդդէմ Բուլղարին»։ Սոքա երկոքին մագիստրոսք յայտ ե Թէ էին՝ի զինուորական դասէ։ Եւ՝ի 40. գրէ. «Յայմ՝ փախստի մեռաւ Մ՝ածխապահն Բագարատ որդի Թոռնիկայ աբեղայի»։ Կիրակոս և Վարդան յիշէն զՄ՝ծեատ մագիստրոս, որ զԲագրեւանդ վանս շինեաց՝ի ՆԽԹ։ Ասէ զամենեսեան հռչակաւոր և ականաւոր գտաւ՝ի մէջ Դրիգոր մագիստրոսին՝ի մետասաներորդ դարու, զորմէ Ընորհալին՝ի վէպն իւր.

«Յորմէ Դրիգոր որդի Ծընեալը
Որ Մ՝ածխապոս վերապատուեալ.
Աստուածային չնորհօք լըցեալ,
Խնամատուէ պայծառացեալ.
Հօրըն մերոյ նա հայր եղեալ,
Ըստ մայրականն միջնորդեալ.
Ի յաղքայէն Յունաց պատուեալ,
Եւ նահանգաց յոգունց տիրեալ»։

Ասէ զայս պատիւ ետ Վասիլ կայսրն նաև ամիրային Նիւիկէտայ, որ քաւէորդին էր Բասիլ. որպէս գրէ Ասողկայ ՟ճ. 43. «Եւ արքունատուր ընծայիւք պատուեալ զնա, տայ նմա զՄ՝ածխապահութէ պատիւն»[1]։

Այլ Թէպէտ մեծ էր պատիւ մագիստրոսութէ, որպէս ասացաք, այլ ստորին էր քան զպատիւ կիւրապաղատուէ. որպէս յայտ առնէ և այս բան Ասողկայ ՟ճ. 44. ուր պատմէ Թէ նախագրեալ Վասիլ կայսրն ետ Բագարատայ Թագաւորին Աբխազաց զպատիւ կիւրապաղատուէ, և Հօրեղբօրդեայ Թագաւորին Վրաց զպատիւ մագիստրոսուէ. «Իակ Գուրգէն Թագաւոր Վրաց, ասէ, անարգանս իւր համարեալ զՄ՝ածխապահութէ պատիւն՝ զոր ետ նմա արքայ Վասիլ... նշկահեաց զնա»։

ԴՈՒԽՍ ԿԱՄ ՏՈՒԿ

Ի գիրս մեր այսպէս գրի. բայց քանզի բառ լատին է սա՝ գրի առ նոսա Տ՝ոփս, որ նշանակէ Ա՝ատչեորդ. իսկա-

1 Ինձ Թուի ոչ միայն երկոքին, զորպէս եգաք՝ի վերոյ, այլ և ամենայն պատիւ մագիստրոսուէ, զոր ետուն կայսերք մերոց և այլոց արեւելեայց, էին՝ի զինուորական կարգի։

նալով սուրբ զառաջնորդս պատերազմի, որ է զօրապլուխ. զոր Յոյնք ՚ի վերջին ժամանակս կոչեցին Տուփաս, այլ նորա պահելով զնշանակումն : Սկզբնաւորուն անուանս եղև յաւուրս Պրօբոսի կայսեր Հռոմայ ՚ի 276. յորում ժամանակի զզօրավարս գնդից սուրբ անուամբ սկսան կոչել, իսկ զինի և զգաւառապետս, որոց ՚ի վերեւորդ դարուն յանձն եղև կառավարել ոչ միայն զգաւառս, այլ և զկոմսս քաղաքաց : Յաւուրս Մեծին Կոստանդիանոսի սկզբնաւորեցաւ կոչիլ անունս Մեծ դուքս, զոր ետ նա ինքն կայսրն իշխանին Ատտիկոյ Ժառանգուքն ըստ գրելոյ Գրիգորայ յԵօթնեերորդ գիրս. բայց ապա խափանեալ լոկ Դուքս կոչեցաւ : Յօթեերորդ դարուն առ գաղղիացիս Դուքս անուն եղև Ժառանգուքն, և ՚ի զանազան կողմանս Եւրոպիոյ այլ և այլ իշխանուք կոչեցան Դուքքս, բայց առ Յոյնս եկաց միայն անուն գառաջապետուեւ, և անուն զօրավարուեւ ՚ի Ծովամարտի :

Ի վերջին դարս կայսերուեւ ՚ի մեծոց, որպէս եր Գրիգոր մագիստրոսն. քանզի այսպէս կոչի ՚ի մակագրի ուրեք. " Գրիգորի մագիստրոսի գերապանծ իշխանի պալՀաւուսնոյ Հայոց... պատասխանի Թղթոյն կաԹողիկոսին Ասողուց, ՚ի ժամանակին յորժամ եր Դուքս ՚ի Վասպուրական և ՚ի Տարօն ,, : Յայս անուն կոչէ զնա և Վարդան. " Զվահրամ որդի Գրիգորի մագիստրոսի և Տուէի ,, ձեռնադրեցին ասէ, որ կոչեցաւ Գրիգորիս : Զայս պատիւ գքսուեւ ուներ և Հայրն Գրիգորի մագիստրոսի, որպէս և նա ինքն վկայէ ՚ի յիշատակարանի իւրում. " Ի չորս հարիւր և ինսուն և չորս թուականուես Հայոց, լինելով իմ Գրիգորի մագիստրոսի՝ որդի Վասակայ աստուածապահ կիտճսի և Դուէի և պալՀաւունւոյ, եղեալ իմ յաստուածապահ քաղաքին ՚ի Կոստանդնուպոլիս, ՚ի ժամանակս բարեպաշտ և քրիստոսասպասակեալ արքային Կոստանդեայ Մոնոմախին ,, : Նաև արտաքոյ հայաստանեայց զայս պատիւ գքսուեւ ետուն ումանց ՚ի մեծոց հայկազանց. " Ի չին. Թուին, ասէ Վարդան, սպանին Հոռոմք զՎասակ իշխանն, զեղբայր կաԹողիկոսին Վահրամայ, որ եր Տուէ Անտիոքու ՚ի նմին քաղաքի ,, :

ԿՈՄՍ

Նոյնպէս ի հեռակայս բառիս ֆծֆս, որ նշանակէ ուղեկից կիմ ընկերս, առեալ յընկերուէն զոր ի սկզբան անգ առնէին իշխանաւորաց. բայց յանցանել ժամանակաց նոյն ի կարգ իշխանուէ զանազան պաշտօնէից ի պալատան կայսեր և արտաքոյ, տուեալ մանաւանդ գաւառապետաց և քաղաքապետաց և այլն։ Վասն որոյ և ի յորդոր գալուստ յորժամ բաժանեցաւ Հայաստան յերկուս տերուէս ի ձեռս Պարսից և Յունաց, յայնժամ Յոյնք գլխաւորի բաժնէն իւրեանց զայս անուն եւտուն, որպէս ասէ Խորենացին էջ. 46. " Աշխարհին իւրեանց մասնին կացուցին Յոյնք Կոմս իշխանս ,, ։ Ի բազմաւորականն գրեալ կամի ասել Թէ յայլ և այլ տեղիս բաժնին իւրեանց կացուցին զայլ և այլ իշխանս նովին անուամբ յորդորեալ. ըստ որում և Թոմա արծրունի բազում կամ սակս նշանագրէ ։ Եւ քաց ի կոմսից նաև զայլ իշխանս եւ գործ ասէ Յունաց այլով անուամբ կոչեցեալս. զի ի ա. 15. գրէ՝ Թէ յետ վախճանելոյ Աբրշակ Թագաւորի յԵկեղեաց գաւառ, յորում ժամանակի ի բաժնին Պարսից Թագաւորէր խոսրով յայնժամ, ասէ, " Յունաց առեալ կացուցին ի բաժնին Աբրշակ հիւպատս և զօրավարս և կոմսառնս, ոչ զոր Թագաւորեցուցեալ այնուհետև ,, ։

Օգտ այս պատուանունն և մերոց հայկազանց տուեալ գտանեմք առ Բուզանդայ է. 37. " Մանուէլ, ասէ, որդի Աբտալենայ ի մամիկոնեան ի տոհմէն, հանդերձ եղբարբն իւրով Կոմսս ,, ։ Ջնոյն կրկնէ և այլուր ի նոյն գլուխ յերիս տեղիս, բայց իբր յատուկ անուն։ Նոյնպէս և առ Ասողկայ է. 2. հայկազուն իշխանի տուեալ գտանեմք զայս անուն, յասելն վասն Յուստինոսի կայսեր . " Կացոյց իշխանս աշխարհացն՝ զՆերսէհ Հիւրակայ տեր, Կոմս Կապոյտերոց՝ Հայոց իշխան ,, ։

ՀՒՒՊԱՏՈՍ [1]

Նոյնպէս անուն մեծի իշխանուէ, երբեմն ընդհեալ ի կայսերէ բայց նաև ոմանց ի մերոց հայկազանց. զոր օրինակ է յիշատակեալն առ Խորենացւոյն է. 21. " Բայց կայսերն

1 Յունարէն գրի Ἱππάρχου. այն է ըստ լատինացւոց Քաջաուղ։

(Վաղէնտիանոսի) բարեբարոյէ արարեալ մանկանն գնեալ՝ յաղագս զուր ի նոցանէ մահուանն Տրդատայ հօր նորա, տայ նմա զպատիւ հէթոպոսաքն, և գանձս յոլովս ։ Ձիշատակի և առ Աղողկայ թ. 6. այլ յաւելեալ անուամբ. « Իսկ Թէովիլոս (կայսրն) գնաց ի խաղտիս, և եղ՝ի ցամաք կամուրջ, և գերեաց զաղգսն՝ի Հայոց հանդերձ ընտանեօք իւրեանց, և տուեալ ջնջապատուհանէ պատիւն, այսինքն Ապուհէպատ պարիսպ Աշտոյ որդւոյ Շապհոյ, և Թողէ՝ի Սպեր գաւառ ։

ՎԵՑՍ ԿԱՄ ՎԱՑՍ

Ինուն և իշխանուհի՝ի յունականէն ածանցեալ, զի ոչ յիշատակի ինչ յառաջին ժամանակս յաւուրս Աբգարայ կունեաց, այլ միայն՝ի վերջին ժամանակս Բագրատունեաց՝ի մեծասանէրորդ դարու. յորում ժամանակի և այլ զանազան անուանս պատուոյ առնուին մերքն՝ի Յունաց, ըստ մասին անկեալ գոլով ընդ նոքօք, և ըստ մասին խառնեալ ընդ նոսա։ Սոքին պատուանուամբ կոչի որդին Գրիգորի մագիստրոսի. զի՝ի վերնագրի նորին Մագիստրոսի ասի. « Նորին (Գրիգորի մագիստրոսի) առ Վէսպն Վահրամ որդին իւր ։ Եւ ինքն՝ի Թղթի անդ գրէ. « Սէրիհական Վէսպէդ Վահրամայ ։ Իսկ՝ի Թղթին որ առ Հայրն Սահակ՝ եղայս և զայլ պատուանուանս իւրոց եղբարցն յիշատակէ, որք յայտ է Թէ՝ի Յունաց էին ընկալեալ. « Բայց ոչ զայսոսիկ միայն, այլ և Վէսպ և Պապրէկ, և Պատրոնպանաբատոն (բռնադատպաթ), ոսկի մատանի, հինգ իշխանուհիս փառս առաքեաց եղբարցս իմ... գոհանամք զտեառնէ զի ոչ արար ամենևին զծառայս Գրիգոր յերանելեաց իմոց ծնողացդ ։ Եւ՝ի պատասխանի Թղթոյն Գագկայ որդւոյն Աշտոյ՝ եկեալ՝ի գաւառն Տարօնոյ՝ գրէ. « Ե՛կ տէր իմ Վասպուրականի և Տարօնոյ և Մանազկէրտի, Աբահնոյ, Բերկրոյ, Մինջագետոյ տէր, և Մոնոմախոյն մագիստրոս, Վէսպ և Տուկ ։

Լ. այլ առ պատմագիրս անուանի եղև վէսպն Սարգիս, զորմէ Կիրակոս. « Յաւուրս սորա (Յոհաննու Թագաւորին Աղուց) մեծապատիւ Վէսպն Սարգիս զինի քաջութեամբ չինուածոց բերդից և եկեղեցեաց՝ չինեաց և զփառաւոր վանք, զսկսկունս և զեկեղեցի յանուն սրբոյն Սարգսի, և զծառաքար վանքն բերդ արարեալ ։ Զսորա գաւաճանուէ՝ի

կոչմանումն քաղաքին Ա՛նւոյ և Բագրատունեաց՝ ունիս տեսանել՝ի գլուխն Բ. տոյց։

ԷՒՍԱՐԻՈՍ

Որ առ Յոյնս էր երբեմն անուն ոչ միայն եկեղեցական, այլ և քաղաքական իշխանութե՛. որպ յիշատակուի գոնէ առ Ա՛ստղկայ ք. 2. տուեալ նաև մերոց արևելեցւոց, յաւելն վասն Յուստինոսի կայսեր. «Կացոյց իշխանս աշխարհ Հայոց՝ զՆերսէհ Հիբակայ տէր կոմս Կապպադովկիոյ՝ Հայոց իշխան և զԱարաղադաս պատրիկ Էփսոբիոս, որ էր երկրորդ Թագաւորին Աղուանից իշխանին»։

ՍԵՒԱՍՏՈՍ

Ունուն պատուոյ և փառաւորութե՛ առ Յոյնս, որ նոյն է ասել առ Հռոմայեցիս Ա՛ւգուստոս, ըստ մեզ Օգոստոս՝ որպէս փառացի իշխան կայսերական, կամ օգոստական. յիշատակի՛ի նախադրութե՛ միաբանական Թ.ղթոյ որ յաւուրս Ընորհալւոյն. «Յաւուրսն յայսոսիկ, ասէ, յառներ խռովութե՛ի մէջ երկուց իշխանաց Հայասեռից այսպիսի օրինակաւ. քանզի էին պատուով՛ի Յունաց առ քայէն սեաստոսո՛. և էին ընդ ծառայութե՛ և հնազանդութե՛ նորա։ Իշխանն, որպ անուն Թէոդորոս՝ տէր գաւառի լերնային կողմանց փոխադացւոց, և բազում գաւառաց, և Թեին ածեր ընդդէմ Թագաւորին Հռոմոց պէս պէս պատճառաւ»։ Ստորև գրէ վասն միւս իշխանին. «Դուստր եղբօր սորա էր օրինաւոր ամուսին Օշնի Սեաստոսին»։

ԴԻՄԵՍԼԷԿՈՍ

Ա՛յս անուն յիշատակի՛ի պատմութե՛ Յոհաննու մատենագրի գլուխ 56. ուր ասի վասն կայսեր. «Իսկ նա ուրեմն սկզբ դնէր՝ի միջի (ընդ Տիրիանայ մարզպանի), ոչ միայն մարզպան Հայոց և Պաղեսից Համարեալ (գՏիրան), այլ և Դիմէսլէկոս [3] առնել բռնանդակ Հռոմոմոց»։

1 Ըստ այմ և երբեմն իշխանք, որք նստէին՝ի Խաղենոս քաղաք Խաղոց, կոչէին Էփսոբիոս։

2 Ա՛ստղեալ է՝ի գիմս բառին Յունաց՝ որ է ժողովուրդք և հաւաքակազմութիւն է և հարկն ազգանի։

ԴԻՒՒՂԻ ԵՐԻՒՐՏԱՅԱՀՆԱՐՈՒԹ

ԴՐՕՃՔ ՆՀԱՆՔ ԵՒ ՎԵՐՏԱՒՈՒԹԻՒՆՔ

ՀԱՑԱՍՑԱՆՆԱՑ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ազգիս դրօշ յառաջին ժամա-նակս էր արծիւ, իսկ յաւուրս Թագաւորութե-նեանց՝ առիւծ. զի՛շատակութիւն այսորիկ գտանեմք միայն առ Մխիթարայ Համթեցւոյն, որ ի թղթ. ՀՃ. վասն Լևոնի առաջնի պսակաւորի գրէ. "Կայսերքէն ըստ անուանն Աֆրճ առմա (նշան) առաքեցին սմա. զոր բարձեալ ի վերայ Դրօշ-նի իւրոյ առաջի իւր ընթանայր։ Եւ այս նշան դրօշի սեփ-հականեալ միաց ի Հայս մինչև ցվախճան Թագաւորութեա-կիլիկեցւոց։ Իսկ առաջին Թագաւորքն Հայոց որ ի հիւ-սիս՝ «Աբգէ» նշան կրեին "։

Նշան՝ զրոյց բազում ուրեք յիշատակին ի գիրս. զոր օրինակ յասելն Խորենացւոյն զ. ԿՆ. "Հանդէպ Ձակա-տուն Երուանդայ ելին նշան՝ Արտաշիսի (երկրորդի)"։ Ագաթանգեղոս ծԹ. յիշատակէ նաև զիւրաքանչիւր գնդի ունել զիւր նշան սեփական որպէս օրէն էր, յա-սելն. "Երիվարաքո զօրաք և նշանօք իւրաքանչիւր գլխա-դաւ"։ Բուզանդ Ե. ւ. զնշանս զօրաց Մուշեղայ սպա-րապետին Պապայ արքային. "Աֆէր զամենայն Հանդէսն կարգեալս և պատրաստեալս վառեալս ի պատերազմ, ղԴրօշս փողփողեալս և նշանս արձակեալս"։ Եւ ի Ե. Կ. վասն անձին նորին Մուշեղայ ասէ. "Եկին և զօրավարն սպարապետն Հայոց Մուշեղ. և եթէ զնշանսն իւր և զգէնն առ Ներսէս եպիսկոպոսապետն, զի օրհնեսցէ զնա, և ինք-ն՛ գէ՛ ի պատերազմ"։ Ասէ Յոհաննէս Թէ զինչ եղեն այս նշանք, միայն Մեսրոպ ի Թիւն Ե. յաւուրս Աբրշայ Թագաւորի երկուս նշանս յիշէ՝ արծուոյ և աղեղան.

" Եւ տան զգունդն Հայոց ի ձեռն Վասակայ (մամիկոնոյ) կալ ընդդէմ պատերազմաց ասպարապետութեանն , և զերիս եղբարս նորա ընդ նմա հազարապետս կացուցանել . և կացին զօրավարքն մամիկոնք , Ամատունիքն և ռազմա հատք , աղէղնաւորք , Աբծոխենանք , նիզակաքաղք , ասպա բաքաղք , քաջասիրտք , աներկիւղք ի պատերազմունս , յայլոզք ի մարտ պատերազմաց , բարեհնազք , բաբեհամբաւք , Աղէնաձորոյն . ի մէջ պատերազմաց իբրև հուր ընդ եղէգն ընթանային տէրեսեր ազգն մամիկոնէանք ,, : Ռու զանդ ՟ի . 2 . ի յիշէն զզօրավարութիւն Հայոց կարգաւո րեալ յաւուրս Արշակայ , զայսոսիկ անուանս նշանաց յիշ շէ . " Նոյնպէս ստրատելատուն ասպարապետութենէն զօրա վարութենէն մարտի կռուելոյ , գործոյ ըռազմիկ Ձակատա մաղ նիզակին , իբրափառն ազանազգիք Աղէնաձորոյն Աբ ծոխենանք Աբծնականիդ ,, : Ի Թուղթն Դաշնոյ յիշատա կին նշանք և դրօշք զորս ետ մեծն Կոստանդիանոս զօ րաց մերոց . " Իակ հզօր հայարապետացս Հայոց պար զևեցաւ ի մերմէ Թագաւորութենէս նշանակ և Դրօշս գաղտագանիս և վիշապափետիս ,, : Եղիշէ 167 . յիշատակէ դրօշս և փողհարս զօրաց Հայոց :

Նշան պարապետի կամ զօրավարի էր՝ կրել առաջի իւր խա չադրօշ . զայս յուցանի բան Թումայի արծրունւոյ ՟ի . 6 . յասելն վասն ՟ա . Սմբատայ , Թէ պատուէրով զօրդիս իշ խանին Վասպուրականի , " ետ բերել պարգեւս և պատիւս Աշոտի ըստ իշխանական յօրինուածի . և զԴադիկ (զեղ բայրնորա , որ վկիր եղև Թագաւոր Արծրունեաց ,) ձգեալ ի պատիւ զօրավարութենէ Հայոց մեծաց , ըստ օրինի Թա գաւորացն Յունաց տալ առաջի նորա նշանակ խաչազրօք ,,:

Նշան եղևանաց ի պատերազմի՝ էր կրել ի սաղաւարտս իւրեանց գնչան խաչին որ կայր յանուն սրբոյն Սարգսի ի տեղին Գագ . զոր ակնարկէ Ընորհալին ի բան շարականին սրբոյն . " Սաղաւարտ յուսոյ անմահ բանին եդեալ ի գլ լուխ մերոյ իշխանին . . . խաչաչարչար սուրբ գիտապետ նշանագործ անուամբ ի խաչ և յեկեղեցի , առաւել պայ ծառ ի գլուխս Գագայ , ի գագաթան տեղւոջն օրհնեալ սրբոյն Մ Ե ս ր ո պ ա յ [1] ,, : Գուցէ ընդ խաչին նաև զքանդակ սրբոյն Սարգսի կրէին ի սաղաւարտս , որ առաւել յար-

1 Զայս բան բացատրէ վերադրեալ ի ոտս սուրբ նշա յասելն վասն վանական վարդապե նին որ յանուն սրբոյն Սարգսի , ինն տի . "Նմանաբերին զնա ի բերդն՝ որ գրել նոցա վասն քո՝ և այլ եղբար կոչի Գագ . և ասէ ցիս . սրդեակ , ես ցըն՝ որք կան ի ձեռն անփղինն , զի

մարի բանի չարաչանչին . կամ Թէ զսուրբն Սարգիս վասն երևելի յաղթութեանց բարեխօսութիւն նորա առաւել յորգեկին իբրև զգլուխ զօրավարութեան . որպէս և Յոյնք զսուրբն Թէոդորոս , այլք զսուրբն Դէորգ և զայլս ի սուրբ զօրավարաց :

Ա Ի էրաստոռնէ մերոց Թագաւորաց էր պարզ և համառօտ : Վաղարշակ ի Թուղթսն որ առ եղբայր իւր՝ այսպէս դնէ զիւր վերատուութի . « Վաղարշակ կրտսեր եղբայր քո և նիզակակից , որ ի քէն կարգեալ Աբգայ Հայոց ,, . Խորենացին ա . 9 : Աբգար յամենայն Թուղթս իւր գրեալս առ Տիբեր կայսր , առ Ներսէհ արքայ ասորեստանի , և առ Արտաշէս արքայ Պարսից , միշտ « Աբիթար արքայ Հայոց ,, և ևեթ գրէ : Խակ Թուղթք Տրդատայ յաւելուն Հայոց ևնծայ . որպէս և տեսանել առ Ագաթանգեղոսի յծ . ի Թղթին որ առ Ղևոնդ . « Տրդատիոս Թագաւոր ամենայն զօրօք երկրիս Հայոց ևնծայ , և Աշխէն տիկնի , և օրիորդ մեծ Խոսրովիդուխտ , և ամենայն հրապարակք բազմամբոխ ժողովրդոց՝ որ ի գլխն ի Հայոց մեծաց ,, : Ըստ այսմ գրէ Տրդատ և յայլ Թուղթս իւր որք գտանին առ Ագաթանգեղոսի ծ . ծէ : Սոյնպէս են և Թուղթք այլոց Թագաւորաց մերոց , յորս չիք յիշատակութի վեմ և մեծապատիւ առնութեանց ըստ օրինակի այլոց Թագաւորաց ասիացւոց . որպէս և ի վերջին Թագաւորս Աբշակունեաց՝ ի Թուղթն ք . Աբշակայ առ Վաղէս կայսր այսպէս գրի . « Աբշակ արքայ Հայոց ևնծայ , և ամենայն նախարարք արամեան ազգիս ,, . Խորենացին ք . 20 :

Ի ՀՀ որք յայլոց են գրեալ առ մերս , գտանին պատուոյ անուանք ինչ յաւելեալք . որպէս ի Թուղթն Դաշանց ի դիմաց Կոստանդիանոսի խօսելով կոչէ զՏրդատ՝ Երկիրզդ արքայի . « Երկիրդդ Նափառոռնէ Տրդատայ , արևելեան ահեղանչան Թագաւորի ,, : Եւ պատուանունքն ևնծ արանց , որ առ Հռոմայեցիս էր անուն մեծի պատուոյ՝ « Խակ ի հրամանէ ևնծ աթոռ եղբօրս մերոյ Տրդատայ ,, : Որ նաև առ յետինս ի կիր արկեալ երևի առ ժամանակ

Թերևս վերծուսցէ և զձեզ Աստուած գԹուղթն իւրով : Չի էր ի գագն խաչ մի պաճուճագործ առ ամենայն նեղեալս , մանաւանդ առ գերիս . զի որք ապաւինէին ի նա բոլորով սրտիւ՝ ինքն խնամգիս բանայր զդուռնս բանտից սրգելոցն , լուծանէր զկապս Թըռ , առաջնորդէր մարմնաւոր տեառնամբ ի տեղիս իւրեանց , և համառաւ ազանելեաց տաքածեալ էր ընդ ամենայն ազգս . զոր կանգնեալ ասէն զնա սբբոյն Կիսրոպապ վարդապետին մերոյ ,, :

մի՝ի բանից աստի Բուզանդայ ՟ք. ԱԱ. "Ապա յետ այսը բիկ փոխեալ լիներ քաջ պահպան աշխարհաշէն խոսրով, թա-գաւորն Հայոց մեծաց,,։ Կայսրն Դիոկղետիանոս զերկուս անուանս տայ Տրդատայ՝ ԱՀեռաւակից և Նիզակակից. "Ինք-նակալ կայսր Դիոկղետիանոս առ սիրելի եղբայր և Ա-ռաւէտ մեր Տրդատ ողջոյն։ Գիտութիւն լինի եղբայրութիդ-քում՝ Նէշապհէդի մերում,,։ Ազաթանգեղոս կը։

Յայտ է յաստգելոցս, զի որ առ այլս՝ի թագաւորաց ասիացւոց յաՀաս վարեին այլ և այլ մեծամեծ անուանք վերատաւութեց, առ մերս չոչ ինչ համարեալ էր. զի և անունս Դիոցղետն տուեալ՝ի կադմեայ առ Հայկ՝ "Դիւ-տեա ասէ, ով մեծդ Դիւցազնաց,,, որ է քան և վկայուն Մարիբասայ՝ի խորենացւոյն բերեալ ՟ա. ԱԱ. յայտ է՝ի Մարիբասայ անտի եդեալ՝ի բերան Կադմեայ. զի՝ի ժա-մանակի աշտարակաշինութեն չև էին տակաւին դիք և դիցապաշտութեն յաշխարհի մերում, որպէս ուսիս տեսա-նել՝ի գլուխն Կրօնի. Թող զայն, զի ոչ՝ի նամակագրի էր գրեալ այս անուն, և ոչ առ Թագաւորն տուեալ, զորմէ է քան մեր, այլ լոկ առ քաջակորով նահապետն Հայկ։ Ալ առաւել զարմանք այն է՝ զի Թէպետ Վիրք և Ա-ղուանք էին ընդ մերովք Թագաւորօք, գեթ ընդ քա-զում ժամանակս, որպէս և ընդ ձեռամբ կաթողիկոսին, այլ ոչ կոչին ուրեք մերքն Թագաւոր Վրաց և Աղուանից։

Այլ ընդ հակառակն այսմ՝ յորժամ տեղուին Բագա-տունեաց՝ի վերջին ժամանակս իւր օր ըստ օրէ տկարա-նայր, յայնժամ տեսանեմք Հնարեալ և յաՀախեալ զմեծա-պանծ անունս Շահն չահ, կամ Շահան շահ, որ է ասել Ա-քայից արքայ։ Զայս անուն նախ առաՀ ՟ք. Աշոտ որդի ՟ա. Սմբատայ. զոր Յովհաննէս կաթողիկոս՝ի Սբուբ ոստիկա-նէն առեալ ասէ, գրելով Թէ Սբուբ "առաւել քան զը-Յուսուփ ըստ նմին սակի դնեը ուխտ միաբանական խա-ղաղութե ընդ Աշոտի, և Շահնշահ զնա անուանէր,,։ Վասն որոյ նոյն ինքն պատմաբանն ստէպ յայս անուն կոչէ զԱ-շոտ. "Թիկունս յԱշոտոյ դարձուցանէր, որ Շահնշահն անուանիւը ,,. Եւ Թէ. "Զոգաք՝ի հանդիպումն Շահնշա-հի,,։ Եւ առաւել յաՀաս կոչէ Շահնշահ կոչեցեալ Շահ։ Բայց Ասողիկ ՟ք. 6. ոչ բանիւ Սբուբայ՝ այլ ինքնակամ ընտրու-Թե նորին Աշոտոյ ընծայէ զայս անուանակոչութե պա-տուոյ ասելով. "Ա՛յս Աշոտ հրամանաւ Ամիրի գաՀնայ յաշխարհս մեր, և գտանէ զծառայս Հօր իւրոյ Թագա-ւորեալ. (զի՝ի նմին ժամանակի Թագաւորեալ էին գա-

գիկ արծրունի, և Աշոտ եղբօրորդին Սմբատայ,) զինքն անուանեաց Շահան շահ. այսինքն Թագաւորաց Թագաւոր. և Տալաճական առնէ զիսմայէլացւոց զօրն յաշխարհէս Հայոց»։ Ալ նոյն իսկ օտարաձայն կոչումն յայտ առնէ յայլազգեաց անուանեալ՝ի սկզբանն։ Վարդանն նաև զայլ պատճառս յառաջ բերէ. զի հնազանդեցուցեալ ասէ՝ի ներքոյ իւր զԱշոտ որդի Հօրեղբօր իւրոյ, և զԴաւիթ Թագաւոր արծրունի, և զՄուսէս զբռնացեալն ԱՆ- ղուանս, «և մեծազօր գտեալ քան զնոսա, և քան զԹա- գաւորն Վրաց Ներսէհ (Աղուանեսէհ), կոչեցաւ՝ի վերայ նոցա Շահնշահ»։

Օ այս պատուանունն եթէ չընկալան առաջին աշխար- հակալ Թագաւորք մեր՝ որոց առաւել վայել էր, չէ թեև զի՞րդ վայելուչ և էր առնուլ սմին ։ Աշոտոյ, որ արդեամբք հզաւիւ կարեր կոչիլ արքայ. բայց ընդ այն զարմանչիւր, զի որչափ նուազեր տերութիւն և սահմանն երկրին, նոյնչափ և չափաւորեր անուանս այս. զի Առոլիկ ։ 8. զայս պատիւ և ։ Աշոտոյ ողորմածի տայ ասելով. «Զինի Աբասայ Թագաւորեաց Աշոտ որդի նորա, որ և Շահնշահ կոչիւր»։ Կիրակոս տայ նաև յայրդին նորա ։ Սմբատայ, և որ զինի նորա ։ Դագկայ, և և Թագաւորին վանանդացւոց Դագկայ, որ տիրեր՝ի վերայ միոյ՝ի գաւառացն Վանանդայ։ Վարդան տայ զայս անուն նաև միոյ՝ի Թագաւորացն Վասպուրականի, որ էր յայրդի Աբուսահլի։ Ժողովականք զօրս Ժողովեցաց Լևոն արքայ, զայս անուն ընծայեն նաև Չաքարիայ որ էր Թագաւոր, կոչելով զնա «Մեծապատիւ ասպետն և Շահնշահ արևելեան կողմանց Չաքարիա»։ որպէս գրէ Կիրակոս։

Ալ յետ այսր ամենայնի մեծապատիւ անունս այս տուաւ և աննշանիկ ոմանց. «Մնաց, ասէ Կիրակոս, որդի մի Չաքարէ մանուկ տիւք Շահնշահ անուն նորա, զոր մեոյց Խանի ընդ որդւոյ իւրում Սարգսի, զոր Աւագն կոչէին»։ Դարձեալ նովին անուամբ կոչէր և այլ ոմն վասն քնակելոյ նորա յԱնի յետ դադարելոյ Թագաւորութէ Բագրատունեաց. զորմէ ասէ Վարդան, Թէ յետ սպանանելոյ սպարապետին Վրաց Չաքարէի, «սրտակուտուր լեալ մեռաւ Հայոյն Շահնշահ կոչեցեալ, իբր տէր մայրաքաղաքին Անւոյ, որ երբեմն նստոց էր արքայի, որ աւագն էր Թագաւորացն բագրատունեաց այլ և այլ աշխարհացն, զանուն տեառն Անւոյ Շահնշահ կոչելով, իբր Թագաւորաց Թագաւոր»։

Իսկ անշուք անուանակոչութէ Թագաւորին, նոյնպէս

և կին նորա կուէր առ մեռան՝ Տիկին անուամբ. զոր օրինակ առ Խորհնացւոյն ք. 50. "Աստուծ ջՏէրն օրհոդն Սաթէնիկ", և առ Ագաթանգեղոսի յիւր. "Սոյնպէս և ինքեանք երկոքին Աշխէն Տէրն, և քոյր Թագաւորին Խոսրովիդեստ"։ և առ Բուզանդայ ճ. 3. "Ամենարկեալ մեծին Հայոց Տէրոջն", որ էր Թագուհին կին փոքուն Խոսրովու Թագաւորին։ և ճ. 15. "Տալով յեկեղեցւոջն Աղամիայ Տէրոջն ընձեռել զմահուն գործ"։ Սա էր կին ք. Արշակայ աքսեայն։ Սոյնպէս և 'ի 55. "Աւաքէին գեսպանս առ Տէրն աշխարհին առ Փառանձեմ"։ Իսկ Տէրոջոց Տէրն կոչէ՝ զՊարսից Թագուհին միայն գտանեմք անուանեալ առ Բուզանդայ է. 2. Թերևս յորոշումն այլոց կանանց նոցա ըստ օրինի բազմակնութե։ և որպէս զԹագուհին՝ նոյնպէս և զիշխանուհի Թագուհւոյ կոչէն Տիկնութեի. զոր օրինակ է տեսանել առ Ագաթանգեղոսի Հա. "Զի տարցեն զնա հնութեան Տրդատայ Թագաւորին, և Տիկնոջն Հայոց"։ և առ Խորենացւոյն ա. 29. "Ի հասատել Աժդահակայ զՏիգրանուհի 'ի Տիկնոջն"։ և ք. 35. գրե վասն Հելենեայ. "Ի վերայ Թողավ նմա զՏիկնոջն ամենայն Միջագետաց"։ Սոյնպէս և առ Բուզանդայ է. 37. "Զմայրն նոցա զՋաւրմանդուխտ (կին Պապայ արքայի) 'ի մեծի շքի Տիկնոջն պահէր"։

Իսկ զկիրառութե Թագուհի անուանս սակաւ ուրեք է տեսանել առ մեզ. զոր օրինակ առ Խորենացւոյն ք. 50. և 58. 'ի գրելն վասն Սաթինկայ տիկնոջ. իսկ ա. 28. 'ի Թզթին օտարազգւոյն Աժդահակայ գտանեմք 'ի խօսելն զՏիգրանուհւոյ, ուր կոչի Թագուհեայ Թագուհի։

Սոյնպես հազիւ ուրեք է տեսանել և զանունս Դվնոյ, տուեալ վասն մերոց Թագուհեայ. որպես առ Խորենացւոյն ք. 35. Դվնոյ կոչեցեալ գտանեմք զՓառանձեմ՝ 'ի Թուղթն Դաշնից գտանի և այլ ինչ անուն տուեալ Աշխէն տիկնոջն, այն է Բամբէն[1]։

1 Բուզանդ ԽԲ յատուկ անուն յիշ- բայց առ Մեսրոպայ Մաշթոց կոչի մայր չէ զԲամբիշէն, որով կոչեր քոյր Տիրա- մեծին Արտաշէս, 'ի հինգ ձեռագիրս օ- նայ աքսեայն, մայր մեծին Արտաշէս. րինակս ևս այսպէս գրեալ։

ԴԻՒՑԱԶՆԵՐՈՒ ԶՈՐՔԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

ՅՕԴՈՒԱԾ Ե

Կարճառօտութիւն պինուորութեան։

ՕՌՈՆՋԻՆՀայաստաւոյ կարգի զինուորուն ընծայէ Խորենացին մեծին Տիգրանայ, զորոյ զայլ և այլ բարեկարգ գունդս յիշեալ՝ածէ՝ի մէջ և վասն զօրացն ասելով՝"Հետեւակամարքն՝ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առՀասարակ դիպաղեղունք, և շերտաւորքն՝ի սուսեր և՝ի տէգ նիզակի վառեալք։ Մերկքն վահանօք և զգեստիւք երկաթոյ պարածածկեալք։ Որոց՝ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, և որ՝ի նոցայն պահպանակաց և զինուց փայլմունք և շողիւնք զծինամին արտահալածել»։ ա։ 24։ Եւ զերկրորդն՝ Վաղարշակայ, զորոյ զպետսէս շինութիւնն Թուեալ ասա՝" Եւ որ ինչ շուրջ զծագաւորութէն զօրաց, զօրապետաց, կողմանց կողմնակալաց, և որ նման այսոցիկ»։ ը։ 7։

Իսկ քանզի հայաստան աշխարհ արձակ է և անպատըսպար՝ի ծովէ[1] և յանմատոյց լերանց[2], իսկ սահմանակիցք իւր ազգք, մանաւանդ հիւսիսայինքն արևելեայք սարմատացիք, ազգ պատերազմողք և սոսպատակաւորք, հարկ էր նմա բազմութէն զօրաց զգեմ ունել նոցա։ Նմին իրի

1 Զի թէպէտ Հայաստան յարեւելից յանգի՝ի ծովն Կասպից, բայց ընդ սակաւ սահմանս։

2 Զի գօսէք կովկասեայն լերանց ոչ առ սահմանաք աշխարհիս կան, այլ յայնկոյս Կ. բաց։

այսմ հասու եղեալ և նախատես աշխարհաշէնն Վաղարշակ, սկիզբն առնէր հաստատելոյ զկարգ վիճակաւորութեանէ կարգեալ նախ յորս մեծամեծ իշխանս հանդերձ յորիւք գնդովք զօրաց ի չորեսին կողմանս աշխարհիս Հայոց։ Թէ քանի կարևոր էր և օգտակար պատրաստութիւնս այս՝ յայտ անտի է, զի ցորչափ տևեաց, Հայաստան չեղև այնպէս կոխան թշնամեաց, որպէս զկնի։ Սակայն յայտ արար Թէ ընդ քաղաքական բարեկարգուհեն գիտէր նա և զարուեստ զինուորութեանէ։

Սակս այսր պահպանութեանէ սահմանաց տոքա չորեքին իշխանքք կոչէին Սահմանակալք և Կողմնակալք. և սակս ունելոց յարքայէ իշխանութեանէ մեծ՝ կոչէին Բդեշխք. զի որպէս ցուցանեն պատմութիւնք՝ ի սահմանս յորս կային, էին իբրև փոխանորդք արքայի. վասն որոյ Ստեփաննոս օրպելեան է. զայսոսիկ չորեսին իշխանս յաւուրս Տրդատայ կոչէ "Երկրորդ Հրամանատար"ի վերայ աւենայնին ,, որք և առ մեծաւէ իշխանութենեն երբեմն ապատամբէին։ Ասէ՝ի գիրս զերկոսին միայն գտանեմք Բդեշխ անուամբ յիշատակեալս, որք են Աղձնեաց և Դուռգարաց՝. իսկ զմիս երկուս խորենացին կոչէ Սպարապետ արևելեան և արևմտեան զօրուն։ Եւ այսպէս գիտաւորուէ Վաղարշակայ էր պահպանել զչորեսին կողմանս աշխարհիս. բայց ի կարգաւորելն՝ յարևելից և յարևմտից կրկնակի գումն դնս կարգեաց, զորս մի առ մի յատաջ քերդուք ի խոսեսացուցոյն։

Յարևմտեան կողմն կարգեաց Վաղարշակ սպարապետ ի բագրատունի տոհմէն. "Իսկ ի ծայրս հայերէն խօսից կողմնակալ իշխան բիւրուց և հազարաց ,Աբահունէց կուսէ ,, ։ 3. որ թուի լինել յարևմտից հիւսիսոյ, քանզի Սպեր երկիր Բագրատունեաց էր ի հիւսիսակողմն։ Իսկ յարևմտից հարաւոյ կարգեաց սպարապետ զԱնգեղտունն, ըստ որումն ծառիք, ուր էր երկիր Անգեղտունեաց, էր ընդ արևմտեան հարաւակողմն մեծին Հայոց, զորմէ ասէ գ. 8. "Իսկ զայր խոժոռագեղ... Տոքա անուն կոչեցեալ... Հասատատէ կուսակալ արևմտից... կոչէ զանուն ազգին Անգեղտուն ,, ։

Յարևելեան կողմն զերկուս ցեղս միանգամայն կարգեաց սպարապետ. "Եւ ,Աբեղեայ կողմանէ զեղերք Հայկա-

1 Տես զոր ինչ գրեցաք վասն այսր ի վերոյ, ի Յառաջն զարտաքին նախարարաց։

կան խօսից Կողմնակալ, վերկու ցեղից նահապետութենէն Սիսակեան և Կադմեայն ,, . ք. 8: Ասյս գունդ էր յարևելից հարաւոյ . զի զմիս գունդն քաջայայտ զնէ անդէն յարևելից հիւսիսոյ ասելով. "Ձեռ սորա մեծ և անուանի և բազմաթիւ զարևելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութենէ զայր անուանի՝ և յամենայն գործ մտաւորուն և հանճարոյ առաջին՝ զնա ,, :

Ի հիւսիսակողմն եղ զգնդէնին Գուգարաց . "Իակ ընդդէմ լերինն Կաւկասեայ կողմնակալ Հիւսիսոյ կարգէ զմեծ և զհզօր ազգն. և նահապետունէն անուն կարգայ Բգնէնս գուգարացոց ,, . անդ :

Ի հարաւակողմն եղ զգնդէնին Աղձնեաց. "Եւ զՇարաշան՝ ի տանէ Սանասարայ հաստատէ Բգնէնս մեծ, և կոմակալ յաթոռոյ Հարաւոյ , յեզերք սահմանացն ասորեստանի, առ ափն Տիգրիս գետոյ, գաւառս պարգևելով զնոքա, և որ շուրջ զնովաւ ,, . անդ :

Ասյս կարգաւորութենէ չորեքկողմեան զինուորուն հնոց նաև յայտագայս. զի և յաւուրս Ա. Արտաշէսի Հիշատակին , զորս բաժանեաց առ որդիս իւր . "Բաժանէ Արտաշէս և զիշխանուն զօրուն ընդ չորս . պարթևքեանն Թողուս՝ ի վերայ Արտաւազդայ , և պարթևքեանն տայ Տիրանայ , պնդաբազկին՝ ի Սմբատ հաւատայ , և պնդեսպանին՝ ի Զաբէհն. ք. 53: երեք՝ ի նոցանէ որդիքն նորա էին, իսկ Սմբատ՝ գայեակ իւր . և՝ ի լինել Հարկի յօգնութենէ հասանելին միմեանց , որպէս ասորև ասէ , Թէ առ՝ ի զերծուցանել զՎարեհ՝ ի ձեռաց Քարճամայ Վրաց աքբայի , Արտաւազդ , Տիրան և Սմբատ պատերազմեցան ընդ նմա . յայտ է Թէ իւրեանց գնդօք , որք կարգեալ էին յերիս կողմանս աշխարհիս մերոյ . և՝ ի ք. 54 . յայտնի անուանէ և գկողմանս . ի խաղալն ասէ Խորենացի զօրաց՝ ի վերայ ք. Ա. տաշիսի ,, Հասեալ՝ ի կողմանս Կեսարու՝ գՏիրան և զզօրսն աքեմենեան առաջի եդեալ ածէն տաղտապատ մինչև գքաջ ընդարձակ հովիտն Բասենոյ , յորում ընդգէմ դիպեալ Արտաւազդ աքեմենեայ և հիւսիսային զօրօքն, հանգերձ ամենայն ոզուովքն աքբայի , և պատերազմեալ սաստկապէս վանեցին . յորոյ՝ ի վերջս պատերազմին հասեալ Սմբատ հաքաւոյն զօրօքն, ընդ մէջ անցեալ ապրեցուցանէ զօրդիսն աքբայի ,, :

Հաւուրս Տրդատայ վերջացեալ էր այս կարգ չորեքկողմեան գնդից և սպարապետութենէ , և մի միայն զօրավար իշխէր Արտաւազդ անուն . ՝ի մեռանել նորա՝ Տրդատ

անդրէն ետ հաստատել, որպէս ասէ Խորենացի Ե. 6. զո-
րոց և զիշխանին մի առ մի յիշէ Սահեփանոս օպպէլեան է.
յասէն վասն Տրդատայ. "Լակ զօրացն և աշխարհին չորս
միայն կացուցանէ իւրոյ Թագաւորուէ երկրորդ հրամա-
նատար՝ ի վերայ ամենայնին. արեւելեան կողմանին՝ իշխանն
Սիւնեաց քաջն և մի իշխանաւք. հիւսիսային կողմանին՝ իշխանն
Աղձեղտան քաջն և երկու իշխանաւք, Զայս այսպէս (գտաք)
՝ի գահ նահապետի իշխանացն Հայոց՝ զոր Վաչունգ գրեաց,,:
Ի կարգաւորութեն զինուորութեն այս ինչ է խոհր ընդ
Վաղարշակ և ընդ Տրդատ. զի սա փոփոխեաց զիշխանսն՝
յանձնելով զգօրս իւրաքանչիւր կողմանն այլոց իշխանաց,
և ոչ որոց յանձնեալ էր Վաղարշակ:

Այլն այս կարգ չորեքկողմեան սպարապետուէ տեւեաց
և յաւուրս փոքուն խոսրովու որդւոյն Տրդատայ, որպէս
յայտ է ՝ի խորենացւոյն Ե. 6. "Եկեալ Անտիոքոս Թագա-
ւորեցոյց զխոսրով, և զգօրեսին սպարապետսն մնացոյց ՝ի
նոյն իշխանութիւն զօրու, զոր կացուցեալ էր Տրդատայ
հիւրումն կենդանութեն յետ մեռանելոյ դայեկին իւրում
Արտաւազդայ մանդակունւոյ, որ միագլխապետ էր, և
ամենայն Հայոց զօրավար: Առաջին՝ Բագարատ ասպետ զօ-
րավար աբեղեան փոքին: երկրորդ՝ Միհրան առաջնորդ Վրաց
և բդեշխ գուգարաց, սպարապետ հիւսիսային զօրուն: եր-
րորդ՝ Վահան նահապետ Ամատունեաց, զօրավար աբեղե-
ան փոքին: Չորրորդ՝ Մանաճիհր նահապետ Ռաբշաւե-
նեաց, սպարապետ հարաւային զօրուն: Եւ բաժանեաց ետ
նոցա զիւրաքանչիւր զօրսն,,: Ահա գունդք զօրաց են՝ որ
յիշատակին առ նորին մատենագրի Ե. 9. կոչեցեալ Աբեղե-
ան և Աբեղեան զօրք Հայոց. և Հարաւային և հիւսիսային
մեր գունդք:

Տեւեաց նաև յաւուրս Ա. Արշակայ. զի վասն այսոցիկ
սահմանապահ գնդից պարտ է իմանալ զոր ասէ Բուզանդ
Ե. 2. վասն Արշակայ. "Սոյնպէս և զամենայն ազգսն
զօրացն մեծամեծացն նահապետացն, որպէս առաջին
Թագաւորքն նուաձեալք իւրաքանչիւր չափու. և հնա-
զանդէր զմեծամեծսն, զիւրաքանչիւր զօրս բաժանեալ
յամենայն կողմանց, սահմանացն Հայոց Սահմանապահս կա-
ցուցանէր,,: Եւ եւս երևի նաև յաւուրս պապայ արքայի,
ըստ որում յիշատակի առ խորենացւոյն Ե. 39. "գնել
նահապետ Անձևացեաց, և սպարապետ Պապայ Աբեղեայ
զօրուն,,:

Ի սաստկանալ բռնութեն Շապհոյ պարսից արքայի՝

Մուշեղ սպարապետ՝ որ միշտ փոյթ ունէր զլինել աշխարհիս, զայլ կարգաւորութիւն զօրաց կամեցաւ առնել յաշխարհիս մերում, զի ասէ Բուզանդ Ե. 34. «Պարհէր և ես ընդ իշխանսն Յունաց, և նոքօք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք մի լինել յերկրին Հայոց. ՚ի մի մ գաւառսն, որ մին մի քաղաքս, որ երկուս երկուս ամիսք պարսպաւորս զօրանիստս հաստատել ընդ ամենայն երկիրն Հայոց. մինչև ՚ի Գանձակ սահման երկիրն որ Պարսից կուսէ եր, Հայոց սահման եր. և զամենայն ազատսն Հայոց կայսերական թոշակօքն զինուորել. նոյնպէս (առնել) և զօրաց երկրին Հայոց, զի այսպէս ամենայն զգուշանալ լինի առ ՚ի Թշնամեաց իւրեանց ՚ի զօրացն Պարսից; եւ Թագաւորն Յունաց (Մեծն Թէոդոս) յանձին ունէր մեծաւ ինդուլթ առնել զայս. զի այսու ամենայնիւ աշխարհն հաստատուն լինի և անշարժ ՚ի նմանէն, զի մի՛ կարասցէ Թագաւորն Պարսից յիւր վտարել զաշխարհն Հայոց,»։ Քաջ եր խորհուրդ և առաջարկութիւն Մուշեղայ[1]. զի առ երկպառակութիւն և այլոց ախտաւոր Թերութեց իշխանացն մերոց՝ քանզի չմարթէր յանդորրու կալ աշխարհս մեր, լաւ ևս եր միշտ ընդ միսվ և քրիստոնեայ ազգութիւն լինել, քան երբեմն ընդ նոսա և երբեմն ընդ Պարսից. մանաւանդ զի և զերծ ևս լինէր յանօդորմ պարսկական բռնաւորութէ յաղագս քրիստոսական կրօնից. զորոյ հառաջիւրօք համաշխարհական հալածանաւք յաւուրս Յազկերտի երկրորդի։ Բայց այս քաջ խորհուրդ Մուշեղայ պատճառ եղև իւրոյ մահուան[2]։

Ի. Այլ զիարդ և իցէ յետ վերջանալոյ Թագաւորութէ Արշակունեաց՝ դադարեցաւ և կարգաւորումն այդ չորից սպարապետութէց ընդ չորեսին կողմանս աշխարհիս. նմին իրի անտի և առ յապաշտպանի ինչ յիշատակ գնացանք. այլ Թագաւորք Պարսից ինքեանց սեփականեցին զայնուհետև զզօրս մեր. նոցին քաջութէ պաշտպանելոյն զազգ իւրեանց ընդդէմ Հռոմայ, Հեփթաղաց և Քուշանաց, որպէս յայտ է պարապելոյն ՚ի պատմութիւնս. յորում ժամանակի սովորութէն ինչ լեալ առ զօրս մեր պատմէ Եղիշէ Թղթ. 73. «Օրէնք էին, ասէ, յառաջ ժամանակաւ յորժամ ՚ի Հայոց այրուձի ՚ի դուռն երթայր ՚ի ձեռն պատուաւորի

1 Զարգիւնս խորհրդոյն Մուշեղայ ՚ի գլուխ տարաւ մնասեալ իմն փոքրն Թէոդոս, չինելով մի միայն քաղաք զբանիսա զԹէոդոսպօլիս, որ է կարնոյ քաղաք, ՚ի լինել յապահինէ զօրաց, որ է ասել քաղաք զօրանիստ։

2 Տես ՚ի գլուխն Բաթուց զքսուել Բասայ սահմանուոյ։

զօրագլխի ուրուք, այր ընդ առաջ ելեր (արքայն Պարսից), և հարցանէր զողջոյն և զխաղաղութիւն Հայոց աշխարհին, և երկիցս և երիցս անգամ զնոյն առնէր. և զՀանդէս գնդին ինքնին տեսանէր. և յառաջ քան ի գործ պատերազմին հասանել՝ զգալն իսկ առ նա մեծ շնորհակալն Համարէր. և առաջի աթոռակացացն իւրոց և ամենայն մեծամեծացն՝ ամենեցուն գովութիւն մատուցանէր. և յիշեր զնախնեացն զվաստակս, և զառն առն քաջութիւն պատմէր նոցա ,, :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Կարճառօրէն Ճախառս, Զօրաց և Բանակի :

ՕՁԱՆԱՑ պատերազմի յերիս առաջս բաժանել ըստ սովորական օրինի՝ նոյնպէս գտանեմք առ մեզ, որպէս առ այլ ազգս. զոր օրինակ. "Ի դիմի Հարեալ միանց, և հատանելին չերթս առաջ ,, , ասէ Թոմա արծրունի էջ. 6: Այս առաջք կոչին Թև. "Ետեսանէր . . . զի զձախակողմն շարժեցին զՀայոց գնդին, ասէ Եղիշէ, մեծաւ ուժով յարձակեր ի տեղին. և զայլ Թևն Պարսից գնդին բեկեալ արկանէր զդայանաքն ,, :

Ի յայլ սովորաբար կոչին Ա՛ջ կողմն, Ահեակ կողմն, և Միջին. ըստ այսմ կարգեալ պատմէ Ղազար ի Թղթ. 111. վասն երանելւոյն Վարդանայ. "Երիս յառաջս բաժանեալ տայր ի ձեռս իւրաքանչիւր զօրագլխի. որոմ ասէ կողմանն կացուցանէր զօրագլուխս զիշխանն Աղձնեաց զԱրշաւիր . . զաջակէ կողմն տայր ի ձեռն խորենայ խորխոռունւոյ . . . եւ ինքն սուրբ զօրավարն . . պատրաստէր զինքն միջոյ տեղւոյն յարձակման. և այսպէս յօրինեալ զՀակառն ,, : Սոյն օրինակ և յայլում նուագի կարգեալ պատմէ ի Թղթ. 122. "Եւ սուրբն Վարդան տեղն մանիկոնեից բաժանեալ զիւր գունդն յերիս առաջս. ինքն գնդին կարգեր գլխաւոր զտեղն Աղձնունեաց . . և կողմանն աջոյ կարգեր աւագ տերանելին Մ՛ախազ Խորէն . . . և ընդ ահեկեն կողմանէ պատրաստեր զինքն իւրով գնդովն ,, :

Ի վերայ երից առաջիցս յաւելեալ ասէ ի 224. վասն Վահանայ զայլ ինչ իբր յօգնականուն. "Կայսրեր զինու. Հետև զօրավարն Հայոց Վահան մանիկոնեան յօրինել

[illegible] պատշաճի զիւբաքանչիւր կողմն Ճակատուն, զինչ կողմն բազում այրուձիովն տայր ի ձեռն լաւի առն Սահակայ մարզպանին ասպետի. և ի կողման ալ Թևին կարգեր զԲաղդ վահևունի... և չահէնէ կողմանէ .. ՝ներ. սեհիւ և Ձրահատաւ. և ընդալնդ իւրաքանչիւր այրուձիով զնդացն կազմէր զինեալս »։

Իսկ ի Թղթ. 215. առաւել քան զսովորական զերբեակ բաժանումն ի չորս առաջս պատմէ վասն նորին Վահանայ. "Եւ բաժանեալ զօրեքն Ճարիւրան ի չորս առաջս, զԼէն վայրի կարգէին զօրագլուխս ի ժամուն զիշխանին Սիւնեաց Բաբգէն... և անէակ կողմանն զԴարձայիս Մաղխազ, և կողմանն ալ զԳնունեան երկոսին... և ընդ Ձէ երկոցունց մնասանցն զքաջն և զընտիրն զիշխանին Ճիրակայ զՆերսէհն կամաւորական »։ Բայց սովորական յիշատակութիւն ի գիրս ե վերկուց Թևաց. զոր օրինակ առ Մատթէոսի ՃԻ. "Յայնժամ գուէաց քաջն Թոռնիկ և ձայն առեալ ալոյ Նախ իւրոյ, և հասաներ ի վերայ չոխոյ Նախին այլազգեացն, և պատառէր զնոսա մեծաւ յաղթութիւն »։ Ուրք առ Յովհաննու կաթողիկոսի ուրեք կոչին այլեւ անկէն։

[illegible] իմն կարգաւորուի Ճակատու գտանեմք կազմեալ մեծին Վարդանայ առ Եղիշէի 204. նախ՝ յերիս գունդս բաժանել, և իւրաքանչիւրոց ուրոյն ուրոյն նիզակահիւս՝ սահմանել. և բայ յերեցունց աստի նաև չորրորդ իմն գունդ յաւելուլ միանգամայն և ուրոյն նիզակակից նմին Ձիշատակին առ Եղիշէի 137. և Ներքապահ և Վերքապահ զօրք բանակին [2] " Ընդ յանձանձեր ածեր զօրաւվարն (Վարդան) զկայ և զնիայ զօրականին Աջապահ և Վերքապահ, Կողապահ, ողջ առողջ հասուցեալ յաւուրս երեսուն մերձ ի սահմանս Հայրենի աշխարհին »։ Ձիշատակի և առ Ղազարայ 117. Վերքապահ Ե՝ն։ Իսկ առ Ջէ. նորայ 46. ի Ճակատուն որ ի Տրդատայ յարդարեալ՝և այլ հանգամանք գտանին յիշատակեալ. "Ի վաղիւն սկսան ռազմ գործել և Ճակատ յօրինել. և խողոց Թողեալ սահարազմին գրոհս երկու, և գոհապահս տեղեացն զԲագրատունեաց իշխանն կացուցաներ. իսկ զայ Թևն զօրուն տայր ի ձեռն իշխանին Սիւնեաց, և զահէակ Թևն ի ձեռն իշխանին Աղուեղտան. իսկ զգահերեց իշխանան

1 Առ եւրոպեանս կոչեցեալ Այոդանէ։

2 Ըստ եւրոպացւոց կոչեցեալ Վանգարդիա, և Ռնէրօյոտարիա։

կացոյց Ռէֆիտացիս իւր. և այնպէս յօրինեցան երկոքին Ճակատքն, և պատրաստեցան ՚ի խումբն ,, ։

Ա. Վահանափակ ։

Վ ահանափակ առնել երբեմն զՃակատն յիշէ Բուզ. Ե. 5. ,,Սոյնպէս և Հայոց սպարապիրքն՝ զթիկունս ունէր զօրացն Հայոց, Վահանօ՛ փակեալք զինքեանքն՝ իբրև զամուր քաղաք ինչ ՚ի թիկանց լինիցի ,, ։ Եւ ստորև. ,,Ձորժամ դարձեալ սակաւիկ մի ինչ յաղթահարէին զնոսա զօրքն Պարսից, և նոքա իբրև ՚ի բերդ ամուր դիմէին ՚ի լեգէոն՚ի զօրն Վահանատրա, և նոցա բացեալ զՎահանան՝ գնոսա ՚ի մէջ առեալ փակէին ,, ։ Ա յսպէս առնէին և ՚ի ոմանց պատերազմին Ձիրաւ դաշտին, զորմէ ասէ Խորենացի Գ. 37. ,,Ձորժամ Պարսիկքն զմեզ չզջէին, նոքա ՚ի Վահանափն Ցուհանայ իբր յամուր քաղաք մտանէին առ ոչինչ վնասեալք. քանզի այնպէս արար Գորգոնոս իշխան հետեւակ զօրուն, իբրև պարսպաւ պատեաց Վահանօ՛ զՃակատն Պապայ ,, ։ Յոհան նէս կաթողիկոս վասն զօրաց Սահակայ իշխանին ասէ. ,,Հրամայեր հետեւակամարտ գնդին Վահանափակ լինել, որ տեսեալ ՚ի մեզ իմն բերբեր լինքն որպէս զամպարտեղի պաշրիսպ, և ՚ի թիկանց կուսէ նոցա զՀեծելազօր գունդն պատրաստեր սպառազինեալս և վառեալս՚ի զէնս և ՚ի զարդս ։ Եւ առաջապահքն առաջի Վահանափ [2] սպային սրաքար երկնաքօրք խաղացեալ յայսկոյս յայնկոյս երթային գային ,, ։ Եւ Թոմա արծրունի Գ. 12. ասէ վասն Գուրգենայ, Թէ ՚ի հասանելն յանկարծակի զօրացն Բուղային, ,,Ճակատարեալ Գուրգէն հեծեալ յերիվարն և կարգեցեալ Ճակատս, և ռազմ բռնըրեցին. և Վահանատրդն փակեցին զառաջակոյմն Ճակատուն, և կացեն ՚ի թիկանց հետեւակազօր նահատակացն ,, [3] ։ Նեղվածակ եւս առնել յիշէ Դաւթ 123. գիշերային պահապանաց. Թէպէտ վասն բանակին Պարսից ասէ ։

Կարգաւորութիւն այս Ճակատու կամ բանակի, որ հա-

1 Խմն Ագաթանգեղ, որպէս գնէ ՚ի 6։

2 Զայս վահանափակ լինելոյ իմն անճանաչ անուամբ յիշատակէ Ստեփ. Ո՛րբել. ի պատմ. Վրաց. ։։ Ռազմ յօրինէին ընդ երեսս լայն գաւառին Դէվձա Ցուշան վահանափոխ ,, ։ Որ մարթ է լինել և առնան գաւառին ։

3 Վահանափակ տիրապէս անուանեալ Թուին նոքա՝ որք նախ առաջին վայր առեալ պատաքս յարձակին ՚ի բանակին ընդդէմ զօրաց Թշնամեաց. Թէպէտ և ոչ գոանեմք զօրք յիշատակութիւն վասն այսր ։

սարակ է առ ամենեսին և յամենայն ժամանակի, յայլ կերպարան և՛ ձև փոխեցաւ և՛ մերմն Հայկայ և սկզբան անդ երևելոյ իւրոյ՝ առ և՛ դիւրաւ և՛ գլուխ տանել գյաղթութիւն։ Քանզի գոլով նորա ուշիմ և խոհեմ սկայ, որպես կոչի զնա Մարութաս, զուշխութիւն և զխոհեմութիւն իւր եցոյց արգարև և՛ կարգաւորութիւն անդ Հակատու զօրաց իւրոց. զոր գիտաց յայսպիսի ինն ձև մուծանել Հարստութիւն, մինչև կարող լինել սակաւուք յաղթել յախուռն բազմութեան Հակատուն Կերբովթայ. «Կարգե, ասէ Խորենացին ա. 11. զԱբրմնակ երկու եղբարցդ ընդ ալմէ, և զկադմոս և զայլս երկուս յորդւոց իւրոց և՛ Հաիմէ, զի արք կորովիք էին յաղեղն և՛ ի սուսեր. և ինքն առաջի, և զայլս հրոսակին զինի իւր կարգեաց. երեք ահիւնէ ինն կարգեաց ձևով, Հանդարտ յառաջ մատուցանելով»։ Ասյսու յայտ յանդիման երևի, թէ քանի Հմուտ էր այնի իրաց պատերազմի, ոչ երկարժամանակեայ փորձիւ կամ ուսմամբ, այլ ընդաբոյս իմաստութեան. զի որ յանցանել դարուց յոլովից երկրաչափական գիտութիւնէ երևելի Հանդիսացան այլք և՛ զօրապետաց, նա ինքնաՀնար Հարստարմտութիւնէ և՛ գլուխ տարաբ։

Ո Մուշեղայ ևս պատմի զքաջ սպարապետէն յայլ ինն կերպարան և՛ ի ձև ածեալ զՀակատ բանակին և՛ Հուսյաւուրս մարտին որ և՛ Ձիրաւ դաշտի յաւուրս Պապայ և մեծին Կերբեսի, զորմէ ասէ Մեսրոպ ե. «Ոչ միացեալ զօրացն Հոռոմոց, այլ խումբ արարեալ յանդուգն յարձակմամբ, ընտիր արամբք, քաջասիրտ սիրտուքեբ, ինքն առաջի՝ և այլ զինու վառելոցն զհետ նորա ըղեհանիւնէ իմն ձևով»։

Ի Ներ ինն Հարստարութիւն տեսանի և՛ ի կարգաւորութիւն զօրաց քաջին Թոռնկայ և՛ Թուին չիե (1072). որոյ միայն Հնազար հեծելազօրաք միացեալ՝ յանկարծ պատահեաց զօրացն Փիլարտոսի. բայց յայսպիսի ինն կարգի եղեալ էր զսակաւաթիւ զօրս իւր, զի յորժամ պատառեալ ընդ մէջ Հանց թշնամին, անդէն ի մէջ փակեաց. «Յայնժամ կարգեաց, ասէ Մատթէոս Ուռհ. Թոռնիկ զՀակատ պատերազմին իւրոյ դասս առ դասս, յայսկոյս և յայնկոյս և յառաջս, և թիկնապահ իւր եդեալ զկապոն զայր քաջ երեքՀարիւր արամբք. բայց ակն ածեր և՛ փռանկէն քան յայլ զօրացն. և ասէր, տեսէք զի գունդս երթիցէ ընդդէմ փռանկին։ Եւ ահա գայր Ռըմբաղտ և զօրք իւր, և՛ դիմի Հարաւ Թոռնկայ գնդին, և պատառեաց զզօր-

սէն, և Հանց լինդ մէջն. և յայնժամ ձայն տուեալ Թոռնիկ զօրաց իւրոց, և միաբան ի մէջ իւրեանց փակէցին զնոսա, և զամենայն իշխանս ձերբակալս արարին. կալան և զկոմսն նոցա և զՔիլաւառոսն, և զամենայն զօրս իւր փախուստ կան արարին, և զիշխանս նորա արարին ձերբակալս արս Հազար և հինգ Հարիւր. և յաւուրն յայնմիկ եղև բազում կոտորած Ֆռանկաց և այլոց քրիստոնէից. և զարձաւ Թոռնիկ, և ամենայն զօրք Հայոց գնացին ի Սասուն բազում աւարաւ ,, :

Բ. Տեղի բանակին:

Ի ժամանակի Աբրահունեաց էր լեառն Շահապիվան. որպէս գրէ Ռուզանդ էջ. 15. "Եւ էր բանակ Թագաւորին (է. Աբրահայ) ի Շահապիվանի ի բուն բանակի տեղւոյն Աբրահունեացն ի նեղքոյ սիւսեացն (սօսեացն) և ի վերայ ասպարիսացն ,, :

Գ. Հանդերձից բանակին:

Խաց ի դրօշուց յիշատակին և նշանաք զոր կրէին ի բանակի. որպէս Թոմա արծրունի ի պատմէն զպատերազմին Բագարատայ իշխանին Տարօնոյ ընդդէմ Մուսէի Հայազբացւոյ, ասէ. "Գունդ առ գունդ ընդդէմ միմեանց Ճակատեալ կազմէին զառագին, և փողքն գոչէին, և զրօշքն տարածանէին, և նշանքն փողփողէին, վահանաւորքն և նիզակաւորքն գոչէին ,, է. 6:

Դ. Խալ պանել:

Հայտ է ի բանից Յոհաննու կաթողիկոսի խալ տանել առաջի բանակին յասելն վասն է. Աշոտոյ. "Զպատկար քաջարտիսին ի գրաստս խալէն սրբոյ կապեալ, զոր առվորն էր առաջի իւր միշտ շրջեցուցանել ,,: Եւ Թոմա արծրունի վասն Դուրգենայ եղբօր Աշոտոյ վասպուրականի յորժամ էել ընդդէմ Բուղային, ասէ. "Դուրգէն եկաց ի Ճախոյ կողման Ճակատուն ի Թիկունս լինել գնդին հեռաւակաղօր մարտակցացն, և զալ Թևն տուեալ լինէր ի Ձեռն Ապուլմկիդմայ, և այլքն ի ըստ միոջէ կացին ի կարգի Ճակատուն. և առօթահանքն արկանէին առաջն ետն զպաղատանան, և պաշտօնեայքն բարձրացուցանէին զօրհնութիւնն. և քահանայքն բարձեալ ի վեր զսուրբ աւետա-

քանն, և նշանակ իւրեանց կանգնեալ զնոսն խաչին, և պաշտօնեայքն կատարէին զաներեւնական կանոնն, և երաժըշտականքն երգս առեալ զյաղթանչին փառաւորի՝ գոչէին. Տէր խորտակէ զպատերազմունս, տէր է անուն նորա ,, . ՟ք. 4. Զոյն անխարիկ և այս բան պաղատանաց քանակին Վարդանանց առ Եղիշէի. " Վասնեա զչար միաբանութիւն Թհնամեացդ առաջն.քոյոյ վրկական մեծի՝նշանիս,,։ Որով ցուցանէ Թէ 'ի բանակին կանգնեալ կայր նշան խաչին։ Սոյնպէս և բան Մագիստրոսի յասելն 'ի ներբողեան խաչին. "Իշխանաց զէն զօրաւոր 'ի պատերազմ անբըթացեալ, Մանկանց դաստիարակ և պահապան դու պարգևեալ,,։

Ե. Վբան պապաբաֆէ։

Ալ բան պատարագի ունել 'ի բանակին՝ գոյր յառաջ ժամանակաւ, այլ ապա խոփանեալ գոլով Հաբաբէ սպասալար Թագուհւոյն Վրաց որ 'ի սկիզբն երեքտասանեերորդ դարուն՝ անդրէն հրամանն էառ 'ի գործ դնել. որոյ պատմուԹիւն Մոսէս Խորենացին գտանի առ Կիրակոսի այսպէս. " Այժմսոյս իշխանն Հաբաբէ, զի տեսանէր զզօրս Վրաց որ ընդ Թագաւորին իւրում, զի իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ ունէր ընդ իւր քահանայս, և յամէն տեղիս մնալուցանելին պատարագ, և ինքն ոչ ունէր եկեղեցի 'ի Հանապարհին, զի էր սովորութի Հայոց 'ի բազում ժամանակաց՝ յորմէ հետէ բարձան իշխանքն Հայոց մեծամեծք 'ի Պարսից և յիսմայէլացոց բռնութենէն։ Եւ նախատեին Վիրքն զՀայս ոչ ունել եկեղեցի 'ի Հանապարհին, և անհաղորդ ինալ նոցա... վասն այնորիկ կարի յոյժ ցաւեր նմա. ապա Հարցանէ զմեծ վարդապետն (Մխիթար գօշ).. և ասէր Թէ ոչ երբէք եղեալ է Թագաւորաց մերոց կամ իշխանաց 'ի պէտս Հանապարհոյ եկեղեցի պաշտամանն և պատարագի։ Հարցմանէր և զայլ վարդապետս, և նոքա ասացին նմա զայն՝ որ առ մեծազօր արքային Տրդատայ և վրանն և սեղանն՝ զոր շրջեցուցանէին յաբուսական բանակին, և որ առ սուրբ Վարդանամբք՝ որ զմիւռոն և զՀաղորդութի կատարէին 'ի մէջ բանակին... և այլ բազումն որ նման են սմին։ Ապա ասէ ցնոսա մեծ զօրավարն, տուք և ինձ հրամանն, զի և ես շրջեցուցից զհետ իմ քահանայս, և Վբան պապաբաֆէս. ասէ ցնա վարդապետն մեծ (Մխիթար գօշ), մեք (ոչ կարեմք) հրամանն առնել զայդ առանց կաթողիկոսի Հայոց և Թագաւորին Լեհաց։ Ապա գրէ Թուղթ,

և առաքէ դեսպան առ կաթողիկոս Հայոց Յոհան ա-
նուն որ ... ի Հռոմկլայ ... գրէ և առ թագաւորն Վահն
և Ծանուցանէ նմա զինդիրն ... Ապա արքայն Վահն ժո-
ղովել վարդապետս և եպիսկոպոսունս իւրոյ իշխանու-
թենէն՝ հարցանէր վասն խնդրոյն Ջաքարէի . և նոքա յանձն
առին ... և գրեն Թուղթ մի յարևելս այսպէս . Մեծա-
պատիւ աստուն և շնորհաշէն արևելեան կողմանց Ջա-
քարիա ի խնդիր եղեալ եղծեալ և աղաւաղեալ կարգաց
քրիստոնէից որ ի տկարուէ այլասեռից՝ ժողով արարեալ
վարդապետաց, եպիսկոպոսաց, հարցն և երիցանց ... գտին
զխնդիրս նորա համաձայն աստուածային գրոցն : Ապա ա-
ռաքեցաւ առ քրիստոսասպակ արքայն Հայոց Վահն ի կող-
մանս արևմտից աշխարհին կիլիկեցւոց . և նորա ժողով ա-
րարեալ ի մայրաքաղաքն Սիս ... գտին զխնդիրս նորա
համաձայն առաքելական կանոնաց և ոչ արտաքոյ .. Գրե-
ցին ի ժողովն արևմտից, և առաքեցին յարևելս առ Ջա-
քարիայ, յոկ կաթողիկոսն Յոհաննէս որ ի Հռոմկլայ՝ վասն
ընդ միտս մտանելոյ իշխանաց արևելից՝ առաքեաց Վահ
զմայեցեալ եկեղեցաձև, կազմօղս և յօրինօղս նմին . և
սեղան մնբմարեայ, և այլ սպասք պատարագաց ,, որպէս
զի և ի բանակի անդ պատարագք մատուսցին :

Ջ . Խանի բանակին [1] :

Չիշատակին այսոքիկ առ խորհնացուցն արտաքոյ բա-
նակին . զորս այսպէս յիշէ ք . 46 . " Խակ երուանդ ձիոմն
իւրով բովանդակ ասպարէզս անցեալ՝ ելանէ ի խանս կալ
գեալս ի բանակէն իւրմէ ի քաղաքն իւր , հեծեալ ի
նոր ձիս . հանգոյց ի հանգուցէ փախել ,, :

Է . Փողոց հնչմանց :

Ի բանակին ի ժամ պատերազմի յիշատակին ուրեք
ուրեք . զոր օրինակ առ խորհնացուցն ք . 46 . " Եւ Սմբատ
հրամայէր զփողն պղնձիս հնչեցուցանել , և յատաջեալ
զձակատ իւր ... ,, : Չհնոր ի պատճէնին երկրորդ , կե-
րես 45 . ասէ վասն Տրդատայ . " Եւ ապա դարձեալ թագա-
ւորն ի փոքր կոտորածէն , ել ի գլուխ Աբձանին . և հարեալ

1 Թուին իջևանք ձեափոխութենէ , որպէս փոստայք յարևմուտս . տաճ-
կերէն Մենզիլխանէ :

զաղջաբար Փոխ, մինչև ամենայն զօքքն Ժողովեցան ՚ի մի վայր ,, : Յիշատակին նաև Փոքահաքը . զոր օրինակ առ Եղիշ էին 167. " Քանի՞ Փոքահաբ ՚ի մէջ գնդին ձայնիցեն ,, :

Ասայ արտաքոյ պատերազմի նաև ՚ի ժամանակի խա- զաղութեի հնչեցուցանել , եր նշան մեծուե սպառապետի . զոր մերս Վահան մամիկոնեան յորժամ ետ հնչեցուցա- նել նաև յերևիցն առաջի Նիխորայ պարսկի , որ բերեալ եր պատգամ խաղաղութե ՚ի կողմանէ Վաղարշայ Պարսից արքայի՝ ասաց առնա Նիխոր , թէ այն պահել է միայն Պարսից սպառապետի , որպէս գրէ Ղազար 286. " Տայր հրաման մամիկոնեանն Վահան հնչեցուցանել զՓող պատե- րազմական, և ՚ի սատակութե Փողոյն ձայնից հնչեալ եր- կիրն թնդէր ... և Նիխոր առաքեալ ընդ առաջ նորա ասս ատագ , տայր ասել ցմամիկոնեանն Վահան , եթէ ոչ ըստ կարգի Աբեաց առնես դու զայդ ... քանզի ՚ի չուի փո- ղով յԱբեաց բանակ՝ սպառապետն միայն Աբեաց իշնէ մնանել , և այլ զբ զայդ համարձակութե ՚ի Պարսիկս ոչ զբ իշնէ առնել ,, : Կոստանդիանոս կայսր ՚ի պատիւ մերոյ արքային Տրդատայ տուեալ եր զանազան գործիս նուագա- բանաց , որ եր հրաման տալ զնոյն զնուագարանն նուագա- բանս հարկանել՝ զոր կայսերք հարկանէին. զոր օրինակ պատ- մի ՚ի Թուզեն Դաշանց . " Օժտեցաբ զսա (զՏրդատ) ... որոշընդոստ ահագնագոչ շիփորայիւք , երգեհոնօք և զանոնօք յորդաձայնիւք ,, : Ուր նաև վասն հազարապե- տաց գրէ . " Իսկ հզօր հազարապետացս Հայոց պարգևե- ցաւ ՚ի մերմէ Թագաւորութէս ... Փող և Փանփոս բարձ- բաբարբառս ,, : Նա Եղիշէի ՚ի Թղթ . 208 . յիշատակի և զեծ Գալաբափող . Թէպէտ և վասն կողմանն Պարսից :

Ը . Կարգ արտանի զօրաց :

Օ այս՝ Վաղարշակ կարգեաց ՚ի պալատան իւրում յա- ռաջ քան զկարգաւորութե զօրաց տերութե . զի որպէս ամենայն տերութիք ունին զօրս ՚ի պահպանութե արքու- նեաց իւրեանց, որք առ եւրոպացիս կոչին Քօռֆօ պէ էռօմ- պիս . իսկ առ օսմանեանս Դափուճի պաշ , սոյնպէս և Վաղարշակ, ասէ Խորենացին է . 7 . " Եւ գունդս և պահա- պանս գրան արքունի պատրաստէ զշորս . զմի մի իւրա- քանչիւր վաեռլովք՝ինոյն հինգ զարմից Թագաւորացն որ ՚ի Հայկայ ,, : Եւ ՚ի հետևեալ գլուխն զնոյն կրկնելով ասէ . " Եւ օրէնս իմն հաստատէ ՚ի տան Թագաւորութե իւրոյ

. . և կարգս զինուորութեց . և նոցունց առաջինս և երկրորդս և երրորդս , և որ ի կարգին ,,։

Օ այս զինուորութե պարտ է իմանալ վասն արքունեացն. զի զայն իմանայ՝ տունէնագաւորութե իւրոյ ասելովին, և զի բանն է անդ միայն վասն տանն արքայի . ուր առաջինն և երկրորդ և երրորդ ասելովին՝ խոսի անդէն զտրեցունց գնդից զոր ի նախագրեալ գլուխն էր յիշեալ. նմին իսկ ասելովն և որ ի կարգին , իմանայ միայն զչորրորդ գունդն՝ զոր ոչ կամեցաւ յանուանէ յիշել զոր յիշեալ էր յառաջն , թէ չորս են գունդք կամ կարգք պահապանաց ։ Տես և ի նախարարութենն Ոստանիկ անուանեալ ։

ՅՕԴՈՒԱԾ Գ

Ա. Զէնո՛ զոր պանիցն կրէին մարտիկն ։

Ստրաբոն ժա. 502. ի գրելն զԱղուանից, ասէ . «Պատերազմին և հետեւակ և հեծեալ, թեթև՝ նաև ծանր զինուք որպէս զՀայս ,, ։ Իսկ առ մատենագիրս մեր յիշատակեալ զէնք զոր ի կիր առնուին մեքըն՝ են այսոքիկ .

ՍՈՒՐ և ՍՈՒՍԵՐ ՊՈՂՈՎՋՏԻԿ

Օ սոսա ի կիր արկեալ առեն վիսպագիրքք մեր զօրաց մերոց որք կիրթ էին և ձարտարք յայժ վարել նոքօք . բայց հրաշալի ին պատմի վասն ոմանց սուսերաւ հատանել զզրահն և զամենայն երկաթ . որպէս պատմի վասն մեծին Տրդատայ առ խորենացւոյն [1] . 85 . « Սաստկութե ուժոյն վիւրեաւ ցանցեալ ի ձահ դիպեցուցաներ ղերկայրէն, և ընդ միջ կորեր զայրն , և ընդ զոյգ պարանոցին զգլուխ երիվարին ,, ։ Այլ այս էր թագաւորին Բասլաց , զորմէ ասէ, թէ էր « լինքն վառեալ վերտ պահպանակօք , ուր ոչ գծելին նետք ,, ։ Զայս ոչ ձարտարութե հարկանողին և ելե ընծայելի է , այլ նաև քնութե երկաթոյ սրոյն՝ զոր կոչեն Պողովարիկ [1] . որպէս և յայտնի զնէ Մատթէոս [2] .

1 Այլ սուսերք առ արեւելեանս կոչին Դնչախ, սակս գալոյ ի Դամասկոսէ . կոչին նաև Շինէր , զորոց և այժմ սակի նման գործոյ պատմին յառանաւսից առ ի հարկանել և հանել զերկաթ : Ձձարտարութեն կիրթառեալն Դամշխի սուսերաց անուանեալ է մեր ի Դարապատում գիրս , որ յառուբս սուգան Նչլիմ։

վասն Աշոտոյ եղբօր Ցոհաննու Թագաւորին յԱնի, ՚ի սկիզբն մեռանելոցդ գարուն. " Իսկ Աշոտ եղբն զկայծակն ՚ի ներքս անցանէր, և Հարկաներ գնա (զՎրաց դեսպանն զպրաւոր) Պողվաոդէ՚ի վերայ սաղաւարտին և վերկաթապատ մարմնին պատառեաց մինչև ցոտն. և հանդերձ միջօքն յերկիր ընկէնոյր ,, ։ Սոյնպէս գրէ ՚ի լեհ. և վասն զօրավարին Վասակայ. " Եւ ՚ի շուտս եղեալ Վասակ ՚ի ներքս գիմեաց . և Պողվաո թրոշն ՚ի վերայ սաղաւարտին գահեաց, և յերկուս հերձեաց զնափշեին քաջ, որ և մնաւնէք մարմնոյն յերկիր անկանէր ,, ։ Գրէ և ՚ի ձէ. " Յայնժամ Շապուհ իշխանն (արծրունի) ասէր ցԱմատ և ցԱպուսահլ (որդիսն Սենեքերիմայ), կամիք զի զզօրսդ Հոռոմոց ցիր և ցան ածեմ ընդ երեսս գաշտացդ. և արար զրահն եօթն կրնակի, և զարկանէր Թրով ՚ի վերայ, և ՚ի վայր հեղոյր մինր զերկաթեն ,, ։ Տես ստորև և զայլ զինս զերկաթահատս։ Սուսեր երկայրի զոր ՚ի վերոյ յիշեաց Խորենացին՝ գտանեմք յիշատակեալ նաև առ Ասողկայ վասն Աբասայ Թագաւորին Աւռոյ. "Աբաս գայլս զերիվարն խնդրեալ, զզարդ զինուցն զանձամբ առեալ, զերկասյրն Սուսերն ՚ի ձեռին ունելով ընթանայր զկնի ասպատակին. և ՚ի մէջ գետոյն հասեալ Հարկանէր Հարուածովք ձեռին քաջի, կիսախողխող յերիվարացն ՚ի վայր կործաներ ,, . ՟Ը. 7 ։ Իսկ որ ոչն ունէին զերկասյրն սուսեր, վարէին զմիասյրին ։

ԹՈՒՐ

Իբր այլ ինն զկն յիշատակի առ Բուզանդայ ՟Ը. 8. զտեղի գրիցն նշանագրելով. " Սուսեր ընդ մէջ, Թուր զգօտւոյ, աղեղնակապարտ զմիջոցն ,, ։

ՆԻԶԱԿ

Յաձախ էր և սորայս գործածուԹե՚ի զօրս մեր. Բուզանդ Ե. 6. գրէ վասն զօրաց Հայոց յաւուրս Պապայ արքայի, Թէ ՚ի Գանձակ Աղուպատականի ինացին զօրք սահմանապահք երեսուն Հազար , ընտիր ընտիրք, Նիզակաւորք կուռ վառեալք պատեղկնք (պատեհազկնք) և զրահաւորք կազմ ամենայնիւ ,, ։ Որպես և ՚ի Ե. 5. " Սոյնպէս և Մուշեղ սպարապետն գունդս բերեաց ՚ի մի վայր զզօրսն ամենայն Հայոց. և էին կուռ վառեալք ինեսուն Հազարք

ընտիրը՝ Նիչակ ի ձեռին. Թող զսպարակիրս ,, : Սովին զինու արաբ և զմեծ յաղթութենէն Վահան ամատունին ի հզօր պատերազմին ընդդէմ հիւսիսականաց որք էին սարմատացիք, որոց զօրագլուխն անպարտելի կարծիւր . այլ քաջն Վահան յերկինս կարգալով՝ " Ուղղեա և չնիչա իմ ական հզօրիս այսմիկ (ասելով), և ոչ վերպեցաւ ի ինդրոյն, ընդ գաւակ ձիոյն յերկիր կործանեալ զահագին զվերագն ,, . որպես ասէ Խորենացին էջ . 9 :

Ի այլ որպես վան ոմանց սուսերաց՝ նոյնպէս և վան նիզակաց հրաշալի ինն պատմի՝ հատանել հերձանել զերկաթ . զոր օրինակ էր նիզակ մեծին Տիգրանայ . զոր ասէ Խորենացին ա . 29 . " Բայց գովեմ զքաջհաստակն իմ և զնիզակաւորն (Տիգրան) . . . ի լինել պատերազմին՝ նիզակաւոր որպես զջուր հերձեալ զերկաթի ամուր հանդերձն, շամփրէ զԱժդահակ լընդարձակ տեգ Նիզակին . և յամիրփել միւսանգամ զձեռն՝ արտաքս զկէս մնան թաքիցն հանդերձ զինւոյն ի դուրս բերէ ,, :

Ի այլ զարմանալի իրք պատմին յաղագս արեամբ գեղոյ նոց մետղոյ նիզակին ա. Աբշակայ արքայի. զոր ասէ Խորենացին էջ . 9 " Նշանակ եթող յերեր ծովուն մեծի (Պոնտոսի) ընկէցին իւր զեղօրատեսք, որ էր արեամբ պեծոյ պետի, և յաղթ ըստ Յոհաննու կաթողիկոսի՝ արեամբ օձից . " Ձսուէք ընկէցէք իւրոյ , ասէ , զոր արեամբ օձից ասելին պետ, նմանութեամբ հարուստ խորութեամբ յարձանի միում թագեալ, նշան տեսողաց գնա իւրում քաջուէ ,, : Աչս է որ ի թուղթն Դաշնից կոչի Վիշապամուխ , յասելն վան մեծին կոստանդիանոսի, Թէ պարգեւեաց մերոյ արքային Տրդատայ նիչակս Վիշապաձոյս . այսինքն է մետալ յարիւն վիշապաց :

Օ այս և առ օտարազգի մետենագիրս գտանեմք յիշատակեալ. զի Սարաբոն ժ֊ի. 772 . ի խօսելն զԱրաբիոյ և զԱրաբայ (Սավեա) , յիշէ քաղաք ինչ Տարաւա . ուր վան նետից նոցա գրէ , Թէ յորսաէն զնիզոյ՝ " զոմանս ի նոցանէ սպանանելն նետիւք՝ որ ի լերդն օձից մետալ ,, : Եւ Յուստինոս ժ֊է. 10 . ի պատմելն մեծին Աղեքսանդրի ասէ՝ Թէ նաեւ նորա ուրեք գնեաց ի Թոյն մետալ՝ այնպէս խոցոտելին զզօրս նորա, որ լինէր կրկնակի մահ, այսինքն երբ կաթեաւ և թունով : Սոյնպէս և վան Սօսանց պատմէ Սարաբոն ժ֊ի. 499 . Թէ " Սօսանք (ուր և Բօսանք գրի) ի կիր առնուն զթոյնս, որով զարմանալի ինն օձանեն զսու-

սերս. և այսպիսի Թունաւորեալ նեփիւք խոցելոյն ժահա-
հատուելի ծանր է յոյժ »[1] ։

ԱՂԵՂՆ · ՆԵՏ

Ի գործածութենէ զինուց այսոցիկ երևելի Հանդիսացաւ միշտ ազգս մեր . և անդստին ի սկզբան անդ նախնիկն մեր Հայկ և իւրքն սովին զինու կանգնեցին զայն մեծ յաղթու-
թի ի վերայ Բելայ . վասն որոյ Մարիբասս կոչէ զնա « Յաղ-
սպետոսթեանն Հայկ՝ անուանի և քաջ նախարարն՝ կորովա-
ձիգ և հասպաղէն » . Խոր . ա. 9 ։ եւ զորդիս և զԹոռունս
նորա կոչէ ա. 11 . « Ասս քաջս և Աղեղնաւորս » ։ Եւ յորժամ
պատմէ զհակատամարտն Բելայ՝ զայս անուն տայ Հայկայ
իբր մականուն ասելով . « Զայս իմացեալ Աղեղնաւորին
Հայկայ՝ յառաջ վարէ զինքն , մծտ հասանէ յարքայն
(Բել) , ևի քարշէ պինդ ղևայնէձն (զաղեղն) , գիսեցու-
ցանէ զերեխնէանն (նետ) կրծից տախտակին , և շեշտ ընդ
միջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր անկանի սլաքն » ։
Օ այս Համբաւ քաջութենէ աղեղնաւորաց մերոց տա-
եալ տեսանելիք նաև յայլազգ ժամանակս. զի Քահնտիան
որ ի թթ 360 ամաք յառաջ եր քան զԲրիստոս , ի գ . գիրս
արշաւանաց Կիւրոսի վասն գարտուքեանց, որք են Կորդիք
Հայկազունք, ասէ . « Նոքա տիգաւորք քաջհմտութք , որոց
Աղեղունք գրեթէ եռականգնեան, նեպ առաւել քան զերկ
կանգնեան . ի ձգելն ընդ ետ՝ զ ջիղն ի վերջին ծայրն բե-
րեն , յառաջ շարժելով զհեակ ոտն . իսկ նետն Թափ-
անցանց լինելն ընդ վահանս և ընդ զրահս » ։ Զնոյն
Համբաւ տեսեալ գասանելիք նաև յաւուրս Մատաիոսի լա-
տին քերթողի , մեռեալ յամի տեառն 96 . որ ի ա գիրս
հաղնեցուցեալ Աստուածոյ , Ասպէին կոչէ զՀայաստան ի
կիրառութենէ աղեղան ։ Եւ յիրաւի . զի և առ Ղազարայ
բազում ուրեք յիշատակին արք Ձարտարք ի նետաձգութենէ.
զոր օրինակ Աբշաւիր կամաւորական ի 112 . և արք մամ-
կոնեանք , որք ի 193 . կոչին « Ինքնաձգողքն գեղեցկաձիգք
և գիսեցուցօղք » ։ Իսկ վասն Վահանայ ասէ 258 . « Բայց
մամիկոնեանն Վահան զամենայն օր ոչ տայր դուլ առ-
նուլ զօրօք իւրովք Պարսկաց ի զահլինն, այլ զցայգ զամե-

1 Զայս նաև վասն այժմեան ազ-
գաց ասանց ապիկնկեցօց՝ զոր օրինակ
են կալայիք և օգդհնգացիք՝ լսելք
ի կիր առնուլ ի պատերազմին եւ-
թանց նետս մխելոք ի թոյն ինչ զօ-
րաւոր , որ է հնարեալ ի գիշոյ
սեւակի միոյ օձի ։

նայն Նեռաչէփ Լիճելով 'ի Նեղքս ,, ։ Նոյնպէս և 'ի 262. գրէ գնմանէ . «Եւ առեալ ընդ իւր զարս զօրուն իւրոյ, և գլխաւ կանան զերիվացին՝ գայր Հասմանէր 'ի վերայ զակիչին 'ի գիշերի , և սպարափակ արարեալ էրիվացօքն զտեղն կը- ռուոյն իւրեանց, և ինքեանք ըստնմանութեամբ տեղատարափ չառագման Նեռաչէփ սաստկութեամբ զգունդս Պարսկացն ա- հաբեկչին ,, ։ Ձարտար եղեւն և յապագայ ժամանակս յաւուրս բագրատունի Թագաւորաց , որպէս գրէ Յովհան. նէս կաթողիկոս . « Իսկ մարդիկ ամրոցին (Կապուտայ) անձնընտիր լեալք , և կարողութեամբ կշռեալ զձկտումն մե- քենայից , և զնեռաչէփս 'ի լայնալիճ Աղեղանց , և զքարինս 'ի պարսատկաց ,, ։ Իսկ վասն արանց ի· Աշոտոյ գրէ . « Եւ զծառայս իւր լայնալիճ Աղեղաձիգ արս քաջակորով , և հմուտս 'ի ձգումն Նեռաչէտ-նետիցն , որ գրեթէ 'ի մազոյ ոչ վրիպէին ,, ։

Եւ այս Ձարտարութեամբ մերոց ոչնչ երևեցաւ , յոր- ժամ սկսաւ արշաւանք սկիւթացւոց տուղրիլեանց սերե- լոց 'ի Թուրքաց սելճուգեանց, որոց Ձարտարութեամբ և սաստ կութեամբ 'ի նետաձգութեամբ թէ զիարդ զօրաւոր էր , յայտ առնեմ Մատթէոս կիր· 'ի պատմէին զառաջինն արշաւանս նոցա 'ի Վասպուրական . «Դաւիթ (ասէ, աւագ որդին Սե- նեքերիմայ) ժողովեալ զզօրսն ազատաց Հասմանէր 'ի վե- րայ Թուրքք բանակին , և Հարան սաստկապէս ընդ մի- մեանս ահաւոր պատերազմաւ։ Իսկ յայնմ ժամանակին չէին քնաւ մերքն տեսեալ Թուրք զօրք հեծելոց . և 'ի Հանդի- պեին նոցա տեսին այլակերպ վնասս, Աղեղնաւորս և հեծեալ ձակ իբրև զգայլս . և յայնժամ զօրքն Հայոց չէին սովոր պատրաստ լինել ընդդէմ Նեռին . և քաջաբար 'ի վերայ այլազգեացն արձակեցան (առաջաւ)... Իսկ այլազգիքն Նեռաչէփոնքեն զգազումն 'ի զօրացն Հայոց վիրաւորէին խո- ցելով . Եւ տեսեալ զայն ամենայն Շապուհ , ասէր ցԴա- վիթ, զարձիր Թագաւոր յերեսաց Թշնամեացս . վասն զի 'ի Նեռէն վիրաւորեալ եղեն մեծ մասն զօրացս , գնաս- ցուք , և ընդդէմ այսմ զինուցս զոր տեսանեմք առ այլ ազգիսդ , այլ զգեստ պատրաստեսցուք ընդդէմ Նետիցս ,,

Վասն Թունաւորելոյ գնետս գառանեմք յիշատակեալ 'ի վէպն Ընորհալւոյն յայս բան .

« Ըզ լայնալիճն լի քաջէալ···
Երեքթեւեան եռախեռնեալ
Յանկարծակի ըզնա հարեալ ,,

ՎԱՂՐ

Լ՚այս զինք եւս նման սուսերաց հատանիր զերկաթ. «Պօտ առ նա հասեալ (ասէ Յովհաննէս կաթողիկոս, այսինքն ք. Աշոտ Թագաւոր առ Մովսէս ապստամբն), և զառ գուցեալ գլխանոցն երկաթի՝ Վաղրբէ դիսէցուցեալ, շէշտ ընդ մէջ ձեղքեր զամուր գլխանոցն»։ Զգինեալսն սովին զինու կոչէն Վաղաւաղուր. «Եւ նախ, ասէ, զեպիսկոպոսն սուրբ Վաղաւաղօքն կարթակոտոր առնելին, իբրև տապարօք շէշտակի շէշտեալ զծառ. և զինի ապա հատեալ և սուսերաւ զգլուխ նորա»։

ՇԵՐՏ

Ձիք՚ի գիրս առանձին յիշատակութիւն այսր զինու, այլ միայն որք կրկինն զայն, անդստին յաւուրց անտի ՌԾՃԻ Տիգրանայ, զորմէ Խորենացին ։. ԺԿ. ասէ. «Էջ պատրոյն՚ի սուսեր և՚ի տէգ նիզակի վառեալք»։ Եւ Բուզանդ յիշատակէ Էջպաֆակ զօրս։

ԳԵՂԱՐԴՆ

Ակրաւուքն՚ի սորա՚ի պատերազմի յիշատակի առ Մեսրոպայ է. «Խակ քաջին Մուշեղայ առեալ զդաստառակն սրբոյն Կերսէսի՚ի Գեղարդն իւր կապէր... գոյէր առիւծաբար, ձեղքեր ուղղ արանց քաջաց պատերազմնաց ուայկաց, յարձակեր վարազաբար»։

ՃԻԿՈՒ

Յիշատակեալ առ Մատթէոսի Հ։. յասելն. «Հաբաւ՚ի վերայ ամիրային, և ճկոյէն Հարկանէր զուսոյնն»։ Զորմէ պատմէ՚ի խէ. և զերկաթ հատանել. «Յայնժամ Ասղլարիսն պողովատիկ ճկոյէն Հարկաներ զերկաթի դուռն քաղաքին, և պատառեալ զերկաթն՝ և այն դէհն անցուցաներ. որ և անեղանելի ինաց մինչև ցայսօր ժամանակի. ի տեղն պնդեցին որպէս զբևեռ»։

ՍԱԿՐ ԿԱՄ ՍԱԿՈՒՐ և ՆՐԱՆ

Ճանուցնս Սակոբ, որ և գրի Սակր, Ռեչանտ Հաւասրի բառ պարսկական, և յանուանէ Պարսից առ Յոյնս աճանչեալ, առ որս գրի Սակոբիս. բայց Վիգոնեանք՝ Թարգմանիչք Խորենացւոյն՝ ի հայկական անուանէս աճանչեալ ասեն. ըստ որում ուրեք ուրեք յիշատակի առ Խորենացւոյն իբր ընդհ բառ հայկական նշանակեալ զտաւպար. յորմէ և լատինն Սէֆոռնիս, զոր և յիշէ Վալքէն՝ ի վերլուծմանն Երոդոտոսի էջ. 64։ Ի զէնս Շակաց սկիւթացւոց ազգաց գասէ զայս անգէն երոդոտոս. նոյնպէս և Քսենոփոն՝ ի Է. գիրս արշաւանաց Կիւրոսի՝ ի յիշէն զսակարիոս կամ զսակուրն՝ ի զէնս Պարսից՝ ամազոնեաց սեփական լինել ցուցանէ, որք էին մի յազգաց սկիւթաց ցոց. արդ ընդ Սկիւթիա անուամբ կոչել նաև զՀայս սովորութեի լեալ յառաջնոց ժամանակաց անտի՝ յիշեցաք՝ի գլուխն Այուան։ Բուզանդ զգիրս տեղւոյն ուր կրկին զսակուրն և զնրանն՝ ցուցանէ յասելն Է. 32. Թէ հետևակ զօրք Յունաց ունէին "վահան՝ի ձեռն, Սակոբ զգօտոյ,,։ Եւ՝ի 35. "Բառ սահմանի . . . Հնձանն՝ զոր յիւրում ազգերն ունէր՝ հանեալ, անցոյց ընդ փողս զօրավարին,,։ Յիշատակի՝ի գիրս և Մէոդէն, որ Թուի նոյն ընդ սուր միասցրէ։

Այսոքիկ են զէնք զոր յիշատակեն գիրք վասն մեծոց պատերազմականաց, զորոց զմիանգամայն յիշատակութէին գտանեմք առ Բուզանդայ է. 15. յաւուրս է. Աբրահայ Թագաւորին. "Հասանէին բազում սպառազէնք վառեալք Սուսերաւորք, Նիզակաւորք, Վաղրաւորք, Սակրաւորք, Սունաւորք (աուհիաւորք) և Սպառակիրք հետևակք,,։ Որպես և՝ի 20. վասն զօրաց նորին Աբրահայ. "Նիզակաւորք, Սուսերաւորք, Աղեղնաւորք անվրէպ կօրովիք, Վաղրաւորք, Սակրաւորք, որք ոչ գիտեին զերկիւղ զանգիտելոյ յարանց յահռոյանց,,։ Եւ առ Յոհաննու կաթողիկոսի յասելն վասն Վահանայ արծրունւոյ յաւուրս ա. Սմբատայ. "Զօր՝ի գաղտնիս իմն կազմէր, սրիկայս պատրաստեր, Աղեղնաւորս, Հեշտաւորս (հերետաւորս), Սուսերաւորս, Վահանավառս, կորովիս զէնս շարժեալ,,։ Իակ առ եղիշէի 205. յիշատակի փայլել Սպառաւորտից, շողալ Սուսերաց, Ճօճել Նիզակաց. նոյնպէս և կռիւնք Վահանաւորաց, Ճայթմունք լարից Աղեղանց, Իբա-

նից ինչ եղիցէ իճ7. երեւի Թէ աղեղնաւորը ոչ կրեին ՚ի վերայ այլ զինս, իսկ վահանաւորը էին հետեւակ զօրք. զի յիմանալն Մերսիներսեհի հազարապետի Պարսից՝ Թէ աւելի քան 60 հազար էն զօրք Վասրդանայ՝ ետ պատ, ասէ, Թէ "քանի՞ այն որ իցեն՝ որ Սպառազինքն իցեն. և համբանի՞ այն որ իցեն՝ որ մերկ առանց զինու. Աղեղնաւորք իցեն. այնպէս և վասն Վահանաւոր հետեւակացն ,, : Ի պատմիչն Թէոփիլեան տպեալ ՚ի Մատրաս, գլ. ը. այս զինք յիշատակին վասն օրպէլեան Վիպարտի. "Նստեալ ՚ի տաճկի երիվարն՝ և ընկենոյր զոսկենկար Վահանն ՚ի թիկունսն, և զձօձ՝ նիզակին յահեակ բաղուկն, և զլայն պողովատիկ Շիմշիրն երկբերան ՚ի յաջ ձեռին, և զՎաղեն ահագին ՚ի ներքոյ բարձին իբր զուռն գաղթաց, և կամ զՍակր կոտորոր քարահատաց՝ անցեալ ՚ի մէջ ոստայնաւոր հանդիսին,,

Իսկ Թէ քան զոր գրեցաքս աւելի ինչ գիտել ոք կամիցի վասն պատերազմական զինուց, ընթերցցի զգիրս Երոդոտոսի, գիրքն է. սկսեալ ՚ի 61. գլխոյ մինչ ՚ի 68. գլ. ուր յիշէ զզանազան ազգաց զինս պատերնազմի. յորս հաւանական Թուի լինել և զՀայոցն, բայց ծածկեալ և խառնեալ ընդ այլով անուանէ : Ուրանօր Թուի ինձ ընդ Սկիւթիա անուանէր բովանդակել նորա և զՀայս ըստ հին ոճոյ աշխարհագրական անուանց, որպէս գրեցաք ՚ի գլուխն Անուան. այն զի վասն Շակաց գրէ անդէն տամնել զզինս Սախքիս որ է Սակուր՝, և ասէ զնացանել լինել սկիւթացս : Իսկ Թէ Շակք ուստի ունէին զծագումն, և որպէս խառնեալ ընդ Հայս, գրեցաք ՚ի գլուխն Բնակաց :

Բ. Ջինչ ՚ի հարկանել կամ ՚ի պաշտպանել զբերդս :

Ամենեքեան մերքն ոչ յաշխարհ ուրուք արշաւեցին, մանաւանդ յաւուրս Բագրատունեաց, և ոչ զբերդս և զքաղաքաքս կործանեցին, ՚ի պաշտպանութիւն անձանց և եթէ փոխեալ կալեալ և քաղաքաց իւրեանց, բայց քանզի ՚ի պատմութէ Հայաստանեայց միշտ յիշատակին պաշարմունք

1 Ի բանից տասի Երոդոտոսի՝ ուր Ամոբիդն կամ զՄակուրն ասէ լինել սեփհան զինս Սախ կամ Շախ ազգն, մարթէ է ենթատասիրել Թէ յանուանէ նորին ազգի անուանեցաւ և զինք նոցա Սախ : Եւ քանզի ծագումն այսր ժողովրդեան է ՚ի Շակ կամ Շաւակ ՚ի նահանգին մեծին Հայոց, ուստի նահանգին մեծին Հայոց, վասն որոյ պարտ է ասել Թէ և այս զինք և անուն նորին ՚ի հայաստանեայց ունի զիւր առաջին ծագումն : Այլ որ ՚ի գէպ գայ և առաւգաբանութէն ա-

և քանդմունք քաղաքաց մերոց ՚ի զինուց Թ-հնամեաց, ՚ի դէպ վարկաք և վնասակէտ լսել յայմ վայրի առ ՚ի հմտուլ Թէ ընդ երկոցունցն ։

ԽՇ.

Կայսր մեքենայիւ կործանեալ Շապուհ Պարսից արքայ զպարիսպն Տիգրանակերտի, էառ զայն, զոր և ստորագրէ Խորենացին Ճ. 28. "Եւ Յունացն մնատցեալ մեծաւ բանուԹիւնն ՚ի պարիսպն զկոչեցեալ Նչան։ Եւ ի այս գործի մեքենայից անուանւոր, յերից երից արանց մեքենայ տարեալ, և ՚ի ներքուստ կացուածք և սակրօք երկերեքասնովք և կտցաւոր մխովք՝ փորել զհիմունսն. և նախարքնաւ արարեալ զայն, որ ՚ի հայկազնոյն Տիգրանայ հնծեալ և յարմարեալ որմունքն, քակեալ ընկեցին "։

ՓԻԼԻԿՈՒԱՆ

Կատուամ ուրեք յիշատակի առ պատմագիրս մեր. զոր օրինակ առ Կիրակոսի յասելն վասն զօրաց Զարմանդանին. "Պաշարեալ զքաղաքն (ԱՆի) յամենայն կողմանց, կանգնեցուցին Փիլիկոսաան բազումս արուեստագիտաւք, և մարտուցեալ ընդ քաղաքին զօրեղապէս առին զնա "։ Նոյնպէս յասելն վասն Քաջուն Ղուրչի զօրավարին Թաճատացց. "Կանգնեցին Փիլիկոսաան բազումս, և կործանեցին զպարիսպն "։ Կարծի քաղաքին։ Սովին մեքենայիւք պաշարեցին և զՄարտիրոսաց քաղաքն զօրք Զաղատային։ Զայս մեքենայ սուղ ինչ ստորագրէ Լասխիվերցին գլ. ԺՇ. ՚ի պատմելն զպաշարումն Մանազկերտի ՚ի Տուղրիլ սուլտանայ, ուր երևի և ՁարտարագործուԹիւն հայկազնւն երից։ Այս. "Յետ այսորիկ մեքենայս կանգնեաւ այնու պատերազմիւն. իսկ երեց ոմն ՚ի մերոցս Հնագոյն ուսնելով աւուրս, որ յայժ տեղեակ էր պուեհտին, և սա իւր կանգնեաւ Փիլիկոսան. և լինէր յորժամ Նոքա քար եգեալ ՚ի պարսատիկս մեքենային՝ և ձգէին ՚ի քաղաքն, երեցն զիւր քար դէպ ուղիղ նոցա քարին արձակէր, որպես զի դէպ քար երիցուն ՚ի քար անօրինացն ՚ի վերայ իւրեանցն ընկենոյր։ Զայս արարեալ անօրինացն ՀօԹն անգամ՝ ոչինչ կարացին վնասել. քանզի զօրացաւ քար երիցուն ՚ի վերայ քարի նոցա "։

ԲԱԲԱՆ

Եւ զայս մեքենայ սակաւուք ստորագրէ Սամուիլէրտցի գԼ. Ժ՟Ջ. ՚ի պատմէն զպաշարումն Մանազկերտի ՚ի Տուղրիլ սուլտանէն ասելով. " Ապա այլ պատերազմական գործ ծի պատրաստեաւ, զոր ինքեանք (տուղրիլեանք) Բաբան կոչէին, որ յայժ ահագին էր. զոր ասէին Թէ չորեքհարիւր սպասաւորք էին նորա որք զպարանն քարշէին. և վաթսուն լծոր քար եդեալ ՚ի պարսատիկն ՚ի քաղաքն ձգէին. և առաջին նորա պարիսպ կանգնեցին ՚ի բազմակի (բաՀ բակի) բեռանց, և ՚ի յայլ քաղուժ կարասւոյ, զի մի քար երիցուն հասցէ ՚ի նա, (տես ՚ի վերոյ ՚ի Փիլիկոսանն), եւ իբրև զայս այսպէս յարդարեցին, յարձակեցին քար մի՝ որ դիպեալ ՚ի պարիսպն ուժգնակի՝ փլոյց և խոռեաց զնա ,,։

Օ ահագին մեծուԹի այսր բաբանի յիշէ և ՄատԹէոս Ջ՟Ի. յաստէն վասն նորին Տուղրիլայ. " Յայնժամ առաքեաց ՚ի Բաղէշ, և ետ բերել զԲաբանն զոր Վասիլ Թագաւորն արարեալ էր վասն Հերայ (քաղաքին պաշարմանն)... ահաւոր և զարմանալի. և յորժամ կանգնեցաւ անօրէնն Բաբան՝ սոսկաց ամենայն քաղաքն. և զառաջինն որ եհար՝ երեք այր պահ և զկրծապահն ՚ի քաղաքն ձրագեաց. և յայնժամ երեց մի յայտնեալ ՚ի քաղաքն, և ՚ի շտապոյ գրեալ մեքենայ մի ընդդէմ նորա, և յառաջինն քարէն հարկանէր զԲաբան, և բեկանէր խոզակն [1]։ Եւ զբացաւ քաղաքն, վասն զի ահիւ պաշարեցան. և յետ աւուրց ամենացուցին այլազգիքն զԲաբանն, և կազմեցին անմեղանչելի ամենայն կողմանց. սկսան հարկանել զպարիսպ քաղաքին մեծամեծ քարամբք. և յայնժամ ահաբեկեալ գողայր երեքտասիւ ամենայն քաղաքն,,։ Զիւրմէ պատմէ զՏէր Ձիգ առնելն Փռանգի ուրուք զայս ահաւոր մեքենայ։ Ի գրելոցս ասի յայտ է Թէ Փիլիկոսան և Բաբան մի և նոյն մեքենայ է, գուցէ ըստ մասին ինչ միայն տարբերեալ բայց ՚ի ջանազան ազգաց ջանազան անուն ընկալեալ

1 Որ կամ տեղեկանալ ինչ առնուլ վասն այսպիսի մեքենայից գործելոց յերկրագէտ աստ, ընծերցցի առնախնդիր նկա զվարս Ալբերիկեան, զորս բազում այսպիսի մեքենայս գործեալ պատմէն Հրաւալի Ճարտարութեամբ Պողոսատոքոս և Լիւխոս, ՚ի պաշտպանել զՔիրկոսա ընդդէմ Նաւուց Հռոմայեցւոց։

յայտ է և ա թէ երկաքանչիւր էին ազգ ինչ մեծի պարսատկի, որ կարէր մեծամեծ քարինս ձգել հեռաւոյն ի կոծանել զպարիսպս [1]։

ՊԱՐՍՒՔ կամ ՊԱՐՍԱՒԱՐ

Ի գործ ածեալ չիշատակի առ Յոհաննու Մամիկոնէնի ընդ նեռից միանգամայն. և առ Սահմանոսի օրպելեան գլ. ԺԲ. ի գործ ածեալ պատմի ի բնակչաց անառիկ բերդին Սիսեանց՝ կոչեցեալ Բաղաբերդ, յորժամ Շապուհ Պարսից արքայ ի չորրորդ դարուն պաշարեալ էր բազմութիւբ զօրաց. "Պարսաւարքն, ասէ, և վխմագլմամբք զանհուն բազմութիւն պարսկական զօրուն զամենեսին դիա թաւալ կացուցանէին... Եւ սոքա նոյնպուճանակ վխմօք և Պարսիւ կոչնձեալք առհասարակ սպառեցան"։ Ուր ի դէպ էր ի կիր առնուլ զայս զէնս՝ կարծեմ սակս քարակուռ զառ ի վայր դրիցն Բաղաբերդու։

ՀՐԱՑԱՆՈՒԹԻՒՆ

Օ այս ի կիր արկեալ. գտանեմք ի Ք. Մաթատայ, յորժամ պաշարեալ ունէր զԴուբինս. "Պաշարեալ ուժգնապէս զնոսա, ասէ Յոհաննէս կաթողիկոս, և բազում աղխատրոյզ չինմամբն և աւարառուբիւնս և տնկակոտորութիւնս և Հրացանութիւնս զնոքօք զերծեալ, ստէպ ստէպ զերկեամ մի զայս առնէր"։ Եթէ զայս հրացանութիւն համարեացուք ի նետքս ի քաղաքն անդ արկեալ, ոչ խմնամբ ի բանից նորա թէ զնարդ ընկենոյր ի փակեալ քաղաքն անդ, որովհետև ոչինչ չիշատակէ բայց ի բանից ինչ Թոմայի արծրունւոյ գ. 2. խմնամբ պարսատկօք ընկենուլ. զի ասէ վասն զօրաց Բուղայի. "Այլ և հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, զոյծ բնաւթին յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայիդ, և զհուրն առընթեր նմին հնարաւորեալ արկանել զամրոցսն"։ Յորմէ յայտ է թէ ունէին յայնմ ժամանակի հնարեալ արուեստ ինչ ցհեռաւոր վայրս

1 Ջայսմանէ Ճառէն հնագիրք. և ոմանք նաև զպատկերս նորա նկարեն ըստ տեղեկութեան ընդունելոյ ի նոցանէ. զոր օրինակ կարես տեսանել առ Ամմիանոսի, գիրք ԺԹ. գլ. 6. և գալ ի պաշարման Ամիտայ ի թիւ. 234. ի տպագրեալն Լոնդինի 1693։

ձգելոյ զՀուրն ։ Լստ այսմ օրինակի և զՔերան ասէ Թո-
մա արծրունի ’ի կիր արկեալ զգոյն , յորժամ զօրք Բու-
ղայի ’ի մարտնչելն ընդդէմ Մերոյ Աբծրունեաց առ պարսս
պօք բերդին՝ զգեցեալ էին զգեստս այնպիսիս , որով “ան-
երևիւղ ինային ’ի հրոյն տոչորմանէ ,, ։ Ապա յայտ է Թէ
բերդականքն որք էին հայկազունք արծրունիք, սովին օրի-
նակաւ ձգելին Հուր արտաքս ’ի բերդէն ’ի վերայ Թշնա-
մեաց ։ Զքանս Թոմայի տեսցես ստորև ։

ԱՐՔ ՔԱՐԱԳՆԱՑՔ

Պղքա ունէին ’ի ձեռս գործիս Ճանկաւորս , որովք ե-
լանէին ընդ անմատոյց քարաժայռ լերինս առ ’ի ելանել
և մտանել ’ի բերդս ։ զորս յայլազգեաց ’ի կիր արկեալ յի-
շատակ Ստեփաննոս օրպէլեան լը. առ ’ի առնուլ զբերդս
մեր ։ զի Յուսուփ էառ , ասէ, զբերդն երիվակ ’ի գիշերի
գողութեբ “անձաւամուտ և քաթաֆնայ արամբք , որք եր-
կաթի Ճանկօք ընդ ժայռս գիւսս վախից արուեստաւ-
կեալ ընթանան ,, ։ եւ ’ի գլ. կիս. վասն տաՃիկ զօրաց
Ադրբէմանին գրէ ։ “ Մարդիկ սպրամուտք և քաթաֆնայք
էլլին ’ի գլուխ ապառաժուտ լերինն ,, ։

ՁԵՒ ԱՄՐԱԿԱՆ ՄԱՌԱՒՈՄԱՆՑ

Օայս ընդհանրապէս միայն յիշէ Թոմա արծրունի
ճ. ւ/կ. գիւտ հնարիմացութեբ կոչելով , զոր արար Դևբա-
նին արծրունի ’ի պաշտպանութեբ կանգուար ամրոցին .
Յետ դարձի , ասէ , իշխանացն ’ի գերութենէ Բուղայի ,
“ Դևբանին գործ առնէր ’ի գիւտս հնարիմացութեբ ...
տիրել աշխարհիս (Աղձևացեաց) , և ’ի բազում յուղիս և
’ի լնդգրոյն և զօրաժողովն լինելոյ , և ղՁև ամբանն մաս-
մանցն յարդարելոյ , և բունալիր ուժեղագոյն մեքենայիս
բախմանց քարաձգութեբ , (զբաբանն կամի նշանակել)
զոր և ընդունայն աշխատութեբ վարանեալ (Թշնամին ,
զի) անսահմանելի մնալով ամրոցին (կանգուարու) , գառ-
նայ յիւր իշխանութենն ,, ։ Իսկ գՃև պաշտպանութեբ բա-
նակի պաշարողաց ամրոցին յիշէ Յովհաննէս կաթողիկոս
յաւելն վասն պաշարման ամրոցին Բիւրականու յայլազ-
գեաց. “ Այսպարափակ եղեալ չուրջանակի լեգեռն հեռև-
ակ զօրուն , և Թիկնապահ նոցա լեալ հեծելազօր վա-

ուելոյ գնդին ի մէջ անցելոյ, այսուհետեւ չահատակելին գազանաբար ի վերայ արձակեալ, ամբոխին Իւրականու։

ՅՕԴՈՒԱԾ Դ

Չինուորական զգեստք։

Ա ՐՈԴՈՏՈՍ, որպէս յիշեցաք ի վերոյ, յեօթնեւորդ կիրսն, սկսեալ ի 61. գնոյ յիշէ զամենայն գունդս Քը-սեբըսի Ժողովեալ ի զանազան ազգաց և ի ժողովրդոց. և ի նշանագրելն զտարազ զինուորական զգեստուց նոցա և գլխարկաց, վասն գնդին Հայոց միայն այսչափ ինչ յիշէ ի գլուխ 73. "Հայք ըստ տարազու փութագացուց էին զինեալք, գոլով արդարև նոցին գաղթականք»։ Ար կա-տարեալ տեղեկուէ իրացս կամ՝ սուղ ինչ ծանօթս տալ զընդ Հանուր ոմոյ երոդոտոսի որ վասն աշխարհիս մերոյ, որչափ ինչ ծանօթութիւն ընկալայ յընեռնուէն զասս նո-ցա. քանզի նա զմեծ մասն աշխարհին մեծին Հայոց յա-նուն մերձակայ ազգաց անուանէ բազում առիթս. զոր օրի-նակ էն Մարք, Աւորպատականք, Պարսք և այլք. կոչէ նաև յանուն գաւառաց ինչ Հայաստանեայց, որք յայտ է, թէ անուանիք էին այն գաւառաքն ի ժամանակին, և ընդ-արձակ ձգեալք, յորոց զոմանս յիշեցաք յառաջագոյն. որպէս է Սպեր, զոր նա Սաբիր կոչէ։ Իսկ Հայք և Հայաս-տան զարեւմտեան մասն ինչ մեծին Հայոց ևեթ անուանէ, և յաւէտ զմասն ինչ փոքուն Հայոց. վասն որոյ ոչ ի գործ աճի ի գիրս նորա անունս փոքր Հայք, որոյ բնակիչքն խառն էին ի Յունաց։ Զայս այսպէս եդեալ, համարիմք թէ ի բազմապատիկ գունդս քաերքսի՝ նախ ընդ այլով անուամբ յիշէ զգունդն քնիկ մեծին Հայոց, որպէս յիշե-ցաք ի վերոյ. իսկ աստանօր ի գիրս է. 73. յիշատա-կեալ գունդն ընդ անուամբ Հայոց՝ էր գունդն փոքուն Հայոց, խառնեալ գուցէ նաև ի Յունաց անդամօր քնա-կէլոց. որով մարթի ստուգիլ ասելն նորա՝ թէ էին գաղ-թականք փութագացուց. զի մասն ինչ Յունաց՝ի փոքր Հայս բնակելոց՝ գուցէ ևեթալ էին ի փութագացուց։ Ա յսչափ ինչ ծանօթս տուեալ զանկին Երոդոտոսի, յիշեսցուք զզինուորական զգեստս որք յիշատակին ի գիրս մեր։

ՋՐԱՀՕՓ

Ա.յս և այլ երկաթի զգեստը յիշատակին յայս բան Յո-
հաննու կաթողիկոսի, զորս ետ Թագաւորն եգեսացոց Ա-
շոտոյ արքայի յօգնութի նմա. «Ջօր բազում գումարեալ
գրեթէ իբրև օդապարիկ ին երիվարօք, և երկաթ ակուռ
Ջրահէտ, և զարհուրեցուիչ սաղաւարտօք, և լանջապա-
նակ երկաթագամ տախտակօք կրծից, և վահանօք ամրօք,
'ի զէնս և 'ի զարդս և 'ի տեգս նիզակաց վառեցելօք, տայ
զայն ամենայն 'ի ձեռս նորա, զի նոքօք հանդերձ վրէժս 'ի
թշնամեաց առցէ»։

ՊԱՏԵՆԱԶԷՆՈՒ

Ա'ի 'ի զինուց յիշատակելոյ 'ի Թուղթն Դաշանոյ, զոր
ետ մեծն կոստանդիանոս զօրացն մերոց որք ընդ Տրդա-
տայ գնացեալ էին 'ի Հռոմ. «Եւ զէնս և զարդս պատե-
րազմական արի արանց... և սրահանք Պաթենազէնս ան-
գծելի երկաթոյ»։ Յիշատակի և առ Բուզանդայ գ. 20.
յասելն վասն զօրաց ջ. Աբշակայ. «Համակ հեծելազօրք
զրահաւորք Պաթենազէնս, սաղաւարտաւորք, գլօշաւորք,
կամ նշանաւորք բազմաձայն փողոցաքն»։

ՍԱՂԱՒԱՐՏՈՒ

Երկաթի կամ պղնձի սաղաւարտս վարել մերոյն յայտ է,
զի յիշատակի փայլիլ սաղաւարտաց. իսկ զձևոյն գտանեմք
յիշատակութի առ Վարդանայ, յասելն վասն Վահտանգայ
հին Թագաւորի Վրաց. «Որ և Գուրգասլան (կամ Գուրգ-
ասար) կոչեցաւ, որ է Գայլաձիճ (կամ Գայլագլուխ) 'ի
Պարսից բառն. զի ունէր 'ի վերայ սաղաւարտին պատկեր
գայլոյ յատաչիկոյն, և յետիկոյն առիւծու»։ Որ գուցէ
գոյր և 'ի մերս։ Եւ վասն Բաբկայ սիւնոյ յորժամ ել
մենամարտիլ ընդ Հոնանգուր Հայկին՝ գրէ Ստեփաննոս
օրպելեան ժ. Թէ գնէ 'ի գլուխ վահգրկերեան սաղաւարտ
Շապհոյ Պարսից արքայի։ Վասն վիշապաձև սաղաւարտացն
Թուխ ասել և Խորենացւոյն ջ. 37. 'ի գրելն վասն զօրաց
Յունաց՝ զորս Թէոդոս կայսր առաքեալ էր յօգնութիւն
Պապայ արքայի 'ի մեծի պատերազմին որ 'ի Ձիրաւ գաշ-
տի. «Բայց զվիշապացն մանուածս ահագին բերանաբաս-
յուն Թէ ուռուցեալ 'ի փչմանէ օդոյն, ոչինչ ուրեք կարեմ

նմանեցուցանել, այլ միայն իբրև զբաղուն ինչ տգամանդեայ խոնարհիլ ի ծով՝ զբոլանդակ Հակառն Յունաց ի պարսկական զօրսն ,, : Ընդ յիշել և զզինուորական զգեստս նոցա ասելով . " Զօրքն Յունաց վառեալ էին ի վենս ոսկւոյ և արծաթոյ , և երիվարքը նոցա նոյնպես զարդուռ . և էր տեսանել իբրև զպարիսպ ինչ , յորոց յոլովք ի ջրեայ և ի կաշեայ պահպանակաց Հիւսուածս զկարծրութիւն վիմայ բերէին երևոյթս , և ի վերայ նոցա անխալամ գեղք նշանք արձակեալք իբր զսաղարթ ինչ հովանաւոր ծառոց ,, :

Իսկ Թոմա արծրունի էջ . 2 . յիշէ զանազան զգեստս պատերազմականս զօրացն Բուղային , ի խաղալն նոցա ի վերայ Արծրունեաց , այսպէս ասելով . " Որք մերձ առ պարսպօքն զՀակառն վառէին և զմարտն գրգռէին , զզգեստն ինքեանց յատուկից կազմեալ , զոր ի զօրուն Թիւնն Թիւնց ուժոյ բազկաց Հնչեալ և մածուցեալ ընդ միմեանս՝ զորքուն մազոյն Թաղ կոչեցին , զոր ի ջուր եդեալ ծծէ իբրև զսպունգ . զայն զինեալ ի վերայ անձանց սաստկացուցանեն զպատերազմին աներկիւղ մնալովՙի հրոյն տօհրմանէ . և զերիվարսն և զՀեծեալս նոցա զինեալ սպառազինութ , շինծապահս ձիոցն և տաշտս գաւակացն և զանգապանս ի չորս կողմանս ձգեալ , և լանջայն զէն , և բարձրավիզ խրոխտանացն զրահ , և ոտնատրուի փունկալոյն մանեակս զանգակեալս , և մահիկս լուսատեաս ի մէջ Հակառուն կապեալ , և զինս երիվարացն երկաթապատ պնդեալ այլ և աստի և անտի երիվարի փորոյն տախտակագործ գոգեալ ըստ փորոյն չափու՝ մածուցեալ ի ձև վահանի՝ զգործ արուեստի զինուն ցուցանեն : Եւ ինքեանք արկեալ Զբահ զանձամբ , և Սաղաւարտ ի գլուխ եդեալ , Բազպանս ի ձեռս արկեալ , Զանգապանս ի վերայ բարձիցն պնդեալ , Օդ ոտիցն կօշկաձև արուեստաւորեալ , Վահան ի Թիկունս եդեալ , Սուսեր ընդ մէջ ածեալ , Նիզակ ի ձեռին ունելով , Կապարճս և Աղեղունս պատրաստականս զաւակեաւ ի նիւսն ունելով , և Զբերս ոսկեզարդս և արծաթաձոյցս , և կամաթս ընդ մէջ ածեալ , գրօշ և վերջաւորս փողփողեալս՝ սաստառնաձայն հնչմամբ զբուռն դնեցուցանէին . նշանս կանգնեալ , և փողք և քնարք հընչէին , և թմբուկքն դափեին ,, : Ոչինչ յերկուանամբ , Թէ նաև մերքն բազում անգամ ի Հակառէն այսպէս կամ նման սմին զգեստուք զինեալ լինէին :

ՄՈՒԱԳՈՑՆ ԶԳԵՍՏ

Ա. յսպէս ագանիլ զօրաց յիշատակի առ Աստղիկ Ը. 28. "Եւ մանուէլն Աբրաս Թագաւորն կարուց՝ կոչեաց զգունդն իւր ոսնելով,,։

ՅՕԴՈՒԱԾ Ե

Թխ՝ զջրայ։

Ոյր ուրեք յիշատակին՝ի գիրս մեր Թիւ զօրաց, չէն հինչ բազում. որպէս՝ի մեծի պատերազմին, զոր մղեաց մեր Աբրամ ընդդէմ հզօր հսկային, զորմէ ասէ Խորենաց՝ին ։ 13. ածեալ՝ի Մարիբասայ. "Ժողովէ զբազմուն ընտանի արանց քաջաց և աղեղնաւորաց, և որ՝ի տէգ նիզակի կամակարօղք, նորատիք և հարուստք յոյժ և յաջողաձեռնութեն իսկ և երեսաւորք, որ՝ի սիրտ և՝ի պատրաստութիւն իբր Թէ էին՝ոյ հինգ,,. որ է 50 հազար։ Եւ՝ի պատմէլն զարևմտեան նահատակսէ նորա ։ 14. ասէ. "Ասա յարևմուտս շարժեալ՝ի վերայ առաջնոյն ելբէ՝ էին՝ոյ հետևակաւ զօրու, և երկո՝ հազար հեծելովք հասանէ՝ի կողմանս կապադովկացւոց,,. ընդ ամենայն 42 հազար։

Մի միայն բազմուն զօրաց յիշատակեալ յաւուրս Աբշահունեաց՝ էն զօրք ։ Արտաշէսի, զորմէ ասէ նոյն մատենագիր ։ 12. "Հրամայեաց տալ Արտաշէս զօր յարուցանել յարև ելից և՝ի հիւսիսոյ բազում յոյժ, մինչև ոչ գիտել նմա զհամարն. այլ յանցս և յիջևանս քար ըստ մարդահաւն կարկառ նշան բազմութեն Թողուլ,, և՝ի 13. յետագարոս պատմագրէ բերելով, որ ասէ. "Փոքր (է) Աղէքսանդրի և Դարեհի պատերազմ առ Արտաշիսին բազդատեալ. քանզի նոցայն ոչ (՝ի) փուշոյն մաքուր երևէր լոյս տուընջեանն, այլ սա ծածկեաց նետաձգութեն և ստուերացոյց զարեգակն, ձեռագործ գիշեր զնիջորեիս արարեալ.. Վասն սորա և ոչ ուղիք զգեան ստուարացուցեալ՝ն՝ աբբամբն՝ի ձմեռնային նուազուէ իջուցանելով[1]։

1 Քանզի գեաք՝ի ձմերան նուա- ստուարանան սակս յաձախուէ անձրևին, իսկ՝ի գաշնան առատացեալ ըևաց և լուծման ձեանց, որք գոր-

վան զի և զթուցն եղոյց տկար բազմութիւն զօրացն , մինչ զի չափոյ պէտք եղեն առաւել քան զհամարոյ ։

Ցետ այսորիկ առ Բուզանդայ գտանել զբազմութիւն զօրաց յիշատակեալ . զի է . 11 . վասն Վասակայ զօրավարին է . Աբշակայ արքային մերոյ գրէ 260 հազարօք արշաւեալ ի սահմանս Ցունաց , և աւերեալ զամն վեց . իսկ յորժամ ի վերայ Շապհոյ Պարսից արքային Յոյնք , մերս Աբշակ օգնական եղև Շապհոյ . և Վասակ զբ բաւար Աբշակայ՝ տարաւ ասէ զզօրս Հայոց ի Միջագետս . զորոց զթիւ է . 20 . դնէ "Զօրէ֊հաբէաք հպալ զօր կուռ վառեալք , որ ընտիրք և պատերազմողք էին , լի արուեստիւ արուեստաց նահատակութեան ։ Իսկ ի է . 21 . գրէ . "Հանդէս առնէր Վասակ սպարապետն ամենայն զօրաց Հայոց . և գտան հեծելազօր սպառազինք կուռ վառեալք նիզակաւորք համակ վախճառ էին , միասիրտք միաբան միամիտք ։ Այլ մեզ թուի այս ամենայն բարդաբանութիւն Բուզանդայ , կամ զթիւն բիւրն նա այլազգ իմանայ ի գիրս իւր . զի մարթէ ասել թէ ի ժամանակս իւր ոչ փոխանակ տասն հազարի վարէր , որպէս վարի այժմ ։ Նոյն ինքն և ի գլուխս 25 . գրէ ։ան բիւրոյ անկեալ Վասակայ ի վերայ բանակին Պարսից . իսկ ի գլուխս 22 . ասէ վասն Հայոց . " Ապա և սոքա բազում զօր յաշխարհէ ժողովէցին , զի ոչ գոյր հաւասար բազմութեան ։

Իսկ յետ բառնալոյ Թագաւորութիւն Աբշակունեաց չի շատակի այսքան բազմութիւն զօրաց . զի զօրք Վարդանանց յիշատակեալ առ Եղիշէի ի Թղթ . 174 . ասի՝ աւելորս լինչ է . " Եւ լինէր , ասէ , հանդէս հաւաքուն վախճառն և վեց հազար այր ընդ հեծեալ և ընդ հետևակ ։ Ցաւելոյս Բագրատունեաց իբրև մեծ ինչ պատմի առ Թոմայի արծրունի է . 5 . Թէ ։ Սմբատ արքայ ի խաղալն ընդդէմ Աշմաստայ բռնաւորին , " որպէս ասեն , ասէ , եղև Թիւ զօրուն գումարելոյ իբրև հաբէաք հազարաց ։ Նոյնպէս և առ Մատթէոսի ըէ . յաւելոյս է . Աշոտոյ ոտրմածին . " Եւ յայնմ աւուր լինէր հանդէս զօրաց նորա հաբէաք հազարաց վաւելոց , ընտիր ընտիր արանց ի մարտ պատերազ-

ծելով ուղխս ի գլուս լքանեն , և առաւօտեայ իբրեանց զգետան սառուցեալ ։ Զայս ի գլխ առնու պատմագիրն ծանուցանել զանչուր բազմութ զօրաց Արտաշիսի ձևով չա փազանցութեամբ , թէ այնչափ անհամար էր Թիւ զօրաց նորա , մինչև ի ճանապարհորդելն բանակի նոցա ուր և հասանէին , ընդելոյն միայն իբրեանց ի գետոց՝ այնպէս նուազեցուցանէին զգետս , որպէս տեղոյ են նուազել ի ձմերան ժամանակի ։

մի անուանեաց և քաջ կորովեաց ,, ։ Կան և այլ յիշատակութիւնք բազմութեան զօրաց առ մատենագիրս մեր. զոր օրինակ յաւուրս Ամիվիկ կայսեր, յորժամ առնային թագաւորք Հայոց զօրս ժողովեցին առաքել յօգնութիւն նմա. « Բանակ հարեալ, ասէ Մատթէոս խիճ. ի Հալքայ գաւառին արք իբրև ռազմառն հապաղ ,, ։ Նոյնպէս և առ ընդարձակողին Սամուէլի ի նիւ. ի գրելն վասն Ամիվիկ կայսեր՝ թէ հարկատու արար երեք հարիւր քաղաք , եառ քառասուն հազար ձի և ջորի , "Յղեաց երկու հազար ծառայ և տասն հազար ձի Հայոց արքային Աշոտոյ. զի Աշոտ տուեալ եր յօգնականութիւն նմա ռազմառն հապաղ ձիաւորս , և այլ բազում հետևակս ,, ։

Ա՛յլ ի բառնալ թագաւորութիւնեաց՝ ողբայ Լաստիվերտցի ժէ. ասելով. Ո՞ւր զօրացն բազմութիւն, որ իբրև զամպ խտացեալ առաջի նոցա զօրէն գարնանային ծաղկանց գունակ գունակ հանդերձիւքն փայլելին , ահա ոչ են , և ոչ ևս երևին ,, ։ Բայց քան զբազմութիւն թուոյ զօրացն առաւել ողբալի է թուլութիւնն մնծեալ ի վերջին ժամանակս Բագրատունեաց, զորմէ ողբայ Մատթէոս ձա. ասելով. " Յոյժ երկիւղէր Յոհաննէս (Թագաւոր) ի Կաշտոյ (եղբօրէ իւրմէ), զի էր այր քաջ և հզօր. և եղև վէրն մահառնին Աշտոյ՝ Թուլամորթեցւոյ զօրքն Հայոց , և առեցին զաւրուեստս պատերազմի. մնան ընդ լծովքն ի ծառայութիւն ազգին Հոռոմոց, նստան ի գիւղս քուս , սիրեցին զաւրքուստ և վերջս գուսանաց , հեռացան ի միաբանութենէ միմեանց , և յօգնութենէ իրերաց ոչ հասանէին ,, ։

Յո Թէպետ զթիւ զօրաց տէրութեանէ Բագրատունեաց այսպէս նուազ գտանեմք , բայց զթիւ զօրաց առանձին իշխանին ուրուք երբեմն յոլովագոյն գտանեմք՝ հայելով ի փոքրիկ սահմանն նորին . զոր օրինակ էր զօրք իշխանին Սմբատայ , զորմէ գրէ Մատթէոս Ռհէ. Թէ քանի Թոռնիկ տէրն Սմբատ իբրև լուաւ զգալուստ Փիլարտոսի բազմութեանէ զօրաց ի վերայ իւր իբր ի չիւս Թուխն. 1072 . Ժողով զամենայն Սասուն յհասն հապաղ հետևակաց , և ինչ հապաղ ձիաւորաց . և գայր ի Ճապղջուր ,, ։

ՅՕԴՈՒԱԾ Հ

Գոնդ՝ զօրաց ։

Վ Ր Ան Հ Ի զանազան անուամբք գունդք յիշատակին 'ի գիրս մեր, առանձին և զնոսին նշանակեսցուք աստանօր, որոց և իւրաքանչիւրոցն ուրոյն նշան ունել յայտ է 'ի պատմուէց, նաև 'ի բանից աստի Ագաթանգեղոսի յԹէ. " Երիվարօք, զօրօք և նշանօք, իւրաքանչիւր գնդաւ ։

ԱԶԱՏԱԳՈՒՆԴ ՎԱՀՑ

Ա յսպէս կոչի առ Թումայի արծրունեայ ՟Ը. 15. գունդն զօրաց Աշոտոյ արծրունւոյ. զի ժողովեաւ էին նոքա միայն յորդւոց նախարարաց, նմին իրի և Ազատ կոչի ։

ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԳՈՒՆԴ

Յիշատակեալ առ Ռուզանդայ ՟Ը. 20. "Վասակ (զօրավար Աբշահայ Հայոց աշքային) հանգերձ ամենայն պատերազմող զօրօքն Այրարատեան գնդաւն էլանէր անկանէր 'ի վերայ բանակին ։՝. զոր մարթ է իմանալ և փոխանակ համօրէն այրարատեան նահանգին զօրաց ։

ՄԱՏԵՆՈՑ ԳՈՒՆԴ

Կ ոչնակես առ Բուզանդայ ՟Ը. 8. "Ապա հրաման ետ ասքայ խոսրով Դատաբայ նահապետի Բզնունեաց, գուգազ հանել յաշխարհէ աւելի քան զչափն և զհամար զօրսն Մատենից գնդաւն ... ։՝ Գուցէ ունէր այս խումբ գնմանօրէն ինչ հռչակաւոր զօրու Պարսից Գոնդ Մատեան կոչեցեալ, իբր անմահ մեռօղ ընդդէմ մահու ։

ՄԱՐԴՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՆԴ

Յիշատակեալ առ Ղազարայ 108. "Եւ այլ գոնդս 'ի զօրացն Մարդպետական այրուձիոյ. փոյթք 'ի գործ պատերազմին առաքինութեանց ։՝ Եւ 'ի 282 գրէ. "Աւաքեաց և

մանիկոնեանին Վահան .. զՊահակ ի Մարզպետական փոքն ,, : Ա-յս գունդ յայտ է Թէ էր ի զօրաց Մարզպետ իշխանին։

ՄԱՐԶՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՆԴ

Իբ Մատթէոսի ընդ. «Զայսմ ամի (նճ՞) զօրաժողով արար զօրապետն Հայոց վԱրշակեան փոռնէն քառասուն և հինգ հազար արանց քաջաց զարդ ի յարքունական գնդէն . և ժողովեցան ամենայն իշխանքն աշխարհայ տանն Հայոց առ սուրբ Հայրապետն Ներսիսէ ,, : Ա-յլ Թուզօրացս Թուի անցանել քան զչափ, եթէ ի մարզպետունի ցեղէ ևեթ , որպէս ասի , էր խմբեալ ։

ՍԱՂԱՐ ԳՈՒՆԴ

Յիշատակեալ առ Թոմայի արծրունւոյ էջ . 6 . և էջ . 4 . «Եւ Դաւիթ փոռնէ Սաղար ,, . որ եկն յօգնութիւն Բագա-րատայ իշխանին Տարօնոյ պատերազմել ընդդէմ Մուսայի Հագարացւոյ : Իսկ առ Ասողկայ էջ . 8 . այս գունդ զօրաց Հայոց յիշատակի ի քանակին Յոհաննու Ձուկիկի կայսեր Յունաց՝ կիւռաժան կոչեցեալ, յորժամ գնացեալ էր կը-ռուել ընդդէմ Բուլղարաց . «Իսկ Թագաւորն, ասէ , ամե-նայն հետևակ զօրուն Հայաստանեաց անշարժ մնացեալ ի միջոյն ձակատուն , ուր քաջապէս նահատակեալ փոռնէ հետևակացն որ Սաղարն ասին , առաջի Թագաւորին , պա-տառեալ զվահանափակն որ ընդդէմ նոցա, ընդ Թագաւո-րին ամենայն հեծելագունդ զօրքըն մնեալ .. ի հնազան-դութիւն նուաճեաց զազգն Բուլղարաց ,, : Ա-յլազգ գրի այս անուն առ նմա ի էջ . 22 . «Ձի էին նոքա երկու եղ-բարք որք Կոմնաճագքն կոչէին . անուն երիցուն Սամուէլ յազգէս Հայոց ի գաւառէն Դերջանայ , զոր ընդ փոռնէս Սաղարեանն տարեալ էր զնա Թագաւորն Վասիլ ի Մա-կեդոն պատերազմել ընդ Բուլղարացն ,, :

Յայտ է ի նախագրեալ բանից Ասողկայ՝ Թէ Սաղար էր գունդ հետևակ զօրաց . գուցէ որպէս Թիւնապահ սա-լարի՝ այսինքն զօրավարի , որ և սպասալար կոչի . որ Թէ ի զօրս մեր և Թէ յայլոց՝ սովին անուանէք յիշատակի . զի առ Վաղարայ 223 . յիշատակի ի զօրս Պարսից . «Սուրէն սպահաւ և Աղմներսէհ փուշտիպանացն Սաղար . . . այլ հրամանատու և աւագ զօրուն փուշտիպան Սաղար էր ,, : իսկ առ Թոմայի արծրունւոյ էջ . 1 . ի զօրս Բուլղարի արա-

բացուց յիշատակին « Սաղաբ » միաձամարտիկը » ։ Բայց զՆերսէս անուանս Մեսրոպ ժէ. Պատիւ ընծայել տալով. "Որ ըստ անուանց նոցա Սաղաբ և Ներսէս անուանեն » ։ Ըստ այսմ վանն Հեռեակ զօրաց կամ զօրավարի նոցա ա. տացեալ իմանամ, զոր առնէիբէի 167. Մինչեւ ըստ Պար. սից Հազարապետ Հարցանէ վանն զՆդին Վարդանայ. "Որ պ' ի նոցանէ Սաղաբ լինիցին, և որ զօրագլուխ յորմէ կողմանէ յոգամմանիցէ » ։ Եւ առ Թոմայի արձրունեց Ճ. 2. "Երկու ոմանք ' է Սաղաբայ սուրհանդակաց Եղբարք միաճանց հասեալ ' ի կիրճս ձորոյն . . մատնեն զայլազգիսն՝ բազմամ վերս ' ի վերայ եդեալ » ։ Յայսմանէ և Դրիգոր Երեց չարունակող Մատթէի ' ի Թիւն մղէ. զՀեռեակ լինելն նոցին ցուցանէ յասելն վանն զօրաց Թուրքաց. "Եւ բազումք Սաղաբայի հետիոտս ընթանային » ։

ՏԱՆՈՒՏԻՐԱԿԱՆ ԳՈՒՆԴ

Յիշատակեալ առ Յոհաննու կաթողիկոսի. "Խնդրէ Մօ. բիկ ' ի Խոսրովայ զՄէլքագեաս Դարայիւ և Մծբնայ հան. դերձ, և ' ի Հայոց զայն աշխարհ՝ որ Տանուտիրական փոնդն անուաներ » ։ Իակ Թէ ընդեր Տանուտեր կոչեին զոմանս ' ի նախարարաց, գրեցաք յերրորդ ընդհանուր գիտելիս որ յաղագս նախարարաց. այժմ ինայ մեզ քննել վասն գնդին՝ Թէ ընդեր կոչ տանուտիրական ։ Ինձ Թուի այս. պէս կոչել զայն գունդ զօրաց՝ զոր տանուտերն կամ պլնա. ւորն իւրաքանչիւր տոհմին նախարարաց էր ժողովել. այլ քանզի աստանօր Յոհաննես կաթողիկոս աշխարհին սեփականէ զայս անուն, ծանուցանելով Թէ յաշխարհիս Հայոց էր տեղի ինչ որոշ՝ որ տանուտիրական գունդ ա. նուաներ, նորին աղագաւ Թուի առանձին ինն գունդ այս. պէս յորջորջել, և ' ի նորին անուն նաև տեղին անուա. նել ։ Ասյմ ' ի դէպ գտանեմք զտեղին կամ զաշխարհն Ոստանկայ, և արքայորդւոց . որոց սեփական տեղի, որ. պէս գրեցաք յառաջագոյն, էր Ծոփք գաւառ յորրորդ Հայ. ոց և Հաշտեանք և Աւբերանի . և զի բնակիչք ամենե. ցուն սոցա գոլով արքայազունք՝ էին տանուտեաբք երե. կրին, և զի գոլով նաև կարգեալք ' ի զինուորութիւն ար. քունի պահպանութիւն կոչէին Գունդ արքունական կամ Ոստանիկ. վասն այսորիկ ' ի հարկէ և ' ի բերանս ոմանց կոչեցան և Տանուտիրական գունդ. և յանուն զնդին նաև աշխարհ կամ երկիր բնակուն նոցա անուանեցաւ այսպէս

ոչ միայն առ Յոհաննու կաթողիկոսի, այլ նաև ուրեք առ Թոմայի արծրունեայ է. որ էջ այլ երկիր՝ ի գաւառաց աշխարհիս Հայոց։ Ա յամ յարմարի և դիպըն զոր ցուցաք նէ բան Յոհաննու կաթողիկոսի. զի աշխարհ այսր գնդին որ էր՝ ի ջորրոդ Հայս, միանայ ընդ Միջագետաց. վասն որոյ՝ ի դէպ էր Մօրիայ խնդրել զայն՝ ի խոսրովայ, առ՝ ի կացուցանել զայն իւր երկիր միաստանի կցեալ՝ ի Միջագետաց մինչև ցիտքր Հայս, որ իւրն էր։

ԱՑՐՈՒՅՑ

Թէպէտ գունդ անուամբ ոչ յիշատակի, բայց գիտեմք այսպէս անուանեալ՝ ի մերոց զգունդն հեծելազօրաց. զոր օրինակ բացատրելով յիշատակի յայս բան Թոմայի արծրունեայ՝ ի գրելն վասն Աշոտոյ վաստպրականի յաւուրս իշխանին Բագարատայ. "Եհաս՝ ի վերայ նորա վաւեալ զինու սպառազէն երիվարաց, ընտիր հեծելովք Այրարատեայ,, Այս զօրք բազում ուրեք յիշատակին առ Եղիշէ և առ Ղազարայ. յորում երևելի էին մերքն, և ընդ ձեռամբ մերոց իշխանաց էր նաև՝ ի ժամանակին՝ յորժամ անկեալ կային ընդ ծառայութեամբ Պարսից. "Թէպէտ և զամէն յաքբունիս Պարսից երեթայր, սակայն Այրարատեայ Հայոց բովանդակ՝ ի ձեռս նախարարացն առաջնորդեր՝ ի պատերազմի,,. որպէս ասէ Եղիշէ՝ ի թղթահատմանն 12։

ՅՕԴՈՒԱՆ Ե

Պաշտօնեայ զինուորութեան։

ՍՊԱՐԱՊԵՏ

Սպանցեալ՝ ի Սէֆէհ բառէն Պարսից, նշանակէ առ մեզ Զօրապետ, Զօրավար, խառն՝ ի գործ ածեալ՝ ի մերոց ոչ միայն վասն հեծելազօրաց, այլ նաև հետևակաց. "Կոչ Մուշեղ, ասէ Բուզանդ է. 1. լիներ զօրավար Սպաբաղիս Հայոց փոխանակ Վասակայ հօր իւրոյ,, ես է. 3ղ. "Պայս կացոյց Թագաւորն Վարազդատ՝ ի գործ զօրավարութեանէ սպարապետութենէն զԲատ նահապետն Սահառունեաց տոհմին... և էր նա Սպարապետ փոխանակ նորա զօրավար

ամենայն Հայոց,, : Իշխեալ սպարապետին ի վերայ ամենայն զօրաց Հայոց՝ յայտ է ի բանէ աստի Ագաթանգեղոսի չգիտ. " Առաջնոյն անուն Արտաւազդ որ Սպարապետ էր ամենայն զօրացն Հայոց մեծաց ,, :

Բայց այս անուն չէր սեփականեալ գլխաւոր զօրավարին, այլ նաև երկրորդականաց. վասն որոյ առ Խորենացւոյն գտանելի յիշատակեալ՝ Սպարապետ արևելեան և արևմտեան զօրուն, Հարաւային և հիւսիսային զօրուն ուրոյն ուրոյն : Առ զանազանութիւն՝ Խորենացին ուրեք չ. 6. նոր անուն ի կիր առնու Մէծբնեցի կոչելով. որ էր ամենայն Հայոց զօրավար. և Թումա արծրունի ա. 9. պիսուրան արծրունի կոչէ " Գլխապետ զօրավար զօրու, և միահեծան թագաւորութեանէ Հայոց մեծաց ,, : Իշխանութիւն նորա էր մեծ, մինչև յաւուրս յորս ոչ գոյր թագաւոր, սպարապետք կամ զօրավարք երբեմն կառավարէին զաշխարհն իբր գլուխ ոչ միայն զօրաց՝ այլ և աշխարհին. զոր օրինակ է տեսանել ի սուրբն Վարդան, ի մեծն Վահան մամիկոնեան նախ քան զլինելն իւր մարզպան, ի Մժէժ գնունի, ի Թէոդորոս ռշտունի և յայլս : Յայն աւուրս ոչ լինէր սպարապետ առանց հրամանի Պարսից արքային, զոր մէ տես ի Խորենացին չ. 51. և կամ առանց հրամանի կայսեր, այլ հրամանաւ նորին, որպես երկն և Թէոդորոս. "Բայց Հայրապետն մեծն Կերսէս (ասէ Յովհաննէս կաթողիկոս, որ է չ. Կերսէս), հրաման Հայցեալ ի կայսերէն Կոստանդնէ, կացուցանէ զօրավար Հայոց զԹէոդորոս Բռշտունեաց տէր ,, : Սպարապետուէ գործ՝ էր իբր սեփականեալ ցեղին Մամիկոնէից. բայց և բազում անգամ ի Բագրատունեաց ցեղէն կացին, որպէս գրեցաք ի պատմութեան այնր ցեղի. և երբեմն ի Ռշտունեաց :

ՍՊԱՍԱԼԱՐ

Իբրեալ ի Սալոյ կամ որ նորին է Սաղոյ բառիս. նշանակէ պէտ Սաղարաց, զորոց տես ի վերոյ. այլ պատմագիրքն մեր Սպասալար կոչեցին զՀազկաւորն Զաքարէ, որ էր սպարապետ զօրաց Թագուհւոյն Վրաց Թամարայ գստեր Գէորգայ :

ՍՏՐԱՏԵԼԱՏ

Յունական անուն զօրավարի [1], որով կոչեաց Թէոդոս կայսր և զմերն Վարդան կացուցանելով զնա սպասբարեաց. «Վասն քո (ասէ նա ինքն՝ գրելով առ սուրբն Սահակ, առ Խորենացւոյն Ք. 57.) արարաք Սպարապետ զՎարդան զորդի որդեացելոյդ քո»։ Վասն որոյ և՝ի հետևեալ գլուխն և՝ի 67. նովին անուամբ կոչէ զՎարդան։ Այսպէս և Գազաւոն որդի Սպանդարատայ, քանզի՝ի բաժինն Յունաց եղև զօրավար յաւուրս Ք. Խոսրովայ, Ստրատեղատ կոչէ զինքն՝ի Թուղթն իւր որ առ Խոսրով և Խոսրով զնա. առ Խորենացւոյն Ք. 48։ Եւ Բուզանդայ Ե. 2. սովին անուամբ կոչեցեալ գտանեմք և զՄուշեղ. «Ապա Մուշեղ որդի Վասակայ Սպարապետին Հայոց մեծաց՝ ընտրեաց իւր արս ընտիրս»։ Թէպէտ և այլուր բազում անգամ կոչ զօրավար և սպարապետ Պապայ աքեայի։

ՀԱԶԱՐԱՊԵՏ

Այս անուն Թէպէտ՝ի զինուորական դասին է առեալ, որպէս յայտ է՝ի կազմուածէ բառին, որ է ասել՝ պետ հազարաց, այլ ընդհանուր առմամբ նշանակէ զնա որ կարգեալ է՝ի վերայ իրաց առաւել քաղաքականի՝ քան թէ զինուորականի։

ՀԱՐՒՒՐԱՊԵՏ

Ինուն՝ի գործ ածեալ՝ի զինուորութիս հռոմայեցւոց և այլոց, և ոչ ուրեք յիշատակեալ՝ի զինուորուէ ազգիս։

ԿՈՂՄՆԱԿԱԼՔ • ՍԱՀՄԱՆԱԿԱԼՔ

Ո այսցանէ տես՝ի գլուխն Կառավարութիւն ուր քանք էջն զարտաքին նախարարաց. զի յորջորջումն անուանցդ առաւելապէս նոցա ընծային, որք պաշտօնեայք էն իրաց տեղւոյն աշխարհի։

1 Զոր Յունք Սէրպէնտէս կոչեն, Լատինք Թարգմանեն Մոֆեսբես զբաց, և միան հնծելազօրաց՝ ըստ ա-սէլոյ Ջոխմոսի գիրք Ը. զորոց զթիւ որդիք նորա բազմացուցին. մինչև թէոդոսի սահմանել հինգ և այլ ևս մոգխտրոս զօրաց։
սահմանեալ եղև, մին՝ մոգխտրոս (զա-սինեբէն Մաձիդէս) հետևակ զօ-

ԳԻՐՔ ՀՆԳԻՑՔԱՅԱՆԵՐՈՑ

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

ՑՕԴՈՒԱԾ Ա

Սովորութիւն ի պէսպս և ի հանդէս թագաւորի ։

Ա. Թագն ։

Թագաւորական թագն պահել լինէր ի գանձատանին, յիշատակել առ խորհեցաւքն ը. կդ. "Մըտեալ Սմբատայ պարսկահպատն յուզէր պծանչն. և գտեալ պթագն Սանատրկայ արքայի՝ դնէ ի գլուխն Ափրաշիսի ,, ։ Ա՛յլ Բուզանդ Ե. 6. յիշէ զորոշեալ տեղի ինչ վասն թագի, կամ ի գանձարանին և կամ արտաքոյ, յասելն. "Մուծին զնա ի նեղբս ի տունն պահատճախան ... այսինքն ուր թագ արքունի դնեին ,, ։ Ի վերջին ժամանակս այս թագ թագաւորական, զոր յանուն մեծին խոսրովու կոչէ Կիրակոս, առ ապահովութեամբ ի նեղս մինչև յաւուրս Ռուզուգանայ տիհնոջ՝ որ յերեքտասանեերորդ դարու թագաւորէր ի Վիրս. խակ ի մեռանիլ նորա յաջորդ նորուն՝ զոր մանչալ թագաւորք նստուցին, ի հրամայելոյ նոցա առաքեաց առ զնոն թագաւորաց. "եթէ զգահոյս թագաւորութեն, ասէ, յերիս բաժանեալ ըստ թագաւորական և զանգին, և պթագն հրաշալի զոր ոչ ունէին այլ թագաւորքն, զոր խոսրովու լեալ մեծի հօրն Տրդատայ արքային Հայոց. և անդ ինայեալ գաղտակա-

նուԹէ վասն ամրուԹէ տեղւոյն, և 'ի Թագաւորին Վրաց անկեալ և մնացեալ մինչև ցայսօր։ Զայն և զայլ պատուա-կանս և 'ի գանձուցն առաքել զնմին (ԹաԹարաց սահմա-նեաց), և զայլս բաժանել 'ի վերայ ինքեանց, զոր եկեալ արար այնպէս (ԴաւԹի որդի Աշչային յաջորդ Ռուզու-դանայ) միջնորդուԹեամբ Աբաղին որդւոյն Խանէի ։։ ։ Ի ժամանակս քրիստոնէուԹե՛ն 'ի գլուխ Թագին խաչ լեալ ցուցանէ այս բան Գրիգորի մագիստրոսի յոտանաւոր ներ-բողեան խաչին.

"Աբբայիկ մեր առաջին՝ որ զհակառակն անդրա-դարձեալ,

Պահակ արքայական՝ Թագաւորաց 'ի գլուխ եդեալ ։։

Բ. Խոյն Խափաւորական։

Յիշատակի այս առ Խորենացւոյն է. 34. "Ցղեաց առ Աբգէ, զի արասցէ նմա խոյր բեհեզեայ անկուածով ոսկւոյ, որպէս յառաջադոյն առնէր Հօրն նորա ։։ Ա՛լ է սա 'ի Թագէ, և Թուի լինել վասն դնելոյ 'ի տան ։

Գ. Հանդէս Խափարոնեան ։

Ո՛չ հանդէս ԹագադրուԹե՛ն միայն զերրորդի Աշոտոյ ողորմածին գտանեմք յիշատակեալ սակաւուք առ Մատ-Թէոսի, որ 'ի լե. ասէ. "Հարկաւորեալ կոչեցին զամե-նագովելին զտէր Յովհաննէս կաԹողիկոսն Աղուանից, և քառասուն եպիսկոպոսունք ընդ նմա. և մեծաշուք իշխա-նուԹե՛ կոչեցին զՓիլիպպոս Թագաւորն Աղուանից... և յայնմ աւուր եղև ժողով ահագին մեծ 'ի քաղաքն Անի, որ եղև այժմու ժամանակիս Թագաւորանիստ քաղաք Հայ-ոց. և յայսմ ամի օծաւ արքայ Աշոտ 'ի յօծումն Հարց իւրոց, և նստաւ 'ի գահոյս առաջին Թագաւորացն Հայոց ազգին... եւ լուեալ զայս ամենայն շրջակայք ամենայն Թագաւորք ազգաց՝ Աղիսազոց և Յունաց, բաբելացւոց և Պարսից, տուրս և սեբս հանդերձ պատուական ընծայ-իւք յուղարկեին 'ի փառաւորուն Հայոց Թագաւորէն ։։ ։ Բայց ուրեք ուրեք ընԹեռնումք յաւուրս Բագրատու-նեաց 'ի Յունաց կայսերաց առաքեալ Թագ արքայական առ 'ի Թագաւորեցուցանել զմեր Թագաւորն, և երբեմն յամիրապետաց և յամիրայից արաբացւոց։ Իսկ Բուզանդ Յիշատակէ և Պարսից, 'ի գրելն է. 16. վասն է. Աբշակայ

մերոյ աղբեայն, Թէ կայեալ ի Շապհոյ Պարսից աքբայէ՝ «Մեծարեցաւ ի նմանէ բազում պատուով և մեծաւ փառօք, բազում գանձու ոսկով և արծաթով ամենայն մեծութեամբ Թագաւորութեան. և իբրև վերայոյր օրպէս զորդի գրգեալ եղև ի նմանէ... և ի միասին ի միում տախտի գահոյն ի ժամ ուրախութեան բազմէին, զմիագոյն զմիանշան զհամահանդերձ զարդու. և զմիօրինակ զձագն օրըստօրէ ինքեան և նմա Թագաւորն Պարսից զարդ պատրաստեր. զոյգ երկոքին ի միասին օրպէս զերջարս հարաւատս անբաժինս յղփայեալք էին ի միում ուրախութեանէ»։

Դ. Օձոյն Խափարն։

Ի հանդիսի Թագադրութեանէ լինելոյ և զօճոյնն վասն բագրատունի Թագաւորաց յայսմանէ խմանամբ ի նահապետէ բանից Մատթէոսի. բայց վասն արշակունի Թագաւորաց այս բան Մեսրոպայ միայն ակնարկէ, որ ի Թիւն իջ. ասէ Թէ Մանուէլ մամիկոնեան զօրավար կարէր սպանանել ի պատերազմի զՎարազդատ Թագաւոր, այլ «ոչ սպանանէր, զի օձոյն Թագաւորի ունէր»։ Իսկ վասն առաջին Թագաւորին Բագրատունեաց ա. Աշոտոյ այսչափ ինչ գրէ Յովհաննէս կաթողիկոս. «Կալեցաւ ապա և անդ մեծ հայրապետն Գէորգ, և զՀոգևոր օրհնութենէն զոհվութենէս աստուածայինս ի վերայ կատարեալ, փոխանակ օծմանն սրուակի իւղոյն՝ պսակէ զնա Թագաւոր ի վերայ ազգանազեան ազին»։ Յայսմանէ և գրէ Վարդան վասն ա. Սմբատայ. «Իսկ Սմբատ առեալ զպատուէն (Թագաւորութեան) շինէ զսուրբ Փրկիչն Յերազգաւորն՝ որ է Շիրակաւանին, ուր և օձոյն իսկ»։ Գտանի յիշատակ ինչ օծմանն և վասն Թագաւորաց Ռուբինեանց, զորմէ այլուր։

Ե. Երդումն հաւատարմութեան։

Ո երդումն հաւատարմութեանէ երդնուլ ի հանդիսի Թագադրութեանէ յիշատակի յայս բան Կիրակոսի, զոր գրէ վասն վերջին Գագկայ Թագաւորի. «Ընդ յետ մահ Հուան Յովհաննէսի՝ որ և Սմբատ՝ միաբանեալ իշխանաց և զօրացն, յաւետ և պատրիարգն Պետրոս, Ժողովեցան առ դրունս մեծափառ կաթողիկէին Անւոյ. և կացուցանէին զԳագիկ Թագաւոր զեղբօրորդին Յովհաննէսի. և չերդմանս տրթնալ ուրախից միաժառութեանէ ծառայել նմա»։

Ջ. ԿԵՆԴԱՆԱՓԷՐ ԼԱՓԱՏԱՐՒ ։

ՕԿԵՆԴԱՆԱԳԻՐ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՆԱԽԱԲԵԼՈՅ ՍՈՎՈՐՈՒԹԵՂ ցուցանել այս բան Յովհաննու կաթողիկոսի՝ ի պատմուճանէ Թագաւորութեանն։ Աշտոյ արքայի. "Դառնան յեկեղեցին սուրբ, և հայրապետին Գէորգ ընդ նոսա. և անդ աւետարանեալ՝ ի վերայ գնուիրական աղօթից, և անեալ՝ ի գիծս և՝ ի գիրս և՝ ի նկարս տեսականս զսակաւամուկ զգեցուիցեն և եղեալ՝ ի գլուխս զԹագ Թագաւորութեանն նորա"։ Զի թէ սովորութիւն էր նկարել զկենդանագիրս կաթողիկոսի, ապա և առաւել զկենդանագիրս Թագաւորի ։

Է. ԹՈՒՐՔ ԼԱՓԱՏԱՐՒ ։

Հաւհալուսնի անուանեալ Թուրն Տրդատայ արքայի՝ պարգևեալ՝ ի մեծէն Կոստանդիանոսէ, յիշատակեալ՝ ի Թղթին Դաշանց, և պահեալ՝ ի լեառն Սեպուհոյ, յիշատակի՝ ի Շարակնոցի և առ Վարդանայ աշխարհագրի, զոր մէ տես՝ ի մեծ Հայս՝ ի Թղթ. 5։

Ը. ՍԱՓԱՈՅՆ ։

Սափաւոյնի արքային Տրդատայ յիշատակի առ Կիւրակոսի յասելն. "Ի գիւղաքաղաքէն Դաշնոյ, ուր զարմանալի Սափաւոյնն է Տրդատայ"։ Որով գուցէ իմանայ զԹագուհոյն նորա զոր յիշէ անդէն։

Թ. ՉՓԵՍՈՓ ԵՒ ՈՒՐ ԿԱՆՊԵՒՉԱՒՔ ։

Ի յաղթիկ էին զոր ետ կայսրն Կոստանդիանոս մերոյս Տրդատայ, յիշատակեալ՝ ի Թուղթն Դաշանց յասելն. "Օժտեցաք զսա (զՏրդատ) կայսերական զարդուք և զինուք մերովք, արքունադրոշին նշանաւոր կառաջի, ծովային օգաթռիչ երիվարօք ոսկեսարօք, սուսերօք հաւհալենօք, և նիզակօք վիշապամաւօք"։ Ի Թուղթն Լամբրոնացւոյն առ Աւետ Թագաւոր՝ ի զգեստուց նախնի Թագաւորացն այսոքիկ անուանք յիշատակին, Թիպետ և անծանօթք ասնուանք են. "Դիք Շապուհ որպէս զձեր նախնիքն. աձեւ յուցէք գՀերս և զմուրս զինչ ձեր Հարքն. զգեցիք Դռռաւոյն և Թաւ... հեծէք՝ ի Սափրեալ երիվարս Ճռռաղով"։

Աւ. Լաստիվերտցոյն Ճ. յիշատակին շուք և հանդերձանք առհասարակ Թագաւորացն Բագրատունեաց այսպէս. " Խակ Թագաւորն յառաւօտիւնն յորժամ 'ի քաղաքէն ելանէր՝ զօրէն վեցայի որ ելանէ յառագաստ իւրմէ, կամ որպէս տուընջենային արուսեակն որ 'ի գլխոյն արա- բածոց բարձրանալոյն զանհնայն տեսանելիս յինքն ձգէ, այնպէս և նա պաղատալոյնք փաղփուն հանդերձիւ, և մար- գարտախուռն Թագիւն զանհնայն մարդ 'ի տեսուԹէն և 'ի զարմանս յուցանէր. որ և սպիտակամազ նժոյգ ոսկեզօծ զարդիւք առաջի ընԹանալով 'ի ձառագայԹից արեգա- կանն որ վրայվայ հարկանիւք՝ շլացուցանէր զտեսողացն տեսանելիս։ Խակ զօրացն բազմուն խուռն առաջի ընԹա- նալով զօրէն ծովային ալեացն զիմեանս կուտակելով,։

Յորժամ Մանուէլ զօրավար իբր Թագաւորահայր լեալ որդւոյ Պապայ արքային՝ էանց 'ի հպատակուԹ Ըսպա- հոյ Պարսից արքային, և սորա պատուելով զնա, ասէ Բու- զանդ Ե. 38. առաքեաց որդւոյ և Մանուէլի Թագ. " Սոյնպէս ետ տանել զԹագաւորական պատմուճանին, սամոյր մի և զգլխոյ պատիւ գարգմանակ ոսկի արծաԹ, ու 'ի պատիւ գլխոյ 'ի վերայ գագաԹանին 'ի Թիկանց ար- ծուոյն՝ հանդոյգք Թագի կապեալ աշխարաւանգ հան- գոյց, և լանջաց պատիւ՝ ասիլզակ, որպէս օրինք են ունել Թագաւորաց. և չիկակարմիր խոպան, և 'ի վերայ խոպանին արծուիչան և սրահակս մեծամեծս և կապուտակ երկ- նագոյն հովանոցս։ Եւ ոսկի սպաս տաճարիւն առաքեր սպարապետին Մանուէլի. և տայր նմա յիւրմէ ձեռանէ իշխանուԹէ մեծ 'ի վերայ աշխարհին Հայոց,,։ Յոհաննէս կաԹողիկոս յիշէ զօրս առաքեաց ամիրապետն առ արքայն ։։ Սմբատ. "Երեւելի զգեստ արքունական, և Թագ ար- քայական, և կամար ականակոյտ 'ի Համակ ոսկւոյ, և սուսեր պատուական, և երիվարս իբրև օդագնացս իմն կազմեալ ոճով և զարդուց,,։ Ապա յիշէ և զառա- քեալսն յոտիկականէն Յունսից. "Բազում երիվարս սօսս և ահապարանոցս պատրաստեալ, բազմազան պճնայար- մար զարդուք և զինուք, ոսկեսանձ ոսկեհնկար պանծալա- նոք, այլ և Թագ ևս յոսկւոյ սափիւրա կազմեալ, և 'ի նմա յեղուզեալ յեռեալ վարսակալ մարգարտատոյ տպազար- դութիս, և այլ ևս ականս պատուականս, և բազում երևելի զգեստս արքունականս ոսկեձամուխս, և շղայա- տեռն հրաշանկարս միանգամայն առաքէ 'ի պատիւ մե- ծարանաց արքային Սմպատայ,։

Ա. Նշան Խալաթեան։

Նշան ինչ քաջալէ կրէլ զանձամբ յիշատակէ Առոլիկ Ք. 43. վան Թագաւորին Վանանդայ ասելով. "Թագաւորն Վանանդայ մնուն Աբաս ի ձիավարէն ուսեալ Նշան Խալաթէ արիականաւ զարդարեալ գեղու ։

Ա. Թագաւորական Հանդէս ։

Այս այն սովորութէն է զոր առնէին Թագաւորք և կաթողիկոսք ժողովել յեկեղեցին Աշտիշատու յամին Տեառնէ Հանդերձ ամենայն աշխարհախումբ բազմութեամբ նախարարաց և եկեղեցականաց, որպես գրէ Բունագիր Ք. 3. "Հասանէր եպիսկոպոսապետն Վրթանէս ի մեծն յաւուրին ի մայրն եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Տարօնոյ... Ա՛ս երթեալ կատարէր անդ ըստ Հանապազ սովորութեանն տեառնին . . . զպատարագն գոհութեան . . . քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց Հանդերձ Թագաւորօքն և մեծամեծօքն, նախարարօքն և աշխարհախումբ բազմութիւք գնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կռոցն... մնայեանդ յայն ի գլխաւոր տեղին եկեղեցին ժողովել ի յիշատակ սրբոցն որ էին անդ, կատարել անդ ամի ամի եօթն անգամ. որք գնոյն ունէին սովորութէն առաւել ևս ի մեծի մարգարէարան մնտրանն [1] Յալտնեաց։ Սոյնպէս և յառաջքեալարանս տեառնհաշակերտացն, սոյնպէս և ի վկայարանս մարտիրոսացն ամի ամի ժողովելոք, զոր տօնին յիշատակի նոցա վարուց գործոց կենաց քաջութէն իմքեաւ ցըն-

1 Եւ քանզի յառաջնում կիւրա-
կէն որ գնոր նոր կիւրակէին, ի վա-
ղուց անտի ասենէք զսոն աշխարհա-
մատան կիւրակէի, Թուի Թէ յայնմ
առուր կատարէին գնաւակաւս այր
մատան. որով ի դէպ իակ խոր-
հրդաբար գնոն գնաւակաւս առաջին
եկեղեցւոյ կամ մատան աշխարհիս
Հայոց կատարել ի կիւրակէի որ ա-
ռաջին է գնոր նոր կիւրակէին, յորում
առուր գոյով և կիւրակէ դիւրին էր
և ամենայն ժողովրդեան համախմբել
ի շնորհակալութէն Աստուծոյ վասն
շինուած առաջին մատան ի Համօրէն
աշխարհիս Հայոց, և վասն կանգնելոյ
զառաջին սեղան յորում Քրիստոս
պատարագեցաւ ի ձեռն սրբոյն Գրի-
գորի առաջին քահանայապետի, յորմէ
և կոչեցաւ Աշխարհամատան կիւրա-
կէ, այսինքն կիւրակէ յորում մա-
տան վան նուագառեաց շինուէն
մատանին՝ որ յաշխարհիս Հայոց մի
միայն էր և առաջին, և յորում աշ-
խարհախումբ բանակն ժողովէր։
Զայնմհետէ ապա Թուխան կարգեալ
ամի ամի կատարել զյիշատակ նա-
ւագատեաց նորին ուրոյն երգովք շա-
րականաց ։

ծային ,, ։ Քայս բան նախ ասելովին՝ կատարել անդ՝ այսպէս ցուցանէ , թէ եօթն անգամ յԱշտիշատ Ժողովէին . ապա և զայլ տեղիս յիշելով , ցուցանէ թէ և յայլ եկեղեցիս գնային ։ Եւ արդարև՝ ի մուտս նաւասարդի յամանորաբեր տօնին իբրև ի տարեգլուխ Ժողովէին ի Բագաւան, զոր Վաղարշայ Թագաւորին էր կարգեալ . տես ի մեծ Հայս կձ. Նաև ի Շահապիվանի , յորմէ տեղին կոչէր Բանակետղ Թագաւորացն Հայոց , տես ի մեծ Հայս կ։կ' ։

ՅՕԴՈՒԱԾ Բ

Սովորութիւնք ի պեպոս էշխանաց ։

ԵՐԿՐՈՐԴԻ ԱՐՔԱՑԻՆ

ՕԴԵՍՏՔ սորա և սեփական զարդք սահմանեալք ի ք. Աբրաշիսէ, յիշատակին առ խորենացւոյն ք. կղ . որք էին " Պաճ յակինթակապ , և Գինդ յերկոսին ականջսն , և կարմիր պէպոս (կօշիկ) միոյ ոտին . Տարփալ ունել ոսկի և պաճուճապատ . և ոսկեղինօք ըմպել կնոճափօք ,, ։

ԹԱԳԱԴՐԻ

Հնագադիր ասպետին բագրատունւոյ հնորհեաց մեծն Վաղարշակ , ասէ խորենացին ք. ղ . "առանց ոսկւոյ և արծաթոյ զկրտսեր մարդարիտն երեքտակեան վարսակել աճել , յորժամ յարքունիս և ի տան Թագաւորին չքնճյի ,, ։ Իակ ք. Աբրաշէս ի հնորհս իւրում դայեկին բագրատունւոյ բազում առաւելութիւնս յաւել . քանզի խորե-

1 ի հաւասարդի ի տօնի սրբոյն Յհաննու Ժողովի ի Շահապիվանի՝ յայտ առնէ և այս բան Բուզանդայ ք. 15 . ուր նախ գնէ . "Ոչ կամեցեալ զտօնս հաւասարդաց առանց քո անցուցանել ,, ։ Ապա ասէ . "Եւ յայնմ աւուր տօն դիպեցաւ յիշատակի մեծին Յովհաննու , որ ի Գրիգորէ և ի Տրդատայ յաւանին Բագաւանին կարգեալ էր։ Ընդ յայնմ յիշատակ աշխարհաբնակք մարդկան՝ որ ժողովեալ էին ,, և այլն ։ Իակ ի վարդավառի Ժողովէի ի Բագաւան՝ յայտ առնէ և այս բան Կիրակոսի յաւելն վան ք. Կ.եբսէսի . "Դեպ եղև ամենայն աշխարհաժողով բազմութիւն ի տօնի վարդավառին լինել ի Բագաւան ,, ։

նասին յետ ասելոյ ՚ք . 47 . Թէ Արտաշէս ետ Աբգամայ երկրորդի արքային ագանել զայն ամենայն , զոր ՚ի վերոյ յիշեցաք , յաւելու . " Եւ ոչինչ ընդհատ յայսց պատուոյ տայ դայեկին իւրոյ Սմբատայ , բայց միայն յերկուց գրեց- դաց , և ՚ի կարմիր կօշկէ " : Ուր կամ ասել , Թէ Վաղարշակայ չնորհեաւն առ Բագարատ ՚ի սկզբան անդ էր ա- ռանց ոսկւոյ և ականց կապել զվարսակսն , որ է պսակ . այլ այժմ , ասէ , ՚ք . Արտաշէս յաւել և զայլ զարդս նման ամենևին երկրորդի արքայի , բաց ՚ի յերկուց գնդաց և ՚ի կարմիր կօշկէ : Մարթ է և վասն յարքունուստ չնորհեալ զարգու իմանալ զայն արքունական զարդն , զոր յիշէ նոյն մատենագիր ՚ի ՚ք . 43 . յաւելն վասն Սահակայ ասպե- ալ բագրատունւոյ , Թէ խեթիւ սկսաւ հայել ընդ նա ՚ք . Աբշակ Թագաւոր , "Հանապազ հրապուրեալ ՚ի կնոջէն իւրմէ , որպէս Թէ զարդ արքունական ունել նմա ՚ի փե- սայէն իւրմէ մնացեալ ,: Զի կինն իբր գաղտ առեալ ծա- նուցանէր Աբշակայ :

ՄԱՐԴՊԵՏԻՆ

Ո՛ան ձևոյ և անուանց զգեստուց կնոջ Մարդպետ իշ- խանին՝ յիշատակին յայս բան բուռզանգաց է . 6 . " Հրա- մանն ետ արքայն Պապ , տանել Պաղտաճան ագուցանել Մարդպետին Դղակայ . և ագուցին նմա Դրոսոս և Վար- պէս . և էր հանդերձն անհեղգ մեծուքն . զի խորշ զսոր- շիւ լինէաներ , մինչ զի ոչ կարէր հանդերձել զանձն իւր . . . Եւ ագուցեալ զպատմուճանին մեծ , էած զԳ-ոտին ընդ մէջ իւր , զորմէ Թոռն կախեր . և Սոսեր ընդ մէջ ածեալ , և խորշ՚ի գօտւոյ դրատիցն իջեալ զքուրն և զսուսերն ծած- կէր : Իսկ զվարտիսն զգեցեալ և Մոյչս ագուցեալ , և ըղ- նդանան յաղդեր կապեալ , և ՚ի վերայ նրանին խորշն ՚ի վար- տեացն իջեալ անկեալ ՚ի վերայ նրանին՝ ծածկեալ մինչև ՚ի սրունսն ,:

ԱՋԼՈՑ ԻՇԽԱՆԱՑ

Ո՛.յլոց իշխանաց և ունել զգեստ այլատեսակ ՚ի ժողո վրդենէ ցուցանէն քանք եղիշէի . որ ՚ի Թղթահամարն 241 . զզգեստն Վասակայ իշխանին Սիւնեաց այս- պէս ստորագրէ . "Եւ նա ըստ առաջինն կարգի օրինացն արքունի արկաներ զպատուական Հանդերձն զոր ուներ ՚ի Թագաւորէն . կապեր և պատառազեցան , և վերայն ոսկե- ղէն գներ ՚ի վերայ , և զկռատակուռ ձոյլ ոսկի կամարն ընդ-

ելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր, և զԻնդիան յահանէին, և զԱսորեստանն 'ի պարա-նոցին, զՄադեայսն զթիկամբն ,, [1] :

ՀՆԴԻՑ ՆԱԽԱՐԱՐԱՑ ՓՈՓՈԻՆ ՀԱՑՈՑ

Յաւ-քան զամենեսեան զսոսա փառազարդ ևն հանդերձանք զգեստուց՝ զորս Պրոկոպիոս [2] պատմիչ զգենուլ հնդից նախարարաց՝ որք իշխէին 'ի բաժնին աշխարհիս Հայոց՝ որ էր ընդ տերութիւն մեծին Յուստինիանոսի կայսեր . ասէ . "Յակ միւս (փոքուն) Հայոց , որ գետոյն Եփրատայ պատեալ ձգի մինչև ցքաղաքն Ամիտ [3] , սատրապք հինգ հայկազունք 'ի վերայ կային , որք էին նախարարութիւնք մինչև ցմայն ևւեթ ընկալեալ գիշխանս պատուոյն , զորս 'ի դէպ համարիմ ստոյգ ասացս բանիւ ստորագրել , իբր ոչ ուրուք երբեք զայն տեսեալ : Քաղքն էր նոցա ասքեայ՝ ոչ յօդեաց անտի հաւաքեալ , այլ 'ի բուսեալոյն 'ի ժամանակս Ծովայինս Պէնթ անուանեալս : Ծիրանաֆայլ պէնաթթ նոցա ոսկեպատ ոտիւք , որով և մայն ինչ քաղեալ և պնդեալ : Ի ծայր քղամիդին Ճաթանթ ոսկեթել բոլորեալ զահամբ պատուականս , ուստի կախեալ կային ճակնիթ երբեմն ոսկեշար գիւրաթեք շղթայիւք յարմարեալք : Շապիկն ներքինայ աստ և անդ գեղեցիկ պնդեալք ոսկեպինդ և վերարդարդ բեւեռօք : Սանապատ կարմրերանգ մինչև 'ի ծունկս հասեալք , զորս ոչ ուժեք օրէն էր զգենուլ բայ 'ի կայսերէն հռոմայեցւոց , և 'ի Թագաւորէն Պարսից ,, :

Ի դատաստանագիրս Մխիթարայ գօշի , 'ի գլուխն՝ ուր դնէ օրէնս վասն Թագաւորի և վասն իշխանաց , յիշա-

1 Սամոյր ագանիլ յիշատակի և առ Բուզանդայ գ. 15. վասն բ. Ընդլայ Թագաւորի . "Յայնժամ Թագաւորն զերբ սամոյրան զգլխոյն ածեալ , 'ի փոյթ կնջանն մտեալ , զերբ գէմս էրեսացն ծածկեր , քնոյ պատճառ եղեալ զի զնորա բանան մի լուիցէ ,, :

2 Պրոկոպիոս չին . Յուստինի . գլուխ երրորդ . գլ. 1 :

3 Ա յս սման աշխարհս Հայոց զոր Պրոկոպիոս փոքր Հայք կոչէ , ուներ յայնժամ և ինչ ինչ 'ի Հայոց մեծաց , մինչև ձգիլ յԱմիտ , որ էր քաղաք 'ի մեծ Հայս : Յայնմ մասին պաշտօնակեալ կերպեմ և զՅոփս կամ զորս Հայս , և զՆծգեսին իշխանս կոչեալ համարիմ 'ի նոյն իսկ յԱսատան կայ յաղբայազանց 'ի Տոփս գնակէզոց . և վասն այնորիկ իբր աղբայազունս Հայս գահ բարձրեալ ամբարձալ 'ի կայսերէն , և Հայս չուք հանդերձանս նաց զգեստաւորեալ . յորս ինչ մանաւանդ զառկախեալ չսակացն զոզճիւաւորումն նման տեսանեմ մեծաշուք պաշտօնակից Փէյիք անուանելոց , զորս բաղում անգամ տեսեալ է իմ գնալ 'ի հանդիսի աւրնիերք օսմանեան Թագաւորի :

տակին ինչ ինչ զօրս յառաջ քերցուք. Թագաւոր, ասէ, «Եթէ չինիցէ քաղաք և կամ դղեակ, և աշխարհագիր եթէ առնիցէ ... իշխանութիւն կալցի ըստ իրաւանց գատաստանն. ..Նոյնպէս չինել քաղաքս և բերդս, և կամուրջս շինել մեծամեծ գետոց՝ Թագաւորաց լիցի (և մի իշխանաց.) և պանդոկի, և իջաւանաց տունս, և այնոցիկ հրամանատուն նոցա լիցին: Իշխանք զԹագաւորաց մի զգեցցին զզգեստ, մինչև նոքա հրամայեսցին, և կամ տայցեն պատիւս. առաջի արքայի մեծամեծ իշխանք մի նստցին, բայց եթէ հրամայիցէ: Ի սեղան արքայի բայց ի հայրապետէ մի ոք կերիցէ, և յորժամ նա կամեսցի. այլ յայրքունիս ինքնիշխան լիցի հայրապետն նստել, այլոչ արքայ ի տուն հայրապետի,,:

ՅՕԴՈՒԱԾ Գ

Սովերոնիխոյ ի վիճաս հասարակ ծաղովրդեան:

Ի ԳԻՐՍ մեր առ մեծն Տիգրանաւ գտանեմք առաջին յիշատակութիւն յայսպիսիս, որ բազմացոյց զիարթաժամուի ի զգեստս. զի ասէ վասն նորա խորհնացին ա. 24. «Մարերս ոսկւոյ և արծաթոյ և բարանց պատուականաց և զգեստուց և պիսպիս գունոց և անգուածոց՝ արանց հասակաց և կանանց միանգամայն բազմացոյց. որով ազեզարգոյին իբրև զգեղաւորս երևելիս սքանչելիս, և գեղաւորքն ըստ ժամանակին առհասարակ գիւցազնացեալք,,: Իսկ առ մատենագիրս օտար ազգաց՝ վասն զգեստուց Մարաց և Պարսից և ասորեստանեայց գտանի յիշատակութիւն. բայց որպէս ազգ արարեալ է մեր և այլուր, նախնի մատենագիրքն յորժամ զՀայս նկատս տեսանէին յիրս ինչ մեզոհակաց ազգացս այսոցիկ՝ ոչ խօսին ուրուն զՀայոց. քանզի մարքն և Պարսիկք և ասորեստանեայք, որպէս և Պարթևք, եղեն հզօր տէրունիք յոյժ քան զմերն, մինչև զմեզ ընդ իւրեանց տէրունիքն գրաւեալ ունէին ժամանակս բազումս. վասն որոյ և ի պատմելն զսոցանէ՝ պատմեալ համարեին և զՀայոց: Զորոյ զօրինակն ցուցեալ է մեր ի բերս աշխարհիս Հայոց. զի յոր ինչ իրս նմանի աշխարհ մեր Մարաց կամ Պարսից աշխարհին՝ Մտրաքան զՄարացն յիշելով և զՊարսկան աշխարհին Պարսից՝ ի Հայաստան միայն ընդնման լինելն նոցին յիշատակէ բազում ուրեք: Ա յսմ ծա-

նօթուԹԵ՛ի վերայ Հասեալ, յիշեսցուք ապա և ինչ ինչ զոր օտարազգի մատենագիրք գրեցին վասն զգեստուց նա, խադրեալ ազգաց տահմանակցաց ։

Վիկտորոս սիկիլիացի Տ. ՈՒ. ԹղԹ. 119. ՛ի պատմուԹիւն զհաղալ Նինոսի ՛ի վերայ բակտրիացւոց, և զՇամիրամ ասէ գնացեալ ընդ նմա, որ առ ՛ի գիւրուԹի՛ն քաջ մտրեալ ՀանապարհորդուԹե՛ն զգեցեալ էր, ասէ, պարեզօտ ինչ՝ որով ոչ Հանաչէր արգելօք այր իցէ Թէ կին։ Բայ ըեձևուԹիւն այսր զգեստոյ ահռչափ ՀաՃոյ գտաւ, ասէ, ամենեցուն, մինչև ապա նաև Մարաց և Պարսից վնոյն ա գանիլ պարեզօտ ՛ի գրաւեչն նոցա զԱսիա ։ Ի բանից առաՋի Դիոդորայ աներկբայ Հաստատի Թէ քանի՛ գիւրուՀ մտեալ իցէ այն ձև նաև ՛ի Հայս, ընդ որս այնչափ էր ընտանուՀ Շամիրամայ՝ մինչև զամնորատուն իւր ՛ի Հայս կանգնել, և զամառն ողջոյն ՛ի Հայաստան անցուցանել. այլ Դիոդորոս զՄարացն յիշելով զմեծ տերուԹի՛ն, ընդ նովաւ իմացեալ Համարիմ և զներն։ Ըստ այմ՛իմս և զոր Ստրաբոն ԺԸ. 734. ստորագրէ վասն զգեստուց Պարսից. և ԺՇ. 746. վասն ասորեստանեայց, յորոց սակաւուք զանազանեալ Համարիմ և զզգեստս մերոց նախի՛ն Հայկազանց, որպէս և զՄարԹեւաց, զորոց գրէ Յուստինոս ։

Իակ յանուանէ յիշատակեալ վասն Հայկական զգեստուց՝ գտանեմք այս առ Ստրաբոնի ԺՈ. 530. բայց ըստ նախի՛ն առասպելաբանուԹե՛ն Յունաց, ուր գրէ. Աքեն և վասն Հայկական զգեստուց լինել ԹեսսաղեՀան, ունել պարեգօտս արձակս պՀինաւորս, զորս ետողեանս անուանեն ՛ի Թատրոնս, գօտևորեալ զկրծովք, զորոյ և պնոյնուԹիւն ՛ի ԹեսսաղեՀանց առեալ էին Թատրոնականք. քանզի ԹեսսաղեՀանք սկսան ունկնել ագանիլ պարեգօտ երկայնաձև, գոլով բնակեալք յատեալ հիւսիսակողմն և ՛ի ցրտատուչ երկիրս քան զամենայն Յոյնս ։

ՅՕԴՈՒԱԾ Դ

Սովքոնիոյ ՛ի պեղատս կանանց ։

Վանանց ազատացն ՛ի զարգս իւրեանց Թագ ՛ի գլուխ կրել ցուցանէ այս բան Վարդանայ, որ ասէ վասն Դրիգորի Թոռնի՛ն Լապերատայ. " ԱՃ ՛ի քաղաքն (Ասի, Մանուս

չէ Թոռն փառուն ամիրային) զամենայն միացեալ իշխանսն, որպէս և մեծաւ հանդիսիւ ընդ առաջ ելեալ մանչանէր 'ի նեղքս զԴրիգոր զորդին Վասակայ զԹոռն Աղվերսին, զոր ասէն ունել 'ի գլուխ ազատաց կանանցն հինգ հարիւր Թափ երևելիս . զի տէր էր մեծ զօրաց, և բազում ազատաց, և եղբայր տեառն Բարղի , որ գնաց Գէորգայ ձեռնադրեցաւ 'ի Հաղբատ կաթողիկոս ,, : Ջնոյն յիշատակէ և Մատթէոս մէջ . վասն գնոջ Դաղ Վասլի իշխանին, զի 'ի մեռանել , ասէ, իշխանին 'ի չկա· բազում ինչս տարան 'ի զանձուց նորա առ Տանգրէ մեծ կոմսն Ֆանակաց որ յԱնտիոք . " Եւ զթաֆն գնոջն Վասլին (տա· բան) առ գնոջն Տանգրեայ ,, : Աւյս էր սովորութի ժամանակին նաև յայլ ազգս . զի որպէս գրէն Վարդան և Մատթէոս մծբ . Տաճար սուլտանն Պարսից որդի Մե· լիք շահին՝ 'ի մեռանել իւրում ետ սպանանել զառագ կին իւր զԳոհար խաթունն . " Սա յանկնայն ազգաց գե· ղեցիկ աղջկունս էր ժողովեալ կուսանս չորս հարիւր , որ կային յոսն առաջի նորա , զարդարեալ գեղեցիկ զարմա· նալեօք յականց և 'ի մարգարտաց , հանդերձ արաբաց ոսկով , թաֆ 'ի գլուխն , և հիւսակ գլխոյն զարդարեալ ոսկով , և ամենայն աբանչելի զարդարանօք 'ի գոյնս փայ· լէին առաջի նորա ,, :

Օ զարդք զգեստուց Աշխէն սիկիսնջն յիշատակին 'ի Հաուզէն Պաշանց , զորս յղեաց կայսրսէնին . "Որով պատ կեսցի , ասէ , բամբիշն արևելեան վայելչափայլ Թա· գուհին մեծն Աշխէն . և չքնաղագեղ օրիորդն Հայոց մեծաց Խոսրովիդուխտ Դաւիթեանն ' . որոց առաքեցան Թափ և Պապ յականգեայս (յակինթեայս) . . . և Բա· հառաքս բիւրապանս, և Վաբսակալս վայելչասնաս . . . Դոռա· կէս գաղմատակաս ,, : Բուզանդ Ե . 38 . յիշէ զզարդս զորս Շապուհ Պարսից արքայ առաքեաց առ Զարմանդուխտ Թագուհին . " Եւ Թագաւորն Պարսից տանել 'ի ձեռն Սուրենայ Թափ և Պապմոշեան , և պղաս Թագա· ւորացն սիկիսնջն Զարմանդըխտոյ ,, :

1 Ի տպագիրն Պօլսոյ գրի Դօռ· ցեալ 'ի հռոմկական անուանէս Տո· ճայ , որ Թուի աղաւաղանօք ածան· էսոս , ըստ մեզ Դքսուհի :

ՅՕԴՈՒԱԾ Ե

Աչլ ասվերուենից՝, և ֆարնամուենից ինչ չէշապահէլը։

Ա. Մապանոյ էչխանուենին։

Մատանի տալ՝ի նշան իշխանութեանն գտանելոյ առ Թո-մայի արծրունեայ յերկրորդ պատմութեանն Ե. 2. ուր ասէ, թէ յորժամ Գագիկ արծրունի սպան զԱպուսմրուան բըռնաւոր, և ազատեաց զեղբարս իւր՝ի քունութենէ նորա, "հանեալ գնաստ անտի (՝ի բերդէն), պայ զՄապանին՝ի ձեռս Աշոտոյ (երէց եղբօր իւրոյ). և տիրեցուցանէ սեպհական ժառանգութենէ (Վասպուրական աշխարհի), հանդերձ իշխանական Ճոխութեբ,,։

Բ. Մապանեաս ֆռենել։

Մատանեաւ կնքել զթուղթս և զհրովարտակս յիշատակի առ Եղնիկեի՝ի Թղթ. 235. յասելն վանն Վասակայ որ էր մարզպան. "Եւ՝ի բոլորեսին յայսոսիկ Թուղթմն վաւերականի՝ Մապանի Վասակայ եգեալ էր... Ատամ... յանդիմաներ զնա հրովարտակաւն իսկ զոր տուեալ էր նորա իւրով Մապանեաս,,։ Յորմէ յայտ է թէ՝ի վերայ մատանւոյն փորագրեալ կայր անուն գրողին։

Գ. Խղով օճանել։

Այսորութեբ իւղով օճանելոյ գէթ երբեմն՝ ցուցանի լինել և՝ի Հայս այն բան Վաղարս՝ի Թղթ. 190. ուր յիշելով զնիստ Ճգնութեբ կամանց մեծամեծացն՝ի ժամանակի հալածանացն, ասէ. "Ըօճան խղով,,։

1 Աստուգութեբն տան ինչ գիւղականացն՝ի Հայս, և գանափոր ամբարտանոցն նորա՝ի պէտս տանատաց գինւոյ գտանի յիշատակել հարկ անցեր առ Քաղնոփոնեայ՝ի Ջ. գիրս արշաւանացն Կիւրոսի՝ի Ճանապարհ Հոգուենն նորա ընդ Հայաստան։

Գ. ԵՐԵՔԱՆԻ ԱԿՈՒՄԻ։

Ի սատ մասին փոքր ամենեքին գոհարաց՝ ի պատմութեանէ Օրմէլեանին՝ ի գլուխն է. գտանեմք յիշատակել Յա. կինքն քաջ պատուական գծուարագիւտ ըստ մեծութեանէ և ըստ աշխուժութեանէ. յասելն վասն Դաւթի՝ զոր փոքր թագաւոր կոչէ Սիւնեաց. "Ունէր առ ինքն զԴաւիթ մի պատուական յոյժ լուսաւոր, և տեսիլ նորա կարմիր, յորմէ հատանէին նշոյլք երբ՝ ի հրոյ. և՝ ի գիշերի լուսաւորէր զտունն որպէս զջահ"[1]։ Ասէ այս ակն անգիւտ ոչ մեաց՝ ի Հայս. զի առեալ Սմբատայ տարաւ նախ առ Բայազ Նոյինն, որպէս գրէ անդէն. "Եւ ցուցեալ նմա զլուսաւոր գովէստն՝ ասէ. կամ առ դու, և պարգեւեա ինձ զոր ինդրեմն, և կամ յուզարկեա զնա առ մեծ զանն, զի տարայց նմա զայս. իբրև տեսեալ նորա զայն՝ զարմացեալ՝ ասէ. այդ անգին և անգիւտ ջովհար է. եւ ոչ իշխեմ առնուլ զայդ. այլ յուզարկեմ գքեզ առ մեծ աշխարհակալ զանն"։ Սմբատ զայս յակինթի տանելով առ Մանկու զանն Թաթարաց՝ փոխանակ այսր ընծայի եաւ՝ ի նմանէ զանձնային ազատութեանէ վասն երկրին Սիւնեաց և վանօրէից։

Ի յոգիսի պատուական ակունք յիշատակին և առ Զենոբայ՝ ի Թղթ. 24. այլ յեկեղեցական զարդս, յասելն վասն Վաճառիկ հայրապետին կեսարու. "Տայր և սրբոյն Գրիգորի երկու լուսաւոր ակունս, զոր էր տուեալ նմա Հռոմայ հայրապետն"։ Ջայսոսիկ եդ սուրբն Գրիգոր յերկուս տեղիս՝ ի տապան նշխարաց սրբոյն Յհաննու. զի ըստ գրելոյ՝ ի Թղթ. 33. "Զմի ակն լուսոյ՝ զոր էբեր՝ ի կեսարիոյ՝ անուն Լիգրոն"։ եդ յԱնահետեան տեղւոջ։ Եւ ըստ գրելոյ՝ ի Թղթ. 38. "Զմիւս ևս զակինն լուսաւոր դներ՝ ի նոյն տապանին, յաղագս միշտ լուսոյն զոր ուներ"։ յԱշտիշատ վայրի։ Եւ օտարազգի մատենագրին կոչեցեալ Բրուէննիոս կեսար՝ ականատես վկայի՝ գտա-

1 Ասացեալ լուեալ է մեր և վասն երկուց մեծամեծ յակինթի քարանց թագաւորին Ռէկու աշխարհին՝ ուր միայն էրնեի յակինթի քարն. որոյ ի մէնն գիշերոյ շրջագ վառեալ յեկոյս երկոցունց նոցա, զամենայն սենեակն կարմրավառ լուսով լուսաւորէր՝ զաւարտնելն իւր։ Զոր և տեսեալ ունից ի նահնի հայկազուն բնակչաց՝ որք բնակեալ կային անդաւոր նախ քան զնուա Փօրթուգալաց՝ ի Ռէկու, ասացեալ ունէին առ յետագայս՝ վասն բնակչաց հայկազանց՝ ի Ռէկու կամ՝ ի Հավա, կարես տեսանել յաշխարհագրութեանէ՝ ի Գ. հատոր Ազիոյ. Թղթ. 152։

նեմք յիշատակութեի վասն շնորհակալուեայ Վեստ խոյատրոյ իշխանին 'ի մեռասանեորդք դարու՝ ունել տէր Հինչ մեծ և գեղափայլ քան զամենայն ակունս։

ՅՕԴՈՒԱԾ Զ

Սովորութիւն 'ի հարսանիս, և օրէնք ամուսնութեան։

Ա. Դրամս ճաշակել, և խոպէլ։

ԻՍՈՎՈՐՈՒԹԵԱՆՑ հարսանեաց զմին միայն յիշէ խոռենացին ե. 50. 'ի պատմելն զՀարսանիս ե. Արտաշէսի արքայի ընդ Սաթինկան դստեր Ալանաց արքային. "Սովորութի իսկ էր, ասէ, Թագաւորացն մերոց փեսայութի 'ի դուռն տաճարին Հասանել գահեկանս ճաշակել իբրև զհիւպատեանն հռոմայեցւոց. սակս և Թագուհեացն յառագաստին՝ մարգարիտ ,, ։ Զայս բերէ 'ի մեհնութի բանից Գողթան երգոյն՝ զոր երգէին. "Տեղ ասկի տեղայր 'ի փեսայութին Արտաշէսի. տեղայր մարգարիտ 'ի հարսնութի Սաթինկանն ,, ։

Սովորութի էր 'ի հարսնութի Թագ 'ի գլուխ դնել Թագուհւոյն, և ծիրանիս զգեցուցանել. որպէս վկայէ նոյն մատենագիր ե. 83. "Եկեալ Տրդատայ յաշխարհս՝ առաքէ զՄեծատ ասպետ զՀայր Բագարատայ ածել զկոչսըն Աշխէն դուստր Աշխադարայ իւր 'ի կնութի. որ ոչինչ նուազ էր կոյս ազգային հասակի։ Եւ հրամայէ գրել գնա արշակունի, և զգեցուցանել ծիրանիս, և թագ կապել զի հարմանսցի ազգայն ,, ։

Բ. Բազմակնութիւն։

Բազմակնութե սովորութի լինել և 'ի մերս 'ի ժամանակս հեթանոսութե յայտ առնի խորենացին ե. 35. յասելն. "Սակս և զգլուխ կանանցն Աբգարու՝ որում անուն էր Հեղինէ, առաքեաց յիւրային քաղաքն ,, ։ Եւ ե. 50. յասելն վասն Սաթինկայ տիկնոջ. "Սա առաջին եղեալ 'ի կանանցն Արտաշէսի՝ ծնանի նմա զԱրտաւազդ ,, ։

Գ. ԽՆԱՄՈՒԵՒՆ։

Խնամուեցի մերոց Թագաւորացն էր ընդ մերձակայ Թագաւորս կամ իշխանս. զոր օրինակ ընդ Վիրս. զի գրէ Խոր. Բ. 11. Թէ ա. Արտաշէս մեր "զդուստր իւր զԱրտաշատայ տայ կին Միհրդատայ ոմանցն Վրաց բզեղնի մեծի, որ էր 'ի զառակէ Միհրդատայ Դարեհի նահապետի, զոր կացուցեալ էր Աղէքսանդր 'ի վերայ գերութենէն վերադարձից ,,։ Արտաշէս Բ. եաւ 'ի կնութեն զՍաթինիկ դուստր արքային Ասլանայ։ Ջնու ա. Սմբատայ արքայի Յոհաննէս կաթողիկոս ասէ լինել դուստր արքային եգեբացւոց։ Աբաս եղբայր Բ. Աշտոյ առեալ էր յիւր կնութեն զդուստր Գուրգենայ մեծի իշխանին Աբխազաց, որ էր քեռորդի Աղուանելսէհի Վրաց արքայի։ Եղև ինքա մուեթիեն և ընդ կայսերականս յաւուրս Արշակունեաց։

ՅՕԴՈՒԱԾ Ի

Սովբոնեան 'ի յոշղաբհաորութենեան և 'ի Խաղման։

Ի ԺԱՄԱՆԱԿՍ հեթանոսութեն թէ զնարդ լինէր յուզարկաւորութեն և Թագուհին Թագաւորաց, գտանեմք առ Խորենացւոյն 'ի պատմութենէ մանկանն Բ. Արտաշէսի. "Գրէ (ասէ, Աբիտոն փերզացի,) եթէ որչափ ամբոխութիւնք մեռան 'ի մահուանն Արտաշէսի, սիրելի կանայք և հարճք և մեծերիմ ծառայք, և որպիսի շուք բազմադիմի արարին առ 'ի պատիւ դիոյն քաղաքական կարգաւք, և ոչ որպէս զարարեալսն։ Դագաղքն էին ոսկեզնիք, գահոյքն և անկողինքն բեհեզեայ, և պատմուճանին որ զմարմինսն՝ ոսկեթել, Թագ կապեալ 'ի գլուխն, և զէնն ոսկւով առաջի եդեալ, և զգահոյիքն շուրջ որդիքն և բազմութենէ ազգականացն. և առ այսոքիւք պաշտօնեիցն զինուորութիւնք, և նահապետքն և նախարարութեան գունդք, և միանգամայն զօրականացն վայրք. աւուրեքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ 'ի պատերազմ ձգելոցն։ Եւ առաջի՝ պղնձիա հարկանելով փողս, և զինիմն՝ ձայնարկու կուսանաք սեազգեստք և աշխարօղ կանայք.*

և զՀետ՝ բազմութի՛ն ռամկին ։ Եւ այսպէս տարեալ Թա-
գեցին . և շուրջ զգերեզմանատն լինէին կամաւոր մա-
հուանք ,, . ՚ր. 6 ։

Իսկ ՚ի ժամանակս քրիստոնէութե՛ն վասն Տրդատայ
գտանելոյն յիշատակութե՛ն ՚ի Հառընտիրս . “Բարձեալ տա-
րան զնա ՚ի Թորդան արծաթասպատ դիակիւր գագաղէ ,
յորում լծեալ ջորիք ոսկեսանձք , և գունակ գունակ
հանդերձիւք զգաղտն զարդարելով . և վաղուց զօրացն
ասի և անտի վառեալ զինուք և նշանակօք ։ Իսկ առաջի
գագաղացն ձայիւք աստուածօրհնութեան , և բուրմունք
խնկոց . իսկ ասի և անտի բարեկամք և սիրելիք , ընտա-
նիք և բազումք յորդւոցն նորա հետևակ անկեալ . և զինի
գագաղացն փողք և տաւիղք ողբոց , և կուսանաք ողբա-
սացք ։ Թող զայլ ամենայն ռամիկն , որ երթային զՀետ
անթիւ բազմութե՛ն ։ Եւ այսպէս հասեալք ՚ի տեղին , ա-
րարեալ տապան թագաւորական ՚ի քարանց կռեաց , և ՚ի
վերայ ապակի արկեալ , յորում էդեալ զգանձն պատուա-
կան , զմուշահոտ զպատարագն , զմեծ վաստակաւորն , և
տարեալ թաղեցին զնա ՚ի տեղոջ զբօսանսց մեծին Դրի-
գորի , զոր պարսպեալ անուանեաց իւր պարտէզ ,, ։

Այլ վասն ՝ա . Աշխոյժ աղբույի բագրատունւոյ գտա-
նեմք յիշատակութե՛ն առ Յովհաննու կաթողիկոսի . “ Եւ
վասն զի ՚ի Հանապարհի , ասէ , իջաւանս ՚ի Քաբսպատն
կուղեցեալ տեղ ապառաժի էղև նորայն վախճան , բար-
ձեալ ապա դիակիր գագաղաջ տարան զնա ՚ի Թագաւո-
րանիստ աւանն Բագրան ոսկեհուռ Հանդերձիւք և ոս-
կեզօծ վառիւք զգագաղն զարդարեալ . և խումբք զօ-
րաց զինուք և զարդուք ընտրանաջք և նշանակօք շուրջ
պաշտպանեալք մեծի կաթողիկոսին , և այլ ևս գղեցք և
կեղեցւոյ առաջի ևս գնայեալ՝ զնաչակրօն սաղմոսեր-
գութի՛ն և զձայնս օրհնութե՛ց նուագելին . իսկ երեք
որդիքն նորա գահերեկք տան արքայի , և այլ ևս բարե-
կամք հետամտելին զնին գագաղացն ... Եւ այսպէս հա-
սեալք ՚ի տեղին , անդ էր տապ տեսանել կուսանս ողբեր-
գակս , և արտօսրաթոր կականուածն , և աչխարանս տիկ-
նայն և տանտիկնաց , և այլ ևս բազմութե՛ն ռամկայն և
անռամկաց . և տապ կազմեալ տապան թագաւորական և
դին զնա ՚ի քնարանի Հարց իւրոց ,, ։ Յայսմ յաղարկա-
ւորութե՛ն ոչ յիշէ պատմիչն փող կամ քնար Հարկանել ,
բայց ՚ի յուղարկաւորութե՛ն այլոց յիշատակի . որպէս առ
Սահփանոսի լէ . վասն Գաբրաւն Վասակայ Սիւնեաց իշ-

խանի յաւուրս Բուզայ. « Իսկ մեծ սեպուհն իշխանն սիւնի Վասակ Գաբուռ տղայ հաստակաւ յերիտասարդութեէ տիս վախճանի... ապա առեալ երանելի տիկ. նոջն Մարիամայ զդին նորա՝ զարդարեալ թագաւորական զարդուք, անհուն ամբոխիւ և անչափ աղաղակաւ, և ողբերգական պարուք փողոց և քաղաքաւարաց, հանդերձ կաթողղիկոսաւ Ջաքարիայիւ տարեալ հանդուցանէին 'ի քաղաքանի ընդ հարս իւրեանց »։

Նոյնպես և վասն Աշոտոյ իշխանին Սիւնեաց որ յաւուրս Յուսփայ ոստիկանին 'ի գլ. լը. « Մեծ նախարարն սիւնի և գահերէց իշխանն Աշոտ յետ բազում քաջութեէց մեծամեծ երևելի գործոցս՝ անչափ շինութեէց աշխարհի՝ եկեղեցեաց և վանորէից՝ փոխի յաստեացս. իսկ բարեպաշտուհի և անհամեմատն 'ի կանայս Ըռշան կին նորա զարդարեալ զդի նորա արքունական ձևով, աշխարհական ժողով ամբոխիւ, դամբանական փողովք և ողբերական քաղաքարիւք տարեալ հանդուցին »։

Ի յուղարկաւորութեան եկեղեցականաց յիշատակին և կանթեղք և մոմեղինք. զոր օրինակ է տեսանել առ Բուզանդայ գ. ιι. 'ի Թաղման մեծին Վրթանէսի. « Եւ յետ սորա փոխեցաւ և յաշխարհէ մեծ քահանայապետն Վրթանէս. և ժողովեցան ամենայն աշխարհն Հայոց, և մեծաւ պաշտամամբ, սաղմոսիւք և երգովք հոգևորօք, կանթեղօք և մոմեղինօք և խնկածու հոտովք, արքունական կառք զսուրբն Վրթանէս... մեծաւ լալեաց տրտմութէ մինչև 'ի գիւղն Թորդան 'ի Դարանաղեաց գաւառն յուղարկին »։ Որպէս և 'ի Թաղման սրբոյն Մեսրոպայ յիշատակէ Կորիւն, թէ Վահան ամատունի Թաղեաց « աշխարհական ամբոխիւ... հոգևոր ցնծութէբք, կանթեղօք վառելովք, և ջահիւք բոցբոցելովք, և ամենայն լուսաշաւիղ գնդիւն »։

Իսկ խնկել կամ զմռսել զմարմինն գտանեմք յիշատակել առ Սահփանոսի գլ. և այն սակս տանելոյ յերկիր հեռաւոր. զի պատմէ Թէ յաւուրս Յուսփայ ոստիկանին « ի Թախտուական պանդխտութէբ հասաներ վասն երանելի տիկնոջն Մարիամայ մօրն իւրեանց, զոր խնկեալ և զմռսեալ եդին 'ի փայտեայ տապանի, և պահեցին մինչև յօրն այցելութէբ... ապա 'ի ժամադրեին բերեալ չբեզագոյն պատուով զմայրն իւրեանց, և աշխարհաժողով հանդիսիւ եդին 'ի հանգստի մերձ առ ձեռաւ կերտ եկեղեցոյն իւր որ 'ի Հողոտագահ »։ Ըստ այսմ եղև

և մարմնոյ ։ Սահակայ կաթողիկոսի , որ ի խառնն կը մեռանէր . զոր առ ի տանել ի Հայս՝ Հարկ եղև ինկել , որպէս գրի ի պատմութեն Հայոց նախին . « Հրամայեաց բերել Հանդերձս ոսկեզօծս և իւղս անուշս , և ինկեաց զմարմին սրբոյն . և պատրաստեաց կառս և զոլիս սպիտակս , և յուղարկեաց յաշխարհն Հայոց » ։

Ա . Դէպ ապաշխարութեան ։

Ոչ դիակապուտ արանց քանզի յիշատակի բան ի կանոնս մեկնագրեալ յանուն սրբոյն Գրիգորի , յայնմհետէ ի մահամերձ ուրեք ուրեք սովորութիւն լինել գէթ զմահս թոռ դելոյ փառաւորս զգեցուցանելով ։ Եւ ի զի բանք եղիչէի վասն պարտուց ուրացելոցն Վասակայ , և ընդարձակողին Սամուէլի այնպէս ցուցանեն՝ թէ նաև ոսկի թաղէին ընդ մեռեալս . քանզի ի սաստիկ պահանջմանն Պարսից ի Վասակայ զգերեզմանս կամէին բանալ , ասէ եղիչէ . և ի սաստիկ հարկապահանջուէ ջաղաքայ արաբացւոյն յոհաերորդ դարուն՝ « զգերեզմանս մեռելոցն բանային , և զոսկին առեալ տային ի նա » , ասէ ընդարձակողն Սամուէլի ։ Որպէս Ստեփան ժա . 503 . վասն Աղուանից գրի դրան թաղել միանգամայն ընդ մեռելոյն . որպէս և մինչև ցայժմ է տեսանել յոմանս ի կովկասային ազանց , յաւետ յազգն Ձերքեզաց . զորս և տեսաք ։

Բ . Ի խոխս համակիլ ։

Ա՝ ասն արքայորդւոյն Սմբատայ ի Թուխս համակիլ ի մահուան հօր իւրոյ ։ Աշոտոյ , յիշատակի առ Յոհաննու կաթողիկոսի՝ որ գրէ վասն Աղուերսեհի Վրաց իշխանի . « Հանդիպի Սմբատայ , և Թագաւորական զգեստուք ըզգեցմամբ՝ ղնաթոյր զգեստու նորա զգեցուցին ի բաց Թագափէ » ։ Սոյնպէս առնել և հնոջ ի մեռանել առն իւրում յիշատակի առ Թոմայի արծրունւոյ յերկրորդելն զմահ Հուանէ Գրիգորի Վերանկին արծրունւոյ . զի ասէ Թէ ի տուգել Սոփիայ արփիագել տիկնոջ (որ էր դուստր ։ Աշոտոյ) զսպանումն առն իւրոյ , « ապա այնուհետեւ յերկիր անկեալ զերեսս ի գետնի դնելով , մինիր ի վերայ ցանելով գլխոյն , և խաւար ձեռագործ յօդս ցնդէ տաճարին , (իմս վասն սենեկի իշխանին) և ի բաց ընկեցեալ զպատուագիրս քոջն մարգարտահիւս զարգուն՝ զգե-

ցեալ պեաւս 'ի զգեստից, և պատրաստեալ գլխոյ իբրեւ՝ արկանելիս Խաչելոյս, և յառաջ կոչեալ զգաստերս սգոյ՝ ողոյց յօրհնէ կարգ. կարգեալ կացուցանէ գասս գասս պաշտաւորս երբայեցիս, և զձագաւորացն Խորայելի նորոգել տայ զոլորս ։ ։ Ի շարժման անդ Դուխն քաղաքի որ եղև յաւուրս ։ Սմբատայ, քանզի բազմանձն մարդկան մեռան, զազգականացց նոցա 'ի Թուխս Համանկիլ զրե Յոհանէս կաթողիկոս. " Թողուցաք զազգակիցս . . . (որոց) աղիողորմ ձայնք երգեցիկ կուսանաց, և սեաւգեաց կանանց և արանց վշտաշար հեծութեամբ սգացելոց մինչև յերկինս բարձրացեալ հասանէր ։ ։

Գ. Կոծել պէսն։

Ի կոծս որպէս լինէին կամաւոր մահուանք 'ի ժամանակս կռապաշտութեանն, զորմէ յիշեցաք 'ի վերոյ, նոյնպէս և սովորութիւն էր գՏերան խղել, զձակատ հարկանել, և զերեսս պատառել, որք յիշատակին 'ի նզովսն Ժողովոց, նզովիւք արգելով զրիատուիկեց. զորս մեծն Կերսէս բարձեալ էր զամենայն. բայց յետ մահուս նորա անդրէն սկսան, որպէս ասէ Բուզանդ Ե. 31. "Եթէ յանկարծ մեռանէր ոք, ոչ ոք իշխեր (յաւուրս մեծին Կերսէսի) անյապտութիւն արտաքոյ կարգի կանանի եկեղեցւոյ լալ զմեռեալն. և ոչ կոծ ոք դնէր կամ աշխարհաս մեռելոյն[1], և ոչ ձայնս ոք արկանէր 'ի վերայ մեռելոյն յաւուրսն Կերսէսի, այլ լոկ արտասուօք և ըստ արժանի սաղմոսիւք և օրհնութիւնք, կանթեղօք և մոմեղինօք լուսեղէնք զմեռեալսն յուղարկէին... Այս յետ մահուան Կերսէսի յորժամ զմեռեալսն լային, փողովք և փանդռօք և ինօք զկոծսն պարուցն կաքաւէլով, զտիպսն հատեալս, զերեսս պատառեալս, ոչք և կանայք պղծութիւնք Ճիւաղութիւնք պարուք դէմ ընդ դէմ հարկանելով, և կամ ասիս հարկանելով, զմեռեալսն յուղարկէին ։ ։ Եւ այնպէս զայն սովորութիւն որ 'ի կռապաշտութիւնն անտի էր ծնեալ, զնոյն դարձեալ նորոգեցին ։

1 " Ջերկուս զայսոսիկ (ասէ Խորենացին) է. 20. վասն մեծին Կերսէսի) յաղագս նախարարացն բառնայ, մի՛ զմարձաւորաց ինամուն, զոր վասն ապաչելոյ սեփհական սգաստութեանն առնէին, և մեռանի՝ որ 'ի վերայ մեռելոյն գործէին ոճիրս ըստ հեթանոսական սովորութեանն ։ ։

Գ. Սոփ առնուլ։

Սուգ մեռելոց ոչ միօրինակ տևէր առ մեզս. քանզի թոմա արծրունի է. 3. վասն Գուրգենայ եղբօր Թագաւորին Գագկայ արծրունւոյ ասէ. "Եղև օր վախճանի նո֊ ցա սուգ մեծ ամենայն հայաստան աշխարհին. և ելայ զնա աղքայ (Գագիկ) լալուն մեծ պատուս ։" Իսկ յորժամ մեռաւ Թագաւորն ։ Հէթում, վասն սգոյ որդւոյ նորա Լևոնի՝ որ յայնժամ Պարսս հայոց էր անուանեալ այսպէս գրէ Վահրամ ։

"Բայց պարոնն այնքան սուգ առեալ,
Մինչ մահուչափ հիւանդացեալ.
Որ յամենից աղաչեցեալ
Փութով լինել Թագաւորեալ։
Եւ առժամայն ոչ հաւանեալ
Եւ յումեքէ ոչ սփոփեալ,
Զքէս ախ սոփ արարեալ
Տըկար անձամբ, և վշտացեալ։"

Ասաւել քան զայս պատմի առ թոմայի արծրունւոյ ։ 2. վասն մահուան Դերանիկին Գրիգորի իշխանին Վաս֊ պուրականի, որ յաւուրս Գէորգեայ կաթողիկոսի, և ։ Աշոտոյ Թագաւորի. "Եւ ժողովեալ աշխարհն վաս֊ պուրական՝ զախս պատ արարին կոծ մեծ ի վերայ նորա ։"

Ե. Օյխ պապաեղ։

( )ձիս պատառել ի նշան տրտմութեանէ ըստ օրինակի Հրէից՝ գտանեմք ուրեք յիշատակեալ առ Ագաթանգե֊ ղոսի ղՀ. "Եւ իբրև խօսեցաւ երանելին Գրիգորիոս զայս ամենայն, առհասարակ ձեռն ղօյխ արկեալ՝ զպատմու֊ ձանն պապաեղն Թագաւորքն և նախարարքն և այլ բազ մութիւն մարդկանն ։" Եւ առ եղիշէի 135. "Գուժկան հասանեը յաշխարհն Հայոց, զձակատ հարեալ և ղօյխ պապաեալ վասն ապստամբին Վասակայ ։"

Զ. Մահաբյանս կանգնել։

Ա՝ահարձանս կանգնել՝ի վերայ գերեզմանիկն՝ սովորութ՝ լինել ցուցանել վասն Աբշակունեաց այս քան խորհնացոյն յասելն վասն երուանդայ Թագաւորի՝ որ արշակունի էր՝ի մօրէ. "Բայց Արտաշէսի (արքայի) յիշեալ Թէ խառնուած արշակունոյ է երուանդ, հրամայէ զդի նորա Թաղել Մահաբյանս ,, . է. 46։

Է. Շէրիմ կանգնել։

Շ իրիմ կանգնել միայն վասն Հեղինեայ տիկնոջ Աբգարու Թագաւորին գտանելիք յիշատակել առ խորենացոյն, և այն յօտար երկրի, որ և կանգուն կայր մինչև յաւուրս նորին մատենագրի. "Ա՝յս Հեղինէ, ասէ, զաբգարեալ հաւատովք որպէս և զայր իւր զԱբգար, ոչ հանդուրժեաց բնակել՝ի մէջ կռապաշտիցն, այլ չոգաւ յԵրուսաղէմ... որոյ և Շէրիմ նշանաւոր կայ առաջի գրանն Յերուսաղէմ մինչև ցայսօր ժամանակի ,, է. 35։ Բայց զստորագրութիւն այսր շիրմի առ օտար մատենագրի ուրուք գտանելիք, որ նա ինքն և պատմիսս յոյն յԱբգարեան գիրս իւր, կամ գիրք ըստ. ուր նախ ասէ. " Եւ քանզի բազումս ձանաչեմ Շէրիմս զարմանալոյ արժանիս, զերկուս միայն յիշատակեցից յայսմ վայրի, զմին յԱղիկառնիա, իսկ զմիւսն՝ի հրեաստան ,,։ Յետ ասելոյ նորա Թէ յԱղիկառնիա կանգնեալ շիրիմն վասն Մաւսոլէոսի Թագաւորին՝ այնպիսի մեծագործ էր և փառազարդ, մինչև հռոմայեցւոց զամենայն մեծագործ շիրիմս կոչել Մաւսոլէա, ապա զՀեղինեայն յիշէ. որով ըստ նորա յետ Մաւսոլէոսին՝ շիրիմ մեծակառոյց Հեղինեայն է գտանել. այլ սակաւուք ստորագրելով ասէ այսպէս. "Բայց առ երբայեցիս՝ի քաղաքին սողոմացւոց (կամ շաղոմացւոց, որ է երուսաղէմացւոց), զոր կայսրն հռոմայեցւոց՝ի հիմանց քանդեաց, գտանի Հեղինեայ տիկնոջ բնակչի Շէրիմ Հրաշակերտ. զի գուցն է գործեալ՝ի նմա մարմնի ըհոնեայ, որպէս են և այլ կողմունք շիրմին. այս գուցն՝ի պայմանեալ աւուր տարւոյն և՝ի ժամու՝գաղտնի ինն շարժմամբ մեքենայի բանի, ապա յետ սակաւուց փակի. զոր Թէ յայլում ժամանակի գուցն գործեացես բանալ, յաւէտ խորտակել կարասցես քան Թէ փակել ,,։ Յոլսեպոս և՛

ի հնախօսուէ գիրք է · գլուխ կ · յիշէ զայս շիրիմ · և ասէ լինել երբեակ բրգունս կառուցեալս ի Հեղինեայ, երիւք վաստակօք բացատ յերուսաղէմ. զոր ոմանք համարին նոյն որ այժմ կոչի Գեթսեմանի Աքիսողոմայ · զորմէ կարես տեսանել ի Ճանապարհորդութենէ Լիսպոնէն հատոր ա · Թղթ · 265 · Հանդերձ պատկերաւն : Ալ զայս Թէ և հաւաստի առցուք, պարտ է միայն մանն ինչ նորին համարել ' · Նաև Բուզանդ ևս ձ · 16 · յիշէ շիրիմ ինչ ի գրեանս մանր մարմնոյ փառէնի կաթողկոսի Թադեայ յագաբակի մեծի մարգարէանոյին Յովհաննու · "Եւ անդ գերեզիկ Էջեմ գործեալ ,, · Ալ Թէ յորժամէր այս գեղեցկութենէ, չասէ ինչ ·

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Սովորութիւն ի գաղնագրութիւնս :

Ընդ այլոց ազգաց և զՀայոցն աւանդէն վիպագիրք սովորութիւն ըմպելոյ զարիւն իրերաց, իբրև անյեղլի գաղնադրութեան կամէին առնել : Տակիտոս գիրք Ժէ · Թղթ · 34 · ասէ · "Սովորութիւն է թագաւորաց ի կռիւն գալիս միաբանութեամբ՝ աջակցել, զԹամասեան իրերաց կապել, և ասղանեօք սրկել · անդ ի գերեզմանն արեան ընդ երեսս մարթոյն՝ խառն ինչ խոցելով զարիւնս միաբանց ծրծեն · և զայն գաղն համարին սրբազան, իբր սրբեալ արեամբ երկոցունց ,, : Զայս սովորութիւն Լուկիանոս և Մեղա պատմեն վասն սկիւթացւոց · իսկ Վաղերիոս Մաքսիմոս գիրք Թ · վասն Հայոց՝ ասելով · "Սարիսադէր (գուցէ Զօրօաադր, որ է Զրուան) ընդդէմ Հօրն իւրոյ Տիգրանայ Հայոց Թագաւորի եդ բան ընդ բարեկամս՝ առնեցուն յաջոյ ձեռանէ հանել արիւն, և զմիաբանց ըմպել զարիւն ,, : ԶԹագաւորսն զայնոսիկ զառ ի հռոմայեցի մա-

1 Այս հնախօս Թողոյք քննել, Թէ Սիբէնն կռչեցեալքն առ Ամիանոսի գիրք Իե · արգեօք ի հայկական Շէջէմ անուանէն ելանէ, զոյս ասէ լինել տեղիս գեանափորս և չքնաղս տայոյ ի գանազան սահմանս. ունելով յորմունս քառակուս Թաղնոց, գազանաց և կենդանեաց · զորոց սանն լինել գիրս խորհրդատուս : Ինքն լուեալ էր զսոցանէ չնեալ առ երկիղն ջրհեղեղի · բայց առաւել անկ է ասել զսուտս շիրիմն լեալ նախնեաց · որոց նման տեղի ինչ և ի հայաստան գտեալ և մնեալ պատմագ մեզ ոմն : Պատասխանի նաև ի Թեբայիդ Եգիպտոսի պատմ լեալ զոյապիսիս :

տէնադրաց յիշատակեալսն Թէպէտ և օտար համարեաս-
ցուք ՚ի մերոցն, սակայն որ ինչ վասն սովորութե ազգիս բանք
էն առ նոսա ՚ի դաշնադրութե, չէն մերժելի, զի գուցէ և
առ մերսն վարեր ՚ի հնումն այդ սովորութե. և զոր վասն
Մարաց և լիւդացւոց տեսանելմբ պատմեալ, նոյնպէս և
վասն Հռոմայեցւոյն Կատիլինայի պատմէ Սալուստիոս.
որպէս և Տերտուղլիանոս վասն այլոց ընդհանրապէս. Թէ-
պէտ և զանազան ազգք զանազան օրինակաւ հանդէին
զարիւն ՚ի դաշնադրին. յորոց և ոմանք ընդ գինի խառ-
նեալ ըմպէին զարիւն միմեանց։

ԳԻՐՔ ՎԱՐՁՈՒԱԾՔԻ

ՕՐԷՆՔ

ՀԱՑԱՍՏԱՆԵԱՑ

ՈՒՆԱՉԻՆ սահմանադրութեի օրինաց ՚ի Վաղարշապատ հաստատեալ յազգի մերում՝ յայտ առնէ խորհուրդն. զի կարգ ըստ կարգի ածէ ՚ի միջ որ ինչ բարեկարգութիք եղեն առ ՚ի նմանել յարքունիս և ՚ի քաղաքական ընկերութիս, ասելով. «Եւ օրէնս իմն հաստատ ՚ի տան Թագաւորուե իւրոյ. և ժամն որոշե ելևմտից և խորհրդոց և խրախճանութեե և զբօսանաց ... Հրաման տայ քաղաքացեաց մարդկան արգոյ և պատիւ լինել քան զգեղջկաց, և գեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս. և քաղաքացեաց մի կարի առ գեղջկօքն պերձանալ, այլ եղբայրաբար վարիլ վասն բարեկարգութեե և ամենայնիւ կենացդ, որ է շինուե և խաղաղութեե և կենաց պատճառք, և որ ինչ նման այսոցիկ ,, . Ը. 8 : Ի բանից աստի յայտնի երևի թէ Վաղարշակ մատեան ինչ օրինաց աւանդեալ էր ազգին. զի բերանացի ևեթ աւանդել զայդքան օրինաց դրութիս ոչ ապաքէն անդէպ էր այնպիսւոյ բարեկարգեալ տերութեան Վաղարշակայ : Եւ յայնչափ օրինաց սահմանելոց ՚ի նմանե, մի միայն է որ ուրոյն և յատկապէս յիշատակի հետզհետե առ նորին մատենագրի, զոր յառաջ բերցուք առ տեղեաւս :

ՅՕԴՈՒԱԾ Ա

Օրինէ յաւուրս Աբշալոմեայ, զոր կարգեաց նախ Աղաղբշակ պարիւն, և յետ նորա այլք։

Ա. Վասն յաջորդութեան և վասն արքայորդոց։

Ի ՆՈՅՆ նախագրեալ գլուխս գրէ Խորենացին վասն Աղաղբշակայ. "Եւ քանզի բազում ունէր ուստերս, պատշաճ վարկաւ ոչ ամենեցուն առ իւր կալ 'ի Մծբին, (ուր բնակէր յայնժամ ինքն Աղաղբշակ.) վասն որոյ առաքէ զնոսա բնակել 'ի գաւառս Հաշտենից, և 'ի ձորն նորին սահմանակալ, որ է արտաքոյ Տարօնոյ. 'ի նոսա Թողլով գչէնս ամենայն հանդերձ յաւելուածով մնից առանձինն, և ոռձկաց կարգելոց յաղբունստ, և միայն զառաջինն որդիս որ կոչեր Աբշակ՝ պահէ առ իւր 'ի համար թագաւորութե։ Եւ եղև այս յայնմհետէ և առյաւէտ օրինք 'ի մէջ Աբշակունեաց, միով որդուոյ բնակել ընդ արքայի, փոխանորդ լինել թագաւորութեն. և այլ ուստերաց և դստերաց գնալ 'ի կողմանս Հաշտենից՝ յազգին Ժառանգուհւոյ Արտաւազդ ։ արքայ յաւել տալ արքայորդւոց 'ի Ժառանգուհւէ և զդաւառս Աղիովտի և Առբերանի. "Սա Ժառանգուհի ցուցանի զեղբարս իւր և զքոյր 'ի գաւառս Աղիովտի և Առբերանոյ, Թողլով 'ինոսա զմանն արքունի՝ որ 'ի չէնս այնմ գաւառաց, հանդերձ առանձին մնից և ոռձկաց, ըստ օրինակի ազգականացն՝ որ 'ի կողմանս Հաշտենից. որպէս զի լինել նոցա պատուականագոյն և առաւել թագաւորացն քան զայնս արշակունիս. միայն օրինադրէ ոչ կեալ ՀԱՌյրարատ 'ի բնակութիւն արքայի ։ ։ ։ Ե. 22։ Սահատրուկ յաւել և զդստերս Աբգարու անդր առաքել. զորմէ ասէ Ե. 35. "Զամենայն զաւակ սանն Աբգարու մաշեաց սրով բաց յաղկանց, զորս եհան 'ի քաղաքէն (Եդեսիոյ) բնակել 'ի կողմանս Հաշտենից ։ ։ Արտաւազդ Ե. զայլ և զարքայորդիս առաքեաց յայն գաւառս. "Հալածէ, ասէ, ՀԱՌյրարատոյ զամենայն եղբարս իւր 'ի գաւառս Աղիովտայ և Առբերանոյ, զի մի բնակեսցեն ՀԱՌյրարատ 'ի կալուածս արքայի, բայց միայն զՏիրան (զեղբայր իւր) պահէ փոխանորդ իւր. զի որդի ոչ գոյր նորա ։ ։ Ե. 61։

Ի՛ւ այսպէս այնչափ բազմացան անդադար այս արքայքն դէք, մինչև բողոք բառնալ նոցա առ Ա. Տիրան արքայ. "Եւ եկեալ առ նա, ասէ, կանխագոյն իւրոյ ազգին արշաւս կոնեցաց որ էին ի կողմանս Հաշտենից, ասեն. ընդաբաձակեա մեզ զժառանգուիս զի նեղ է, քանզի բազմացաք. և նա հրամայէ ոմանց ի նոցանէ երթալ ի գաւառն Աղիովտի և Աբեբրանոյ. իսկ ոմանց առաւել ևս բողոք կալեալ առ արքայի, թէ առաւելագոյն նեղ է մեզ, ոչինչ ունկնդրէր լինէի Տիրան, այլ հաստատեալ վճիռ՝ ոչ այլ ժառանգուիթէ տալ նոցա, բայց զոր ունէին հաւասար տրոհել յինքեանս. զոր բաժանեալ ըստ մարդահամարի՝ գտաւ պակաս ժառանգուիթէ. քնակողայն Հաշտենից. վասն որոյ բազումք ի նոցանէ եկեալ ի գաւառն Աղիովտի և Աբեբրանոյ»։ էջ. 62։ Աբրաւոր Պարսից յորժամ յետ մահուան մեծին Խոսրովայ յարձակեալ տիրեաց աշխարհին, որպէս զբոլոր Հայոց՝ նոյնպէս և զոսոս ինաչ մեալ յանձանձէր. "Իակ Աբրաւշըի, ասէ, գեղեցկապէս յարդարեալ զաշխարհս Հայոց ի կարգ առաջին հաստատէր, նաև զարշակունին (զարքայորդիսն) զմեկուսացեալսն ի Թագէն և յԱլյրարան քնակելոյ՝ կարգէ ի նայն տեղիս մնիւք և ոճիկք որպէս էինն»[1]. էջ. 77։

Բ. Վասն Նախարարաց։

Ամենայն զոր ինչ գրեցաք յառաջ վասն նախարարութեց հայոց առնեն և նոցա ունել ինչ ինչ յօրինաց օրք չէն նշանագրեալ, այլ Բուզանդ հայոյմն անուանելով միշէ օրէնս լինի, որ միայն յաւուրս փոքուն խոսրովու երևի տեւեալ. "Յետ այսորիկ, ասէ, ոչ գադարեին Պարսք ի տալ պատերազմ ընդ խոսրովու արքային. և նա դնէր օրէնս, զի մեծամեծ առագանին, նախարարքն աշխարհակալքն աշխարհ հատեալքն որ էին բիւրաւորքն և հազարաւորքն, կայցեն առ արքային, և ընդ նմա շրջեսցին, և մի որ երթիցէ ի նոցանէ ընդ զօրս արքունի. զի երկիւղէր նա յերկմտութենէ նոցա. զի գուցէ վնասն գործ Դատաբէնայն գործիցեն, և ապստամբ լինիցին ի նմանէ»։ էջ. 8։

1 Տեղեկութիւն նոցա կարևոր է առ հմանալ և զապատութեն նախարարու թեանցն Ռոսանկաց և զՎարդպետականին, զորոց գրեալ եմք յառաջ. և յայտ առնեն զպատճառս բազմանալոյ նոցա։

ՅՕԴՈՒԱԾ Բ

Օրէնս յաւուրս Բագրատունեաց։

Յաղագս օրինաց Բագրատունեաց ժամանակին Թէ պէտ ՚ի պատմագրաց մերոց չունիմք ինչ ծանօթ ուն, բայց ՚ի գրեանց գտելոց Յովսէփ քաղաք լեհաստանի՝ իմանամք Թէ հայկազունք գաղթեալք ՅԱնի քաղաքէ և յայլոց կողմանց հայաստանեայց ՚ի լեհաստան, ընդ իւրեանս տարեալ ունէին մատեան օրինաց, որով վարէին յայնժամ ՚ի հայաստան։ Զայն մատեան Սիգիսմունտոս Ա. Թագաւոր Լեհաց որ ՚ի 1548. ետ Թարգմանել ՚ի լատին բարբառ, որ գտանի առ մեզ. և ՚ի յառաջաբանէ այնր մատենին օրինաց այսպէս խօսի Սիգիսմունտոս.

* Վասպէս զհայկազունս լեռնբնակեցիս, կամ որ նոյն է իւրովքիս՝ զպատակեալս մեր, մինչև ցայժմ պահեալ ունիաք իւրեանց հայկական արտունութիւն և օրինաք, որով նախորդք մեր ընկալեալ և հաստատեալ ունէին, այլ ՚ի ծագել հակառակութիւնք իրիք ՚ի մէջ նոցա և քաղաքի, կարևոր Թուեցաւ զայն գիր օրինաց իւրեանց՝ որ գրեալ էր ՚ի բարբառ հայկական, որով և ինքեանց միայն էր ծանօթ, Թարգմանել տալ նոցա ՚ի լատին բարբառ, և այսպէս մեզ աւանդել առ ՚ի չտալ տեղի ինչ տարակուսանաց կամ նենգելոյ. որպէս զի և մեք ընդ խորհրդակացս մեր ողջախոհ խորհրդով քննեալ և ինչ ինչ փոփոխեալ, վերստին հաստատեսցուք ,, ։ Յետ զայս գրելոյ՝ ապա յանուանէ յիշելով զՅոհաննէս Թագաւոր Բագրատունեացս, բերէ զպատուէր նորա այսպէս. ,,Յոհաննէս Հնորհօքն Աստուծոյ Թագաւոր Հայոց, ՚ի ժամանակս բարեհնորհ տէրունէ իւրոյ սահմանեաց ,, յաւուրս կիւրակէից ոչ քանալ գատաստան, ոչ առնուլ տուրս, ոչ պահանջել գրամ ՚ի պարտապանէ, և այլ պահպանութիւնս վանս կիւրակէից։ Յետ այնորիկ ասէ. ,,Բարեյիշատակ և բարեացապարտ Թէոդոս (գուցէ Աշտոտ) Թագաւորի Հայոց, և այլոց Թագաւորաց և իշխանաց ուղղափառաց Հայոց ,, հրամայեն է առնել արդարութիւն և իրաւունս ամենեցուն, քաղաքաց, աւանաց, գիւղից. և այլն։ Աւրչափ յիշատակութիւնք յայտ առնեն, Թէ և Բագրատունիք ունէին օրէնս և մատեան օրինաց։

Ա. Վասն յաջորդութեան Թագաւորութեանց։

(1)Եպէտ յետ բառնալոյ Թագաւորութեանն Բագրատունեաց գտանեմք զայս օրէնս ի սկիզբն գտատստանագրոց Մխիթարայ Գոշի, բայց յայտ է Թէ էր օրէնք ի կիր արկեալ յառաջս Բագրատունեաց. ուր և տեսանեմք ինչ ինչ տարբերութիւն. զի յառաջս Աբշակունեաց Թագաւորք յորդւոց յորդիս պայազատէին, բայց այս օրէնք Բագրատունեաց զերդաստս դնէ պայազատել։ Գտանին և այլ կարգադրութիւնք ինչ, զորս արժան համարիմ յառաջ բերել. "Թէպէտ և, ասէ, զանդրանիկն ի դէպ է Թագաւորեցուցանել, այլ զյառաջագիսն յաթոռ նստուսցէ արքայութեն. և որքան (ցորչափ ժամանակս) եղբարք իցեն նորա՝ որդւոց նորա (Թագաւորի) ոչ է իրաւացի առնուլ Թագաւորութի, և ի հատանել (ի սպառել) եղբարցն՝ ապա նստիս որդիքն։ Եւ Եթէ դուստր իցէ նորա՝ նահապետուն տուն կարգեսցէ, հանդերձ արամբն կէս եղբօր մասն առցէ։ Եւ Եթէ մահուամբ բարձցին Թագաւորք, և որդւոյ իցէ որդի և դստեր, որդւոյ որդին առցէ զաթոռն և ոչ դստերն. և որքան յորդւոցն իցէ ի ծննդոց՝ դստերն մի առցէ. ապա Եթէ առցէ՝ յօտարս համարեսցի։ Զի այգպէս մերն արքայ Աբգարիոս կարգեաց զտուն Թագաւորութե Պարսից, և նահապետն Նոյ ընդ որդիսն և դստերն ետ մասն վիճակի զկողմն Հարաւոյ. ըստ որում և կանայք Թագաւորեն կողմանցն։" Ապա դնէ օրէնս Թէ որպէս պարտ է կարգել զյաջորդութիւն՝, յորժամ միայն դուստր իցէ Թագաւորի և ոչ ուստր. կամ յորժամ ոչ զոք ունիցի ժառանգ՝ յայնժամ, ասէ, առ մերձաւորս անց ցանէ պայազատութեն. բայց զմիս միայն ի մերձաւորաց առ ինքն կալցի. իսկ զայլսն, ասէ, "Հեռի քնակեցուսցէ. որպէս և զայս սովորուի կալան առաջինքն Թագաւորք"։ Զայս ամենայն խօսի Մխիթար ի ՟ը. գլուխս սկզբան գատաստանագրոց։ Որով բանիս յուշ առնել կամի զայն սովորութիւն աբշակունի Թագաւորաց՝ զոր եդաք ի վերոյ։

1 Օրէնք յաջորդութեն ոչ անխախտ պահեցան յառաջս Բագրատունեաց. այլ երբեմն ի նոսա որք խռովութիւնս յարուցին վասն յաջորդութեան. յորս երևելի գտաւ Աշոտ ընդ եղբօր իւրում Ցոհաննու։ Այլ յառաջս Աբշակունեաց բաց ի Վաղարշայ սակաւ ինչ գտանին օրինակք։

Բ. Ա՛յլ ինչ ինչ յօրինուածոց Բագրատունեաց։

Ա՛ման Հարկաց գրի՛ւ գատաստանագիրս նո՛ր ելին Մխի-թարայ՛ւ նախագրեա՛լ գլուխն ե՛. ուր ասի. Յաղագս Թագաւորաց գատաստանի, և որք ձեռամբ նոցա. «Իակ Հարկս գաւառաց և ազգաց՝ Թագաւորք և իշխանք արգաւառեա՛ք առցեն, մի՛ ինչ աւելի քան զառաջնոցն սովո-րեալս կալցեն, զի ընդ ամենայնի համարս ունիցեն տալ. զի ՅԱստուածոյ կարգեցան՛ւ պահպանութի՛ւն և՛ փրկութի՛ւ աշխարհի՛ և ոչ՛ ի կործանումն։ Եւ արդ այսպէս լիցի. զանդաստանայն ջհինգերորդ մասն առցեն... զի արծաթ Թագին անդաստան և այգեստան և բուրաստան մի՛ լիցի ընդ Հարկաւ հնգեկի. նմանապէս ջցաղաց և տուն։ Ա՛յլ Թէ քնակիչքն ընդ արուեստի և կամ ընդ վաճառի Հարկիցին. զի ոչ է Հարկ գլխոյ քրիստոնէից, բայց այլ ազգեաց յորժամ բունի ընդ Հարկաւ արասցեն։ Բայց անդաստանք ջարդքն լիցին ընդ հնգեկեաւ, այլ ոստիկք տասանորգեսցին. զի Հող միայն է իշխանի և Թագաւո-րի, և ոչ ջուր. սոյնպէս ոստիկք, այգիք և ծառատունկք։ Ա՛յսպէս և յաւուրս չաթաՀի՛ յեօթնէկն մին գործի-ցէ իշխանի և տէրունի. այլ աւելի աշխատեցն զձեռամբ անկեաւն՝ անիրաւութի՛ւ մեծ է։ Եզին առանձին այլ Հարկ մի՛ լիցի, զի այն իսկ է զոր աշխատեալ հնգեկի. կովու լըտրեղն միայն լիցի. արօտի Հարկ այլ մի՛ լիցի, զի այն իսկ են արօտականք որ Հարկին։ Ոչխաքք՝ի գառնինն տասանորգեսցին. Թէ Տաճոյ իցէ տէրունեացն՝ ընդ ոչ-խարի փոխանակիցէ ըստ արժանւոյն։ Ձիոյ և ջորոյ և ի-շոյ մի՛ լիցի Հարկ. զի նոքօք բաղում անգամ ծառայեն ըզ-տէրունին „։

Ի՛ նոյն գլխոյ գատաստանագրոյ Մխիթարայ Գոշի՛ւ մէջ բերցուք և զորս յայտ առնէին զկառավարութի՛ւն և զկար-գաւորութիւն նահնեաց. «Անդատաստան է իշխանաց Հարկել զՀաւատացեալս զոր Հարկէն այլազգիք. զի յայլ-ազգեաց Հարկ արժան է առնուլ, և ոչ՛ ի նոցունց. որ-պէս առնէն Վիրք ընդ ձեռամբ անկելոցն։ Թագաւոր իշխանի տուեալ գաւառ, եթէ չինէ ըստ Հրամանի նոցա բերդ, և կամ աւան վաճառի, և կամ աւերակս՛ի նոյն տահմանն, ՛ի ժառանգութի՛ւն Համարեսցի նմա. մի՛ լիցի փոխել զնա առանց մեծի և իրաւացի յանցանաց. և զկնի մահու նոցա՝ որդւոց նոցա լիցի Հրամանաւ արքայի։ Սոյն-

պէս ընդ ձեռամբ իշխանաց ազատը լինին (այսինքն ազատոտհմիք) , և ընդ ազատաց (ազնուականաց) ձեռամբ՝ չինականք (լինին) : Յորժամ աւերս չինեսցեն և հողս հատանիցեն ՚ի մայրեաց՝ ստացուած լինի անփոփոխ , և որդւոց նոցա յետ մահու . . . Ի չինաւածս քաղաքի և բերդի՝ թէ պակասիցի գանձ արքային, ամենեքեան հասարակ նպաստ լինին : Աւրք քաղաքացիք առաւել քան զգեղջկունս պատուիցին , և գեղջկաց նմանապէս առաւել պատիւ լինի քան բնակչաց ագարակի . սոյնպէս լինի բերդի բնակչացն և աւանից . զի և կարգ առաջնոցն է մերոց թագաւորացն այդոքիկ „ : Որով կամ յիշել զկարգաւորութիւն Վաղարշակայ , զոր ՚ի վեր անդր յառաջ բերաք :

ՅՕԴՈՒԱԾ Դ

Դատաստանաբանք , և Դատաստանափէրք :

Յաւուրս Աբշակունեաց ՚ի Վաղարշակայ գտանեմք կարգեալ սահմանեալ դատաստանարանս . զի զայս յայտ ստնհէ ասելն Խորենացւոյն ե. 8 . վասն նորա՝ թէ հատատ "Իբաբաբոս ՚ի տան արքունի, Իբաբաբոս ՚ի քաղաքս և յաւանս „ : Խակ ուր են իրաւարարք , անդ հարկ է լինել և դատաստանարանաց . ուրանօր իրաւարարք կամ դատաւորք լսեն դատս և առնեն իրաւունս , ունելով իւրեանց նաև պաշտօնեայս , առանց որոց չէ մարթ լինել : Խակ թէ կային դատաստանարանք , յուցանեմ և այն բանս նորին մատենագրի . " Գիւղից և գաւառաց , և և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց , և հանուրց հակառակութեանց և գաշանց , այժմ առ մեզ գտանին անբաւ զբուացս մատենից , մանաւանդ որ ՚ի սեփհական աշտուէն (նախարարութեն) պայազատութեն „ . ա . 3 : Զի յայտ է թէ այսպիսի գրուածք և մատենք՝ յորոց վերայ անցմամբ ժամանակաց մարթ էր վէմ ծագիլ ՚ի ինչ ժառանգակցաց , ՚ի դատաստանարանս պահել լինէին . որպէս և առ այլ ամենայն ազգս է սովորութիւն :

Խակ վասն ժամանակի բազդատուեանց՝ ՚ի նմին խակ ՚ի նախագրեալ մատենի ՚ի լատին բարբառ գտանեմք զյատատատանագիրս նոցա , ուրանօր գլխակարգուն դնէ այսպէս . " Թագաւորք Հայոց զայս օրինակ իրաւանց առաջի

առնեն դատաւորաց»։ Ապա զնե յուրոյն ուրոյն գլուխս զդատաստանս վասն իրաւանց կտակի, վասն իրաւանց ամուսնացելոց, և վասն զանազան յանցանաց. և այլն։

Օ այսոսիկ տեսեալ զարմանամբ յընթերցուլն զնա- խադրութիւն դատաստանագրոց Մխիթարայ Գոշի. ուր բազում ուրեք գրե, թէ յառաջնոց ոչ գոլով գրով աւան- դեալ, վասն որոյ հարկեցայ ես՝ի գիր արձանացուցանել. զորոյ զանս արժան համարիմ քաղելով՝ի մէջ բերել։ Յերկրորդ գլուխն, որոյ վերնագիրն է. «Յաղագս թէ ընդ դէր այժմ կամեցաք գրել, կամ յումմէ՞ շարժեալ յայսոսիկ եկաք՝ի միտս»։ այսպէս զնե զպատճառան. «Ձի բազում անգամ լուաք պարաւանս ոչ յայլաեւեւից միայն, այլ և՝ի քրիստոնէից, եթէ քնաւին ըստ աւետարանին դատաստան ոչ է... Ձի մի՝ի պատճառս ոչ լինելոյ գրով դատաստան՝ գիմեալ երէիցն յայլաեւեան... Ձի բա- զումք... բազում անգամ և ոգիտէք թէ իւրեն զուղիզ դատաստան. սակս որոյ յուղղութի՞ և յանդիմանութի՞ սակաւուք այնոցիկ զգիրս գրեցաք դատաստանի... Ահա զի մի այս լիցի, զգիրս եդաք դատաստանի՝ի պատճառս յիշման. զի զոր յայնմ ժամու (անգիր լինելով) ոչ կարեմք յիշել, ՝ի ձեռն առեալ (զգրեալն) վերստին յիշեմք, և օ- տարաց ցուցանեմք ազգաց՝ գոյց վարել զատաստանաւս. որով բմբերանեալք մի լիցին յանդիմանիչք մեզ... Խակ եթէ յումմէ յորդորեալ եկաք՝ի գրել, ՝ի բազում ժամա- նակաց հեռե տարակուսեալ յաղագս սորին լինելի խոցո- տելով՝ի նահատեղն զմեզ մերոց և օտարաց ազգաց... և զարմացեալ յաղագս այսորիկ լինելի, թէ զիարզ յառաջ- նոց հարանցն մերոց ոչ կարգեցաւ»։

Օ այսոսիկ գրեր Մխիթար Գոշ յեր երկոտասանե- րորդ դարուն, յորում եկաց ինքն. այլ քանզի առաջին գաղթականք Հայոց, որք խաղացին՝ի լեհաստան, էին՝ի մէջն անդ մեծասանեերորդ դարու, նմին իրի՝ի ձահ ձուէ ասել, թէ նոյն գաղթականք ընդ իւրեանս առեալ տա- բան զձեռագիր դատաստանագիրս իւրեանց, յորմէ ան- մարթ եղև Մխիթարայ գտանել զնոյն՝ի Հայաստան. խակ՝ի լեհաստան՝ի ձեռին ունելոյ նոսա վարեին, որպէս յայտնի ցուցաք՝ի վերոյ։ Թէպէտ և Հայելով յայն օրինս՝ զորս բերէ վասն պայազատութե՞ Թագաւորաց և վասն այլոց՝ զորս բերաք՝ի վերոյ, պարտ է ասել թէ Մխիթար ունէր՝ի ձեռին գեթ հատուկտիկ գրուածս օրինաց նախ- նի բագրատունի և և արշակունի Թագաւորաց. ապա

թէ ոչ՝ հարկ էր ասել յիւրմէ յօրինեալ զայն, որ այլուստ անգէպ երևի. մանաւանդ յորժամ ընթեռնուիք ՚ի Ե. գլ. սկզբան գատաստանագրոյ նորա, ուր ասէ. "Ծաղը ամենայն օրինակաւ զօրինս իրաւանցս արասցեն որք ընթերցմանն սորա պատահիցեն, նմանապ զմեզ տեսանելով այնոցիկ որ յանուրջս երևուելոյն թագաւորութիւնս և բաղում ինչ ախորժելիս, և զարթուցեալ՝ գատարկ և ունայնս յաւելեալ իցեն։ Բայց գիտասցեն, զի ոչ անգիտանամ՝ եթէ ամենայն թագաւորութիւն երկբաւոր աղցաւոր և փոխելի է. այլ առաւել մերս եղև արքայութիւն, զի անցեալն ոչ է ՚ի միջի, և ներկայս չիք, և ապագային ոչ պատահիմ. բայց զփափագս ձևանալով ընում՝, և զյարմարութիւն առաքարկութեանէ ամբողջ պահել փութամ. յաղագս որոյ թողութեան մեզ լեցի ՚ի հաւատի տեսողաց. զի պատրաստ եմ յանխուզ պարապողաց զրամբասանս ժողովել. և ՚ինձ ցունց ևս թէ ՚ի դէպ իցէ և ոչ կամիցին թողուլ ազատս,, Ասյս բան յայտ առնէ, թէ ոչ յանձնէ ինչ յօրինեալ են օրէնքն այնոքիկ, այլ յառաջսոց անտի։

ԳԻՂԻԿ ԼՕՅՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲԱՐՔ ԱՌԱՋԱՏԱՆԵԱՑ

ՅՕԴՈՒԱԾ Ա

Ա. Բարք առաջնոյ ժամանակի և նախնի բնակչաց։

Կամեցեալ մեր զիւրաքանչիւր դարուց տալ տեղեկութիւն, հարկ է նախ զբարուց նախնի բնակչաց աշխարհիս ասել՝ սկսեալ ի բնակութենէ Նոյի ի հայաստան մինչ ի ցրուել մարդկան արտաքոյ աշխարհիս մերոյ։ Եւրդ ի բնակութենէ Նոյի մինչև ի փաղեկ, յորոյ ժամանակս եղև ցրումն, անցեալ ամք հարիւր։ այս դար ի նախնի քերթողաց կոչեցաւ Ոսկի դար, սակս անմեղութեան վարուց մարդկան. զի Սատուրնոս էր որ կառավարեր զնոսա. յոր անուն կոչէն նոքա զՆոյ. վասն որոյ գրէ Վարրոն ի գիրս Մշակութենէ. "Եւ յն առաջին մահկանացուք աստուածա-մերձք, բարեբարոյք և բարեկեցիկք, յորմէ և ոսկի անուանեալ դար"։ Եւ յիրաւի. զի քան զարարածոյն Աստուածոյ և զտեսչութենէն նորա ի բանական ստեղծուածս՝ չգոյր առ նոսա այլ բան կամ խորհուրդ. զնոցունց խօսքն, նոքօք քաղցրանային. որպէս և զանցից անցելոց յաւաչ և զկնի ջրհեղեղին. ախտ փառասիրութենէ հեռի էր ի նոցանէ, որով և գրգիռ կռուելոյ։

Իսկ պատմութենէ անցելոյն ուսուցանէին ևս որդւոց և թոռանց իւրեանց զորս գիտէին և ուսեալ էին զԱստուածոյ և զերկնային մարմնոց և զերկրայնոց և զժշկական բուսոց, հեռացեալք բնաւին ի հակառակութենէնց և ի գժտութենէ առ ի չգոյէ առնէից և պատճառաց յայնպիսիս մնաբերելոյ։ Ոգի կառավարութենէ կամ իշխողութենէ յայնժամ էր ոգին բնական զթութենէ զոր ամենայն հարք

ունէին առ որդիս իւրեանց . զի ամենայն հրամայօղք էին
Տաղք , որք էին տեառք որդւոց և Թոռանց , որոց ընծայեա
էր քաղցրուՀք հրամայել . նոյնպէս և Տնազանդելոց քաղ-
ցրուՀք և սիրով լսել . զի Տնազանդելին Տօր և յայն-
պիսիս՝ զոր և ինքեանք իրաւացի Ճանաչէին : Ամենեքեան
Տաւասար եղբարք իրերաց , Տեռի յամենայն ամբարտա-
ւաՃուԹէ . զի ոչ գոյր առ նոսա ազատ և նախաիրալ , քա-
զաքացի և շինական . միաբանուԹիւն և միաբանուԹիւն յամե-
նայնի՝ մինչև ի լեզուս իսկ նոցա՝ սիրով կապեալ էր ընտա
յամենայնի . ամենայն ինչ Տասարակաց . անլուր էր առ
նոսա խմ և ֆ . անլուր և յափշտակուԹիւն և ամենայն ա-
գահուԹիւն : Ոչ գոյր առ նոսա չքաւորուԹիւն և աղքատու-
Թիւն , շատացեալք յամենայնի որ ինչ սկզբ են ի գոր-
ման կենաց մարդոյ . ոչ գոյր և փարԹամուԹիւն կամ ըն-
չաքաղցուԹիւն , որ ծիւրե զսիրտս այժմեան ժողովրդոց .
խաղաղուԹիւն անդորրաւէտ Թագաւորէր ի նոսա , անմե-
ղուԹիւ կենաց ցոյց : Ա յսպէս աՀա ստորագրեն նախնիք
զարս բնակչաց աշխարՀիս ոսկի գարուն , և զնոյն ակն-
արկեն նաև պատմուԹիւք սուրբ գրոց վասն այնր ժամա-
նակի : « Սատուրնոս նախկին բնակչաց Թագաւոր , ասե
Յուստինոս գիրք իջ . այնչափ արդարադատ պատմի լեալ
մինչև ոչ ուրուք երբեք ծառայեալ ընդ նմուա , ոչ ուրուք
առանձին ինչ ստացեալ , այլ ամենայն ինչ Տասարակաց և
ամենեցուն բաչխեալ , որպէս Թէ ամենեցուն լինէր մի
միայն Թոշակ կարգեալ » : Եւ Վիրգիլիոս ի ա . գիրս Մը
շականին . « Ոչ նշանս կանգնել , և ոչ սահմանաւ զանս
գաստանս որոշել օրէն էր » յայնժամ : Եւ ի ը . գիրս
Ենէականին կոչ Ոսկի գար սակս քաղցր կառավարուԹ :

Այլ զի այս ամենայն բնակիչք Տարիւրեմեան ոսկի գա-
րուն՝ էին Տաւաստեաւ բնակիչք մերոյ աշխարՀիս , որպէս
և ամենայն ողջախոՀուրդ Տնագիտք ընդունին , արժան
էր ուՀք ի բանասիրաց ազգիս փոյԹ կալեալ խմբագրել
զառ ի Յունաց և Տռոմայեցւոց խօսեցեալսն յաղագս որ
ինչ ոսկի գարուն են նկարագիրք , գլխակարգեալ զնոսին
մի առ մի ըստ այլ և այլ առաքինուԹեաց ժամանակին , և
զնոյն իրրև օրինակ և Տայելի անարատ քաղաքավարուԹ
մատուցանել այժմեան բնակչաց աշխարՀիս մերում . զի
յանդիմանն տեսեալ զնախնեացն վարս անմեղուԹ և զնետ-
նոյն խեղաՃիւք գնացս , երկոցունն ևս բնակք միոյ աշ-
խարՀի , ի սոցանէ ի բաց կացեալ՝ նոցին նախանձաւորք
լինէին : Եւ միանգամայն յերևան Տանել զկեղծիս հին

իտալացւոց. որք այլ ընդ այլով առեալ զմերն Սատուրնոս այսոքիքն է գՆոյ՝ ընդ իւրեանց Սատուրնոսի, որ ինչ վասն մեղսոյն պատմի, յիւրեանցն առեալ Հանեն. որով, ասեն, ընդ Ցանոսի յաղթահատեաս ազգէ ընտկելոյ ի մեծատա- ճած կղզին, որ գայր երբեմն ի մէջ Ասիոյ և Ափրիկոյ, եկեալ հասեալ ի ցամաքն արևմտեան, և ախտեալ յեր- թալիսի և ի Լիբիա, և անտի նաւարկելով եղեալ իցէ յԻտալիա: Ուր որպէս կարծեմ, զսոյա նաւարկութիւնն միայն առիթ առեալ՝ նմանեցուցին նաւարկութիւնն նախ- նոյն Սատուրնոսի կամ Նոյի. և զոր ինչ զսմանէ լուեալ էին, կեղծեցին ի վերայ օտարականին եկելոյ, մինչև ա- նուն իսկ հնարել նմա Սատուրնոս. և այնպէս զսակի զգոն բնակչացն Հայաստանեայց տարեալ եդին յիւրեանց Իտա- լիա, որում ընդդիմանան ամենայնիւ և ժամանակն և հանգամանք պատմութեանն:

Բ. Բարք յետ աղաբակաշնութեան:

Յայսմ ժամանակի նկարագրին բարք մերոց առաջնոյն նահապետաց՝ սկսեալ ի Հայկայ, որ նոյն երևի ընդ նա- խագրեալ բարուց ոսկի գարուն: Իակ թէ նախանձաւոր էր Հայկ անմեղութեանէ վարուց նախնեացն իւրոց, անտի յայտ է, զի գործեալ նորա ի Բաբելոնէ անդ՝ ուստի սը- կսեցան նախնիքն իւր, գայր զաղղի առնոյր ուրանօր բը- նակութիւն էր Նոյի և Հարց իւրոց Թորգոմայ և Ազբանա- զայ [1]: Մանաւանդ զի յետ գործի իւրոյ հետես անդէն ի Հայաստան բնակեալ և զնացօրդս նախնեաց բարեզգեցեալ արանց՝ որոց չէր գնացեալ ի Սենաար. և որպէս ետս կար- ծեմ, հետես անդէն և զՆոյ նահապետ. որումհետէ և ան- սայր ի հարկէ յամենայնի: Վասն որոյ և պատմելքն առ Մարիբասայ վասն Հայկայ և որդւոց և Թոռանց նորա՝ որք էն առաջնոյն նահապետք մեր, էն շինութիւնք տե- ղեաց, հիմնադրութիւնք նորանոր բնակարանաց և քաղա- քաց, խաղաղութիւն ստանալ երկիրս, և սիրով որոշել սահ- մանս. յայսոսիկ զլռեալ ասէ զՀայկ, զԱրմենակ, զԳե- ղամ, զՄիսակ և զայլս [2]: Ա յլ կարի ցանկալի էր մեզ, եթէ

1 Ոչ առ փառասիրութիւն կամ ամբարտաւանութիւն մեծացաւ ի պա- տերազմի ընդ Բելայ, զի ի պաշտպա- նել միայն և ի վերծուցանել զառն և զերկրորդն իւր ի ձեռաց բռնակալին:

2 Ինձ Թուի զայս յոյժ առնել երբ կրօրդին Աշտոյ ազգայն առ Հօրդ բօրօրդին իւր Աշտա, յորժամ ի

առաւել Հոխագոյն բանիւ և ընդարձակ ստորագրութիւք կը պատմեալ զվարս և զարարս բնիկ նահապետացն մերոց ։

Գ. Բարք հայկազնոց յԵռնմոյ ։

Յորչափ չէին յարձակեալ յաշխարհս մեր օտար Թշնամիք, ի խորին խաղաղութիւն վայելէին առաջինն նահապետք մեր՝ շինութիւնս զհետ եղեալք, որպես ի վեր անդր ասացաք. բայց ի կարի ին խաղաղասէրք բարուց նոցա Թուի զհետ եկեալ մոռանալ զկրթութիւն քաջագործուն նախնեացն իւրեանց Հայկայ. յորմէ և սահմանակից Թշնամեաց ի ներքոյս արշաւել և Տարտահարել զնոսա ։ Զայսոսիկ տեսեալ Ներսէս՝ վառեցաւ ուխտով հայրենիքսքաջութ, և վանեաց յամենայն կողմանց զԹշնամիս. զորմէ կարես տեսանել ի գլուխն Պատմութիւն։ Եւ յայնմհետէ կերպարա նափոխ եղև ոգին այն անմեղութիւն և խաղաղասէր առաքինի գարուն, որպես յայտ առնէ պատմութիւն ազգիս. պա կասեցին օր ըստ օրէ արք աշխարհաշէնք. և բարեկարգութիւն աշխարհիս երթայր և նուազէր։ Թէպէտ և յարեաւ մեծն Տիգրան և զնախնեացն իւրոց զգեցեալ զոգի՝ կենդանա ցոյց զկործանեալ բարեկարգութիւնն և շքեղ ևս հանդի սացոյց, զորս պատմէ Խորենացի ածեալ ի Մարիբասայ, բայց յետ նորա առ սակաւ սակաւ անդրէն նուազեաց. Եւ Հաս ժամանակ զի բոլորովին բարձաւ յագգէս ոգի շինու թիւն և բարեկարգութիւն, և փոխանակ այնր տիրեաց ոգի անձնասիրութիւն և ամբարհաւաճութիւն, մինչև այր զա րամբ ելանել առ ի տիրել, և մինչև զօտարազգին մոռ ծանել զպարթևն, ասէ պատմագիրն. բայց մուտ նորա ոչ միատակաց, այլ մանաւանդ օգտակար. զի արդարև պար թևն Վաղարշակ Համեմատս գտաւ մեծին Տիգրանայ անգ րէն նորոգելով ի մէջ զբարեկարգութիւնս ։

Յետ ձերբեակ երևելի փոփոխութիւնս բարուց նկարա գրելոյ, քանզի չէք այլ փոփոխութիւն յետ Վաղարշակայ

յորդորէին զնա ի խաղաղութիւն, յիշէ ցնախն շինութիւն բարս բարոյականին պահպանմանս, առ ի գաղափարեցուցանել զնա ի կառուց՝ որ միայն եղծանէր զաշ խարհ իւրեանց ։ « Հրովարտակ յա ռաքելութեաց անտի առաքէր առ միւս ևս Աշտ, որ Թագաւորեալն էր, որ դի հօրեղբօր նորուն. զի նախնականն Լուսաւոր բնականաբար շարժմամբ բա րոյականին առ ի յօգտակար վարքեան ձեռնկին, գալ հանդիպել միմեանց սիրոյ և խաղաղութիւն արգասիք. և սիրական կենաց նոցա հաստատուց մի անխռովութիւն, և աշխարհ նոցա մի եղեալ խոպանդեալ սպառազուռս փշաբեր և մացառախիտ, և վինչ ի զգաստս հնձականաց ։։ Յօհաննէս կաթողիկոս ։

առաջնոյն նման, ինչ այսուհետև խօսել զնմանի ձրից, զբարոյական առաքինութենէ և զայլ և այլ ախտից և թերութենէ ազգիս։

ՅՕԴՈՒԱԾ Բ

Բնական յիւր կապաբելութենէն ապիկս։

Ա. Վայելչութեան կերպարանաց։

ՊՃԱԳՐՈՒԹԻՒՆ գեղատեսիլ կերպարանաց, այց և հասակի վամն բազմաց գտանեմք յիշատակել՝ի պատմուԹիս, Թէպէտ և սակաւուք, զորս կարգաւ յառաջ ածցուք։

ՀԱՑԿ

Ա՝արիբաս առ Խորենացւոյն ա՛. 10. կոչէ զսա "ԳեղապաշՃ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն"։

ԳԵՂԱՄ

Որդի Ամասիայ. անուն իւր ցուցանէ զիւր գեղ. և՝ի գեղեցկուԹէ Թուի կոչեցեալ այսպէս։ Որոյ և եղբարքն իսկ այլ և այլ մականուամբք կոչին առ Խորենացւոյն, որ ասէ վամն Ամասիայ. "Եւ զնոսա՝ի ժառանգուԹի երկուց որդւոց իւրոց, արւոյն Փառոխի, և կայտառին Ցոլակայ". ա՛. 12։

ՍԻՄԱԿ

Որդի Գեղամայ. զոր Խորենացին կոչէ անդէն "Ա՛յր սեգ և անձնեայ, բարեգեղ, կորովաբան և գեղեցկաղեղն"։

ԱՐԱՑ

Որդի Աբրամայ. ընկալաւ մականուն Գեղեցիկ. որոյ և համբաւ գեղեցկուԹեն գրգռեաց զՇամիրամ՝ի պատերազմ. և՝ի պատՃառս գեղեցկուԹէ իւրոյ զրկեցաւ՝ի կենաց։ Խորենացին ա՛. 15։

ԱՆՈՒՇԱՒԱՆ

Ծոտան գեղեցկին Աբայի, որոյ անունն յայտ առնէ ըզքաղցրուէ գիմացն. և Սօս մականունն զոր ետուն նմա՝ցուցանէ զարձրադիտակ կերպարան նորա, զոր և վասն այնո րիկ ձօնեալ կարծեմ՝ի Սօսեաց անտառն Աբրահամեկայ, որ պէս և Հանդի Գրիգոր մագիստրոս. զորմէ տես՝ի Խորենացին ՟ա. 20։

ՄԵՆՈՆ ՏԻԳՐԱՆ

Խազում ստորագրութիւք յիշատակէ զսա Խորենացին. «Զայս՝ և որ այլ այսպիսիք բազումք՝ երեք մերոյ աշխարհիս խարտեաշ այս և աղեբեկ ծայրիս հերաց երուանդեան Տիգրան. երեսօք գունեան և մեղուաչն, անձնեայն և թիկնաւէտն, առոյգաբարձն և գեղեցկատես»։ ՟ա. 24։ Դարձեալ. «Բայց գովեմ զքաջ նահատակն զհմ, և զնիզակաւորն, և զամենևին բոլոր անդամովք համեմատն, ՟ի գեղեցկութիւն աւարտեալ հասակի. քանզի առոյգ ամենայնիւ ըստ իրեարս պատշաձեալ»։ 29։

ՍՄԲԱՏ

Որ էր դայեակ ՟ի. Արտաշէսի և սպարապետ նորա. զորմէ Խորենացին. «Սիրելի է ինձ ասել և վասն առնն քաջ ջինն Սմբատայ. քանզի արդարև ըստ առասպելին (այսինքն ըստ Դողթան երգոյն) ոչինչ կարի հեռի՝ի Չմարտուհին. որ ունէր հասակ անդամոց համեմատ քաջութեն և առաքինութիւք ոգւոյն որսորդ, և գեղեցկութիւք ալեօք վայելէր չացեալ. սակաւ ինչ արեան նիշ ունելով յաչսն, որպես գրակնտիկն՝ի վերայ ոսկւոյ և՝ի մէջ մարգարտոյ ծագէր»։ ՟ը. 52։

ՅՈՒՍԻԿ

Ոմն սորա ասէ Բուզանդ ՟ը. 12. «Տիօք առոյգ և բարձր հասակաւ. գեղով երեսաց աքանչելի և չքնաղ, զի այլ՞ը գտանէր ուրեք նման նմա՝ի վերայ երկրի»։

ՄԵՆՈՆ ՆԵՐՍԷՍ

Նոյն ինքն Բուզանդ ասէ զմանկ՝ի ՟ը. 3. «Ամէր էր

սա մեծ և բարձր ցանկալի հասակաւ, և վայելուչ գեղով. զի ոչ գտանէր ուրեք նման նմա գեղեցկութեն՝ ի վերայ երեսաց երկրի, տեսչալի ցանկալի և զարմանալի և ահա. գին ամենայն նայեցօղ տեսողաց, և նախանձելի յարուն՝ ի զինուորական կրթութեն .... ցանկալի գեղով իւրով երկայն հասակաւ, և չքնաղատես հերօք վարսից իւրոց կայր՝ ի սպասու Թագաւորին »: Եւ ստոլև գրէ, Թէ Աբշակ Թագաւոր " զՀերմն գանգրագեղս (նորա) զվայելուչ Թագագանգուր վարսից զի ուրեք երբեք նման նմա ոչ գտաներ, զայն՝ ի բաց խզել հրամայեր »: Մեսրոպ՝ ի Թիւն չ. այսչափ ինչ գրէ զնմանէ. " Մեծահասակ և վայելուչ երեսօք ահագին տեսողացն ... ոչ գոյր նման նմա՝ ի մարդք ... (ղորոյ) զՀերս գանգուրս Թագամանն վարսից՝ ի բաց խուզել »:

ՍԱՀԱԿ

Իշխանն սիւնեաց. զորոյ՝ ի պատմէն զապանումն՝ ի պատերազմի՝ ի Հոլ ոստիկանէն որ՝ ի սկիզբն ինևերորդ դարու, Դեղեցկադիտակ կոչէ Սահեփանոս էֆ. առ որում կարես տեսանել և վասն այլոց իշխանաց Սիւնեաց:

ԱՊՈՒՍԱՀԱԿ

Յորժամ ոստիկանն Բուղայ՝ ի մէջն անդ ինևերորդ դարուն յարձակէր՝ ի Հայաստան՝ արձակեաց զնմին՝ ի զօրավարաց իւրոց ՃիրաՔ անուն՝ ի գաւառն Ուշտունեաց. յորում, ասէ Թոմա արծրունի Ճ. 2. "բմբռնեալ լինէր յայմժամ՝ի ոմն՝ ի Հայոց ազատանոյն առնմից Վահևունեաց Ապուսահակ անն, եղբայր Սահակայ եպիսկոպոսի ոստանին ԿաղՃաւնոյ և Մարդպետականի. և էր ուրեք բան մանկունդ ... սա ածեալ լինէր առաջի զօրավարին ՃիրաքայՃ. որոյ տեսեալ զբարձրաբերձ վայելուչութեն հասակին և զպատշաՃ գեղ երեսացն, զիաղիւեալ գոյնն՝ ի տեսիլ արուսեակի՝ ի մէջ սպիտակափայլ ալեացն պատուաբերի, և Հաճոյ Թուեցաւ յաչս զօրավարին »: Զոր և վասն այսպիսի գեղեկութեանն բռնադատեալ սկսաւ դարձուցանել՝ ի կրօնս իւրեանց. և յընդդիմանալն նորա վարդապետուեն նոցա, որում քաջ տեղեակ էր, նահատակեցաւ՝ ի Բուղայէ յաւազ քան զայլսն:

Յայմմ ժամանակի բազմութիւք յիշատակին այսպիսիք

տեսլեամբ ընտիրք և գեղատեսիլք, զորս որոշեալ յայլոց ի կրօնս իւրեանց գարձուցանէին հաւատացեալք. զոր օրինակ յիշէ Յովհաննէս կաթողիկոս նախ զորս ի գաւառն Տարօնոյ. "Խակ զանձնագործս և զերեսաւորս և զգուշնեայս արտաքոյ այլոցն տրոհեալ..յօրէնս իւրեանց գարձուցանելոյ,,: Ապա յիշէ զորս ի Վասպուրականի. "Եւ ըստ օրինակի կողմանցն այնոցիկ Տարօնոյ, և անդ ևս նոյնպիսաբար արարեալ, և տրոհեալ զարեհաճակատիսն և գյաջողաձեռնականն ի սէտս իւրեանց պաշտամանցն բերել, և զայլն կերակուր սրոյ տային,,: Ձետ այնորիկ և գԴրունայ. "Անդ ապա կրկնակի ընտիրս զամենեսեան հանեալ... և զայժմու ևս ըմբռնեալսն զդիտակավայելուչսն տրոհեալ ի բաց, և ի բանտ արգելեալ,,: Յորս գտանիին ասէ արք եօթն, որք "զուարթագին երեսօք էին, և գեղեցկադիտակք, և յաջողակք ի զէն շարժել,,: Սոքա ամենեքին զորս յիշեցաք, ըստ մասին նահատակեցան, և ըստ մեծի մասին ընկալեալ զկրօնս Տաճկաց, խառնեցան յազգ նոցա [1]:

ԱՀՈՑ

Որ է առաջին թագաւոր բագրատունի յԼոր անդ ինեբորդ դարուն, զորմէ Յովհաննէս կաթողիկոս. "Ի տիս հասեալ միջակութեի քաջահասակ էր նա և անձնեայ և թիկնաւէտ և զուարթերես և մրայտն, նկարէն իմն և նիշ արեան յաչս ունելով որպէս զակինդ կարմիր ի մէջ մազգարտի ծագեալ. և վայելչացեալ գեղեցկութեն ալեօք, մեծիմաստ և քաջբաբան,,:

ԱՀՈՑ

Որդի Շապհոյ եղբօր ե. Սմբատայ արքայի ի սկիզբն անդ տասներորդ դարու, զորմէ Յովհաննէս կաթողիկոս. "Եւ ապա կացուցաներ արքայ Սմբատ զանձնագործն և

1 Եւ առ պատմագիրս Յունաց յիշատակեալ առ Թէոփանէսի, Ն. Նոտառասայ, Զանազասայ անն: Պուլղար ի Տարօնոյ ի սկիզբն ինեբորդ դարու յատուկս կայսեր Թէոփիլոսի, և փետռացեալ նման. զորոյ զգեցուկս զարեհ որպէս և զկորմօնէ և զբուրմակ ինչ պատմին պատմագիրք Հայոց զկայսեր Նաստասեայ. գիրք Յունաց,

զվայելուչ երիտասարդն զԱստո որդի Հապհոյ՝ սպարապետ Հայոց ,, :

ԳԱԳԻԿ ԱՐՔՐՈՒՆԻ

Յառաջին Թագաւոր Վասպուրականի՝ ի սկիզբն տասներորդ դարուն , այր բազում՝ձիրքք Հոխացեալ . որպ գերկակութեն դիմաց այնչափ էր՝ մինչև ի գնալն Նորա առ Յուսուփ ոսահկան , " յոյժ զարմացեալ ընդ գեղ երեսաց նորա ,, ասէ Թումա արծրունի Ե . 3 : Աչքլ զայսպիսեաց որ ի տանկն արծրունեաց , կարես տեսանել առ սորին մատենագրի :

ՎԱՀՐԱՄ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ

Հօրեղբայր Գրիգորի մագիստրոսի՝ ի սկիզբն մետասաներորդ դարուն . զոր նա ինքն Մագիստրոս՝ի պատասխան նմին Յոհաննու Սիւնեաց աբքեպիսկոպոսի՝ նմանեցուցեալ Աբշաւայ և Աքուշաւանայ՝ կոչէ " Աբշակ , որ և նորայն նմանապէս գեղոյն և առնայարմար հասակաւ , գեղեցկապարանոց և չքնաղադէմ տեսլեամբ որպէս Աբրայն մեր և Աքուշաւանն սոսանուէրն արտեան ,, : Յորում կոչէ զնա " Բարձրահասակ և մանաւասարդ քաջաց ,, :

ԱՌԳԱՄԵՏ ԱՐՔՐՈՒՆԻ

Կնուանեալ Պատու կուրապաղատ . որդի մեծի իշխանն և մագիստրոսին Թոռնկայ՝ի մետասաներորդ դարու . զորմէ գրէ չարունակօղ Թումայի արծրունեայ Ե . 12 . " Կէր և անձամբ վայելուչ , մեծաշուք և բարձրահասակ , գանգրահեր և գեղեցկատեսիլ քաղցրախօս և անուշաբարբառ իբրև զտատրակ ,, :

ՀԱՐՊԻԿ

Ի մէջն անդ մետասաներորդ դարու . սա և եղբարք իւր որչափ քաջուածք երևելիք՝նոյնչափ և տեսլեամբ ահաւորք և գեղեցիկք . յորոց զգլուխս Հարպիկանն նեղգաս կալեալ Յունաց հատին , և զմիւս եղբարս նորա "զոր զիս Հաբելի տարաւ (ասէ Մատթէոս Ե՛ր . Պիւռոս զօրավար Յունաց) ի կոստանդնուպօլիս առ թագաւորն Մոնոմախ . և տեսեալ զնոսա թագաւորն և ամենայն

տունն Յունաց՝ հիանային ընդ սոսկալի տեսիլ կերպա-
րանաց նոցա . վասն զի աշաւորք էին տեսլեամբ , և թիւ
կամքք հանդերձ բարձր էին քան զամենայն տունն Յու-
նաց . և յաղագս գեղեցիկ տեսլեան և ոչինչ արարին
խրատ նոցա . այլ հրամայեաց անցուցանել զնոսա ի կղզի ,
զՊատիթ և զԼևան և զՈստանդին , զայր քաջք և հզօրք
և իշխանք երևելի Հայոց ,, ։

Լուրոպացի բնագրագուներ՝ ընդ որս և Վիրէյ, ի խօսելն ի
մարդակազմութենէ Հառին զգեղեցկութենէ կերպարանաց
մարդոյ՝ զնմակիչս միայն առ կովկասային լերամբք ածէն
ի միջ . անդամսոր է ասելով ի համօրէն աշխարհիս բնիկ
սահմանն մարդկային գեղեցկութենէ . այսինքն է՝ ի վրաս-
տան , ի Չերքէս , ի Մենգրէլ-Իմէրեթի , և այլն . և Ճըղ-
մարիա է . զի և ի պէտս մեծամեծաց օսմանեան տէրու-
թի սոցունց ասաի գերի վաճառել տանին ։ Բայց ի պատ-
մելոցս մինչև ցայս վայր մարթի ի խնդատասիրել , թէ զսահ-
ման գեղեցկութենէն պարտ է ձգել տարածել մինչև ի շրջ-
քակայ սահմանս կովկասեան լերանց , զոր օրինակ է և
Հայաստան . յորոյ հիւսիսային սահմանս ձգին և բազուկք
ինչ կովկասեանք . ուր թողուք , զի զոր ասէն գերեալս ի
վրաստանէ , ըստ մասին են ի նոյն իսկ ի հիւսիսակող-
մանց Հայաստանի , զոր Վիրս կոչեն սակս ի միջ Վրաց
բնակելոյ . որպէս և աչքք իսկ տեսեալ է մեր ի Բիւզան-
դիա ոչ սակաւ գերեալս ի Ջաւախաց , որ է մեր գաւառ
ի Դուգաբք նահանգին ։ Որպէս և ԱՂաղուանից բերեալ
ասէն , զոր Լեզգիք երբեմն յաիշտահակաւ գերէին յայլոց
նահանգաց մեծին Հայոց , որք են Ուտի , Աղուանք և Սիւ-
նիք , որոց բնակչացն գեղեցկութիւն համբաւեալ է . տես ի
նոր Հայաստան ի Թղթ . 273 . զգիւղն Շահանդուխտ ։

Ո այսչափ տեղեկութենէ ընկալեալ ի հնոց և ի նորոց
վասն բնական կազմուածոյ բնակչաց մերոյ աշխարհին՝ այլ
ազգ յոյժ պարտ է իմանալ զբան Մաթեոսին , քան զոր ի
մանան արգիք . որ գրէ ՝՝ . ից . « Մտածանելի է յաւէտ
փոփոխութենէն անուան , որ յաճախեալ է և սովորական առ
ամենայն ազգս . որ և Թուխ ոմանց առնել զայն յանդուգն
փոփոխութիւնք տաւից . յոյր սակս ի դէպ իսկ քան զամե-
նեսին Հառնրիմ յազգակատութենէ և յրնտանութենէ ազ-
գաց յառաջ ածելն Պոսիդոնիոսի զնշանակուշն անուանց ։
Քանզի ազգ Հայոց , Ասորւոց և արաբացւոց բազում մեր
ձառութիս ունին ի խօսս , ի վարս և ի կերպարանս
մարմնոյ , մանաւանդ ուրանօր Հուսկ առ միմեանս բնա-

կին ։ Զայս ցուցանէ և Մ[ի]ջագետք յերից ժողովրդոց առ[ա]ջի խառնեալ. զի առաւել երևելի է յայսպիսիս նմանուն նոցա . իսկ թէ ուրեք գայի ինչ տարբերուածի՝ քան զայլս ՚ի սոյն կամ յայլ ինչ, մանաւանդ յոյս բնակեալ են ՚ի հիւսիսակողմն կամ ՚ի հարաւակողմն և կամ ՚ի միջնասահմանի , բայց հանապատ ունին բերուն ։ Սոյնպէսնակ և առաքեստանեայք , Արիք և Հայք նման են իրերաց և սոցա . զոր և յայտնաւն անկ է իմաստասիրել , ըստ որում անուանք սոյն ազգացս են մերձաւորք . զի որք ՚ի մէնջ Աստրիք կոչին , նոքա ՚ի նոյն իսկ Աստրոց Աբրահամեանք կոչին „[1] ։ Աւելորդ իմանալ զայս բան Մարաբասի՝ նախ պարտ է գիտել, զի ընթացք բանի նորա անդանօր է ՚ի Քատագիտել զՀամերոս յանուանակոչելս ինչ տեղեաց և ազգաց , յորմէ ըստ դիպաց իմն բերէ զայս բան . երկրորդ՝ զի ՚ի Պոսիդոնիոսէ առեալ բերէ . և երրորդ՝ զի յայն տեղիս դնէ զայս նմանուածի Հայոց ընդ Ասորեստանեայս և ընդ Ասորիս՝ յորս բնակին մերձ առ միմեանս . որ է ասել ՚ի հարաւակողմեան մեծին և փոքուն Հայոց . այլ աղագաւ յօրինակ բերէ և զՄիջագետս ։ Աւրդ նաև ըստ նորին իսկ Մարաբասի չէ մարթ իմանալ զամենայն Հայոց . զի վասն սահմանաց որ սկսեալ ՚ի հիւսիսային կողմանց Տուրուբերանոյ և Վասպուրականի մինչև ՚ի Կուր գետ՝ ոչինչ իւիք արդարանայ այս կարծիք . իսկ վասն հարաւային կողմանց Ազձնեաց որ և անկանի ՚ի Միջագետս , և վասն բնակչաց ՚ի Մոկս , ՚ի Կորձէս և ՚ի Պարսկահայս՝ չէ ինչ ընդդէմ ունելոյն նոցա նմանութեի ինչ ընդ ասորեստանեայս մերձաւ կայ բնակիչս ՚ի կերպարանագրութեի և ՚ի բարս . որպէս և ՚ի հարաւակողմն բնակիչս փոքուն Հայոց՝ նմանութի ինչ ընդ Ասորիս ։ Եւ զայս չէ մարթ ասել վասն համ[ա]րէն ազգին Հայոց ։

1 Արամոզի Սեմայ քաղէ նահապետ Արամայ , որ էր Ասորոց , վասն որոյ և Ասորիք զինքեան , որպէս և Եբրայեցիք զնոսա , Արամեանս կոչէին . այս է զոր յիշէ ասա Մարաբաս ։ Այլ չգիտեմ թէ Հայք ոչ յանուն սորին Արամայ , այլ յանուն այլոց ուրուանի Արամայ որ ՚ի Բաբելեայ՝ կոչին Արամեանք . վասն որոյ և այն մերձաւորութի անուան ըստ հնման է միայն ։

Բ. Կորվօնենէն մարդիոյ և գայլոնենէն։

ՑԱՒՈՒՐՍ ՀԱՑԿԱԶԱՆՑ

ՀԱՑԿ

Օ՛որ Մարիքաս առ Խորենացւոյն ա. 10. Հաստաբա-
զուկ կոչէ. իսկ զՀակատիէն նորա ընդդէմ Բելայ, և զըս-
պանանէն՝ ընդ երկաթի զրահս անցուցանելով զերեք-
Թևեան նետ իւր, կոչէ ՛ի 11. ահագին գործ քաջուԹե-
որպէս և էր իրօք։

ԱՐԱՄ

Ոմն «Աբրամայ բազում գործք քաջուԹե պատմին
մարտիւք նահատակուԹեան», ասէ Խորենացին ա. 12։
Որոյ քաջուԹե պատճառ եղև ամենայն ազգաց յանուն
նորին Աբրամայ կոչել զՄեզ։

ՄԵՆՈՆ ՏԻԳՐԱՆ

Խորենացին ա. 23. կոչէ զնա «Հուժկու, անուանի
և յաղԹօղ ընդ այլ աշխարհակալս», Եւ ՛ի 29. ասէ.
«Ուժով ոչ զըք իւր ունելով զոյգ», Որոյ այժ և քաջուԹե
առաւել յայտնի եղև ՛ի սպանանել նորա զԱժդահակ.
զի հարմամբ նիզակի իւրոյ հերձեալ զերկաթի զգեստ
Աժդահակայ՝ ընդ նիզակին միանգամայն զկէս Թոքոց նո-
րա արտաքս եհան. զոր այսպէս ստորագրէ Խորենացին ա.
29. «Մարտն էր սքանչելի. զի քաջք գիպեալ քաջաց՝
ոչ վաղվաղակի Թիկունս ՛ի միմեանց դարձուցանէին. վասն
որոյ յերկարեալ քարշէր գործ պատերազմին ժամս ձիգս.
իսկ վախճան գործոյն առնէր մնչն Աժդահակայ. և այս
պիսի գիպուածս ՛ի բարեբախտուԹ յաւելեալ՝ յաձախել
փառս Տիգրանայ», Իսկ ՛ի 31. զերեսին միանգամայն գո-
վելով ասէ. «Սիրեմ կոչել այսպէս ըստ քաջուԹե՝ Հայկ,
Աբրամ, Տիգրան. քանզի ըստ իմ՝ քաջաց ազգք քաջք են»։

ՎԱՀԱԳՆ

Որ էր որդի մեծին Տիգրանայ. զմանկ ասէ Խորե-
նացին ա. 31. կռուել ընդ վիշապայ և յաղԹել. «Եւ

կարի ինն նմանագոյս զՀերակլեայ նահատակութեցն նմա երգէին . այլ ասէին զա և աստուածացեալ . և անդ յաշխարհին Վրաց զորա չափ հասակի կանգնեալ պատուէին զհիւք ,, : Քաջագործութիւք սորա այսչափ նման գոլով Հերակլեայ՝ պարտ իակ է համարել զնա մի ի բազմաց Հերակլեայց զորս յիշէն մատենագիրք , մանաւանդ Կիկերոն , որ ի գիրսն ՚ի . 16 . յաղագս քնութե աստուածոց , վեց Հերակլեաս , կամ Հերքիւլեաս յիշէ : Մինչև նախին Թարգմանիչք մեր ի ՚ի . Մակաբայեցիսն ՚ի . 19 . փոխանակ անուանս Հերակլէս՝ եդին Վահագն :

ՑՈՐՔ

Որ ի զաւակէ Պասքամայ , ի Հայկակայ Թոռանէ . ուստեր ի բնէ կորովուշէ ինն և ոյժ ի վեր քան զսովորականն . զոր հինք առասպելեօք խառնեալ յաւելեալ ձգեցին . տես առ խորենացւոյն զոր ինչ գրէ վասն սորա ի ՚ի . 8 :

ՑԱՒՈՒՐՍ ԱՐՀԱԿՈՒՆԵԱՑ

ԱՐՀԱԿ Ա

Ի մանկութե անդ ցուցանէր զոյժ մարմնոյն , որպէս գրէ խորենացին ՚ի . 8 . " Էր արգաբև տղայն կայտառ և հզօր մարմնով , որպէս զի կարծիս հայեցողացն տալ , որ ի նմանէ աճելոց էին արուեստիք ,, : Այսպ ՚ի գլուխ 9 . թէ. պէտ մի միայն գործ քաջութեան զսմանէ պատմէ , այլ նովին ծանուցանէ զչափ կորովութե և բնական ուժոյ նորա : Ի պատերազմէն սորա ասէ ընդ պնտացիս՝ "Նշանակ եթող յերկր ծովուն մեծի (Պոնտոսի) զնիզակն իւր զոր լորտեգ , որ էր արեւամբ վեհոյց մեծալ , ձգեալ ի հետեւակուց՝ խորագոյնս նստոյց յերկրանաքար արձանին՝ զոր կանգնեաց ի ծովեզերն . զայս արձան բազում ժամանակս պատուեցին պնտացիք որպէս զառ ի յաստուածոց գործ ,, Զայս և Ընորհալին յիշելով ի վէպն իւր գրէ .

" Ախ որ զՊոնտոս գոլով գերեալ ,
Եւ յաղթութե նըշան թողեալ .
Չի անարի արձան առեալ ,
Յեզերք ծովուն մեծի կանգնեալ ,

Եւ զեռնական արեամբ մըխեալ
Տիգաւն ըզԹափ իմն անցուցեալ.
Ջոր և Ցունացըն զայն տեսեալ,
Իբր աստուածոյ երկրըպագեալ,։

Ասյս արձան Հաւանական երևի լինել Նոյին՝ զոր յիշէ Սոքրատ ժբ. 546.ի ստորագրելն անդ զՊանտոս. կոչելով Ահ դօլֆէ արձան. որում պաշտօն մատուցանէին ասէ պոմպոնացիք. և էր նոցա պատգամատեղի. զորմէ տես անդ։ Եւ քանզի Ղևկուղղոս հռոմայեցի երարձ ասէ զայն, համաձայնի ըստ այսմ և բանից մերոյ Խորենացւոյն՝ որ ցուցանէ երբեմն պաշտեալ զայն պոմպացւոց, և ոչ յիւր ժամանակս. ըստ որում ի վաղուց անտի բարձեալ էր այն ի Ղևկուղղեայ։

ՄԵՆՉ ՏՐԴԱՏ

ԴԱՐ Գ.Դ

Սորա քնական կորովուէ մաքինոյ և յաջողականուէ ի վեր էր քան զայլս և հրաշալի [1]. զորոյ գործագործուիս և գնահատակութիս քանզի բազում մասամբք պատմէ Խորենացի, տես անդ գ. 79. 82. 85. առ որ առակ յարմարեալ Ժողովրդեանն ասէ Ագաթանգեղոս խե. «Ոչ ամն այսորիկ պատշաճեցան բանքս այս ի բան կարգի առակաց, Թէ իբրև զսէգն Տրդատ, որ սիգալովին աւերեաց զԹուսքս գետոց. և յամաքեցոյց ի սիգալ իւրում զյորձանս ծովոյ»։ Ջորոյ և զտեսիլն ստորագրէն անդէն։ Յաւուրս Տրդատայ էին և այն աքք քաջագործք ի հայկազանց զորս ընտրեաց մեծն Կոստանդիանոս, որպէս գրի ի Թուղթն Դաշանց, ուր ասէ նա ինքն Կոստանդիանոս. «Խնդրեցի յաքքայէն Տրդատայ արս երեք հարիւր հասակաւ և սրիւքն Թէ հոյակապ, զորս և Աքմինք անուանեցի. և կարգեցի ի սպասաւորութիւն աքքունական գահոյիցն իմոց. Հղօրիչ գլխոյ իմոյ և Թիկնապահ լմ՝ի տուէ և ի գիւե-

1 Դիւրանան լսելիք ի հաւատալ քաջագործէն պատմելոց ի Խորենացւոյն վասն Տրդատայ, ի լսելն և գնամանան քաջագործութիւնս զորս պատմէն ականատեսք վասն երից անուանի հայկազուն երիտասարդաց յաւուրս մերս երևելոց ի բնութենէ և ժամանակս սուրբն Հաւիսիմ և սուրբն Սեղբեմ. ըն զինոյն ի նոցանէ պատմի հաւատաւոր վաստակ զորս գտաւսուն, յերկիր կործանեալ զերեսուն այր, և զոմն կալածաւորս զգեստիւ հարեալ գիզելով ի վերայ միմեանց և նստեալ ի վերայ նոցա. և նոցա չկարացեալ շարժել յանհնարին ուժոյ զօրութենէ նորա։

րի . և առատաձեռնութիւն (անձնասպանութիւն) իմ՛ի տուել և՛ի գիշեր . և առաջապահեսաբար իմ՛ի պատերազմի ,, : Յորմէ յայտ է թէ քաջութիւն և կորովութիւն ուժով ազգիս հռչակեալ էր յայնժամ յոյժ առ հռոմայեցիս :

ՎԱՀԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ

ԴԱՐ Դ

Հաւատաս փոքունն Խոսրովու որդւոյն Տրդատայ՝ Մեծ էր և սոքայա քաջութիւն յայն գիպուածս՝ ուստի կախեալ կայր յաղթութիւն կամ կորուստ համօրէն բազմութեանն բանակին . զի՛ի մէջ բանակի թշնամեաց որք էին հիւսիսային կանք ազգք սարմատացւոց՝ երևեցաւ սկայ ոմն, որոյ բոլոր մարմինն ծածկեալ անգծելի զգեստուք՝ ընդ ամենայն բանակին մերոց վազս առեալ շահատակէր . յորոյ վերայ որ՛ի քաջաց մերոց որ յարձակէր ոչ ինչ սանանէր նմա . իսկ ինքն նիզակ երկայնաթև՛ի ձեռին ունելով զամենեսին Տարկանէր : Մի միայն Վահանս այս անհատնելի ինքնակամ դիմագրաւ եղեալ , և զնիզակ իւր Ճարտարութիւ ուղղեալ ետար , առէ Խորենացին Գ. 9. "ընդ գլուխ ձիոյն յերկիր կործանեալ զահագին զվիրաւն . . . Ա յսպիսի գիպուած՛ի փախուստ յորդորեաց զթշնամին , և՛ի յաղթութիւն զՀայոց գունդն զօրացոյց ,, : Վասն որոյ և Խոսրով արքայ նմա պարգևեաց զտեղի Ճակատուն , որ կոչէր Օշական :

ԲԱԲԻԿ

Որդի մեծին Աղթոկայ Սիւնեաց իշխանի՛ի վահճան չորրորդ գարուն . որոյ եկեալ՛ի Բիւզանդիոյ՛ի գուն Պարսից յանծանօթս միաց անգէն . այլ "բազում արուեստս պեսպէս յողոպիտդն Պարսից ցուցեալ , և ոչ ումեք զինքն յայտնեալ եթէ ով և կամ ուստի որ իցէ ,, , որպէս գրէ Ստեփանոս՝ . մինչև ապա՛ի պատճառս քաջութեանէ իւրոյ յայտնի եղև անձն նորա : Զի՛ի միում պատերազմի Հոնաց որ ընդդէմ Շապհոյ Պարսից արքայի՝ յարեաւ եկն եկաց մի ոմն՛ի նոցանէ Հոնանգուր անուն , որ առաջի եղ Պարսից մեհնամարտուէն վճարել զայն պատերազմ : Ա յլոս

1 Զայս ամենայն պատմէ Սեբէոսն՝ նեբրոդնէն՝ զոր արար Պետրոս քերնոս օրպելեան՛ի գլուխ Ժ . առեալ՛ի Թոզ Սիւնեաց :

այս էր, ասէ, "վառեալ յիմնանիւթեայ՝ զրահիւն զանհնարին զսպառն և զչայն հասանին, և երկաթագամ բեւեռասինդ սաղաւարտաւն զահեղակերպն գլուխ, և զձնկաման սղնձեան և տախտակամած յօրինուածովն ամրացուցանէր, և զանհեթեթ գեղարդանին զբունն՝ ի բարձրամարդոյ փայտից, և զսուսերն բոցակնան և զարիւնահեղ յօրինեալ՝ ի յինքեան, ահաբեկեալ զամենայն զզօրս Մարսից և Պարսից և Ահրեայ աշխարհին"։ Յայնժամ ամենայն նահապետք Հայոց ազգ արարին Շապհոյ զայս բանիկ հանել ընդդէմ նորա. որոյ սպառազինեալ արքայական զինուք յառաւօտ մինչև յհին ժամ կռուեր ընդ ահաւոր առն. բայց հուսկ ուրեմն, ասէ, "անդ գատապարտեալ լինեիր անհնարին հսկայն Հոմանդուր. յաղթողնայր քաջն Բաբիկ. աճապարէր՝ի սուրն միասայրի, որով անդէն սատակեր զմարդախաշոշ և զվիշապազօր գազանն"։ Ի վարձ այսմ իւրոյ քաջութե՝ որում բազում ինչ խոստացնայր Շապուհ [2], Բաբիկ ինդրեաց և էառ զիւր Հայրենական տերութիւնն Սիւնեաց. զոր Պարսիկք բռնզրովին հանեալ էին վասն աւերելոյ հօր նորա Անդոկայ զՏիրան։

ՍՊԱՆԴԱՐԱՑ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

Ի յման նախագրեալ Վահանայ եղև և սորա քաջագործութիւնքն յերեւելի պատերազմին որ յաւուրս Պապայ արքայի՝ ի Ձիրաւ դաշտի առ Նպատ լերամբ ընդդէմ զօրաց Շապհոյ Պարսից արքայի. ուր "ի խառնակել մարտին՝ պատահէ կամսարականն Սպանդարատ իմբի մեծի, յորում էր քաջն Հերոգիր Ղէկաց արքայ, զգլուխ մինչ գընդին պնդութիւ զտեղի ձակատուն կալեալ։ Եւ յարձակեալ Սպանդարատ, և հերձեալ զխումբն, որպէս շանթահար յերկիր կործանէր զքաջն, և զխումբն պտուտեալ՝ ի փախուստ դարձուցանէր"։ Խորենացին էջ 317։

1 Ա յսպէս է գրեալ յօրինակին. այլ մարթի էր լինել և Հիմանանիւթեայ։

2 Զայս Շապուհ, զոր բազում անգամ վերոյիշին մերքն ի մտհուանէ, ապրեցոյց միանգամ և Դրաստամատն նեղութենի Ապշակայ Թագաւորին մերոյ ի մարտին յորում վաճառականին Քուշանք զՇապուհ. զի ասէ Բուզանդ Ե. 7. "Դրաստամատ գործեաց անհնարին քաջութիւնս, ա՛ի վերայ Շապհոյ արքային, և ապրեցոյց զնա ի մահուանէ. և բազում ի Քուշանաց անտի կոտորեաց, և զբազում զաղայանիկ զգլուխս բերեր զաշէաւս. և զՇապուհ... փրկեր ի նեղութենէն պատերազմին Թշնամոյ անտի, ուր արգելին զնա ի խուռն պատերազմիցի զբոյոյ անտի,։

ՎԱՐԱԶԴԱՏ

Ց որմէ խորհուրդ կ. կո. գրէ. "Տիրովք մնանուկ, սրբ. տեայ, անձնեայ, ուժեղ, լի ամենայն գործովք արուեստ, և յայժ կորովի նետաձգութեամբ", Ուր և պատմէ զնմանէ զասիածս կոտորեալ, և փառս յաղտմիայ խաղալն հանդիսի ստացեալ, հինգ նահատակ ի վերայ իրերաց սպառ նեալ, զեօթնեւտասն այլ միանգամ զինի նետահարեալ և ի վայր հոսեալ ի պատուարէն, ընդ քսան և երկու կանգնաչափ լայնութեամբ գետոյն եփրատայ վազս առեալ առաւել քան զՔիոն լայնայոյն, և այնպէս անցեալ նման Աքիլլեայ։

ՄՈՒՇԵՂ

Պարապետ Պապայ արքայի. զորմէ բազում գործք քաջութեամբ պատմին առ Բուզանդայ ի պատերազմունս, յորոց զմին միայն յառաջ բերցուք։ Մի ոմն ի Հմայ, յազգէն Դգիհնի, այնմ՝ որ մենամարտեալ կռուեցաւ ընդ մեծին Տրդատայ, այր ամենեցուն զարհուրելի՝ բռնադեալ կալեալ ունէր յայնժամ զմիջագետս. և անտի առ պատակեալ յաշխարհս Հայոց՝ յաւարի առնոյր զԱսպատական, զՏարօն, զՄօրձայս, և մինչև ի սահմանս Մելտենոյ։ Ախ ինչ՝ի Ձակատամարտին իբրև Թուչուն ձիարշաւ սլանայր գեղարդեամբն ի վերայ Մուշեղայ, և սա նոյն Ձարտարութեամբ ինն վահանաւն իւրով ի գերև հանեալ զաղխոսուն ահագին գեղարդեանն, ապա ինքնին յարձակեալ ի վերայ պողպատիկ սուսերաւն ձեղքեալ յերկիր կոտրմանէր գնա, որով զօրացաւ գունդն Հայոց։ Այս քաջագործութեամբ Մուշեղայ այնչափ համբաւի հարաւ յԱտրպատական, մինչև անհնարին լինել նուաձել զայն։ և ըստ գրելոյ Ամոռպապ ի Թիւն ե. "Ձարտարապ Աթորոց պողպատիկ գրչաւ նկարեալ զՄուշեղ ձերմակ երիվարաւն յարձանի առ գետեզերաւն, և զՀոնն յոտս նորա. որ բնակիչք գաւառին Հոնի գուռն ասեն զտեղին զայն մինչև ցայսօր"։ Ալ զայսպիսի այր քաջ Վաթագդատ Թագաւոր յաջորդ Պապայ՝ ետ յանկարծ սպանանել առ քսանե Բատապ սահառունսոյ. և յայնմ ժամու ևս այնչափ բռնութեամբ ուժոյ տեսին ի Մուշեղ՝ զի մի այր զմիոյ բազկի նորա՝ և մեց այր զմիս բազկի կալեալ ունէին. իսկ Մուշեղ զապերախտութեամբ Վաթագդատայ յիշելով ասաց. " Ի

վերայ բազում իմոց վաստակոյն արեան և քրտան՝ և սա-
քօքն զբիրան Ջնջելոյ՝ այս Հատուցումն եղև ինձ ,, ։ Եւ
յորժամ գնարժին Նորա տարան ՚ի տուն իւր , ասէ Բուա-
զանդ , ,, ոչ Հաւատային ընտանիք Նորա մնհաւն Նորա ,
Թէպէտ և տեսանէին զգլուխ Նորա զատ ՚ի մարմնոյն ան-
տի . զի ասէին . գորա յանԹիս Ճակատ մտեալ էր , և վեր
երբէք չէր առեալ . ոչ նէտ մի դիպեցաւ երբէք , և ոչ այ-
լոց զինու խոցեալ է զդա ,, ։ Ե . 36 ։

ԱՐՏԱՒԱԶԴ

Արդի Վաչէի զօրավարին՝ մանուկ տիօք , զոր ոչ կամեցան
՚ի պատերազմ մուծանել ոչ Մանուել մամիկոնէան , որ
զօրավար և կառավար էր յայնժամ աշխարհին յետ մա-
հուանն Պապայ , և ոչ այլ նախարարք Հայոց սակս ման-
կական հասակին . այլ ընդ Թագուհւոյն և ընդ տիկ-
նաց նախարարացն ՚ի բերդն Եռուն յուղարկել . բայց
քաջվին եռանդուն վառէր եռայր ՚ի սրտին իբրև զմե-
ծամեծ քաջութիւնն զոր գործելոյն էր՝ յուշ ածէր .
զոր և բանիւ Բուզանդայ յառաջ բերցուք . “ Ջմանուէլն
Արտաւազդ , ասէ , որպէս Վաչէի ընդ կանանին տայր հրա-
ման երԹալ Մանուէլ . իսկ նա ոչ հաւանէր յառնոյր յանձնն
եւ էր նա ՚ի տիոց տղայ . և ըստ մանկութեն օրինի , ըստ
կրօնից Հայոց՝ որպես օրէն էր զգլուխ մանկտոյն՝ ոչնպես
՚ի ժամանակին գերծեալ էր զգլուխ մանկանն Արտաւազ-
դայ , և ցցունս էր Թողեալ և գես արձակեալ [1] ։ Ապա
իբրև ոչ հաւանեցաւ նա ընդ կանանին երԹալ , մտրակ ՚ի
վեր առեալ Մանուէլն՝ տանջէր զմերկ գլուխ Արտաւազ-
դայ . սաստէր նմա ՚երԹալ ՚ի պատերազմ վասն մանկուե
ժամանակին տիոց . իսկ նա առ նորա ականէ գնայ ընդ նո-
սա . բայց ապա . . . ՚ի Մանուէլէ գաղտ եկեալ էր ՚ի Ճա
կատն . սակայն վառեցաւ կազմեցաւ և եմուտ զանխուել

1 Վասն սովորութեն գէս արձա-
կելոյ կամ գերծելոյ ոչ գտանեմք ինչ
ի հին պատմագրսն . միայն հպանդութիւն առ Լամբրոնացւոն
Պաքատէ , սատագաբանէ՝ իբր գէս նո-
ւիրեն հոգեաէ : Իսկ առ օտարազգի մա-
նուհագիս չհետամտին ինչ ինչ ա-
ւրութեիս պարզ ազգաց . յորս Սի-
նեան ՚ի Թուրքն իւր չիշէ և զպար-
Թեանցն մեզ մերձակայից՝ հերարձա
կաս գնելով զսովորութեն նոցա , իսկ
զգերմանացւոցն ՚ի հանգոյց կապել ,
և գսկիս Թացւոցն ցրիս Թողեալ : Որ
ոք կամի գիտել և զայլ չիշատակս
Թեան նախնեաց վասն սովորուե հայ-
Թելոց դչերս գայել ՚ի գրուածս Սալ
մասիոսի և Պրիսկիոսի՝ որ զսովորու-
Թիւնս պարսից յաղագս հերայ ՚ի Մա-
րոց առեալ ասէ ։

'ի մանուկսն գնդէն առ ափն Եփրատ գետոյն. եհար սատակեաց 'ի մերուժանեան գնդէ անթի իւ բազում սպառազինս կոտորեաց: Եւ նշանակիը մի 'ի Մերուժանայ իրրև հետս զԱրտաւազդն՝ յընչացք եթաց, զի տեսանիը գնա պատանեակ մի կայտառ անմուրուս, երեսաք գեղեցիկ. ապա գնչանն գնիզակաւն պատեալ, յարձակեցաւ 'ի վերայ նորա. իսկ նա ընդ գիրկս մնեալ հարկանիը զայրն նետիւ. և կարանէ 'ի կարան թափ հանեալ գետն ցամաքը ընկենոյը գնա: Եւ առեալ գնիզակն (նորա) զհետ մնեալ փախստէից, ընդ սուր հանեալ զզօրն Մերուժանայ, աւելի քան զամենեսեան Արտաւազդ որդի Վաչէին մանուկն կոտորեր. և ինքն մեծաւ անուամբ և բազում աւարաւ դառնայր: Սուղ ինչ զնի գրէ. "Եկին բերին զայրն նշանակիրն Մերուժանայ, զոր եհարն Արտաւազդ նետիւն. և ամենայն ոք զարմանայր ընդ այն, զի նետն թափ կարանէ 'ի կարան անցեալ էր" ե. 43:

ՎԱՐԴԱՆ

ԴԱՐ Ե

Սորա քաջութիւք այնչափ հռչակեալ էին՝ մինչև 'ի լսել Յազկերտի Պարսից արքայի զմահ նորա, "յահաւոր սուգ ընկղմեալ խռովէր յիշելով զքաջութիւն առնն և զաւուրն զոր արարեալ էր ընդ Թշնամիս բազումանգամ 'ի վերայ աշխարհին Աբեաց": Վասն որոյ և Յազկերտ յոյժ վըշտացեալ ընդ մահ նորա, այնուհետև "յանձն առնէր հրովարտակաւ զմարդիկքն Հայոց չընդոստուցանել". Ագաղար 124:

ՎԱՍԱԿ

Իշղայր Վահանայ մամիկոնէի: Այնուանի եղև և քաջագործութիւն սորա յայնմ պատերազմի՝ զոր 'ի սկսանելն անդ' Մաղխազն Գաբջոյլ առեալ զիւր հարիւր զօրն 'ի Հայոց անցանէր 'ի կողմն Պարսից. որով վասակեանք միայն միայն 300 արամբք. բայց այսչափ նուազ թիւով զամենայն բազմութիւն գնդին Պարսից հանդերձ ուրացեալքն հարիւն վանեցին. "Եւ լինէր օրն այն՝ օր նշանաւոր ուրախութեն հաւատացելոցն 'ի Քրիստոս, և օր ամօթոյ և կսկանաց ամենայն ուրացելոցն 'ի Քրիստոսէ". Ագաղար 217:

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Թէպէտ բազում են և սորա քաջութիւնք, բայց զարմանալի եղև այն՝ ուր 30 արամբք միայն հերձեալ զգունդն Պարսից՝ զկատարեալն գործեաց յաղթութիւն. «Զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեանն, ասէ Ղազար 265 . . . հզօրաբար քաջ ուխտակցօքն նման առիւծոյ ընդ մէջ ամենեցուն յարկոյս ելանէր. և սպանեալ իւր և արանցն որ ընդ նմա՝ բազում արս հզօրս պատերազմող՝ի զօրացն Պարսից, հարեալ խոցէիւն նիզակաւ ընդ անուն կարէվեր և ըզհպարտ իշխանն Սիւնեաց զԴիւիհէն (որ ուրացեալ գոլով՝ի կողմանէ Պարսից մարտնչէր), և զահաւորալուր ամրութիւնն զնուան՝ յոր պանծացեալ յուսայր անօրէնն, ցեղեալ վէր՝ի վայր թափ ընդ լերդն զնիզակատեգն հասուցանէին»: Այս յաղթութիւն նորա երկիւղ մեծ էարկ՝ի սիրտս Թէոմաեացն Պարսից. «Եւ յետոյ արկեալ էր Աւտուծոյ, ասէ 266, զահ և զերկիւղ զօրավարին Հայոց Մամիկոնէի՝ի վերայ զօրացն Պարսից, զի կարծէին թէ՝ի հայեցուածէ լոկ առն մամիկոնէին՝ և յարանցն որ ընդ նմանն էին՝ չզերծանիլցին առանց վտանգի»: Եւ այնչափ մեծ եղև յաղթութիւնս այս՝ մինչև նոյն ինքն Շապուհ զօրավարն Պարսից, որ պարտեցաւ, այսպէս զարմանալով պատմէ զայն դէպսպանին Պարսից. Վահանայ, ասէ, «իրք և արարածք չեն որպէս զայսոր ժամանակի մարդկան, զոր մեր տեսեալ և գիտեմք, այլ իբրև զառաջինն քաջացն զոր՝ի վէպն պատմին և լսեմք. քանզի թէպէտ զայլ ժամանակաց գնորա և զարանցն որ ընդ նմա են՝ լուեալ զգործս և զաներկիւղութիւնն, զոր իմ և կամ այլ աւագորեցոյ որ տեսեալ է. այլ յառաջ քան զաւուրս տան, թէպէտ երեսուն արամբ՝ ոչ միայն՝ի վերայ այսր բազմութեն որ այժմ աստ են և տեսանեմ՝ յարձակեալ կռուեցաւ, այլ աւելի և գնաւ իշխանն Սիւնեաց Դգիհոնիկ՝ իւր գաւառին այրընտիր ձիով աստ էր (՝ի Պարսից կողմն,) և Վահան զեմ յանդիման այն երեսուն արամբ յարձակեալ՝ի վերայ, և նման արծուոյ յորում ժամու՝ի կաքաւուց երամ սլանայցէ . . . զայնպէս բազմութեն զօրացն արկեալ վէր՝ի վայր ցրուեցին. սպանին և զսկայականն զայրն զԴիւհոնն»,. նոյն 272:

Յաղթութիւնս այս Վահանայ ոչ միայն զհամբաւն հաբաւ, այլ և յոյժ օգտակար գտաւ աշխարհիս մերում, և

որոշիչ խաղաղութիւնն. զի Շապուհ Միհրան զօրավարն Պարսից պատմեալով զնոյն յաղթութիւն առաջի Վաղարշայ նորա թագաւորին Պարսից, յորդոր եղև ոչ թէ նմանակալ ընդ այնպիսի քաջ արանց՝ Վահանայ և որոց ընդ նմա, այլ խաղաղութիւն վարել ընդ նոսա. "Վահան զինչ աշխատ կալաւ, ասէ Վազսը, կարի սակաւ արամբք. զոր երբեմն թէ հարիւրօք ասէմ՝ չստեմ. և վկայեն ինձ գնդիս մերոյ աւագորեաք որ անդ էին, և այժմատ են. կարի ծանր է ասել և անհաւատալի բանք, թէ այնքան սակաւուք դէմ յանդիման կռուել աներևութիւնք, և զօր ամենայն ի զակղի վերայ գալ, և մեծամեծ ինամ առնել. բայց զիոյ աւուր գործն ես իսկ յիշեմ որ անդ էի. սակայն նոր համարիմ և ի վեր քան զմարդկան իրս, թո՛ղ թէ որ լսէ զնո՛րդ կարէ հաւատալ. քանզի թուով երեսուն արամբք ի վերայ երից հազարաց՝ առն յաներևութիւնս յարձակեալ և զայնպիսի գործ վճարեալ, զոր ամենայն որ անդն էին աեսողքն՝ այսօր յիշեն, թուի թէ երկիւղ գործոյն չերանէ ի մտաց . . . այնքան արամբք հերձին վեր ի վայր զռավանդակ գունդն. և շատ լաւ որեար կոտորեցին. և զահաւոր այրն զԴիդիհան զՍիւնեաց տէրն սպանին, զոր յիմիաս այսպէս ասէի, թէ լակ Դիդիհան միայն ինքն տան արամբ յիւր գնդէն պատահեր այնչափ առն՝ այն միայն առնէր, նէ զայնպիսի այր՝ և զայլ ականաւոր և քաջ արս ի պարսիկ մարդկանէ Հանին ընդ աւուր. և ինքեանք ոչինչ խոյս տուեալ ի բաց վարեցին զձիանս իւրեանց, այլ մնա՛ի մէջ թևաւիլ երթալին յանհոգս ի բազում ժամս. և ի մեր գնդէն ոչ ուրուք իշխեցեալ հայել ի նոսա, վասն զի աստուածք և ոչ մարդիկ կարծեցեալ ամենեցուն թուէին մեզ։ Վասն որոյ . . . համաբձակիմ ասել զի զաշխարհին Հայոց զմեծութիւն և զօգուտն՝ զայն դուք իսկ քաջ գիտէք. բայց այլն Վահան և այլ որեարն որ ընդ նմա էն՝ և այսօր խաղաղութիւն ի ձեր ծառայութիւն էին, և մեծ մասն բարւոյ և միխիթարութիւն կարևոր հասեալ տրտմութեանս մերոյ համարեի զնոսին զայն „. 276։

ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ԴԱՐ Զ

Ո ամենէ գրէ Յոհաննէս կաթողիկոս. "Խոսրովայ հասատեալ ի թագաւորութիւնն Պարսից, աստանօր Սմպատ

քաջ բագրատունի բազում և անհնարին մարտս յաղ-
դարեր ընդդէմ թշնամեաց նորա. և արիաբար
մրցմամբ վանեալ վտանգեալ զնաւ հակառակորդս նորա
յոտին նմա կացուցանէր. ընդ որ զարմացեալ Խոսրովայ
յաւէտ ինն հաճոյանայր Մամիատ յաչս նորա ... տայ նմա
և զմարզպանութիւն Վրկանայ ,, : Եւս 'ի պատմէն զնահ
նորա՝ ասէ . " Բայց Մամիատ զինի բազում արիական քա-
ջութեանցն և բազմահանդէս երկոց , և կրկին անգամ մե-
նամարտին լինելոյ ընդ Եփթաղեայ աքսային Քուշանաց,
և սպանանելոյ զնա՝ վախճանի ,, : Զայս համառօտիւ յիշէ
և Սամուէլ յամի տեառն շղգ. բայց ընդարձակօրէն Սամու-
էլի յիշատակէ և զայլ գործս կորովութիւն ուժոյ նորա, ա-
ռեալ 'ի հարկէ 'ի գրուածոց նախնեաց, ասելով. "ԶՄամիատ
չարախօսեալ առ Շապուհ խոսրով, և նա թողեալ 'ի վերայ
նորա գաղանս, և նա հարեալ զարջն սատակեաց. և կա-
լեալ զեղջերաց ցլուն սպան զնա. և կալեալ զականջ ա-
ռիւծուս հեծաւ 'ի վերայ նորա . զայս ամենայն յաղթուէ
արար 'ի միում աւուր . և ինչն մեծարեցաւ գաթաեալ 'ի
պարսից արքայէն : Էր հասակաւն բարձր և լայն , և տես-
լեամբն գեղեցիկ . և յանցանէրն ընդ անտառաւն քուներ եր-
կու ձեռաքն զձիւղս անտառին , և հցեալ զոտն վերացու-
ցաներ զձին , և լինէր ձիոնն 'ի կախ 'ի ծառէն ,, :

Ձելը այսր գարու եղև կռիւն Վարդանակերտի յա-
ւուրս Մամատայ հրամանատարի , այնչափ հռչակեալ առ
պատմագիրս մեր : Ինձին կռուի խմայելացիք էին աւելի
քան զՀինդ հազար , իսկ զօրք Հայոց պակաս քան զերկու
հազար , որպէս գրէ Ղևոնդ գ. ԺԲ. բայց կատարեալ յաղ-
թուէն գործեցին չարաչար կոտորելով զազգումն 'ի նոցանէ,
իսկ զինացեալսն հալածականն առնելով, որք անկեալ յե-
րասխ գետ ջահեղձ կորեան :

ԱՐՈՒ ՄՄԱԿԵՐ

ԴԱՐ Ը

Ո՛ քաջուէց սորա պատմէ Վարդան. "Յաւուր միում, ասէ,
պաշարեցին զնա թշնամիքն , մինչ կայր յայրեթս . և տե-
սեալ (զթշնամիսն) ոչ խափանեաց զնօսին ընդ Աստուծոյ
մինչև ցկատարումն աղօթիւն. և ապա ելեալ ընդդէմ նոցա
կարկէր յերկուս զգլխաւորսն, որում անուն էր Վախտան
Աբգլաց . և հարկանէր իբրև արս հինգ հարիւր ,, : Նման

ամին պատմէ արարեալ և յայլումն նուագի. "Բայց տուին Ջահապատ զօրացեալ 'ի Դուին, իբրև հինգ հազարաւ կամեցան գնալ 'ի Տարօն՝ յիշխանութենէն Աշոտոյ որդւոյ Սմբատայ. իսկ ողջախոհն այն (Աշոտ) և քաջն հաւատաց ցեալ երկու հարիւր հեծելով և երեք հարիւր հետևակով եւ ընդդէմ նոցա չմնացեալ հաւաքմանն զօրացն. և կոտորեցին 'ի նոցանէ վերիս հազարն. և հասեալ 'ի բանակ նոցա՝ էառ զամենայն մեծուխս նոցա ,, ։

ՅԱԽՈՒՐՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ

ԱՇՈՏ

ԴՈՒՐ Թ

Իշխան Վասպուրականի. մեծ եղև քաջութիւն սորա և ընկերաց նորա 'ի պատերազմին՝ որ 'ի ժամանակս Բագրատայ իշխանին Տարօնոյ ընդդէմ Մուսէի հպատակեալ, զորմէ այսպէս գրէ Թոմա արծրունի. "Ջայս 'ի վեր ամ բարձեալ իշխանին Աշոտ՝ ետես զմի ոմն հարեալ 'ի զօրաց իւրոց. գոչեաց առաւծաբար, յարձակեցաւ 'ի վերայ ընտիր այրուձիոյն. և զաջ թևն բեկեալ՝ զձախոյ կողմանքն արկանէր. և սրոյ Ճարակ զամենեսեան տային խիզախելով իբրև զքաջ նահատակ. իբրև զարծուխս կանչելով, իբրև զկորիւն առիւծոյ 'ի վերայ օրսոյ հասեալ բեկանէին. և առ յոյժ յանդուգն յարձակմանն բազում այն լինէր զոր ձիովքն ընթադրեալ դիաթաւալ կացուցանէին՝ քան զոր սրով սատակէին ։ Եւ ոչ ոք գըտանէր ամենևին 'ի կողմանէ Թշնամեացն որ կարէր կալ ընդդէմ նոցա և ոչ մի ոք. այլ միացեալքն 'ի սրոյն՝ փախստական անկանէին յամուրս մայրեացն. և կէսքն հասանէին մինչ 'ի շահաստանն Բաղէշ, թողեալ անգէն զըուն բանակն ,, . ք. 6 ։

ՍԱՀԱԿ

Պատանի քաջակորով, զորմէ պատմէ Վարդան, թէ Բաբան անուն բռնաւոր ոմն պարսիկ յարեաւ ընդդէմ ամիրապետին. ընդ որում բազում անգամ մարտուցեալ զօրք ամիրապետին՝ ոչ կարացին նուաճել. ապա Ափշին զօրավար ամիրապետին կոտորեաց զզօրս նորա , այլ զԲաբան ոչ կարաց ունել. պատանիս այս գտաւ միայն՝ որ հա-

մարձակեցաւ սիպիլ գՀետ և հասանել ՚ի վերայ նորա, կենդանւոյն ունել և ածել. "Սահ, որդի Սմբատայ (բագրատունւոց սպարապետին, ասէ Վարդան,) ըմբռնեա զԲահբան. և առնու ԱՀինձն պարգեւս հազար կչիռ արծաթոյ. և այլ ևս հարիւր հազար առնու ՚ի նմանէ ,,։

ԲԱՐԴԵՆ ՍԻՒՆԻ

Լդէև մի ՚ի նոցանէ՝ որք սակաւ զօրօք յաղթեցին բազմութեանբ զօրաց. "Ցաւուրսն յայնոսիկ, ասէ Վարդան, Աբլհէրեթ անն ՚ի տանէն Ջահապայ եկ չորեքհազարօք յերկիրն Սիւնեաց. և եկ Բաբգէն ընդդէմ նորա երկու հարիւրովք. և ՀՀնձեաց զնա խոպառ ,,։

ՎԱՍԱԿ

ՋօրմՀ գրէ Յոհաննէս կաթողիկոս, Թէ Բուղայ ոստիկան "Հրոսակս առաքէ Վասակայ սիսական իշխանի.. իսկ իշխանն Վասակ Հաղիւ ՚ի նոցանէ Ձողոպրեալ փախստեայ գնացեալ ՀՀաւ ընդ կողմանս Կոտայս գաւառի. զայն զգացեալ վաղվաղակի Բուղային՝ զօր զՀետ առաքէ նորա ըմբռնել զնա. իսկ իբրև զՀետ կրկեալ Հասին Հասուն իշխանին Հինգ Հրոսակին, ապա ընդ կրունկն գարձեալ նորա, առ ՚ի գործ զվաղակաւորն առեալ, առՀասարակ զնոսա Թաւալգլոր խաղացուցանէր. և ինքն անցեալ գնացեալ յարևելս յաշխարհն Դարդմանայ ,,։

ԱՐԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ

Լդէպայր ՚ա. Աշոտոյ. զօրմՀ գրէ Յոհաննէս կաթողիկոս. "Բայց զմեծ սպարապետութեանն Հայոց տայ Աշոտ (նախ քան զթագաւորելն) եղբօր իւրում Աբասայ, որ եր այր քաջ, անձնեայ և Թիկնաւէտ, առոգանձն և գեղեցիկ Հասակաւ, կորովի և յաջողակ ՚ի պատերազմունս. որ և աջակցեալ իսկ եղբօր իւրում Աշոտոյ՝ զամենայն Հնազանդեր ընդ լծով ծառայութեանբ, ՚ի բազում կողմանս բազում արուի ցուցեալ, և Հռչակաւոր և Հռչակապ ՚ի մէջ բազմաց երևեալ,։ ՅօրմՀ մարթ է իմաստասիրել, Թէ այնչափ տիրապետեին ՚ա. Աշոտոյ Թագաւորի՝ ըստ մասին սորա արդիւնք էն ։

ԳՈՒՐԳԻՆ

Որ էր որդի Ապուպէլճի վասպուրական իշխանի, զոր յայժ գովէ Թոմա արծրունի ։ 12. ասելով. "Ձերկուց Թագաւորազանց զաՀմանն սեռի բերելով զողջոյս, զսէ- նեբերիմայն (՝ի Տօրէ) և զմանդուներաց ՀենաՀպատոյ ,, ՝ի մօրէ։ Սա յայնմ չխոթէ ժամանակին Բուղային՝ զօրաք իւրովք այնպէս քաջութիւք վանեալ խորտակեաց զզօրս նորա, մինչև Տաճիկք, բատ ասելոյ նորին պատմագրի, "ոչ կարէին ՀաՀել զվիտս զօրավարին յայնմի, և յանդիման կացուցանել զթիւս սպանեալցն. ոչ առնուին յանձն թէ ինն Հարիւր այր միայն (Գուրգենայ) Տղօր ձեռամբ յաղ- թեցին Տնգետասան Հազարացն ,, Բուղային։ ։ 4։ Ասէ դարձեալ ժամանէ՝ ՝ի Սպեր գաւառի "բազում արուեստ ցուցեալ ընդդէմ յունական զօրացն՝ ոչ միանգամ, այլ բազում անգամ. և քառասուն արամբք ՝ի գիմի Հա- րեալ Հազարի միոյ՝ սպան զբազումս ՝ի նոցանէ զընտրելոցն Յունաց. և մերկ կապուտ կողպուտ առնէր զնոսա. մինչև զարմանալ զօրավարին ընդ սորայս քաջութիւն՝ գրէ առ Մէքայէլ Թագաւորն Յունաց զեկուցանելով վասն նորա,։ ։ 12։ ԱՀդանօր պատմէ և ՝ի գլուխ ձորոյն Հայոց յորեք- Հարիւր արամբք մեծ քաջութիւն ցուցեալ սորա ընդդէմ երկուց Հազարաց զօրացն Բուղային՝ որք յանկարծ ՝ի վերայ յարձակեցան. "Ապա փոքր մի կազդուրեալ գնդին Տաճ- կաց՝ կացին յոտս. յայնժամ տէր Գուրգէն առ չժու- ժալ սրտին՝ մտրակեալ զքաջ երիվարն յորում նստեալն էր, և եՀար զգունդն զձախակողմն Տաճկաց, և պատա- ռեաց զնա, և դարձոյց զերեսս նոցա. և փախեան այլազգիքն յերեսաց Գուրգենի ՝ի մի կողմն. և երեքայր ղՀետ և սատակէր զնոսա անչափ զօրուբք. և բազում այն Հին որ մեռանն ՝ի սրոյն Գուրգենի՝ քան որ ինքեանն ,, Վերստին յարձակեալ ասէ զՏաճիկս, և անդրէն պար- տեալ և բեկեալ ՝ի սրոյն Գուրգենայ, մինչև անկաւ ահ սաստիկ ՝ի վերայ նոցա։ Ա յսու քաջութիւք իւրով խաղաղա- ցոյց զաշխարՀն Վասպուրական ՝ի խռովայոյզ ժամանակին յայնմիկ. զի լուեալ Բուղային զայս ամենայն, խօսեցաւ ընդ նմա ՝ի խաղաղութիւն. և սուսեր և գօտի և երիվար պարգեւեալ նմա՝ կացոյց զնա իշխան Վասպուրականի։

ԱՀՈՑ ԱՐԾՐՈՒՆԻ

Երևելի յոյժ քաջութիւ, բայց առ ամիրապետին կայր, որ է նոյն Աշոտ զոր ի վեր անդր յիշեցաք։ Իբրև Մուսէ որդի Բուղային բանակ կազմեալ զօրավարութիւ խաղայր ի վերայ ապստամբաց ոմանց Տաճկաց, ընդ իւր տարաւ և զայս Աշոտ. խոստանալով ընդ հանելն ի գլուխս գյաղթութիւն՝ դարձուցանել զնա յիւր բնիկ տերութիւնն, որ էր Վասպուրական։ Աշոտ նախ զհնարանդուն կեղծաւորեալ ոչ եմուտ ի պատերազմ. բայց իբրև յոյժ սաստկացաւ մարտ թշնամեաց ի վերայ զօրաց Մուսէի՝ մինչև վտանգել բուն բանակի նորա, նոյնժամայն ի ձի աշտանակեալ խրախոյս եբարձ առ իւր ազատագունդն ասելով. «Հասպա քաջք Հայոց, և յայսմ ծանիցին զմեզ և զարիանալն մեր»։ Զայս ասելով ի քթթել ականն «փայլակնահայաւ րարեալ դիմաւալ կացուցին. և իբրև հողմ հոսեալ զփոշի ամարայոյ այնպէս արագապէս զպատերազմին գլխաւորեցին նահատակութիւն. և առնէին խորհուրդք Մուսէի առնն զկատարումն ի վերայ թշնամեացն»։ Թումանց արծրունի էջ. 15։ Ալ այս քաջութիւն Աշոտոյ փոխանակ ազատութիւն բերելոյ անձին, և առաւել խափանիչ եղև ազատութիւն. զի Մուսէ ոչ արձակեաց զնա ըստ խոստմանն. «Զայս խորհելով, թէ զայսպիսի քաջ այր և պատերազմող ոչ պատշաճ վարկանելի է ի հեռաւոյսն վայրս ի դրանէ արքունի կացուցանել»։ Բայց նա յիւր զօրութիւն ապաւինեալ, ելեալ անտի եկն յերկիր իւր խաղաղութիւն։

ՎԱՍԱԿ ՊԱՏԱՆԻ

ԴԱՐ Ա

Որդի Աշոտոյ գահերէց իշխանին Սիւնեաց, անձնատուր լեալ Յուսիպ ոստիկանին, բայց նորա՝ ի դիպահոլ էր եւ դեալ զնա. «Յաւուր միում իբրև գիշեր նահմանայր՝ յանկարծակի զվաղակաւորն պողովատիկ ի գործ առեալ, զպահապանն դիաթաւալ կացուցանէր. և ապա հարուստ մի անցեալ զնացեալ, և կախեալ ընդ պատուար պարսպին քաղաքին փախչէր. իսկ իբրև ձայն պահնականացն զօրացեալ լինէր, և հրոսակ զինի պատրաստէին, մինչ այս մինչ այն՝ նա՝ի փողոցս այգեստանոյն անկեալ, երթայր

գնայը՛ի Հայրենի ամրոցս աշխարհին իւրեանց ,, . Յոհան նէս կաթողիկոս ։

ԱՀՈՑ Բ . ԸԱՀՆԸԱՀ

Իբ կորովի արիութենէն երկաթ կոչեցեալ . "Լակ Աշոտ որդի Սմբատայ , ասէ Վարդան , որ և երկաթեն կոչեցեալ վասն արիական քաջութենէն ,, ։ Զսորա քաջութիւն գտաս նեմք ուրեք ուրեք պատմեալ առ Յոհաննու կաթողիկոսի որ գովելով ասէ . "Լակ բազմահանդէսն այն և յաջողակն ՛ի հրահանգս կրթութենէ վարժից մարտի Աշոտ որդի արքային Սմբատայ . . . անցմանէր զանցմանէր զամենեքումբզ . . . գրեթէ իբրև զարծուի սաւառնաթև սլացեալ ընդ օդս՝ այսպէս սրամարեալ խոյանայր ,, ։ Եւ արդարև հրաշալի ինն թուի շահատակել նորա երկերիւրը արամբք ՛ի վերայ չորից հազարաց զորս ժողովեալ էին երկու եղբարքը բերդապահացը Շամշուդէ բերդին . "Ապաքէն ՛ի վերայ շահատակելոք (ասէ վասն զօրաց Աշոտոյ) , առ ՛ի քրթել ական վաղվաղակի հերձեալ ընդ մէջ զջուխրս ասպարսպակ ռազմին բազմութենէ ընդ կրունկն դարձուցանէին . և երկերիւրօք միայն արամբք զբուրքհազար սպառազինս նոցա ջնջեալ չարդեալ վանեալ վարատէին . . . և գրեթէ ոչ ոք ՛ի նոցանէ ձողոպրեալ գտանիւր , բայց միայն վասն սակաւ արամբք ,, . որ էր մի ՛ի բերդապահացն ։

Լ.ալ մեծ և կարի զարմանալոյ իրք պատմին զմեզ Հայկազունք պատերազմի ընդդէմ Սահակայ անէրոյ իւրոյ , որ եկեալ էր ՛ի վերայ նորին աւերել քան ութ հազար ա րամբք . իսկ նա ել ընդդէմ նորա երկերիւրօք արամբք և էթ . և "յասպարիսին շահատակեալ , և յակառակ թօթափել իբրև հողմ ինչ զնոսա փոթորկեալ , և ոչ մի ոչ ինոյ ոք ՛ի տեղիս ձակատացն , և ոչ քնաւ իսկ երկուք ՛ի միասին ՛ի նոցանէն գտանէին . այլ ցան և ցիր սփռեալ . . . ոչ թերևս առ ՛ի նոցանէն վերիպեալ ոք ՛ի փոքուէ մինչև ցըմեծն . բայց միայն երկուք նոքա , իշխանն Սահակ և Գրիգոր որդի նորին , զոր ձերբակալ արարեալ տանէին ,, ։ Սաստկութենէն և արագաւար խոյանալ նորա առաւել երևեցաւ ՛ի պատերազմին՝ որ ընդդէմ Մոլսէսի ապստամբին . ուր "ձի ՛ի ներքոյ տարեալ , ասէ , ՛ի սաստիկ վառեալն և ՛ի կամաւոյն Մոլսէսի , և մնա առնա հասեալ , և զագուեալ գլխանոցն երկաթի վազերը դիպեցուցեալ , ընդ մէջ ձեղքեր զամուր գլխանոցն . և յերկիրը գնա հա-

ըրստեաղ, և ընդ կրունկն դարձեալ, առեալ ընդ իւր զՄոսէսեան տաներ ,, ։

ԳԻՕՐԳ

Այս էր ի պատուաւորացն նախագրեալ է. Աշտոյ, որոյ ի շրջելն զգաւառաջն Գեղամայ՝ խաղաց ի վերայ նորա Բշնն հագարացի իբրև հազար արամբք. Գէորգ չունէր յայնժամ առ իւր աւելի քան զքսան այր, "սակայն քաջայինգ քաջողջութիւբ սրտի ընդդէմ նոցա արիաբար շահատակեալ ձի ի նեղըլս տաներ, և զզաւգումն ի նոցանէ թաւալգլոր խաղացուցաներ . . . ընդ կրունկն ի փախուստ դնոսա դարձուցաներ ,, . ասէ Յոհաննէս կաթողիկոս ։ Յետ սակաւուց դարձեալ եկն Բշնն բազմութիբ մերձ ի դուռն ամրոցին Գեղայոյ՝ ուր էր Գէորգ. որոյ սակաւ արամբք արտաքս ելեալ յամրոցէն՝ կարճատոտը առներ պերիվար նորա. և գյոլովս ի թշնամեացն տապաստ արկեալ ի փախուստ դարձուցաներ ,, . մինչև, ասէ, "առ նմա յաբառոգեալ լիներ զմակասատութի մինչն առ բազում, ասել թէ Դաւիթ արուորագոյն քան զգեթացիսն ։ Իսկ կարաւան թշնամեացն այսանակ ձաղնօք գնացեալ մտին ի Դուին քաղաք ,, ։

ԴԱՒԻԹ ԿՈՒՐԱՊԱՂԱՏ

Ի՝ եծ եղև քաջութի զօրաց սորա ի պատերազմին ընդդէմ արաբացւոց, որպէս պատմէ Մատթէոս ծէր. յորում էին նորա զօրք երեք հազար հեծելազօրք, իսկ հեծելազօրք՝ երկու հազար հինգ հարիւր. այլ զօրք Մամէլեան ամիրապետին արաբացւոց՝ էին երկու հարիւր հազար յԱպահունիս բանակեալ։ Իբրև ընդ միմեանս բաղխեցան, Դաւիթ զամենեսին ցիր և ցան արարեալ կոտորեաց, և զկին Մամլանայ գերի տարաւ ։

ԱՊՂԱՐՒՊ

Էր սպարապետ Դերենիկ իշխանին Ամձևացեաց. որոյ կորովութի և քաջութի երևի յայս դէպուած. "Ի զօրաց այլազգեաց ոմն խափիկ այր հզօր և քաջ՝ ընթացեալ զհետ և հասանէր ի վերայ Ապղաբիսայ. և Ապղաբիսայ գոչեաց որպէս զառիւծ, և հասեալ ի վերայ նորա և զանաբար հարկանէր զնա, և յերկուս բաժանեաց և պա-

տառեաց գնա ՚ի վերուստ միանգ ցերեկս. և տեսեալ զայն այլազգեացն ՚ի վախուստ դարձան ,, . Մատթէոս ԽԸ :

ՎԱՍԱԿ

ԴԱՐ Ա . ԺԱ

Հայր Գրիգորի մագիստրոսի , սպարապետ Ը. Սմբատայ արքայի Հայոց . որոյ ՚ի նատելն յամուրն Բջնի լուեալ Թէ այլազգիք որք էին զօրք տուղբիլեանց սկիւթացւոց՝ հարին զՀամերէն Նիզ գաւառ Հայոց , սակաւ զօրօք ելեալ ՚ի Ճանապարհէն հարկանէր զայլազգիսն . բայց այլազգիք բազմութիւ բանակի եկին ՚ի վերայ վասակեանց : Սոքա " իբրև անչափ անթիւ տեսանէին բազմութիւն զօրացն այլազգեաց , և յայնժամ միաբան զմիմէ առաջի եդին , և սկսան առաքինանալ ՚ի պատերազմին . և որպէս զգայլս ՚ի մէջ այծեաց , և կամ որպէս զարծուիս ՚ի յերամս ձաղուց , այսպէս արիաբար ընթանային ՚ի մէջ պատերազմին . զքաջութիւն խոցեալ դիմաւաւել յերկիր ձգէին : Ցայնժամ ախոյեանն մի ելեալ ՚ի զօրացն այլազգեաց սեաւ խարիշիկ և այր քաջ , որ և Եօթն գայլ կոչէին զնա . վասն զի զինչ Եօթն գայլ ՚ի ջոկս ոչխարացն գործէը , սա և առաւել ՚ի մէջ պատերազմին . և ահա գայլը խարիշիկն իբրև զսեաւ ամպ որոտալով , որ բոց հատանէին ՚ի զրհոյ նորա . և ձայն տուեալ և յանդուգն յուզեր զՎասակ , Հայեցաւ քաջն Եմրան , և ետես գնա զի գայր որպէս մրրիկ եկեալ , դարձաւ առ Վասակ և ասէր . ահա այր անպարտելի և քաջ , որ այլ չեր ծնեալ ՚ի վերայ երկրի , Եւ ասաց Վասակ . ով առիւծ և քաջ Եմրան , վասն էր զարհուրեցար ընդ տեսիլ նորա ... Ցայնժամ հասանէր գազանաբար այրն այն ռումբ եդեալ քաջին Վասակայ , որպէս զի առցէ գնա ՚ի ծայր գեղարդեանն իւրոյ , և ՚ի չտապս լեալ Վասակ ՚ի նեղքս գիմեաց , և պղտղատ Թրջին ՚ի վերայ սաղաւարտին գահեաց , և յերկուս հերձեաց զխարիշիկն քաջ . որ և մասունք մարմնոյն յերկիր անկանէը ,, . Մատթէոս ԼԶ :

ԱՃՈՑ

ԴԱՐ ԺԱ

Ի գալ սորա զօրօք ՅԱՅելի պատերազմել ընդ եղբօր իւրում Յոհաննու Թագաւորին՝ դղրդեալ խռովեցաւ Յոհաննէս և քաղաքն առՀասարակ, դիտելով զքաջութիւն նորա զոր առիւծու նմանեցուցանէին. յայնմ ժամու իշխան ոմն ՅԱփխազաց գտաներ առ Յոհաննու, դեսպանութեամբ ազա գաւ եկեալ առ նա յաշխարհէն Վրաց, զոր Մատթէոս կոչէ «Աբ քաջ և անպարտելի ի պատերազմի»։ Որոյ տեսեալ զարհաւիրս քաղաքացւոց՝ ասաց առ Յոհաննէս. Ցուցէք «ինձ միայն զԱշոտ, և ես ձերբակալ արարից զնա, և կապանօք բերից զնա առաջի ք»։ Եւ ի սկսանել պատերազմին՝ այրս այս «որպէս զարծուի ընթացեալ ի ձայն բարձր յոտքեր զԱշոտ և ասեր. ով Աշոտ յառաջ եկեսցես։ Եւ լուեալ զայս Աշոտ, և եղև զայրացեալ իբրև զինած. և յուզել զմիանձն ընթանային առ իրեարս. և իշխանին Վրաց պնիզակն եդեալ Աշոտոյ. իսկ Աշոտ իբրև զկայծակն ի ներքս անցանէր, և Հարկաներ զնա պողովատոմն ի վերոյ սաղաւարտին. և վերկաթապատ մարմինն պատառեաց մինչև ցոտն, և Հանդերձ միջօքն յերկիր ընկէնոյր»։

ՎԱՀՐԱՄ

Հօրեղբայր Դրիգորի մագիստրոսի. զոր բազմօք ներբո ղելով, և ընդ վախճանելոյն իբր ընդ կենդանւոյ խօսելով ի Թղթին որ առ Յոհաննէս արքեպիսկոպոս Սիւնեաց՝ ասէ. «Ի վերին աշխարհին Հզօրաց և արիական զօրաց նոցին բազում անգամ մարտակցութիւք և արեամբ և վաՀանմանբ որդեացդ և քոյդ ազգի գնեալ զաշխարհդ, և երբեմն ի նոսա արի երևեալ, և Հրաշից հիացման արժանի, և ի վեր քան զմտածութիւն։ Որ և նոցա իսկ զքոյդ Հանդիսի մրցութիւն տաղս և առինչս յօրինեալ, անպատկառաբար յաղատագունդն պարելին. և ի Հրապարակս գոռեհից և քաղաքաց իբրու զվիւցազանցն երգելին. իսկ անմոռանալոյ և առաքինասերքըն մինչ տակաւին էիր կենդանի՝ մատենագրել ոչ դանդաղեին»։

ՇԱՊՈՒՀ

Սպարապետ սենեքերիմեանց Աբծրունեաց. որք յորժամ եկին ՚ի Սեբաստիա, ցուցանել կամելով զզօրուն իւր առաջի արծրունի արքայորդւոց՝ ՚ի մի կապեալ զերկաթի զրահս, հարեալ սրոյն փղրեաց զամենայն։

ԹՈՌՆԻԿ

Լ՚սի ինչ Դաւնար ամիրային Պարսից այլ զօրաւոր՝ առեալ զՄելտենի հարուստ քաղաք, գերեալ զազգումն քրիստոնէից և զանբաւ հարստութիւն նորա ընդ իւր առեալ տանէր յաշխարհ իւր, Թոռնիկ որդի Մուշեղայ տէր Սասնոյ այնպէս քաջութիւն յարձակեալ պատառեաց և եհար զանակ այլազգեաց՝ մինչև ասել Մատթէոսի ՝ձէ. "Եւ եղև օրն այն մեծ և ահաւոր ,, ։ Իսկ մնացելոցն մազապուր զերծեալ ամենայն գնացին յաշխարհն իւրեանց։ Իսկ Թոռնիկ լինքն գրաւեալ գարձոյց զամենայն զաւար ազգերութիւն " գոհանալով, ասէ, զԱստուծոյ՝ որ ազատեաց զանթիւ բազմութիւն զՄելտենոյ քաղաքին, և՚ի ծառայութիւնէ անօրէն ազգին Պարսից։ Աչս նշանակս վասն Հայոց աշխարհաց եր ,, ։ Ապա ՚ի թիւն ՉՂԵ. պատմէ զահագին քաջութիւն սորա զոր աւրաւ ընդդէմ Փիլարտոսի. որոյ հայկազունն գոլով բայց յոնացեալ բազում գործեր ՚ի կողմանէ Յունաց. կամէր և զԹոռնիկ ընդ իւրև նուաձել. իբրև ոչինչ կարաց առնել Փիլարտոս, գաղտ գրգռեաց զԱմիրքաթիր ամիրային, որ սուտ երդմամբ և առատ տրովք ընծայից զոր էտ ծառայից Թոռնիկայ՝ հաւանեցոյց, և սեր սերտ կապեալ եցոյց ընդ նմա, մինչև բոլորովին պատրեալ Թոռնիկայ՝ արտաքս ելեալ ՚ի բերդէն իւրմէ, որ էր Աշմուշատ, երեք արամբք միայն գնաց ՚ի կոչ նորա ։ Աչլ մինչդեռ, ասէ նոյն վկապիր ՉՂԵ. "կային ՚ի գինարբուսն՝ վազեաց ամիրային գազանաբար ՚ի վերայ Թոռնիկայ, և կամէր սպանանել զնա. և ոչ ունելով Թոռնիկ առ իւր՝ բայց փոքրիկ դանակով հարեալ զամիրային՝ ՚ի վայր հեղոյր զխոր նորա. և զայլոց ամիրայիցն բզնեաց զգլուխն, ընդ իրար ծեծեալ սատակեաց. և ինքն ելեալ անվնաս գնայր ՚ի բերդն ,, ։ Բայց ուր բազմանն էին նենգագործ միաբանեալոց՝ անհնարին է զերծանիլ և այս պիսի քաջն առն. զի մի ոմն յայլազգեաց ՚ի Թագստեան դարանեալ մեծ ՚ի բերդն նորա, յաւուր միւմ յանկարծ

'ի վերայ եղեալ սպան զնա, տարեալ զգլուխ նորին առ Փիլարտոն. «Եւ անօրէն Փիլարտոն, ասէ, Հանեալ զսկաւառակ գլխոյն և արար գաւաթ, և նուաւ ըմպեր գինի. և զինացեալսն 'ի գլխոյն առաքէր ամիրային Մուֆարկնայ»։

ԱՊԱԼԱՍԱՆ

ԴԱՐ ԺԲ

Յորժամ կոմսն Ուրհայու և կոմսն Թլպաշարայ զօրաժողով եղեալ յամին 1109. Փրանկ զօրօք յարձակեցան 'ի վերայ քաղաքին Խառնայ, «եր ընդ նոսա, ասէ Մատթէոս միճ. ազատ ոմն հայեցի 'ի զօրաց Վասլին, որդին Տաճատայ իշխանին Տարծոյ, որ անուաներ Ապլասաճ. և եր այր քաջ և ընտիր պատերազմող»։ Ի վերայ սոցա յարձակեցան յանկարծակի 1500 հեծելազօրք Թուրքաց. և սպանին 'ի Փրանկաց արս 150. ինացեալքն կամէին փախչել անդրէն Ռուրհա. «Յայնժամ Ապլասաճ, ասէ, որպէս զառիւծ գոչեաց, և ձայն տուեալ զօրաց իւրոց, և նոքօք բեկանէր զձակատ այլազգեաց զօրացն», որով կացին Փրանկք անվնաս դառնալ մնանել Ռուրհա։

ԼԵՒՈՆ

Որդի Կոստանդնի որդւոյ Ռուբինայ, ասէ Մատթէոս մծղ. Եկն յօգնութիւն Ռոձերի կոմսին Փրանկաց տեառն Անտիոքայ, որ զօրաժողով լեալ յամին 1118 եկեալ էր առնուլ զԱզազ քաղաք որ է մերձ 'ի Բերիա։ Ռոձեր զաւուրս երեսուն պատերազմ մղեալ և ոչինչ կարացեալ առնել, ապա կամելով զիորձ առնուլ և զզօրացն Հայոց, յանձնեաց առ Լևոն զառաջնակայ աւուր պատերազմին։ Աչն ինչ դէպ լիներ 'ի վաղիւն արտաքս յարձակիլ զօրաց այլազգեաց՝ Լևոն զմի մի 'ի զօրաց Հայոց խրախուսեալ «ուժգին գոչեաց որպէս զառիւծ, և հանդերձ զօրօքն բախեցաւ 'ի վերայ նոցա (այլազգեաց), և դարձոյց զնոսա 'ի փախուստ. և սրով 'ի հետ մնչէ 'ի դուռն քաղաքին կռտորեաց զնոսա. և արար զնոսա արգելականս, որ այլ ոչ էին ընդ դուռն քաղաքին 'ի պատերազմ։ Եւ էառ իշխանն Հայոց Լևոն (անուն) քաջութիւն յաչս միւս, և գովեցաւ 'ի մէջ զօրացն Փռանկաց. և յայնմօրէ սիրեաց Ռոձերն զզօրսն Հայոց»։

ԱՑԵԱՄՆ

Օգինս զայս արիասիրտ յիշատակէ Սամուէլ 'ի շնչ. Թուին, 1124, 'ի պատերազմին յորում Փառլուն ամիրայն պաշարեալ ունէր զՆիզիպ քաղաք. "Յայսմ պա-տերազմի, ասէ, առաքինացաւ կին մի 'ի վերայ պարսպացս, առնոյր ստացեալ սիրտ, հալածականս առնէր քարամբք զմարտուցեալսն յելանելն ընդ պատուարսն, առ ոչինչ հա-մարեալ զկոցուածս նետից' զոր վիրաւորէին արտա-քուստ. և եր անուն նորա ըստ արժանի արագութեան իւրոյ Աչծեամն կոչեցեալ,, : Աչլ հաւաստի եմք, թէ և զայլ բազումս յայսպիսի կանանց անյիշատակ թողեալ իցեն պատմագիրքն մեր. զայս յայն սակս ասեմ, զի և առ մեզ լսեմք զգազմոյ յայսպիսեաց մեծագործ քաջութիւ-առաքինացեալ 'ի հայոստան. մնաւանդ զի 'ի բազմոյ լուաք յարժանահաւատ ականատեսից' զօրաւոր կացեալ կանանց 'ի զգեստ առնոյն, և գլուխ 'ի վերայ հազարա-ւոր արանց կարգեալ 'ի պատերազմի նման նախին Աման-զունեաց, յաւէտ վասն նոցա որք 'ի մէջ ջրդաց կան բնակեալ, և ընդ նոսա հանապազ խառնեալ 'ի մրցմունս 'ի պատահս հինաւարութեց.

Յաւարտ բանիցս զանց արարեալ յիշել զայլ ևս արի-ութիս մերոց քաջազանց, յորոց բազում այն է որ անգիտ շատակ մնացին առ մատենագիրս մեր' քան որ գրեցանն, ինքեսցուք զանս մեր վկայուք խորհեսցուցն, որ ասէ յա-զագս մերոյ ազգիս. "Ձի թէպէտ զօրութիւք տկար, և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութիք, սակայն բազում գործք արութիք գտանին գործեալ և 'ի մերում աշխարհին, և արժանի գրոց յիշատակի, զորոց և ոչ մի ոք 'ի նոցանէ պետք յանձին կալաւ մատենագրել,, : ա. 3:

Աչլ զարմացին Թերևս ոք լսիցէն զայսոսիկ, եթէ զնա՞րդ հնար իցէ, որ զայսպիսի և զայսքան քաջագուն արս ունիցի' ազգ, ընդ այլովք նուաճիլ տերութիք, և գե-ղի լինել նոցա: Ցայսմի կան պատասխան. զի պակասելին 'ի նմա հիմունք օրինաց քաղաքավարութիք, այն է' քա-ջութիւն միաբան և ազգասէր հոգւով, և իմաստութիւն. զոր Վաղարշակայ առաջնոյ ուսեալ յեղբօրէն իւրմէ Աչ-շակայ' ատանդեալ էր իբրև նեցուկ ամրութիւն պետութիւն և օրինք անժխտելի: եթէ կացցեն անմեհենելի 'ի միմեանց

կրկին ձիրքս այս 'ի պետութէ իրիք, կացցէ և պետուին անսասան. ապա եթէ պակասեսցի մին, կործանեսցի անշուշտ. և զոր ասեմն յայտ է յելից իրացն։ Վերջին թագաւորքն մեր արշակունիք անփոյթք բարւոյ և անհմտ. բոլոր իմաստութէ, զի մի աւելի ինչ ասացից, քաջութէ եւեթ համարեցան հաստատուն կալ 'ի կայի իւրեանց, և ահաւոր այլոց հանդիսանալ։ չգիտցան զհոգի ազգասէր միաբանութէ, չառին 'ի ձեռին գործի պիտանութէն զաւրաքնորդն անմոլար հզօր զօրութէեան իւրեանց և զիաբարիչ ախտից և մեղօրութէից նոցա որք կործանիչք են պետութէ։ Ամին իրի իբրև գնաւ անդէկ և անառաջնորդ ծփեալ յալեաց յառանին երկպառակութէից և յարտաքին ազետից, յաւարի առան և գերեցան 'ի հինից թշնամեաց մերձակայից։ Սոքա, մանաւանդ ազգն Պարսից, անկարօտ իմաստութէ, այլ կարօտք և ծարաւիք քաջութէ մերոյն, նոքօք զօրացան և յաջողեցան 'ի պատերազմունս մեծամեծս. զի որ յառաջագոյն սասանեալ կային յահէ թշնամեաց իւրեանց 'ի հեռիթաղաց, 'ի Քուշանաց և 'ի Հոնաց, քաջութէ մերոյն յաղթանակեցին 'ի վերայ նոցա. քանզի առ ամենայն ազգս տարածեալ էր համբաւ քաջութէ ազգիս. յայտ է յանցից անցելոց առ Վարդանաւ և առ Վահանաւ. մինչև առնուաձեղ զմին և զորս ընդունս, ահ արիանէր իւրոյն զօրագլուխն Պարսից, թէ "Դուք ինքնին գիտէք զքաջութէն աշխարհին Հայոց, և զառն առն իւրաքանչիւր նահատակութէն արութէ", որպէս ասէ Եղիշէ. և միւսոյն տեսաւ ահեղ զօրութէն ափշեցոյց զդուռն Աբրեաց, որպէս ասացաւ 'ի վեր անդր։ Եւ 'ի պատճառս արութէն ազգիս վառեցան նախանձու Պարսք և Յոյնք [1], թեթերազք [2] և արաբացիք, և այլ զի գիտեմ քանի քանի բարբարոսք, և եւրոտացոցն 'ի Թրակիա։

1 Ի բաց Թողաք նշանագրել զքաջութիս մերոց հայկազանց 'ի գրունս այլոց ազգաց, մանաւանդ Յունաց կայսերաց, յորս նշանաւոր է քաջութէն և խիտասութէն հայկազնեան ազեաւ 'ի վեցերորդ գարուն յաւուրս Յուստինիանոսի կայսեր։ Յոհաննու և Գուրգենի. Մանուէլի մամիկոնեան 'ի սկիզբն իննեկորդ գարուն. և այլոք նոյ' զօրագլուխ Ձոհրեվի կայսեր, զոր պատմագիրք Յունաց վատաս գրեն, որ կոտորեաց զպարսիքն Ռուսաց, Ռուզարաց և Թուրքաց, ասա-

2 Գրի 'ի պատմութէն Թեթարաց՝ եթէ "յոյժ սիրեր Հուաւուն զանն զզօրսն Հայոց և վ բաց վասն կալի քաջութէն իւրեանց, զոր առնէին առաջի նորա յամենայն պատերազմունսվասն որոյ Թագաւորս (պատասուր) անուանեաց զնոսա. զի զգեցեալ և զերիտասարդ սրտիս մեծ իշխանացն Հայոց և վ բաց ընտրեաց և կացոյց դունապահս իւր,,։ Ազգ գաղեալ 'ի ոձի Թուին, "Գիլասուրն զօրուն (Թաթարաց) Բաշու Նաւինն յաջողեալ էր

պայքը իսկ [1], գուն գործեալ իւրաքանչիւր ամենայն զօրութիւնք ինքեանց ծառայեցուցանել զՀայս. զի և ամենեցուն վկայեր միտք, թէ յորժամ զՀայս ունէիցին թիկունս օգնականութիւն, յաջողեսցին յոյն և կամեսցին. ապա թէ ոչ՝ կամ անհնարին է նոցա կամ կարի դժուարին հանդերձ ահեղ պատրաստութիւն՝ ի գլուխ տանել զայդպիսութիւն ընդդէմ այնպիսւոյ, ընդ որ միաբանեալ խղճեն Հայք: Իսկ մերքն թերևս և պարծանս իսկ համարիցին անձանց՝ յաղթուն ստացեալ վասն օտարոտի ազգաց՝ի վերայ թշնամեաց նոցա: Ա՛յլ զայս երևելի գնաւորութիւն ազգիս յոր գնաւորեալն է՝ի սկզբանէ, յիմաստուն ընթերցողս անդր յանձն արարեալ առ՝ի նիւթ մեծի խորհրդածութիւն, դարձցուք մեք անդրէն՝ի կարգ պատմութեանս:

ՅՕԴՈՒԱԾ Գ

Բարոյական առաքինութիւնք ազգիս:

Ա. Ողջմտութիւն, Աշխատասիրութիւն:

Զողջմիտ զառատաձեռնութիւնն ընծայէ ազգիս Հայոց, իսկ զբաշտութիւնն Յունաց, յասելն զ. 3. վասն կայսերն Վասլի. "Թողու փոխանորդ իւր զԼևոն, որ թագաւորեաց ամս քսան և վեց, այր խաղաղարար և բարեխոսիչ ամենայն երկրի. առատաձեռն՝ի տուրս, և՝ի բաշխելն ոչ

[1] Ա՛ր թագաւորութիւնքն՝ի ժամանակի անցից, որոց օգնականութիւն բազում քաջութիւնք զործեցին խաչակիր զօրք յարեւելեան աշխարհս. զորոց տեսցես՝ի հետևեալսն:

՚ի գործ պատերազմի. ուր և հանդիպեր ընդդէմ պատճառ (առիւծին) իբրեւ բազում քաջութիւնս առներ. բայց պատճառ յաղթութեանն էին Հայոց և վասն իշխանաց, որ լինէին երեսք զառաջինն, և ուժգնին բազխէին՝ի թշնամիսն յարձակէին. և ապա զնին նոցա (յարձակէր) թագաւորն նեսթ և ազէզամբ,, : Ե՛ւ յորժամ թաճարալք յարձակեցան՝ի վերայ սուլտանին Հռոմոց կամ Իկոնիոյ՝ որ էր զօրաւոր յոյժ, սուլտանն խոհեմագոյն, ասէ, որ է խելացասէն, եկ ընդդէմ նոցա հարիւր հազար զօրաք. բայց ասէ. "Ցեկն գագայ որ-

դին մեծին Վահրամայ, Թոռն Բլուշ Զաքարեի Ռշտունեայ անուն (որ էր՚ի բանակին Թաճարին), քաջապէս մարտեցեալ ընդդէմ զօրու սուլտանին, հանդերձ այլ ազատագունդ զօրօքն Հայոց և վասն որ ընդ նմա, և զարձուցեալ զայլ Թև զօրաց սուլտանին, բազում ամրոյիւք և մեծամեծաց գլխոց հատեալ, յոյժ սպասելացուցին զսուլտանն,,:

որպէս զՀռոմ ըսւիչտ , պի չէ սովորութի՛ Հռոմմոյ առատ լինել , և ոչ յիւրեանց լեզուն ասի առատ , այլ նա որդի Հայոյ էր , և առաւել քան զՀայ առատատուր ,, : Ըստ այսմ գրէ և Վարդան յասելն վասն Նորին կայսեր Լևոնի. " Եկը առատ 'ի տուրս , և ոչ նման Հռոմի . զի նա (Լևոն) որդի Հայի էր , և յոյժ սիրէր զՀայս ,, : Զոմանս յայսպիսեացս աստի յիշատակեալ գտանեմք 'ի պատմութի՛ աղգիս , յորս գլուխ ամենեցուն յայսմ առաքի՛նութի՛ պարտ էր դնել զմեծն Ներսէս . այլ զինորա ողորմածութի՛ ոչ էր առանձնակի՛ ևեթ որպէս զայլոցն , այլ յաւէտ 'ի գործս հասարակաց օգտի , վասն որոյ անդադար ունիմք յիշել զնորայն . իսկ յայսմ վայրի յիշեցուք զայս՝ որը Թուխն լինել պտուղ և արգիւնք նորին մեծին Ներսէսի . զի յառաջ քան զնա անգթութի՛ էր տիրեալ 'ի մէջ ազգիս , որպէս ասէ Խորենացին :

ԽԱԴ

Լը 'ի զջալ առնուլ զսորա ողորմած բարուցն որ 'ի մէջն անդ չորրորդ դարուն, շատ է այն զոր վկայէ Խորենացի . "Եւ յա Խադ յամենայնի նմանեալ մեծին Ներսիսի, և առաւել ևս 'ի տեսչութի՛ աղքատաց. որոյ չտեմնբանքն աղերսացան աբանչելապէս իբր առ Եղիայիս և Ելիսեիս ,, . Ջ. 31 :

ՇՈՒՇԱՆ ՑԻԿԻՆ

ԴՈՒՐ Է

Հիշատակաց արժանի կինս այս օրինակ և գաղափար եղև առն բարեպաշտի որ զսէր և զգթութի՛ փոխանակ չարեացն Հատուցանէ Թէհմադոյ : Չի յետ մեծի կոտորածին արաբացւոց 'ի զօրացն Հայոց 'ի Վարդանակերտի , ասէ Ղևոնդ , " յորոց (յարաբացւոց) նուաղունք 'ի փախուստ դարձեալ իբրև աբը երեք հարիւրք , ապաւինէին առ տիկինն Շուշան . զորոց զկնի հետամուտ եղեալ Մամպատ որդի Աշոտի զօրաք իւրովք՝ կամէր արկանել զփախստեայսն 'ի սուր սուսերի : Որում ընդ առաջ ելեալ տիկինն Շուշան բազում աղերսանաք և դաշամբք Թափեր զնոսա մերկս և բոկս և հետևակս և վիրաւորս , զորոց առեալ պատեր զվէրս և ողջացուցանէր և զգեցուցանէր հան-

դերձիւք . տայր և զգրաստս յիւրոց երամակաց , և առաք քեր առ իշխանն իսմայէլի Ապտիմէլիք . վասն որոյ և 'ի նմանէ բազում չնորհակալութիւն ընկալեալ , մեծաւոր պարգևս առաքեր նմա ,, . գԼ . Շ .

ԱՃՈՑ

ԴԱՐ Թ

Յրաջին Թագաւոր բագրատունի . որոյ մի 'ի պատճառացն , որոց վասն կացուցաւ Թագաւոր , համարի առաքաւորեալն իւր : Իակ 'ի մերձենալ մահուն , " ոչ սակաւ ինչ քան զբազումս բաշխեր գանձս ոսկւոյ և արծաթոյ 'ի տանկս և յազգատոս . այլ և 'ի ձեռս հայրապետին հաւատացեալ զնոսա զանձարանացն մերձեր և զերամակս ձիոց և զդասակս անդէոց և զՀօտս ոչխարաց , առնելին բնաւին բաշխել ,, .

ԴԱԳԻԿ ԱՐՔՐՈՒՆԻ

ԴԱՐ Ժ

Թագաւոր Վասպուրականի . որ " ի վերայ առնային բարեխնամող գԹուլթեց որով զաղքատս դարմանէր , զգեղեալս զարձուցանէր , զզրկեալս փրկէր , դատ առնէր որոց , և տայր իրաւունս այրեաց . և զայն և աւարտ և գլուխս դնէր առնային առաքինասէր վարուց , և և մեծի գովուլթեց արժանաւոր ,, . Թումա արծրունի Ե . 6 .

ԱՃՈՑ Գ

Յ.ինչափ անուանի գտաւ յողորմածութեն մինչև Ողորմած յորջորջել զնա այլոց . " Իակ 'ի ն . Թուէին , ասէ Վարդան , փոխի սուրբ Թագաւորն Աբաս , և առնու զթագն Աշոտ որդի նորա Ողորմածն կոչեցեալ , որ բազում ուրկանոցս շինեաց , և առատ ուռճիւք դարմաներ ընտս . յո-

լով անգամ և անձամբ սպասաւորելով, և զթաթախածոր ձեռացորդս բաժակին ախորժանօք ըմպեր ,, ։ Աղողիկ ոչ յիշէ զ Վասապական չինուածս ուրախացաց. բայց զառանձին սպասաւորելն անձամբ՝ Ձոխագոյն պատմէ. "Ա՜յս Աշոտ, ասէ, խաղաղասէր բարուք կալեալ զաշխարհս Հայոց, խոնարհութիւն և ողորմածութիւն զանցոյց զամենեքումբեք. վասն զի զգոնջացեալսն և զկաղսն և զկոյրսն հաւաքէր առ ինքն, բարձակից ինքեան առնելով 'ի խրախճանութիւնս։ Զո՛ մանս 'ի նոցանէ իշխանս, և իշխանաց իշխանս, և կիւրապաղատս անուանէր և զբօսնոյր նոքօք. զբոսան կարմիր՝ և զվերս նոցա՝ առաջի ասց իւրոց փոխանակ զարդուց և ականց փայլելոց համարեր. այլ և զբաժակն իւր Թագաւորական ըմպելեօք մատուցանէր նոցա. և յորժամ Թագաւորս վերագ նոցա խառնէր ընդ գինւոյն, յայժամ զինա՜ցորդս նոցա առեալ ինքն Ձաշակէր։ Եւ այնքան առատաձեռնութիւն բաշխէր կարօտելոց՝ մինչև 'ի մահուն իւրոյ ոչ լինել գրամ մի 'ի գանձատան նորա. այլ և զկապուտ զարդուցն և բազմականաց և որմնց տալր կարօտելոցն։ Եւ քաւեաց զվեղս իւր ողորմութիւն անանկաց ,, ։ ՟ի. 8 ։

ԳՐԻԳՈՐ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ ԵՒ ՀՈՒՐՀԱՆ ՏԻԿԻՆ ՆՈՐԱ [1]

Սոքա էին ծնօղք Վահրամայ՝ զորմէ ստորև. երկոքեան և աշխարհաշէնք, զանազան բարեգործուքբ փայլեալք, և առաւել ողորմածութիւնբ, զորս յիշատակէ Դրիգոր մանիսորս 'ի Թուղթն որ առ Յովհաննէս արքեպիսկոպոս Սիւնեաց, 'ի ներքոգրէն զՎահրամ զորդի նոցա նահատակեալ. առ որ բարառնաբար խօսելով ասէ. "Ձինչ արդեօք ոք իմասցի Թերևս զԴրիգորիոս զՀայրն քո, և զառաքինասէր մայրն . . . որ և իւրեանց իսկ կենցաղավարութեն առնոյն բարեգործութիւբ կատարեալ . . . և աղքատասիրութիւբ և հիւրընկալութիւբ. որ (որոց) վարբ՝ օրինբ առնոյն հայաստանեայց տուաւ. մօրն քո՝ կանանց, և հօրն քո՝ արանց . . . Սոցա ոչ էր այլ ինչ՝ եթէ ոչ գնել զգերեալսն, ազատել զբանտարկեալսն, կերակրել զքաղցեալսն, արբուցանել զծարաւեալսն, ուսուցանել զման-

1 Ի ժամանակս կիւրիկեցւոց յիշ- թէք, հայկական առատաձեռնութեբ- քեքտասանեբորգ դարուս բարբառեալ փայ- ի տուբս ողորմութէն, և հոգևորական լեցան առաքինական վարուք. յորոց կենաց փոյթ ըստ եւրոպական կրթութ- մի էր և Ձախսել Թագուհի, յորում Թեանց։ Այլ զոռացան առանձին խո- ամենայնէս փայլեցան կրկին առաքինու- սելոց եմբ 'ի հնախօսութէն կիւրիկեաց։

կունա, մուռացանել զօրքս, օթեւան լինել այրեաց, զմբրըն-
նեալսն ՚ի ձեռաց հնօքաց կորզել, իւրովին ձեռաք խակ կե-
րակրել զաղքատս և զկրճնաւորս, ամենայնացանել զօրքս
ընդ միմեանս ողջախոհ և քրիստոսական կրօնիւք։ Ո՛ որ
վախճանիցէ՝ և ոչ անդր ընթացեալք յուղարկաւորք լինէ-
ին գնացելոցն, և միթեթար ինացելոցն։ Ո՛ որ պատուական
երթայր առ նոսա՝ և ոչ հատուցանէին. կամ արտուեալ՝
և անմիթեթար ելանէր յարկաց նոցա. կամ հիւանդ որ՝
զօրս ոչ տեսանէին. կամ անանկ՝ զօրս ոչ ժողովէին ,, ։

ՎԱՀՐԱՄ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ

ԴԱՐ ԺԱ

Որդի նախագրեալ Գրիգորի և Շուշանայ, հօրեղբայր
Գրիգորի մագիստրոսի. յողբմանձուէ և յաւհնային աղգս
բարերարութէ յոյժ երևելի. զօրոյ զնահատակին լուեալ
նոյն ինքն Գրիգոր մագիստրոս՝ այսպէս ներբողէ ՚ի պա-
տասխանին որ առ Յոհաննէս արքեպիսկոպոս Սիւնեաց.
“Մարդասէր և օտարասէր, անոխակալ և անյիշաչար...
Ա յժմ... ո՛ զտկարութէն մեր, ո՛ և զանժուժկալութէն իւն
համբերութէ իւրով միթեթարէ, ո՛ զաղքատս կերակրէ ա-
ռատաձեռ և զուարթ լըջմտութէ, և ո՛ արդար դատո-
ղութէ զօրըս և զայրիս տածէ, կամ զգերեալսն գնէ, կամ
զրանտարկեալսն արձակէ, կամ զցրուեալսն ժողովէ. առ-
ո՛վ որ այժմ անանկացեալն յիւրմէ բնակութեանցն ըն-
թացսի իբր յիւր խակ հայրենի սեփական։ Քանզի արդարև
յոգունց քոյդ (տուն) կարգեալ էր ամենեցուն ապաս-
տան. որ և ոչ խակ հարցեալք՝ որպէս ախորժելին այնպէս
պատրաստ էր. և այս ոչ միայն մերոյին սերն և համա-
զանց, այլ և իվերիացւոց և Պարսից ,, ։

ԳԱԳԻԿ

Որդի Աբասայ, թագաւոր կարուց։ Սա առատաձեռ-
նութեամբ իւրով զերծոյց զինքն և զիւրսն ՚ի մահաշունչ
աւերմանէ սուլտանին Ալփասլանայ. զի կերակրելով
զզօրս նորա՝ յինքն յանկոյց զսիրտ նորա. զի ասէ Մատ-
թէոս. “Ընդառ Գագիկ ձաղ սուլտանին. և զայս այսպէս
լսեցաք եթէ մեկ գառին վերայ զոր խորովէաց՝ ծախք ե-
ղեան հազար դահեկան. և հարիւր հազար դահեկան սե-

զան տուեալ սուլտանին, և ամենայն զօրքն (զօրաց) նորա, և այսու զերծաւ խաղաղութե՛ն ։

Բ. Աղեքսիոսին Բարեպաշտութիւն ։

Յայսմիկ նահապետքն մեր Հայկազունք ամենեքեան զՀետ էին շինութե՛ն և բարեկարգութե՛ն. յորոց մի և Աբրամ՝ նայն. որ ընդ քաջութե՛ն ցանկացող եղև և բարեկարգութեան ՝ի կարգի եդեալ զիրօք Հայս, և պատուէր տուեալ ՝ի բարբառ Հայեցի խօսել. յորմէ մարթե՛ է իմանասիրել թե՛ և այլ բազում բարեկարգութի՛ս արարեալ իցեն նորա, այլ չէն ՝ի գիր արձանացեալ։ Պատմութիւն մեծին Տիգրանայ յայտ առնէ զիա լինել այր քաջ բարեկարգութե՛ն խելամուտ. յորոց ինչ ինչ զոր ՝ի գլուխ տալ բաւ՝ պատմեալ կան ՝ի գլուխն Դպրութե՛ն յարուեստս. տես անդ։ Ալ քանզի ՝ի ժամանակս Աբշակունեաց և Բագրատունեաց առաւել գտանեմք յիշատակեալ զայսպիսիս, զնոսին կարգաւ յառաջ բերցուք աստանօր ։

ԳԼԻՒԻՒՐՍ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ

ՎԱՂԱՐՇԱԿ Ա

Յաշխարհաշէն բարեկարգութէ՛ հիմն արկեալ իւրոյ թագաւորութե՛ն որպէս վայել է արդարև թագաւորի, միշտ լինել պարծանք համօրէն տոհմին արշակունեաց. առաջին լեալ ՝ի թագաւորս, և առաջին յաշխարհաշէնս. զի ընդ սկսանիլ այսր տէրութե՛ն սկսաւ և բարեկարգութե՛ն հաստատեալ։ և յայտ է այս ՝ի Թղթէն որ առ եղբայր իւր Աբշակ. "Քանզի պատուէր ընկալայ ՝ի քէն՝ քաջութե՛ն և խոհեմութե՛ն հոգ տանել, ոչ երբէք անփոյթ արարեալ զբոյժն խրատու, այլ խնամ տարեալ հոգացայ ամենայնի՝ որչափ միաք և հասողութե՛ն բաւեցին"։ Խորենացին ։ 9։ Աւ՛ս բան յայտ առնէ արդարև թե՛ յայնժամ՝ ըստ ասելոյ Պղատոնի, փիլիսոփայք էին որք կառավարէին զարքունիս Պարթևաց. յորոց քաջ հրահանգեալ Աբշակ՝ զայս երկու պատուէր եդեալ էր ՝ի վերայ Վաղարշակայ եղբօր իւրոյ, քաջութե՛ն և իմաստութե՛ն հոգ տանել. և խելամուտ արարեալ զնա՝ թե՛ առանց երկոցունն սոցա անհնար է հաստատուն կալ թագաւորութե՛ն։ Բայց Հայք որ նախ քան զՎաղարշակ՝ չէին ՝ի վերայ հասեալ այսմ

անժխտելի օրինացս, այլ քաջութեամբ ևեթ համարեին հաստատուն կալ թագաւորութեանդ, վասն որոյ և հեռացեալ օտարացեալ էին առ հասարակ յիմաստութենէ. որով և կորուսեալ զթագաւորութիւն, ընդ նմին և զամենայն բարեկարգութիւն. " Չի ոչ կարգք ինչ լեալ աստ յայսմանէ (ասէ Վաղարշակ 'ի նմին թղթի)... և ոչ այլ ինչ օրինաւոր, այլ խառն 'ի խուռն ամենայն և վայրենի ,, : Բարեկարգութիւնք զոր արար Վաղարշակ՝ համարին ութ. նախ 'ի վերայ գաւառաց և ուսուիաարութեանէ. երկրորդ՝ յուղղել զշրջակայ ազգս. երրորդ՝ 'ի վերայ զինուորութեան. չորրորդ՝ 'ի վերայ աբքունեաց իւրոց. հինգերորդ 'ի վերայ նախարարաց. վեցերորդ՝ 'ի վերայ օրինաց. եօթներորդ 'ի վերայ բարոյական սկզբանց և կենցաղակրթութեան. ութերորդ 'ի վերայ շինութեանց: Ի սոցանէ զամենս ևեթ յիշելոց եմք 'ի մտածելիս ըստ պատշաճ կշռակարգութեանց համառօտիւ. զի մի առ մի գրեալ կան իւրաքանչիւր 'ի գիրսն Աղգասեր յերես 170—211 :

ԱՐՇԱԿ Ա

Ա ման սորա ասէ Խորենացին թ. 9. " Նախանձաւոր և հետաքննող հայրենի առաքինութեացն լեալ՝ բազում կարգս ուղղութեանց գործեաց ,, : Այլ ոչինչ յիշէ 'ի կարգացն և յուղղութեանց գործեցելոց, բայց միայն զքաջագործութիւն, որ ոչ է 'ի կարգի նշանագրելոցս :

ԱՐՏԱՇԷՍ Բ

Ի ՀԶՕ ամենայն հայկազուն և արշակունի թագաւորաց սա համարի ընդհանուր աշխարհաշէն. առաւելեալ յիւրս ինչ քան զՎաղարշակ. "Յետ ամենայն առաքինութեանց և գործոց ուղղութեց Աբտաշիսի՝ հրամայէ զամենայն գիւղից և ագարակաց որոշել ,, , ասէ Խորենացի թ. 56 : Զամենայն գործս ուղղութեանէ ասելով յայտ առնէ յաջողեալ նորա յամենայն աշխարհաշէնն բարեկարգութիւնս. որպէս և 'ի գլուխ 59. նշանագրէ ասելով. "Բազում ինչ գործք յաւուրս Աբտաշիսի գործեցան ,, : Այլ յաւէ մեզ այն՝ զի յայժ համառօտիւ անցանէ 'ի պատմելն : Զսորա մեծագործութիւն յուշ առնէ և Թոմա արծրունի ա. 11. "Իբրև ա ջողեցաւ, ասէ, Թագաւորութի Աբտաշէսի ամենայարդար պատրաստութիւք, և աշխարհաշէն հոգաբարձութիւք, որպէս բացայայտեն գիրք պատմագրաց... յիշէ զնաժդեհանայն

իւր ՚ի վիմամէջն ,, ։ Ապա ստորագրէ զհինել և զչինել Արտաշէս քաղաքի, զորմէ տես ՚ի մեծ Հայս 188։ Ապա ետուն ՚ի աշխարհաշինութենէ սորա քան զվաղարշակ հայմարի բազմամարդացուցանել նորա զՀայաստան, և ծաղկեցուցանել զարուեստս և զգիտութենիս. զոր և յիշէ Խորենացին ՚ի. 59. ասելով. "Թէպէտ և զայն ամենայն զոր ինչ յիշատակեցաք յառաջագոյն ձառիւքս կարգք և սոյնքան ՚ի վաղարշակայ և յայլոց առաջնոց Թագաւորացն, այլ ՚ի մեծամեծ արուեստից և ՚ի գիտութեց ունայնացեալք էին, որպէս հինից և ասպատակաց պարապելք, և այսպիսի գիտութեց (զոր հաստեաց ՚ի. Արտաշէս) կամ անփոյթ արարեալք, և կամ ոչ հասեալք ,, ։ Ի գլուխն Բնակչաց և Դպրութեց ունիս գտանել զոր ինչ արար երկրորդս այս Արտաշէս ։

ՄԵՆՆ ՆԵՐՍԻՍ

ԴԱՐ Դ ՚

Ի ժամանակս քրիստոնէութեան յորժամ եղծեալ անհետացան ամենայն կարգ ուղղութեց յաշխարհիս մերում զոր հաստատեալ էր Թագաւորացդ նախագրելոց, ահա յարեաւ ՚ի նմա այրս այս ՚ի կարգէ եկեղեցականաց, այլ հոգի մեծագործուն ՚ի նմա գերազանգեալ քան զմեծամեծ Թագաւորացն. նմին իրի արգեամբք և ձգմարտութբ մեծ կոչեցաւ, որպէս եթէ չեղև ոք որ ժամանեաց նմին ամենայն մտաւբք կատարեալ. այր նեղանձնացեալ, հանապազ երկնայնոյն տենչացող, այլ կիրթ և խելամուտ ամենայն կարգաց և ուղղուեց աշխարհի. համառօտ ասել. ամենայն գիւրաք պերճացեալ և տէր ընդ նմանս նմին ոչ ոք եկաց յետնորա. և ցորչափ տեւեցին աշխարհս կացեալ անջեալ ջերմ յիշատակ անուան նորա և աշխարհաշէնն մեծագործութեց նորին։ Եւ որ ՚ի բնութենէ ընկալաւ զպղտքան ձիրս, և ևս աձեցուցեալ աճ ՚ի կատարումն կալոյին նորա ՚ի Բիւզանդիա, և սահմանաւոր եղեալ ազգի ազգի բարեկարգութենէց ծաղկելոյն անդ ՚ի ժամանակին ։ Ա՛յս է զոր ասէ Խորենացին. "Ի Բիւզանդիոյ գարձեալ ՚ի կեսարիա,

1 Ի չորրորդ և ՚ի հինգերորդ դարս կացին ՚ի Հայաստան և այլ երբեմն մեծ բարերարք, վասն որոց

Թագաւոր, Մրմնն Սահակ, և Մեսրոպ. զորոց առն ՚ի գլուխն Դպրութ։

և եկեալ՝ի Հայս, զամենայն կարգս ուղղութեՅ Հարցն իւրոց նորոգեաց. այլ և առաւել ևս. քանզի զլարեկարգութեՅն զոր եաես՝ի Յունաց աշխարհին, մանաւանդ՝ի Թադաւորեալ քաղաքն, ՚ի սմա նկարագրէ ,, ։ գ. 20 ։ Եւ Բուզանդ ասէ վասն նորա. “ Ի ՀովսուեՅն նորա բազում խաղաղութեՅ լինէր աշխարհին. զի՝ի վարս կարգաց գնացից իւրոց՝ նմանեաց իւրոց Հօրն մեծին Գրիգորի, արդարև Հայրաբարոյ գտանէր ամենաբարի. զնոյն Հարցն նորոգեաց զառաքելաշնորհս ,, ։ դ. 4 ։ Ցեսցուք արդ մի առ մի որ ինչ ուղղութիւք եղեն՝ի նմանէ՝ի պայծառուել ազգիս և Հայաստան աշխարհին. նախ զչափ ողջմամծուեն նորա, և ապա զանչափ բազմութեՅն չինուածոցն Տասարակաց՝ի պէտս, և՝ի փառս քրիստոսական կրօնից ։

Ողջմամծոութիւն. Առաջին և մեծն՝ի բարեկարգուԹիւնսն որ. “Պանծալական սահմանադրութեՅ Տաստատեաց, ասէ Խորենացի, զողջմամծուեՅ. խրելով և զանգԹուԹեՅն արմատ, որ բնաբար սովորութեՅ էր յերկրիս մերում ,, ։ գ. 20 ։ Եւ Բուզանդ ասէ՝ի գ. 4. “Նախ ինքն առնէր, և ամենեցուն զնոյն ուսուցանէր. առՀասարակ զնոյն օրինակ առնել Հրամայէր յամենայն աշխարհս և՝ի գաւառս և՝ի կողմանս կողմանս . . . չինել աղքատանոցս, և՝ի ժողովել ձախատաժէտս և զօրկունս և զմարմնալարս և զանմէնայն ցաւոտս. և նոցունց կարգեցին օրկանոցս և դարմանոց և ուՀՀիկս, և պատանս աղքատաց. զի այսպէս էտ Հրաման մեծ եպիսկոպոսապետն Ներսէս ,, ։ Բայց յաղողմամծուեՅն անդ սրբոյ Հայրապետիս մեծ է այն, զի ոչ շատացեալ, ասէ Բուզանդ, Հասարակաց տեղիս սահմանելով վասն աղքատաց, Հոգայեալ և զդարմանոցս, այլ և “ տաՀար իւր և սեղան զօրՀանապազ աղքատաց և օտարաց էր և Հիւրոց. և այսպէս առ յոյժ աղքատսիրուԹեամն, զի Թէպէտ և չինեաց զամենայն աղքատանոցս ընդ ամենայն գաւառս, և կարգեաց նոցա անդէն դարմանս . . . սակայն և զիւր տաՀարն առանց նոցա ոչ առնէր. այլ կաղդ և կոյրդ և մարմնահարդ, խուլդ և Հաշմեալդ և ցանկանեալդ և կաթստեալդ ընդ նմա և՝ի նոյա ակրմբի դարմանէին բազմեալք. և ինքն իւրովք ձեռաքն լուանայր զամենեսեան, օծանէր պատէր, և ինքնին իակ ջամբէր նոցա զիւրաքանչիւր կերակուրս, և զամենայն ինչ՝ի պէտս նոցա ծախէր. և ամենայն օտարդ ընդ նմա, Հովանեաւ նորա Տանգուցեալք, դադարէին. և ամենեցուն զոր ինքն առնէր՝ զայն ուսուցանէր ,, ։ Եւ այսպէս

ըստ գրելոյ նորին մատենագրի, «Աղքատք զօրհանապազ ընդ նմա ուրախ լինէին»։

Այլ մեծ եւ այն է յողորմածուէ իւրում, զի ժողովով ետ բառնալ յաշխարհէս զմուրացուէն. «Կամ եղև, ասէ Բուզանդ ։ Հ. ամենայն սուրբ ժողովոյն, զի այնպիսիքն միայն նստեալ լինէին յիւրաքանչիւր կայեանս, և մի՛ ելաներել ի մուրծն տառապանս, և մի՛ բնաւ ելանել ըստ իւրաքանչիւր գուրս. այլ զի ամենայն ոք պարտական է նոցա ... առհասարակ ողորմածութի՛ւն և երկիւղիւ տարեալ նոցա զղջմանն, և զղիտոյս նոցա վճարեցեն»։ Ահա ազգ ողորմածութի՛ն բաց յայլ քաոսիրութի՛ն ունի ընդ իւր և զայլ բարեկարգուէն քաղաքական հասարակաց կարևոր. և զօր թագաւորք երջանկացուց ի յետին ժամանակս սկզբան մուծանել ի սահմանս իւրեանց, զնոյն մեծն Կերսես աչալուրջ կենցաղագիտուէն ի հինգերորդ գարուս ծանեաւ զօգուտ սորա, և եմայծ ի Հայաստան. մինչև ըստ ասելոյ նորին Բուզանդայ, «Յամենն Կերսիսի զաղքատս քնաւ ամենևին ի մայր ոչ տեսանէր ընդ ամենայն սահմանսն Հայոց. այլ անդէն ի հանգստեան նոցին, այսինքն յօրկանոցս, ամենայն մարդիկ տանէին զամենայն պիտոյս նոցա. անդէն իսկ անկարօտ յամենայն ումեքէ լեալ էին»։ Ե. 31։ Ահա է զօր համառօտիւ ծանուցանել կամի Խորենացին յասելն վասն աղքատանոցաց, թէ կարգեաց, զի յարդեանց երկրի «պաշտեացեն զնսա հարկաւ բացէ ի բաց. և նոքա մի՛ ելցեն ըստ քնակուէ իւրեանց»։ Ե. 20. այսինքն մի՛ ելցեն աղքատք արտաքս քան զնա կուէ իւրեանց մուրանալոյ աղագաւ։ Ահա զհետ գայր և այլ հին բարեկարգուէն գեղեցիկ, որ էր բարձումն յաշխարհէս արանց անուղղայից և ստահակաց. զոր և ծանուցանէ Մեսրոպ յասելն ձէ. «Ոչ ոք տեսանէր յաշխարհիս Հայոց մուրացիկ երևիլ յաւուրս Կերսիսի, անուղղայս, անօրէնս և մոլահաճոյ (իմս դատարկաշրջիկ ըստ Հաճոյս) յերկրիս Հայոց ի բազում ժամանակաց, զոր եբարձ սուրբն Կերսես»։

Ազատանոց. «Հրամայեաց, ասէ խորենացի, ըստ գաւառաց գաւառաց շինել աղքատանոցս, ի խորչս և ի զերծ տեղիս. զի փոխանակ հիւանդանոցացն Յունաց լինիցին ի միաբարուէն մարմնոց վշտացելոց»։ Ե. 20։ Կամի ասել, թէ ի տեղիսն յայնոսիկ, որ աղքատանոց անուամբ շինեալ էին՝ անդ ժողովէին նաև զհիւանդս և զախտաժէտս. զնոյն ցուցանէ և բան Բուզանդայ զոր բերաք ի

վեր անդր. Հրամայէր, ասէ, "չինել աղքատանոցս, և ի ժողովել զախտաժէտս և զօրկունս և զմարմնավարս և զա- մենայն ցաւոտս,,։ Բանք Բուզանդայ և խորհեցուցին ցուցանեն թէ Հիւանդանոց անուամբ տեղիք յիշատա- կեալք այլուր ի Բուզանդայ Ե. 31. "Եւ յամենայն ա- ւանս էր շինեալ նորին Ներսիսի և Հիւանդանոցս,, չզա- նազանին յաղքատանոցաց։

Ոբրիանոց. Ուրոյն յիշէ զայս Բուզանդ ասելով Կարգե- ցին Որկանոցս. վասն որոյ Թուխ ուրոյն բնակարանս շի- նեալ վասն նոցա. զի և վասն տարափոխիկ ախտից նոցա հարկ էր ոչ բնակեցուցանել զսոսա ի միասին ընդ այլ ախ- տաժէտս, յորս սակս հալածէին մերքն զսոսա յամենայն տեղիս. մանաւանդ թէ զայլ հնարս դարմանելոյ զսոսա կարգեալ մեծին Ներսէսի ասէ Մեսրոպ. Նախ զբորոտս հալածեալս ժողովել յիւրաքանչիւր տեղիս. և ապա աս- տուածային ազդեցուբ առնել ի գաւառն Աղձէացեաց ի Հոգւոց վասն առ պատկեր Աստուածամօրն. ուր և գտանէին բժշկութիւն յանուն սրբոյ կուսին. ուրանօր տայր շինել և վկայարան։ Վասն որոյ չէ պարտ շփոթի իմանալ զշփոթ բանս Բուզանդայ ի վերոյ յիշեալ. որպէս թէ զպիտոյս աղքատաց յորկանոցին տանէին. այլ զաղքա- տացն՝ յաղքատանոցս, և զուրկացն՝ յորկանոցս։ Եւ թէ- պէտ շինուածք բնակարանացն այսպէս զատուցեալք էին ամենայնիւ որպէս Հարկն պահանջէր, այլ գուցէ գոլով նոցա շինեալ առընթեր միմեանց, Բուզանդ յայս բան միայն զուրկանոցն յիշեաց։

Վրթմանոց. Ջայսոսիկ ուրոյն յիշէ և Բուզանդ ի նա- խագրեալ բանն՝ որ նոցին Թուխ լինել, զոր Խորենացին կո- չէ "Տեղի մենդեան որբոց և ծերոց և անունողաց տա- ծուին,,. Ճ. 20։ Ջորս սեփհական անուամբք կոչեմք Ան- կեանոց, Ծերանոց և Որբանոց. որպէս և Բուզանդ զվեր- ջինս զայս յանուանէ յիշէ. Ե. 31։

Այբենոց. Որ էին տեղիք ի դարմանել զայրիս. զորս ի հարկէ ի սեփհական տեղիս ուրոյն յայլոց բնակեցուցանէ- ին։ Ջհոգ և զնմամեծին Ներսիսի նաև ի վերայ այս- պիսեաց յիշէ Բուզանդ. "Աչրեաց և որբոց և չքաւորաց հանգիստ և դարման առնէր,,. Ճ. 4։ Իսկ զսեփհական բնակարանս վասն նոցա շինեալ՝ յիշէ այլուր, յասելն վասն Պապայ Թագաւորին. "Սկսաւ . . . աւերել զայրենոցան և զորբանոցսն՝ զոր շինեալ էր Ներսէս՝ի գաւառս գաւառս,, Ե. 31։

Հետքանոյթ. Մեսրոպ ի Թիւն ժբ. զսուտ շինեաց ասէ մեծն Ներսէս "ի քաղաքս, և յագարակս, և ի վանս բայս,, : Նոյն է սա զոր Բուզանդ կոչէ Օտարատունս. " Խակ յաւուրս քահանայապետութեն Ներսիսի ամենայն գաւառք Հայոց յամենայն ի չինս և ի գիւղս յամենայն կողմանս Հայոց առհասարակ ի հրամանէ քահանայապետին էին շինեալ Օթաբատունք հիւանդանոցք օտարանոցք, և ամենայն մարդիկ երկրին Հայոց էին պտղաբերք և ողորմածք առ ի յիշել զաղքատս և զնեղեալս, զտառապեալս և զօտարս, զՀարստահարս, զնշդեհս, զպանդուխտս, զհիւրս զանցաւորս. և էր նոցա կարգեալ վերակացուս սրբոյն Ներսիսի, և դարմանս ի տեղեաց տեղեաց,, Ե. 31: Ցայս հայի և բան խորենացւոյն. "Հրամայեաց և յամենայն գիւղս Վահե շինել զի լինիցի օտարանոցք,, : Վանս իմա աստէն զընակարանս վանն օտարականաց կարգեալ, որպէս մեկնէ հետևեալ բանն ասելով. զի լինիցի օտարաց նոցա: Թող զի որպէս յարևմտից՝ նոյնպես և յարևելս շինեցան յոլով մանաւանդ վանք կամ մենաստանք կրօնաւորաց, զի վանատուն լիցին անցաւորաց ի կարևոր ժամանակս:

Պանդուխտ. Շինեալ վասն Ճանապարհորդաց, զորմէ գրէ Մեսրոպ ի Թիւն ժբ. "Եւ հրամայեր ի գերծ տեղիս, և յանցս Ճանապարհայ, և ի գլուխս լերանց պանդուխ շինել,, : Այս շինուածք էին վասն անցաւորաց, զոր յաւուրսն ոչ յիշեն այլք, բայց ընդ անուամբս Օթաբատուն իմանան և զայս, որպէս ցուցանէ նախայիշեալ բան Բուզանդայ, ուր ընդ նշդեհս և ընդ հիւրս՝ յիշէ նաև զանցաւորս:

Շէրիմ. Շինեալք "վասն Թագաւորաց, իշխանաց և զօրավարաց,, զորս նոյնպես Մեսրոպ միայն յիշէ անդէն:

Լաղխոդոսանոյթ. Մեսրոպ միանգամայն յիշեալ ձերկո-

Լոդբայրանոյթ. Յամն զսուտ Թուոյ 2040. շինեալ ասէ ի մեծն Ներսիսէ. ուր եղբայրանոց անուամբ իմանայ զնենատանս ի պէտս միայնակեցաց: Զորոց տես ցես ի գլուխն Կրճնի:

Կոռոսոպանոյթ. Յիշատակեալ միայն ի Բուզանդայ. զորոց տես նոյնպէս ի գլուխն Կրճնի:

Դարոյթ. Յիշատակեալ ի Բուզանդայ. զորոց տես ի գլուխն Դարուբեր:

Ւնց ի շինուածոց աստի կարգելոց առհասարակ առ գործս ողորմութե և բարեկարգութե՝ երկուս այլ մեծա-

մեծ բարեկարգութիւնս արար մեծն Կերսէս Ժողովով սահմանեալ. մի երբեք զամուսնութիւն ընդ մերձաւորս որ յաճախեսցեն էր, պատուիրեալ չամուսնանալ մինչև ցեօթն ազգ. երկրորդ՝ երբեք զկոճ մեռելոց, զոր հեթանոսական օրինօք առնեին՝ անյուսաբար հեղեալ զարիւն երեսաց իւրեանց. և հրամայեաց "չափաւոր արտասուօք, գոհունակ յուզարկել"ի գերեզման "։

Ցետ լինելոյ Մեսրոպայ զայս ամենայն, ասէ. "Եւ լինէր ամենայն Հայք իբրև զմի կատարեալ անձն, երթեալ զհետ երկիւղին Աստուծոյ յաւուրս մեծին Կերսէսի "։ Ագաթեղ. և յաւելու ասել Բուզանդ ։ կ. Թէ նովին Ժողովով այնպէս բարեկարգեցին զՀայաստան աշխարհս, մինչև " արարին զամենայն Ժողովուրդս երկրին Հայոց իբրև կարգ միաբանութիւն վանականաց համաչխարհի, բայց միայն յամուսնութեան օրինացն "։ Այսինքն միայն ամուսնական կարգաւ զանազանէին աշխարհականք՝ի վանականաց։ Այսպիսի բարեկարգութիւք երբարձ Հայրապետան մեծ յաշխարհէս Հայոց զայն ամենայն չարութիւնս յաճախեալս յայնժամ, զոր Թուխ Բուզանդ ։ կ։ "Եւ եր այնուհետեւ տեսանել, ասէ Խորենացին, զաշխարհս մեր ոչ օրպէս բարբարոսս պլանդակեալս, այլ օրպէս զքաղաքացիս համեստացեալս "։ ։ 20։ Ջներքող սրբոյ Հայրապետիս կարես տեսանել փոքր՝ի չատե ԱՆԱգասէր գիրն սկսեալ՝ի 212 Թղթոհամարոյ։

Ասացից առ սրբոյ Հայրապետիս մեծ և ցանկալի համարէր գործ ողորմածութիւնն քան զայլ բարեկարգութիւնս իբրև գործի պատշաճագոյն ուղղիչ և կարգադրիչ բնաւորութեանս ազգիս։ Մանուկ մամիկոնեան որ յետ մահուան Պապայ արքայի զօրավար եկաց աշխարհիս մերում, ՚ի մեռանելն խրատեալ սկսաւ զամենեսեան՝ այսպէս՚ի մէջ բերելով զպատուէր և զվարս մեծին Կերսէսի. "Աչելի զարգարութիւնք փոյթ արասջիք, և առաւել զողորմութիւնք. զի մեզ մեծ հայրապետն Կերսէս զայս համակ պատուիրէր. և ինքն յամենայն ժամ՚ի կենդանութեն զսոյն գործէր, և այլոց ուսուցանէր առնել. զի ողորմէր աղքատաց, անամուսից, գերեաց, ամուսնաց, օտարաց, պանդխտաց. զի այսպէս ասէր նա. Քան զողորմութիւն առնել, կամ քան զտուրս տալ, այլ ինչ մեծ և պատուական առաջի Աստուծոյ չիք "։ Բուզանդ ։ կ։ Եւ արդարև ազգ մեր բնաւորեալ միշտ յանգթութիւն՝ "Որ բնաբար սովորութիւք էր յերկրիս մերում" ասէ Խորենացին, ՚ի խստութեան

անդ եդեալ ունէին Թագաւորք և իշխանք և պետք մեր զիշխանութեն իւրեանց . անդ զմեծութեն իւրեանց ցուցանել հաճարէին , յորժամ սատիւք և պատուհասիւք վարէին ընդ ժողովրդեան . այլ մեծն Կերսէս արդեամբք զհակառակն եցոյց , թէ զօրուն իշխանաւորաց հիմնեալ է ի բարերարել ժողովրդեան գործովք ողջմտութեան , նէ զոր վարդապետէրն բանիւ , արդեամբք ի գլուխ տա- րաւ և ի գիպուածն Աբրահամեան . ուր միահամուռ առնային նահատրաք Հայոց յետ կոտորելոյ զառնային գնա- կիչս նորուն յառնել մինչև ցկին , զոյս կոտորելոյն ա- ռեալ տանէին , "զի վարեսցեն ի գերուի , ասէ Խորենացին ։ 27 . որպէս գՏեառւոր թէ հնամեաց» , յայնչափ բազմութենէ միջի մեծն Կերսէս ևեթ գաւառ , որ անիրաւ գաւեալ զգերել նոցա , և գթացեալ ի մանկունսն լինչն թափեաց ի ձեռաց անգութ նախարարացն . և "Հրամայեաց կրել որթովք ի գոմ մի , և դարմանս և մնուցօղս նոցին կար- գեալ , ոչք յետոյ աւանացեալ անուանեցան Որթք » ։ Ջայս գթասիրութեն և առ այլ գերեվարեալս ի թշնա- մեաց ցուցանէր . յորոց զամենս ազատեր գնելով , և զա- մենս բանիւ և քարոզութեբ ի ձեռաց տերանց կորզելով . զի ունէր հնարս հաւանեցուցանելոյ և լինչն յանկուցա- նելոյ զսիրտս այլոց , որպէս ասէ Բուզանդ ։

Ի մեծագործութենս սրբոյ Հայրապետիս էն և այլ երբեակ կարևոր Հանգամանք . մի՝ զի զոր ինչ արար՝ ոչ ի միում վայրի կամ ի միում գաւառի , այլ յամենայն գա- ւառս և յամենայն աւանս , որպէս ասեն պատմագիրք , և զայն ի սակաւ ժամանակի առ կենդանութէ իւրով և ոչ այլոց յանձն արարեալ . Երկրորդ՝ զի և զեկամուտս ամե- նայն տեղեաց խնամով կարգեալ հաստատեաց " յար- դեանց անդաստանաց , և ի կթից արօտակոնաց , և ի գեղ- մանց » խաշանց , որպէս զի պաշտեսցեն և դարմանեսցեն զնոսա առանց ընդ բանս ինչ աճելոյ . Երրորդ՝ զի առ ան- խափան տեւելոյ ամենայն իրացս այսոցիկ՝ բաց յեկամտից կարգեաց և վերակացուս , որոց գլխաւորն եր Խադ սար- կաւագ իւր . իսկ լինքն ի վերայ ամենեցուն գէտ և տե- սուչ , որ միշտ հսկեր արթնութէ մինչև ի վախճան կենաց իւրոց . "Եւ զվերակացութէս աշխարհի , ասէ Բուզանդ , ամենայն հոգաբարձութէ առանց ամենայն ծուլութէ և ամենայն յապաղութէ տանէր մինչև ի վախճան իւր , և ոչ երբէք ուրեք եղև նման նմա այլ ոք ի հայաստան երկրին » ։ Գ . Կ ։

Ա՛ր այսոքիւք մեծ ևս զարմանալոյ իրք այն էն, զի՛ի քանդիլ ձեռակերտացդ իւրոյ յոմանց յուրացողաց, ոչ վհատեր քնաւ. այլ դարձեալ ձեռն արկեալ նորոգեր։ Զի ըստ պատմելոյ Բուզանդայ, երկու ուրացեալք Մերուժան արծրունի և Վահան մամիկոնեան զօրօք Շապհոյ Պարսից արքայի յարձակեալ՛ի Հայս՝ քանդեցին զեկեղեցիսն և զտեղիս յաւուրս Աբշակայ Հայոց արքայի. իսկ մեծն Ներսէս յետ Թագաւորեցուցանելոյ՛ի Հայս զՊապ՛ի ձեռն կայսեր Ցունաց, ՛ի խաղաղանալ երկրին՝ վերստին նորոգեր զնոսա. «Շիներ, ասէ, զամենայն աւերեալսն երկրին Հայոց. յանձն առներ և մխիթարեր, զարմաներ և տեսուչ լիներ ամենայն աղքատաց. և զօրիւնս և զաղքատս հանգուցաներ»։ Ե. 21։ Զայս ամենայն իմն վասն երկրորդ անգամ շինուելոյն։

Իսկ առհասարակ եկեղեցական կարգացն պայծառուել եթէ որչափ և որպիսի օրինակաւ Հանդիսացաւ Յաւուրս մեծին Ներսէսի, ստորագրէ Բուզանդ ասելով. «Եւ եղև խաղաղութիւն և նորոգուի յաւուրս նորա ամենայն եկեղեցեաց. և յաճախէր շուք պատուի ամենայն եպիսկոպոսացն ընդ ամենայն տեղիս Հայոց մեծաց։ Եւ լուսաւորութիւն կարգի եկեղեցւոյ ամենապայծառ ծաղկեաց ամենամեծ լիութիւբ. կարգեցան կարգք կաթողիկէ եկեղեցւոյ ամենայն վայելչուբ, և բազմացան կարգք սրբութիւն պաշտամանցն, և պաշտօնեիցն յաճախուն։ Եւ բազմացոյց զկարգս եկեղեցեաց՛ի չէնս և յանշէնս. սոյն օրինակ բազմութիւբք կրօնաւորաց»։ Է. 4։ Եւ այլուբ դարձեալ. «Յաւուրսն Ներսիսի ընդ ամենայն երկիրն Հայոց կարգք պաշտամանն եկեղեցւոյն մեծապէս պայծառացեալ էր, և բազմութիւն սրբոց պաշտօնէիցն կամեալացն։ Եւ յիշատակ սրբոց վկայից յաւուրս նորա յամենայն տեղիս Հայոց մեծախումբ ժողովրդովք հանապազ պայծառանայիր, և պատիւ Հարցն եպիսկոպոսաց յամենայն գաւառս Հայոց յաճախէր ըստ արժանի իւրեանց. և կարգք վանականաց և՛ի չէնս և յանշէնս առհասարակ ծաղկեալ»։ Ե. 31։

Ի՛հաւասիկ համառօտագիծ պատկեր աշխարհաշէն մեծագործութեանց առնս մեծի՝ հայրապետի սրբոյ և աստուածարեալ. զորոյ գնմանին որպէս ասացի՝ և դարձեալ ասեմ, զի և քնաւ իսկ չկարեմ լռել, չետես աշխարհս մեր. որ նախ քան զնա ամայացեալ յամենայն բարեգործութիւնէ կարգաց, կերպարանափոխ եղև յաւուրս նորա. խաղաղութի՛ն նմա և բարեկրօնութիւն թագաւո-

բեալ ի վերայ նորա, նախահաճելի ազգաց համօրէն, քանզի և ինքն այրն Աստուծոյ, թէ չանցանէմ ըստ չափ բանիցս, հոգւովն Աստուծոյ գործէը զոր գործէը. ապաւէն գտաւ նեղելոց, վշտացեալոց մխիթար, իշխանաց առաջնորդ, թագաւորաց հայր: Կացին առ նովաւ կրկին թագաւորք Աբրշակ և Պապ. այլ աւաղ. քանի՛ օտարացեալք՝ի հոգւոյ նորա. մանաւանդ յետինդ այդ փոխանակ անբաւ երախտեաց այնպիսւոյ հօր սիրելւոյ և բարերարի՝ անօրէն թիւ նամահ սպանումն մնաբերեաց յայրն Աստուծոյ:

Յե ահա յետ մահու երանելւոյն վերստին դառնայր աշխարհս մեր յառաջին անչքութիւն իւր և անկարգու թիւն՝ի ձեռն անարժան թագաւորին Պապայ. զի Թըշնամութիւն կալեալ՝ի սրտի ընդդէմ սրբոյն յաղագս սաստիկ խրատելոյ նորա զնա վասն անպատեհ գնացից իւրոց, "Սկսաւ, ասէ Ռուզբնդ, հրամանն տալ յայտնապես յաշխարհին աւերել զայրենեացն և զորբանոցն՝ զոր շինեալ էը Ներսէս՝ի գաւառս գաւառս, և աւերել զկաստատանսն... Յամենայն աւանս էը շինեալ նորին Ներսիսի և հիւանդանոցս, յամենայն կողմանց և ռոճկից և դարմանս կարգեալս, և արս հաւատարիմս թողեալ տեսուչս հիւանդացն և աղքատացն... Զվերնա կացուսն հալածէը Թագաւորն յիւրաքանչիւր տեսչէն, և զտեղիսն՝ի բաց աւերեը: Զոր վերակացուսն կարգեալ էը յաղագս չբաւորացն և աղքատաց տեսուչ, զնոսա՝ի բաց հալածէը,, Ե. 31: Զմիաբողոքելն զանկարգուէն դարձեալ պատուիրէը՝ի գործ դնել իբրև բարերարուէն առնելով աշխարհի. հրամայէը մի տալ ինչ բնաւ յաղքատաց նոցա, այլ՝ի ինդրելն իւրաքանչիւր աղքատաց՝ յայնժամ տալնոցա ողորմուէ: Ալ որ առաւել չարագոյն է, և անմիտ վերժիմդրուէ, "Ձետ մահու քահանայապետին Թէ առներ զը հանգիստ աղքատացն, ասէ, մեծ պատիժս կրեր՝ի Թագաւորէն,: Նաև զամենայնէ օրէնս կարգեալս՝ի սրբոյն, յետ մահու նորա Թոյլ ետ Պապ խանգարել. և զկաստանսն արձակել հանել արտաքոյ կուսաստանց նոց:

Ալ ողոց արժանի իրս տոզել յաղագս որ յայնքանոյ բարեզարդութեց մեծի հայրապետիս յայսքան անչքուէ էջ անկաւ հայաստան աշխարհս մեր, քանզի չհանդարտեց սիրտ ծերունեոյս, դառնամ առ կարևորս:

ՄԱՆՈՒԷԼ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Օ օրավար և առաջնորդ աշխարհին յետ մահուան Պապայ արքայի. զոր այսպէս գոլճ Բուզանդ. "Ջօրավարն Հայոց Մանուէլ նուաճեաց զաշխարհս, և գաւառս մեծամեծս և գնախարարսն Հայոց առ ինքն ժողովէր... և ունէր զաշխարհ 'ի չինութեն... Մեծաւ խնամատարութեն և բազում յաջողութեն աշխարհին Հայոց մեծապէս առաջնորդէր, որչափ եկաց ժամանակս ,, . Ե. 37 : Ըստ օրինակին մեծին Կերսէսի գնչխանութեն իւր եցոյց բարեբարեքոյ այլոց գործովք ողջմտութեն, լինելով խնամող աւինեցոյն և աշխարհաշէն. զորոյ 'ի պատմելն զմահն յիշատակ նոյն պատմիչն առելով. "Բազում և անչափ գանձս աղքատաց և կարօտելոց բաշխեր, իւրովք ձեռօք մատակարարէր. և բազում մասունս յընչից իւրոց տայր յեկեղեցիս և 'ի վկայանոցս, և բազում գանձս տայր ջահանայապետն... աւինոյն մարդ երկրին Հայոց կոծ եդեալ մեծաւ աշխարանօք լային զնա առհասարակ ազատք և չինականք. զի աւինոյն մարդ իբրև գՀօրէ 'ի կարի առնելին զնմանել վասն քաղցրութեն մարդասիրութեն հեզութեան հանդարտութեն խնամոյ բարերարութեն՝ բարենշան զաշխարհշէնն անձն Մանուէլի. Ամենեքեան բերանաբաց հառաչեին զնկի նորա, կղկղանք կաթոգին լինելիս զնա բեանց քաջ զօրավարին, զիրկնէն իւրեանց, պչաղծական զանուանին զարգասուէն ,, . Ե. 44 :

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ԴԱՐ Ե

Օ սմանէ գրէ Ղազար 11. "Մտաւոր և քաջ այրն Վահան՝ տէրն Մամիկոնէից, զօրավարն Հայոց և մարզպանն՝ որ բազում և անհամար ուղղութեն աշխարհիս Հայոց 'ի ժամանակս իշխանութեն իւրոյ եղև արարօղ անձամբ, և զայլս յորդորելով զգազումս ,, : Իակ 'ի Թղթ. 193. յիշելով զձարտարութեն մամիկոնեան տոհմին 'ի հնագեւորական կրթութեն մանկանց, ասէ վասն Վահանայ. "Եւ զայսպիսի ինչ բարւոյ մասունս առնել առատ և հնագալ՝ առաւել ևս կամաւոր յօժարութեն յորդորագոյն էր աւագ որդին սրբոյն Համազասպայ՝ որում անուն էր Վահան :

ֆանզի էր այր մտայի, առողջախորհուրդ և բարեսէր. յոր գործ և ձեռն արկանէր գործել՝ տէր յաջողէր ի ձեռն նորա և զօրանայր. նաև գործակալք պարսիկք ոչ գային ի դրանէ, թէպէտ ոչ կամաւ՝ այլ ըստ Պատուիրեալ սադրելոյ սիրելին գնա և պատուէրն,, Յորս երևելի գտաւ Անդեկան պարսիկ մարզպան, զորմէ այսպէս ասէ Ղազար. "Յայնժամ գայ յերկիրս Հայոց մարզպան, որում անուն էր Անդեկան. այր խելացի, մտադիր, իմաստահայեաց. որ գիտէր ճանաչողութիւն որոշել վիմաստունն յանմտէն, և զլաւն ի վատթարէն. որոյ տեսեալ օր ըստ օրէ զօրավարին Հայոց զտեառն մամիկոնէից Վահանայ վիմաստից պատուականաւորեսն, զարդարախոհուն, զաշխարհահոգութիւն, զքաջութիւն սրտի, զդիպողութիւն պատշաճ յամենայն իրս, ի բնաւի գյառաջադիմութիւն. տեսանէր և զայն թէ յոր գործ և յօժարեցուցանէր զինքն, թէպէտ և կարի ի դժուարինն՝ տէր յաջողէր ի ձեռին նորա... Եւ ընդ այսչափ աստուածատուր իմաստուն պողոսեան...որ ըստ օրէ տեսանելով Անդեկանն և զմտաւ ածելով՝ զարմանայր ի միտս իւր ի ծածուկ, և ըստ բարեսէր մտաց իւրոց ուրախանայր։ Սիրէր զնոյն՝ Անդեկանն. և ի դուռն ամենայն աւագանւոյն դրանն ստէպ և իւրոց սիրելեաց զիմաստասէից միտն առնուն ծանուցանէր։ Տայր գիտել և թագաւորին Վաղարշու լիով զամենայն... համարձակիմ առաջի ձեր ասել յայտնապէս, թէ աւելի ձեզ և անդէպ՝ այլ մարզպան կացուցանել. քանզի այլ մարզպան որ երթայ ի յաշխարհն Հայոց, նախ և առաջին զայն խրատ չունի՝ զոր պէտն այն (Վահան) ունի. զի յիմ անձին այնչափ ընդ և աջողակ խորհրդակցութիւն բնակեալ... համարբ ձակապէս ասեմ, թէ սակաւ ոք է որ հաւասար է նմա,, 308։ Զայսչափ աշխարհաշէն բարեմասնութիւն բարւոյ Վահանայ լուեալ Վաղարշ թագաւոր Պարսից ի բերանոյ Անդեկանայ, մարզպան Հայոց կացոյց զՎահան։

ԳՐԻԳՈՐ ՊԱՏՐԻԿ

ԴԱՐ Ե

Ա՛միկոնեան, որ զիւի Համազասպայ եղև հրամանատար Հայոց. զորմէ գրէ Ղևոնդ ի գլ. Ը. "Այր երկիւղած Աստուծոյ, եղբայրասէր և օտարասէր և գարմանի աղքատաց,,։ Բայց յաղագս որոյ բանս է աստանօր,

վկայէ Յովհաննէս կաթողիկոս. "Աւագ[1]ն որդի գտեալ յոգ-
նատպատիւ կարգաց և ուղղութեանց, շինութեանց և խաղա-
ղութեանց, ի յապահովուէ և բոլոր բարեմասն լրութեան ":

ՅԱՒՈՒՐՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ

ԱՇՈՏ

ԴԱՐ Թ

Յաջորդն Թագաւոր, և առաջինն յաշխարհաշէնս ի ժամանակս յայնոսիկ, յորս ի բազմաց հետէ չէր երևեալ այսպիսի ոք: Նա մանաւանդ ի պատճառս հնամանկալ բարուց իւրոց և վարուց բարեշրջութենէն ընտրեցաւ Թագաւոր. "Զայսպիսիս ապա տեսեալ, ասէ Յովհաննէս կաթողիկոս, քաջատեսիվիկ պերճուէն իշխանաց և նախարարաց Հայոց՝ խորհուրդ միաբանական առեալ Թագաւորեցուցանել զնա ի վերայ ինքեանց՝ զեկուցանէն ամիրապետին ": Ընդ Թագաւորելն՝ իսկ և իսկ բուռն եհար գշինուէ աշխարհին. եղոյզ Թէ փառք և մեծուէն առաջնորդաց այն է, զի փոյթ կալցին զաշխարհաշէնն գործոց հասարակաց օգտակար, և ոչ յահաբեկել զժողովուրդն, որպէս ոմանք առնէին. "Եւ այնուհետեւ, ասէ, բազում և երևելի կարգս յօրիներ յաշխարհի տերութեանէ իւրոյ, յօրինուածս տանց աղգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց. և հարթ հաւասար ըստ իւրաքանչիւրոցն կատարեր կարգս, լեռնականաց, և ջերմահովիտ բարեխառն դաշտականաց ": Մինչև սմա ի գէպ ելանել զոր ինչ խորհեացեն ասէ վասն մեծին Տիգրանայ. "Եւ զամենայն ինչ զոր ինչ օրէն է Թագաւորութեանէ, և որ ինչ ի Թագաւորութենէ, և որ շուրջ զԹագաւորուէ՝ ոչինչ իւիք կասեցուցանէր. և գրեթէ հարստագոյն և խոհեմագոյն քան զամենայն Թագաւորութիս գտանիւր. և այսպիսի նորոգաւորութ Թագաւորուէն բարձրացուցանէր զազգս Թորգոմեան ": Թագաւորս այս բազմերախտ վաստակեցաւ մինչև ցմահ իւր ի սոյնպիսի գործս օգտակարս հասարակաց. զի զմահ նորա պատմէ լեալ "յետ փայլեցուցանելոյ նորա զամենայն ուղղութիս և յաջողութիս կարգաց և գործոց և գնացից հայաստանեայցս ":

1 Աւագ զի չէք ի միջի պատմագրութեան Ըսպհոյ բագրատունւոյ՝ լսել զամենայն աշխարհաշէն գործս առաջ:

ՎԱՍԱԿ ԻՃԽԱՆԻԿ

Ասէ իշխանն Սիւնեաց. որ "յաւէտ ինն ընդարձակա-
գոյն գոտւն տերունէ իւրոյ յարդարեր 'ի բոլոր բարեմասն
լուսինս. և կայր բազում խաղաղութեամբ ըստ ամենայն
հանդիսի բարեպաշտութեանն". Յոհաննէս կաթողիկոս։

ԳՐԻԳՈՐ ՍՈՒՓԱՆ

"Վա իմաստութեանդ և յայդոցաձեռնութեանդ և հնութեանդ բազ-
մաւ անդր ես քան զպայմանն ընդդէմ հարցն իւրոց.
բայց առաւել յեկեղեցեաց Քրիստոսի 'ի հինուն և 'ի նո-
րոգութեանդ վերաբերեր". Յոհաննէս կաթողիկոս։

ԱՀՈՑ

Ասէր նախագրեալ իշխանիկ Վասակայ. "Ամենայնիւ
յամենայնի հնութեան վերաբերեցուցեալ հայրենի
տերութեանդ իւրոյ". Յոհաննէս կաթողիկոս։
Յարծրունիս ես ելիր այսպիսիք, զորս յիշատակեցուք։

ԳՐԻԳՈՐ ԴԵՐԵՆԻԿ

Իշխան արծրունի, փեսայ նախայիշեալ Աշոտոյ Թա-
գաւորի. զորմէ ասէ Յոհաննէս կաթողիկոս. "Ելր նա այր
սեգ և զգաստ, և սօս 'ի գնացս ոտից, և զօրաւոր աչ-
քեամբք և բանիւ. և տնօրինեալ միշտ յամենայն ձեռնէս
բերիլ". Զորմէ առաւել բացայայտ գրէ Թոմա արծրունի.
"Դեռանիկն առաւելոյր և առատանայր օր ըստ օրէ առ
հինուն և խաղաղուն աշխարհիս, հինել և տածել և ինա-
մել զաշխարհս ... և քաջալաւեալ բարեձևանայր
կարգք սրբոյ եկեղեցւոյ Քրիստոսի". Ղ. 1։

ԳԱԳԻԿ ԱՐԾՐՈՒՆԻ

ԴԱՐ ԺԱ

Ասէ Թագաւոր Աբծրունեաց. զորմէ ասէ Թոմա
արծրունի. "Քաջութեամբ և աշխարհաշէն խաղաղասիրութեամբ
հոգաբարձեր իբրև զհայր ինամածու 'ի վերայ աշխար-

հիս Հայոց ... Բարք անարծաթասէրք գոլով Թագաւորին՝ զուտ և մաքուր ՚ի նալով յայսպիսի մեծավէր ախտէ, իմաստ ածէ ոչ միայն անձին զօսանաց, այլ և բնաւ աշխարհիս Հայոց. տայ զմեզ գանձուց ՚ի ձեռս գործալարաց և արուեստաւորաց, պարսպաւորեալ ամրութեբ զերծս գա- գաթնաւորս, և զանառիկ ամրոցս բերդից ՚ի գաւառս և ՚ի միջոցս երկրի ՚ի պէտս ապաստանի փախուցելոյ ՚ի հինից և ՚ի խռովութենէ օտար ազգաց ,, է. 6։ Եւ զնա- զաղուէ խօսելով զոր արար նա ընդ բոլոր աշխարհս Հայ- աստան, այսպէս գովէ զնա. "Թէև զծով բազմացուցանէ զնաղաղութեն ՚ի Հայաստան աշխարհի. զոր և մեր բան զարգարեն ասել ոչ զանգիտէ. յառաջ քան զնա այսպի- սեմ հանդիպել բարութեե երկրիս մերում ասել ոչ է ՚ի պեպ. և զինի սորա լինել հանդերձեալ՝ իմանալ ոչ է կա- րողութեե ,, է. 3։ Նոյն իակ Յովհաննէս կաթողիկոս՝ որ պատմէ թե ինքն Գագիկ եր և եղբայր իւր՝ որք զՅուսուսի մնծին ՚ի Հայս, ուստի զհետ եկին այնչափ աւերմունք, գրե ապա թե նոյն ինքն Գագիկ ուսեալ ՚ի փորձոյ խորհրդ ՚ի պատերազմելոյ ասելով. "Պատուղ պատերազմաց մահ է. և մահու հրաւիրանք յատակս գժոխոց Հայի ,,։

ԴԱՒԻԹ ԿԻՒՐԱՊԱՂԱՏ

Ի կարգս սոցա պարտ է դնել և զայս իշխան երևելի, զորմէ գրե Առաքելոցի Ժ. "Եր այր հզօր և աշխարհա- շէն, մեծապարգև և աղքատասէր. որ եր արդարև սահ- ման խաղաղութեեան. քանզի յաւուրս նորա հանդիպէր ամենայն մարդ ըստ մարդարէութենէն ընդ որթով իւրով և ընդ թզենեաւ ,,։ Եւ Ասողիկ ասէ զնմանէ. "Եր այրն հեզ և հանդարտ քան զամենայն Թագաւորս որ ՚ի ժա- մանակիս յայս. և եղև նա պատճառ խաղաղութե և վհուութեան ամենայն արևելեայց, մանաւանդ Հայոց և Վրաց. զի զգոյ պատերազմաց յամենայն կողմանց դա- դարեցոյց նա, յաղթօղ եղեալ յամենայնի շուրջանակի ազգաց. և Թագաւորք բազում կամաւ հնազանդեցան նմա ,, է. 43։

ԱԲԱՍ

Թագաւոր Կարուց կամ Վանանդայ. զսա ՚ի կարգս սոցա դասել արժան ցուցանեն բանք Ասողկայ է. 17. և Մագիստրոսի. որոյ մաքրեալ ասեն զՀանապարհս յաւա-

զակաց բազմացելոց յաւուրս Մուշեղայ նահապետին իւրոյ, զգատարկակեացս բարձեալ և ի գործ պիտանի կացուցեալ, զմանկունս կորովիս ի զինուորութիւն կրթեալ, և զգունդ իւր միագոյն առհասարակ կարմրագեստեալ։ Ահա ամենայն ցուցանէին զընդաբոյս փոյթ իւր առ բանակարգութիւն [1]։

ԳԱԳԻԿ Ա. ՇԱՀՆՇԱՀ

ԴԱՐ ԺԱ

Ո սմանէ գրէ Ասողիկ. "Ելը այր սրամիտ և վարժ ի պատերազմի, և առատաձեռն ի բաշխել. և իւրով խնամութեամբ և քաջութիւք զբաժ հարկաց յոլովից տեղեաց ազատեաց. և զկիւրակեացն զայգուն պաշտօն՝ սաղմոսերգութեամբ կատարէր "։

ՎԱՀՐԱՄ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ

Վ կայական մնհոլամբ նահատակեալ, հօրեղբայրԳրիգ գոլի մնգխստրոսի. զոր նա ինքն ի պատասխանին իւր որ առ Յոհաննէս արքեպիսկոպոս Սիւնեաց՝ կոչէ "Հայրենասէր և աչխարհաշէն ըստ մերոյն Ագրամայ "։ Ապա արեգական նահանեցուցեալ զնա, ասէ. "Աբեգահնայն Ճառագայթից համամման ասել զնա ոչ դանդաղիմ, առ բոլորս բերբեալ զլոյս իւր. և որպէս յամենեցունց խոստովանեալ ակն տունչեան անուանի՝ որք միանգամ տեսան նմն զլոյս, այսպէս ամենայն տիեզերական ճնհալոնէ Թորգոմեան ազգին ասելի է զայրս զայս իբրև զակն տուընջեան. նաև ոչ միայն մերոյս նահանգի՝ այլ և այլ ազգից և այլանդակաց "։ Մինչև ուրեք կոչէ զնա "Ամենայն

1 Յառաջ քան զԹագաւորել իւր՝ գրէ Ասողիկ էջ. 17. " կարծես տայր տեսութիւն անհաղորդ լինել բարեաց ինչ գործոց հոգևորաց. իսկ յորժամ եհաս նա յաթոռ Թագաւորութեն՝ և բնեցաւ նա այր չքեղ, լի հանճարով և խիստ ուսումն, ընդ առաջին խնամութեան համարեալ. և գործառ նա յայր չոյղ. և սկիզբն արարեալ նա ամենայն բարեգործութենէ՝ նախ և առաջին եթող նա յաշխարհէն իւրմէ զաւազակութիւն զմարդասպանութիւն... Ամենեքեան չնուն և աչխատաւիր գործոց պարապեալ, և արդարադատ իբրաւութիւն ուղղեալ։ Կա և որ սովորութիւ անկարգուն էր յաշխարհս Հայոց խնամեալ և ազատաց որովայնամոլութիւ ապականել զկարգեալ աւուրս պահոց... այսր անձամբ օրինակեալ, ոչ ի կթէ գինոց ինչ և ոչ ի ձկանց ճաշակեալ... Եւ ապա խորհուրդ բարեաց կալեալ յանձին չինել վանս,։

բոլոր բարեացն պարառումէ պատարուն ,, ։ Եւ եթէ չէր ասէ լեալ սա յաւուրս մեր, և այլք պատմէին մեզ գրով պառաքինութիս սորա՝ անհաւատալի և առասպելեալ պատմութիւն համարէաք իբրև զՀոմերոսին գրուածս որ զդիւցազանց։ Սոյնպէս գրէ և Լաստիվերտցի Ժ. «Վահ֊բամայր հզօր և անուանի, և բարեպաշտութիւն յոյժ վերՀ, որպէս թէ ոչ ոք հաւասար նմա ,, ։ Կաև ըստ կենակցու֊թենէն և ընտանի և քաղցր բարուց մեծապէս գովէ զնա նոյն մատենագիրՀ՝ կոչելով «Հեզ և հանդարտ, արգարա֊դատ և անաչառ, առ ամենեսին զուարթ, անսխակալ և անչիշաչար ... Ջինչ արդեօք զքոյդ բարեբաստութիւն ասացից որ ըստ հոգւոյ և որ ըստ մարմնոյ. որ երկա֊քումբք գերապանծ և անհամեմատ եղեալ, պատկառելի և նախապատուելի յոգւոյնց գտեալ ազգաց, որ գրեթէ և ոչ թիւնամի կամ հակառակօղ ոք երևեալ՝ քանս ինչ հա֊մարձակեալ կամ պարսաւանս մի և միայն իւիք ի քեզ հնարեցան բարբառել ... և եթէ ոք նախանձով հրա֊ցեալ վառեր, ոչ համարձակիւր ընդ լսկերսի իւրում շը֊շնջել շրթամիքք անգամ ,, ։

ՌՈՒՍԱԴԱՆ

ԴԱՐ ԺԴ

Մաշտուհի Վրաց, այլ հայկազուն ի բազդատունէ տոհմէ. եղև նորոգիչ եկեղեցեաց, որպէս գրեալ գտանի ի յիշատակարանի մատենագրութենէ սրբոյն Բարսղի երկա֊թափիր գրեալ. ուր ասի վասն Բարսղի կաթողիկոսի. “Յամենեցունց եղև պատուեալ ըստ արժանւոյ, և ս առաւել ի մեծ ամիր սպասալարէն յԱնանէէ, և ի զոր֊գակեղ նորին ի բարեսէր Թագուհւոյն Ռուսադանայ, որ էր յազգէ բազդատունեացն մերոց կորուսեալ ազգիս Թագաւորաց. որ ցուցանէր զգութ հարց իւրոց, և նորո֊գէր զիւրոց նախնեացն սէր առ ամենեսին, առ հեռաւոր և մերձաւոր ուխտս սուրբս ։ Քանզի ամենայն տեղի որ ի նախնեաց սորա շինեալ էին և նուագեալ յետոյ, ի սորա աւուրս պայծառանային և նորոգէին վերստին, եթէ ի մերում գաւառիս և եթէ ի գաւառին Աղուոյ՝ սեփհա֊կան քաղաքին իւրեանց, և ի նոյն իսկ յԱնի, և եթէ ի գաւառին Դրնայ ,, ։

Պատանին և այլ ինչ ինչ՝ի քնաւորութիւնէ ազգիս ընդհանուր գիտելիք ըստ բարեբաւուած մասին, այլ ոչ յիշատակելք որոշակի՝ի գիրս. վասն որոյ և արտաքոյ կարգի մտանելիս։ Օրինակ լիցի. ոչ ուրեք ընթերնուսք զմերոյն թէ պատերազմասիրք էին և ինքնին երբեք պատերազմ յարուցեալ՝ի վերայ այլոց ազգաց ընդարձակելոյ աղաւաղաւ զսահմանս և զտերութիւն իւրեանց, որպէս սովոր են այլք յազգաց, այլ՝ի պաշտպանել միայն։ Զի սկսեալ՝ի նահանջողէն Հայկայ այսպէս գտանեմք գործեալ, թէ Հայկ պատերազմեցաւ՝ի վանել միայն զբռնութիւն Նեբրովթայ. ԵՒբրամ պատերազմեցաւ՝ի վանել զբռնաւորս՝ որ յերից կողմանց ԵՒս արշաւեալ գրաւեալ էին զՀայրենի երկիրն. իսկ՝ի Հայկայ մինչև ցԱբրամ ոչինչ պատերազմ յիշատակի. սոյնպէս և մեծն Տիգրան էլ՝ի պատերազմ առ՝ի զերծանիլ՝ի բռնութիւն Աժդահակայ, և առ՝ի աջակից լինել Կիւրոսի։ Ըստ այսմ է տեսանել և յԱբշակունիս, յորս նոյն իսկ միջինն Տիգրան մարտեաւ յարձակեցաւ առ՝ի զերծանիլ՝ի տիրապետուէ Հռոմայեցւոց. մեծն Խոսրով յարձակեցաւ՝ի վերայ Պարսից առ՝ի վանել զբռնութիւն սասանեանց զոր գործեցին՝ի վերայ պահպանելոյ իւրոց ազգականաց. զԱրտաշէս ։ միայն գտանեմք յԱբշակունիս ինքնաշարժ ըստ կամի յարձակեալ՝ի վերայ այլոց ազգաց, ԵՒս և Յունաց, ՝ի տիրապետել և յընդարձակել զսահմանս տերութեան իւրոյ։ Ակ յաւուրս Բագրատունեաց ամենայն պատերազմունք իւրեանց մղեցան առ՝ի վանել զարաբացիս, զՀիւսիսականս, ապա զքուրք սկիւթացիս տուղբիլեանս որ՝ի զարմէ սելճուգեան, և ապա զմուղալ Թաղարս։

Ընդ բարեբաւուեցս այսոցիկ մարթ էր դասել և զազգիս հեզահամբոյր քնաւորուն. այլ քանզի չէ այդ հաստատուն և միտատև առաքինուն՝ի նմա, զանց առնեմք։ Ուր ըլլ, թէ չքնուիցի ինչ ծանր զոր ասեմս, հեզուն նորա անցանէ ըստ չափ առ օտարազգիս, և բարեհամբաւեալ է յոյժ. այլ առ համազգիսն սրտմտութիւն և վրէժխնդրութիւն, և այլք՝ի դժնդակ ախտից, զորոց ժամ է խօսել։

ՅՕԴՈՒԱԾ Դ

Բնական մոլութիւնք և ախտք ազգիս։

Որ միանգամ խելամուտ լինել կամիցի պատմութիւն ազգիս, և գլխաւոր պատճառացն աւերելոյ աշխարհիս մերում, գտցէ յառաջիկայ Ճառիս զախտս և զմոլութիւնս բնաւորեալ յազգի մերում առաւել քան զարտաքին թշնամիս. որպէս վկայէ և Յոհաննէս կաթողիկոս յասելն. "Ի տանէ առաւել քան յօտարաց բուսաւ մարտ դառնութիւն,,։ Աւրդ քանզի պատմութիւնն աւերածոյ աշխարհիս կիւ է ընդ բարոյական կրից, հարկ է մեզ ըստ կարգի տալ տեղեկութիւն վասն այսր. նախ՝ զոր ինչ գրէն արտաքին մատենագիրք զաւարուց ազգիս, ապա մեր մատենագիրք։ Ստրաբոն ժ։ 525. 'ի տասրագրէնն զՄարս ասէ. "Բայց գրեթէ նոյն են Մարաց և Հայոց. զի և աշխարհն նման է,,։ Զայս բան չէ պարտ Ճշդիւ առնուլ վասն հաստիճի աշխարհիս մերոյ. քանզի բնիկ միջնաշխարհ մեր, ուր էր Ասրարատ նահանգ աբգայանիստ, չէր այնչափ ինչ ծանօթ արտաքնոց. այլ պարտ է յաւէտ իմանալ վասն նահանգացն որք սահմանակից էին Մարաց. յորս գլխաւոր պարտ է համարել զՓայտակարանն նահանգ, յետ նորա զՆորՃէս և զՊարսկահայս, որք և կոչին Կորդուք և Հեր և Զարևանդ գաւառ. զորոց զարս արդարև Մարացդ նմանիլ ցուցանեն և բանք մերոց պատմագրաց։ Յայնժամ մարթ է և 'ի վերայ հայկազուն բնակչաց սոցին ստուգել զմիւս բան նորին Ստրաբոնի, որ ժ։ 524. ասէ վասն Մարաց պարապիլ յաւազակութեան. զի արդարև վասն հայկազուն բնակչաց Փայտակարանի և Կորդուաց՝ որք խառն բնակէին ընդ Մարս՝ անկ է կարծել զնոսա 'ի գործ աւազակութեանն պարապեալ։

Լաւ թողեալ զմնամուառ նահանգացն՝ նաև 'ի համբուէն ապա մնծեալ երևիլ բարք Մարաց. զի բարք նոցա էին փափկասիրութիւն, ըստ Հաձոյից անձին վարել, ոչ լինել ընդ խրատուք այլոց, այլ 'ի մանկունէ ուսանել 'ի կատարել զկամս իւր, որպէս յուցանէն զանազան բանք պատմագրաց. արդ այս ախտք են որք երևէին նաև 'ի յետագայ արշակունի թագաւորս մեր։ Նէ զի 'ի յաճախ կենակցել

և յընտանութիէ գՀետ գայ առնուլ՝ ի միմեանց զապակա-
նութեէն բարուց, պատմութիւն ազգիս յայտ առնէ երկիցս
ընտանացեալ մերոց ընդ Մարս. մի՝ ի գալ բազմամբոխ
արքունեաց Աժդահակայ և Աջուշ մօրն՝ ի հայաստան,
զորս բազմութէ՛ բնակեցոյց մեծն Տիգրան՝ ի կողմանս
Ասիոքսանայ. որք և չէին այնչափ ինչ հեռի յարքունեաց
մերոց. ընդ որս՝ ի հարկէ և խառն երթևեկէին նաև ար-
քայազունք մեր՝ ի տեսութէ միմեանց, յորոց և ուսանէին
զնոցին մոլութէնս յայնմ ժամանակի, երբ տակաւին միա-
ցեալ կային հետք բարուց առաջին աշխարհշէնն և ժա-
ղանն նահապետաց մերոց հայկազանց, մինչև ապա առ սա-
կաւ սակաւ մոռանել՝ ինոսա եղծուին բարուց և օտարանալ
՛ի նախնեացն անաբասա քաղաքավարութէ՛. Այլն իրի յա-
րեան այն չիոթնութիւնք զորս հարևանցի յիշատակէ
Խորենացին, մինչև այլ զարամբք ելանել՝ ի յաւիշատակել
զթագաւորսն, և ապա բոլորովին իսկ կորուսանել զնա-
գաւորութէ իւրեանց. վասն որոյ զնի մեծին Տիգրանայ
ոչ ոք յիշատակէ՝ ի հայկազունս թագաւոր ոք բարեկարգ.

Իսկ յետ այնորիկ յորժամ պարթևն Վաղարշակ թա-
գաւորեաց՝ ի Հայս՝ մուծաւ՝ ի մերն կրթութի թագաւո-
րացն Պարսից՝, որով վարէին առաջին արշակունի թա-
գաւորք մինչև ցԱբգար. Բայց և սորա՝ ի փոխադրել զար-
քունիս իւր՝ ի Միջագետս, երկրորդ անգամ լինէր մե-
ծին խառնիլ ընտանութէ՛ ընդ Մարս, և զնոցին դար-
ձեալ զգենուլ զարս. զի արքայորդւոյ ըմբոստանալ ընդ-
դէմ արքայի էր լուեալ՝ի Հայս մինչև ցայնժամ, որպէս
արար Սահատրուկ. որ և առանձին համարի յապստամբս,
Թագ կապեալ՝ի Փայտակարան, ուր կային բազմութիք
Մարաց. և հայկազունք որ՝ ի նմա՝ զՄարացն ունէին
զընութէ՛. Նոյն իսկ Միջագետաց՝ ուր տարաւ Աբգար
զարքունիս, սահմանակից էին և Մարք, և մերձակայ՝
Կորդուք և Հերք և Զարևանդ գաւառք, ուրանօր լցեալ
կային Մարք։

Այս այնպէս պարտ է ասել, թէ՝ ի Հայս զնի մեծին

՝ Սակս կրթուԹեան արքայորդւոց նախնի Պարսից՝ զայսոսիկ յա-
ռաջ բերէն Մաթէոս և Պլուտարքոս Ա՛ռակելեսդեան ։ Ի լինել մանկան
եօԹնամեայ՝ հանեալ զնա՝ ի ձեռաց նեբբիՒեայ ուսուցանէին նմա՝ ի ձի
հեծանել, և յորսորդութէ վարժել՝ ի լինել չորեքտասան ամաց՝ չորս գաս-
տեարակս կարգէին՝ ի վերայ նորա ։ ո-
րոց առաջինն ուսուցանէր զկրօնս հա-
րեանց ։ երկրորդն խօսել զՀմարտու-
Թի և առնել զարգարութի. երրորդն
սանձել զձիսն, և սերել՝ ի վերայ կը-
րից իւրոց ։ իսկ չորրորդն հանել՝ ի
սլաք զերկիրս ։ և լինել քաջ և սրի ։
Զնոյն յիշէ և Սուրաբն ԺԵ. 734 ։

Տիգրանայ նախ օտարամուտ էղև քաղք Մարաց. ապա մուծաւ քաղք և կրթուէն Պարթևաց ի ձեռն Վաղարշակայ. և ապա գարձեալ մուծաւ քաղք Մարաց։ ԶՊարթևացն ակնարկէ Տակիտոս[1]. "Հայք, ասէ, անհաւատութիւնք գոլով զերկոսին և զօրսն կոչելիս՝ ըստ գրոյ երկրին և ըստ նմանութեանէ բարուց առ Պարթևս մնաւորեալք, ընդ որս և ամուսնութիւնք խառնեալք, անծանօթք ազատութեանէ, յաւէտ անդր առ ծառայութիւնն յօժարամիտք»։ Իսկ վասն վիճակի իւրոյ ժամանակին, այսինքն յորժամ է. Արտաշէս Թագաւորէր ի մէզ, պարտ է իմանալ զայն բան նորա[2], ուր ի յիշելն զՀայաստան՝ ասէ. "Ա՛յս ազգ անծանօթ ինն էր ի նախնումն ըստ բնաւորութեանէ քանակ չայ և ըստ գրոյ երկրին, որ հարուստ տարածութիւք յաբակեալ հայ մերոց գաւառաց (Հռոմայեցւոց), և համբուն առ Մարս թևակոխեալ, որոյ և անկեալ գոլով ի մէջ մեծաղօտ տերութեանէ՝ յոլովակի անմիաբան գտանին. ընդդէմ Հռոմայեցւոց ատելութիւք բերեալ, իսկ ընդդէմ Պարթևաց յաչազմամբ»։ Այլ զիւս բան նորին Տակիտոսի զոր ասէ զինի, պարտ է իմանալ վասն Հայոց քնակելոց ի փոքր Հայս, մերձ ի Պոնտոս գաւառս. ուր ասէ վասն Զենոնի որդւոյ Պողեմոնի արքայի Պոնտոսի. "Սա անդստին յաւային տիոց մանկութենէ զարուց և զսովորութենէ Հայկական նախանձ բերեալ, զօրաւորագոյնէ և զչուայտութենէ, և զայլ որ ինչ սովորեալ ունէին բարբարոսքն (Հայք, յայնմանէ) լինքն յանկուցեալ ունէր զսիրտ նախաբարոց (Հայոց) և զժողովրդեան»։ Բարբարոս կոչել զՀամօքէն ազգն նաև ի նամակին Ստեփանոսի Տիւնաց պատրիարգին Բիւզանդիոյ գտանեմք առ Խորենացւոյն էջ. 57. ի գրե առ մեծն Սահակ. "Բազում գոհութիւն մնասուցանեմք յաղագս քո բարեհամբաւութեդ ի մէջ այգպիսի բարբարոս ազգի»։ Ի յետագայ ժամանակս նաև յայլոց սահմանակից ազգաց Վրաց և Աղանից ինչ ինչ մուծեալ ի մերս կարծեմք ի կողմանէ բարուց, և առաւել յԱորբոց ի հայկազուն քնակիչս Միջագետաց և հարաւակողմանի փոքուն Հայոց. ըստ որում յաւուրս քրիստոնէութեէն կալ իւն ընտանութիւն գոյր ընդ նոսա, որպէս ցուցանէին պատմութիւնք։

Յա այսպէս զժամանակ եղծման և ապականութե բա-

1 Տակիտոս, Տարեգրութ. գիրք ժէ. գլ. 34.

2 Տակիտոս, Տարեգրութ. գիրք ի. գլ. 56.

րուց յաչխարհիս մերում գտանելոյն նախ ի ժամանակս կռապաշտութեանէ յաւուրս հայկազնեայ ցետ մեծին Տիգրա-նայ, որպէս լիշեցաք ի վերոյ. երկրորդ ի ժամանակս քրիստոնէութեան յաւուրս Աբրշակունեաց, յորժամ չորե-քին վերջին Թագաւորք իշխեին, որք են Տիրան, Ք. Արշակ, Պապ և Արտաշիր: Զի ըստ գրելոյ Բուզանդայ. յորմէ հետէ Հայք ծանեան զսէր յետ գառնալոյ ի քրիս-տոնէուէ յաւուրց անտի Տրդատայ, "Աբար (Աստուած) խաղաղութեան, և լեցոյց շուրջ զթշնամիս նոցա, զի ցա-ծոյց տէր զմարտ պատերազմացն ի սահմանաց նոցա, և մինչև յայն ժամանակ (մինչ ի Տիրան Թագաւոր) ոչ ընդ-ունաք բանք գոյին ամբոխն կամ խռովութեան, և ի մեծի խաղաղութեան էին քնակեալք ». Ք. 17: Բայց խօսելով ասպա վասն ժամանակին Տիրանայ ասէ. "Ապա ի ժամա-նակին յայնմիկ յարոյց զօրացոյց (Աստուած) զգրգռուն-իս սահմանակցօք շուրջ յամենայն կողմանս զթշնամիս նոցա. և ոչ մի ոք ի թագաւորացն Հայոց ոչ ոք գտանէր նոցա բարեկամ, այլ ամենեքեան թշնամիք ». Ջոյն երկրորդէ և Մեսրոպ Ե. "Աչխարհս Հայոց ի մահուանէ Յուսկանին մինչև ի մեծն Վերսէս խոտորեալ էին ի ճանապարհացն Աստուծոյ ի մեծամեծաց մինչև ցիոքրկունս. և գործէին զմեղս համարձակ իբրև զնոդոմ. վասն այսորիկ եթող Աստուած ի ձեռանէ իւրմէ, և մատնեաց զնոսա ի ձեռս թշնամեաց իւրոց. և նեղէին զնոսա յամենայն կողմանց», Եւ արդարև նաև պատմութեան վարուց մեծին Վերսէսի յայտ առնէ, թէ նախ քան զնա յոյժ ապականեալ էր բա-րոյականութեն յաչխարհի մերում, մանաւանդ ի մէջ մե-ծամեծաց. վասն որոյ նախարարքը ըստ Բուզանդայ Ք. 3. ասացին առ Աբրշակ արքայ, թէ որպէս յարշակունի ցե-ղէն նորոգեաց Աստուած զթագաւորութեն Հայոց նստու-ցանելով զձեզ, "սոյնպէս պարտ է ի յայնմ գաւակէ նորո-գել զՀոգևոր հաճպետութեն. զի ընդ նորոգել այնր աթոռոյ, ասեն, նորոգեսցին պայծառ վարք աչխարհիս Հայոց », Եւ թէ քանի վատթարեալ էին յայնժամ բարք՝ ցուցանեն ժողովն զոր արար նա ինքն մեծն Վերսէս ի յուղ-ղել զմիջոցութիւնս զորս Թուխ Բուզանդ Ք. 4.

Յետ բառնալոյ Թագաւորութեն Արշակունեաց մինչև ի սկիզբն Թագաւորութեն Բագրատունեաց՝ երկու համ աչխարհական աւերմունք աչխարհիս՝ մի ի պարսից յա-ւուրս Ցազկերտի, և երկրորդ յարաբացւոց յաւուրս Բու-զայի՝ յայտ առնեն զաստուածութեն կրից մոլութեց տիրելոց

յայնմ ժամանակի. քանզի երկոցուն ևս աւերմանն պատ-
ճառք՝ եղեն երկպառակութիւնք, քսութիւնք և մանուելք
մերոց իշխանաւորաց, որպէս ունիս տեսանել ստորև.
Յայնմհետէ ոչ տեսանի փոխոխութիւն ինչ՝ ի բարին յընդ-
հանուր աչխարհիս, այլ՝ ի մանաւանդս ոմանս. որպիսի ոք
եղեն ։ Աշոտ, և ։ Սմբատ Թագաւորք։ Արդ կամե-
լով որոշ ինչ տեղեկութիւն առնուլ զարթուց իւրաքանչիւր
ժամանակի Արշակունեաց և Բագրատունեաց, առաւել
՝ի գործոց Թագաւորացդ մերոց մարթ է գուշակել զբաս՝
որ յայնժամ տիրեր յարքունիս նոցա. զորոց կարես տես-
նել՝ ի գլուխն կառավարութիւն՝ եղեալ ըստ կարգի ժա-
մանակագրութե. զի առ պատմագիրս մեր չկք ինչ գտանել
որոշ յիշատակութիւն յաղագս այսորիկ. այլ միայն վասն
տեղեաց և գաւառաց ինչ դուզնաբեայ յիշատակութիւնք,
որք են այսոքիկ.

Աւանէ. Զքնակիչս կողմանց ինչ սորա Կորիւն կոչէ «Դա-
նանմիս, վայրենագոյն, Ճիւաղաբարոյ»։ Ի սոսա որպէս
յարեան աքք պատուականքք առնոյին մասամբք կատա-
րեալք, որպէս Մատթիանոս սիւնեցի և Սահակադուխտ,
ելին նոյնպէս անօրէնքք ծայրայեղ խոտորեալք՝ ի չարիս,
որպէս Վարազվաղէն, Վասակ, Գդևհոն, և Փառանձեմ
տիկին. զի յայդ իսկ բնաւորեալ են բնակիչք գաւառիս՝
յամենայնի անցանել ըստ չափ և ըստ պայմանն, գոլով
նոցա սերունդ բնիկ հայկազանց. զի և ազգս մեր նոյնպէ-
սի է ըստ բարուցն յընդհանուր մնածեալ։

Ոստէանէ. Չվխտուելն բարուց սոցա զանազան անուամբ
բացատրէ Ցնհաննէս կաթողիկոս յասելն. «Գնայ Ա-
տի գաւառ առ՝ ի հնազանդել զբիրտ ազատամարտութիւնն
Մոլսխոյ, զոր իւր իսկ կացուցեալ էր զնա իշխան և հրա-
մանատար Ճուաղաբարոյ ազգացն այնոցիկ Ուտի գաւա-
ռին։ ։ ։ Մինչդեռ Թագաւորն առևայցեալ յՈւտի գա-
ւառի հանդիպէ նուաճել զխստագարանոց աւազակուտ մարդ-
կին աչխարհին»։ Եւ այլուր. «Հասանէ յՈւտի գաւառ.
և ապա անդ գնուաճեալսն առ ինքեանս, զանխատրոյգսն
բանիւք հանդիպեալ։ ։ ։ և որպէս սանձիւք ոմանք բարե-
զգեաց բանիւք՝ ի բաց Ճնշեալ զնեցբեկագոյն բարս նոցա,
ածէր ընդ ինքեանս՝ ի հաստատուն խորհուրդս»։ Իսկ
ուրեք զԿուգարաց և զուտեացւոց միանգամայն աղեա-
տրոյզ բարուք լինել ասէ. Թէպէտ և զՈւտի գաւառն կո-
չէ՝ սիրեցեալ գաւառ Աշոտոյ Շահնշահի. Թերևս վասն
գրչի, և ոչ վասն բնակչաց։

Վարդապետն. Բնակիչք սորա հռչակեալ են՝ի ձիւաղաբարոյութէ, զորոց յիշէ Կորիւն «զդիւական սատանայական բարուցն ձիւաղութիւն», ընդ անուամբ Մարաց։ Խոբենացին գ. 3. ՚ի պատմէն զնահատակութիւնն սրբոյն Դրիգորիսի՝ կոչէ զբնակիչսն Հանապազաստուտս և բարբարոսս։

Դէրջան. Աչխոյ գաւառի «բսորք խեչբեհագոյիք» յիշատակին առ Ագաթանգեղոսի յԾ։

Վասուանց. Գաւառ Աղձնեաց. զոսոս կոչէ Ցոհաննէս կաթողիկոս Աղխատրոյղ բարուք. որոց և այլ հանգամանք բարուց պատմին առ Թոմայի մեծոփեցւոյ. տես՚ի մեծ Հայս 72։

Դէնեցիք. «Ջամբարտաւան և զբիրտ ապստամբութէ» սոցա յիշէ Ցոհան. կաթողիկոս. ուր բնակչաց բազմաւէ թէպետ՚ի Հայոց էին, այլ տերութէնն էր՚ի ձեռս Տաճկաց. որպէս և այլսոցս յայտ առնէ յասելն. «Հասեալ՚ի դուռն մայրաքաղաքին Դվնոյ. և անդ (զպաշտօնեայս) հեթանոսաց յինքեանս գրաւեալ ընդ ձեռամբ նուաձեին»։

Աչխարհ ինչ համառօտիւ ծանօթաս տուեալ զբարուց գաւառաց ոմանց և տեղեաց, ժամ է արդ մի առ մի յաւելուլ բերել եթէ որ այնոքիկ ախտքն էին, որ ընդ այլ և այլ ժամանակս յոմանց ոմանց յիշխանաւորաց՚ի վեր երևեալ՝ սփիւռ տարածեցան ընդ համօրէն Հայաստան. և վեր՚ի վայր արարին զաշխարհ և զազգ մեր։

Ա. Երիպառախոնիան։

Ի մէջ ամենայն ախտից այս է գլխաւոր և ընդհանուր յազգի մերում, որ և պատճառ է խափանելոյ ամենայն բարեաց հասարակաց. իսկ զանհնարին չարիսն որ անտի յառնուրս Աբշարունեաց և Բագրատունեաց՚ի սկզբանէ մինչև ցվախճան՝ ո՞ կարասցէ թուել։ Բայց առ՚ի տալ տեղեկութիւն ինչ դուշաքեաց՝ յառաջ բերցուք զկրկին համաչխարհական աւերմունս յերկպառակութէ յառաջ եկեալս, յորոց և զայլն դիւրաւ է իմանալ։

Առաջինն եղև յառնուրս Վարդանանց, յորում ժամանակի քանզի այն ինչ վերջացեալ էր Թագաւորութիւնն Աբշարունեաց՝ նախարարութէնքն տակաւին ծաղկեալ կային քաջութէ զօրաց իւրեանց, մինչև տերութէն Պար-

սից ՚ի ձեռն մերոց քաջազանց գործիցն կատարեալ յաղ
թութիւն ընդդէմ թշնամեաց իւրոց . և ՚ի ձեռն մերոց
ահեղ և զօրաւոր հանդիսանայր , զոր և յայտ առնէին
պատմիչքն ժամանակին . զի յորժամ նախարարքն մեր ՚ի
հալածանս գոլով ոչ գտանէին ՚ի բանակին Պարսից , յայս
ժամ տիրարանայր պարսիկն և յաղթեալ լինէր ՚ի ՌուՀա
նաց , ՚ի Հեփթաղաց և յայլոց : Աւրդ եթէ և նովին հա
ւատարմութիւն և միաբան Հոգւով պատերազմեալ էին նա
խարարքն մեր վասն ազգին իւրեանց՝ որպէս պատերազմե
ցան վասն Պարսից , չէրթեր ինչ աշխարհս մեր ՚ի հալածա
նացն Յազկերտի : Այլ տես ինձ Թէ ՚ի նմին իսկ ՚ի պատե
րազմին Վարդանանց քանի՛ քանի՛ երկպառակութիւնս յա
րուցին երևելի նախարարքն : Վասակ Սիւնեաց իշխան ա
նօրէն փառասիրութեան անձին դէմ եղեալ կրթեալ , խորհեր
զամենայն հնարս հայթհայթել առ ՚ի դէրև հանել զխորհուրդ մեծին Վարդանայ և ամենայն նախարարաց նո
ցա : Վահան ամատունի զնոյն ինքն զՎասակ խորհեր կոր
ծանել վասն հնազեալ ոխութեին ընդդէմ նորա : Վարազ
վաղեն փեսայ նորին Վասակայ խորհեր և գումն գործեր
վրէժ առնուլ ՚ի նմանէ : Աշդահան անուն ոմն ոստանիկ
մասաներ Պարսից զխորհուրդ նախարարաց մերոց , զոր խոր
հեցան : Եւ այլ զի՛ գիտեմ քանի՛ քանի՛ առանին հեր
ձուածք ՚ի վէր երևեալ յայմժամ տիրացուցին զանպատ
տելի զօրութիւն քաջացն Հայոց , զորոց խօսի Վահան մա
միկոնեան սպարապետ առ Մ ի հրան զօրապետ Պարսից .
“ Դուք ամենայն Արիք լուայք և տեսէք , և ոչ բազում
այրուձիով , այլ հարիւր արամբ՝ և կամ ևս նուազիւ՝ զհա
զար և զերկուս հազարս այր փախուցեալ է (մեր) տեղք .
և յայսմ կուռւի մի զայս զմնաս ածեալ պարծիք , թէ ա
մենի՛ն քաջութ յաղթեցէք մեզ . այլ ՚ի մեր երկպառա
կութի՛ն և ՚ի նենգելոյ եղիս մեզ վնաս „ . Ղազար 239 :

Երկրորդ աւերումն ևս նոյնպէս եղև յերկպառակուի մերոց իշխանաւորաց յաւուրս պարսպացւոց ՚ի ձեռն Բուզանդի . մանաւանդ զի ՚ի բանից Յոհաննու կաթողիկոսի երևի Թէ նաև ՚ի սկզբան անդ ՚ի վէր երևելոյ պարսպացոց՝ յանմիաբանութի՛ն նախարարաց մերոց իշխեցին նո
քա պրշաւել ՚ի Հայս . քանզի յետ հալածեալ լինելոյ հրամանատարին Դաւթի սահառունւոյ , գրէ . “ Եւ վասն զի նախարարքն ազգիս մերոյ անմիաբան լեալք , և ոչ զոր էր որ սմա զօրավարէր , (կամի ասել Թէ ոչ միաբանէին և ոչ իսկ ՚ի կարդել զօրավար .) յայնժամ ասպահանեալ

զօրն Հագարայ համարձակութիւն առեալ յասորեստան կողմանէ առպատակ ի Հայս սփռէին. և ըստ օրինակի հրացայտ իմն հրդեհի ձարակ բոցոյ նորա վաղվաղակի հասանէը ԱՒյրարատ գաւառ՝ հարեալ զղաշտավայրն ամենայն, և պաշարեալ պատերազմեալ զԴուինն քաղաք։։ Եւ յա առաջին առպատակութէն էր արարքացոց։ Եւ ասէ Թէ նաև յայլ նուագս յորժամ միաբան լինէին նախարարք մեր և կացուցանէին զոմն գլուխ, յայնժամ խա զաղիր աշխարհս Հայաստան. որպէս եղև արդարև յորժամ ։ Ներսէս կաթողկոս ետ կացուցանել զՄամեան զորդի Վարազտիրոցի ի կուրապաղատ, և զԹէոդորոս ոչտունի ի զօրավար. զի յայնժամ, ասէ, "պայազատեալ ապահովանայր առ ժամանակ մի ի չար հնինց Հագարու աշխարհս մեր։։

Իակ յարձակումն Բուղային զորմէ առաջիկայ բանս է, Թէ որպէս յերկպառակութէն մերոց իշխանաց եղև, այսպէս ողջ առեալ Ծմուռեցւոյն Թոմա արծրունի. "Թէպէտ (մինչև ցայնժամ) նեղեալք և չարչարեալք լինէաք պէսպէս կատանաք... այլ սակաւագոյնք և առ փոքր ինչ ժամանակս... քանզի դեռ միաբանք և միախորհուրդք և հաւասարք առ միմեանս բնակէին իշխանք Հայոց ազատագունդ բազմութէ, և զօրացն նոցա. Թէպէտ և ի ծածուկ ունէին զերկբայութէն նենգութեց։ Իակ իբրև սկսաւ սպրդել մտանել ի նեղքս երկպառակութէնն ի մէջ միաբանութէն՝ հեռացաւ մեհենեաւ գնաց հնօրհ աստուածատուր զօրութէն, և խորհուրդք խորհրդականաց ոչինչ համարեալ լինէին ի գործս մարտից և յայլ կարգս հնաբարձութէ աշխարհիս. և զոր օրինակ ոք զբոլոր անդամն մարմնոյ յօշելոյ ի մասունս, և ոչ երևի տեսակ կենդանի մարդոյն... այսպէս տակաւին ի բազում քայքայեալ լինէր միաբանութէն աշխարհիս։ և իւրաքանչիւրք ոք այր զընկերէն և զեղբօրէ իւրմէ ի չարիս խոկային. և Թուղթս և դեսպանս առ Թագաւորն (առ ամիրապետն) յղէին ծածուկս ի միմեանց. այլ և ընդ միմեանս արկանէին բանս քաւթէ։ Եւ ոչ ոք ինայր գէթ երկու ի միասին. և յայժ ուրախ առնէին զձնամին ի քակել միաբանութէն իրերաց... և առ սոսա... ի դէպ ելանէ և հին առասպելն Ալպիանոս փիլիսոփայի որ վասն առիւծուն և զուարակացն են բարառնութիւնք. տեղեակ են այսմ առասպելսն անձինք։։ Ը. ։

Եւ արդարև յաւուրս ։ Սմբատայ արքայի իբրև մեծ

ինչ համարեալ պատմէ Յովհաննէս կաթողիկոս զմիաբան լինելն նահապարացոց առ Ժամանակ մի, ասելով. « Ձեւտ այսորիկ արքայ Սմբատ իբրև ետես զմիաբանըր խաղաղալե մշանջենաւորեալ ի Հայս, և միաբան ընդ նմա լինել նահապարացն յուխտ սիրոյ, եդ ի մտի իւրում երթալ... Նուաձել զաշխարհն Տարօնոյ »։ Ալլ յորժամ այսպէս օր ըստ օրէ գնետ էր յառաջանալոյ, փոխանակ զի ամենայն իշխանաց անկ էր յայնժամ միանալ ընդ Սմբատայ առ ի զօրացուցանել զնախաձեռն իւրեանց, այսմ ընդդէմ տե սանելիք զամենեսին փեռնետեալ յարքայն և յիւրերայ. զի ի միոյ կողմանէ Մոկաց իշխանն Մուշեղ և Աշճաձա ցեաց իշխանն Գուրգէն, երկոքին ևս ալեւորեալ հերօք՝ ասէ նոյն ինքն պատմիչն, մարտ հակառակութեան ի մէջ իւրեանց բորբոքեալ սաստիկ պատերազմէին ընդ իրեարս, մինչև Մուշեղ սպանաւ ի Գուրգենայ։ Խակ ի միւս կողմանէ Գագիկ իշխանն Վասպուրականի գաղտ միաբանութեն կալեալ ընդ Աշմատայ բռնաւորին, զամենայն զօրս Սբմ բատայ ընդ դժուարակոխ Ձանապարհ տալով անցուցա նել այնպէս լքուցանէր իբր գանեալս և յօգուտ իւր, մինչև, ասէ, «տեսեալ զայն արքայն, և իմացեալ թէ յայնմհետէ ոչ յաջողի նոցա գործ պատերազմին՝ յետոյս զինքեանս միեալ ի փախուստ դառնային»։ Ահա այս ամենայն երկ պառակութիւք էն զորս լուեալ և տեսեալ Աիւրէն ոստի կան, համարձակեցաւ դիմել ի վերայ Սմբատայ. և իբրև եւառ զերերդն կարուց, և գերեաց զտիկինն և զայլս որ ի նմա, պատանդս ինդրեր ի Սմբատայ արքայէ առ ի ար ձակել զնոսա. « խակ արքայ, ասէ, ոչ տեսեալ զՀարթա յարմար միաբանութեն նահապարացն ընդ ինքեան, և ոչ այլ ինչ իրին էլի ազագս գտեալ, այլ ակամայ կամօք ի կամն նորա դառնայր, տալով զԱշոտ որդի իւր և զՍմբատ եղբօրորդի ի պատնան պատանդաց. այլ և զգուստը Շապհ Հոյ կրսեր եղբօր իւրոյ ի վերութեն նմա »։

Այսչ երկպառակութեն և անմիաբանութեն էին պատ ճառք այն ամենայն Հարուածոց որք եկին Հասին ի ձեռաց Յունաիոյ յաւուրս նորին ։ Սմբատայ և ։ Աշոտոյ. վասն որոյ և Նիկողայոս պատրիարգ Յունաց լիէ զայն ի թուղթն իւր որ առ Յովհաննու կաթողիկոսի. Պարտ է ձեզ, ասէ, « դադարեցուցանել գոնէ ի հակառակութենէ չարութենէդ որ ընդ միմեանս... մնռանալ զընդ միմեանս հարուստն, և նայել ի սէր և ի միաբանութեն և ի հաշտ խաղաղութեն ընդ միմեանս և ընդ հասարակ իշխանս Հայոց

և Աղուանից, և միանալ միաբան ... գումն գործել և ի բաց ի միոյ բառնալ զբար հակառակութիւնս գործ ... զի այպիսւ միախոհք և միաբանք լինելով մի ևս կարողացցի ինչ ի վերայ աշխարհիդ ձերոյ ապականիչ չարն »։ Եւ արդարև քանի՛ անհեթեթ էր և ինքասակար, յորժամ երկոքին Աշոտք՝ երկու հօրեղբօրորդիք գոլով՝ զանունս թագաւորի առեալ մարանչէին ընդ միմեանս, և զերկիրս միմեանց իբրև զօտարաց աւերէին . « երկաքանչիւրքն նոքա իբրև զօտարածին թշնամիս ընդ միմեանս ի գըրգռեցեալ մարտից մատուցեալ, քաջհայնար լինէին զմիմեանք ելանել ի հակառակուս և ի կռիւս »։ Բայց ընդ հաշտելն երկոցունն նոցա ընդ միմեանս՝ իսկ և իսկ յաջողեցան յայնժամ արգիւնք խաղաղութեան. զի օրպէս գրէ անդէն, յետ հաշտութեան երկոքին նոքա միաբան եկին ի վերայ Դըւնայ, և ընդ գալն՝ նոյնժամայն յինքեանս գրաւեալ նուաճեցին։

Այս ամենայն դիպուածք շատ իսկ յայտ առնեն զընդհանուր միտս արմատացեալ ախտիս երկպառակութեանց. և յայտ յանդիման կացուցանեն թէ ի պատճառս ախտիս այսորիկ այնչափ և այնպիսի արիութիւն մերոց քաջալանից բոլորովին ի գերեվարեալ[1]։ Բայց և միւս մոլութիւնք զորս ստորև ունիմք յիշել, առաւել ևս յայտնի արասցեն։

Բ. Նախանձ և Զարմահարութիւն։

Ընդ ամենայն պատմութեանց ազգիս եթէ յածեալ չքնեաց ցի մնօք կենցաղագէտ ոք խնամտուն, զախտ նախանձուն գտանել արմատ երկպառակութեանց, զորմէ արդ իսկ խօսեցաք, և աղբիւր ամենայն չարեաց և հարուածոց աշխարհիս. որ և անչափ տարբացեալ և առհասարակ չազգս մեր, մինչև ի գտանելն զմի ոք անենախանձ՝ զարմանալով իմն յիշէ Խորենացի, թէ Բագարատ յաւուրս փոքունն Խոսրո-

1 Ցամենայն պատերազմունս, յորս լսեմք պարտեալ մերոց ի թշնամեացն՝ անդ գտանեմք երկպառակութեանն լեալ կամ ի նոյն իսկ ի զօրս պատերազմին, և կամ յերկիսեան յառաջ քան զպատերազմն յոյր սակս ոչ գայթն ի պատերազմ, մանաւանդ իշխանքն Վասպուրականի և Սիւնեաց. իսկ ուր միաբան հաւանէին զօրք իւրեանց, անդաւօր լինէր յաղթութիւն. Բայց և այս ի պատերազմին որ ընդդէմ Ախթաղից. ուր պատմէ Ասողիկ, թէ Թագաւորն Հայոց ի. Սմբատ, և Թագաւորն Կարուց Աբաս եկին զօրօք, նաև « ամենայն զօրն Վրաց և Վասպուրականի, Սիւնեաց և Աղուանից իշխանքն միահաւոք լինէին ընդդէմ Ախխազաց զօրուն. որոց երկուցեալ զնաղաղուել ինդրին »։ ե. 28։

վաւ զիարդ պատմեաց արքային ստուգութիւն առանց նա-
խանձու մեծի քաջագործութեանն Վահանայ զոր արար ՚ի
պատերազմի . ասէ . "Եւ աստ դարձեալ յաշխարհն Թոփաց
Բագարատ, վիպայ հաստատուն առանց նախանձու լինել առ
արքային վասն Վահանայ քաջութեան, և առաքինի դիպուա-
ծոյն ,, . ՚ի . 9 : Վասնաք այսր պատի բազում են և համ-
աշխարհական, յորմէ զերևելին ևեթ յիշեսցուք :

Վնդհանուր և մշատաւ եղև ընտ նախանձուն զոր
կրէր ՚ի սրտի Վասակ մամիկոնեան զօրավար ՚ի . Աբշակայ
արքային ընդդէմ եղեօր իւրոյ Վարդանայ : Զի Շա-
պուհ արքայ Պարսից կոչեալ զբազմութիւն քաջանայից յա-
կեղեցւոյն Տիսբոնայ, ՚ի ձեռն նոցա երդուանի եւ առնել Աբ-
շակայ Թագաւորի ՚ի վերայ աւետարանի՝ չյարել առ
Յոյնս , այլ միշտ հաւատարիմ մնալ առ ինքն . այս երդուանի
և դաշնադրութեի եղև ՚ի ձեռն Վարդանայ . որով Վար-
դան ստացաւ փառս և պատիւս առաջի Շապհոյ , և սի-
րելի եղև նմա յոյժ : Վասակ եղբայր իւր անհնարին հեր-
ձեալ ՚ի նախանձուէ, որպէս զի խռովութիւն արկցէ ՚ի մէջ
երկուց Թագաւորաց , և նովին ատելի արասցէ առաջի
Շապհոյ զեղբայր իւր, յանկարծ փախեաւ առ Յոյնս : Ջայս
արարեալ այս հանդարտեցաւ սիրտ նորա , և չայոզեցաւ
՚ի գլուխ եկ որում ցանկային, և յատելս համարեցաւ
եղբայր նորա յաչս Շապհոյ , սակայն անհնարին աղէտք
գՏեառ եկին անոր . քանզի կատաղեալ Շապհոյ վասն այսր,
զայն ամենայն քահանայս ոգիս առաւել քան զեօթանա-
սուն առՏասարակ ետ կոտորել . և յետ այնորիկ ատելու-
թիւն կալեալ և ընդդէմ քրիստոսական կրօնիցն՝ ՚ե՛հան հալա-
ծուն ընդհանուր ՚ի վերայ ամենայն քրիստոնէից իւր
տասաց և խաբեբայ արանց . "Մ՚ի գոցի յիշխանութիւնն ի
մոմ, ասէլով, որ քրիստոնեայ անուն անուանեսցէ զանձն
իւր ,, . Ռուզանդ ՚ի . 17 :

Վյս արդարև աւուրք ՚ի . Աբշակայ Թագաւորին՝ եղեն
առՏասարակ աւուրք սպանութիւն և արեանհեղութիւն իրե-
րաց ՚ի պատՏաս յաՏախելոյ չարամտութիւն և նախան-
ձու ՚ի վերայ միմեանց : Մի՞այն ՚ի մեհեանսն ևեթ Տիբե-
թայ ընդդէմ Գնեալոյ քանի՞ քանի՞ խռովութիւնք յարեան և
տարապարտուց սպանումնք . իսկ պատՏաս և գրգիռ նա-
խանձուն զինչ . քանզի պատիւ հիւպատոսութիւն և գանձս
ետ Գնեալոյ կայսրն Վաղենտիանոս վասն ՚ի զոր սպանա-
նելոյ իւրոյ զՏայր Գնեալոյ զԴրդատ զեղբայր Աբշակայ
Թագաւորի . յաւելան ՚ի վերայ և այլ կալուածք և ինչք,

զի նաև ՚ի. Տիրան կուբացեալ Թագաւորն՝ Հաւն Գնելոյ՝ յուշ ածեալ Թէ Տրդատ ՚ի պատճառս իւր ՚ի պատանդի գոլով ՚ի Բիւզանդիա՝ կրեաց զայն մահ տասապարտուց ՚ի կայսերէն, կարեկցեալ յայժ ՚ի վերայ Գնելոյ որդւոյն Տրդատայ, զիւր կալուածս և զինչս որք էին ՀԱՀրարատ՝ եւ նմին Գնելոյ, հրամայեալ զի ՚ի նմին կալուածս ընակեսցէ։ Գնել առաւել ևս մեծացաւ յորժամ էառ ՚ի կին զԹառանձեմ յազգէն Սիւնեաց. զի ՚ի հարսանիսն անդ պարգեւս առատս տուեալ ամենայն նախարարաց՝ սէր ըստ եղև յոյժ ամենեցուն, մինչև նոցա զորդիս իւրեանց տալ նմա ՚ի կրթութիւն։ Ի բարեբաղդութենէս այսոցիկ և ոչ մի ինչ վնաս հասանէր Տիրիթայ. այլ քանզի վառեալ մաշէր ՚ի նախանձուէ, զի մեծացաւ այրն, որպէս երէկ առ մեծութէն նորա նուաստ ոք և անպէտ համարեցի ինքն, կամ լաւ ևս ասացից, զմեծութէն նորա զորս կանս անձին իւրում համարեալ, որպէս սովորեցին ախտացեալքն ախտիւդ, սկսաւ Թափել ՚ի դուրս զմեղձ դառնութէն սրտին։ Գրգռեաց զԱրշակ արքայ Թէ զի՞ կաս զի՞ յապաղես, ահա Գնել կամի սպանանել զքեզ, և ինքն փոխանակ քո Թագաւորել։ Նշան այսմ՝ զի ՀԱՀրարատ ընակէ, ուր միայն Թագաւորաց է օրէն ընակել. և կայսրն սովին մեծաք արար զնա հիւպատոս, և ետ գահս, զի կարասցէ յինքն յանկուցանել զնախարարս։ Յայսմ քսութէն եգիտ իւր ընկեր և զԱրշակն մամիկոնեան զինակիր արքայի, որ երդմամբ վկայէր ականջալուր լեալ սպառնալեացն Գնելոյ վասն սպանանելոյ զԱրշակ։ Ա՛յս քսութէն երկոցունց պատճառ եղև Արշակայ Թագաւորի նախ Հայրապետի լինելոյ։ Զի հրամայեաց Գնելոյ արտաքս ելանել ՀԱՀրարատայ. Տիրան կուբացեալ Թագաւորն բարկացեալ վասն այսր ՚ի վերայ Արշակայ, պատգամս խիստս առաքեաց առ նա. իսկ նա ետ Հեղձամահ առնել զՀայր իւր զՏիրան յիւրոց սենեկապետաց. ապա սպան և զԳնել. զի տեսեալ առ Գնելոյ այսպիսի պատրաստութէն որսոյ Թագաւորական զոր չէր ընաւ տեսեալ, սակս նախանձու և սակս առաջին կասկածանաց հրամայեաց Վարդանայ ՚ի յորսի անդ սպանանել։ Մեծն Նէրսէս անէծ զԱրշակ սակս սպանանելոյ զանմեղն Գնէլ այլ նա փոխանակ ապաշխարելոյ՝ էառ և զգահս Գնելոյ և զԹառանձեմ զկին նորա։ Անմեղութէն պատանւոյն Գնելոյ յայտնի է, զի Հոխութէնէ ընդէից իւրոց չէին ստացուածք զրկողութէ, չէր և չարամիտ ՚ի վերայ արքային,

պլ. հնազանդ յամենայնի. զի յորժամ հրամայեաց նմա արտաքս ելանել յԱՒրարատայ՝ եւ վաղվաղակի. և յոր ժամ հրամայեաց պատրաստել վասն որոյ՝ կատարեաց որպէս արժանն էր։ Աւրշակ սակայն փոխանակ բարելաւուելոյն ոչնակեզ լինելոր այլն արդար անօրէնն նախանձուն Տիրիթաց և Վասակայ. որպէս և Հայր նորա տարապարտ ցասման կայսերն։ Նոյն իսկ կին գնելոյ գուստր Անդովկայ Փառանձեմ բազում չարեաց և սպանութեց լինի պատճառ. զի տեսիլ գեղեցկուէ նորա եղև պատճառ տարապարտ մահուան գնելոյ առաջնոյ առն իւրոյ. իսկ մահն գնելոյ եղև պատճառ մահուան Տիրիթայ. զի Փառանձեմ հրաւիրեաց թէ Տիրիթ առ ցանկութեն իւրոյ եւ սպանանել Աւրշակայ զկնել զայր իւր. զոր լուեալ Աւրշակայ՝ ծանեաւ զսուտութեն քսութեն Տիրիթայ. զՏիրիթ սպան, և զՓառանձեմ ինքն եառ ի կնութեն։ Ախաւրելութեն Փառանձեմայ եղև պատճառ կամ գործակից մահուան Վարդանայ մամիկոնէի, թէ ընդեր սպան զկնել զառաջինն այր իւր, որպէս պատմէ Բուզանդ գ. 18։ Նախանձ Փառանձեմայ՝ ի վերայ Ոլոմպիադայ սիկինոջ՝ եղև պատճառ անլուր մահուամբ սպանանելոյ զնա։ Իսկ չարահնութեն հօր Փառանձեմայ որ կոչէր Անդովկ՝ համաշունչ խորհական չարեաց և գնաւոց եղև նիւթ ոչ նոյնպէս ի պատճառս նորուն իսկ Փառանձեմայ։ Զի Շապուհ արքայ Պարսից արար ուխտ սիրոյ ընդ Աւրշակայ Թագաւորի. և առ՝ ի սիրոյ կապել՝ կամեցաւ զքոյր իւր տալ նմա ի կնութեն. Անդովկ յայսմանէ կարծիս ի մտի է դնել՝ թէ յառնուցն գնա Աւրշակայ ի կնութեն՝ արհամարհացի գուստր իւր Փառանձեմ, միւմ ի նախարարաց Պարսից ետ ոսկի բազում, որպէս և այլոց նախարարաց, որք հաւանեցուցին Աւրշակայ՝ թէ այն սէր Շապհոյ գաւաձանուն է, զի կամի սպանանել զքեզ. վասն որոյ առ ի գլուխ տանել զդաւանսն, խորհեցաւ զայս ամբաստութեն գստեր իւրոյ։ Աւրշակ այսմ ևս հաւատացեալ առանց քննելոյ, փախեաւ յանկարծ. և այս փախստական նորա յանդգնեալ՝ անհնարին գրգռեաց զցասումն Շապհոյ. և ևաճատութեն և թշնամութեն չար և երկարատև ի մէջ Պարսից և Հայոց, որ տեւեաց զամն երեսուն ըստ պատմելոյ Բուզանդայ գ. 20. և ի հետևեալսն։

Որպէս յաւուրս Աւրշակայ՝ նոյնպէս և ի յաջորդ ժամանակս ի պատճառս նախանձու մերոց նախարարաց ի ներքս ի Հայս արշաւեցին ելս զանգ արտաքսոց. զի Վաղ

գան գրէ վասն Հերակլեայ կայսեր, թէ "կարգէ զօրա-
վար Հայոց զՄէժէժ, զոր սպանեալ Դաւիթ սահառու-
նի՝ և ինքն լինի իշխան հրամանաւ Հերակլի զամս երիս,,։
Այլ ըստ պատմելոյ Յոհաննու կաթողիկոսի, "Ձեր եր-
կեամ մի անարգեալ զնա (զԴաւիթ սահառունի) նա-
խարարացն և զօրաց իւրոց հալածեցան. և յայնմանէ տալա
՚ի չար հակառակուէ նախարարացն և ՚ի նմանիր նախան-
ձուէ զղջեալ կործանեցին սպառ սպառս զՀայաստա-
նեայս. բայց միայն բարեպաշտ իշխանն Թէոդորոս ըստ
սակաւաձեռն կարի դիմակաց հինից Թշնամեաց գտա-
նէը ,, ։

Յղ նախանձու դարձեալ կուրացուցին զանուանին Ա-
շոտ վասակեան զառաջին նահապետ Թագաւորացն Բագ-
րատունեաց. "Աբձակէ Հեշմ, ասէ Վարդան, զՄըր-
վան զորդի Մահմետ ՚ի Հայս. որ հինեալ կացոյց զԱշոտ
բագրատունի կիւրապաղատ և կամ պատրիկ ասէ. և
մնայլին նմա Սմբատ և Դաւիթ և Գրիգոր մանկո-
նեանք . . . ապստամբուէն խորհեցան իշխանքն Հայոց, և
ոչ կամէցաւ պատրիկն. և կալեալ կուրացուցին զնա մա-
նկունեանքն Գրիգոր և Դաւիթ. սա է նախնի Թագաւո-
րացն Հայոց և Վրաց,, ։ Ցես զանհնարին չարիսն. զի զոր ա-
տարագի արաբացիք պատուէիրն, համազգիք իւր կուրա-
ցուցանեն. որոյ չմիաբանելոյն ընդ նոսա յապստամբութէն,
յանմիաբանուէ համօրէն նախարարացն Թուխ լինել ան-
շուշտ. իսկ քանի մի նախարարաց միաբանութէն յայտնի
առեանկեր Թէ չէր բաւական յընդդիմադրութէն այնչափ
բազմութէն արաբացւոց ։

Այնգունակ և Յոհաննէս կաթողիկոս զայս մտածութէն
նախանձու ասէ լինել պատճառ նորին իսկ կռուոյ երկուց
հմմանուն Աշոտոց, որք էին երկու հօրեղբօրորդիք հա-
րազատք. "Եւ վասն զի, ասէ, ՚ի վերոյ երկոցունց նոցա
Թագաւորական անուանս կառուցեալ եդեալ էր, ՚ի նա-
խանձ չարակնուէ յաչազմանն ընդ միմեանս բերեալ, վասն
այսորիկ իսկ առաւել ընդվզեալ զչարէին իւրաքանչիւրք ՚ի
նոցանէ զնուն ինդրելով կացուցանել,, ։ Կամ պատճառ
ամենայն աւերմանց և աջրաւանաց հինից ՚ի հայաստան
զոյն զայս եդեալ պատճառ՝ այսպէս բողոք բառնայ զժո-
ղովրդենէ իւրումն ժամանակի. "Ահա և եղբայր ընդ եղ-
բօր և ազգայինք ընդ ազգայինս ընդվզեալ՝ ՚ի նախանձ և
՚ի չարակնուէն և ՚ի գրգռութէն և ՚ի կատաբեալ ատե-
լութէն ընդ միմեանս բերեին. և այսպէս համագունդ ընդ

միմեանս Հարեալք՝ ի հակառակութիւնէ և ի կռիւ պայքարելոյն. և միշտ սուր յապդեր ունելով բազում ևս քան զինչսիմն հեղուն ի միմեանց զարեան ձապաղիս. և առ հասարակ զքաղաքս և զգեօղս և զառասս և զագարակս, այլ և զտունս իւրեանց քանդելին ձեռօք իւրեանց։ Եւ գրեթէ այն իսկ ոձիրքը հակառակութիւնե գտան պատճառք հինիցն եկելոց ի վերայ մեր»։ Չի ինքեանք զաքեղեալք առ ի զմիմեանս վատթարել՝ թշնամին համարձակ խաղայր ուր և կամէր յաւերել և ի յափշտակել։

Ո՛չ ապաքէն սոյն այս կիրքը նախանձուն էր՝ որ ետ կործանեել զթագաւորութիւն Բագրատունեաց. զի Աշոտ կամելով ինքն թագաւորել որում ոչ անկանէր, յարեաւ ընդդէմ եղբօր իւրոյ Յովհաննու որ էր օրինաւոր թագաւոր. Յովհաննէս նեղեալ յեղբօրէն իւրմէ՝ ի ներքինն թշնամեոյ, նեղեալ և յարտաքին թշնամեաց, առ ի վերծանիլ միանգամայն յամենեցունց՝ ետ ձեռագիր յետևրաւ զԱնի ի ձեռս կայսեր Յունաց. ուստի ծագեցան աստիճանայն չարիք ի վերայ տանն Բագրատունեաց, մինչև վերջանալ թագաւորութենե նոցա։

Գ. Քաջութիւն, Բանաստեղծութիւն։

Վասն այս գործի է նախանձու. քանզի ամենայն մարդոցդ սովաւ կորուսին զամենեսին զնոսա՝ զորոց ունէին ինչ նախանձ ի սրտի։ Աբշամ թագաւոր կարի ինն զայրանայ ի վերայ Ենանոսի ասպետին բագրատունեայ վասն արձակելոյ նորա զՀիւրկանոս քահանայապետ Հրեից զգերեալն ի մերոյն Բարգաւրանայ. Ենանոս պատճառ եդ վասն այսը զնոսատունն նորին Հիւրկանու ի վճարել հարիւր քանքար ի գին փրկանաց իւրոց. վասն որոյ և ինքն յանձն էառ տալնմա զայնչափ քանքար, ակնուսնելով առնուլ ի Հիւրկանեայ. բայց Հիւրկանոս սպասեալ գոլով ի Հերովդէ, իբրև եհաս ժամանակ և ոչ կարաց վճարել Ենանոս, Աբշամ ընկերցեալ զնա ի պատուոյ եդ ի բանտի։ Սովին ևեթ պատուհասիւ Թեոբևս զերծաներ տառապեալն. այլ փոխանակ օգնելոյ սմին, լուր զոր պատմէ Խորենացին. «Յայսմ ժամանակի քսուն գնմանէ մնատուցանէ արքայի Հրայ նահապետ ազգին Գնթունեաց ասելով. գիտեա արքայ զի ապստամբել՝ի քէն կամեցաւ Ենանոս, խորհուրդ ընդ իս բերելով»։ Ոչ շատացեալ ընդ այս սուտ զրպարտութենէ՝ ի վերայ առնն, այլ և

յորդոր ևս մատուցանէր արքային սպանանել զնա ասե-
լով. "Ոչ մեկին ի գլժոտութեն բարուցն՝ եթէ ոչ՝ արքայդ
ահապարեցես նմա,, : Եւ արքայ յանցաւ մեծապէս, զի
առանց ինչ քննութեն անսաց այսպիսի քսութեն, որպէս
ասէ Խորենացին իբր գանգատելով. "Ա՛յս քսուեցս հա-
ւատայ Աբրահամ. հրամայեաց տանջանս պէսպէս ի վերայ
Ենանոսի կուտել. և վախճան գործոյն՝ կամ թողուլ խա-
պառ զօրէնս հրեութեն . . . կամ կախել զվայտն և զնա
ջինջ լինել ազգի գորա ,, : Ը. 24 :

Խանսարկութեն Փիսակայ սենեկապետի Ը. Տիրանայ պատճառ եղև մատնելոյ զՏիրան ի ձեռս Պարսից ըստ Բուզանդայ Ը. 20 : Փիսակ գոլով ի տհմէ Սիւնեաց՝ յորժամ գնաց դեսպանութ առ Վաղարշապուհ որ սահ-
մանապահ էր արքային Պարսից յԱծորպատականն, նախ պատուեաց և մանեաց նմա վասն ազնիւ ձիոյն զոր ունէր Տիրանս այս. ի խնդրելն Վաղարշապհոյ զձին, Տիրան ծանր բացասումն եղեալ ընդ այն՝ զայլ ձի նմանն նմին առաքեաց առ նա ի ձեռն նորին Փիսակայ, անգէտ միանալով ամենա-
հին չարամտութեն բանսարկուին, և պատուիրեաց ասել առ Վարազ՝ Թէ առ սէր քո ոչ խնայեաց Տիրան տալ զիւր ձին զոր խնդրեիր . Իսկ նենգավարն Փիսակ պատմեաց և ի վեր եհան Վաղարշապհոյ զնաթերութեն Տիրանայ . և յաւել չարախօսել՝ Թէ զիարդ Տիրան ատելութեն մեծ կրեր ի սրտի ընդդէմ Թագաւորին և համարէն զօրացն Պարսից , մինչև խնայել ի մի միայն ձի զոր խնդրեցեր . և կամի ծաղր առնել զքեզ պատրելով յիմ ձեռն . յայս նորա ե ի կայսրն . և խորհի հանապազ հանել զԹագաւորութեն Պարսից յազգէն սասանեանց, և զարձուցանել անդրէն ի տունն պահլաւեանց յազգակիցս իւր . զոր արասցէ անշուշտ եթէ ոչ բարձրիք զկեանս նորա : Ընդ լսելն զայս արքային Պարսից՝ հրամայեաց Վաղարշ ունել զՏիրան . Իսկ Վարազ կամեցեալ դաւով իւն ըմբռնել՝ եկն առ նա բարեկամաբար իբր ի զբօսանս որսորդութե տղա-
գաւ , բայց բազմութեք զօրաց , Տիրան տակաւին անգէտ ինացեալ բանսարկութեն և դաւաճանութեն՝ խօսեր ընդ իւր նեղբին սպասաւորն ի սենեկի . ի ժամ զբօսանաց , ասէր , մի տանիք զՎարազշապուհ յորսորդուի ուր առատ իցեն որսք , այլ ուր նուազունք են , զի մի չարակնութեք յաչառնեցի ի վերայ մեր , որպէս սովոր է միշտ ազգդ Պարսից : Փիսակ զայս ևս պատմեաց յունկն Վաղարշապհոյ . որով ևս քան զևս բորբոքեալ նորա , յաւուր միում

յինԹրիա կոչեալ զՏիրան՝ անդ քանզի զօրք նորա չէին առ նմա, կալեալ կապեալ զնա՝ յաւարի առ զգանձս նորա և զկին և զորդիս. և տարեալ զնա ՚ի գիւղն Դալարիս՝ անդ կուրացուցին զաչս նորա խարեբուլ։

ՎասնԹեամին Բատայ սահառունեայ սպան Թագաւորին Վարազդատ զՄուշեղ քաջ զօրավար մամիկոնէից։ Զի այս Բատ կամելով յինքն կորզել զպատիւս զօրավարուԹե, հնարս եգիտ բարուբանս արկանել ոչ միայն ՚ի վերայ հարէն տոհմին մամիկոնէից, այլ և զնոյն ինքն զՄուշեղ, որ ինչ անմեղուԹե և գործք առ ՚ի նմանէ լեալ էին՝ զամենայն իբրև գաղտնի նենգ և դարանակալուԹիւն երևեբ ցուցեալ առաջի Վարազդատայ, պարտաւոր մահու գատեցաբ. "Սկսաբ, ասէ Խուզանդ Ե. 35. քսիս մատուցաբ նել զնմանէն առ Թագաւորին Վարազդատայ առ իւրում սանուն, և ասել Թէ ՚ի սկզբան ՚ի նախնեացն հետէ զէրբ արշակունեաց տոհմին մամիկոնէից է կորուսեալ, զի հաւակաւորդք ձեր գոքա լեալ էն ՚ի բնէ անտի. և համակ չերկիրս Հայոց գոցա է կերեալ, մանաւանդ Մուշեղն. մանաւանդ զի այր չար է և նենգաւոր։ Զի սիրելի է Թէնամեաց ձերոց, և ատելի սիրելեաց ձերոց. և համակ ընդ ձեզ նենգաբ է գնացեալ, երկմտուԹիւ և դժխեմուԹիւ։ Զի ոչ այն Մուշեղն է, որ ՚ի ԹագաւորուԹեան ժամանակ Պապայ ՚ի պատերազմանն Պարսից քանիցս անգամ ձեռնհաս եղև սպանանել զՇապուհ արքայն Պարսից, և ոչ եապան, այլ արձակեաց զթշնամին. և երբեմն զկնայա Շապհոյ Թագաւորին ՚ի բուռն էարկ, և խնամոտ գԹով ժանուարօք արձակեաց զնոսա զՀետ Շապհոյ։ Ո՞չ այդ այն Մուշեղն է, որ զԱռնայր արքայ Աղուանից ՚ի բուռն էարկ և սպանանել ոչ կամեցաբ, այլ արձակեաց զթշնամին"։ Տես զարամոուե անզգամին, զիարգ ՚ի փոքունց սկսեալ ապա յԱս մեծագործն ձեռն արկանէ. զի նախ ջնասպարտ և անիրաւ ցուցեալ գնա լոկ ՚ի Թշնամին Արշակունեաց, ապա և ՚ի նոյն իսկ յԱրշակունին, նա մանաւանդ զարանակալ կենցաղ Թագաւորին. քանզի ասէ. "Ո՞չ այդ այն Մուշեղն է, զի զարքայն Պապ հրամանաւ գորա և գորին խորհրդովք զօրավարքն Յունաց սպանին. զի գա ոխացոյց և գրգռեաց զարքայն Յունաց ՚ի վերայ Թագաւորին Պապայ, մինչև ետ սպանանել"։ Զայսոսիկ չարախօսեալ առ Վարազդատայ, որպէս զի մի գԹացեալ Թագաւորն ներեսցէ նմա, և զի զչարախօսուԹիւնսն իւր ամենևին աներկբայ ցուցանիցէ, և զայրն

անմեղ անարժան կ'հնաց, նենգաւոր և գարանակալ նորին իսկ արքային Վարազդատայ ցուցանէ գնա. և ասէ ցարքայ. "Աւրժան է մեռանել 'ի ձեռաց քոց... այլ թէ ոչ աձատարեսցես արքայ, այժմ զհայ երիվրս խորհի ընուլ քաղաքօք, և զօրանիստ առնէ ատ քնակութիւն զօրացն Յունաց։ Եւ այնուհետև կամ թագաւորն Յունաց չհանէ 'ի քէն զթագաւորութիւնս Հայոց, կամ այս Մուշեղ սպա նանէ, և ինքն թագաւորէ „։ Ունկնդիր եղև ամենայնի արքայ Վարազդատ, չկիշեալ ամենևին զառնն առաքինու թիան որովք ցայն վայր ձգնեալ էր մեծաւ հաւատարմու թիւ 'ի վերայ տոհմին արշակունեաց. այլ չընթերսին կո չելով նենգաւ էտ սպանանել զնա։ Ած ինչ հարցանէը Մուշեղ զպատճառն այսպիսի անակնկալ մահուան, Վա րազդատ լռեալ մտոտի ցասմամբ պատասխանի առնէը. "երթ առ Պապ արքայ (որ մեռեալն էր), հարց և տես' թէ ընդէր է այդ „։ Իբրև ասէը քօջն Մուշեղ. "Ի վերայ բազում խոց վատակոյն արեան և քրտան, և սլաքօքն գբերան ջնջելոյ, այս հատուցումն եղև ինձ „, անդէն Բատ անագորուն զնրանն զօր յիւրում աղդէն կրէը' ինքն նոյն հանեալ անցոյց ընդ փողս զօրավարին Մուշեղայ, և 'ի բաց եհան զդլուխս նորա։

Յաւուրս ՟ի. Աբշակայ արքայի որդւոյ Պապայ զօրա վար Հայոց էր Մանուէլ մամիկոնեան, և նա էր գլխաւոր տեսուչ աշխարհին սակս մանկահասակ գոլոյ արքային. և արար մտերիմ սիրելութիւն յոյժ ընդ արքային Պար սից, 'ի ձեռն նորա տալով զաշխարհս Հայոց, որով և սէր բելի եղև յոյժ նմա՝ փառաւորեալ 'ի նմանէ իբրև զեղ բայր իւր։ Մերձաւորն արծրունի մախացեալ ընդ այս ոգւով փառամոլութեանէ, հնարս խորհէր հանել զնա յա չաց թագաւորին, որպէս զի փոխանակ նորա ինքն լցցի սիրելի։ Խորհել խորհեցաւ. հնարս բազում, այլ յայտ է թէ 'ի գերև ել ամենայնին. զի կարի սիրելի էր Մա նուէլ արքային Պարսից, և չէր մարթ վայրապար հնա րիւք զատել զնա 'ի նմանէ։ Ապա եդեալ նա մի միայն հնարս՝ կեղծաւորութեամբ 'ի գլուխս տանել զօր խորհերին։ Աչս այն ախտ է յոյժ գժաւարին է անձնասպան լինել արանց մեծամեծաց, զի մի 'ի ընթերցոյ պատրիցին. "Չի իբրև նա յեկաւ, ասէ Խուզանդ է. 38. 'ի միա մուէնէ զօրավարին Մանուէլի, սկսաւ նախ հպատակու թեամբ զմիտն գողանալ. նախ մտերմութեամբ հաձել զմիտս նո րա. ապա զանձն իւր հոգածու և խնամակալ երևեցու-

ցանէր նմա. ապա եհէաւ գուշակութիւն առնէր նմա սուա
՝ի քմոյ իւրոց, Թէ գիտասջիր դու ո՞ Մանուէլ, զի դէս-
պան լեալ է յարքային Պարսից, յաղագս քո բերեալ ու-
նին հրաման առ Սուրէնն, զի զքեզ կալցին կապեցեն.
կամ աստէն սպանցեն, կամ ոտիւք և ձեռաք և պարա-
նոցաւ կապելով մեծաւ զգուշութիւն տանել առ Թագա-
ւորն Պարսից»։ Մանուէլ իբրև լուաւ զայս ամենայն
զարմացաւ Թէ չիք նմա յանցուցեալ առ Պարսիկս, եր
աղագաւ այս անգք անցանիցեն ընդ նա։ Եւ զարմա-
նալոյ պատճառաք նորա այն էին. քանզի գիտէր Թէ բա-
րեկամութիւն նորա ընդ Պարսից ոչ կեղծակերծ էին էր, և
Թէ Սուրէն իբրև պատգամաւոր խաղաղութեան գայր առ նա
՝ի դրանէն Պարսից, բերեալ ընդ իւր և հանդերձս Թագա-
ւորական Մանուէլի։ Այսու ամենայնիւ հաւատացեալ
կեղծաւորին բանից Մերուժանայ՝ զօր բազումս առ ինքն
կուտեաց, յարձակեցաւ ՝ի վերայ Սուրէնայ և կոտորեաց
զզօրս նորա։ Մերուժան չարեացապարտ իբրև այսպէս
պատրեր զՄանուէլ, փութայր ապա ընթանալ առ արբ-
քայն Պարսից, անդ ամբաստան լինէր զՄանուէլէ, զայն
ամենայն չարիս զոր ինքն եւս առնէր ՝ի վերայ նորին ար-
կանելով։ Ցետ լինձ, քանի Ճարտարք էին ՝ի բանսարկու-
Թէ ՝ի ժամանակին. քանզի Մերուժան էարկ զանհաւա
Թ-հնամութիւն ընդ Հայս և ընդ Պարսս՝ պատճառ եղեալ
մեծի խռովութիւն և անբաւ արեանհեղութեանց յերկուց
կողմանց։

Յորժամ ՝ի բաժինն Յունաց նստէր Ք. Աբշակ Թա-
գաւոր, և ՝ի բաժինն Պարսից Ք. Խոսրով, Սահակ աս-
պետ սպարապետ էր առ Աբշակայ, և քաջութիւն նորա
ծանուցեալ ամենեցուն. բայց ինքն Աբշակ ոչ զգուշացաւ
ունկնդիր լինել բանսարկութեց, նախ ինքն իւրոյ. «Ընդ
որում խեԹի Հայեր Աբշակ, ասէ Խորենացին Ք. 43. Հա-
նապազ հրապուրեալ ՝ի կնոջէն իւրմէ, որպէս Թէ զարգ
ալքուհական ունել նմա ՝ի փեսայէն իւրմէ Շապհեայ»։
Եւ երկրորդ՝ ազգականացն. «Յանխամ եղիւ, ասէ, քսուե
սուտ զնմանէ յազգականաց իւրոց ՝ի Սպեր գահաւէժ. վասն
որոյ չարչարեաց զնա Աբշակ արքայ»։ Այսու օրինակաւ
նեղեալ Սահակ յԱբշակայ՝ փախուցեալ անկաւ առ Խոս-
րով, և եղև նորա սպարապետ. ապա զօրաք Խոսրովայ էին
՝ի վերայ զօրացն Աբշակայ, և առեալ ՝ի ձեռաց նոցա
զգանձ Աբշակայ էած առ Խոսրով։ Այս դիպուածք ՝ի
քսուեԹէ յառաջացեալ՝ եղև պատճառ սաստիկ պատե-

բազմի ընդ մէջ երկուց համազգի թագաւորային Աբշակայ և խոսրովայ ։

Զի քանի մեծամեծ խռովութիւնք և կոտորածք եղեն յետ արշաւանացն Բուղայի ՚ի բանսարկութենէ ուրացեալն Վասակայ արծրունեաց ՚ի դուռն ամենապետին զամենայնի նախարարացն Հայոց, մինաւանդ զքաջասիրտն Սահակայ արծրունեաց, Զոհագործն գրէ Թոմա արծրունի ք. 6։

Իսկ այն ինչ հազիւ իշխանքն մեր դարձեալ ՚ի գերուէ Բուղայի կային խաղաղացեալք, և ահա անտս այս չարաբաստ վրդովեաց զիշխանս Վասպուրականի, զորմէ ասէ նոյն պատմիչն. "Մինչ կային իշխանքն ՚ի մի միաբանութենէ առանց կարծեաց կասկածանաց ՚ի հպատակութենէ եղեալ յարքունեաւտ հազարապետին որդւոյն Հաղթի, և զիւրաքանչիւրսն սիրոյն շաղկապ ՚ի միասին յօդեալ սնդեալ անբաք պահելին, բանսարկուք ոմանք հրապոյրս պղտորս քսութենէ ածելին տանելին ՚ի միոջէն առ միւսն. որպէս թէ զչարիս իրերաց առ հազարապետին խորհելնիւթեալ յայտ ածելին, և զպատճառն զիմիամբք արկանելին ՚ի գաղտնի քրթմնջելով ,, ։ ք. 2։

Ի նմին ժամանակի և այլ բանսարկութենէ լինէր առ Դերանիկ իշխանն Աբծրունեաց զԱշոտոյ կուրապաղատէն Տարօնոյ. յորմէ և հետևանք չարք ըստ այսմ օրինակի. " Զմնաւ ածեալ, ասէ, զքսութենէն զոր զեկուցին զԱշոտոյ կուրապաղատէ առ Դերանիկ, եթէ ստուէր և եթէ չէմարտութենէ մեզ չէ յայտ. բայց հրաման ետ Դերանիկն Գրիգորի հարազատի իւրոյ ՚ի նոյն տանէ արծրունեայ, և կալաւ զնա և ետ ՚ի յամուրսն Սևանն, և հրամայեաց Հաւանական քեռորդւոյ իւրոյ պահել զնա յընդարձակի ,, ։ Բազուկք եկին առ Դերանիկն՝ ընդ որս և Դերոգ կաթողիկոս՝ առ ՚ի արձակել զԱշոտ, բայց չեղև ինչ օգուտ. զոյն տեսեալ կուրապաղատն Աշոտ, և ինքն ըստկսաւ բանսարկու լինել ՚ի մէջ Դերանկին և Հաւանայ քեռորդւոյ նորա, առ ՚ի զերծանիլ յարգելանացն. " Այնուհետև սկսաւ, ասէ, կուրապաղատն արկանել բանս խարդախուէ ՚ի մէջ Դերանկին և Հաւանայ, որ էր որդի քեռն Դերանկին, որպես թէ ոչ ուղիղ նայի ընդ նա Դերանկին, այլ թէ և հանել ՚ի նմանէ զամրոցն և զաշխարհն նկրտէ. բազում անգամ ասէ և իմ ստուգեալ է զայդ ՚ի հաւատարմոց խորհրդականացն նորա ,, ։ Որում ոչն կրնդկիր եղեալ Հաւան, կեղծաւորեցաւ հիւանդանալ մինչ հարեր ՚ի նոյն իսկ յամրոցին Սևանայ. յոյր սակս հարկ

եղև Դերանիկին գալ յայցելութիւն նախ քան զմեռանել նորա. իբրև եկին՝ կալաւ Հասան զԴերանիկին և եդ ի բանտի. իսկ զԱշոտ արձակեաց։ Յայնժամ աղերս մատուց ցեալ Աշոտ իշխանաց իշխանն և Դէորգ կաթողիկոս՝ հաւիւ զերծուցին զԴերանիկին ի ձեռաց Հասանայ։ Իսկ յետ զերծանելոյ նորա, առ նա ինքն հասանէր այլ քսութիւն յոմանց. յորմէ և նա ստեալ երդմանն՝ կալաւ զՀասան և եդ ի բանտի ի Նկան բերդի, հանեալ ի նմանէ զաուն և զատացուածս։ Ետ այսորիկ Դերանիկին խոստացաւ Հասանայ դարձուցանել ի նա զամրոցն Սևան և զաշխարհ իւր, միայն թէ զԳագիկ Ապուսրուան առ նա ինքն ածցէ. գնաց Հասան առ Գագիկ. և զառաջին զիւր քրմութիւնն զԴերանիկէնն նմա հաւատարմացուցեալ և ըստ օրինակի առաջնոյ և աստ ևս կերդծաւորեալ զհիւանդութիւն, այն ինչ գիչերայն իբրև ի քուն լինէր Գագիկ յանհոգս, ետ կապել երկաթի կապանօք և մատնել ի ձեռս Դերանկին։ Ուր այսչափ քսութիւնք, բանսարկութիւնք և դաւաճանութիւնք յաճախեալ կան ի մէջ համազգեաց և ազգականաց՝ զիարդ մարթ է անգամնօր շինուել առնուլ աշխարհին։

Որչափ չար է բանսարկուին, նոյնչափ անմտութիւն մեծ է ունկնդիր լինել նմին առանց քննելոյ. որում և վկայէ Յովհաննէս կաթողիկոս ի պատմէն, թէ "Հոյակապ մեծ իշխանն Սահակ որ որդիացուցեալն էր իւր փեսայութիւնք զԹագաւորին Աշոտ (երկրորդ), հրապուրեալ ի բանս Թոռլաց ոմանց չարախոսից, ընկալցէ զնմաստուհին իւր մեծ, և ապա սկսաւ չարիս ինն նենգութիւն իւրոյ օտար թշնամւոյ,,։ Աչքսու ախտացաւ և Վեհան Սարգիս, որ ի միոյ կողմանէ գրգռէր զԳագիկ աբբայ զվերջինն Թագաւոր Բագրատունեաց, և տայր հանել չաւաց նորա զԳրիգոր մագիստրոս, զՊետրոս կաթողիկոս և զնախարարս. և ա՛ պա չայլմէ կողմանէ գրգռէր զկայսրն Մոնոմախոս, ծա՛ նուցանելով զերկպառակութիւն նախարարաց զոր ինքն էր արկեալ։ Ի վեր անդր զքանսարկութիւն Բատայ սահառուն և զմերուժանայ չառաչ բերաք և զայլոց ոմանց. սակայն ոչ եթէ թեթև ինչ չանցանաք էին Վարազգատայ՝ Բատայ առացելոցն իբրև անվրէպ ճշմարտուե հաւատալ և զանձերն զմուշեղ մահու չարաւ կորուսանել. զի թէ Թագաւոր էր Վարազգատ, ուր էին նորա ատեանն քննուե և օրէնք դատաստանի. զի ոչ եթէ դուշաքեայ ինչ է արեանն դատաստան՝ զի առանց քննելոյ դատիցէ։

Օ այսոսիկ լուեալ իմաստուն առաջնորդաց փոյթ կալցին մեծաւ արթնութիւն ընտրել զլաւս յարանց ի չա բախօսաց, մի վայրապար ումեք իցէ անսալ բանսարկուի, այլ մանաւանդ լինել ականատես և ականջալուր իրաց առնային. որպէս քաջ զօրավարն Մուշեղ խրատ տայր Պապայ արքայի, որ յետ մեծի յաղթութեան ի Ձիրաւ գաշտի՝ կամէր սպանանել զնա հաւատալով քսուէ բանսարկուից. այլ Մուշեղ զօրաւոր պատճառաբք ցրեալ զանսարկուութիւնս, և զինուցեալ զսրտմտութիւն Պապայ, ասէ. "Ես յայսմհետէ եղիցի զարիւն իմ ի վերայ Հայոց անխնայ ընդդէմ թշնամեաց. բայց դու ոմ թագաւոր աչքդ քո տես, և ականջդ քո լուր զնենգութիւն մարդկան, և ընտրեա զլաւն ի վատթարէն և զվատատակաւորն ի վատ ազգէն և զարիւն ի չարէն, և ինասցէ յաղղութիւն երկիրս Հայոց"։ Եւ յիրաւի. զի չանայեալ և ընտրել զայր անկեղծ ի նենգաւորաց, զչմարիտ բարեկամ յոխերիմ թշնամւոյ՝ անժխտելի պարտք են ամենայն իշխանաց, և պատճառաբ զարգանալոյ պետութեան։

Դ. Մաշտոցեան, Դաւաճանութիւն և Նենգաւորութիւն։

Յորժամ չյաջողի նախանձոտն քսութեամբ ի կամս չարութիւն իւրոյ, ինքնին միջամուխ լինի մասնել, նենգաւորել և դաւաճանութիւն հնարել։ Ահ են պատմագիրք մեր այսպիսի դիպուածովք, յորոց զոմանս կիշատակեցուք։

Մաժան որդի Ը. Ապրաշիսի եր քրմապետ, իսկ Տիրան եղբայր նորա սպարապետ. սա խորհեցաւ ի մտի, ասէ խորենացին Ը. 55. "զի ինքն լիցի քրմապետ՝ միանգամայն և սպարապետ" փոխանակ եղբօր իւրոյ։ Ունէր և այլ ինն քէն ի սրտի ի վերայ նորին Տիրանայ և Ապտաւազդայ եղբարց իւրոց. որովհետև պատճառք եղեն գժգոհելոյ և հեռանալոյ Սմբատայ մնուցչին իւրոյ. վասն այսորիկ ինքնին գնաց առ Տրայանոս կայսր՝ որ ընդ Ասորիս անցանէր յայնժամ, "մատնութիւն զեղբարցն առներ. գիտեա ասէ, արքայ, եթէ զԱրտաւազդ և զՏիրան վտարանդիս ոչ արասցես... Հարկքն անաչխատ ի քեզ ոչ եկեսցեն"։ Ահա եր լոկ զպատրատութիւն մատնողին. բայց իսկ և իսկ յայտնի եղև թէ զինչ խոտոր կայցէ ընդ հաւանչեցիս և ընդ մերմն ի խոհեմանէ. քանզի Տրայանոս ոչինչ աւնին մատուցեալ միւսմ մատնչի, և ոչ ի հարկսն

ագահեալ, ձեռնուհաս գարձուցանէ զմաժան, իակ արդիւնք ամբաստանութեանն նորա ՚ի կորուստ իւր չքնեցաւ. քանզի Աբտաւազդ և Տիրան իրագէկ լեալ այսմ, և ՚ի գահանի սպանեալ, յանկարծ սպանին զմաժան։

Ի գնալ մեծին Տրդատայ ՚ի Հռոմ՝ չէն լիւր զարմանք եթէ օտար ազգ, զոր օրինակ էր Շապուհ Պարսից թագաւոր՝ գրգռեալ և զհիւսիսային ազգսն զամենայն՝ որք նորա պէս էին ազգք օտարք և պատրաստք ՚ի յաւիտենական թիկ՝ յարձակեցան յաշխարհս Հայոց. բայց զարմանք այն է՝ եթէ լեցի այդ ամենայն ՚ի նենգելոյ ուրուն ՚ի մեծամեծաց Հայոց՝ որպիսի ոք Աղձնեաց բդեշխն էր, որում՝ անկ էր յարժամ պաշտպանել զերկիրն. բայց լուր Ջենոբեայ որ յետ աւարտելոյ զպատմութեան այնր պատերազմին ասէ ՚ի Թղթ. 49. "Ա յս ամենայն գրգռեցաւ ՚ի գալ նոցա ՚ի Հռոմ. բայց եղև ՚ի ձեռն նենգաւոր իշխանին Աղձնեաց.. Հրամայեաց նոցա (Տրդատ) ունել զիշխանն Աղձնեաց. և ածեալ առաջի, կամէր ծայրատել զնոս և զձեռս նորա, զոր արգել սուրբն Գրիգոր ՚ի պատուհասիցն. բայց ՚ի պատուոյն մերժել հրամայեաց, և վարել ՚ի գաւառէն Հայոց "։ Լուր և խորհնացւոյն որ վասն այլոյ իշխանի գրէ. 84. Թէ յայնմ խուովայոյզ ժամանակին Տրդատայ փոխանակ օգնելոյ՝ "ի սորին (Շապհոյ) բանս հրապուրեալ Սղոզկ նահապետ ազգին Սկկունեաց, զինքեանն սպանանէ զվէրայ զձերացեալն Օտայ... և ընդդիմացեալ Թագաւորին (Տրդատայ) աղմկէր զերկիրն "։ մինչև սպանաւ ինքն և տոհմն իւր։

Նմանիսկ էր զաւանութեանն Դատաբենայ նահապետին Բզնունեաց, զոր փոքրն խոսրովն. իբրև զիւր հաւատարիմ առաքեաց զօրաք ընդդէմ կալ Պարսից. այլ Դատաբեն փոխանակ զտէր իւր պաշտպանելոյ՝ նոցա ՚ի կողմն Թշնամեաց. և ՚ի դարանի եդեալ զզօրս նոցա՝ յանկարծ ետ յարձակիլ ՚ի վերայ զօրացն Հայոց և կոտորել. և որպէս Թէ չէր այս բաւական՝ ինքն ևս պարսկական զօրաք խաղայր ՚ի վերայ Թագաւորին իւրոյ Խոսրովու։ Ընդ լսելն զայս, ասէ Բուզանդ. 8. Վայ և Վահան ամաուտնի զօրաք Հայոց ՚ի վերայ հասեալ կալան զանօրէնն Դատաբեն, և իբրև մանիչ և դաւաճան քարկոծեցին։ Սմին նման էր և մանուէլ Փիսակայ՝ զորմէ պատմեցաք ՚ի վերոյ։

Նիւրաւ էր և մանուէլ Սամուէլի մամիկոնէից զոր արար յաւուրս. Խոսրովու արքայի. քանզի Յոյնք ՚ի

մեռանել ՚ի . Աբշակայ , ոչ ևս կայուկին Թագաւոր ՚ի բաժինին իւրեանց . զայն տեսեալ Կազաւոն կամաւրա-
կան՝ որ գլուխ էր ՚ի նախարարսն որ անդն կային՝ գրեաց
Թուղթ առ Խոսրով ՚ի . գալ ՚ի բաժինն և յերկիր նորա .
բայց խոստումն պահանջելով ՚ի նմանէ երգումամբ վասն
երից խնդրոց . յորոց մին էր՝ Թափել զանձինս իւրեանց ՚ի
ձեռաց կայսեր Յունաց , Թէ և պատերազմիմք ՚ի վերայ
յառնելը . Խոսրով պատասխանի գրեաց խոստանալով զա-
մենայն . որով ամենայն նախարարք էլեալ ՚ի բաժնէն Յու-
նաց եկին ՚ի բաժինն Պարսից , ուր էր Խոսրով . բայց մին
՚ի նախարարաց Սամուէլ մամիկոնեան երկինքեր գալ ՚ի բա-
ժինն տերունէ Պարսից , զի սպանեալ էր զՀայր իւր զՎաթ-
դան վասն ուրանալոյ նորա զքրիստոնէութեն . նոյնպէս և
զմայր իւր Տաճատուհի . և վասն այսորիկ կասկածէր մի
գուցէ եղբարք մեր իւրոյ որք էին ՚ի տոհմէն Աբծրուա-
նեաց՝ մանաւանդ զինքն ՚ի ձեռս Պարսից առ վրէժիմբն
դրութեն . զայս խորհելով էլ և գնաց առ կայսրն Աբկադ .
Այս արարք սորա՝ քանզի զօգուտ անձին խորհեցաւ
առանց մեռսու այլոց , անստգամանելի է . բայց յոր անար-
դութիւն եհաս յորժամ՝ զօգուտ իւր խորհելով արար
այնպիսի դաւաճանութեն և մահապարտ որ օտարախորհ
Թշնամւոյ էր գործ . զի առ ՚ի հաճոյ լինել յայս կայսեր ,
ասէ խորհեցաւն , “ Ձինքն ըմբռնեալ զթուղթն խոսրովու ,
և զպատձէն Թղթոց նախարարացն ,, , այսպէս գնաց առ
կայսրն , որով զՀամբէն զազգ Հայոց ատելի կացոյց առա-
ջի կայսեր և ազգին նորա : Աբկադէոս արդարև բարի ա-
րար վասն այսր իրաց՝ Սամուէլի . բայց հելլէն գրով
Թարգմանեալ զթուղթն եդ ՚ի պահեստի ՚ի գիւանի իւ-
րում, “զի պահեցին , ասէ , յիշատակք ազգաց ապստամ
բողաց . որ կայ մինչև ցայսօր ,, . Ը . 48 :

Նոյ զինքն կարի կալ յոտին Թագաւորութեն յորժամ
մանուիչք ՚ի տանէ և յընտանեաց յառնէն . զի ՚ի միոյ կող-
մանէ Սամուէլ այս զխոսրով արքայ մանեայն Աբկադեայ
կայսեր . յայլմէ կողմանէ նախարարք միահամուռ հա-
ւաքեալ մանեան զնա ինքն զխոսրով զթագաւորն իւրեանց
Շապհոյ Պարսից արքային : Զի այս խոսրով ինդրեաց յԱբ-
կադեայ կայսերէ յինքն հաւատալ զմանն Հայոց որ ընդ
տերութեամբ էր Յունաց , խոստացեալ տալ նմա հարկս , որ-
պէս և եղև իսկ . այլ Շապուհ ընդ ակամբ Հայեր ՚ի խոս-
րով վասն այսպիսի բարեկամութեն նորա ընդ կայսեր , մինչև
սպառնալիս ևս յղել առ նա . իսկ խոսրով ցասուցեալ ընդ

այս՝ պատգամ առ կայսր յղէ խոստանալով զՀամբիկն զաշխարհ Հայոց առ նա ինքն դարձուցանել, եթէ օգնեսցէ զօրօք ընդդէմ Շապհոյ։ Յայսմ պատգամաւորութիւնէ ոչինչ միաս՝ի վեր երևեր, եթէ թագուն եր միացեալ բանն. բայց դու տես քանի՛ դժնդակ դաւաճանութիւնէ է գործ՝ յորժամ ոչ օտարք՝ այլ նոյն իսկ ներքին նախարարք խոսրովոյս երթեալ առ Շապուհ՝ի վեր Հանէն զգաստ նմա, և հրապուրեն զրգռեն զնա ընկենուլ զխոսրով և պատժել. Ո՛վ արքայդ Շապուհ, ասեն, " խոսրով զինքն կարծեցուցանէ քեզ սիրելի և հնազանդ. և այս ամենայն յուշակութիւն նորա առ քեզ ստութիւն և ոչ ստուգութիւն. վասն զի գաղտ ուխտ իւր և խորհուրդ ընդ Թագաւորին Յունաց է, և միշտ հրովարտակօք և երիվեկ պատգամաւորօք խօսի ընդ նմա՝ի խաղաղութիւն. բայց դուք որպէս իմանայք հատուցանել նմա ըստ նորա խաբեութեան՝ զայն գուք ոչ իշխէք ". Ագաթ. 23։ եթէ օտարազգի որ Թշնամի չարախօսէր զայդոսիկ, չէր ինչ զարմանք. այլ աստ նոքին իսկ համազգիքն են՝ նախարարքն՝ ամուր ապաւէն և հիմունք պետութիւնէ նորա. որոց փոխանակ արեամբ չափ ձգնելոյ՝ի փառս և՝ի պայծառութիւն պետութիւնէ իւրեանց, դաւաճանեն զիաւորս իւրեանց՝ վնասակարս և երդմնազանց զնա ցուցանելով Թշնամւոյ, կարծեալ այնպէս թէ մեծ ինչ առնիցեն; և բարւոյ պատճառաբ լինիցին՝։ Որպէս և ինքն պատմագիրն պարսաւէ զանմտութիւն նոցա ասելով. " Եւ կարծէին քանսարկուքն ըստ իւրեանց անմիտ խորհրդոյն կորուսանել զնա, և անձանց և աշխարհի բարոյ իմիք չհնութիւնէ լինել պատճառ. և ոչ գիտէին եթէ տակաւին՝ի մայրսն և՝ի չար ծառայութիւնն վասն մեղաց իւրեանց մատնեալ լինին Յունաց ծոց ". Շապուհ տեսեալ զի որում ինքն տեղեակ՝ նախապարզ աշխարհին աղաչեն քառնալ զխոսրով արքայ, իբրև դուքն ունկնդիր լեալ չարախօսութիւնէ նոցա, " Հրաման տայր վաղվաղակի հրովարտակաւ զխոսրով՝ի գուռն կոչել... վաղվաղակի մերժեալ ընկենոյր զխոսրով յիշխանութիւնէ իւրոյ Թագաւորութեանն. և ուխտեր այլ ոչ ևս տեսանել զաշխարհն Հայոց ".

Այս այսպէս մնանութիւնէ մերոց համազգեաց էր պատճառ զի բարձաւ Թագաւորութիւնն մեր, և՝ի դերև եկ

1 Ա՛յսու օրինակաւ մտանելցին նաև խարազքն և զՆրոտաչիր վերջին Թագաւորն Պարսից։ զորս Ագաթանգեղոս. զոմն տես՝ի գլուխն Կաւատվարութեն։

ամենայն գործք քաջութեանց մերոց հաւատարիմ իշ-
խանաց։ Յորժամ Վահան մամիկոնեան սերտ սիրով և
երդմամբ միաբանութեի առնէր ընդ նախարարսն քաջաւ-
ընդդէմ կալոյ Պաբպից, «Մի սին, ասէ Ղազար 209. ան-
դէն և անդ ի նախարարացն Հայոց՝ որում անուն էր Վա-
դայ Շաւուհ՝ ի տոհմէն ամատունեաց՝ երեսաւ ի խորհրդե-
նէ միաբանութեանն... գնաց ի նմին գիշերի և պատմեաց
մարզպանին և այլոցն ամենեցուն զխորհուրդ միաբանու-
թեանն»։ Թէ վինչ չարիք գՀետ գային յայսպիսի մատ-
նութենէ, յայտնի է ամենեցուն. յորմէ ոչինչ օգուտ կա-
րէին յառաջ տանել։

Ինչպանելի է և նենգութենէ և դաւաճանութենէ երկուց իշ-
խանաց Հայոց ընդդէմ նորին Վահանայ յայնմ պահու՝
յորում Հաղիւ էր կարացեալ քանի մի զօրս Ժողովել առ
ի ընդդէմ կալ Պարսից Թշնամեաց։ Քանզի մինչդեռ Վա-
հան մերձենայր իւրովք սակաւ զօրօք յԱրեւմտ քաղաք,
սոքա երկոքին իշխանքն ի համազգեաց գոլով և ոչ ի
Թշնամեաց, «յանկարծակի, ասէ Ղազար 221. յանգգաս-
սից եկեալ հասանէին ի վերայ նոցա, իշխանն Աղձեաց
ցեաց Սեւուկ անուն և իշխանն Մոկաց Յոհան անուն
բազում պղծութիւով ընդ առաւօտն ծագել. և սոցա (այս-
ինքն էր որոց ընդ Վահանայ էին) զգացեալք, կէսքն զի-
նեալք և կէսքն Թէպէտ անպատրաստք էին, այլ օգնուք
բարձրելոյն քաջալերեալք՝ հարկանէին ի դիմի աներ-
կիւղապէս»։

Գոհան է լսել և զմտանութենէն Աշոտոյ վասպուրականի,
որ մի էր յերևելի քաջազանց Հայոց։ Սա ի նկան բերդին
ամրացեալ ի մոմ եգեալ էր միշտ զգէմ ունել զօրաց Բու-
զայի՝ որք պաշարեալ մնրանչէին, այլ ոչինչ կարէին առ-
նել վասն ամրութենէն. իսկ նախարարքն իւր որ ի բերդին՝
զուրկ ամենևին յերկայնամտելոյ՝ ի նմին ժամանակի խոր-
հուրդ առնեն գազանի և գիր առաքեն առ Բուզայ,
կապել զԱշոտ և մատնել ի ձեռս նորա։ Այսմ իրազեկ
լեալ Աշոտոյ, և տեսեալ թէ Թշնամիք ի նեղբուստ են,
ինքնին գնաց առ Բուզայ, և ի նոյն գուբ կորստեան ան-
կաւ, յորում և այլ նախարարքն. զորմէ ընդարձակ գրե
Թոմա արծրունի։

Յաւագին է յոյժ ի պատմագրութենէ Թոմայի արծրու-
նւոյ ընթեռնուլն և զաւարտարար մատնութենէ Դերանկին
արծրունւոյ միայն ի պատճառս նախանձու. զոր կոչէ զ.
12. «Բարձրանչան յաղթութիւք հռչակաւոր և երևելի

'ի Ա֊ՂՋ Հայաստանեայց այր ,, . որ և փեսայացեալ էր Սո֊
փիայ երևելի տիկնոջ գոտեր ։ Աշոտոյ Թագաւորի ։
Բայց ոչ միայն պլաղդիք , այլ նաև ումանք 'ի հայկազնեայց
ոխս մնասնաց կրէին 'ի սիրտս իւրեանց . և ազդ առնե֊
լով միանգամ խորհուրդս հնարէին գաղտնի գաւաձանուքն
զնա կորուսանել . զի զանգիտեալ յոյժ յահաւոր զօրուէ
նորա յայտնի ինչ առնել ոչ կարէին ։ Իսկ Դերանկին ան֊
գէտ լեալ ընաւ այսմ , և ոչ հետազօտեալ զընութիւն և զը֊
բարս իւրոց ընթերակայից , զնին 'ի նոցունց Գագիկ ա֊
նուն ազգական իւր 'ի պատիւ ամբարձեալ զօրագլուխ
կացուցանէր 'ի կողնի Գարսից . " Ա՜լ֊֊֊ դաւօղք ումանք
Աղուստանականաւ , ասէ , նմանապէս և ոքք 'ի հայաստանին
էին տանէ , որոց մանաւանդ էր և Գագիկ այս ազգա֊
տոմբ ,, , գտանէն զնին այլազգի յոյժ սիրելի Դերանկինի՝
զօրդի Ապուսմարայ . զսա գրգռեցին դաւով սպանանել
զԴերանկին . որում "և այլք ումանք հայաստանեայք ինչս
և պատիւս խոստանային ,, ։ Եւ այնպէս սորա՝ խաբեսութիւն
լինչն կոչեալ զԴերանկին , գիրկս ըզարանոցաւն արկեալ
սպան 'ի ձեռն բազմութիւն ուժեղ արանց զօր 'ի ծածուկ
ունէր ։

Իսկ յընթեռնուլն զպատմութիւն ժամանակի ի֊ Աշոտոյ
Թագաւորի՝ յամենայն կողմանց լսելք դաւաձանութիւն և
նենգութիւն կուտեալ 'ի գլուխ նորա առ 'ի կորուսանել
զնա . որում գվախաւոր թշնամի եկաց հօրեղբօրորդի իւր
Աշոտ , և հարազատ եղբայր իւր Աբաս , որպէս պատմէ
Յովհաննէս կաթողիկոս՝ թէ Թագաւորն 'ի գաղն իւր 'ի
Շիրակ , " առ ինքն կոչէ զեղբայր իւր Աբաս՝ զոր իշխան
իշխանաց էր կացուցեալ , և զիշխանն Վրաց Տուրդէն զնա֊
րսն աներ , չև աս գիտեալ առ 'ի նոցանէն էր նմա ներ֊
թեալ դաւաձանութիւն չարահնութիւն նախանձու . . . Իսկ
նոցա 'ի ձեռն պատրուակի սիրոյ զգաւեէն Թագաւորին
խորհեալ և հնարս որոգայթից նիրթեալ , յանկարծա֊
կի 'ի վերայ յարձակէին բաղխել զնա անյայտաբար . . . և
հազիւ 'ի խորդանական որսորդութեան Ձողպարեալ (Ա֊
շոտ) , չուէ գնայ յԱւտի գաւառ ,, ։ Յայնմհետէ անկաս
'ի Ա֊ՂՋ նոցա թշնամութիւն անհնարին , յորժամ արաքացին
շրջէր հնարեր սպանանել զմեծամեծս աշխարհիս մերոյ ,
և յինքն գրաւել զաշխարհն ։ Ա՜լ ինն դաւաձանութիւն
'ի վեր եղ 'ի կողմանց Վաչագրայ . " Սուտգեալ մերկա֊
ցեալ երևեր , ասէ , ապստամբութիւն քանանիտ գնեձու֊
նոյն Վասակայ , որում հաւատացեալ եր պահպանութիւն

ամբոցին Շամչուտէի (որ ի Գուգարս), և ի գերև ելա-
նէր նորայն խոկացեալ գաւաճանութիւն ,,՝՝, Եւ այլ
դաւաճանութենէ և մանուածիւն ի Բիւրական ամբոցին.
որպ զնակիչք մինդեռ քաջուքէք և միաբանութէք մարտին
չէին ընդդէմ Թշնամեաց արաքացւոց, մի ոմն ի նոցունց
իակ զնակաց մանեքը զերդն ի ձեռս նոցա. Ա՛յս ամե-
նայն մանուածիւք և դաւաճանութիւք պատճառաք եղեն ի
գերև հանելոյ զայն ամենայն քաջուքիս զորս գործեաց ի-
Աշոտ. որ զի հավիս կարաց սանձահարել զնեքբին Թշնա-
միս իւր զմերձաւորս, և զիարդ կարեր ժամանել ի վա-
նել զարտաքին Թշնամին զարաքացիս։

( )տար և անագորուն սրտի գործ եր և մանուածիւնն
այն, զորմէ պատմէ Լաստիվերտցի Ա. Թէ ի մերձենալ
մահուն Կոստանդինի Մոնոմախ կայսեր՝ կոչեաց զԿիրա-
կոս զոմն երէց դպան կաթողիկոսին. ետ զնամակն Յոհան-
նու Թագաւորին Յորում խոստանայր տալ զԱնի ի ձեռս
կայսեր։ Զայս Թուղթ տուեալ ի ձեռս Կիրակոսի, պա-
տուիրեաց անդրէն դարձուցանել առ Թագաւորն Հայոց
ասելով. "Ա՛ռ զքիր քո, և տուր զԹագաւորութիդ որ-
դւոյ քո, և որդի քո որդւոց իւրեանց մինչև յաւիտեան.
և ինքն (կայսրն) առեալ զտաս իւր ի մահճէն վաղվաղե-
ցաւ։ Իակ նորա (Կիրակոսի) առեալ զնամակն պա-
հեաց առ իւր մինչև ի ժամանակս Մ իխայելի Թագաւո-
րութենէն, և վաճառեալ նմա՝ առ գանձ բազում"։ Ընդ որ
առ չժուժել սրտին աղաղակէ պատմաբանն. "Ո՛վ դառն
վաճառուն այնորիկ. քանի՞ արեանց զանձն պարտական կա-
ցոյց"։

Յ[ԱՀ դժնդակագոյն ևս էր քան զայդ՝ դաւաճանութէն
և մանուածէն Վեստն Սարգսի, զորմէ ասէ նոյն ինքն Լաս-
տիվերտցի ի Ա. "Իակ մի ոմն ի գլխաւոր ազատացն Հայոց
Սարգիս անուն՝ եդ շուք անձինն Թագաւորիս ի վերայ
տանն Հիւրակայ, և որ շուրջ զնովաւ գաւառք. զի զամե-
նայն գանձս գտեալ ի տան Թագաւորին Յովանիսի յինքն
ժողովեաց. վասն զի ի մահուան նորա նա էր հոգաբար-
ձու նմա . . . իսկ Սարգիս իբրև ետես զեղեալսն, զգանձս
Թագաւորութեն առեալ ի ներքին ամբարն մտանէ յան-
առն Անի . . . գարձեալ խորհի զխորհուրդ նանրութէն,

1 Զայլ և այլ ապստամբութիւնս և զթշնամութիւնս զորս ցուցին Հայկազունք մեր ընդդէմ այսմ թ. Աշոտոյ, յիշատակեալ է մեր ի գլուխն Կատա-
վարութէն. տես անդ։

տալ զոր ունէր ընդ ձեռամբ Հոռոմոց, և ելանել առ նա սա ,, ։ Իսկ յորժամ նախարարքը Թագաւորեցուցին զԴագիկ, յայնժամ Սարգիս այս դաւաճան Թէլադիր լինէր Մոմոմախ կայսեր կոչել զԴագիկ ի Բիւզանդիա, ծանուցանելով նմա՝ Թէ յայնժամ դիւրանայ յոյժ մատնել զԱնի ի ձեռս քո ։ Դագիկ ոչ կամէր քնաւ անասել Հրաւիրանաց կայսեր և գնալ անդ, երկուցեալ ի դաւաճանութենէ նախարարաց. այլ Սարգիս առ վստահ կացուցանելոյ գնա, ասէ Մատթէոս զի. յարիւն կենարարին Թացեալ զգրիչն՝ այնպէս զերդուն գրէր, ոչինչ ընտս լինել ի գնալոյ նորա ի Բիւզանդիա ի կոչումն կայսեր ։ Իսկ յետ գնալոյ Դագկայ՝ ինքն դաւաճանն իւրովք համախոհիւք առաքեր առ կայսրն զքառասուն բանալիս Անւոյ, գրելով առ նա, Թէ Անի և ամենայն արևելեք քեզ տուեալ է ։

Վասն այս արամոց անպիտանեաց ոչ երբեք պակասեաց յազգի մերում. քանզի և ի յետին ժամանակս ի մետասանեերորդ դարուն տեսանեմք դիպուածս աղետալիս. զի յայնմ ժամանակի ի ջրբորդ Հայս գտանեին հայկազունս իշխանաք, յորս երևելի էին որդիք Հաբէլի ուրումն՝ կոչեցեալ Հաթպիկ, որ ըստ Մատթէոսի Ճի. էր այր քաջ և հզօր. և միւս որդիքն Դաւիթ և Լևոն և Կոստանդին։ Զոր ցունց, ասէ, և զայլոց "փառաւոր իշխանացն Հայոց որք ի գաւառսն Պաղնոյ բնակեալ կային,, չարաչօս եղեն առ Մոմոմախ կայսր՝ Թէ կամին ապստամբել ի քէն ։ կայսրն առաքեաց զզօրապետ ոմն Պետրոս անուն՝ որ առանց քննելոյ սկսաւ հարկանել զերկիրն և ապականել։ Իշխանք Հայոց ի մի ժողովեալ խորհուրդ արարին զանխուսել ի նմանէ՝ մի ինչ կռուել ընդ նմա, այլ իւրաքանչիւրոցդ յիւրեանց բերդին նստել ամրանալ մինչև ծանուսցեն կայսեր զստուերն ամբաստանուելն, երդուեալ վասն այսր ամենեցունց միաբան. բայց մի ոմն ի միաբանելոցն Թոռոսակ անուն տէրն Թլայաղոյ առ ոմն հարեալ զերդումն իւր՝ ծանոյց մատնելով զամենայն Պետրոսի։ Որդիք Հաբելի անդէտ քնաւին մնալոյն Թէն, առին զմեծ ամրոցն Արկնի, և ի նմա ամրացան. Պետրոս եկն ի վերայ սոցա բազմութեամբ զօրաց. բայց տեսեալ զամրութեն բերդին հինաւոյր յոյժ, զի գոլով բարձրապարիսպ և անառիկ՝ ոչինչ իւիք կարաց մերձենալ ի նա. այլ տեղի տուեալ անտի՝ գանձ բազում խոստանայր տալ՝ որ ոք զգլուխս Հաբպհանին բերցէ առ ինքն։ Զայն լուեալ մինդակիցք և նահապետք Հաբպհանն՝ յորդորէին զնա ի քուն լինել.

զի էր նորա արտաքս եղեալ ի բերդէն իւրովք արամբք ի տեղի ինչ մօտ ի բերդն, ուր նստեալ պահէր զտեղին զա-ւուրս երիս առնելոյն անքուն կալով. և խոստանայինն նմա թէ ինքեանք պահ կալեալ տեղւոյն մինչև ցմահ մարտիցեն վասն նորա։ Իբրև նա այսպէս աներկեան լեալ ի քուն լիներ, " ազգական իւր, ասէ, հատանիր զքաջս Հարպկանն զառն հղօրի և քաջի ,, և տանէր առ Պեռոս. իսկ նորա ի ձող ինչ բաձր ցցեալ յանդիմանն բերդին ածեալ ցուցանէր. զոր ընդ տեսանելն ամրակառոյն լա-ւով ետուն զբերդն ի ձեռս նորա։

Ընդ այլ և այլ թերութիւնս իշխանաց մերոց և թա-գաւորաց՝ և այս դասեցին, միամտութիւն ծայրագեղ, ան-ճանաչող լինել ընտրելոց զաւս յարանց ի վատթարաց. նա մանաւանդ նորա զորոց արդ իսկ պատմեցաք, ոչ երէկ անգէտ ինչ էին այլ և այլ դիպաց առաջնոց յորս ախտ մատնութեան համազգեաց դժդակ աղետից աշխարհիս մերոյ եղև պատճառք. այլ նորա տակաւին յօտար թշնա-մեաց աւերն կարի զանգիտեալ՝ և ոչ քնաւ խելթ կատա-ծանաց դաւաճանութենէ ընդ միտ ածէին զհամազգեաց իւրեանց։

Ե. Դաւաճանութիւնք և մախուխիանք ուրացելոց։

Չեւսաք ապաքէն ի վերոյ զանհնարս հարուածս աշխար-հիս մերոյ թէպէտ մեծաւ մասամբ ի մերոց անտի գոր-ծեալ, կամ անձամբ կամ զառ ի թշնամեացն սկսեալք՝ նոցա ի գլուխ տարեալ, սակայն զդժդակագոյնսն յաղե-տից յուրացելոց առաւելապէս տեսանելիք գործեալ. որք յօտով փառասիրութենէ որ առ ի թշնամեաց, ձանապարհ հոգւոյն նոցա. վասն որոյ և ուրոյն յիշել զնոսա առ տանօր անկ համարեցաք։

Օ ինչ ինչ միաց ի չարեաց զոր ոչ արար Մերու-ժան արծրունի և աներ նորա Վահան մամիկոնեան յա-ւուրս Շապհոյ Պարսից արքայի, երկոքեին ևս ուրացեալք ի հաւատոց. զի Մերուժանս այս նախ ի կռմանիկ Պար-սից ի Հայս արշաւեալ յաւերք գործուցաներ զաշխարհս, զեկեղեցականս կապեալ յերկիրն Պարսից տայր տա-նել զգերեանս այրեր, զԹագուհանութենիս խաչաներ, զորս ոչ ոք յօտարազգի թշնամեաց արար երբեք։ Իսկ ապա երբև հնարիւք մեծին Աբասկի բերին զՊապ զորոք Յու-նաց ի թագաւորել, Մերուժան որ պետացեալ կալեալ

ունէր զաշխարհս Հայոց, ասէ Խորենացի Ե. 36. "Հերա-
մայէ պայծառացոյ՝ զերկրիկդ պարսպացոյ կամել զկանայս
նախարարացն մինչև մեռցին. և Թողել նոցիպես ի կա-
խաղանին զդիակունսն, զի լուծեալ անկցին գէշ՝ կերա-
կուր լինել գազանաց ,,։

Իսկ յաւուրս Ե. Յազկերտի, Թող զուրացեալն զՎա-
րդավաղին և զՎահան, մի միայն Վասակ սիւնի ոչ շատա-
ցեալ իւրով ուրացութեան, և զայլս ի նախարարաց ի
նոյն գուբ արկանէր. "Ա յլ ինչն Վասակ, ասէ Ղազար
101. զնաթէութեէ Հանապարհն կազմեալ նիւթեր ի
սրտի իւրում, ունելով կամակիցս և այլ աստուածանենգ-
արս խորհրդոյն իւրոց յազատացն Հայոց ,, եւ ոչ միայն
ի նախարարաց Հայոց յիւր կողմն ձգեաց և զատոյց ի մա-
բանութէ ուխտապահ էչմանաց, այլ նաև "քակեաց, ասէ
Եղիշէ 162. և զմիաբանութէ աշխարհին Վրաց ի Հայոց.
և Ազուանիցն ոչ ետ յառաջ խաղալ. և զաշխարհն Աղ-
նեաց ըստ նմին իսկ օրինակի յետս կալաւ ,,. և զաշխարհն
ևս Յունաց որոշեաց ի Հայոց։ Յետ այսպէս խաւհանելոյ
զարտաքին օգնութէիս՝ Թէ զինչ ինչ չարիս արար ասա ի
նեղքուստ, տեսցես ի գլուխ Կրճնի ։

Յաւուրս Ջաւիր ամիրապետին արաբացւոց՝ որ զՀու-
դայն ի Հայս առաքեաց, Վասակ արծրունի ուրացեալ ի
Հաւատոց՝ կայր միշտ առ ամիրապետին գրգռել զնա.զո-
րոյ և զպատճառն ևս յիշէ Թոմա արծրունի. "Գրգռե-
ցաւ, ասէ, պատերազմ սաստիկ ի ձեռն Վասակայ արծ-
րունոյ, զի էր նորա գահճ բաղում ի կարաս Թագա-
ցեալ ի գեհենափոր տան ի նեղքոյ գրաց ազարանից տան
իւրոյ. և յերկիւղ կասկածանաց եղեալ, Թէ լոկ ընդ-
ելուզեալ Տաճկաց, գտեալ զպահեստ գանձին՝ ծախիցէն
զշքօրութէն նորա ,, Ե. 6։ Աւրդ Վասակ այս զՀաւատոն
այսու պատճառաւ ուրացեալ՝ զահագին չարիս ետ ա-
ծել ի վերայ աշխարհին. իսկ միւս առաքինեքն սակս անմիտ
փառասիրութեան, տեսեալ Թէ Պարսիկք զուրացեալսն
ի մեծութէիւն հասուցանեն, Թէպէտ և էին "արք ա-
միք և վսեմակարք, անպիտանք և ոչ պիտանիք, վասն և
ոչ քաջք ,, որպէս ասէ Ղազար 192. որք միայն վասն

1 Յայսմհետէ ասէ էր և ուրա-
ցեալն Գաղիշոյ մտցեալ. որոյ տե-
սեալ Թէ Գիւտ կաթողիկոս առ վաս-
Թաթս ունի զնա և պշտամբեալ,
բիւր բանս Թշնամութէան յոգևալ ի

վերայ Նորա՝ ամբաստան լինէր Պերո-
զի արքայի Պարսից առ ի մտանել զնա
և կորուսանել։ զորմէ պատմէ Ղա-
զար 195. 196։

ուրացուէ զտանուտիրութիւնն հայկական գնէին ի Պարսից անարժանութիւք. իսկ արժանաւորքն սակս Աշխարհիս աստուածպաշտուէ անտիրացեալք ինային. վասն այնորիկ հեռացեալ լինէր յաչխարհէս Հայոց քաջութիւն, խմաստութիւն և ամենայն լաւութիւն. զի այն ուրացեալքն էին, ասէ, "անմարդք ի սոյգ մարդկանէ, և անարժանք և անծանօթք յայգէ տոհմիկաց ,, : Ապա յայտնեալ լինէր, զի "որ երբեմն քաջանուն զօրքն Հայոց ի մէջ այլ զօրացն ամենայնի երևէին, և զօրագլուխք անուանիք և յաղթօղք, տայս ծաղր էին ամենեցուն և կատականք. մինչև ինքն իսկ Թագաւորն Պերոզ յայտնապէս նախատելով երբեմն առաջի ամենայն տանէնին ասէր, Թէ այր անպիտան և գունդ յետին՝ որ գամ ի յիմ իշխանութիւնն է՝ Ասորոց է, բայց քան զասորի՝ Հայն է՝ այր յետին և անպիտան. և էր լուրն այն արժանի լալոյ և ողբալոյ ,, : Սոյն այս բան է՝ զոր և Վահան մամիկոնեան կրկնէ առ Միհրան զօրապետ Պարսից առ Ղազարայ 238. "Լուեալ է քո որ Մէհրանդ ես՝ և ամենայն Պարսից զամս զայս յԱրեաց տեառնէն ի Պերոզ առաջի ամենեցունց յատենի, Թէ այր վատ և գունդ անպիտան ասորի է, բայց քան զասորի այր՝ Հայ մարդ շատ վատթար է և անպիտան. և ոչ արդեօք լաւ էր մեզ քան զայն լուր յայնպիսի թագաւորէ ,, : Պատճառ այսմ բերէ ապա զանընտրողութիւն Պարսից, որք զամենայն այր թէպետև վատ յառաջագիտանէին ի զինուորական պատիւս, բաւական համարեալով զուրացութիւն նոցա : Տես ի Ղազար և 292. 293 :

Եւ այսպէս սոքա ամենեքեան ուխտանէնգք, արք դաւաճանք և մատնիչք, առ ի շահ անձանց և առ փառասիրուէ անկղնատացեալք ի նոյնպիսի չարիս՝ և ի փառաց և վըրկութիւն. անգիտացեալ՝ Թէ որ քրիստոսական կրճնիցն անհաւատարիմ գտանիցի, նա և հեթանոսացն ծաղր և ծանակ կայցէ : Զի անմոռաց պատրեալ ի մտոտի խոստմանցն Պարսից, ուրացեալ զՀաւատս մատնիչ լինէին մեծի և փոքու, իշխանի և ազգականի, ապա իբրև տեսանէին զանձինս յամենայն կուսոյ ի դէրև ելեալ, յայրմամ խմանային զանմոռութիւն իւրեանց, այլ վայրապար. որպես ի մեծաբնէն Նիխորայ պարսկին զՎահան ամենայն գնդաւն խրոմ, " զուիտանէնգան ի Հայոց և զուրացօղն Հանին արտաքոյ ընձերեայն ամթաւլիցս ,, . որպես ասէ Ղազար 294, Ոչ կարացին ի սկզբան անդ խելամուտ լինել Թէ Պարսիկք ոչ այլ ինչ խորհէին՝ բայց զկորստ Համարէն

ազգին՝ յորում էին և ինքեանք ուրացեալքն. որպէս զի զամենայն մեծամեծս Հայոց քնաջինք արարեալ՝ ինքեանք ժառանգեսցեն զաշխարհ նոցա։

ԱՑԼ. ԵՒ ԱՑԼ. ԹԵՐՈՒԹԻՒՆՔ՝ ՊԱՏՃԱՌՔ ԱԽՏԻՑՆ ԱՒԱՋՆՈՑ

Զաջակեալքս ցարդ՝ էին ախտք և մոլուԹիք ընդհանուր արմատացեալք յազգի մերում, յորոց զհետ եկին ամենայն աղէտք աշխարհիս. բայց են՝ ի մերմն և ինչ ինչ ԹերուԹիք իբրև արմատք և պատճառք ախտիցն այնոցիկ. զի պակասեր՝ ի նոսա սկզբունք կամ օրէնք կարևորք՝ ի քաղաքավարուԹեան մարդկան և՝ ի տեսչուԹեան աշխարհին։ Ցորոց՝ ի պակասուԹենէ՝ ի նէրքս մնանէն ախտք համաշխարհական աղէտից աշխարհիս մերոյ ծնունդք։ Արդ մի առ մի յառաջ բերեալ զպահասուԹիւն, կարգեսցուք զատ՝ ի պատմագրաց մերոց յիշատակեալ դէպսն՝ ի պատճառս նոցին։

Ա. ԹԷրուԹիւն հպարտուԹեան, որ է ընդոծումն ԹուԹեան։

Մոռեալ զեղեալսն յաւուրս խորենացւոյն զորոց ողբայ, զՅովհաննու կաԹողիկոսի յառաջ բերեցուք զողբս՝ ի վերայ այսորիկ, որ այսպէս բողբք բառնայ. "Ախ իբրև այսպէս կրեցաք տագնապս տարակուսից՝ ի հինից օտարաց, ՝ի մերս ասպ լինելաք՝ ի Թագաւորս և յիշխանս ակնակալ ոչոյց, այլ և՝ ի պետս և՝ ի նախարարս երկրի մերոյ. և յոլացեալ սպասեաք ոչ էս ընդ փորձուԹենն խառն վըրիպիլ սոցա և անկանիլ, այլ ջան առաջի գնել և ելս նեղուԹենն հնարել. և վայելչաբար՝ ի միասին կապակցիլ հասարակ եղբայրուԹիւ, և իբրև զմի այր միանալ... բայց ոչ զայս եղև տեսանել մեզ, այլ զնորին հակառակսն կրեցաք։ Վասն զի նուաղուԹիւն քան զմեծամեծսն ձեռներեց լինել չանայիս. և ծառայքն ըստ Սողոմոնի հնարէին՝ զի զաեարսն տրեխաւորեալ՝ ի գետնի գնացուսցեն և ինքեանք եղջեն յերիվարս աշապարանոցս և առաՀաւոր հասրողս, իբրևսացեալք... մեծաւ ապստամբուԹիւ։ Իսկ Թագաւորք մեր և պետք և իշխանք՝ զորս՝ ի բնէ նախարարուԹիւն էին՝ չանային վարատել... այլ և եղբայրք ընդեղբօր և ազգայինք ընդ ազգայինս ընգվզեալ՝ ի նախանձ

և՝ի չարակնութիւն և գրգռութիւն և՝ի կատարեալ ատելութիւն ընդ միմեանս բերելին։ Եւ այսպէս համագունդ ընդ միմեանս հարեալք՝ ի հակառակութիւն և՝ի կռիւ պայքարելին. և միշտ սուր յարդեր ունելով՝ բազում ևս քան զինչսիմն հեղուլին՝ի միմեանց զարեան ձապաղիս. և առհասարակ զքաղաքս և զգեօղս և զաւանս և զագարակս, այլ և զտունս իւրեանց քանդելին ձեռօք իւրեանց. գրեթէ այն իսկ ոճիրք հակառակութենէ գան պատճառք հինիցն եկելոց՝ի վերայ մեր»։

Որչափ նուազեր իշխանութեն մեր՝ նոյնչափ առաւելոյր և ըմբոստութեն. որ է չհանապել զոք մեծ քան զինքն, ընդվզել չհպատակիլ ումեք. ասի ահա բազմացան Թագաւորութիւնք՝ի հայաստան աշխարհիս յայնմ ժամանակի՝ յորում նոյն իսկ թիւիկ Թագաւորուհին յերերի կայր. ՝ի չորս տեղիս չորք Թագաւորք նստան, յԱնի, ՝ի Վասպուրական, ՝ի Կարս և՝ի Բաղաց. նոյնպէս և՝ի չորս տեղիս չորք կաթողիկոսունք բազմացան։ Եւ եթէ տակաւին տակեր իշխանութենէ մերոց՝ յաշխարհիկն անդ կարծեմ ամենայն իշխանք մի մի Թագաւոր լինելոց էին. իսկ եպիս կոպոսունքն ամենայն մի մի կաթողիկոս. քանզի անյիւրերևելի իշխանք սկսան մի առ մի կաթողիկոս հաստատել՝ յորժամ առնոսա ապաւինելին եպիսկոպոսունքն այնոքիկ։ Եւ յԱրքանի լաւ էր՝ փոխանակ զԹագաւորս բազմացուցա նելոց որով իւրաքանչիւրքն տկարացան, չորեքին ևս՝ի մի միայն Թագաւորութենէ միացեալ էին. յայնժամ ինքեանք զօրանային և Թշնամին տկարանայր. բայց զերկպառակութենէն որում ցանկայր Թշնամին արկանել՝ի մերմն՝ զնոյն ինքնակամ արարին մերքն, և Ճանապարհ հորդեցին նմա համարձակ մուտ առնել՝ի ներքս՝ի հայաստան։

Բ. ԹԷՐՈՒՆԱՆ ԿԵՆՑաղԱԳՒՈՒԹԻՒՆ [1]։

Որինք կենցաղագիտութենէ հոգի է ամենայն պետութեանց. որ և գրեթէ միշտ պակասեր՝ի մերս. նմին իրի և տեսչուի աշխարհին անզօր երևէր. զի ոչ եթէ՝ի բազմութենէ իշխանացն կայ և՝ի քաջութենէ զօրաց մեծութենէ պետութենէ, այլ՝ի քաջ կենցաղագիտութենէ։

Վասնզի օրինք կենցաղագիտութենէ է ապագայից լինել

1 Յունարէն Բօլիթիկէ. որ առ Նախնիս մեր Թարգմանի քաղաքականութեի, քաղաքավարութեի։

նախատես. պարտ էր մերոյն յանցից անցելոց գուշակել զապագայ չարիս և զխենդութիւնս օտար Թհնամեաց, և այնպէս զգոյշ կալ անձանց. այլ այս յետանաի բնաւ 'ի գործս նոցա։ Քանզի զինչ այլ կառավարութիւն անմտաց գոյն քան զայն՝ ստէպ ստէպ փոփոխել զտերունին որուամ ծառայէին, մերթ Յունաց և մերթ Պարսից հպատակեալ. ոչ զապագայ չարիս զմտաւ ածեալ, այլ միայն զառաջիկայ նեղութիւնս զոր կրեին 'ի Յունաց կամ 'ի Պարսից. և ստէպ փոփոխելովին միշտ Թհնամի առնէին ինքեանց երբեմն զմին և երբեմն զմիւսն։ Եթէ գտանէր 'ի նախարարսն մեր դոյզն ինչ նշոյլ նախատեսութեան[1] 'ի գէպ էր նոցա տեսանել յառաջմէ զգժոտութիւնս և զհալածանս, որ ունէր ծագել յայլևայլութիւն կրօնի որ ընդ մէջ մեր և Պարսից. և վասն այնր հարկ էր խորհիլ 'ի նոցանէ, և ջանալ առ 'ի կալ ինալ միշտ ընդ տէրութիւնն կայսերաց, ընդ որս արդէն իսկ և նահինին մեր մեծն Տրդատ նահապետ քրիստոնէութեանս՝ սիրով և դաշնադրութիւն կապեալ էր զինքն և զազգն համօրէն մշանջենաւոր դաշամբ. և պարտ էր գնոն գործել զնոյն սեր պահել և չգայրացուցանել զնոսա, որոց պաշտպանութիւն կարէր ազգն զերծանիլ 'ի դժոգակ հալածանաց զոր կրեաց 'ի Պարսից։

Այրկրորդ օրէնք կենցաղագիտութեանն է ձանաչել զարս ընտիրս, և նոցին խորհրդոց միշտ ունկն դնել, և նոքիմբք կառավարել զտէրութիւնն. արդ 'ի հայաստան թէպէտ անպակաս եղեն արք այսպիսիք, բայց ոչ ծանեան կառավարօղք։ Մուշեղ սպարապետ ըստ քաջութեանն նոյնպէս և կենցաղագէտ լինել յոգեցանել զինքն՝ յորժամ խորհուրդ տայր արքային մնոանել ընդ տէրութիւնէ կայսեր. և զի զօրք կայսեր 'ի սահմանին իւրեանց կալով հեռի ինային, և ոչ նաց՝ անդին ընդ տէրութիւն նոցա. զորմէ տես 'ի գլուխն պատմութեանն, յօդ. ի. 'ի նուազման աչխարհիս 'ի գարն ԺԱ։ Եթէ յառաջն միահաւոր մտանէին ընդ տերութիւն կայսեր որպէս Մուշեղ սպարապետ խրատ տայր, ոչ 'ի սէրմական երկիր իւրեանց զրկեալ լինէին, ոչ զկայսերս ցասուցանէին և ոչ զհալածանս այնքան սպասանէին զոր 'ի Պարսից և յարևագաց կրեին։ Եւ յայնժամ տպաւիրեցան 'ի Հոյնս, յորժամ տիրեալ էր հակառակն 'ի մէջ նոցա և Հայոց։

1 Նախատեսութիւն, որպէս և տաւցաւ, բարձեալ էր 'ի նախարարաց. զի պարտ էր նոցա փորը համարեալ զառ 'ի Յունաց եկեալ նեղութիւնն քան զայլոցն, և լինել ընդ իշխանութիւն քրիստոնէից կայսերաց։ Զայս և ինքեանք անագան ուրեմն ծանեան 'ի մեռասանեորդս գարու, բայց տուժիւք հանդերձ. քանզի չկարացեալ նոցա տոկալ գառնութեան ժամանակին 'ի խուռն յարձակմանց անհատութեան, զկաշառածս երկիրն զոր ունէին՝ մի առ մի կուռն 'ի ձեռս կայսեր, և փոխանակ այնր նոր երկիր առեալ 'ի Յունաց։

կարէին յարչաւելն Թէնամեաց Պարսից և այլոց՝ նոյնհե-
տայն հասանել և պաշտպանել զՀայս՝ խորհեցաւ ՚ի նոյն
իսկ ՚ի մեծ Հայս քաղաքս շինել զօրանիստս յիւրաքան-
չիւր գաւառս, և ՚ի նոսին քնակեցուցանել զզօրս կայսեր,
որպէս պատմեալ է մեր ՚ի գլուխն Հինաւորաւն։ Արդարև
քաջ էր խորհուրդն առնն իմաստնոյ, որով միօրինակ
միայր աշխարհ մեր ՚ի խաղաղութեն. այլ խորհրդակցոյս
արքայն Վարազդատ անսացեալ քսուԹեանն այլոց՝ զայս
խորհուրդ ՚ի յանցանս համարի Մուշեղայ և սպանանէ զնա։
Եկեղեցականս առաւել հանդիսացան արք իմաստունք
և կենցաղագէտք, յորս գլուխ ամենեցուն Հանայի մեծն
Ներսէս. որ եցոյց զիմաստութեն իւր յօրէնս կենցաղագէ-
տութեն՝ յօրժամ միաբան նախարարքն ծանրացաւսուին լեալ
ընդ ՚ի. Արշակ Թագաւոր իւրեանց՝ դիմեցին առ նա
հնչեն ասելով. «Լաւ է մեզ Թէ ծառայեսցուք Թագաւորին
Պարսից որպէս ընկերքն մեր արարին՝ զի Թողին զնա և գնա-
ցին առ Թագաւորն Պարսից, և մեք սոյնպէս առնելոց եմք»։
Յայնժամ սուրբն Ներսէս, որպէս ասէ Բուզանդ ՚ի. 51. «բայ
՚ի յուշ առնելոյ նոցա զաստուածայինն պատուիրանս, Թերատ
էտ իբրև քաջ կենցաղագէտ մի յառաջնիկայ չարիսն և ՚ի
Հայել, յուշ արարեալ նոցա և զերախտիս արշակունեաց
տոհմին զոր արարեալ էր առ մեզն մի ՚ի նոցանէ. զի Թէ-
պէտ յանցաւոր է, ասէ, առ Աստուած ազգն արշակու-
նեաց, «սակայն զձեզ կենցուցեալ զամենեսեան և յաղօ-
ԹօՀափեալ է, զմեզ գործով, զմեզ պատուով, զմեզ իշխա-
նութեբ, զմեզ գործակալութբ... և դուք աւագիկ կամիք
անկանել հեԹանոսաց ՚ի ծառայուբ... և մերժել զձեզ
տերան ձեր.. Բայց լաւ լիցի ձեզ զնոյն (զպարսիկն) սի-
րել և յանձն առնուլ և նմին հաւանիլ, և մերժել յան-
ձանց ձերոց զարարչապաշտ Թագաւորն։ Զի Թէ բիւր
չար լիցէ Աբշակ, սակայն աստուածապաշտ է. և ԷԹէ
մեզաւոր ևս լիցէ, սակայն Թագաւոր ձեր է»։ Եւ ապա
ազգ առնէ նախատես լինել ապագայ չարեացն սպառ-
նացեալ առ ՚ի յԱստուածոյ. «Դուցէ, ասէ, բարկացեալ
տէր Աստուած ձեր, և խլիցէ զձեզ արմատաքի, և մատ-
նեսցէ զձեզ հեԹանոսացն ՚ի չար ծառայուԹիւն ստրկուէնն
մինչև յաւիտեան, և ոչ երբէք բարձցի լուծն ծառայուե
՚ի ձենջ։ Եւ բողոքէք դուք առ տէր, և նա ոչ լսիցէ ձեզ.
վասն զի անձամբ անկանիք դուք ՚ի ծառայուբ հեԹանոս
տերանց, և անաստուած անգէտ մարդկան՝ ՚ի ձեւս հեԹա-
նոս արանց տերանց խստասրտաց. և բազում չարի դիպեալ

ելանիցէ առաջի ձեր, և ոչ կարիցէք ձողօպրել յայնմանէ ,, ։ Ա՛Հ սակայն նախաարարքն, որք զանձինս իւրեանց առ իմաստասէս ունէին, փոխանակ լսելոյ բանից նորա իբրև ձայնի մարգարէի և քաջ խորհրդատուի, լուր զինչ ասէ պատմագիրն . "Իակ նոքա , որք միանգամ էին 'ի մի վայր ժողովեալ, զաղաղակ հարկանէին . քարով կարդացեա՛ միմեանց ձայն առնէին, չիմանէին ամբոխէին ,, . մինչև ապա բռնադատել զԱրշակ Թագաւոր Ինքնին գնալ 'ի կոչումն Պարսից արքայի . որոյ ընդ երթալն կալաւ և առաքեաց զնա Ա՛Նյուշ բերդն . և զաշխարհ մեր ապա կանգնել յաւէր գարձոյց։

Ո՛չ գուշակեալ որ իմաստուն կենցաղագէտ երևեցաւ և մեծն Սահակ պարթև, որդի մեծին Ներսէսի , զնոյն անցս անմտութե՛ նախաարարացն կրկնել և ինքն , որպէս և հայրն իւր . առ նուաւա նախաարքն Ա՛Րշակայ ձանձրացեալ և յանդգնեալ մարտից . առ սուվա Ա՛Րտաշրէ արքայէն . ընդէր . զի անառակ կեանս վարէ ասեն ։ Բրա՛ նադատէն զերանելին զի միաբանեսցի ընդ նոսա տանել մատնել զԱրտաշիր արքային Պարսից ։ Հնարս խորհել ա՛ սաց հայրապետն ուղղելոյ զթագաւորն . այլ քանք նորա չզգեցին յունկն նոցա . խրատս և յորդոր մատուցանէր, յուշ առնէր նոցա զանսուտ պատգամն սպառնալեաց տէ՛ բանէնգ արանց . առանձնանայր 'ի սենեկի աւուրս բա՛ զումս՝ մաչեալ զանձն իւր յողս և յարտասուս , այլ նոցա սիրաք չամոքեցան ։ Սակայն լուր ասացելոյն առ 'ի նմանէ Թէ զիարդ զաղդոյ զՏոգևորսական վարդապետուէին խոստն ընդ կենցաղագէտ իմաստութե՛ իւրոյ բարբառէր առ նո՛ սա . "Ա՛ճ քաւ լիցի , ասէր , մատնիչ լինել Ա՛ՀՀմարիտ հա՛ ւատոյն մերոյ , և անհաւատից զիմ հօտի զմոլորեալ ոչ՛ խաղն մատնել յայպանութիւն . զի Թէպէտ և մեռաւոր է , այլ գրոյնմեալ է սուրբ աւազանին ծննդեամբ . . . Ա՛րդ եթէ էր տանել առ բժիշկ առողջ զվիրաւոր եկեղեցւոյս իմոյ ոչխար , փութայի և ոչ յապաղէի . այլ յամենայնի տալից առեան մատուցանել զիմ հիւանդացեալ Տոգևոյ որդի , և ոչ երբեք յանձն առնում . զի եթէ էր հաւա՛ տացեալ Թագաւորի առաջի տանել զայսպիսի յանդիմա՛ նութիւն , Թերևս համարձակէի գիւտիւ կորուսելոյն . այլ կշտամբել զհաւատացեալս յաղագս մեղաց առաջի անհաւատիցն՝ ոչ հաւանիմ . . . ինձ լաւ լիցի մեռանել , քան եթէ զոք 'ի հաւատացելոց վասն անարժան գործոյ մատնել անօրինաց . . . քաւ ձեզ որդիք , մի խորհիք զայդ-

հուրդ զայդ, և զնիւկ զտեարսդ՝ որպէս և ոմանք զներ նախնեացն՝ կորուսանել մի ջանայք ,, . Դաղար 39 : Ա՛յլ նախաբանքն վատախորհուրդք և խստապարանոցք առ ոտն հարեալ զանս խորախորհուրդ առն մեծի և սրբոյ հայրապետի՝ ընկերին զնա յաթոռոյ , որ եթէ չկրէրապիա գտաներ , Թագաւորաց խորհրդական զնա առնէին, նա և փոխարքայ իակ ' : Իակ թէ ընդեր անարդեցին զանս սրբոյն՝ յայտ է , զի յառաջիկայ չարեացն խորչէացին , այսինքն է յանարժան գնացից Թագաւորին իւրեանց Աբատարչի . և ոչ գիտէին նախատես լինել ապագայ չարեացն որ գալոցն էր ' ի մատնութէ իւրեանց . որպէս և եղև իակ։ Զի միայն տեսանէին Պարսից զամենայն նախարարացն բազմութէն եկեալ խնդարհեալ առաջի իւրեանց՝ ոչ զի հաստատեսցէ , այլ զի բարձցէ զթագաւորն զառաջնորդ ազգին , և ինքն տիրեսցէ ' ի վերայ Հայոց , այս միայն քաւական էր մանկել ' ի սիրտս Պարսից ոգի բռնաւորութէն ' ի վերայ մեր : Իակ ոՀր Թողցուք , զի ինքեանք նախարարքք Հայոց են՝ որք զՀամօրէն զաշխարՀս Հայոց ինքեանակամ ընդ լծով Պարսից արկեալ, ասեն առ Թագաւորն նոցա Թէ չայսմՀետէ չէ մեզ պիտոյ Թագաւոր . այլ զոր իշխեսե՛ ի վերայ մեր, մարզպան պարսիկ առաքեալ առ մեզ՝ : Իակ Թէ զինչ Հետևանք և արդիւնք զՀետ եկին չայսպիսի անարգութէն նուաստացուցանելոյ նախարարաց զպատիւ և զշուք տերութէն Հայոց ' ի միումասնութ , չայտնի կան ասՀ՝ որ ինչ չայսմՀետէ բռնակալութէն ծանր տիրեաց ' ի վերայ ազգիս առ ' ի Պարսից . մանաւանդ որք չաւրուց Ցաղկերտի գործեցան աղէտք և դառն Հալածանք : Զի նախարարք մեր կուրացեալ ' ի սաստիկ կրից անմիտ վրէժ խընդրութէն ' ի վերայ Աբատաչրի Թագաւորին իւրեանց՝ չեղեն նախատես Թէ սովին գործով ' ի ձեռս Պարսից տայլեն իշխողութէն և բռնաւորութէն ոչ միայն ' ի վերայ իւրեանց՝ այլ նաև ' ի վերայ Հաւատոյ իւրեանց . չայսմանէ էր զի Ցաղկերտ այնպէս մեծամեծս խրոխտացեր ընդդէմ

---

1 Որպէս գաղղիացիքն արարին Հայոց) Թէ ճնաւ զի իակ պիտոյ է զկարդալ Պաղատին , զԻնչլիզն , մեզ Թագաւոր։ այլ Հնդան պարսիկ զՔրիւհեռին :

2 „ Մանաւանդ զի, ասէ Ղազար կդ։ լուաւ նա Թագաւորն Աբեաց ասէ նայն աւագանեաց զդանն ' ի դատաստան զայն Աբատչիսի, (որք էին նախարարք լեցեր մեր. որ և զիւրաքանչիւր ուրուք ' ի մէնջ ծանուցեալ զչպատակութէն և զանչպատակութէն յուշցեր ձեզ ,, :

Վարդանանց յատենի անդ որպէս առ ազգ ինչ ստրուկ և պարտաւոր. իբր Թէ սրով իւրով գրաւեալ էր զաշխարհս մեր, և ոչ մատնութիւն մերոց։

Իստ այսմ օրինակի և զայլ գործս նախաբարաց մերոց քննեալ զոր գործեցին զկնի այսորիկ, մեծ Թերսէհ կենցաղաւարեալ տեսանի՝ ի նոսա յորժամ միահամուռ եղեալ գնացին ի կոչումն Յազկերտի, զոր յայսմանէ գիտէին լինել ոչ պատերազմի աղագաւ՝ այլ հաւատոյ. «Այդպէս և անդ գնացին, ասէ Ղազար, զպատճառս իրացն՝ Թէ չէ խաղաղութիւն, այլ կորստեան ոգւոց է ստիպումն կռմանս այսորիկ»։ 79։ Որպէս և եղիշէ. «Բայց վասն դիւրութիւն որ դու հրամայեցեր առնել մեզ, էր մեր իշխանութիւն անդրէն յաշխարհին մերում չանկանել մեզ ի ձեռս Թագաւորիդ որպէս և այլքն զի ապրեցան յայսպիսի փորձանաց. այլ որպէս կամաք և յօժարութիւն եկաք, իբրև Թէ գիտեաք զվիշտ վճանգիս՝ ոչինչ զանգիտեցաք յայսպիսի Ճգնից, սոյնպէս և կամիմք զի այլ ևս ծանրաբեռնեսցես ի վերայ մեր, մինչև քո չարութիւն կամացդ յաւգեսցի ի մեզ»։ 260։ Գիտէին զայս, այլ ոչ կատեցան ի գնալոյ. միայն նախ քան զերթալն՝ յերդումն հրաւիրեցին զամենեսին զի միաբան կացցեն. բայց ի զուր, զի գիտէին զձուլութիւնն բազմաց, եթէ յառաջ քան զերթալն իւրեանց քաջ խորհեալ էին վասն յուրացութիւն հրաւիրելոյ զնոսա Յազկերտի, զի գիտէին զմիտս նորա, ոչ գիտէին ի հաւատս։ Եւ զմիաբանութիւնն զայն առ ի յայսմանէ պատերազմիլ ընդդէմ Պարսից՝ զոր յետ ուրանալոյն արարին առաջնորդութիւն Վարդանայ կամ մեռանել և կամ՝ոչ տալ մուտ Պարսից, ընդէր չարարին ի սկզբան, յայսմանէ ծանուցանելով ի դուռն Պարսից զպատճառն. զի յայնժամ ոչ գիտէ գայր այնչափ աւերումն աշխարհի, և ոչ այնչափ կորուստ հոգւոց։ Ոչ փոքր ինչ Թերութիւն էր և այն՝ յետ զբռամբ ածելոյ զիշխանն Սիւնեաց զուրացեալն Վասակ, ապա Թողուլ արձակել հաւատալով խոստման նորա, յետ յայսմանէ գիտելոյ զստութիւն ամենայն բանից նորա. «Ակ նա քա Թեպէտ և հաստատեալ գիտէին, ասէ եղիշէ, զնենգաւոր կեղծաւորութիւնն նորա, և Թէ խաբեութիւն դառնայ անդրէն ի հին մոլորութիւն, ոչինչ փոյթ առնէին ձեռն արկանել ի նա վասն առաջին յանցանացն»։ 113։ Ի վերոյակաց ասի այնչափ համաշխարհական չարիք գՀետ եկին, և համօրէն աշխարհիս կործանումն։ Ա՛յլ որ անմոռացին և՝ յետ արձակելոյ զՎասակ յաղաւտութիւն, զոր կարէին

գԷԹ 'ի գիպահՈՂ պահել, 'ի կազմէն ապա քանակ ընդ-
դէմ Պաղսից, զերրորդ գումնդն յանձնէն 'ի ձեռս նորին
Վասակայ, որպէս Թէ ոչինչ գիտեին զնմանէ. զորմէ
տես յԵղիշէ 127։

Ո այսպիսի Թերութիւն 'ի կենցաղագիտութիւնէ ոչ սա-
կաւ և 'ի պատմութիւնս յետագայ ժամանակաց գտա-
նեմք յաւելուր Բագարատայ իշխանին, որպէս պատմեալ է
մեր 'ի գլուխն Պատմութեանէ յարշաւանս արաբացւոց։ Զի
վրէժխնդրութիւն քնակչաց Սիմ լերինն, և քաջութիւն կաղ
ծեցեալն յաչս իւրեանց՝ զԱղուանեթ միայն սպանանելով,
ոչ օգտի՝ այլ չարաչար հարուածոց եղև պատՃառ, որք
գՀետ եկին 'ի ձեռն Բուղայի յաւուրս Ջաբիայ ամիրա-
պետին։ Բայց զարմանք են, զի 'ի նոյն իսկ 'ի տաՃիկ իշ-
խանաց անտի գտան յայնժամ ոմանք մներիմք մերոց, որք
ազգ արարեալ առ Աշոտ իշխան Վասպուրականի՝ ծանու-
ցին զնորհուրդ ամիրապետին, որ կամէր քառնալ ՓՕՔՐ
գամենայն իշխանս Հայոց. և 'ի ձեռն իւրոց ամիրայից
կառավարել զաշխարհս մեր։ Խրթև լուաւ զայս Աշոտ այրն
զօրեղ և քաջ կենցաղագէտ, ոչ կամեցաւ գնալ առ Բու-
ղայ, որ առաքեալ էր յամիրապետէն 'ի գործ դնել զնորո-
հուրդ չարութիւնէ իւրոյ, ոչ հաւատալով երդմանցն Բու-
ղայի՝ որ կեղծաւորեալ սիրով և երդմամբ կոչէր զնա.
այլ եդ 'ի մտի արեամբ չափ պատերազմել ընդդէմ նմա 'ի
Նկան բերդի անդ՝ ուր կայր ամրացեալ։ Բայց զինչ պարտ
է ասել վասն ընթերակայ իւրոց նախարարաց, որոց ոչինչ
նախատես լինելով ապագայ չարեացն՝ զուրկ 'ի խորագէ-
տութենէ, այնչափ բռնադատեցին զնա, մինչև ակամայ
կամեք եղ և գնաց առ Բուղայ. որ և կալեալ զնա անդէն՝
ընդ այլ կապեալ նախարարս առաքեաց առ ամիրապետն
'ի Սամառա։ Դուրգէն եղբայր Աշոտոյ՝ քաջութիւնք նմանն
նմա, բայց անմանն և օտար յիմաստութենէ եղբօրն, Թէ-
պէտ և 'ի վերայ հասեալ էր չար խորհրդոյ արաբացւոց,
և աչօք իսկ տեսեալ զանցս եղբօր իւրոյ, այլ պատրեալ
յանմիտ փառասիրութենէ, յուսացեալ փոխանակ եղբօր
իւրոյ ինքն տիրել 'ի վերայ հայոցն Վասպուրականի,
ոչինչ ունկնդիր եղեալ ազգարարութենէ ընթերակայ նա-
խարարաց իւրոց, ինքնակամ ընթանայր առ Բուղայ. որոյ
նախ պատիր սիրով ընկալեալ զնա, ապա նաւակ մատու-
ցանէ նմա որպէս եթէ յամիրապետէն գրեալ, որ կո-
չէր զնա առ ինքն. և այսպէս զնա և առաքեաց Բուղայ
առ ամիրապետն։ Ա յսպէս յանմտութենէ նախարարաց

իւրոց մահանեցաւ Աչոտ. իսկ Գուրգէն յանմոռութենէ իւրմէ։

Զոմա արծրունի, որ Ջոխագոյն պատմէ զայս առնային, յառաջ քերէ և զայլ գիպուածս՝ որք յայտ առնեն զվիճամոռութիւն մեծամեծաց այնր ժամանակի՝ զուրկ՝ի խոհականութենէ. պատմէ Թէ յորժամ զորք Բուղային պաշարեալ էին գՏփխիս, քաղաքապետն Սահակ անուանեալ՝ հնարիւք ինն եւ արտաքս ընդ մի կողմն քաղաքին. այլ փոխանակ փախչելոյ և զերծանելոյ, եդ՝ի մտի անձնատուր լինել, կարծելով այնպէս՝ի խաղաղութենէ վայելել զոր ընդ տեսանելն, ասէ, Բուղային՝ և ինքն զարմացաւ. զորմէ տես յԱբրչաւանս արաքացւոց՝ի գլուխ թ։ Ցմիս գագանն քան զայս պատմէ վասն Ապուսմասէի իշխանին Աղուանից, որք յայնժամ քնակէին յԱւտի, և ըստ մեծի մասին էին յայգիս Հայոց. սա յետ բազում անգամ յաղթեալ խորտակելոյ զբազմութենէն զօրացն Բուղային, պատգամ առաքէ առ նա, որպէս Թէ մի կարծել առ ապրուստ տարութենէ ընդդէմ երթալ նմա. վասն որոյ Թէ կամք ի կեան ամրապահին՝ ինքն իմանի և գնայ առ նա ցուցանել զիւր հնազանդութենէն։ Եւ այնպէս սա ևս այսպիսի քաջ այր՝ արամբք ընտրելովք անկաւ՝ի յետին միամոռութենէ, և գնաց առ Բուղայ. որ և առաժամայն կալաւ զնա. ՚ք. 10։

Ի յիշելն զանհնարն անցս որ անցին յառաւօտ Բուղային՝ առաւել քան զնախագրելոցդ միամոռագոյն այն ինձ երևի, զի յետ տեսանելոյ զայրուղի չարիս և զպատրանս Բուղային, յորժամ և զնացեալ զիշխանն մեր առ ինքն կոչեր ստապատիր բանիւք խոստանալով նոցա բարիս առնել, նոքա տակաւին ոչ զգաստացան, այլ միամոռութիւն հաւատացեալ կեղծաւպատիր խոստմանցն նորա՝ միաձայնաւ գնացին առ նա. և զինչ արդիւնք միամոռութենէ նոցա. բայց կապել առնեցաւն, և՝ի վերայ ուղտուց բարձեալ տաղաչարհիկ լինել՝ի Սամառա։

Արդ եթէ մերքն փոքր մի միտս ունէին և աչալուրջք էին՝ի խորագուռութեան, նախ պարտ էր նոցա՝ի դրան ամրապահսն ունել միշտ զոմն գործակալ յիւրեանց կողմանէ զայր կենցաղագէտ, որ կարող լինէր բազում ինչ մերձ մել, և բազում ինչ՝ի հրամանաց նորա փոխել ընծայիւք և աղերսիւք. և զի՝ի բարեբարոյ և՝ի մարդասէր առբանց տայր առաքել ոսոխիանս՝ի Հայս. բայց չէք տեսանել՝ի նոսա խորհուրդ այսպիսի. այլ փոխանակ այսր, որ զոք ցասուցեալ ինչ էր ընդ առաջնուրեն իշխանաց աշխար-

հիս մերոյ, նա երթեալ առ ամիրապետն և՝ ի հաւատոյն ուրացեալ՝ յաձախէր պետպէտ չարախօսութիւնս գիշերա- նայ ազգիս, որով առաւել և՝ ի սրտմտութիւն գրգռէր զամիրապետն, որ և զօրու ծանուս առաքեր՝ ի Հայս սա- տիկանս անագորոյնս։ Իսկ իշխանք մեր նախասրտիք ոչ այլ ինչ գիտէին հնարել, բայց եթէ՝ ի քաջութիւն իւրեանց ապաւինել. և քանզի ուրոյն ուրոյն և ոչ միահամուռ ղգիմանէին, իւրաքանչիւրքն տկարացեալ՝ ի ձեռս թշնա- ժեաց անկանէին։ Եւ որպէս Թուխ՝ ի վերջին ժամանակս արշակունի Թագաւորաց և ոչ իսկ խորհրդակացս ունելիս առնելոյ։ Եւ ոչ գարձեալ դէսպանս՝ ի գրան կայսեր, ոչ յառաջ և ոչ յետոյ։ Պարտ էր նոցա գարձեալ յարքունիս շրջակայ տերունեցս ունել հաւատարիմ լրտեսս, առ՝ ի կան- խել ծանուցանել մերոց վերջերին խորհուրդս՝ զոր խոր- հէին վասն աշխարհիս Հայոց՝ ի դաւել և՝ ի հարստահա- րել. այլ չընթեռնումք զայսպիսի խորագիտութիւն արա- րեալ մերոցն։ Դագիկ վերջին Թագաւոր Բագրատունեաց Թէպետ այր ուսումնասէր, բայց տես զկարգ վերիպեցաւ յարձակելն զվէսան Սարգիս յետ՝ ի ձեռս բերելոյ զնա, և չհղէ հետամուտ խոստովանեցուցանել, որով խելամուտ լինէր առաջին խորհրդականութեանց նորա, և նախատեսէ լի- նել ապագայ մանութեանց նորին՝ որովք՝ ի հիմնոյ կորո- ծանեաց զԹագաւորութիւն նորին Դագիկայ և Բագրատու- նեաց. այլ Թող զայս, յետ արձակելոյն զնա արար զնա նաև իւր նեղբին խորհրդակից։

Ա՛ի՝ ի պակասութենէ Թագաւորաց մերոց կամ առաջ- նորդաց եր՝ չլարձատրել զվաստակաւորս՝ ի քաջագոր- ծութիւնս ծանր պատերազմաց, առ՝ ի կապել զնոսա սի- րով և քաջալերս տալ. զի ոչ գտանեմք ինչ ուրեք յի- շատակութիւն վասն այսր, բայց եթէ՝ ի քանի մի դիպուա- ծըս. գուցէ ասի պատճառս առեալ անցանելոյն յայլ Թագաւորս։ Թագաւորի պարտ են այնպէս կառավա- րել զտերութիւնն իւր, որպէս գրէ Թովմա արծրունի դ. 11. վասն Դագկայ արծրունւոյ. “ Եւ այնպէս անկարօտս առ պիտանացուս հոգ տարեալ, գլխաւորեաց որ ինչ չհնուէ և խաղաղութիւնս աշխարհիս նպաստաւոր առ օգտակարա- գոյնն պահանջէր գործառնութիւնն եղանակք, որպէս օ- րէն է Թագաւորաց և Թագաւորազանց աշխարհին խնա- մոցոց յանձանձել ըստ վերակացութեան Աստուծոյ նո- ցա հաւատացելոցն,, ։ Որ և բազմաք գրաւատեալ զնա Թէ՝ ի քաջութիւն մասին, և Թէ յիմաստութիւնէ և՝ ի կառավա-

բուԹԵ, ասե՝ ԹԷ յորժամ Ի՞նչն ԴաւիԹ զաղԹել կայր ՚ի չինուԹԵն ԱղԹամարայ՝ այնպէս ինն յարդարեր զգործս, զի Թշնամիք իւր բազմապատիկ առաւելեալք ոչ յարեան ՚ի վերայ նորա, որով և չինուածն աւարտեցաւ. « Կապեաց, ասե, զձեռանե իւրմէ հաստահինն խորհրդովք, և պատերազմական ուժեղակուԹիՁք իրը դանդանաւանդաւ իւիք զկռակս նոցա Ձմլեալ Թոչնացուցանէր, սկսեալ ՚ի Մարայ և Պարսից զբոլոր Աստպատական մինչև ցխուժաստան. որում կամէր՝ աւանդէր. և յորոց ոչն կամէր՝ ՚ի բաց կորզէր, զայլս ՚ի վերայ այլոց յարուցանէր, և զՀազարս և զբիւրս ՚ի նոցանէն իմաստուԹեան սրովՀ սատակեր ,, է. 8։

Գ. ԹԷոդորԷԹեան խոյակիկոսուԹեան։

Յաւալի է արդարև տեսանել զառաջնորդս ազգիս զԹագաւորս և զիշխանս վերջացեալ ՚ի բարեմասնուԹենՁ որք պահանջին ՚ի տեսչուԹԵ աշխարՀի. բայց առաւել ցաւալին է տեսանել ՚ի գործս նոցա փոխանակ նոցին ստեպ յաձախեալ զանխափ ԹերուԹիս որք եղծիչք են կառավարուԹԵ։ Քանզի սկսեալ ՚ի ժամանակաց վերջին արշակունի Թագաւորաց և նախարարաց՝ սակաւ գտանեմք խորագիտուԹԵն և իմաստուն կառավարուԹԵն, այլ փոխանակ այնր անմտուԹԵն և ծանծաղամտուԹԵն, որ է չեզնել միտս ընտրողուԹԵ որոշելոյ զլաւն ՚ի վատԹարին. այլ ընդ Հակառակն՝ զանմտուԹԵ գործս իմաստուԹեն Համարել, և զիմաստուԹԵն անմտուԹԵն. և ի վերայ այսորիկ՝ պնդել և կամակորել ևս ՚ի խորհուրդս իւրեանց, յորժամ խորՀրդատուք յորդորէն ՚ի բաց կալ։

Օ խաՀր անզգայ միամտուԹԵ էր Տիրանայ երկրորդի նախ չճանաչել ամենևին զընուէն Փլատակ՝ զոր իւր սեՀնեկապետ էր կարգեալ, և իբրև նեբբէն մեռմի բանայր նմա զամենայն խորհուրդս իւր. երկրորդ՝ և ոչ իսկ կասկածել ընաւ զդաւոյն՝ յորժամ Վարաշշապուհ առ Ինքն կամէր գալ զանձուկ սիրոյն պատՃառելով. երրորդ՝ անփոյթ լինել ամենևին գԼեթ զգրուեալ զօրս իւր փոխանակի ժողովել, յորժամ Եետս զՎարաշշապուհ երԹէ հաւար զօրօք առ Ինքն եկեալ, զորմէ պատմէ Բուզանդ Ճ. 20։ Եւ ահա ՚ի պատՃառս անզգոյշ անմտուԹԵ իւրոյ ընթռնեալ զրկեցաւ ՚ի տեսուԹԵ աչաց։

Ինամոցաւ և որդի նորա Աբշակ Ճ. զի անփոյթ եղև

ամենևին չահել զսիրտս նախարարաց իւրոց և միաբանել ընդ իւր՝ յորժամ նոքա յայլ միտս էին, և ինքն յայլ՝ 'նոքա պատերազմէին ընդէմ գնա, և նա պատերազմէր ընդէմ նոցա ։ Ալ առաւել անմտութիւն էր գործ շինել իւր զԱրշակաւան առ ի շահ դրամոյ, փոխանակ գումն գործելոյ զսիրտս նախարարացն շահել որով հաստատի կառավարութիւն ամենայն տէրութեան ։ Բայց լուր զառաւելագոյնն, զի մտել նորա առ դայդն ինչ շահու շինէ զայնպիսի քաղաք՝ որ ետ քակել յիւրմէ սրտիս ամենայն նախարարաց, ոչ լսէ ձայնի կենցաղագէտ աչխարհաշէն խրատուի իւրոյ մեծին 'Սերսէսի. որ առաւել քան զկայր աղերսելով խրատէր գնա 'ի բաց կալ յանիրաւ շահէ անտի և մի բաժանել յինքենէ զսիրտս նախարարաց իւրոց. և որ առաւելն է՝ խոստանայր ինքն ցուցանել նմա ձանապարհ մեծ և շահու առանց ինչ թշնամացուցանելոյ գնախարարս ։ Ալ տես և զգործս յետագայ թագաւորաց ։

Որպէս գրեցաք 'ի վերոյ՝ Տիրան առ անմտութիւն իւրոյ ոչինչ կարծիս կալաւ անդ՝ ուր պարտ էր կասկածել. բայց հակառակ սմին Պապ թագաւոր պղտի անմտութիւն 'ի կարծիս լինի անդ՝ ուրանօր չէր պարտ կասկածել ։ Զի այն ինչ առաջի կայր սկիզբն ահագին պատերազմի 'ի Զիրաւ դաչտին առ Կպատ լերամբ, զորմէ կայ խեալ կայր կորուստ կամ թագաւորել նորա, նա 'ի վերջին պահու անդ անսալով լեզուագարաց ումանց՝ 'ի կարծիս լինի զՄուշեղայ սպարապետին իւրմէ, զորոյ զհաւատարմութիւն փորձ բազում անգամ առեալ էր յայլ և այլ նահատակութիւնս մարտի, և ոչ կամէր թողուլ գնա մնանել 'ի պատերազմ ։ Իսկ զոքան ամենայն 'ի Մուշեղ միայն ապաւինեալ գնա ինդրելին . և նա քանզի ծառայ հաւատարիմ էր, աղաչէր զԹագաւորն Թողուլ զինքն միոլ 'ի մարտ, զորմէ կախեալ կայր վնձակ աչխարհիս Հայոց, միշնորդ վասն այսր կալեալ զմեծն Սերսէս ։ Բայց Թագաւորն Պապ կամակորէր արդեօք 'ի բաս իւր մինչև ցվախճան՝ եթէ չէր եկեալ սրբոյն անձամբ առաջի նորա, և յանձն առեալ զերաշխաւորութիւնն վասն հաւատարմութեան Մուշեղայ, զոր ինդրեր ։ Եւ այսպէս մեծն Սերսէս յայսմ ևս գտաւ երախտաւոր . զի ոչ միայն զայրն քաջ և զգիտանի և զկարևոր 'ի պատերազմին յայնմիկ երաշխաւորութիւնէ իւրով եմոյծ 'ի բանակն, այլ և ինքն երանելին բազկատարած աղօթիւքն նպաստ լինէր մեծի պատերազ-

մին, որով յաղթանակեր Պապ՝ի վերայ Թէնամեաց մեծաւ յաղթութեբ, որ մի ե յերեւելեաց յազգի մերում՝ : Խոկ զօրավարութեբ Մուշեղայ, որ մի միայն խնդրելին էր յայնմ պատերազմի, այնպէս փառաւորեցաւ՝ի ժողովրդենէ, մինչև զայն ժամ յաղթութեբ կոչել ժամ Մուշեղայ :

Վարագոյժայ ծանօթագրմունութեբ համբաւեալ ե առ Բուզանդայ և առ Խորենացւոյն, որ եջ. 40. Հեգնելով ինն գրե զերթալոյ նորա՝ի կոչ Թէոդոսի կայսեր. «՝ի մոի եդեալ ասէ՝ի սուտ հանել առաջի նորա զայն ինչ՝ որ առնեցուն յայտնի էր : Ետս զոր ինչ գրեալ ե մեր վասն սորա՝ի գլուխն Կառավարութեբ և զանոն Բուզանդայ : Ջբեբրութեբ եջ. Ակընկալ և եջ. Խոսրովու՝ի խորագիտութեբ՝ տես նոյնպես՝ի գլուխն Կառավարութեբ :

Ասյց որպէս զԹագաւորայ՝ նոյնպէս և զնախարարացն այսր ժամանակի բողոք բառնան պատմագիրք. յորս Վասզոր զանասարկութեբս նոցա յիշատակէ ասելով. « Խնդրեցին իւրեանց Հայք Թագաւոր զնոյն միւսանգամ գնասորով զեղբայր Վռամշապհոյ, զոր յառաջնումն բանսարկութեբէ եռուն մերժել զնա Հայք Շապհոյ արքային Պարսից՝ի Թագաւորութեբ Հայոց ». 33: Ասաւել արժանի բողոք բառնալոյ զանմտութեբն նախարարաց՝ ե մասնաւորեբն այն որով մասնեցին զՎռամշիր Թագաւոր Հայոց՝ի ձեռս Պարսից. զոր յիշատակեցաք՝ի վերոյ, և՝ի գլուխն Կառավարութեբ : Ասյլ Թէ քանի անմտութեբ գործ ե, չմարթի ասել և զոր արարին նոյն նախարարքն մերժելով յաթոռոյ նաև զմեծն Սահակ զպետիսկոպոսն այր գիւրեանց համազգի, որպէս զի մի իառնեսցի ամենևին յիրս տեսչութեբ աշխարհի՝ի դառն ժամանակին յայնմիկ յորում պէտս ունէին այնպիսի իմաստուն առաջնորդի. և փոխանակ նորա նստուցանելով զոմն ասորի : Համարեին իմաստուն կարծեցեալքն Թէ օտարն լաւագոյն լիներ քան զհամազգին իւրեանց. այլ անագան ուրեմն ծանեան զվրիպանն մեծ զոր արարին յետ երկիցս և երիցս փոխելոյ զՀայրապետս. քանզի պակասեր՝ի նոսա բնաւին օրէնք կենցաղագիտութեբ, նմին իրի և բարձեալ էր ամենևին՝ի նոցանէ նախատեսութեբ, զի ոչ կարացին յառաջնմէ տեսանել իմանալ Թէ օտար ոք ոչ կարե յարմարիլ բարուց հայկազանց : Եւ յետ ճանաչելոյ զվրիպել իւրեանց գնան խնդարհին յոտս սրբոյն Սահակայ, աղաչեն զնա դարձեալ հովիւ լինել նոցա. այլ սուրբն համարձակ ասաց առ նո-

սա . «Քահանայանալ ՚ի վերայ տիրանէնդ և տիրասպան և մատնիչ ժողովրդոց ոչ կարեմ» . Դաղար 49 : Խակ յորժամ տեսանէին՝ ասեն զաթաէալ . «Երթայք յինէն ՚ի բաց , և Թոլ տուք ինձ ողբալ զընդհանուր կորուստ աշխարհիս Հայոց , զոր տեսանեմ աչօք մտացս ՚ի զօրութէ վերին ցուցակու- Թէն» : Աչխալիսի անմիտ կառավարութէ ՚ի հարկէ և նոյնպիսի կորուստ վհետ գայր :

Այն ինչ ինչ յայսպիսի դիպաց և առ ժամանակօք Բագ- բատունեաց . որպէս Աբասայ արարք անմոռանն . քանզի այն ինչ գոլով վախճանեալ Հօր նորա ՝ն . Աշոտոյ Թագա- ւորի երկն առ նա իշխանն Վրաց Աղուանեաքն կարեկից լի- նել նմա որպէս արժանն էր . և ապա էլ գնաց առ Սմբատ եղբայրն նորա զնոյն պարտս պատշաճից հատուցանել և նմա . և անտի եկն գարձեալ առ Աբաս . այլ հրապուրեալ Աբա- սայ ՚ի քսութէնէ ոմանց , Թէ Աղուանեսկ երթեալ միա- բանեալ է ընդ Սմբատայ զնա կացուցանել յաթոռ Թա- գաւորութէ Հայոց , կալեալ կապէ զԱղուանեսկ երկա- Թի շղթայիւք , և գնէ ՚ի բանտի ՚ի բերդին Կարուց : Զայս իբրև լուաւ Սմբատ , յարձակեցաւ ՚ի վերայ եղբօր իւրոյ Աբասայ . և « յերկաքանչիւրոյ անտի , ասէ Յովան- նէս կաթողիկոս , աղմուկ չիոխի սաստկացեալ . . . ոչ սակաւ խուժան աւերանայց զաշխարհսն զեղջոյր » :

Ընդ ինքներդոյ գարուն Բաբգէն որ կրտսեր եղբայր էր Սմբատայ սխակաւն իշխանին , գնաց առ Նսր ոստիկան որ Սրուքն կոչէր , որպէս զի բարեկամութէ կալեալ ընդ նմա՝ յինքն գրաւեսցէ ՚ի ձեռաց եղբօր իւրոյ Սահակայ զՀայ- բենի ժառանգութէնն զոր միապետէրն , զբնական համա- բերալ անձին : Խակ Նսր ՚ի վերին երեսս սիրով ընկալեալ գնա՝ խոստացաւ տալ զվիճակ ժառանգութէ նորա . այլ միտք նորա էր սպասել նաև գալստեան եղբօր նորա Սա- հակայ , որպէս զի զերկոսին միանգամայն խարդաւանել կարասցէ . վասն որոյ կոչեաց և զնա : Ընդ կոչին Սահա- կայ՝ ոչինչ հետացօտեալ զվախման գնալոյ եղբօր իւրոյ , և ոչ զպատճառն կոչելոյ իւրոյ , վաղվաղակի յօժարութէ էլ և գնաց իբրև ՚ի կոչումն ինչ արքունական . « Եւ իբրև Թմբրուկէն իմն անդ այացեալ , ասէ Յովհաննէս կաթողի- կոս , գնէ դաչինս ընդ դժոխոց . ոչ սկսեալ ՚ի սրտի իւրում զխնամատութէն և ոչ ՚ի մտի եդեալ զկատարեալ գխոսի և ոչ նայեցեալ ՚ի վախճան խորհրդոյն » : Կատարեալ գի- տութէն յայս գործ՝ էր կենցաղագիտութէն և խորագիտու- Թէն , որ որպէս յայնմի տեսաւ ՚ի գործս նախաբարաց մե-

բոց՝ բոլորովին պակասեր։ Նոր հրաւիրեաց վերկոսին և գնալ ի Դըբլին. յոր ի մերձենալն՝ վերկոսին և կապեալ և բարձեալ յուղտս և ի ջորիս՝ այսպէս եմուտ ի քաղաքն. և անդ ի տուռունս և ի շրթայս երկաթի կապա-նաց վարեալ՝ « զանձինս նոցա մատներ ի բանտ և ի կա-պանս և ի պատիժս մահու »։ Յերկոսին և փոխանակ խորագիտուէ որպէս վայել է իշխանի՝ տեսանի կատարեալ տղայամտուէ. ի միում ի բաբգէն տղայամիտ խորհուրդ. զի առ ի ձեռս բերելոյ զՀայրենի ժառանգութէն գնայ առ այնպիսի այր՝ որ միշտ գկորուստ իշխանաց խորհէր, որպէս սուղ ինչ յառաջ փորձիւ տեսեալ էր նորա զայս ի գործս Յուսիայ ոստիկանին. իսկ ի միւսումն տղայա-միտ փառասիրութէն. զի ընդ կոչումն ևեթ Նսրայ ոստի-կանին ուրախացեալ, մանաւանդ եթէ կոչումն ազգունա-կան կարծեալ գնոյն, առանց ինչ քննելոյ զգուշութէ զպատճառ կոչմանն, պատրեալ յօժարութէ գնոյ առ նա. նա մանաւանդ "բազում օժտութէ ընծայիւք ». որ պէս ասէ պատմագիրն։

Դ. Թէրոնէն երկպմտութեան, որ է կարճմտութեան։

Կարկամտութէն այս, որ ամենևին կարևորն է ի կեն-ցաղագիտութէ, և որով յաջողեցան հռոմայեցիք ի պե-տութէ իւրեանց, բոլորովին պակասէր ի մերմն. զի յետ սուղ ինչ հաստատուն կալոյ յիրս կարևորս մանաւանդ ի պատերազմականս, անդէն փոխէին ի խորհրդոց իւ-րեանց վայրապար։ Ի կարճմտութէ աստի ի հարկէ և ընդ առաջ ելանէին նոցա անյաջող ելք և թշուառութիք զորոց ողբան պատմագիրք մեր։ Զի Թէպէտ եղէն ի նոսա հրա-շալի քաջագործութիք զորս հալիւ երբէք է տեսանել Յայլ ազինս, բայց անօգուտ էր աշխարհին այն ամենայն, զի ոչ տևէր անփոփոխ մինչև ցվախճան գործոյն յոր ձեռն արկանէին։ Բազում ուրեք ընթեռնուաք առ պատ-մագիրս մեր՝ զի քաջ զօրավարք և քաջ զինուորք յամուր բերդս որոյս պատապարեալք, որպիսիք բազումք գտանէին յաշխարհի մերում ի զանազան տեղիս, յորոց և բա-զումք էին անմատոյցք և անառիկք, յետ քանի մի ան-գամ ընդդէմ կալոյ Թշնամեաց, ոչ առ տկարութէ ինչ՝ այլ առ պակասութէ կենցաղագիտութէ կամ առ մտոի ինչ երկիւղի լքեալ և կարճամտեալ մեծապէս՝ լուս հա-մարէին զերթալն առ Թշնամին՝ քան զտոկալն և զինայն

'ի տեղիս իւրեանց . ուր դրից ամրուԹի , ջրոյ և պարենի բաւականուԹի , և իւրեանց քաջուԹ կարեր միշտ յապահովի պահել զնոսա , մինչև Թ չնաշխ յուսակտուր եղեալ ինքնին տեղն տայր և մեկնէր : Տես եԹէ քանի օտարացեալ էին 'ի հոգւոյ երկայնամիտ ժուժկալուԹենէ նախահաւուն իւրեանց Հայկայ :

Հայոց Թիւոց ի բազում գտանեն ընԹերցողք 'ի գիրս սոյա : Եւ զնոյն իսկ առումն քաղաքին Աւսոյ ՀԱՀ փասլանայ՝ 'ի կարձմուԹէ քանակաց գիտեմք լեալ . զի այն ինչ Ալփասլան յուսակտուր եղեալ՝ պատրաստեր արձակել զպաշարումն և մեկնել անտի , և ահա զօրք իւր ազգ առնեն նմա՝ եԹէ քաղաքացիքն յուսակտուր լքեալ կան 'ի պաշտպանելոյ զքաղաքն . և զի հաւատարմացուսցեն նմա՝ մտեալ 'ի քաղաքն՝ և զղայ մի յարիշտակեալ 'ի գրկաց մօրն՝ ածեալ յուլին նմա : Զայն տեսեալ Ալփասլան՝ ոգի առեալ վերստին յարձակեցաւ , և էառ զԱնի՝ չարաչար կոտորած ածեալ 'ի վերայ :

Ի. մինչ ի յառնեալ էր այս կարձմուԹէն յազգի մեբուա՝ մինչև խորենացին սովորական կոչէ , անուանելով զայն անժուժկալուԹէն . «Իսկ զօրաց նորա (Զօրային) տեսեալ Թէ լռեալ կան նախարարքն ամենայն ըստ սովորական մերոյ ազգիս անժուժկալուԹէն , ցրուեցան 'ի տունս իւրաքանչիւր ,, . ՚ի . 15 : Ալլ Թէ քանի զօրաւոր և օգտակար է երկայնմտուԹէն , քաջայայտ եցոյց Անդովիկ Իշխանն Սիւնեաց , պատսպարեալ յամուր Բաղաբերդին . յորոյ վերայ Շապուհ Պարսից Թագաւոր Թիկնէտ ընդ երկայն ժամանակս պաշարեալ՝ երիցս յարձակեցաւ առնոյն զօրուԹէ իւրով և առնոյն զօրք , բայց ոչ կարաց առնուլ , և Անդովիկ զերծաւ իւրով երկայնմտուԹենէն ևԹէ :

Ե . ԹԷՕՐՈՒՔԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ :

Վրիպոր մագիստրոս յիշէ զայս 'ի մեհնուԹէ քերականին , որպէս է տեսանել և առ Յոհաննու եպիսկոպոսէ . և զայս զնէ պատճառ պակասելոյ գպրուԹ յազգի մերում . բայց ես նաև առնոյն բարեյական վատԹարուԹեց ասեմ զսա պատճառ , որք տեսանին յիշեալոյն և 'ի նախարարս , նաև 'ի նոյն իսկ 'ի Թագաւորս : Քանզի զինչ այլ վնասակար յաշխարհն ուրեք , ուրանօր մանկունք մեծամեծաց հանապազ 'ի մէջ ընտանեաց և կանացի գրգռուԹեց մեծալ առնեն չունելով զոք որ զնիցս նոցա սանձեսցէ սաստիւ և

սպառնալիքը. զի ամենայն անկարգութիւնք նոցա՝ թէպէտ և մանկականք, անմեղ և հեշտական համարին առ ծնողս նոցա և ընտանիս առ բնական գթոյն. վասն որոյ և չհաւանիլն ինչ կարևոր զկրթութեն նոցին, մինչև ինքեանք ցախս առնելոցն անզգալ, անկիրթ և ինքնագլուխ. որով և՝ ի բնութենէ նոցա գառնայ կամապաշտութենն և ըմբռնութենն, զորս համարիմ կրկին հիմունս ամենայն բարոյական անկարգութեց՝ ի տան և՝ ի համբերն ազգին. որպէս յայնմանէ լինի յընթերցուածն մնադիր զպատմագիրսն մեր: Այսպէս ահա մնեալ և առնելով ցուցանել պատմութեի ազգիս զվերջին թագաւորս Արշակունեաց, զՏիրան, զԱրշակ և զՊապ:

Յայմ ամենայնի պատճառաք՝ զի միշտ պակասեաց յաշխարհն մերում դպրոց կրթութեն մանկանց, ուրմանօր մանուկն ամն քանի մի հեռացեալ յիւրոցն, ընդ ձեռամբ օտար անձանց՝ այլ քաջ դաստիարակաց, կարէր՝ ի բաց թողուլ կամ գէթ մեղմել զընդարձոյս ախտս իւր, իսկ թէ ընդէր մերքն անփոյթք եղեն զամենէ, յայնմանէ է, զի չէին՝ ի վերայ հասեալ, թէ դպրոցք ոչ միայն են տեղիք դպրութեիս ուսուցանելոյ, այլ մանաւանդ և զբարս մանկանց կրթելոյ[1]: Այս կանգնեցան դպրոցք յազգի մերում, այլ միայն՝ ի վարժութեի գրելոյ կամ ընթեռնելոյ և կամ գիտութեին ինչ ուսանելոյ. այլ ոչ բնաւ առ՝ ի կրթութեի մանկանց՝ ի բարոյականս. նմին իրի և եկեղեցականքն միայն անգր յաձախեին, և ոչ աշխարհականք. իբր թէ միայն վասն եկեղեցականաց էր պահեալ այս, և այն ուսանելոյ ազատաւ և ոչ կրթելոյ: Իշխանք մեր և թագաւորք իբրև կամէին առ՝ ի շահ հոգւոյ յիշատակ ինչ բարի թողուլ

1 Այսպիսի դպրոցք առ եւրոպացիս կոչին Քօլէճէս. ուր մանկունք զտիւ և զգիշեր միշտ մնան անդ՝ ի ձեռս Ջողտարդ դաստիարակաց՝ ի բարոյական մասին, և Ջողտարդ ուսուցչաց՝ ի գպրոցն մասին. Նա մանաւանդ որպէս զի մանկունք բոլորովին հեռացեն՝ ի ծնողաց և յազգականաց՝ որոց գոլեմ և գգուանք միշտ վնասուիչք են կրթութեն նոցա, ի դպրոցս հեռաւոր քաղաքաց առաքեն զորդիս իւրեանց: Փորձ և օգուտ այսպիսի գպրոցաց յայտնի տեսաւ Լեհաստան. զի յորժամ յարեաւ կրօնն Ցիւռեռեան, և ընդ ամենայն տեղիս Եւրոպիոյ գպրոցս հիմնեալ՝ սկան կրթել զմանկունս, առ հասարակ կերպ պատանութիւն եղև Եւրոպիա թէ յաւմանէ և թէ՝ ի բարոյական կրթութէ: Զի այսպիսի հրահանգ՝ ի մանկական հասակի՝ կրթէ յաչս յերկուս յայսոսիկ. նախ՝ սանձել զնիրս, և ոչ երթալ զհաս հասկոյիզ կամաց իւրոց. և երկրորդ՝ ոչ տեսի հաւասել զանասն խրատաւ այլոց՝ այլ մանաւանդ փառք եկ երկոցին այսոքիկ են հիմունք ամենայն բարեաց՝ որով կարէ մանուկն անձնասպան լինել յահասկն այնոյիկ զոր յիշեցաք՝ ի վերոյ:

յաչխարհի մեծամեծ ծախիւք եկեղեցիս շինեին, որպէս ունին տեսանել յընթեռնուլն զմեծ Հայս, մանաւանդ յաչխարհին Սիւնեաց՝ որ լցեալ էր եկեղեցեօք. ոչ զոք գտանես ծախեալ ինչ՝ ի շինուածի այսպիսի գործոցս՝ ի մանկակրթուն՝ ի բարոյական մասին, ոչ՝ ի ջրերդ գաւառն՝ ի ծաղկիլ գործոյն յաչխարհի մերում՝ ի ձեռն սրբոյն Մեսրոպայ, և ոչ՝ ի տանեղորդ գաւառն յաւուրս Աբասայ թագաւորի, որ կոչի գար և ժամանակ ծաղկելոյ և բազմանալոյ վանորէից։ Այս յայտնի է զոր ասացեալն, թէ առենևին անծանօթ էր նոցա օգուտ այսպիսի գործոցս։

Այդ՝ ի ստորագրուածէ ախտիցն այսոցիկ և թերուեց, զորոց ցայս վայր խօսեցաք, յայտնի կան հետևանքն զոր ասելոց եմ, թէ մինչև և մեծեալ՝ ի մեզ փոյթ և եռանդն սոյնօրինակ մանկակրթութեան՝ ի համօրէն ազգիս, չէք յոյս տեսանելոյ յազգի մերում անհետանալ ախտիցն զորոց խօսեցաք, որք եղծիչք են հասարակաց խաղաղուեան, պատճառք աղքատութեան և ամենայն աղէտից։

ՎԱԽՃԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՑՈՐՈՑ

ՅԱՆԿ

ԳԼԽՈՑ ՄԱՏԵՆԻՍ

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ

ՑՕԴ. Ա. Վաւաւերութիւն պանուպէրեան. Ժամանակ նահապետաց։ 2
ՑՕԴ. Բ. Կաւաւերութիւն դպապետական։ 4
Ա. Ժամանակ ըստ աւրութեանց Հայկազնեայց։ 5
Բ. Ժամանակ ըստ աւրութեանց Ասըշխունեայց։ 6
Գէպեր ի վան ժամանակի Ասըշխունեայց։ 31
Գ. Ժամանակ ըստ աւրեանց Բափրապունեայց։ 34
Գէպեր ի վան ժամանակի Բափրապունեայց։ 52
Դ. Ժամանակ բաժանման ըստ աւրութեանց աշխարհիս ի բաղում Հայկական ըստ աւրութիւս յաւուրս Բափրապունեայց։
Թագաւորք Ասծրունեայց կամ Վաղարշականք։ 55
Թագաւորք Կարուց կամ Վանանդայ։ 56
Թագաւորք Բաղայ, Կապանի կամ Սիւնեաց, և Փառիսոսայ։ 57
Թագաւորք Բափրապունեան Աղուանից, կոչեցեալ Կիւրիկեան։ 61
Թագաւորք Զորոյգեղայ։ 64
Թագաւորք Աղձեացեայ։ . .
Թագաւորք Դարբանդայ։ 65
Ե. Եղանակ կամ կարգ հաւաւերութեան ըստ գաւառաց ի սեփեան պէրութիւն։
Արտունիք և Ներքին նախարարք։ 67—72
Արտաքին նախարարք։ 72—76
Ընդհանուր գէպք ի յաղագս նախարարութեանց։
Ա. Անուն նախարարութեանց։ 77—81

Բ. Սիկլիանոսութիւն նախադասութիւն։ 81
Գ. Իշխանութիւն և պարտականութիւն նախադասութեանց։ 87
Դ. Կարգ նախադասութեաց։ 90
Ե. Թիւ նախադասութեաց։ 92
Պատճառութիւն իւրաքանչիւր նախադասութեաց։ 95
Ա. Թափառական նախադասութիւն։ 96—129
Բափբասութիւն։ Ծագումն և պաշտօն նորա։ 96
Պատուանոն Բափբասութեաց։ 98
Երկեր Բափբասութեաց։ 99
Ոսպան Բափբասութեաց։ 102
Շէրէմ Բափբասութեաց։ 103
Հաւապ Բափբասութեաց։ 104
Երևելի անձինք ՚ի Բափբասութեաց։ 105
Ծաւալումն պոհմին Բափբասութեաց։ 107
Արծրունիք։ Ծագումն նոցա։ 109
Անուն և պաշտօն Արծրունեաց։ 111
Իշխանութիւն Արծրունեաց։ 112
Թագաւորութիւն Արծրունեաց։ 115
Երկեր Արծրունեաց։ 117
Ոսպան և շէրէմ Արծրունեաց։ 119
Տեղիք յՈրբելոց և բանաձևելոց Արծրունեաց։ 120
Երևելի անձինք յԱրծրունեաց։ ...
Սիւնիք։ Ծագումն և երկեր նոցա։ 121
Նորոգումն երկերին և իշխանութեան Սիւնեաց։ 124
Թագաւորութիւն Սիւնեաց։ 126
Ոսպան և շէրէմ Սիւնեաց։ 127
Երևելի անձինք ՚ի Սիւնեաց։ ...
Բ. Նախադրութիւնք ՚ի հաւաքումն պատմութեանս։ 130—162
Աղխինք. Գուգարք։ 130
Անգեղտուն։ 131
Մարդպետական։ 135
Մամիկոնեանք։ 139
Մամիկոնեան։ 141
Ոսպան և շէրէմ Մամիկոնեանց։ 144
Պապէ և իշխանութիւն Մամիկոնեանց։ ...
Մեծութիւն և վաստակք Մամիկոնեանց։ 147
Երևելի անձինք ՚ի Մամիկոնեանց։ 149

Գնուանէ ։ 152
Ա֊բելէն. Գաբելէն ։ 154
Հաւնուանէ ։ . . .
Ալիւանէ ։ 155
Մանդակունէ ։ 156
Վաքաճնուանէ ։ . . .
Ասանդուանէ ։ 158
Զենոաիանդ ։ . . .
Գնելուանէ ։ 159
Ոսկանէվ ։ 160
Գ. Նախարարու֊ե՛ր որոց էյեշապաէն էնէ գործ
յերս պետլո֊ւե՛ աշխարհն ։ 163—195
Ահէաղէ ։ 163
Աղբեբիւաղէ ։ 164
Ամատունէ ։ . . .
Անյեւաղէ ։ 166
Աղուաղ ։ 167
Ապահունէ ։ . . .
Ա֊ա֊էղէան. կամ Ա֊ու֊էղէան ։ 168
Ա֊ա֊էնէան ։ . . .
Արշարունէ ։ 169
Բագենէվ ։ . . .
Բզնունէ ։ . . .
Գարգարացէ ։ 170
Գարդմանացէ ։ . . .
Գողընեացէ ։ 171
Դիմաքսեան ։ . . .
Զա֊ա֊էնէան ։ . . .
Զարեհա֊անէան ։ 172
Ընձայեան ։ . . .
Ընտրունէ ։ . . .
Խաղունէ ։ . . .
Խոռխոռունէ ։ . . .
Ծովինէաց ։ 173
Ծոփաց եշխան ։ . . .
Կապեղան ։ 174
Կամսարականէ, Արշարունէ, Պահլա֊ու֊
նէ ։ . . .
Կարնեցան ։ 177
Կորդուաց ։ . . .
Համբա֊ձեան ։ 178

Հրաեչտրոյ : 178
Մարտպէան : . . .
Մանուչխէրտեցի* : . . .
Մանաս-ապէան* : . . .
Մանուէան* : 179
Մարկոպէոսեան* : . . .
Մոկացի* : . . .
Մոսրացեան : . . .
Նոր Շէրապեան : 180
Ո-պէացի* : 181
Ոզդոսեան : . . .
Ո-րճացի : . . .
Պալոսեան* : . . .
Պահլաւունեան* . Պարխաւեան* : . . .
Ռմբոսեան : 183
Ռշտունեան* : . . .
Ռոփսեան, կամ Ռափսոնեան : 184
Ստահոսունեան* : 185
Սուրենեան* : . . .
Սրուանձտեայ* : 186
Վանանդացի* : . . .
Վահնունեան* . Վահեունեան* : 187
Տաշրացի* : . . .
Տրունեան* : . . .
Տրպատունեան* : 188
Փառաւազեան . կամ Փառաւաշնեան : . . .
Քաջբերունեան : . . .
Քօղեան* : . . .
Օրբէլեան* : 189
Սէրունդ Օրբէլեանց : . . .
Պապէ- Օրբէլեանց : 191
Եղիէր Օրբէլեանց : 192
Շէրեմ Օրբէլեանց : 195
Աղէ-սահ նախարարու-ենեանց : 196 . 198
Շինու-ածոյ նախարարաց որ յԵրու-սաղէմ : 199
Տէրունեան . որ է եղանակ կամ կարգ կա-
ւարու-եան ընծայու-մաց մերոց ընդ օրաւ
օրէնու-ենիս : 201
Ա. Երկրորդական եւ նախագահու-եան
այլոց ընծայուածոց :

Բ. Բաբելեմանութիւն կամ պաշնադրութիւն ընդ այլ ընտանութիւս։ 204
Ընդ Հռոմայեցիս։ . . .
Ընդ Պարսիկս։ 209
Ընդ Ասիանս։ 211
Ընդ Հոնս։ 212
Ընդ Եգիպտս։ 213
Ընդ Վիրս։ . . .
Ընդ Աբխազս։ 214
ՅՕԳ. Գ. Կառավարութիւն իշխանական։ . . .
Ա. Իշխանք պետութիւն հայոց և հայաշխարհի։ 215—219
Բ. Իշխան պետութի՛ն կողմանէ Պարսից։ 220
Գ. Իշխան պետութի՛ն կողմանէ Աբբասեանց։ 223—225
Դ. Իշխանք պետութի՛ն կողմանէ Ցունաց։ 226—234

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԴՐՕՇԻ ՆՇԱՆԻ ԵՒ ՎԻՐՏԱՒՈՒԹԻՒՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ 235

ԳԼՈՒԽ ՀՕՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՀԻՆՈՒԹՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

ՅՕԳ. Ա. Կարգաւորութիւն պինդ։ 241
ՅՕԳ. Բ. Կարգաւորութեան ճանապարհ ցրտոյ և բանակի։ 246
Ա. Վահանափաթ։ 248
Բ. Տեղի բանակին։ 250
Գ. Հանդերձանք բանակին։ . . .
Դ. Խալ պանել։ . . .
Ե. Վրան պապաքափ։ 251
Զ. Խանք բանակին։ 252

Է. Փողոց հնչմանէ։ ...
Ը. Կարգ արտասանէ ըղբայց։ 253
ՑՕԴ. Գ. Ա. Ձէնդ ըղբս ղանչամբ էրբէն մարթէյին։ 254—260
Բ. Ձէնդ 'ի հարկանել կամ 'ի պաղպղանել ընթերդ։ 261—264
ՑՕԴ. Դ. Ձէնառորական պէհապ։ 266—269
ՑՕԴ. Ե. Թէյ ըղբայց։ 269
ՑՕԴ. Զ. Գառնդ ըղբայց։ 272—275
ՑՕԴ. Է. Պաղծնէայ պէնառորութէ։ 275—277

ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՑԱՍՏԱՆԵԱՑ

ՑՕԴ. Ա. Սովորութէ 'ի պէհապս և 'ի հանդէսս խաղտարէ։ 278
Ա. Թափն։ ...
Բ. Խոյրն խաղառորական։ 279
Գ. Հանդէս խաղտրութէն։ ...
Դ. Օձառին խաղառորէ։ 280
Ե. Երդառին հաւապարմութէան։ ...
Զ. Կենդանագիր խաղառորէ։ 281
Է. Թռռ խաղառորէ։ ...
Ը. Սարաւոյլ։ ...
Թ. Ձգնապ և այլ հանդերձեայ։ ...
Ժ. Նշան գալոթէան։ 283
ԺԱ. Թռփաղառորական հանդէս։ ...
ՑՕԴ. Բ. Սովորութէ 'ի պէհապս իշխանաց։ 284—287
ՑՕԴ. Գ. Սովորութէան 'ի պէհապս հասարակ ծողովրդեան։ 287
ՑՕԴ. Դ. Սովորութէ 'ի պէհապս ինանաց։ 288
ՑՕԴ. Ե. Ասյլ սովորութէ և գործառնութէ ինչ։ 290
Ա. Մադանաց իշխանութէ։ ...
Բ. Մադանեաս ինութէլ։ ...
Գ. Խաղով օձանէլ։ ...
Դ. Երեսելի ախտաց։ 291
ՑՕԴ. Զ. Սովորութէան 'ի հարսանիս և օրէնք առնառութեան։ 292
Ա. Դրամս ճապաղել և խափ կապել։ ...

Բ. Բաղմաիշխանություն։ 292
Գ. Խնամառություն։ 293
ՑՕԴ. Է. Սովրությունն ի յաղագս ուղղության և ի լաղման։ . . .
Ա. Դիմաղրութ։ 296
Բ. Ի նախս համաիել։ . . .
Գ. Կոծել գանձն։ 297
Դ. Սուտ առնուլ։ 298
Ե. Օյիս պատառել։ . . .
Զ. Մոահրչանս կանգնել։ 299
Է. Հիրեմ կանգնել։ . . .
ՑՕԴ. Ը. Սովրությունն ի դպրութեան։ 300

ԳԼՈՒԽ ՎԵՀՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՕՐԵՆՔ ՀԱՑԱՍՏԱՆԵԱՑ

ՑՕԴ. Ա. Որքան յաւուրս Աբրահամեայ ըղ կրթիեայ նախ վաղըշուկ, և յետ նորա այլք։ 303
Ա. Վասն յաջորդութեան և վասն արքայորդոյ։ . . .
Բ. Վասն նախարարաց։ 304
ՑՕԴ. Բ. Օրենք յաւուրս Բաբրասանեայ։ 305
Ա. Վասն յաջորդութեան նախաւորայ։ 306
Բ. Այլ ինչ ինչ յօրինաց Բաբրասանեայ։ 307
ՑՕԴ. Գ. Դատաստանաբանք և դատաստանափերք։ 308

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՒՏԱՍԵՆԵՐՈՐԴ

ԲԱՐՔ ՀԱՑԱՍՏԱՆԵԱՑ

ՑՕԴ. Ա. Ա. Խարք աստղոյ ծամանակէ և նախնի բնակչաց։ 311
Բ. Բարք չեք աշխարհակալութեան։ 313
Գ. Բարք հայկազանց չեք Աբրամայ։ 314
ՑՕԴ. Բ. Բնակութիւն ձերք նախարքելութեանդ ազգիս։ 315
Ա. Վայելչութիւն կերպարանաց։ 315—321

Բ. Կորովութիւն մարմնոյ և հոգւոյն։ 322—345
ՅՕԳ. Գ. Բարոյական առաքինութիւնք ազգիս։ 345
Ա. Ողջմտութիւն, Աշխատասիրութիւն։ 345—349
Բ. Անշահասիրութիւն բարեգործութիւն։ 350—368
ՅՕԳ. Դ. Բնական մոլութիւնք և սխալք ազգիս։ 369
Ա. Երկպառակութիւն։ 374
Բ. Նախանձ և Զարմտութիւն։ 378
Գ. Քուութիւն, Բանսարկութիւն։ 383
Դ. Մատնութիւն, Դաւաճանութիւն և Նենգութիւն։ 390
Ե. Դաւաճանութիւն և մատնութիւն ուրացելոց։ 398
Անկ և այլ ընդունելի պարագաներ ախտից առողջոց։ 401
Ա. Թերութիւն հպարտութեան, որ է ընկճոտութիւն։ ...
Բ. Թերութիւն էգոյացափսութիւն։ 402
Գ. Թերութիւն խորափսութեան։ 411
Դ. Թերութիւն երկչոտութեան, որ է կարճմտութիւն։ 415
Ե. Թերութիւն մանկերկութեան։ 416

